ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(6-7 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.)

ԵՐԵՎԱՆ 2015 Թ.

ՀՏԴ 338(479.25):06

ԳՄԴ 65.050
Հ 247

Հրատարակության է երաշխավորել
Աշխարհագրության և երկրաբանության
Ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
Մ.Ա., Գրիգորյան, Ա. Հ.,Պոտոսյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝
Ս.Ա. Մելքումյան, Ա.Ռ.Ավագյան, Կ.Ս.Դանիելյան, Գ.Մ. Կարապետյան, Հ.Լ.Սարգսյան,Հ.ՅԱ.Սայադյան, Մ.Մ.Թորոսյան,
Ն.Ա.Հարությունյան, Հ.Հ.Գալստյան
Главные редакторы:
Григорян М.А., ПодосянА.А.
Редакционная коллегия
С.А.Мелкумян, А.Р.Авагян, К.С.Даниелян, Г.М. Карапетян, Г.Л.Саргсян, О.Я.Саядян, М.М.Торосян, Н.А.Арутюнян , А.О.Галстян
Editors
Grigorqyan M.A., Potosyan A.H.
Editorial board: S.A.Melkymyan, A.R.Avagyan, K.S.Danielyan, G.M.Karapetyan, G.L.Sargsyan, O.Y.Sayadyan, M.M.Torosyan, N.A.Arutjunyan, H.H.Galstyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
Հ 247 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ: ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ(6-7 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.).- Եր.: ԵՊՀ հրատ., 2015.- 354 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման, բնակչության տարաբնակեցման, տարածքային կառավարման և զարգացման, բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության, էկոլոգիական, զբոսաշրջային ինդուստրիայի ռեկրեացիայի հիմնախնդիրներին նվիրված նյութեր:

ՀՏԴ 338(479.25):06
ԳՄԴ 65.050

ISBN 978-5-8084-2017-5

© ԵՊՀ հրատ., 2015
©Կազմողի համար, 2015

ԲԱԺԻՆ I

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՎՃՌԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂԱՑՈՂ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆ Է

ՄԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ , աշխ.գիտ. դոկտ., պրոֆեսոր, ՀՊՏՀ

Հիմնաբառեր. տարածքային, համաչափ, արդյունաբերության զարգացում, վարչական բաժանում, բնակչություն, գործազրկություն, համաչափ զարգացում, տնտեսություն, պաշարներ, վերակառուցում, բնական աճ:

Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացման խնդիրների լուծումը մեր կարծիքով առաջին հերթին սերտորեն կապված է գիտականորեն հիմնավորված վարչատարածքային բաժանման հետ:

Մինչև 1995թ. հանրապետության տարածքը բաժանված է եղել գյուղական 37 վարչական շրջան-ների, կային նաև քաղաքային 10 շրջաններ (8-ը Երևանում, 2-ը Գյումրիում): Հանրապետությունում կար 30 քաղաք, այդ թվում հանրապետական ենթակայության՝ 21, շրջանային ենթակայության՝ 9: Բացի դրանից, կար քաղաքատիպ 28 ավան, գյուղական բնակավայրերի թիվը 942 էր, որոնք ընդգրկված էին 865 գյուղխորհուրդներում:

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ 1965 թ. գործողության մեջ դրված վարչատարածքային այս բաժանման գոյության ժամանակաշրջանում վարչական բոլոր շրջանները, շրջկենտրոնները, քաղաքային բնակավայրերը տնտեսական աննախադեպ վերելք են ապրել: Ըստ որում, քաղաքային բոլոր բնակավայրերում բավականին զարգացել էր արդյունաբերությունը, զգալի թվով գյուղական բնակավայրերում հիմնադրվել էին արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր: Արդյունքը եղել է այն, որ բնակչությունը ամրապնդվել էր տեղերում, իսկ բնակչության վերարտադրության ցուցանիշներն էլ անհամեմատ բարձր էին: Բավական է նշել, որ 1950-ական թվականների վերջերին հանրապետության բնակչության բնական աճը 1000 մարդու հաշվով հասել էր շուրջ 30 մարդու և այդ ցուցանիշով մեր հանրապետությունը ԽՍՀՄ-ում Տաջիկստանի հետ առաջնակարգ տեղ էր զբաղեցնում:

Մասնավորապես, 1955թ. հանրապետության բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով կազմել է 29 մարդ, իսկ 1965թ.՝ 23.3 մարդ[1] :

Համեմատության համար նշենք, որ 2014թ. տվյալներով Հանրապետությունում քաղաքների թիվը արդեն հասել էր 49-ի, իսկ գյուղական բնակավայրերի թիվը նախկինում եղած 953-ից կրճատվել և կազմել է 916, որոնք միավորված են գյուղական 866 համայնքներում:

Սակայն խիստ մտահոգիչն այն է, որ աներևակայելի չափերով կրճատվել են բնակչության բնական աճի ցուցանիշները: Մասնավորապես, եթե հանրապետության բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով 1955թ. կազմել է 29 մարդ, իսկ 1965թ.-23.3 մարդ, ապա 2007թ. այն կազմել է ընդամենը

[1] Տե՛ս Народное хозяйство Арм.ССР в 1970 г. стр. 12.

4.1, իսկ 2013թ.՝ 4.8 մարդ[1]: Իսկ եթե բնակչության աճի ցուցանիշները քննարկենք ըստ 1995թ. գործողության մեջ դրված մարզերի, ապա պատկերն ավելի տխուր կլինի: Այսպես, օրինակ, երբեմնի հզոր արդյունաբերություն ունեցող Լոռու մարզի բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով 2011թ. կազմել է 1.1, 2007թ.՝ 1.7, 2013թ.՝ 1.5 մարդ, Տավուշի մարզում բնակչության բնական աճը 2008թ. եղել է 1.1, 2011թ.՝ 1.3, 2013 թ.՝ 1,4 մարդ[2]:

Երբեմնի արդյունաբերական խոշոր կենտրոն Լենինական (այժմ Գյումրի) քաղաքի բնակչության թիվը 1999թ. կազմել է 216.7 հազ., 2008թ.՝ 147 հազ., իսկ 2014թ.՝ 119.9 հազ. մարդ: Նույն տարիներին Վանաձոր քաղաքի բնակչությունը 172.2 հազարից նվազել և 2014թ. կազմել է 84.3 հազ., իսկ Չարենցավան քաղաքի բնակչությունը 36 հազարից նվազել և 2014թ. կազմել է 20.5 հազար:

Մայրաքաղաք Երևանի բնակչությունը 1999 թվականի 1248.7 հազարից, 2014թ. նվազել և դարձել է 1068.3 հազար[3]:

Արդյունաբերության կազմալուծման հետևանքով նվազել են նաև հանրապետության մյուս բոլոր քաղաքների բնակչությունը: Միակ բացառությունը Քաջարան, Կապան և Հրազդան քաղաքներն են, որոնք շատ աննշան չափով են տուժել այդ տարիներին:

Այսպիսով, արդյունաբերության վերակենդանացումը և ժամանակակից գիտատեխնիկական պահանջներին համապատասխան տարածքային համաչափ զարգացումը կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության տնտեսական վերելքի ու բնակչության վերարտադրության աճի վճռական դեր խաղացող նախապայմանը:

Մինչև 1990թ. ՀՀ դարձել էր բարձր զարգացած ինդուստրիալ երկիր, արդյունաբերության տեսակարար կշիռն ամբողջ տնտեսության համակարգում հասել էր 68 %-ի[4]:

Մինչև 1980-ական թվականների վերջերը, երբ հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տնտեսության ճյուղերի զարգացումը շատ ակնառու էր դարձել, Հայաստանից աշխարհի ավելի քան 110 երկիր էր արտահանվում շուրջ 200 տեսակի արդյունաբերական արտադրանք, այդ թվում միջազգային չափանիշով լայն ճանաչում ստացած ճշգրիտ մետաղահատ հաստոցներ, շարժական էլեկտրակայաններ, սինթետիկ կաուչուկ, ժամացույցներ և շատ այլ արտադրանք: Ի դեպ, դրանց զգալի մասը միջազգային ցուցահանդեսներում բազմիցս արժանացել են մեդալների, դիպլոմների:

Ընդհանուր առմամբ աշխատատար գործընթացներ ունեցող ճյուղերից հանրապետությունում ճշգրիտ էլեկտրատեխնիկական մեքենաշինությունից բացի, բարձր զարգացած էին նաև լեռնահանքային արդյունաբերությունն, գունավոր մետաղաձուլությունը, քիմիական, թեթև, սննդի արդյունաբերությունն իրենց ենթաճյուղերով, որոնցում ընդգրկված էին հանրապետության աշխատունակ ամբողջ բնակչության մեծ մասը:

Եթե մինչև արդյունաբերության սեփականաշնորհումն այս ճյուղերի տեսակարար կշիռը հասել էր 68 %-ի, ապա այժմ այն կազմում է ընդամենը 16,5 %[5]:

Այսպիսով, ժամանակակից համաշխարհային գիտատեխնիկական պահանջներին համապատասխան արդյունաբերության և առհասարակ տնտեսության տարածքային համաչափ զարգացումը ոչ միայն վճռական դեր կխաղա ՀՀ սոցիալտնտեսական վերելքի համար, այլև մեծապես կամրապնդի երկրի ռազմական պաշտպանունակությունը:

---

[1] Տես ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012 թ. էջ 21:
[2] Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Ե. 2014 թ. էջ 33-34:
[3] Տես ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012 թ. էջ 33-34:
[4] Տես Ս.Մելքումյան, ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Ե. 2007, էջ 113:
[5] Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Ե. 2014 թ. էջ 123:

Իսկ որո՞նք են այն նախապայմանները, որոնց հիման վրա այդ հույժ կարևոր խնդիրները հնարավոր է լուծել: Դրանք առաջին հերթին մեր Հանրապետության տարածքի ընդերքում առկա և համաշխարհային չափանիշով նշանակալից տեղ զբաղեցնող գունավոր մետաղներն են, մեր հանրապետության բնական անզուգական քարանյութերի հզոր պաշարներն են, համաշխարհային ճանաչում ստացած հանքային ջրերի խոշոր պաշարներն են: Դրանք նաև մեր լեռնային և հատկապես լեռնանցքներում մշտապես առկա հողմային (քամու) ռեսուրսներն են, որոնք էլեկտրաէներգիայի արտադրության անսպառ, մատչելի արդյունավետ աղբյուր են, հանրապետության ամբողջ տարածքում սփռված բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներն են, որոնք հզոր բազա են միջազգային չափանիշի զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի ստեղծման համար: Դա նաև մեր բնական պայմաններին շատ յուրահատուկ գյուղատնտեսությունն է, որի հիման վրա հնարավոր է ավելի կատարելագործել սննդի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և համաշխարհային շուկային ավելի լայնորեն ինտեգրվել:

Այս ամենն անկասկած պետք է իրականացվի գիտական ներուժի ու աշխատանքային ռեսուրսների նպատակասլաց օգտագործման հիման վրա:

Վերը ոչ լրիվ թվարկված ռեսուրսների խնայողաբար, նպատակային և անթափոն օգտագործման հիման վրա հնարավոր կլինի ստեղծել այնպիսի բազմաճյուղ հզոր արդյունաբերություն որի շնորհիվ մեծանապես կավելանան աշխատատեղերը, նվազագույնի կհասցվի գործազրկությունը և արտագնացությունը, կմեծանա ներգաղթը, ինչպես նաև կբարձրանան բնակչության վերարտադրության ցուցանիշները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման վճռական դեր խաղացող նախապայմանը տնտեսության տարածքային համաչափ զարգացումը և արդյունաբերության վերելքն է:

1970-1990-ական թվականներին ՀՀ նյութական արտադրության ամբողջ համակարգում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 56-68 %: Այսինքն՝ ՀՀ-ը դարձել էր բարձր զարգացած ինդուստրիալ երկիր: Նույն այդ տարիներին Հանրապետության արդյունաբերության համակարգում աշխատողների թվաքանակը հասել է 272.8հազ.-ից -459.9հազ. մարդու:

1988թ-ից սկսած Հայաստանի արդյունաբերության ռիթմիկ աշխատանքը մեծապես խախտվել է, իսկ 1991 թվականից՝ անկախության ուղին բռնելուց հետո, այն արագորեն կազմալուծվեց:

Հանրապետության տնտեսության, այդ թվում, առաջին հերթին արդյունաբերության կազմալուծման գործում հիմնական պատճառը ձեռնարկությունների անհեռատես, տնտեսական առումով չհիմնավորված, մեխանիկորեն ու շուտափույթ սեփականաշնորհման քաղաքականությունն էր: Արդյունքը եղավ այն, որ նախկինում միութենական լայն ճանաչում ունեցող 718 հզոր գործարանների մեծ մասն անգործության մատնվեցին: Բնականաբար, խիստ կրճատվել է ճյուղի արտադրանքի ծավալը և աշխատողների թվաքանակը: Թեև 2005 թվականից հետո Հանրապետության արդյունաբերության համակարգում որոշ դրական տեղաշարժեր են կատարվել, սակայն այդ ցուցանիշները շատ հեռու են բավարար կոչվելուց և հատկապես աշխատանքային ռեսուրսների օգտագործման, գործազրկության բեռի թեթևացման և արտագաղթի կրճատման հույժ կարևոր խնդիրների լուծման համար:

Մասնավորապես, արդյունաբերական-արտադրական անձնակազմի թվաքանակը 2009, 2010 և 2011, 2012 և 2013 թվականներին համապատասխանաբար եղել է 78.8 հազ., 81.4 հազ. և 83.7 հազ, 83.8 և 83.9 մարդ[1]: Մինչդեռ, ինչպես վերը նշվել է, որ 1970 և 1990 թթ. տվյալներով Հանրապետության

[1] Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Ե. 2014 թ. էջ 254:

արդյունաբերության համակարգում աշխատողների թիվը համապատասխանաբար կազմել է 272.8 և 459.9 հազ. մարդ: Ի դեպ, ինչպես նշվել է, այս թվականներին արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության նյութական արտադրության ամբողջ համակարգում կազմել է 56 և 68 %: Իսկ 2011թ. տվյալներով Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքում (3776.4 մլրդ դրամ) արդյունաբերության արտադրանքի (999.0 մլրդ) տեսակարար կշիռը կազմել է 26,5 %[1]: Իսկ 2013թ. այդ ճյուղի արտադրանքի ծավալը (այսինքն արդյունաբերության տեսակարար կշիռը) ընդամենը կազմում է 16%:

Քանի որ աշխատանքային ռեսուրսների ընդգրկվածության առումով Հանրապետությունում վերջին 60-70 տարիներին միշտ վճռական տեղը զբաղեցրել է արդյունաբերությունը, իսկ 1990-ական թվականներից հետո, նախկին հզոր արդյունաբերությունը կազմալուծվել է և հետագայում էլ ճյուղի վերակենդանացումը շատ դանդաղ է իրականացվում, արդյունքում առաջացել է գործազուրկների մեծաքանակ բանակ: Մասնավորապես, միայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 2007թ. կազմել է 82.8 հազ., 2010թ.՝ 78.8 հազ., 2011թ.՝ 69.4 հազ., 2013թ.՝ 55.9 հազ., ըստ որում պաշտոնապես գրանցված գյուղաբնակ գործազուրկների թիվը 2009թ. եղել է ընդամենը 8.5 հազ, 2013թ. 6.3 հազ.մարդ[2]:

Իրականում Հանրապետությունում գործազուրկների թիվն ավելի մեծ է և 2012թ. տվյալներով դրանց քանակը 245.5 հազ. էր, 2013թ.՝ 224.6: Խնդիրը կայանում է նրանում, որ տարբեր պատճառներից ելնելով գործազուրկների մեծ մասը պաշտոնապես չի գրանցվում:

Բնականաբար գործազրկության հետ էլ սերտորեն կապված են Հանրապետության բնակչության աղքատության ցուցանիշները, որոնք ցավալիորեն աճում են:

Մասնավորապես, 2009թ. Հանրապետության աղքատության ցուցանիշը եղել է 33.7%, իսկ 2011թ.՝ 35.2% , 2013թ.՝ 32.2 %, ծայրահեղ աղքատության ցուցանիշները նշված տարիներին եղել է 4.6 և 2.9 %[3]:

Նշենք, որ այժմ բնակչության արտահոսքը մեծացել է գյուղական բնակավայրերից, քանի որ հիմնականում սուբյեկտիվ պատճառներով մեր սակավահող հանրապետությունում սեփականաշնորհված հողատարածքների 45-50%-ը չի օգտագործվում: Իսկ մեր հանրապետության հատկապես ցածրադիր վայրերի կլիմայական պայմանները այնպիսին են, որ եթե հողատարածքները թեկուզ 1-2 տարի չեն օգտագործվում, դրանք նորից անապատացվում են: Այսպիսով, Հանրապետության տնտեսության նյութական արտադրության երկու վճռական դեր խաղացող բնագավառների (արդյունաբերություն և գյուղատնտեսություն) անմխիթար վիճակի հետ է կապված այն հանգամանքը, որ մեր բնակչության զգալի մասը արտադրողից դարձել է սպառող: Դրա վառ օրինակը արտահանման (2013թ.- 1.4 մլրդ ԱՄՆ դոլար) և ներմուծման (2013թ.- 4.3 մլրդ դոլար) ցուցանիշների խիստ բացասական ճեղքվածքն է: Իսկ յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման պատկերը, բնութագիրը տվողը արտահանման և ներմուծման հիմնական ցուցանիշներն են: Մեր տնտեսության արդի անմխիթար վիճակի ապացույցներից է նաև արտաքին պարտքի աճող պատկերը: Մասնավորապես, եթե 2009թ. հանրապետության համախառն արտաքին պարտքը կազմել է 2471.08 մլն դոլար, ապա 2011թ. այն հասել էր 2955 մլն դոլարի, իսկ 2013թ. այն կազմել է 2401.9 մլն դոլար[4]:

Քանի դեռ մեր երկրի աշխատանքային ռեսուրսների օգտագործման հիմնական բնագավառը՝ արդյունաբերության համակարգը ժամանակակից մակարդակից շատ ցածր է, բնականաբար

[1] Տես նշված տարեգիրք, 2014, էջ 15:
[2]Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Ե. 2014 թ. էջ 77-79:
[3] Տես նույն տեղը, էջ 72:
[4] Տես ՀՀ վիճակագրական տարեգիրք, Ե. 2014 թ. էջ 509:

գործազուրկների բավականին մասը ստիպված թողնում հեռանում է երկրից:

Այսպիսով, հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, հետագա զարգացման, գործազրկության խոշոր թվաքանակի կրճատման և արտագաղթի վերացման վճռական դեր խաղացող գործոնը արդյունաբերության աննախադեպ վերելքն է, որն աշխատանքային ռեսուրսների ընդգրկման և զբաղվածության վճռական դեր խաղացող համակարգն է: Իսկ այդ հույժ կարևոր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման վճռական դեր խաղացող նախապայմանները Հանրապետության վարչատրածաքային կառուցվածքի գիտականորեն վերակառուցումն է, որի հիման վրա էլ արտադրության տարածքային համաչափ զարգացումը:

РАВНОМЕРНОЕ ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗМЕЩЕНИЕ ПРОИЗВОДИТЕЛЬНЫХ СИЛ КАК ПРЕДПОСЫЛКА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА И УВЕЛИЧЕНИЯ ЧИСЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ РА

Мелкумян С., д. г.н., профессор, АГЭУ

Планомерное развитие экономики РА имеет непосредственную связь с научно обоснованным административно-территориальным делением. В результате административно-территориального деления РА 1965 года практически во всех районах и городах Армении наблюдался рост промышленного производства, а также значительно увеличилась численность населения. Однако в результате необоснованной и недальновидной политики приватизации экономика страны претерпела значительные негативные изменения, утратив свои позиции на международном рынке.

PROPORTIONATE SPATIAL DISTRIBUTION OF PRODUCTIVE FORCES IS A PREREQUISITE FOR ECONOMIC RISE AND GROWTH OF THE POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA.

Melkumyan S., Doctor of Geographical Sciences, Professor, ASUE

In our opinion, the proportionate economic development of RA is associated with scientifically substantiated administrative-territorial division of labor. As a result of the administrative-territorial division of 1965 almost in all regions and cities of Armenia industrial development began. Besides, the population growth increased significantly. However, after the unfounded and short-sighted privatization of high-developed industry and lands of the republic for the short term our economy has lost the high results which have been achieved in the international market.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Գյուղական բնակավայրերի զարգացումը կախված լինելով մի շարք գործոնների ներգործությունից, իր հերթին նշանակալից ազդեցություն է թողնում տնտեսության զարգացման, տարածքի յուրացվածության և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Դրանցում տեղի ունեցած փոփոխությունները և զարգացման առկա միտումներն էական ազդեցություն են թողնում ինչպես հասարակության տարածքային կազմակերպման, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտների ու ճյուղերի վրա:

Վերջին ավելի քան երկու տասնամյակի ընթացքում ՀՀ գյուղական բնակավայրերում տեղի ունեցող փոփոխությունները և բնակչության թվի շարժընթացի առկա միտումները պայմանավորել են հետևյալ գործընթացները և իրողությունները.

1. ՀՀ-ում տեղի ունեցած հողի սեփականաշնորհումը և դրա հետ կապված գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և նյութատեխնիկական բազայի կրած փոփոխությունները,

2. Երկրի տարածքի խիստ անհավասարաչափ բնակեցվածությունը և մասնատվածության բարձր աստիճանը,

3. ՀՀ-ն ուրբանիզացվածության համեմատաբար բարձր մակարդակի պայմաններում վերջինիս տարածաշրջանային մեծ տարբերությունները,

4. ՀՀ-ից և, մասնավորապես լեռնային ու նախալեռնային շրջաններից բնակչության շարունակվող միգրացիան (արտաքին և ներքին),

5. *Մեր տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պատճառով ՀՀ տրանսպորտաաշխարհագրական դիրքի կրած փոփոխությունները* (Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ՀՀ տրանսպորտային շրջափակումը):

ՀՀ գյուղական բնակչության թվի շարժընթացի միտումները և զարգացման հիմնախնդիրները քննարկելիս պետք է նկատի ունենանք այն հանգամանքը, որ ՀՀ և, մասնավորապես սահմանային ու լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի ամրացումը, կայունացումն ու առաջանցիկ զարգացումը առաջնահերթ ռազմավարական խնդիր է մեր երկրի համար:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացն ըստ մարզերի և տարածաշրջանների (2001 և 2011 թթ. մարդահամարների և 2014 թ. տվյալներով)[1]

ՀՀ մարզերը և տարածաշրջաններ	Գյուղական բնակչության թիվն ըստ տարիների (մարդ)				
	2001		2011		2014
	առկա	մշտական	մշտական	մշտական	
Արագածոտնի մարզ	***96671***	***105437***	***96378***	***102330***	***102000***
Աշտարակ տ/շ	41614	45179	43082	45453	45700
Ապարանի տ/շ	14416	15413	14668	15578	15600
Արագածի տ/շ	12619	14073	12020	13250	13400
Թալինի տ/շ	28022	30772	26608	28049	28100
Արարատի մարզ	***179196***	***192131***	***177636***	***186264***	***186400***
Արտաշատի տ/շ	72197	77532	67604	70744	70300
Արարատի տ/շ	55277	58898	53856	57293	57700
Մասիսի տ/շ	51722	55731	56176	58227	58400
Արմավիր մարզ	***166995***	***177941***	***173802***	***180720***	***181900***
Արմավիրի տ/շ	72254	76057	71167	73582	74400
Էջմիածնի տ/շ	77331	82233	83347	86847	87300
Բաղրամյանի տ/շ	17411	19651	19288	20291	20200
Գեղարքունիքի մարզ	***144513***	***158693***	***145138***	***163652***	***163300***
Գավառի տ/շ	28922	31963	26884	31922	31700
Կարմիրի տ/շ	8978	9225	7461	7938	7800
Մարտունու տ/շ	63350	72023	67654	77330	77400

[1] Աղյուսակը կազմած է «ՀՀ 2001 թ. Մարդահամարի արդյունքները», Ե. 2013 թ. Ժողովածուի, «ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային միավորների և սեռի, 2011 թ.» մարդահամարի և www.armstat.am-ի տվյալների հիման վրա:

Սևանի տ/շ	18423	19645	18321	20547	20800
Վարդենիսի տ/շ	24840	25837	24818	25915	25600
Լոռու մարզ	***104667***	***116455***	***86595***	***97753***	***95300***
Գուգարքի տ/շ	23448	27148	19970	22675	21800
Թումանյանի տ/շ	25865	27247	20870	22161	22800
Սպիտակի տ/շ	24001	26509	20252	23349	23300
Ստեփանավանի տ/շ	15941	17206	13675	15156	14800
Տաշիրի տ/շ	15412	18345	11828	14412	13500
Կոտայքի մարզ	***109985***	***118478***	***112818***	***116916***	***116800***
Հրազդանի տ/շ	22807	24516	20158	21845	21700
Կոտայքի տ/շ	53554	57371	56379	58081	58100
Նաիրիի տ/շ	33624	36601	36281	36990	37000
Շիրակի մարզ	***95944***	***109129***	***95826***	***105033***	***103800***
Ախուրյանի տ/շ	39989	45589	38151	41546	40900
Ամասիայի տ/շ	6576	7686	5625	6306	6300
Անիի տ/շ	13080	14668	11922	13560	13600
Աշոցքի տ/շ	9375	9917	8345	9090	9200
Արթիկի տ/շ	26924	31269	31783	34531	33800
Սյունիքի մարզ	***46051***	***48537***	***39269***	***46601***	***46300***
Կապանի տ/շ	7980	8413	6580	8203	8000
Գորիսի տ/շ	19392	20610	17470	20982	20900
Մեղրիի տ/շ	2538	2627	2255	2368	2300
Սիսիանի տ/շ	16141	16741	12964	15048	15100
Վայոց ձորի մարզ	***34902***	***36392***	***30825***	***33875***	***33500***
Եղեգնաձորի տ/շ	26319	27563	23571	26051	25700
Վայքի տ/շ	8583	8829	7254	7824	7800
Տավուշի մարզ	***78156***	***83655***	***66360***	***74423***	***73700***
Դիլիջանի ք/հ	5602	6322	5371	6248	6100
Իջևանի տ/շ	25095	27410	23343	26793	27000
Նոյեմբերյանի տ/շ	25144	26473	19699	21910	21800
Տավուշի տ/շ	22315	23450	17947	19472	18800
Ընդամենը ՀՀ-ում	***1057080***	***1146858***	***1024647***	***1107567***	***1103000***

ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչության թվի շարժընթացի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած մեկուկես տասնամյակի ընթացքում հարյուրավոր գյուղական բնակավայրերում ***նկատելիորեն պակասել է առկա և մշտական բնակչության թիվը***: ***Այդ երևույթն առավել ցայտուն է արտահայտվում մինչև 200 բնակիչ ունեցող*** գյուղերում, որոնց զգալի մասը կանգնած է բնազրկման վտանգի առջև: Խախտվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը, առաջացել է ոչ բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որն առավել սուր դրսևորում ունի երկրի սահմանամերձ և բարձրա-լեռնային շրջանների գյուղական բնակավայրերում: Այդպիսի շրջաններից բնակչության հեռացումն ու բնակավայրերի լքումը կնվազեցի հանրապետության տարածքի ***տնտեսական տարողունակությունը***:

Գյուղական բնակավայրերի վերը նշված հիմնախնդիրները եթե նախկինում բնորոշ էին

հիմնականում բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերին, ապա ներկայումս նմանատիպ խնդիրներ ունեն նաև ՀՀ գյուղական բնակավայրերի մեծ մասը:

Թիվ 1 աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ***2001 թ. համե-մատությամբ 2014 թ-ին ՀՀ գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է 43858-ով կամ 3,8 % -ով***: ***Բացի Արմավիրի և Գեղարքունիքի մարզերից*** գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է ՀՀ բոլոր մարզերում: ՀՀ 2001 թ. մարդահամարի տվյալներով ՀՀ-ում գյուղական ***առկա բնակչության*** թիվը մոտ ***90 հազ.-ով պակաս էր*** մշտական բնակչության թվից, իսկ ***2011 թ. մարդահամարի*** ժամանակ այդ տարբերությունը կազմել է ***շուրջ 83.000 հազար մարդ***:

Չնայած վերջին տարիների համար հանրապետության գյուղական բնակչության առկա թվաքանակի վերաբերյալ չկան վիճակագրական հավաստի տվյալներ, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ***ՀՀ-ում գյուղական բնակչության մշտական և առկա թվաքանակի վերը նշված տարբերությունը ոչ միայն պահպանվում է, այլ էլ ավելի է մեծացել***: Վերջինիս մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին տասնամյակի ընթացքում ***ՀՀ գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է համեմատաբար բարենպաստ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող այնպիսի մարզերում, ինչպիսիք են Արագածոտը և Արարատը*** (աղ. 1):

Արագածոտնի մարզի ***111 գյուղական համայնքների մեծ մասում*** այդ ընթացքում դիտվել է գյուղական մշտական բնակչության թվի նվազում: Բնակչության թվի նվազում ***է դիտվել ոչ միայն փոքր և միջին մեծության*** գյուղական բնակավայրերում, այլ նաև ***Արագածավան, Արտենի, Բյուրական, Ծաղկահովիտ, Մաստարա, Կաթնաղբյուր*** և մի շարք այլ մեծ և խոշոր գյուղերում:

Արմավիրի մարզում գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է այնպիսի գերխոշոր և խոշոր գյուղական համայնքներում ինչպիսիք են ***Նալբանդյանը, Բամբակաշատը, Հայթաղը, Ակնալիճը*** և այլն:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2001 թ. համեմատությամբ ***2014 թ.-ին ՀՀ 37 տարածաշրջաններից 28-ում գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է (տես աղ. 1), իսկ 2011-2014 թթ. ընթացքում այդպիսի տարածաշրջանների թիվը*** հասել է 31-ի:

Ինչպես ***բացարձակ թվով***, այնպես էլ ***հարաբերական մեծությամբ*** ՀՀ-ում գյուղական մշտական բնակչության թիվն առավել մեծ չափով ***նվազել է Լոռու մարզում (21155-ով և 18,2 %-ով)***: Գյուղական մշտական բնակչության թվի նվազման համեմատաբար բարձր տոկոսներ են արձանագրվել նաև ***Տավուշի (11 %)*** և ***Վայոց ձորի (7,9 %)*** մարզերում, իսկ ***ամենացածրը՝ Կոտայքի մարզում (1,4%)***:

ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչության թվի 2001 և 2011 թթ. մարդահամարի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ ***Շիրակի մարզի 116 գյուղական համայնքներից*** մշտական բնակչության թիվը ***նվազել է 80 գյուղական համայնքում***, իսկ ***Լոռու մարզի 105 գյուղական համայնքներից ընդամենը 8-ում*** է բնակչության թիվն ավելացել կամ պահպանվել նույնը, ***մնացած 97 համայնքում այն նվազել է***:

Չնայած որ Արմավիրի և ***Գեղարքունիքի մարզերում*** 2001-2014 թթ. ընթացքում արձանագրվել է գյուղական մշտական բնակչության թվի աճ, սակայն այս մարզերում ևս զգալի թվով գյուղերում տեղի է ունեցել բնակչության թվի նվազում: ***Նմանատիպ պատկեր է նաև Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Արարատի մարզերում***:

Հանրապետության գյուղական բնակչության ***թվաքանակի շարժընթացը*** նկատելի փոփոխություններ է առաջացրել ***նաև ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև***:

1970 թ-ի համեմատությամբ 2012 թ. հանրապետությունում ***մինչև հարյուր բնակիչ*** ունեցող գյուղերի թիվն ավելացել է 3.5 անգամ ***(1,7 %-ից 6,7 %)*** [1]: Նույն այդ ժամանակաշրջանում 101-200 բնակիչ

ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ավելացել է ***մոտ 1,7 անգամ՝ 48-ից հասնելով 82-ի***:

Մինչև 200 բնակիչ ունեցող մանր և փոքր գյուղերի թվաքանակի ավելացումը հիմնականում տեղի է ունեցել 201-500 բնակիչ ունեցող գյուղերի հաշվին: Վերջիններիս թիվը 1970 թ-ի համեմատությամբ ***նվազել է 62-ով*** [1]:

Հանրապետությունում մանր և փոքր գյուղերի թվի ավելացումն ավելի արագ տեմպերով է տեղի ***ունեցել հատկապես 1995-2012 թթ. ընթացքում*** (մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի ***թիվը 1995 թ. 97-ից 2012 թ. հասել է 141)***: Ներկայումս ՀՀ-ում ***բնակեցված գյուղերի 15.6 %-ը կազմում են մանր և փոքր գյուղերը, այն դեպքում, երբ 1995 թ. այդպիսիք կազմել են ՀՀ գյուղերի 11.1 %-ը, իսկ 1970 թ.՝ ընդամենը 7.1 %-ը, այսինքն՝ 1970-2012 թթ. ընթացքում հանրապետությունում մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերն ավելացել են մոտ 2.2 անգամ***:

ՀՀ գյուղական բնակավայրերի ***29 %-ը 1970 թ.*** ուներ 501-1000 բնակիչ և դրանցում ապրում էր երկրի գյուղական բնակչության ***մոտ 19 %-ը***: 1970-2012 թթ. ընթացքում այդպիսի գյուղերի թիվը նվազել է ***98-ով***, իսկ դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության ***ընդամենը 9.9 %-ը***: Համեմատաբար կայուն է մնացել ***1001-3000 բնակիչ*** ունեցող գյուղերի խումբը: Դրանցում գյուղերի ***թիվը մնացել է գրեթե նույնը***, սակայն 7,6 տոկոսային կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ՀՀ-ում [1]:

Հաջորդ նկատելի փոփոխությունը ՀՀ-ի գյուղական բնակավայրերի մեջ տեղի է ունեցել խոշոր և գերխոշոր գյուղերի խմբերում (3001-5000 և 5001-ից ավելի մարդ ունեցող գյուղերը): 1970 թ-ի համեմատությամբ 2012 թ. 3001-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ***ավելացել է մոտ 2.2 անգամ***, 47-ից հասնելով 103-ի: Առավել նկատելի է 5001-ից ավելի մարդ ունեցող գյուղերի թվի աճը՝ ավելի քան 6 անգամ:

Հանրապետության գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում ավելի քան 2 անգամ ավելացել է նաև 3001-ից ավելի մարդ ունեցող գյուղերի բնակչության բաժինը: Եթե 1970 թ. այդպիսի գյուղերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության ***19.2 %-ը***, ապա ***2012 թ-ին՝ 39.8 %-ը***: Այսինքն՝ ՀՀ բնակեցված ***գյուղերի 11.4 %-ին (103 գյուղ)*** բաժին է ընկնում երկրի գյուղական բնակչության մոտ 40 %-ը:

Ընդհանրացնելով բերված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ.

1/ եթե մինչև 1990-ական թվականների կեսերը ՀՀ-ում գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազումը բնորոշ էր հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերին, ապա հետագա ժամանակաշրջանում այդ երևույթը դիտվում է նաև բազմաթիվ մեծ, խոշոր և նույնիսկ գերխոշոր գյուղերում,

2/ գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազում տեղի է ունեցել բոլոր մարզերում և տարածաշրջաններում, ընդգրկելով նաև առավել նպաստավոր բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող մարզերի ու տարածաշրջանների մեծ, գերխոշոր և գերխոշոր գյուղական բնակավայրերը,

3/ ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրերում մշտական բնակչության թվի նվազման պատճառով ստեղծվել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որի հետևանքով առաջանում են գյուղական բնակավայրերի տնտեսական, սոցիալական ու կենցաղային կյանքի կազմակերպման բազմաթիվ հիմնախնդիրներ,

4. ըստ մարդաշատության հանրապետության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով նկատելիորեն ավելացել է մանր և փոքր գյուղերի (մինչև 200 բնակիչ) բաժինը: Չնայած որ 1970-2012 թթ. ընթացքում համեմատաբար կայուն է մնացել 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, սակայն 7,6 տոկոսային կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ,

5. Ըստ գերակշռող մարդաքանակի հանրապետության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև բնակչության բաշխման տարբերություններն ավելի են մեծացել: Մինչև ***1000 բնակիչ ունեցող 483*** գյուղական բնակավայրերում (ՀՀ բնակեցված գյուղերի 53, 4 %-ը) ապրում է երկրի գյուղական բնակչության ***ընդամենը 15.5 %-ը***, որի հետևանքով նվազում է այդ բնակավայրերի տարածքային և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը,

6. ՀՀ գյուղական բնակչության թվի շարժընթացի և դրանով պայմանավորված տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալի ***բնույթ ունեն հանրապետության բարձրլեռնային և սահմանամերձ*** շրջաններում, որտեղ գյուղերի միջին մարդաշատությունը փոքր է և շարժընթացի նման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում դրանք կկանգնեն բնազրկման վտանգի առաջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պոտոսյան Ա.Հ., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. 2013, 416 էջ:
2. Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները), Ե., 2003, 542 էջ:
3. ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակներն ըստ վարչատարածքային միավորների և սեռի 2011 թ. մարդահամարի տվյալներով:
4. www. armstat.am.

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ДИНАМИКИ ЧИСЛЕННОСТИ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ РА И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Подосян А. А., к.г.н., доцент, ЕГУ

В статье на основе анализа данных переписей 2001, 2011г.г. и показателей численности постоянного и наличного сельского населения за 2014 г. рассматриваются современные тенденции динамики численности сельского населения РА по марзам и районам. Выявлены изменения и возникшие социально-экономические проблемы, имевшие место после 1970 –ых годов в разных группах по людности сельских поселений РА.

THE MODERN TRENDS OF DYNAMICS THE RURAL POPULATION OF RA AND SOCIO-ECONOMIC ISSUES

Potosyan A.H, PhD on geography, Associate Professor, YSU

In the article on the basis of analysis of census 2001, 2011 and indicators of the number of resident and cash for the rural population in 2014 examines the current trends on dynamics in the rural population of RA by marzes and regions. The changes and the arisen socio-economic problems that have occurred since 1970 -s years in different groups of population size of rural settlements of Armenia has revealed.

ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԽՆԴԻՐ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն
ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ , ԵՊՀ

Հայաստանի Հանրապետության տնտեսության կենսունակ և արդյունավետ կառուցվածքի ձևավորման բազմաբարդ խնդրի լուծումը, որքան էլ դա ֆիզիոկրատական հնչի, խարսխված է գյուղատնտեսության վրա: Հանգամանքների բերումով ներկայումս հաստատված ՀՀ տնտեսության ձևախեղված կառուցվածքի պայմաններում զարգացող գյուղատնտեսությունը կհանդիսանա յուրահատուկ .ցողանային բջիջ՝ ողջ տնտեսական օրգանիզմի առողջացման համար:

Գյուղատնտեսության մեջ և նրա շուրջ վերջին ութսունամյակում իրականացված կառավարական միջամտությունների (համատարած կոլեկտիվացում, համատարած սեփականաշնորհում) կապակցությամբ արդիական է Անտիկ հռոմում առաջին դարում հնչեցված հետևյալ միտքը. Գյուղատնտեսությունը կարելի է կառավարել առանց նրբությունների, սակայն այն չի հանդուրժում նաև տխմարությունը՝:

Արդյունաբերության և տնտեսության իրական հատվածի մյուս ոլորտների նկատմամբ տնտեսական աճի տեսանկյունից համեմատական առավելությունների առկայությունն առաջնահերթ է դարձրել գյուղատնտեսության ու գյուղի հիմնախնդիրների լուծման ուղիների որոնումը:

Հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսություններում զբաղվածների մոտ 1/3-ը խորհրդային փուլում ագրարային հատվածում չաշխատած, ուստի աշխատանքային բավարար հմտություններ ու փորձ չունեցող քաղաքացիներ են: Գյուղացիական տնտեսություններ վարող այս սոցիալական խումբն ունի այլ նպատակներ. ի հակադրություն գյուղացու հանրահայտ «տիրոջ զգացումի»՝ ֆերմեր-քաղաքաբնակների մեջ գերակշռում է ցանկացած միջոցներով արագ հարստանալու, հնարավորինս շատ հողատարածքների տիրանալու, գյուղատնտեսական տեխնիկա ու սարքավորումներ հնարավոր առավելագույնը ձեռք գցելու և կորզելու գաղափարը: Սակայն այս դեպքում գերակշռում են ոչ այնքան իրատեսական հաշվարկները, որքան ընձեռած հնարավորություններից (համարյա ձրի հող, էժան տեխնիկական միջոցներ, մատչելի ենթակառուցվածքներ և այլն) օգտվելու ինչ-որ տեղ արկածախնդրական մոտեցումը:

Հողի շուկան ձևավորվում է դանդաղ, և գյուղացիական տնտեսություններում առայժմ չի նկատվում խոշորացման միտում: ՀՀ ագրարային հատվածում այսօր առկա են հանրային մեծ կարևորություն ունեցող և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ: Սրանց շարքին կարելի է դասել.

• Գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական ցածր կարողությունների և եկամուտների հիմնախնդիրը:

Հողի սեփականաշնորհումից հետո հանրապետությունում ձևավորվել են ավելի քան 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին է ընկնում 1,4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1,1 հա վարելահող, 0,12 հա բազմամյա տնկարկներ և 0,2 հա խոտհարքեր: Ըստ հանրապետության առանձին մարզերի ու տարածաշրջանների՝ այս չափերը խիստ տատանվում են:

Տնտեսավարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, և մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1 միլիոն 284 հազար հողակտորների, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսական արտադրության և այն սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը: Արտադրանքի իրացման ցածր գների պատճառով չեն զարգանում նաև անասնաբուծության ենթաճյուղերը: Շատ գյուղացիական տնտեսություններում սահմանված գների մակարդակը նույնիսկ չի փոխհատուցում արտադրության վրա կատարված ծախսերը: Հիմնականում այդ պատճառով էլ այսօր յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության միջին հաշվով բաժին է ընկնում 1,5 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 1,7 գլուխ ոչխար, և յուրաքանչյուր 5 տնտեսությանը՝ 1 գլուխ խոզ:

Գյուղացիական տնտեսություններում առայժմ գերակշռում է ցածր արտադրողականությամբ ձեռքի աշխատանքը:

Դա է հիմնական պատճառներից մեկը, որ սակավահող մեր հանրապետությունում ագրարային հատվածի ***կարևորագույն և անփոխարինելի բնառեսուրսային ներուժ համարվող վարելահողերի ավելի քան մեկ երրորդը նպատակային չի օգտագործվում***: Այսպես, վերջին հինգ տարիներին նպատակային չեն օգտագործվել միջին հաշվով շուրջ 167 հազ. հա վարելահողեր կամ դրանց ընդհանուր տարածքի ավելի քան 38%-ը: ***Հանրապետության 232,9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից այսօր փաստացի ոռոգվում է շուրջ 156 հազ. հա, կամ գյուղատնտեսական ակտիվ շրջանառությունից դուրս են մղվել ավելի քան 76 հազ. հա բարելավված հողատարածքներ***: Ընդ որում, գյուղատնտեսական հողատարածքների մասնատվածությունն ու գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը անհնար են դարձնում սեփականաշնորհված հողակտորներում համակարգված ցանքաշրջանառության կազմակերպումը, ոռոգման, պարարտացման և հողաբարելավման ու ագրոտեխնիկական այլ անհրաժեշտ միջոցառումների արդյունավետ իրականացումը:

Վերջին տասնամյակում ավելի քան 10 անգամ կրճատվել է հանքային, գրեթե 18 անգամ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ գյուղատնտեսական մշակաբույսերի ու կենդանիների պաշտպանության համար քիմիական միջոցների օգտագործումը:

• Գյուղացիական տնտեսությունների ֆինանսատնտեսական և սոցիալական կացությունը և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Բոլոր մակարդակներում գյուղացիական տնտեսությունների մոտ 70%-ն ժամկետանց պարտքեր ունի ռեսուրսներ մատակարարողներին, իսկ նրանց ընդհանուր պարտքը վարկատուներին համադրելի չէ գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացվող օգուտներին:

Լեռնային ու սահմանամերձ գյուղական մի ստվար խումբ բնակավայրեր ոչ միայն հայտնվել են վերացման եզրին, այլև զգալի չափերի հասնող սեփականաշնորհված հողակտորներ դուրս են մնացել գյուղատնտեսական ցանքաշրջանառությունից, որն էլ հանգեցրել է այդ բնակավայրերի էկոհամակարգերի խախտմանը և առաջացրել սոցիալ-տնտեսական ու ագրոէկոլոգիական անցանկալի հետևանքներ:

Միաժամանակ, վերջին տարիներին զանգվածային բնույթ է ստացել հայ գյուղացիության հոգեկերտվածքին ոչ բնորոշ մի բացասական երևույթ. կամովին հրաժարվում են սեփականաշնորհված հողերից ու դրանք վերադարձնում տեղական իշխանություններին: Մտահոգիչ է նաև այն, որ այս քայլին դիմում են սոցիալական անապահովության նպաստառուների ցուցակում հայտնվելու նպատակով: Այսինքն՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվելն այսօր այնքան անեկամտաբեր է ու անհեռանկարային, որ սոցիալական ապահովության չնչին նպաստը հայ գյուղացիության սոցիալական որոշ շերտերի համար կայուն եկամուտ ունենալու առումով ավելի նախապատվելի է:

Այսօր ՀՀ գյուղացիական տնտեսությունների մեծ մասը վերածվել է կիսաբնամթերային, իսկ մի մասն էլ՝ բնամթերային տնտեսության: Դրանք չեն ապահովում ապրանքայնության անհրաժեշտ մակարդակ: Գյուղացիական տնտեսությունները սովորաբար օգտագործում են իրենց սեփականաշնորհված հողատարածքի մոտ 45-55%-ը, այսինքն՝ ճիշտ այնքան, որ ապահովի սեփական կարիքներն անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքներով (սեփական սպառում, պարզ ապրանքափոխանակություն և մի փոքր մասի իրացում շուկայում ու այլ ուղիներով):

Քանի որ տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ ներգրվված են վարկային ծրագրերում, ապա առնվազն աններելի է, որ փորձեր չեն արվում պետական մակարդակով կազմակերպելու դրանց ապահովագրությունը:

Հանրապետության ագրոպարենային համակարգի արտադրատնտեսական, սոցիալական և էկոլոգիական ոլորտներում տիրող վիճակը մտահոգիչ է և կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելու պարագայում կարող է հանգեցնել.

✓ գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակներում առաջացած ճեղքվածի հետագա խորացման,

✓ գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական իրավիճակի հետագա վատթարացման (զանգվածային գործազրկություն ու արտագաղթ, լեռնային ու սահմանամերձ գյուղական բնակավայրերի ամայացում, սոցիալական ենթակառուցվածքների վատթարացում, էկոհամակարգերի խախտում, հողերի էրոզիա, անապատացում և այլն),

✓ հանրապետության բնակչության մի զգալի մասի համար (հատկապես սոցիալական անապահով խմբերի) պարենի մատչելիության նվազման,

✓ հանրապետության ագրարային հատվածի նյութատեխնիկական, կադրային, ազգային գենոֆոնդի և բնաէկոլոգիական ներուժի վերարտադրության խաթարման:

ՀՀ ագրոպարենային համակարգում և առաջին հերթին ագրարային հատվածում ծավալվող ճգնաժամի հիմնական պատճառները պետք է փնտրել համընդհանուր տնտեսական քաղաքականության և հատկապես պետության կողմից տնտեսության մեջ ագրարային հատվածի տեղն ու դերը թերագնահատելու մեջ:

• Աշխատանքի արտադրողականության աճի խոչընդոտները և հաղթահարման ուղիները:

ՀՀ ագրարային հատվածում աշխատուժն արդյունավետ օգտագործելու, արտադրության սեզոնայնությամբ պայմանավորված անհամաչափությունը մեղմելու և հետևաբար աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար տնտեսապես նպատակահարմար է գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության հետագա ծավալում:

• Գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնահարցերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիարժեք չեն գործում գյուղատնտեսական մթերքների իրացման, վերամշակման և պահեստավորման ենթակառուցվածքներն ու ստորաբաժանումները: Գյուղատնտեսական մթերքների ու հումքի իրացման ոլորտում ձևավորված եկամուտների չնչին մասն է (10-15%) բաժին ընկնում այդ արժեքը ստեղծող արտադրողին՝ գյուղացուն:

• Գյուղացիական տնտեսությունների համագործակցության՝ կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը:

Ագրարային հատվածում պետական քաղաքականությունը կտրուկ փոփոխության կարիք ունի: Դրա առանցքային նպատակը պետք է լինի մասնատված և փոքր չափերի գյուղատնտեսական ապրանքարտադրողներին իրենց ընդհանուր հետաքրքրությունների և շահերի շուրջ միավորելը՝ պահպանելով նրանց տնտեսական ինքնուրույնությունն ու ազատությունը:

Պետական քաղաքականությունը տնտեսության ագրարային հատվածում չի կարող լինել արդյունավետ և զարգացում խոստացող, եթե այն չի խարսխված գյուղացիական տնտեսությունների հորիզոնական և ուղղահայաց կոոպերացիայի վրա, որը ոչ միայն պաշտպանվում, այլև ուղղակիորեն խախտվում է պետական առանձին մարմինների կողմից:

Պարտադիր չէ ստեղծել կառավարչական առանձնացված մարմիններ: Դրանք լավագույնս լուծվում են կոոպերացիայի տարբեր ձևերի շրջանակներում և հատկապես ձևավորման նախնական փուլում գյուղացիական տնտեսությունների ոչ առևտրային միավորների ու ընկերությունների միջոցով: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ կոոպերատիվները գործնականում դառնում են տնտեսության ագրարային հատվածում մենաշնորհային դիրք ունեցող ձեռնարկությանը հակադրվելու լավագույն միջոցներից մեկը:

ՀՀ տնտեսության ագրարային հատվածի զարգացման այժմյան փուլում կարևոր է խթանել գյուղատնտեսական կոոպերացիան, որի դեպքում բազմաթիվ գյուղացիական փոքր տնտեսություններ կամավորության հիմունքներով միավորվում են իրենց միատեսակ գյուղատնտեսական միջոցներով՝ գյուղական վայրերում ձևավորելով կոլեկտիվներ (գյուղացիական միավորումներ ու ընկերություններ), և համատեղ իրականացնում գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում, պահեստավորում և իրացում՝ կատարելով աշխատանքի միևնույն կամ տարբեր, բայց փոխկապակցված արտադրատեխնոլոգիական գործընթացներ:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ գյուղացիների գերակշռող մասը խուսափում է արտադրական կոոպերատիվին անդամակցելուց: Եթե գյուղացիական տնտեսությունները ներգրավվեն սպառողական կոոպերատիվի կազմում և համատեղ լուծեն ներդրումների, մեծածախ գնումների, արտադրանքի իրացման, ագրովերամշակման, մասնագիտական ապահովման, վարկավորման, ապահովագրության և այլ խնդիրներ, ապա որոշակի հանգրվանում կստեղծվեն պայմաններ ու վստահություն նաև արտադրական կոոպերատիվների ձևավորման, տնտեսությունների խոշորացման և հողերի միավորման համար:

ՀՀ-ում ձևավորված յուրահատուկ՝ առանց արտաքին ներարկումների գրեթե անկենսունակ տնտեսական կառույցի էական մասը հանդիսացող գյուղատնտեսությունը հրատապ բարեփոխումների կարիք ունի:

«Եթե հաջողվեր ժողովել մեր երկրի տարեկան բյուջեին համազոր դրամագլուխ, այն տնտեսության ո՞ր ոլորտներում կներդնեիք» հնարավոր հարցին մեր պատասխանն աներկբա է. նախ և առաջ՝ գյուղատնտեսությունում: ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաներին ու գիտելիքահենք տնտեսությանը նախապատվություն տալը տեսանելի հորիզոնում խիստ ցանկալի է, սակայն մեծ արդյունքների ակնկալությունը իրատեսական չէ մեկ պարզ պատճառով՝ բացակայում են անհրաժեշտ տեխնոլոգիաները, գիտակրթական համակարգերն ու կենտրոնները:

Մինչդեռ ներկայացված հիմնադրույթների հենքով գյուղատնտեսությունում և գյուղում ծրագրային երկարաժամկետ խնդիրների լուծումն այլընտրանք չունի: Ընդ որում ծրագրերի գործարկման լավագույն միջոց կարող է լինել պետական ներդրումային հիմնադրամի ստեղծումը: Ներկա ոչ բարվոք տնտեսության ոլորտում բեկում մտցնելու համար գոյություն չունի ներդրումային առավել հավակնոտ ու մասշտաբային այլընտրանք, քան ավանդական ռեսուրսների՝ մեր երկրի հողի, ջրի, «մեզ բաժին հասած» արևի էներգիայի ու մարդկային կապիտալի պաշարամիջոցների արդյունավետ օգտագործումը[1]:

---

[1] Հիմնախնդիրների հնարավոր լուծումների մասին առավել մանրամասն տե՛ս **Հ. Մարգսյան**, **Ա. Մարկոսյան**, <<Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները>>, Ե. ՝Զանգակ՝, 2014:

Հիմնական գաղափարն այն է, որ Հայաստանի զարգացման ներկա փուլում տնտեսության պետական կարգավորման ու հատկապես խնդրո առարկա՝ գյուղատնտեսության ոլորտին ու գյուղի զարգացման խնդիրներին պետության՝ շատ դեպքերում անհաղորդ լինելը որևէ արդարացում չունի և չի բխում մեր երկրի ազգային շահերից: Տնտեսության անափ լիբերալացումը եթե չի ուղղորդվում առաջընթացի ապահովման համապարփակ լուծումներով, կարող է առանձին դեպքերում կործանարար հետևանք ունենալ, ինչպես դա եղավ մեզ մոտ և շարունակվում է հողօգտագործման (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և ջրօգտագործման բնագավառներում:

РАЗВИТИЕ СЕЛА И СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА КАК ЦЕНТРАЛЬНАЯ ЗАДАЧА НОРМАЛЬНОГО ФУНКЦИОНИРОВАНИЯ ЭКОНОМИКИ РА.

Саргсян Г., д.э.н., профессор, ЕГУ, Маркосян А., д.э.н.,профессор, Галстян Г., к.э.н.,доцент, ЕГУ

Как ни парадоксально, но формирование эффективной и жизнеспособной экономики в РА связано с развитием сельского хозяйства и села. В статье исследуются проблемы и возможные решения этой многоуровневой задачи в контексте экономической политики правительства РА.

DEVELOPMENT OF VILLAGE AND AGRICULTURE AS THE CENTRAL PROBLEM OF THE NORMAL FUNCTIONALITY OF THE ECONOMY OF RA.

H. Sargsyan, A. Markosyan, G. Galstyan

It may seem paradoxical but the formation of the effective and viable economy in RA is connected with the development of agriculture and village. In the present article the possible solutions of that multilevelled problem are being examined in the context of the economical policy of the government of RA.

МЕЖДУНАРОДНЫЙ И НАЦИОНАЛЬНЫЙ ОПЫТ В СФЕРЕ ИНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

КАРИНЕ ДАНИЕЛЯН, доктор геогр. наук, профессор, АГПУ им.Х.Абовяна,
ЛЮДМИЛА АВАНЕСЯН, кандидат педагог. наук, доцент, АГПУ им.Х.Абовяна

Ключевые слова: современная цивилизация, качества жизни, качества окружающей среды, международные отношения, развития цивилизации,

В течение последних 20 лет как на международном, так и на национальном и местном уровнях развернута широкомасштабная деятельность по формированию институциональных основ устойчивого развития.

Так, согласно рекомендаций Саммита ООН по устойчивому развитию ‚Рио+20ԝ, целенаправленных на ***повышение потенциала и активизацию деятельности структур ООН*** в данной сфере, осуществлены мероприятия по значительному укреплению ЮНЕП (UNEP – Программа ООН по окружающей среде) и повышению статуса Комиссии ООН по устойчивому развитию, которая преобразована в Политический форум высокого уровня, одобрена международная программа, Зеленый мост, благодаря которой Республика Казахстан будет содействовать в качестве, моста передаче зеленых технологий из развитых стран Запада в страны Юга и Востока [10,26].

Важную роль в рассматриваемом аспекте выполняют также различные ***всемирные и региональные сети,*** содействующие развитию зеленой экономики в целях устойчивого развития.

Так, например, сформирована и успешно функционирует всемирная сеть городов, объединившихся во имя устойчивого развития – ICLEI (Local Governments for Sustainability– Местные власти во имя устойчивости) со штаб-квартирой в Германии, г. Бонне. Эта организация периодически организует конгрессы, где муниципалитеты обмениваются позитивным опытом, издает книги/журналы с обсуждением насущных проблем и наиболее оптимальных путей их решения, а также другой важной для городов информацией в контексте устойчивого развития. С данной деятельностью органично согласуются действия, развиваемые в соответствии с Соглашением мэров по климату, подписание которого мэрами европейских городов инициировано Европейским союзом.

Отметим, что г. Ереван и г.Раздан включились в сеть ICLEI, а также целый ряд городов РА, включая г.Ереван, подписали вышеуказанное Соглашение мэров.

В 2009-10гг. сложилась ‚Международная коалиция зеленой экономики‛ под девизом ‚Люди, планета, процветание‛, в которой состоят многие авторитетные всемирные и региональные организации: UNEP, IUCN (Международный союз охраны природы), WWF (Всемирные фонд дикой природы), ILO (Международная организация труда), WBCSD (Всемирный совет бизнеса по устойчивому развитию) и другие.

В рамках Десятилетия ООН по образованию в интересах устойчивого развития (ДОУР) функционирую многочисленные сети, объединяющие различные институты среднего и высшего образования. 60 крупнейших бизнесшкол и университетов из многих стран мира одобрили Декларацию высших учебных заведений и обязались включить проблематику устойчивости в учебный процесс, исследовательскую работу и в систему их собственного управления и организации. Хартия Земли, признанная ЮНЕСКО этическим кодексом устойчивого развития, включена в системы формального и неформального образования во многих странах мира.

Правительства более 50 государств, в рамках Инициативы ООН ‚Устойчивая энергетика для всех, разработали планы и программы, направленные на достижение к 2030 году трех целей инициативы: обеспечение доступа к энергии, удвоения эффективности использования энергии и удвоения доли возобновляемых источников энергии.

Предложена новая десятилетняя платформа координации научных исследований в области устойчивости на глобальном уровне, получившая название ‚Будущая Земля‛. Спонсором данного альянса является Международный научный совет со штаб квартирой в Париже, в состав которой входят 121 национальное учреждение и 30 международных научных союзов. Правительство Бразилии создало Всемирный центр по вопросам устойчивого развития ‚Центр Рио+, который способствует проведению исследований, обмену знаниями и международному обсуждению различных вопросов и примеров позитивного опыта в сфере устойчивого развития.

Сформированы также глобальные партнерства по проблемам устойчивого транспорта, поддержке экологической устойчивости океанов, продовольственной безопасности и устойчивому сельскому хозяйству и другие. [6,10,26].

Значительную роль в сфере продвижения стран к устойчивому развитию выполняют ***национальные советы по устойчивому развитию (НСУР-ы) и местные советы по УР (МСУР-ы).***

В более чем 100 странах функционирующие НСУР-ы выполняют сходные функции и преследуют близкие цели: содействие разработке и реализации национальных программ по решению экологических задач, развитию зеленой экономики в интересах сокращения бедности и устойчивого развития, повышение осведомленности населения в данной сфере. Вместе с тем советы различаются по своей структуре и форме управления. Так, в разных странах НСУР-ами руководят:

- президент или вице-президент страны,
- представитель королевской семьи,
- премьер-министр или вице-премьер-министр,

- министры экономики или финансов, или экономического развития,
- министр экологии / охраны окружающей среды,
- министр иностранных дел,
- признанные в стране представители интеллигенции или бизнеса,
- общественные организации.

Различны также способы законодательного регулирования деятельности НСУР-ов, а именно:

- конституционным путем,
- указом президента страны,
- законом, принятым парламентом,
- постановлением правительства или решением премьер-министра,
- приказом соответствующего министра.

Местные советы по устойчивому развитию функционируют при мэриях или местных советах городских депутатов, выполняют аналогичные функции на местном уровне. [4-6,15-17,24,25].

В Республике Армения Национальный совет по устойчивому развитию создан по инициативе общественных организаций в 2002г., решением Премьер-министра РА, однако активная деятельность Совета развилась после включения в его состав дополнительного количества НПО и возложения функций секретариата на Ассоциацию по устойчивому человеческому развитию. Так, благодаря активной деятельности НСУР РА, был подготовлен национальный оценочный доклад ‚Рио+20‛, страна полноценно участвовала в работе Саммита ООН ‚Рио+20‛ и в настоящее время при поддержке ЕС/ГЭФ и ПРООН разрабатывается национальная стратегическая программа по имплементации в РА рекомендаций Саммита ‚Рио+20‛ в рамках участия во всемирном процессе ‚Post Rio+20‛. [5,6].

В ряде стран ***заложена юридическая основа для правого регулирования отношений в русле устойчивости***. Особенно важно, что в большинстве стран, принявших новые тексты конституций или включивших изменения в действующие конституции после 1992г., в той или иной форме уже фигурирует принцип устойчивого развития; в настоящее время УР является конституционной нормой в 24 странах (Португалии, Швейцарии, Польше, Сербии, Албании, Перу, Колумбии, Венесуэле, Эль Сальвадоре, Эфиопии, Катаре, Южной Африке, Эритрее, Нигерии и др.). Существенное отражение нашла идеология устойчивого развития и в Лиссабонском договоре ЕС (статьи 3 и 21), где подчеркивается приоритет УР в социально-экономическом развитии самой объединенной Европы, а также в международных отношениях ЕС. [2,3,5,6,20-24].

Приведем лишь несколько примеров [5,14,19,21].

Союзная конституция Швейцарской Конфедерации

Часть 1. Общие положения. Статья 2. Цель.

2.2. Швейцарская Конфедерация способствует совместному благосостоянию, устойчивому развитию, внутренней сплоченности и культурному многообразию страны.

Конституция Федеративной Демократической Республики Эфиопия

Статья 43. Право на развитие

1. Гарантируется право наций, народностей и отдельных граждан Эфиопии относительно улучшения их качества жизни и устойчивого развития.
2. Заключая международные договоры или формируя международные отношения, государство обеспечивает право Эфиопии на устойчивое развитие.

Конституция Государства Катар

Статья 33. Государство обязано охранять окружающую среду и ее природный баланс с целью достижения всестороннего и устойчивого развития для всех поколений.

Существенное отражение нашла идеология устойчивого развития и в *Лиссабонском договоре Европейского Союза (2007г.)*, где подчеркивается приоритет УР в социально-экономическом развитии самой объединенной Европы, а также в международных отношениях ЕС:

Раздел 1. Общие положения, статья 3.

Пункт 3. Союз формирует внутренний рынок. Он стремится обеспечить устойчивое развитие Европы, основываясь на сбалансированном экономическом росте и стабильности цен, согласно ориентированной на полную занятость и социальный прогресс рыночной экономике, а также высоком уровне охраны природы и улучшении качества окружающей среды. Он содействует научно-техническому прогрессу...

Раздел V. Гл.1, Статья 21.

Пункт 2. Союз определяет и проводит общую политику и мероприятия, стремится обеспечить высокий уровень сотрудничества во всех сферах международных отношений в целях:

d) поддержки экономически, социально и экологически устойчивое развитие развивающихся стран, особенно акцентируя искоренение бедности;

f) содействия выработке международных мер по охране и улучшения качества окружающей среды и устойчивого управления мировыми природными ресурсами, целях обеспечения устойчивого развития.

В конституциях ряда государств, в том числе стран СНГ, включая Российскую Федерацию, Республику Беларусь, Республику Казахстан и Республику Армения, идеология и принципы УР в той или иной форме отражены, сделаны определенные акценты на заботу и ответственность перед следующими поколениями, однако четкие формулировки УР в качестве цели или задачи отсутствуют [2,3,6,11,12].

В настоящее время инициирован процесс пересмотра Конституции РА, ибо, как справедливо отмечает Председатель Конституционного суда Г.Арутюнян, ‚Мы считаем, что в определенной мере подсознательно человечество подходит к формированию качественно новой иммунной системы общественного организма. Начало, конец и весь XX век в целом убедительно доказывали, что вера, традиции, нравственные нормы, вся ценностная система общественного поведения и другие механизмы системной самозащиты не обеспечивали достаточную дееспособность динамичной сбалансированности и устойчивости развития общества‘ [1]. В рамках проводимых дискуссий нами предложено включить норму УР в новый проект Конституции РА.

Естественно, что в соответствии с динамикой развития цивилизации, специфики изменений в системе ‚природа – общество‘, должны развиваться и конституционные нормы, вся законодательная база стран. И, по нашему мнению, совершенно справедлива позиция российских ученых, изложенная в ‚Обращении российских ученых к международному научному сообществу‘, отрывки из которого приведены ниже:

‚Сегодня для обеспечения гарантий устойчивого развития общества необходимы качественно новый, нравственный взгляд на эти проблемы и научная теория, ориентированная на устойчивое развитие земной цивилизации. Российская наука обращается к международному научному сообществу с предложением определиться с позицией науки в этих вопросах…

МЕЖДУНАРОДНЫЙ И НАЦИОНАЛЬНЫЙ ОПЫТ В СФЕРЕ ИНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

К.Даниелян, д. г. н., профессор, АГПУ им.Х.Абовяна

Л. Аванесян, к. п. н., доцент, АГПУ им.Х.Абовяна

В качестве фундаментальной цивилизационной цели человечества следует признать необходимость сохранения земной цивилизации и предложить ввести данную цель в качестве конституционной основы государств, входящих в ООН. Это позволит консолидировать человечество и ориентировать его в направлении построения рациональной земной цивилизации с сохранением всего многообразия ее национальностей и культур. Научная теория развития общества, построенная на этой основе, допускает возможность сохранения земной цивилизации лишь при условии всестороннего гармоничного развития всего мирового сообщества‘ [7].

Полагаем, базовые положения данного обращения могут стать основой для сотрудничества стран ЕАЭС в сфере институционализации процесса продвижения к устойчивому развитию.

INTERNATIONAL AND NATIONAL EXPERIENCE IN THE SPHERE OF SUSTAINABLE DEVELOPMENT INSTITUTIONALIZATION

Karine Danielyan, doctor of geogr. sciences, prof., ASPU
Lyudmila Avanesyan, PhD, docent, ASPU

The current global environmental crisis is being discussed, which is seen as a Earth response to the human destructive activities. In fact, mankind has convinced the rightness of the forecast of the members of the Club of Rome and those scientists, who signed the famous "The World's Scientists Warning to the Humanity." The formation of a positive institutional experience, in particular the legal basis for sustainable development, recognition of the sustainable development as a constitutional norm has been discussed. There are given some examples of inclusion of the principles of the sustainable development into the constitutions of different countries. It is proposed in the case of revision of the Constitution of the Republic of Armenia this experience will be taken into account also.

Использованная литература

1. Г. Арутюнян. Логика развития системы конституционного правосудия: опыт и перспективы. www.concourt.am/armenian/structure/.../039.doc
2. Н.В.Бутусова. О модернизации российской Конституции (цели, задачи, пути осуществления) // Конституционное и муниципальное право. – 2013. № 1. – С.5 – 11, www.law.vsu.ru
3. Г.А.Василевич. Конституция, человек, государство. Серия, Право - Минск., Право и экономика - 2010-261с. www.law.bsu.by/pub/11/Vasilevich_3.doc
4. К. Даниелян. Концепция устойчивого человеческого развития.UNDP–Ереван–1996-161 с.
5. К. Даниелян, Л.Саргсян, Т.Саргсян. Теория и практика устойчивого развития. Всемирный процесс и Армения. (учебное пособие для вуз-ов на арм. яз.) UNDP Armenia, АГПУ, Ассоциация ‚За УЧР-Ереван, 2013 - 175 с.
6. К. Даниелян. Современная цивилизация перед выбором – переход к устойчивому развитию или самоуничтожение. Saarbrucken: Palmarmium Academic Publish., 2014г. – 105 с.
7. Б.Дмитриев. Обращение российских ученых к международному научному сообществу и основы единой науки. -М.,- ИВИРАН – 2007-107с.
8. В.М. Захаров. Устойчивое развитие стран СНГ: перспективы сотрудничества. // На пути к устойчивому развитию России. – 2012 - №62 – С. 3.
9. ‚Зеленый рост и природоохранное управление в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии. OECD, 2012.
10. Информационный бюллетень. По итогам Рио+20 – вперед к устойчивому будущему, июнь 2012, www.uncsd2012.org.
11. Конституция Российской Федерации. Принята всенародным голосованием 12 декабря 1993г. http://az-design.ru/Projects/AZLibrCD/Law/Constn/KRF93/krf000.shtml
12. Конституция Республики Армения (с изменениями). Принята референдумом 27 ноября 2005г. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1&lang=rus
13. Е.Ф. Корочкин. Экология и устойчивое развитие России. //Материалы международной конференции ‚Устойчивое развитие: природа – общество - человекţ. Том 1.- М.- 2006 г.
14. Лиссабонский договор. Право Европейского союза. www.eulaw.ru/treaties/lisbon
15. Материалы Всемирного форума Национальных советов по устойчивому развитию. Нью-Йорк, ООН. Совет Земли, 2000г.
16. Национальные советы по устойчивому развитию. Характеристика и цели. // Материалы Консультаций по устойчивому развитию новых независимых государств. Совет Земли, Центр ‚Эко-Согласиеţ, Москва, сентябрь 1998г.

17. А.Ретеюм, К.Даниелян, А.Джафаров, Ц.Назарова и др. Предложения по переходу к устойчивому развитию стран, охваченных деятельностью РЭЦ-ов, Москва. 2000г.
18. Резолюция 66/288, принятая Генеральной Ассамблеей ООН. 66-ая сессия, пункт 19 повестки дня. Приложение. ‚Будущее, которое мы хотим‛ (итоговый документ Саммита ООН ‚Рио+20‛) - 27 июля 2012. www.uncsd2012.org
19. Союзная конституция Швейцарской конфедерации. www.concourt.am/armenian/legal.../swiss--r.htm
20. Cormac Cullinan, Sustainable Development and the Law. www.enviropaedia.com
21. Christopher Jeordsy, Constitutional Environmental Human Rights: A Descriptive Analisis of 142 National Constitutions. 21 January 2013. www.christopherjeffords.com/constitutions_jeffords.pdf
22. Abdulfatai O Sambo, Abdulkadir Bolaji Abdulkadir. Scio-Economic Rights for of Sustainable Development in Malaysia: Lessons from Selected African Countries` Constitutions. http://papers.ssrn.com/sol3/papers.
23. Nico J.Schrijver, The Evolution of Sustainable Development in International Law. – 2008. www.amazon.co.uk/...
24. Sustainable Development in the 21st Century (SD21.) National Institutions for Sustainable Development. United Nations Department of Economic and Social Affairs Division for Sustainable Development. October 2012. www.sustainabledevelopment.un.org/concut/document.
25. N.Raapana. United Nations` Local Agenda 21 (LA-21) & Communitarian Development Programme. US, 2006.
26. Rio+20 United Nations Conference on Sustainable Development. Rio de Janeiro, Brazil, 20-22 June 2012, UNDPI, www.uncsd2012.org; www.un.org.sustainablefuture.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ, աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

Հայաստանի Հանրապետության անկախացումը և հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական բնույթի արմատական և համակարգային փոփոխությունները նոր և բավականին բարդ խնդիրներ են դրել հասարակական գիտությունների, մասնավորապես՝ հասարակական աշխարհագրության առջև, որը զբաղվում է հասարակության տարածքային կազմակերպման հիմնահարցերով:

Խորհրդային տարիներին Հայաստանի աշխարհագրական հիմնախնդիրներով զբաղվում էին ինչպես տեղի հայ աշխարհագետ-մասնագետները, այնպես էլ Մոսկվայի և այլ աշխարհագրական կենտրոնների աշխարհագետները: Աշխարհագրական գիտությունը գիտատեսական ու կառուցվածքային-բովանդակային առումներով գտնվում էր ռուսական աշխարհագության ազդեցության տակ: Աշխարհագրության մեջ գերակշռում էր բնական բաղադրիչը, աշխարհագրությունը որպես գիտության ճյուղ համարվում էր բնական գիտություն, իսկ որպես կրթական առարկա մտնում էր բնագիտական առարկաների շարքը:

Աշխարհագրական գիտության հասարակական բաղադրիչը թույլ էր զարգացած և գտնվում էր մարքս-լենինյան պարտադրված գաղափարախոսության ազդեցության տակ: Այն հիմնականում ներկայացված էր հասարակության տնտեսական ոլորտի տարածքային կազմակերպման

հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող տնտեսական աշխարհագրությամբ: Զարգանում էին հասարակական արտադրության հիմնական բաղադրիչների՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի տեղաբաշխման, տնտեսական շրջանացման և տարածքային-արտադրական համալիրների ձևավորման տեսական և գործնական հիմնահարցերով զբաղվող գիտական ուղղությունները: Մինչդեռ հասարակության այլ ոլորտների (քաղաքական, սոցիալական, հոգևոր-մշակութային և այլն) տարածքային կազմակերպման հիմնահարցերի ուսումնասիրությունները տարբեր պատճառներով մնում էին չլուսաբանված կամ մասնակի լուսաբանված:

ՀՀ անկախացումից հետո դժվարին վիճակ ստեղծվեց ինչպես ողջ գիտության, այնպես էլ աշխարհագրության համար: Ի տարբերություն շատ այլ նորանկախ երկրների՝ մեզանում ոչ միայն չստեղծվեցին պետական հովանավորություն վայելող աշխարհագրական գիտահետազոտական կենտրոններ, այլև ցրվեց աշխարհագրական այն փոքր խումբը, որը գործում էր ԳԱ համակարգում: Հայկական աշխարհագրական ընկերությունը, որը գործում էր ԳԱ համակարգում և ֆինանսավորվում էր պետական բյուջեից, իջեցվեց շարքային ՀԿ-ի կարգավիճակի և զրկվեց իր զբաղեցրած տարածքից:

Մինչդեռ աշխարհագրական, մասնավորապես՝ հասարակական աշխարհագրական հետազոտությունների կարևորությունն ու հրատապությունը անցումային ներկա ժամանակաշրջանում ակներև է: Աշխարհագրության նոր ժամանակների և նոր մարտահրավերների մասին իր վերջին աշխատանքներում անդրադարձել է պրոֆ. Լ. Վալեսյանը (1,2): Աշխարհագրության արդի հիմնախնդիրներին մենք ևս անդրադարձել ենք մեր նոր գրքում(3): Ինչպես ցանկացած անկախ պետությունում, Հայաստանի Հանրապետությունում նույնպես աշխարհագրությունը հանդես է գալիս որպես ,պետականության ատրիբուտ», ՀՀ պետական տարածքին նվիրված աշխարհագրական հետազոտությունները ծառայում են պետությանը, նպաստում են ռեսուրսների խելամիտ օգտագործմանը և բնապահպանությանը, հասարակության արդյունավետ տարածքային կազմակերպմանը:

Վերջին տասնամյակներին ամբողջ աշխարհում, հատկապես զարգացած երկրներում, աշխարհագրության առաջատար դերի գիտակցումը վերականգնվում է: Ավելի ու ավելի ծավալվող համամոլորակային երևույթների, մարդ-բնություն փոխհարաբերությունների, ինչպես և միջազգային բարդացող հարաբերությունների թելադրանքով փոխվում է հասարակական պատվերը: Սկսվում է աշխարհագրության վերելքի նոր ժամանակաշրջանը, որը նոր մակարդակով աշխարհագրական սինթեզից և տեսական ընդհանրացումներից բացի բնութագրվում է հետազոտությունների միանգամայն նոր կիրառական-կառուցողական բնույթով: Սա աշխարհագրության զարգացման նոր փուլն է, որը ոչ միայն նոր աշխարհագրական գիտելիքներ է տալիս կամ բացահայտում է աշխարհագրական տարբեր օբյեկտների և երևույթների առաջացման կամ տեղաբաշխման պատճառահետևանքային կապերն ու օրինաչափությունները, այլև փորձում է կանխատեսել և կառավարել դրանք: Եթե աշխարհագրության զարգացման էմպիրիկ փուլում առաջնայինը նոր գիտելիք ստանալն էր, և աշխարհագրությունը պատասխանում էր ,ի՞նչ և ,որտե՞ղ հարցերին, ապա աշխարհագրության զարգացման տեսական փուլում այն փորձում էր բացահայտել երևույթների կապերն ու օրինաչափությունները և պատասխանում էր «ե՞րբ», «ինչու՞», «ինչպիսի՞» հարցերին, իսկ ներկա կառուցողական–կանխատեսումային փուլում, երբ առաջնայինը վերափոխելն ու կառավարելն է, փորձում է պատասխանել ,ի՞նչ անելե և,ինչպե՞ս անելե հարցերին:

Համաշխարհային աշխարհագրության վերը նշված փոփոխությունները նկատելի է դեռևս ոչ բոլորի համար և գիտակցվում է ոչ ամենուրեք: Դա չի գիտակցվում նաև մեր նորանկախ պետությունում, հատկապես պետական կառավարման մակարդակներում, որտեղ դեռևս գերակշռում են աշխարհագրության մասին կեսդարյա վաղեմության հնացած պատկերացումները, առկա

իրադրության և հեռանկարի մանրամասների թյուրըմբռնումը: Դրա պատճառով բացակայում է գիտակցումը այն դերի, որն աշխարհագրությունը կարող է կատարել տնտեսապես հզոր ու բարգավաճ ազգային պետության կայացման գործում: Մինչդեռ, այսօր արդեն վերածնված աշխարհագրությունը հանդես է գալիս նոր բովանդակությամբ և սոցիալական առաջնակարգ կարևորություն ունեցող հիմնախնդիրների գիտատեսական և գործնական լուծման մեծ ներուժով:

Դեռևս անցյալ դարի 60-70-ական թվականներից սկսած հայտնի աշխարհագետներ Բունգեն (4), Պերցիկը (5), Հագգետը (6,7), Հարվեյը (8) հայտարարեցին, որ աշխարհագրությունը հիմնարար լինելուց բացի, դարձել է նաև ճշգրիտ, կառուցողական (կոնստրուկտիվ) գիտություն և ի վիճակի է լուծել պրակտիկայի առաջադրած բարդ հիմնախնդիրները: Այսօր, իրոք, տեղի է ունենում աշխարհագրության վերահայտնագործում: Խոսքը գնում է այն մասին, որ աշխարհագրությունը վերահայտնագործվում է նախ իր՝ աշխարհագրության ինքնավերագնահատման ու ինքնաճանաչման միջոցով: Սահմանվում են նոր գիտական պարադիգմներ, ճշտվում է իմացաբանական ու փիլիսոփայական հիմքերը, հաստատվում են մեթոդաբանական նոր նոր մոտեցումներ ու սկզբունքներ, հարստանում է մեթոդական զինանոցը:

Աշխարհագրությունը վերահայտնագործվում է նաև հասարակության կողմից: Նորովի է գնահատվում նրա պետական կարևորությունը: Ներկայումս ավանդական հիմնախնդիրների հետ միասին, աշխարհագրության հետ են կապում այնպիսի արդիական հարցերի լուծումը, ինչպիսիք են, օրինակ՝ դիմակայելը բնական միջավայրի արագացող քայքայմանը, հարուստների և աղքատների միջև գոյացող ճեղքվածքի պատճառների և հետևանքների, տարբեր երևույթների կապերի ու փոխազդեցությունների բացահայտումն ու գնահատումը: Այս և համընդհանուր բնույթի այլ հարցերի հետ միասին աշխարհագրությունից ակնկալվում է նաև յուրաքանչյուր առանձին տարածաշրջանի, պետության, այլ տարածքային միավորի տեղական ինքնատիպ պայմանների բացահայտումն ու գնահատումը: Իսկ իշխանություններից պահանջվում է գիտական արդյունքների իմացություն և ճիշտ օգտագործում երկրի կառավարման բնագավառում և հասարակության տարածքային կազմակերպման ոլորտներում:

Ներկա փուլում հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական խոր և արմատական տեղաշարժերը նոր և բավական բարդ խնդիրներ են դնում հասարակական աշխարհագրության առջև: Իսկ նախկինում գոյություն ունեցած հիմնախնդիրները այժմ դիտարկվում են նորովի, նոր տեսական-մեթոդաբանական հիմքով: Տնտեսական վերափոխումները, նոր արտադրատնտեսական հարաբերությունները, մասնավորապես՝ ազատ շուկայական տնտեսության ձևավորումն ու զարգացումը, տնտեսության ճյուղային և տարածքային- կառուցվածքային տեղաշարժերը, արտաքին և ներքին տնտեսական կապերի փոփոխությունները, նոր մարտահրավերներ և խնդիրներ են առաջադրում ՀՀ տնտեսության տնտեսաաշխարհագրական հետազոտությունների համար:

Խորհրդային տարիներին, հայտնի պատճառներով, քաղաքաշխարհագրական ուսումնասիրություններ չէին իրականացվում: Մինչդեռ ներկա ժամանակներում, կապված ինքնիշխան պետության գոյության և տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների հետ, մեծանում է քաղաքաաշխարհագրական հետազոտությունների կարևորությունը: Աշխարհագրությունը, որը սովորաբար ընկալվում է որպես ,պետականության ատրիբուտ՝, ի զորու է իր հետազոտությունների արդյունքները ծառայեցնելու պետության կայացման և ամրապնդման գործին: Մեզ՝ հայ աշխարհագետներիս է վերապահված մանրակրկիտ բազմակողմանի աշխարհագրական հետազոտություններ կատարել աշխարհագրական այս տարածքում (ՀՀ և ԼՂՀ տարածքները միասին), որը կազմում է պատմական Հայաստանի տարածքի միայն մի փոքր մասը: Մենք պետք է գնահատենք

տարածքի աշխարհագրական դիրքը, բնական, տնտեսական և մարդկային ռեսուրսներն ու պայմանները, արտաքին քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային կապերը:

ՀՀ-ում աշխարհագրական գիտության զարգացման էքստենսիվ փուլն իրեն գրեթե սպառել է, բնության և հասարակության հիմնական բաղադրիչներն այս կամ այն չափով դարձել են աշխարհագրական հետազոտությունների օբյեկտներ: Նոր իրողությունները, մասնավորապես՝ ժողովրդագրական, բնառեսուրսային, էկոլոգիական հիմնախնդիրների առաջացումն ու խորացումը, ՀՀ բնակչության և տնտեսության խիստ անհամաչափ տեղաբաշխումը, տարածաշրջանների համալիր և կայուն զարգացման անհրաժեշտությունը, տնտեսության մեջ և ընդհանրապես հասարակության մեջ տեղի ունեցող որակական և կառուցվածքային տեղաշարժերը, ՀՀ աշխարհաքաղաքական նոր իրավիճակը բազմաթիվ խնդիրներ ու մարտահրավերներ են ներկայացնում աշխարհագրությանը:

ՀՏԿ կատարելագործման հիմնահարցը պահանջում է աշխարհագրական հետազոտությունների նոր մոտեցումների և մեթոդների կիրառում: Մասնավորապես, նոր տեխնոլոգիաների՝ ԱՏՀ-երի օգտագործումը հնարավորություն է տալիս նորովի և ավելի խոր ու հիմնավորված հետազոտություններ կատարել բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, արտադրության և ենթակառուցվածքների տարածքային կազմակերպման, տարաբնակեցման և լանդշաֆտային պլանավորման ուղղություններով:

ՀՀ հասարակության և նրա տարբեր ոլորտների վերափոխումները ոչ միայն նոր բաղադրիչներ մտցրեցին և փոփոխություններ առաջացրին աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտներում ու խնդիրներում, այնպես էլ ավելի ազատ, ոչ գաղափարականացված միջավայր ստեղծեցին գիտության տեսության և մեթոդաբանության ավելի ամբողջական և համամասնական զարգացման համար: Դա նախ և առաջ վերաբերում է հասարակական աշխարհագրությանը, որն անկախացումից հետո բուռն փոփոխությունների է ենթարկվել, քանի որ նրա ուսումնասիրության օբյեկտն ենթակվել է որակական և կառուցվածքային խոր և արմատական փոփոխությունների: Փոփոխության են ենթարկվել ինչպես նրա ճյուղային-ոլորտային, այնպես էլ տարածքային բաղադրիչները: Բացի այդ, տնտեսաաշխարհագրական ավանդական ուսումնասիրությունների հետ մեկտեղ կարևոր նշանակություն ձեռք բերեցին նաև քաղաքաաշխարհագրական և սոցիալ-աշխարհագրական ուսումնասիրությունները:

1.Քաղաքական ոլորտում դա, նախ և առաջ, վերաբերում է հասարակության տարածքային կազմակերպման քաղաքական ոլորտի փոփոխություններին, որոնցից են՝ վարչատարածքային նոր բաժանումը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգի ձևավորումը: Դրանք զգալի ազդեցություն են թողնում հասարակության տարածքային կազմակերպման վրա և պահանջում են հասարակական-աշխարհագրական համալիր ուսումնասիրություններ, որոնք կընդգրկեն ՀՀ քաղաքական կյանքի տարածքային կազմակերպման հիմնահարցերը, ընտրությունների տարածքային օրինաչափություններն ու առանձնահատկությունները, տարածաշրջանում տեղի ունեցող և ձևավորվող աշխարհաքաղաքական նոր գործընթացներն ու իրավիճակները, որպես համեմատաբար նոր քաղաքաաշխարհագրական միավոր հանդես եկող ՀՀ-ի աշխարհաքաղաքական դիրքի և դերի գնահատումը:

2.Աշխարհագրական գիտության հեռանկարային զարգացման մյուս ուղղությունը Հայաստանի հարակից երկրների և տարածաշրջանների բնառեսուրսային, սոցիալ-ժողովրդագրական, արտադրատնտեսական ներուժերի գնահատումն է, տեղի ունեցող էթնոաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական գործընթացների վերլուծությունը, դրանց հետ բազմակողմանի տնտեսական, մշակութային և այլ կապերի զարգացման հնարավորությունների բացահայտումը:

3.Աշխարհագրական հետազոտության նոր և հեռանկարային օբյեկտ են դառնում տարբեր աշխարհագրական (քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, էթնոմշակութային) պայմաններում սփյուռքի գոյատևման հեռանկարների, նրա տնտեսական, կադրային, մշակութային ներուժերի գնահատման և օգտագործման հնարավորությունների ուսումնասիրությունները:

4.Ճյուղային և տարածական կառուցվածքային խոր և արմատական տեղաշարժեր են տեղի ունենում հասարակության տնտեսական ոլորտում: Տնտեսության մեջ պետության դերի էական նվազումը, տնտեսության մեջ մասնավոր սեփականության խիստ գերակայող դերը, շուկայական հարաբերությունների զարգացումը, արտադրանքների իրացման ավանդական շուկաների կորուստները միանգամայն նոր քաղաքական-տնտեսական պայմաններ ստեղծեցին տարբեր ճյուղերի և ոլորտների զարգացման և տարածքային կազմակերպման համար: Արդյունաբերության առաջատար, արտաքին տնտեսական կապերի վրա հենված ճյուղերը խոր ճգնաժամ են ապրում, առավելապես զարգանում են տեղական հումքով ապահոված և առավելապես տեղական սպառման շուկա ունեցող ճյուղերն ու արտադրությունները: Տնտեսության ճյուղային կառուցվածքում մեծանում է սպասարկման ոլորտի մասնաբաժինը: Տնտեսության ճյուղային-կառուցվածքային տեղաշարժերը զգալի փոփոխություններ են առաջացնում տնտեսության տարածքային կառուցվածքում, որը պահանջում է գիտատեսական և մեթոդաբանական նոր հիմքով տնտեսաաշխարհագրական ուսումնասիրություններ: Զգալիորեն փոխվել են արտադրության երկու հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության, զարգացման և տարածքային կազմակերպման սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններն ու գործոնները, նպատակներն ու խնդիրները:

5. Աշխարհագրական տարբեր պայմաններում գտնվող ՀՀ մարզերում և բնակավայրերում բիզնեսի իրականացման համար ստեղծվել են տարբեր միջավայրեր: ՀՀ-ում ստեղծված բիզնես-միջավայրի տարածքային տարբերությունների և դրանք պայմանավորող տեղական և տարածաշրջանային գործոնների ու պայմանների բացահայտումն ու գնահատումը այսօր մեր երկրի առջև ծառացած հրատապ և կարևոր խնդիրներից մեկն է, որոնց լուծման գործում մեծ դեր կարող են ունենալ աշխարհագետները: Ներկայումս, չնչին վերապահումներով, հանրապետության գործարար կյանքը հիմնականում կենտրոնացած է Երևանում, մինչդեռ զգալի թվով քաղաքներ ունեն ռեսուրսային, ենթակառուցվածքային, շուկայական նայլ համապատասխան նախադրյալներ ու պայմաններ՝ նոր ներդրումների իրականացման, նոր արտադրությունների զարգացման համար: Ճիշտ է, շուկայական մրցակցային տնտեսության պայմաններում զարգանում են նաև տնտեսության զարգացման և տարածքային ինքնակազմակերպման և ինքնակարգավորման գործընթացները, սակայն դրանք բավարար չեն տնտեսության արագ զարգացման և արդյունավետ տարածքային կազմակերպման համար: Անհրաժեշտ է պետության կողմից իրականացնել գիտականորեն հիմնավորված ռեգիոնալ տնտեսական քաղաքականություն, որը հաշվի առնի օբյեկտիվորեն տեղի ունեցող ինքնազարգացման գործընթացները, հարկային, վարկային և այլ գործիքներով ու մեխանիզմներով խթանի լեռնային և սահմանամերձ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը, ստեղծի բիզնեսի կազմակերպման համար բարենպաստ միջավայր, և դրանով իսկ նվազեցնի տնտեսության զարգացման տարածաշրջանային անհամամասնություններն ու տարբերությունները: Այս խնդիրների լուծման հարցում կարևոր դեր ունեն հասարակական աշխարհագրության մասնագետները:

6. Սպասարկման ոլորտի և զբոսաշրջության զարգացումը բարձր տեմպերով զգալի փոփոխություններ և տեղաշարժեր է առաջացնում ոչ միայն ՀՀ տնտեսության, այլև ողջ հասարակության տարածքային կազմակերպման գործում, դարձնելով այն ավելի մարդակենտրոն: Դա համահունչ է նաև աշխարհագրական գիտության զարգացման արդի միտումներին՝սոցիոլոգացմանը և հումանացմանը:

Եթե բնակչության և բնակավայրերի, հատկապես տարաբնակեցման աշխարհագրական արդի հետազոտություններ են իրականացվել, ապա նույնը չի կարելի ասել սոցիալ-աշխարհագրական հետազոտությունների մասին, որոնք խորհրդային տարիներին չէին խրախուսվում, իսկ առանձին դեպքերում նույնիսկ արգելվում էին: Ներկա փուլում, երբ հասարակության սոցիալական ոլորտը խիստ փոփոխությունների և տեղաշարժերի է ենթարկվում, սոցիալ-աշխարհագրական հիմնահարցերը սկսում են ավելի կարևոր և կենտրոնական տեղ զբաղեցնել հասարակական-աշխարհագրական հետազոտություններում:

7. Հասարակության ժողովրդագրական և սոցիալական բացասական երևույթները՝ բնակչության զանգվածային և աճող արտագաղթը, բնական վերարտադրության ցածր և անընդհատ նվազող մակարդակը, բնակչության ծերացումը, աղքատության և գործազրկության բարձր մակարդակը և աճող տեմպերը թեև համապետական բնույթ ունեն, սակայն տարբեր մարզերում և բնակավայրերում դրսևորվում են տարբեր ինտենսի-վությամբ և սրությամբ: Վերոհիշյալ սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների տարածքային դրսևորումների և առանձնահատկությունների բացահայտումն ու վերլուծությունը հասարակական-աշխարհագրական հետազոտությունների կարևոր ուղղություններից մեկն են:

8. Հասարական-աշխարհագրական արդի հետազոտություններում շատ կարևոր է տարածական տարբեր՝ համապետական, տարածաշրջանային (մարզային) և տեղական (համայնքային) մակարդակներում տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական փոխկապակցված հիմնահարցերի համալիր և միասնական քննարկումն ու վերլուծությունը: Ընդ որում, աշխարհագրական մտածողության հիմնական բաղադրիչները՝համալիրային և տարածական վերլուծությունները, աշխարհագրության շրջանակներից դուրս են եկել և դարձել են պետական տարածաշրջանային քաղաքականության գործիք և ռազմավարություն: Մասնավորապես, դա արտահայտվում է արդեն վաղուց համաշխարհային ռազմավարության նշանակություն ստացած՝ հասարական կայուն զարգացման հայեցակարգի մշակմամբ և տարածմամբ: Ակնհայտ է վերոհիշյալ հայեցակարգի աշխարհագրական էությունն ու բովանդակությունը, քանի որ այն տարածական տարբեր մակարդակների (համամոլորակային, տարածաշրջանային, տեղական) զարգացման տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բաղադրիչները քննարկում է փոխկապակցված ձևով: Տարբեր տարածքների կայուն զարգացման գիտական ապահովման հիմնահարցերը ներկա փուլում առաջնային նշանակություն են ստանում աշխարհագրական հետազոտություններում: Վերոհիշյալ և բազմաթիվ այլ հիմնախնդիրների հետազոտությունների և լուծման ակտիվ մասնակցության աստիճանից է մեծապես կախված աշխարհագրության վարկը, հասարակության կողմից նրա արժեվորման աստիճանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշխարհագրական կրթության որակական բարձրացում, աշխարհագետ կադրերի համախմբում և ներուժի նպատակասլաց և արդյունավետ օգտագործում, հարակից գիտությունների հետ լայն համագործակցություն:

9. Քանի որ աշխարհագրական հետազոտությունների օբյեկտները, երևույթները և հիմնախնդիրները բազմաթիվ են, իսկ աշխարհագետ գիտնականների թիվը՝ սահմանափակ, ապա հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ուժերը ցրել ըստ մանր և նեղ ճյուղային թեմաների, այլ համախմբել ավելի լայն ու մեծ թեմաների շուրջ, որոնք պահանջում են համալիր աշխարհագրական հետազոտություններ: Դրանցից կարևորագույնը, մեր կարծիքով, բնօգտագործման և բնապահպանական համապետական, տարածաշրջանային և տեղական բնույթի բազմաթիվ հիմնախնդիրներն են, որոնք առաջանում են բնություն-հասարակություն փոխազդեցության ընթացքում:

Սակայն խնդիրը ոչ այնքան փոխազդեցությունների բնույթի ու դրսևորումների բացահայտումն է տարբեր տարածաշրջաններում, որքան փոխազդեցությունների հետևանքների և դրա արդյունքում առաջացող բնօգտագործման և բնապահպանական բնույթի նոր հիմնախնդիրների կանխատեսումը: Արդի ժամանակներում աշխարհագրական, այդ թվում՝ նաև գեոէկոլոգիական հետազոտությունների համար կարևոր է դառնում այն խնդիրը, թե ինչպես է մարդը արձագանքում և հարմարվում փոփոխությունների ենթարկված բնական միջավայրին:

10. Մոտակա տարիներին անհրաժեշտ է ակտիվացնել տարածաշրջանային աշխարհագրական հետազոտությունները: Տարածաշրջանային հիմնախնդիրները իրենց բնույթով համալիրային են, և ինչպես բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրները պահանջում են աշխարհագրության երկու հիմնական ճյուղերի սերտ համագործակցություն և համատեղ հետազոտություններ: Առավել հրատապ և աշխարհագրական համալիր հետազոտություններ պահանջող տարածաշրջանային հիմնախնդիրներն են՝ բարձր լեռնային և սահմանամերձ գոտիների սոցիալ-տնտեսական զարգացման ակտիվացումը, Երևանի և նրա ագլոմերացիայի զարգացման կարգավորումը և հզոր սոցիալ-տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը, ԼՂՀ-ի կայուն զարգացումը և ՀՀ-ի հետ բազմակողմանի կապերի զարգացումն ու սոցիալ-տնտեսական միասնացումը, գիտականորեն հիմնավորված տարածաշրջանային քաղաքականության սկզբունքների և ուղղությունների մշակումը:

ОБЩЕСТВЕННАЯ ГЕОГРАФИЯ И ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

Манасян М.Г. д.г.н., проф., ЕГУ

В статье обсуждаются новые научные проблемы и вызовы, которые возникают при политических, экономических и социально-психологических преобразованиях общества. Новое административно-политическое деление, формирование новой системы территориального управления и местного самоуправления, развитие рыночной экономики и связанные с этим отраслевые и территориальные структурные сдвиги, процессы миграции, расселения и воспроизводства населения существенным образом меняют сущность и содержание территориальной организации общества, что требует проводить общественно-географические исследования на новом научно-теоретическом и методическом уровне.

SOCIAL GEOGRAPHY AND THE PROBLEMS OF ECONOMIC DEVELOPMENT

Manasyan M.G., Dr. of geographic sciences, professor; YSU

The article discusses the new scientific geographical problems emerged after the political, social- economic transformation of society. Formation of a new system of territorial administration and local government, the development of a market economy and the sectoral and territorial structural changes related to it current trends of settlement significantly change the nature and content of the territorial organization of society which requires to carry out socio-georgaphical research at the new scientific-theoretical and methodological level.

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՍՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԴԻՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (ՀՈՂԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, աշխ. գիտ. թեկ.Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, աշխ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր,
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ

Կապված գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից ընթացքի հետ, արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաև աշխարհագրական համադիրային և ճյուղային հետազոտությունների, նպատակների, խորությունների, ծավալների, հուսալիության, հավաստիություն և այլ առանձնահատկությունների մեջ: Ակնհայտ է, որ աշխարհագրական ժամանակակից հետազոտություններից ստացված գիտական տեղեկատվության ճշգրտությունը, մասշտաբները, վերջնական արդյունքները պետք է համահունչ լինեն նաև աշխարհագրական պրագմատիկ հետազոտություններին ներկայումս առաջադրվող պահանջներին և չափանիշներին: Անշուշտ, նույնը պետք է վերագրել նաև ստացված գիտական տեղեկատվության գրաֆիկական եղանակներով արտահայտման սկզբունքներին: Այդ նպատակով կազմված քարտեզները հավատ պետք է ներշնչեն դրանցից օգտվողների մոտ և գործնական կիրառական տարբեր նախագծերի կազմման ժամանակ, դրանք պետք է համարվեն հուսալի հիմնավորումներ, ինչպես տեխնիկա–տնտեսական, այնպես էլ էկոլոգիական և բնապահպանական կոնտեքստներով:

Սակայն, ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունները, այս հիմնախնդիրների վրա դեռևս պատշաճ ուշադրություն չի դարձվել: Դա մասամբ բացատրվում է նրանով, որ աշխարհագրական ժամանակակից հետազոտությունները, որպես կանոն, ընդգրկում են բնական միջավայրի՝ ինչպես անկենդան, այնպես էլ կենսածին ոլորտները, ինչպես դրանց առանձին բաղադրմասային, այնպես էլ իրենց համադիրային ձևերով: Հետևաբար այդ բոլորը կբնութագրվեն խիստ տարբեր չափման միավորներով, արտահայտման բնույթով, մասշտաբներով, հզորություններով, և այլ չափանիշներով: Իսկ դրանք քարտեզագրման ժամանակ, ինչպես հայտնի է, պետք է արտահայտվեն միայն մի՝ գրաֆիկական ձևով, այսինքն մասնագիտական կամ ընդհանուր աշխարհագրական քարտեզների տեսքով: Ըստ երևույթին, այդ գործընթացներում պետք է լինեն օբյեկտիվ իրականության վերացարկման (աբստրակցիայի) համապատասխան բացասումների և դրանց հիման վրա նոր մոդելավորումներ, այլ կերպ ասած, առաջնային տեղեկատվության սուբյեկտի կողմից ընդունման, սուբյեկտի գիտակցության մեջ դրա մոդելավորման, որից հետո ստացված մոդելի արտացոլման համապատասխան փոփոխություններ:

Սուբյեկտի կողմից արտացոլված պատասխան ռեակցիայի հետագա վերամշակումը (սինթեզումը) և դրա գրաֆիկական ամրագրումը թղթի վրա արտահայտվում է համադիրային քարտեզագրման միջոցով: Ինչպես երևում է աշխատանքների նման ձևով կազմակերպման ժամանակ անմիջական, փոխադարձ կապ պետք է հաստատվի «օբյեկտ» - «սուբյեկտ» - «օբյեկտ» կատեգորիաների միջև: Այսինքն քարտեզագրվող բնական երևույթը և օբյեկտը պետք է բացասվի սուբյեկտի կողմից (քարտեզը կազմողի կողմից), նրա գիտակցության մեջ ամրագրված այդ տեղեկատվությունը, որպես սուբյեկտի կողմից արտացոլման արդյունք, (արդեն մոդելավորված ձևով) արտահայտվի օբյեկտի կամ երևույթի ածանցյալի տեսքով և ամրագրվի թղթի վրա: Սուբյեկտի կողմից արտացոլված ռեակցիա, նման

փոխադարձ կապերի հաճախականությունը և բնույթը, որպես կանոն, կախված է լինում օբյեկտիվ իրականությունից ստացված առաջնային տեղեկատվության բացասումների և մոդելավորման նպատակներից: Ստացված մոդելի հաջորդական բացասումների քանակն ու բնույթը պետք է համապատասխանեցված լինեն դրանց անհրաժեշտ քանակով և նպատակներով:

Գործնական քարտեզագրության մեջ դա արտահայտվում է կազմվող քարտեզների բովանդակության հետագա բացասումների բնույթով: Իսկ դա կախված է բացասումների նպատակներից, ստացված համադիրային քարտեզների նախատեսվող կիրառական ոլորտներից և այլ հանգամանքներից: Ներկայումս նման բովանդակության քարտեզների սահմանափակ լինելը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև նրանով, որ դեռևս լիակատար մշակված չեն դրանց բացասումների և մոդելավորման մեթոդոլոգիական հարցերը, բացասված կատեգորիաների կրկնակի (հետագա) բացասումների կատարման ուղղությունների մեթոդաբանությունը և եղանակները, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման տեխնոլոգիական սկզբունքների համապատասխան ձևերը:

Առաջնային տեղեկատվության բացասումների յուրաքանչյուր հերթական աստիճան նախորդից պետք է տարբերվի որոշակի որակական հատկանիշներով: Առաջնային տեղեկատվության վերամշակման ձևերը և վերջնական արդյունքները պետք է համապատասխանեն աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների նպատակներին, այսինքն պետք է կազմվեն երևույթների և օբյեկտների դինամիկայի, գնահատման, կանխատեսման, հնարավորությունների դեպքերում նաև դրանց կառավարման համադիրային քարտեզները: Այդ կապերի բնույթը և հաճախականությունը որպես կանոն կախված է լինում օբյեկտիվ իրականության առաջին բացասման և մոդելավորման նպատակից ու բնույթից: Որից հետո ստացված մոդելի հետագա բացասումները արդեն պետք է կախված լինեն բացասումների նպատակներից, դրանց քանակից: Գործնական քարտեզագրության մեջ դա արտահայտվում է կազմված քարտեզների բովանդակության հերթական բացասումներով, կազմման նպատակներով, դրանց կիրառման ոլորտներով ու բնույթով:

Ներկայումս նման բովանդակության քարտեզների սահմանափակ լինելը մեր կարծիքով, պայմանավորված է նաև այն համայնքներով, որ դեռևս լիակատար մշակված չէ դրանց բացասումների և վերարտադրության մեթոդոլոգիական հարցերը, բացասված կատեգորիաների հետագա բացասումների էությունը, ինչպես նաև այդ աշխատանքների կատարման տեխնիկական միջոցները և համապատասխան տեխնոլոգիական ձևերը:

Առաջնային տեղեկատվության հաջորդական վերացարկման ժամանակ պետք է տեղի ունենա անցում նրա անալիտիկ ձևերից դեպի համադիրային (սինթեզված)ձևերին: Նման քարտեզների կիրառական ասպեկտներն առանձնահատուկ պահանջներ են ներկայացնում դրանց մասնագիտական ծանրաբեռնվածության «վերին» և ¦ներքին§ ցենզերի ընտրության, տեղեկատվության գրաֆիկական պատկերման սկզբունքների կիրառման ձևերի հուսալիության և բազմաթիվ այլ հիմնահարցերի նկատմամբ: Քարտեզների այս խումբը մշակվում է հատուկ չափանիշներով, համապատասխան անհրաժեշտ վերացարկումներով և ամենակարևորը՝ հատուկ նպատակների ինժեներանախագծային աշխատանքների համար:

Ինչպես արդեն նշել ենք, առաջնային ինֆորմացիայի հաջորդական վերամշակման ժամանակ տեղի է ունենում անցում նրա նալաիտիկ ձևերից դեպի համադիրային (սինթեզային) ձևերի, այլ կերպ ասած, դրանց ածանցման ձևերին(1, 2, 3): Այդ հաջորդականությունն ունի աստիճանական բնույթ, այսինքն իրականացվում է մի քանի էտապներով: Անցման այդ էտապների ձևերը և դրանց քանակը, առաջին հերթին, պայմանավորված են առաջնային ինֆորմացիայի բնույթով ու ծավալներով, ինչպես նաև կազմվող քարտեզների մասշտաբներով և հատկապես կիրառական կոնկրետ նպատակներով (5):

Մեր կարծիքով փաստագրական (անալիտիկ) քարտեզների միջոցով դրանց ավելի բարդ՝ համադիրային (սինթետիկ) ձևերի անցման ժամանակ վերջիններիս բովանդակությունը պետք է հարստանա ոչ թե պատկերվող երևույթների քանակի մեխանիկական ավելացման ճանապարհով, որն իր հերթին անխուսափելիորեն հանգեցնում է այդ քարտեզների դժվար ընթերցմանը, այլև երևույթների քանակական և որակական հատկանիշների գիտական վերացարկման և ընդհանրացման միջոցով: Այդ վերացարկումները և ընդհանրացումներն, իրենց հերթին, պետք է լինեն տրամաբանական այն հաշվով, որ չխանգարեն քարտեզների մասնագիտական բովանդակության լիարժեք պատկերմանը, համապատասխանեն բարդ՝ համադիրային բացատրագրերի (լեգենդաների) մշակման և քարտեզների կամպանովկայի սկզբունքներին: Այսպես օրինակ, հողերի անվտանգ, առանց խոշոր ռիսկերի օգտագործման կառավարման համար, անհրաժեշտ է իրականացնել մի քանի փուլային աշխատանքներ, ընդ որում, յուրաքանչյուր աշխատանքային փուլ պետք է ունենա իր համապատասխան քարտեզագրական հիմքը և ելակետային նյութերը, այսինքն նախորդ բացասումների արդյունք հանդիսացող քարտեզները (տես նկար 1):

Աշխատանքների առաջին փուլում անհրաժեշտ է կազմել բոլոր այն անալիտիկ քարտեզները, որոնք պետք է արտահայտեն տվյալ տարածքի վրա գոյություն ունեցող հողերի ժամանակակից վիճակը, դրանցում եղած հումուսի պարունակությունը, աղակալման քիմիան, ճահճացման հնարավորությունները (նախադրյալները), ինչպես նաև այդ հողերի վրա տարածված բուսականությունը, դրա տեսակային կազմը, խտությունը և այլ հատկանիշներ: Այստեղ անհրաժեշտ են նաև այդ հողահանդակների տեղաբախշվածությունը, այսինքն տվյալ տարածքների ռելիեֆի ձևաչափական անբողջ համալիրը: Ոչ պակաս կարևոր է նաև այդ հողահանդակների ժամանակակից օգտագործման ձևերը: Ինչպես երևում է, այդ բոլոր քարտեզները պետք է լինեն փաստագրական, այսինքն ինվերտարիզացիոն բնույթի:

Աշխատանքների երկրորդ փուլում անհրաժեշտ է լինում կազմել այդ հողերի վրա տեղի ունեցող բացասական բնական ու մարդածին գործընթացների և երևույթների, այդ թվում հողերի էրոզիոն և դեֆլյացիոն գործընթացների, քարքարոտության աստիճանների, հովտաձորակային ցանցի խտության, աղակալման, ճահճացման օգտագործման ընթացքում մարդածին գործոնների ազդեցության հետևանքների՝ հատկապես լեռնահանքային արդյունաբերության թափոնների և պեստիցիդների, դրանցով աղտոտվածության հավանականության քարտեզները: Նման բովանդակության քարտեզների քանակը, բնականաբար, պետք է կախված լինի քարտեզագրվող տարածքի բնույթից և տնտեսական օգտագործման առանձնահատկություններից:

Առաջնային տեղեկատվության բացասումների և վերացարկումների երկրորդ փուլի գործընթացում անհրաժեշտ է քարտեզագրական ամբողջ նյութին տալ գնահատման որոշակի ուղղվածություն, որտեղ պետք է արտահայտված լինի հողերի լվացման (մակերեսային տեղատարման) նկատմամբ նրանց ունեցած կայունության ցուցանիշները, այսինքն ի՞նչ արագություններով են ընթանում հողերի էրոզիոն և տեղատարումային գործընթացները,ինչքանով են դրանք վարակված նեգատիվ գործընթացների համալիրով և վերջապես ինչ արագություններով են ընթանում այդ բացասական գործընթացները:

Աշխատանքների այս փուլում կազմված քարտեզները պետք է լինեն նախորդ քարտեզների միջոցով կատարված հետևությունների և եզրահանգումների արդյունքները, սակայն արդեն մեկ անգամ ևս ածանցված և ավելի բարձր մակարդակով: Այս փուլում կազմված քարտեզները պետք է արտահայտեն ոչ միայն փաստագրական, այլև նաև ընդհանրացված և համադիրային ցուցանիշները: Այդ անցումը, որպես կանոն, պետք է տեղի ունենա նախորդ քարտեզների վրա արտահայտված

քանակական և որակական ցուցանիշների ժառանգման վրա, այսինքն դրանց բազայի վրա քարտեզագրված կատեգորիաների ավելի խորը, մանրամասն ու նոր հատկանիշների բացահայտման, վերացարկման ու կոնկրետ նպատակաուղղված եզրահանգումների կատարման և քարտեզագրման վրա: Ըստ էության, այս էտապում կազմված քարտեզները պետք է արտահայտեն հողերի գնահատմա – կանխատեսումային (оценочно - прогнозные) հիմնական ցուցանիշները, ինչպես օրինակ, դրանց էրոզիոն 7 դեֆլյացիոն (քամահարման) վտանգավորության աստիճանները, հովտաձորակային ցանցի զարգացման ընթացքը, հողերի կրկնակի աղակալման և ճահճապատման սպասվելիք փոփոխությունները և այլ անցանկալի երևույթներ: Սինթետիկ քարտեզների վրա պետք է ժառանգվեն նաև այն ցուցանիշները, որոնք կարող են բնորոշել օբյեկտների և երևույթների նաև որակական ու քանակական փոփոխությունները, բնութագրել դրանց վերափոխման արագությունները, աճման մասշտաբները, տևողությունները, կայունությունը և ալն:

Հետազոտվող օբյեկտների և երևույթների բացառումները ու մոդելավորման չորրորդ փուլում անհրաժեշտ է մշակել գնահատմա – երաշխավորական (оценочно- рекомендтельные) քարտեզների բովանդակության տարրերը, որոնց հիմնական ծանրաբեռնվածությունը պետք է կազմի սպասվելիք բացասական երևույթների և գործընթացների վնասազերծման ինչպես նաև դրանց ազդեցության նվազեցման համար մշակվող պաշտպանական միջոցների հիմնական ձևերը, տեխնիկական միջոցների տեղաբաշխումը, իրականացման հնարավոր տարբերակները և այլն:

Աշխատանքների վերջնական փուլում, «օբյեկտ» - «սուբյեկտ» – «օբյեկտ» փոխադարձ կապը ընթանում է արդեն որպես «օբյեկտ» հանդես եկող քարտեզագված բնական օբյեկտի արդեն չորս անգամ բացասված և մոդելավորված տարբերակը և այդ հիման վրա պաշտպանական միջոցառումները մշակող ու գրաֆիկական եղանակով հիմնավորող «սուբյեկտ»-ի միջև: Սուբյեկտի կողմից մոդելավորված և արտացոլված արդյունքն, ըստ էության» պետք է հանդիսանա բնական օբյեկտի հերթական բացասված (արդեն 5-րդ) մոդելը, այսինքն վտանգավոր երևույթների ու պրոցեսների կառավարման համար կազմված ինժեներաաշխարհագրական համադիրային (սինթետիկ) քարտեզները:

Վերջինս շուրջ 20 տարիների ընթացքում այդ կտրվածքով կատարված մեր հետազոտությունների փորձը ցույց է տալիս, որ վտանգավոր երևույթների ու գործընթացների դեմ պայքարի միջոցառումները պետք է մշակվեն լեռնային գեոհամակարգերի տարածքների հորիզոնական և վերընթաց համապատասխան տրոհումից(շրջանցումից) հետո միայն: Իսկ տրոհման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել դրանց առանձին հատվածների տնտեսական օգտագործման բնույթի և այնտեղ տեղի ունեցող երևույթների ու գործընթացների ակտիվությունը:

ПРИНЦИПЫ ОТРИЦАНИЯ (АБСТРАКЦИИ) И МОДЕЛИРОВАНИЯ ГЕОГРАФИЧЕСКИХ ОБЪЕКТОВ И ЯВЛЕНИЙ И ИХ СИНТЕТИЧЕСКОЕ КАРТОГРАФИРОВАНИЕ (НА ПРИМЕРЕ ПОЧВЕННЫХ КАРТ РА

Карапетян А.Г., к.г.н., АГПУ

Карапетян Г.М., д. г. н, профессор, АГПУ

В работах по составлению карт категория отрицания (абстрагирования) означает преобразование одного объекта в другой, при одновременной ликвидации первого. Но подобная ликвидация открывает простор для дальнейшего развития этих явлений и выступает как “момент” связи с удерживанием всего положительного содержания пройденных ступеней.

В статье рассматриваются методологические аспекты закона отрицания географических объектов и явлений при составлении аналитических и синтетических карт.

PRINCIPLES OF NEGATION (ABSTRACTION) AND MODELLING OF GEOGRAPHICAL ENTITIES AND PHENOMENA DURING THEIR SYNTHETIC MAPPING

(on the example of ground maps)

KARAPETYAN A.G., KARAPETYAN G.M.

During the mapping work the category of negation (abstraction) means turning one entity into the other one in case of simultaneous “elimination” of the first one. But such an “elimination” opens space for the further development of these phenomena and performs as a “moment” of connection with the retention of the whole positive content of the passed steps.

The methodological aspects of the law of negation of geographical entities and phenomena in case of synthetic mapping of the latter are considered in the article.

Գրականություն

1. Կարապետյան Գ.Մ., Կարապետյան Ա.Գ., Կառուցողական (կոնստրուկտիվ) աշխարհագրական հետազոտությունների գիտաարտադրական ուղղությունները նպատակներն ու կիրառման ոլորտները, ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր թիվ 1-2 (5-6), Երևան, 2007, էջ 10-18:
2. Կարապետյան Ա.Գ., Լեռնային ռելիեֆի ինժեներա-աշխարհագրական գնահատման և քարտեզագրման առանձնահատկությունները, ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2008թ. թիվ 1-2 (5-6), էջ 19-22:
3. А.Ф.Асланикашвили. Метакартография, Тбилиси, 1974, 250 стр.
4. М.К.Бочаров. Основы теории проектирования систем картографических знаков, Москва, 1966 г.
5. И.П.Заруцкая. Составление специальных карт природы, Москва, 1988г., 180стр.
6. Оценка и управление природными рисками. Риск-2000, Материалы общероссийской конференции, Иркутск, 2000, 480 стр.
7. Г.М.Карапетян, А.Г.Карапетян. К методике прогнозирования влияния строительства и эксплуатации крупных гидротехнических сооружений на изменения экологического состояния прилегаюших к ним територии (на примере басс.р. Дзорагет РА), Вестник МАНЕБ, том 12, Вып. 2, Санкт Петербург,2007г.с. 36-39.

ՀՀ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՖՐԱԳՄԵՆՏԱՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՀՈՎԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ, աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
ՄԱՐԻԱՄ ԽԵՉՈՅԱՆ, ասպիրանտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. *անտառածածկ, Հիլմի օրենք, անտառային գեոհամակարգի փոփոխություններ, անտառների ֆրագմենտացիա, անտառի ծառայություններ*

ՀՀ ներկայիս անտառածածկը հիմնականում ձևավորվել է նեոգենի ժամանակաշրջանում: Չորրորդականում այն ենթարկվում է կլիմայի գլոբալ փոփոխություններին, որոնք ՀՀ տարածքում ունեցել են չորայնացման միտում, ինչպես նաև մարդու անընդհատ աճող ազդեցությանը: Բնամարդածին գործոնների ոչ բարենպաստ զուգորդումները հանգեցրել են միասնական անտառային զանգվածների քայքայմանը և ֆրագմենտացված անտառածածկի ձևավորմանը (Սայադյան Հ., 2010):

Համաձայն Դարլինգտոնի կանոնի կղզու մակերեսի փոքրացումը տասն անգամ, կրճատում է այնտեղ ապրող երկկենցաղների և սողունների քանակը կրկնակի անգամ: Այս կանոնը սովորաբար հաշվի է առնվում արգելոցի կամ այլ հատուկ պահպանվող տարածքի չափերի որոշման համար: Այս հարցին է վերաբերում նաև տարակարգ կենդանական նյութի կղզային կուտակումներում աղքատացման օրենքը, որը երբեմն անվանում են Գ.Ֆ.Հիլմի օրենք (Реймерс Н.Ф., 1990): Ըստ այդ օրենքի ,անհատական համակարգը, որը գոյատևում է իրենից ցածր կազմակերպման մակարդակ ունեցող միջավայրում, դատապարտված է. աստիճանաբար կորցնելով իրեն կառուցվածքը, համակարգը որոշ ժամանակ հետո լուծվում է շրջակա միջավայրումն (Хильми Г.Ф., 1966): Այս օրենքի համաձայն ցանկացած բարդ կենսահամակեցություններ, որոնք պահպանվել են փոքր տարածքներում, դատապարտված են աստիճանական դեգրադացիայի:

Այս երկու օրենքներն ուղակի վերաբերում են նաև ՀՀ անտառային գեոհամակարգերի ներկա վիճակին, որը բազմաթիվ հանգամանքների հետևանքով զգալիորեն քայքայվել է՝ ենթարկվելով ֆրագմենտացիայի և կորցնելով էկոհամակարգային ծառայությունների զգալի մասը: Այդ մասին են վկայում ՀՀ անտառածածկի տարիքային դասերի, բնական վերականգնման վիճակի, լրիվության և բոնիտետի վերլուծությունը:

Ըստ տարիքային դասերի ՀՀ անտառների 47%-ը միջինահասակ է, 26,3%-ը՝ հասուն և գերհասուն, 10,6%-ը՝ մատղաշ: Մատղաշ հասակի ցածր քանակությունը վկայում է, որ անտառը գնում է դեպի ծերացում և բնական վերականգնման գործընթացներն անբավարար են: Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ բնական սերմնային վերականգնումը խիստ անբավարար է կաղնուտներում, որի հետևանքով առանձին դեպքերում տեղի է ունենում անցանկալի տեսակափոխություն՝ կաղնուն փոխարինում է բոխին: Բնական սերմնային վերականգնումը համեմատաբար լավ է ընթանում բոխուտներում ու հաճարկուտներում:

Անտառածածկ տարածքների կեսից ավելին՝ 54,7%-ն ունեն 0,4-0,5, 41,5%-ը՝ միջին՝ 0,6-0,7 և 3,8%-ը՝ բարձր՝ 0,8-1,0 լրիվություն: Փոքր լրիվության ծառուտների մեծ քանակը վկայում է այն մասին, որ հանրապետության անտառների մեծ մասն իրենց բնապահպանական և տնտեսական հատկություններով գտնվում են վատթար վիճակում: Նույն պատկերն է նկատվում նաև արտադրողականության ցուցանիշներում, որտեղ IV, V, Vա, Vբ՝ ցածր արտադրողական բոնիտետային դասերը կազմում են 53,1%, մինչդեռ բարձր արտադրողական I, II բոնիտետային դասերը՝ ընդամենը 10%:

Պրոֆեսոր Խուրշուդյանը, վերլուծելով հանրապետության անտառածածկի վերաբերյալ եղած տվյալները, կարծում է, որ հանրապետության անտառային գեոհամակարգերը գործում են իրենց ներուժի միայն 45%-ի չափով (Խուրշուդյան Պ.Ա.,1999): Սրա պատճառը բուն անտառածածկում հասակային բարձր դասերի և ցածր արտադրողական դասերով տարածքների գերակշռությունն է, բնական սերմնային անբավարար վերականգնումը, ինչպես նաև մեկուսացված անտառզանգվածների՝ այսինքն ֆրագմենտացիայի, անընդհատ աճը:

ՀՀ անտառածածկի նախկին ուսումնասիրությունները (Աբրահամյան, Ա., 1960; Խուրշուդյան Պ.Ա.,1999; Սայադյան Հ., 2010; Магакьян А. К., 1941; Moreno-Sanchez R. and Sayadyan H., 2005) ցույց են տվել, որ ՀՀ անտառներն ունեցել են անհամեմատ ավելի մեծ տարածում՝ քան ներկայումս: Մասնավորապես բրոնզի ժամանակաշրջանում ՀՀ անտառածածկը, համաձայն մեր ուսումնասիրությունների կազմել է ընդհանուր տարածքի 35%-ը (նկ.1):



Նկար 1. ՀՀ անտառային գեոհամակարգերը բրոնզի ժամանակաշրջանում

Նկ.1-ում ցույց տրված անտառտարածքները կամ համընկնում են ներկա անտառային գեոհամակարգերի տարածմանը կամ մնացորդային բնական անտառային ,կղզյակներինե, որոնք պահպանվել են ՀՀ առանձին տարածաշրջաններում (Ախուրյանի վերին հովտում, Արագածի հարավային լանջին, Սևանի ավազանում, Վայքի և Սիսիանի տարածաշրջաններում)՝ անհասանելի լինելու պատճառով: Սա նշանակում է, որ ՀՀ ներկա տարածքի պոտենցիալ անտառածածկը 4000-1000 թթ. Ք.Ծ.Ա. շուրջ 3,5 անգամ ավելին էր, քան ներկայիս անտառածածկը: Այն աչքի էր ընկնում անտառածածկի համասեռությամբ, մեծ անտառզանգվածներով, որոնք կապված էին իրար հետ ցածր ջրբաժաններում և թույլ էին ֆրագմենտացված:

Մինչդեռ 17-18-րդ դարերում ՀՀ անտառածածկն արդեն բավականին ֆրագմենտացված էր՝ կապված անտառի վերին եզրին անասնապահության զարգացման և խոտհարքների ընդարձակման, իսկ ստորին եզրում հողագործության զարգացման և ուղղակի ազդեցության ուժեղացման հետ (նկ.2):



Նկար 2. ՀՀ անտառային գեոհամակարգերը 17-18-րդ դարերում

Հետագա ժամանակաշրջաններում էլ ավելի մեծացավ անտառածածկի վրա ազդեցությունը, հատկապես կապված XVIII դարի վերջից մեծ ծավալներով զարգացող լեռնահանքային արդյունաբերության և տնտեսության ընդհանուր զարգացման հետ: Բավական է նշել, որ 1796-1914 թթ. ընթացքում ՀՀ-ի հյուսիսային և հարավ-արևելյան տարածաշրջաններում գործում էին շուրջ 20 մեծ ու փոքր պղնձաձուլարաններ, որտեղ փայտածուխը օգտագործվում էր որպես հիմնական վառելիք (Мелконян В.А., 1955): Մեր հաշվարկերով, այդ ընթացքում, միջին հաշվով, տարեկան հատվում էր 60-70 հազ.մ^3 փայտանյութ՝ անհրաժեշտ քանակի փայտածուխ ստանալու համար (Moreno-Sanchez R. and Sayadyan H., 2005):

Անտառածածկի վրա նման ազդեցության հետևանքով վերջինս զգալիորեն կրճատվեց և Խորհրդային Հայաստանի առաջին տարիներին կազմում էր շուրջ 10%: 1930-1950-ական թվականներին ՀՀ տնտեսության զարգացման համար իրականացվեցին մեծ ծավալի անտառհատումներ, որի պատճառով անտառածածկը նվազագույն մակերեսի և առավելագույն ֆրագմենտացիայի հասավ 1960թ.:

Աղյուսակ 1

ՀՀ անտառածածկ մակերեսի փոփոխությունները տարբեր ժամանակաշրջաններում (ըստ աղբյուրների, տոկոսներով)

4- 1 հազ. տարի, Ք.ծ.ա.	XVII-XVIII	Магакьян А. К., 1941	Աբրահամ-յան, Ա., 1960	Landsat TM, 1987-1988	Ter-Ghazaryan, K. et al.1995	Landsat ETM+, 2000	FAO, 2007
35,0	18,0	9,6	8,1	9,8	10,0	8,2	9,5

Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ փայտանյութը վերցվում էր ՀՀ սակավ լեռնային անտառներից, քանի որ այդ ժամանակ դեռևս բացակայում էր ՌԴ-ից լայնածավալ փայտանույթի մթերումը:



Նկար 3. ՀՀ անտառային գեոհամակարգերը՝ 1966-1968թթ.

Անտառային գեոհամակարգերի մակերեսի աճը բացատրվում է 1950-1970-ական թթ. Սևանա լճի շուրջը կատարված ընդարձակ անտառտնկման աշխատանքներով (16000 հա), ինչպես նաև Երևան, Վանաձոր և ուրիշ քաղաքների շուրջ լայնամասշտաբ անտառհիմնադրման աշխատանքներով: Մյուս կողմից ՀՀ-ում էականորեն կրճատվեցին կանոնավոր և ոչ օրինական հատումների ծավալները՝ կապված ՌԴ-ից փայտանյութի ներհոսքի հետ: 1966-1968 թթ. գույքագրման արդյունքների հիման վրա կազմվեց ՀՀ անտառածածկի քարտեզը (նկ.4)



Նկար 4. ՀՀ անտառային գեոհամակարգերը՝ 1986-1989թթ. գույքագրման արդյունքների համաձայն (Moreno-Sanchez R. and Sayadyan H., 2005)

1990 և 2000 թթ. Համար ՀՀ անտառածածկը հաշվարկվել է Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) և հեռազննման մեթոդների օգնությամբ՝ օգտագործելով ArcGIS 9.1 (ESRI Redlands, California) և Erdas Imagine ծրագրային փաթեթները և ԱՄՆ Լանդսատ բնառեսուրսային արբանյակների Landsat TM և Landsat ETM+ սենսորներից ստացված պատկերների վերլուծությունները (աղյուսակ 1):

ՀՀ ամբողջ անտառտարածքի մակերեսը ստացվել է առանձին դասակարգված պատկերների միացումից՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար առանձին-առանձին: Արդյունքում 1987-1989 թթ. երկրի անտառածածկը կազմել է 294134 հա, իսկ 2000-2001թթ.-ին՝ 246099 հա (Նկ. 5): 1990-ական թթ. սկզբից մինչև XXI դարի սկզբներն անտառազրկման տեմպը կազմել է տարեկան 4000հա, որը հատկապես լավ է արտահայտված խոշոր քաղաքների ու Սևանա լճի շուրջը (նկ.5 և աղյուսակ 2):



Նկար 5. ՀՀ անտառային գեոհամակարգերը 2000թ.՝ համաձայն Landsat ETM+-ից ստացված արբանյակային պատկերի վերլուծման (Moreno-Sanchez R. et al., 2007)

Դասակարգման արդյունքների վիզուալ զննումը ցույց է տալիս անտառային տարածքների ֆրագմենտացիայի բարձր աստիճան: Այն ուսումնասիրվել է ArcGIS 9.1. ծրագրային փաթեթի RegionGroup ֆունկցիայի օգնությամբ, որը թույլ է տալիս որոշել յուրաքանչյուր անտառհատվածի պատկանելությունը անտառ և ոչ անտառ խմբերին:

1986-1989 և 2000-2001 թթ.. համար ԱՏՀ միջավարում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ անկախությունից ի վեր էականորեն մեծացել է մարդու ազդեցությունը անտառածածկի վրա, որը համադրելի է XX դարի կեսերին իրականացված անտառհատումներին (աղյուսակ 1):

Աղյուսակ 2.

Անտառազրկումը խոշոր քաղաքների շուրջը

Քաղաքը	Հեռավորությունը քաղաքից (կիլոմետր)	Անտառազրկման մակերեսը (հեկտար)
Վանաձոր	5	2918
Դիլիջան	5	1106
Ստեփանավան	5	614
կապան	5	557

Ընդ որում մեծամասամբ չկարգավորված և անօրինական հատումները էականորեն վատթարացրին ՀՀ անտառների վիճակը, այդ թվում զգալի մեծացնելով անտառների ֆրագմենտացիայի աստիճանը: Աղյուսակ 3-ը ցույց է տալիս, որ 1988-2000 թվականների ընթացքում փոքր մակերեսով անտառտհատվածների քանակը աճել է, իսկ ատառհատվածների ուրվագծերը բավականին բարդացել են:

Աղյուսակ 3.

ՀՀ անտառների ֆրագմենտացիան 1988-2000 թթ. ընթացքում

Հատվածի մակերեսը (հա)	Հատված-ների քանակը 1988	Հատված-ների քանակը 2000	Հատվածների քանակի փոփոխու-թյունը 1988-2000	Հատվածի մակերեսը 1988 (հա)	Հատվածի մակերեսը 2000 (հա)	Հատվածի մակերեսի փո-փոխությունը 1988-2000 (հա)
1 կամ <	62585	108858	46273	11115.80	17031.20	5915.40
1.1-5	3845	3987	142	8104.96	8106.99	2.03
5.1-10	626	637	11	4340.75	4393.46	52.71
10.1-100	712	666	-46	19521.50	18082.50	-1439.00
100.1-200	61	51	-10	8595.55	7175.34	-1420.21
200.1-300	12	19	7	2880.24	4635.75	1755.51
300.1-400	10	9	-1	3288.72	3173.70	-115.02
400.1-500	9	8	-1	4044.19	3695.33	-348.86
500 և >	40	45	5	232243.00	179805.00	-52437.99
Ընդամենը	67900	114280		294134.71	246099.27	-48035.43

1988-2000թթ.-ի ընթացքում 1հա և ավելի փոքր մակերես ունեցող անտառհատվածների քանակը աճել է 46273-ով՝ կազմելով շուրջ 6000 հա տարածք: Նույնիսկ եթե այս քանակության մեջ առկա են դասակարգումների որոշակի սխալներ, այնուամենայնիվ փոփոխության ուղղությունը ակնհայտ է:

Միևնույն ժամանակ 500հա և ավելի մակերես ունեցող անտառհատվածների քանակը նույն ժամանակահատվածում քիչ է փոխվել (40-ից 45), սակայն դրանց զբաղեցրած մակերեսները կրճատվել են 52437հա-ով: Ընդարձակ անտառհատվածների ակնադիտումը ցույց տվեց հետևյալ օրինաչափության առկայությունը. ներքին կղզյակների և դեպի անտառհատվածի խորքը գնացող անտառազրկման միջանցքների և բացատների քանակի աճ:

Այսպիսով ՀՀ ներկա անտառածածկը զգալիորեն կրճատված, քայքայված և ֆրագմենտացված անտառզանգվածների ամբողջություն է, որը շարունակվող կլիմայի գլոբալ տաքացման և մարդածին ճնշման պայմաններում չի կարող իրականացնել արդյունավետ բնապահպանական և սոցիալ-տնտեսական գործառույթներ: Կապված համատարած անտառհատումների հետ՝ անցած տարիներին ինտենսիվ էրոզիոն երևույթներ են տեղի ունենում Վանաձոր քաղաքին հարող տարածքներում: Արդեն 1994-1997 թթ. ընթացքում 100-ից ավելի նոր ակոսներ և ձորակներ են առաջացել (Petrossian R.,1997): Չկարգավորված անտառհատումների հետևանքով դիտվել են սողանքային, աղակալման և հողի դեգրադացիայի երևույթներ: Անտառային բազմաթիվ շրջաններում ակտիվացան, իսկ որոշ վայրերում առաջացան նոր սողանքներ (Սայադյան Հ.,2010): Մեծ քանակությամբ ապօրինի և չկարգավորված հատումներն անվերադարձնելի վնաս հասցրեցին հատկապես արժեքավոր ծառատեսակներին՝ կաղնուն, հաճարենուն և սոճուն, որոնք ամենից հաճախ ու ամենից շատ էին հատվում (: Ծառուտներում մնացած ցածրարժեք ծառատեսակները չեն կարող ապահովել նորմալ վերաճ և սերնդատվություն (Thuresson T. et al.,1999):

Շատ հաճախ, նույնիսկ հատուկ պահպանվող տարածքներում, անկախ մոնիթորինգի բացակայության պայմաններում, իրականացվում են մեծ քանակությամբ ապօրինի հատումներ: Երբեմն այդպիսի հատումները ՝ծածկելու համար՝ տեսանելի վայրերում պահպանում են առաջնային անտառաշերտերը, իսկ հատումներն իրականացնում են դրանց թիկունքային հատվածներում: Այսպիսի իրավիճակների պայմաններում անտառային գեոհամակարգերի կենսաբազմազանության պահպանությունը խիստ պրոբլեմատիկ է ու արդիական (Սայադյան, Հ.,2010):

Խորհրդային ժամանակաշրջանի վերջին տարիներին ՀՀ-ի անտառները չէին դիտվում որպես անտառային ապրանքների կամ էներգիայի աղբյուր, այլ որպես ռեկրեացիայի, գեղագիտական արժեքների և հանգստի վայր: Անտառների նման ընկալումն էականորեն փոխվեց անկախությունից անմիջապես հետո, երբ բնակչությունը, տրանսպորտային և էներգետիկ շրջափակման պատճառով, ստիպված էր անտառը դիտարկել որպես վառելափայտի աղբյուր՝ տները և բնակարանները տաքացնելու և ուտելիք պատրաստելու համար: Այս հանգամանքը հանգեցրեց ապօրինի հատումների բարձր մակարդակի, որը կատարվում էր վաճառքի նպատակով վառելափայտի ձեռք բերմանը նպաստեցին ՀՀ-ի արագ անտառազրկմանը (Thuresson T., 2003): Այսօր արդեն հայ հասարակությունը լավ է ընկալում անտառների նշանակությունը, որպես հողերի և ջրային համակարգերի պաշտպանության ու կարգավորման միջոցի (Սայադյան Հ. և Նալբանդյան Ա., 2002): Հասարակության մեջ բարձր են գնահատվում նաև անտառների կլիմայակարգավորիչ դերի, ինչպես նաև օդի մաքրության պահպանության միջոցի դերը: Սակայն, դժբախտաբար, այս ընկալումները չեն վերածվում անտառային պաշարների կայուն օգտագործմանն ուղղված կոնկրետ մեխանիզմների կամ նույնիսկ քաղաքական հստակ դիրքորոշման և կամքի ստեղծման:

ФРАГМЕНТАЦИЯ ЛЕСНЫХ МАССИВОВ АРМЕНИИ И ЕГО ПРИРОДООХРАННЫЕ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ

Саядян О.Я., д. г. н., профессор, ЕГУ,
Хечоян М.С., аспирант, ЕГУ

В статье анализируется изменение лесного покрова РА в историческом прошлом и в настоящее время, продолжающаяся фрагментация лесных массивов и его природоохранные и социально-экономические последствия. Процессы фрагментации сильно влияют на потенциал и эффективность предложенных услуг лесных геосистем.

THE FRAGMENTATION OF FORESTS OF ARMENIA AND THEIR ENVIRONMENTAL AND SOCIAL-ECONOMIC CONSEQUENCES

Sayadyan H.Y., Dr. of geogr. Sciences, proff., YSU
Khechoyan M.S., YSU PhD student

In the article critically analyzed the alterations of forest cover in Armenia in historical past and nowadays, continous fragmentation of forest massives and its environmental and social-economic consequences. The fragmentation processesstrongly impact on potential and effectieveness of services provided by forest geosystems.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա.Հ. , Հայաստանի անտառները: Հայպետհրատ, Երևան, 1960.- 68էջ:
2. Խուրշուդյան Պ.Ա., Հայաստանի անտառապատվածությունը պատմական անցյալում, ներկա վիճակը և անտառային համակեցությունների խոցելիությունը կլիմային փոփոխման դեպքում (էջ 110-121): Հայաստան. կլիմայի փոփոխության հիմնահարցերը /հոդվածների ժողովածու, խմբագիր՝ Ա.Հ.Գաբրիելյան. Երևան, 1999.-373 էջ:
3. Սայադյան Հ. , Նալբանդյան Ա., Հայաստանի անտառների ներկա վիճակը: Գիտություն և Տեխնիկա ամսագիր: 10-12. 2002.- էջ 4-7:
4. Սայադյան Հ., Հայաստանի Հանրապետության անտառային գեոհամակարգերի տարա-ծաժամանակային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները.-ԵՊՀ, 2010.-261 էջ:
5. Варданян З.С. Смена дуба грабом в лесах Лорийского марза//Известия аграрной науки. Тбилиси,2009, т.7, N1, с.132-134.
6. Магакьян А.К. Растительность Армянской ССР. М.-Л., 1941. 276с.
7. Мелконян В.А. Металлургия меди в Армении. М.:Металлургиздат, 1955, 71с.
8. Реймерс Н.Ф. Природопользование: Словарь-справочник.-М.: Мысль, 1990.-637 с.
9. Хильми Г.Ф. Основы физики биосферы. Л.1966. – 272 с.
10. Хуршудян П.А., Тер-Газарян К.А., Габриелян В.Г. Леса и лесное хозяйство Армянской ССР. /Леса и лесоразведение в Армянской ССР//Труды Института Ботаники. XII, Ереван: Изд-во АН Армянской ССР, 1987б, с.5-41.
11. Food and Agriculture Organization (FAO) of the United States: State of the World's Forests. Rome, 2007. -144pp.
12. Moreno-Sanchez R. and Sayadyan H. Evaluation of the forest cover in Armenia. International Forestry Review. Cambridge University Press, UK.,Vol.7 (2).2005. P.113-127.
13. Moreno-Sanchez R., Streeter R. and Sayadyan H. Determining the forest cover extent in Armenia. Abstract for the paper session: Global Land Change Detection Using Remote Sensing-Session III. 04.18.2007. Annual meeting organized by Association of American Geographers, San Francisco, California.2007.-13pp.

14. Ter-Ghazaryan K., Karapetyan V. and Barseghyan M. Forest and Forest Product Country Profile: RA. GENEVA Timber&Forest Study Papers. ECE/TIM/SP 8 New York:UN, 1995.-48pp.
15. Thuresson T., Drakenberg B. and Ter-Ghazaryan K. Forest Resources Assessment for RA, SIDA-Armenia project (1997-1999).Yerevan, Armenia: Ministry of Nature Protection, 1999.-121 pp.

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ , տնտ.գիտ.թեկ., վարչության պետ, ՀՀ ՏԿԱԻՆ

Մի կողմից օրեցօր զարգացող գիտության, նորարարության, ինովացիոն տեխնոլոգիաների արդյունավետ կիրարկման բացակայությունը, մյուս կողմից առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը ներկայումս խոչընդոտում են ՀՀ վարչատարածքային միավորների[1] զարգացմանը: Վերոգրյալ գործոնների արդյունավետ օգտագործումն էապես կարող է նպաստել վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացմանը, հետևաբար, այս ուղղությամբ քաղաքականության արդյունավետության բարձրացումը ժամանակի հրամայական է: Վարչատարածքային միավորներն ունենալով տարբեր բնակլիմայական պայմաններ, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքներ, բնական և աշխատանքային ռեսուրսներ, աշխատանքային ռեսուրսների կրթվածության տարբեր աստիճաններ՝ տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը նպաստում են տարբեր կերպ: Արդյունքում ձևավորում են վարչատարածքային միավորների միջև սոցիալ-տնտեսական զարգացման տարբերություններ, որն էլ իր հերթին նպաստում է հեռանկարային զարգացման տարբեր հնարավորությունների ստեղծմանը: Նմանատիպ պայմաններում բնակչության մոտ առաջանում է սոցիալական անարդարության զգացում, որը հանգեցնում է բացասական հետևանքների, այդ թվում ներքին և արտաքին միգրացիայի: Այս հանգամանքներով էլ պայմանավորված ՀՀ կառավարության առաջնահերթություններից պետք է հանդիսանա վարչատարածքային միավորների զարգացումը խոչընդոտող գործոնների բազմակողմանի վերլուծությունը և վերջիններիս արդյունավետ զարգացման ուղղությամբ նպատակային քաղաքականության մշակումն ու իրականացումը:

ՀՀ-ում տարածքային զարգացման անհրաժեշտության մասին առաջին անգամ սկսեցին խոսել 2008 թվականին, երբ տնտեսական աճի երկնիշ թվերով տնտեսության զարգացման ընթացքում ակնհայտ երևաց Երևանի և ՀՀ մարզերի միջև բնակչության կենսապայմանների տարբերությունը: Սակայն այդ ընթացքում առավելապես խոսվում էր Երևանի և ՀՀ մարզերի միջև զարգացման մակարդակների անհամաչափությունների մեղմման անհրաժեշտության մասին: Ներկայումս, վարչատարածքային միավորների համաչափ զարգացման հետ զուգահեռ, կարևորվում է նաև յուրաքանչյուր վարչատարածքային միավորում առկա զարգացման պոտենցիալի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:

Տարածքային զարգացման, այդ թվում համաչափ զարգացման, կարևորության վերաբերյալ առկա էին համապատասխան դրույթներ ՀՀ տարբեր կառավարությունների ծրագրերում: ՀՀ ներկայիս կառավարության ծրագրում[2]սահմանված է, որ տարածքային զարգացման անհամաչափության

[1] Հոդվածում վարչատարածքային միավոր դիտարկվում է որպես ՀՀ մարզերը և Երևան քաղաքը:
[2] ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 19-ի թիվ 511-Ա որոշում, 2.2.7 կետ:

հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացն ապահովելու համար: Ծրագրով նախատեսված է ՀՀ կառավարության գործողություններն այս ոլորտում իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- կիրառել պետական աջակցության տարբեր ձևեր, ամրապնդել պետություն-մասնավոր հատված համագործակցությունը, մշակել և իրագործել նպատակային ծրագրեր, խրախուսելով սոցիալ-տնտեսական առումով առանձնահատուկ նշանակություն ունեցող համայնքների զարգացման տեմպերի արագացումը և ներդրումային ակտիվությունը,
- մշակել տարածքային համաչափ զարգացման նոր գործիքակազմ, մասնավորապես, համայնքներում իրականացվող ներդրումների արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորել տարածքային զարգացման հիմնադրամ,
- նախաձեռնել արդյունաբերական ձեռնարկությունների կլաստերների ձևավորումը, արդյունաբերական հարթակների ստեղծումը և այդ ուղղությամբ մասնավոր ներդրումային ծրագրերի ուղղորդումն ու խթանումը

ՀՀ կառավարության աջակցությունը համայնքներում մրցակցային առավելությունների վրա հիմնված տնտեսական զարգացման տարբեր մոդելների ներդրման գործում

- գնահատել ՀՀ մարզերի տնտեսական զարգացման ներուժը և բացահայտել զարգացման առավել լայն հեռանկարներ ու հնարավորություններ ունեցող տարածքները, մշակել և իրականացնել նպատակային զարգացման ծրագրեր՝ հիմնվելով գնահատված մրցակցային առավելությունների վրա
- առանձնահատուկ ուշադրություն դարձնել սահմանամերձ համայնքներին՝ իրականացնելով աջակցության նոր նպատակային ծրագրեր:

Խնդրի վերաբերյալ համապատասխան դրույթներ արտացոլվել են նաև ՀՀ-ում տվյալ ժամանակահատվածում ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի կարևորագույն փաստաթղթերում, ինչպիսիք էին «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» և «Կայուն զարգացման ծրագիրը»: Տարածքային զարգացման, մասնավորապես՝ վարչատարածքային միավորների միջև անհամամասնությունների մեղմման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան դրույթներ սահմանված են նաև ներկայումս ռազմավարական հանդիսացող ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի թիվ 442-Ն որոշմամբ հավանության արժանացած «Հեռանկարային զարգացման ծրագրում»: Սակայն տարածքային զարգացման բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվելիք հիմնական միջոցառումները ամրագրված են ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Տարածքային զարգացման հայեցակարգում»: ՀՀ կառավարությունը 2012 թվականի փետրվարի 2-ին ընդունեց նաև «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգով նախատեսված տարածքային զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 135-Ն որոշումը, որում նկարագրված են ՀՀ տարածքային զարգացման, այդ թվում համաչափ զարգացման ուղղությամբ իրականացվելիք հիմնական միջոցառումները: Ծրագրով, որի գործունեության ժամկետը սահմանված է 2011-2015 թվականները, նախատեսված միջոցառումների հիմնական մասն ունեն իրականացման շարունակական բնույթ, որոշներն էլ՝ ավարտվել են: Առկա են նաև այնպիսի միջոցառումներ, որոնք, ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված, չեն իրականացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող տարածքային զարգացման հայեցակարգի գործունեության ժամկետն ավարտվում է 2015 թվականին, ուստի անհրաժեշտ է մշակել նոր

հայեցակարգ /այսուհետ՝ Հայեցակարգ/: Մեր կարծիքով նոր Հայեցակարգը պետք է մշակվի երեք կարևորագույն հանգամանքների համատեքստում.

ա/ 2014 թվականին ՀՀ կառավարության կողմից սահմանվեցին ՀՀ զարգացման առաջնահերթությունները մինչև 2025 թվականի համար: Հետևաբար Հայեցակարգում սահմանված տարածքային զարգացման մոտեցումները պետք է բխի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված տարածքային զարգացման ուղղությամբ իրականացվելիք քաղաքականությունից, միաժամանակ նկարագրելով այդ քաղաքականության համար անհրաժեշտ գործիքակազմը:

բ/ Առաջիկա տարիների համար ՀՀ կառավարության կողմից որդեգրվել է մի շարք ոլորտներում բարեփոխումների իրականացման քաղաքականությունը, որն այս կամ այն չափով առնչվելու է վարչատարածքային միավորների զարգացմանը: Մասնավորապես, որպես վառ օրինակ կարելի է դիտարկել համայնքների խոշորացումը: Բարեփոխման պարագայում նոր ձևավորված համայնքները կունենան ավելի մեծ ֆինանսական հնարավորություններ՝ կապիտալ ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման առումով: Հետևաբար տարբեր համայնքների կողմից նոր ի հայտ եկած հնարավորությունների տարբեր կիրառումը լի է վտանգով համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների խորացման առումով: Հետևաբար այս ուղղությամբ բազմակողմանի վերլուծության իրականացումը և ռիսկերի մեղմման ուղղությամբ առաջարկությունների մշակումը պետք է հանդիսանա Հայեցակարգի կանոնակարգման առարկան:

գ/ Ինչպես հայտնի է ՀՀ-ը 2015 թվականին դարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցումը ենթադրում է տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար նոր հնարավորությունների ստեղծում, որն իր հերթին տարբեր ազդեցություն է ունենալու վարչատարածքային միավորների զարգացմանը գործընթացում: Հետևաբար այս գործոնի հնարավոր ազդեցությունների բազմակողմանի ուսումնասիրումը և ռիսկերի մեղմման ուղղությամբ առաջարկությունների մշակումը նույնպես պետք է հանդիսանա Հայեցակարգի կանոնակարգման առարկան:

Բացի վերոգրյալ մոտեցումներից՝ Հայեցակարգի մեջ նպատակահարմար է ներառել հայեցակարգային հետևյալ դրույթները.

Տարածքների համահարթեցման նոր մոտեցումներ, համընդհանուր քաղաքականությունից անցում նպատակայինի, մասնավորապես՝ զարգացման կենտրոնների ձևավորում և դրանց զարգացման նպաստում:

Տարածքների մրցունակության բարձրացում և մրցակցային առավելությունների առևտրայնացում:

Սահմանակից երկրների տարածքների հետ համագործակցության և ինտեգրման հնարավորությունների բացահայտում և օգտագործում (ներկայումս փաստացի չօգտա-գործված հնարավորություններ Վրաստանի և Իրանի սահմանակից տարածքների հետ):

Հանրային ներդրումների տարածքային բաղադրիչի գնահատում:

Տեղական և միջազգային կազմակերպությունների ծրագրերի իրականացման միասնական մշտադիտարկում և այդ ծրագրերի հնարավորինս ներդաշնակումը ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգի հիմնադրույթներին և նպատակներին:

Քույր քաղաքների համագործակցության զարգացում:

«Հայկական նոր գյուղի» հայեցակարգի մշակում:

Նոր աշխատատեղերի ստեղծումը տարածքային կլաստերներում, ագլոմերացիաներում, հանգույցներում և ցանցային կենտրոններում:

Տարածքային զարգացման ծրագրերին միտված կառուցվածքային հիմնադրամի ստեղծում:

Միջմարզային և միջազգային համագործակցության ներուժի բացահայտում:

Կառավարման ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներում փոխգործակցություն[1]:

Առաջնորդվելով վերոնշյալ հանգամանքներով և հայեցակարգային դրույթներով՝ անհրաժեշտություն է մշակել տարածքային զարգացման նոր հայեցակարգ՝ որտեղ ոլորտի քաղաքականության առանձին ուղղություններ կդիտարկվեր հետևյալները.

Մարզային ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանության մշակում – ներկայումս առկա չէ մարզերի տնտեսական զարգացման մակարդակի գնահատման որևէ ցուցանիշ: Այս պարագայում անհնար է գնահատել մարզի ընդհանուր տնտեսական զարգացման մակարդակը: Նմանատիպ ցուցանիշի առկայությունը հնարավորություն կընձեռնի համադրելու մարզերի տնտեսական զարգացման մակարդակները, և իրականացնելու զարգացման ավելի թիրախային քաղաքականություն: Այս նպատակով առաջարկում ենք Հայեցակարգում նախատեսել մարզային ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանության մշակման միջոցառում:

Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության կատարելագործում – ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հուլիսի 23-ին ընդունվել է «Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանությունը»: Տվյալ մեթոդաբանությամբ հնարավորություն է ընձեռնվում գնահատելու յուրաքանչյուր մարզի տնտեսական զարգացման համար առկա չօգտագործվող ռեսուրսները և բացահայտել այն տարածքային միավորները, որոնց ռեսուրսային հնարավորություններն ավելի բարձր են, քան նրանց տնտեսական զարգացման մակարդակը: Անհրաժեշտություն ենք համարում տվյալ մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացումը, մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատումը և գնահատված ներուժով պայմանավորված նպատակային զարգացման ծրագրերի մշակումը:

Մարզերի տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ աշխատանքների իրականացում – ՀՀ որոշ մարզերում սուր արտահայտված է տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը: Օրինակ ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական ճյուղում 2014թ. հանքարդյունաբերությունը կազմել է շուրջ 85%[2]: Մարզում մեկ ճյուղի նմանատիպ տեսակարար կշռի առկայությունը լի է վտանգներով, քանի որ մեկ ճյուղի տատանումները էապես ազդում են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Այլ կերպ ասած, նմանատիպ պարագայում մարզը դառնում է տնտեսապես խոցելի:

Քանի որ առկա չէ տնտեսության դիվերսիֆիկացման մեկ մոդել բոլոր դեպքերի համար, ուստի, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքի համար մշակել տարածաշրջանի տնտեսության դիվերսիֆիկացման առանձին մոդել և այդ ուղղությամբ իրականացնել աշխատանքներ՝ ելնելով ՀՀ մարզերի առկա առանձնահատկություններից: ՀՀ-ում այս համատեքստում առաջնային խնդիրը հանդիսանում է Սյունիքի մարզի տնտեսության դիվերսիֆիկացման մոդելի մշակումը և դիվերսիֆիկացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Հետևաբար անհրաժեշտություն է հայեցակարգում վերոգրյալի վերաբերյալ դրույթի սահմանումը:

Սոցիալական ոլորտի զարգացման դերակատարման ազդեցության գնահատում տարածքային զարգացման, մասնավորապես՝ համաչափ զարգացման բնագավառում (ինտեգրված սոցիալական ծառայությունների և ոլորտի հեռանկարային զարգացման համատեքստում) -տարածքային անհամաչափ զարգացումների բացասական ազդեցության արտահայտման առաջնային գործոնը

[1] « Տարածական զարգացում» Ամբերդ մատենաշար, Երևան «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014թ.:
[2] armstat.am

բնակչության մոտ սոցիալական անարդարության զգացումի առաջացումն է, որը որոշակիորեն հնարավոր է մեղմել սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների արդյունավետ գործունեության արդյունքում: ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին զգալի բարեփոխումներ են իրականացվել այս ոլորտում. ձևավորվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման ինստիտուտը, սակայն դեռևս անհրաժեշտ է մեծածավալ աշխատանք և որոշակի ժամանակ վերջինիս կայացման համար: Համակարգի կայացման պարագայում հնարավորություն կընձեռնվի իրականացնել տարածքի բնակչության կարիքներով պայմանավորված սոցիալական պլանավորում, որն ավելի արդյունավետ կլուծի սոցիալական խնդիրները, և կմեղմվի տարածքային անհամաչափությունների ազդեցությունը:

Տարածքային զարգացման, այդ թվում համաչափ զարգացման, գործընթացում կրթության և գիտության դերակատարման ըստ արժանավույնս գնահատում և վերջինիս դերի բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ տարածաշրջանի զարգացումը մեծապես պայմանավորված է տվյալ տարածաշրջանի աշխատանքային ռեսուրսների մասնագիտական կարողություններով և աշխատանքային ունակություններով: Հետևաբար գիտական ներուժ կրող աշխատանքային ռեսուրսները հանդիսանում են կարևոր գործոն տվյալ տարածաշրջանի առաջանցիկ զարգացման գործընթացում: ՀՀ-ում ամբողջ զբաղվածների մեջ գիտական հիմնարկներում զբաղվածները և դրանցից գիտական աստիճան ունեցողները գերկենտրոնացած են Երևան քաղաքում, ինչը նշանակում է մարզերի գիտական ներուժի՝ զրոին մոտ ցուցանիշեր, հետևաբար՝ նաև մարզերում գիտելիքահեն տնտեսության ներդրման և նորարարական մոտեցումների զարգացման անբավարար նախադրյալ: Այս առումով մարզերի ամենաբարձր ցուցանիշն ունի ՀՀ Արագածոտնի մարզը՝ 10.000 բնակչի հաշվով 25 զբաղվածներ գիտական հիմնարկներում, որոնցից 8-ը՝ գիտական աստիճանով: Այս ցուցանիշով Արագածոտնի մարզն ունի Երևանի 50%-ին մոտ ցուցանիշ՝ գիտական հիմնարկներում 46 զբաղվածներ, որոնցից 16-ն ունեն գիտական աստիճաններ: Նկատենք, որ մարզում չի գործում որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն, և այդ ցուցանիշերը, հավանաբար, պայմանավորված են Բյուրականի աստղադիտարանով[1]:

Ինչևէ, ներկայացված վերլուծությունից ակնհայտ երևում է, որ գիտական ներուժը ՀՀ-ում տեղաբաշխված է խիստ անհամաչափ, որն էլ անարդյունավետ է նպաստում տարածքային համաչափ զարգացմանը: ՀՀ կառավարությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ ինչպես այդ ներուժի հետագա զարգացման, այնպես էլ հնարավորինս համաչափ բաշխման ուղղությամբ:

Ժողովրդագրական ցուցանիշերի ազդեցությունը և դրա գնահատումը տարածքային զարգացման գործընթացում – ՀՀ-ում 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմում է 11.1%: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե այս ցուցանիշը 7%-ից բարձր է, ապա այդպիսի բնակչությունը համարվում է ծերացած[2]:

1988-1989-2008 թվականների միջակայքում մարզերի և Երևան քաղաքի բնակչության թվաքանակներում տեղ գտած փոփոխությունները, որոնք պայմանավորված են եղել միգրացիոն տեղաշարժերով, թե/ երկրից դուրս և թե/ դեպի մայրաքաղաք, ծնելիության նվազմամբ և մահացության աճով, զգալի են հատկապես Լոռու և Շիրակի մարզերում, որտեղ արձանագրվել է բնակչության թվաքանակի նվազում՝ համապատասխանաբար 21.4 և 14.6 տոկոսային կետերով: Առանձնահատուկ ուշադրության են արժանի սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գոտիներում տեղակայված

[1] «Տարածական զարգացում» Ամբերդ մատենաշար, Երևան «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014թ.:
[2] http://unfpa.am/demographic-situation

գյուղական բնակավայրերը, որտեղ տարեցտարի արձանագրվում է բնակչության թվաքանակի նվազում՝ ի հաշիվ տնտեսապես ակտիվ բնակչության[1]:

Ակնհայտ է, որ մարդկային ներուժը հանդիսանում է տվյալ տարածաշրջանի համար զարգացման կարևորագույն գործոնը, քանի որ մի կողմից վերջինիս բացակայության դեպքում հնարավոր չէ կազմակերպել արտադրություն, իսկ մյուս կողմից մարդը հանդիսանում է սպառող, որի կարիքների բավարարումը ինքնին բերում է արտադրության կազմակերպման կամ ծառայությունների մատուցման անհրաժեշտությանը: Հետևաբար մարդու գործոնը տարածքի զարգացման գործում անփոխարինելի է, ուստի նրա բացակայությունը կարող է աղետալի հետևանքների հանգեցնել թե տվյալ տարածաշրջանի, ապա պետության հետագա զարգացման գործընթացում:

Մեկ այլ կարևորագույն խնդիր է հանդիսանում նաև բնակչության տարածքային անհամաչափ տեղաբաշխումը, քանի որ բնակչության թվաքանակի անհամաչափությամբ պայմանավորված մեծանում է նաև տարածքային անհամաչափ զարգացման ռիսկայնությունը: Հարկ ենք համարում նշել, որ արդեն իսկ ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությամբ բնակչության տարածքային անհամաչափ տեղաբաշխման և որոշ շրջանների ու գյուղական բնակավայրերի ապաբնակեցման սահմանափակումը համարվում է առաջնահերթ նպատակ:

Այս համատեքստում պետությունը պետք է մեծ ուշադրություն դարձնի հատկապես հեռավոր և սահմանամերձ համայնքներում ժողովրդագրական ցուցանիշների բարելավմանը, իսկ տարածքային զարգացման այդ թվում համաչափ զարգացման համատեքստում ժողովրդագրական ցուցանիշերի բարելավումը պետք է հանդիսանա Հայեցակարգի շրջանակներում քննարկման առարկա:

Համայնքային կարողությունների ազդեցության գնահատում տարածքային զարգացման գործընթացում՝ վարչատարածքային միավորների ձևավորման պահից ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող կարևոր գործոն է հանդիսացել համայնքների թույլ կարողությունները, որի արդյունքում տեղական նշանակության շատ հարցեր, որոնք ապակենտրոնացման արդյունքում հանդիսացել և հանդիսանում են համայնքի ղեկավարի սեփական լիազորությունները, ամբողջովին կամ մասնակի չեն իրականացվում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, իսկ որոշ համայնքների կողմից լիազորությունների ամբողջական կամ մասնակի իրականացումը որոշակի դերակատարում է ունեցել տվյալ տարածաշրջանի զարգացվածության վրա, դրանով իսկ նպաստելով տարածաշրջանների անհամաչափ զարգացմանը: Համայնքների կայացվածության մակարդակը պայմանավորված է տվյալ համայնքի ֆինանսական ռեսուրսներով, իսկ ֆինանսների առկայությունն իր հերթին պայմանավորված է համայնքի ռեսուրսային ապահովվածությունից (հող, գույք) և բնակչության թվաքանակից, քանի որ մի կողմից համայնքի սեփական եկամուտները ձևավորվում են առավելապես հողի հարկի և գույքահարկի հաշվին, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական համահարթեցման նպատակով պետության կողմից տրամադրվող դոտացիաների հաշվարկման գործընթացում՝ համայնքի բնակչության թվաքանակով: Հետևաբար անհարաժեշտություն է տարածքային զարգացման, մասնավորապես համաչափ զարգացման համատեքստում համայնքերի կարողությունների դերակատարման գնահատումը և ֆինանսական միջոցների վերաբաշխման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Համայնքների խոշորացման հնարավոր ազդեցության գնահատում տարածքային զարգացման գործընթացում՝ տարածքային զարգացման արդյունավետ քաղաքականության իրականացումը մեծապես կախված է պետության վարչատարածքային կառուցվածքից, քանի որ արդյունավետ

[1] Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն:

վարչատարածքային բաժանման պարագայում հեշտանում է պետական և տեղական իշխանությունների կողմից օրենսդրորեն իրենց վերապահված լիազորությունների իրականացումը, որն էլ նպաստում է տարածքային միավորի զարգացմանը: Ներկայիս վարչատարածքային բաժանումը մեծապես խոչընդոտում է համայնքային կարողությունների ձևավորմանը: Ներկայումս համայնքներից՝ 442-ը (440 գյուղական և 2 քաղաքային) կամ 48%-ը ունեն 1000-ից պակաս բնակչություն: Հանրապետության 866 գյուղական համայնքներից 197-ը կամ ընդհանուրի 22.7%-ը ունեն մինչև 300 բնակիչ: Ըստ բնակչության թվի՝ ամենամեծ գյուղական համայնքը Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքն է (9745 բնակիչ), ամենափոքրը՝ Սյունիքի մարզի Քաշունին (27): Փաստորեն, ամենամեծ գյուղական համայնքը, ամենափոքրից բնակչության թվով մեծ է 360 անգամ: Հետևաբար վարչատարածքային միավորների նմանատիպ տարբերությունների պայմաններում դժվար է ակնկալել միանման լիազորությունների իրականացում, իսկ կարողությունների տարբերությունները իրենց հերթին բերում են անհամաչափությունների խորացմանը:

Որպես խնդրի լուծման առանձին ուղղություն դիտարկվում է համայնքների խոշորացումը: Համայնքների խոշորացման պարագայում հզորանում են համայնքային կարողությունները, մասնավորապես ձևավորվում են որոշակի ֆինանսական խնայողություններ, որոնք հնարավոր կլինի ուղղելու ինչպես բնակչությանը ծառայությունների մատուցմանը, այնպես էլ համայնքային ենթակառուցվածքների պահպանմանն և զարգացմանը:

Խոշորացման արդյունքում կձևավորվի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների ու ծառայությունների ամբողջ ցանկով համալրված բնակավայրերի խումբ, որոնք արդյունավետ և մատչելի կիրականացնեն համայնքի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումն ապահովող ծրագրերը, ունենալով բավարար բնական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ու անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Հետևաբար կձևավորվեն նոր նախադրյալներ տարածքային զարգացման գործընթացում: Ուստի կարծում ենք, որ գործընթացի հնարավոր ազդեցությունների գնահատումը, և արդյունավետ կառավարելու ուղղությամբ առաջարկությունների ձևավորումը պետք է հանդիսանա հայեցակարգի կանոնակարգման առարկան:

Տարածքային զարգացման հիմնադրամի դերակատարման մեծացումը տարածքային զարգացման գործընթացում - ինչպես հայտնի է 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N ՀՀ կառավարության 1521-Ն որոշմամբ ՀՄՆՀ-ն վերանվանվեց Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, հաստատվեցին նոր կանոնադրությունը, հոգաբարձուների կազմը և Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի իրականացման իրավասությունը վերապահվեց Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ): Ի տարբերություն նախորդ հիմնադրամի, որը հիմնականում իրականացնում էր սոցիալական բնույթի ծրագրեր, ներկայիս հիմնադրամը նախատեսվում է, որ կիրականացնի տարածքային զարգացման հեռանկարային ծրագրեր: Մասնավորապես նախատեսվում է, որ ընտրվելու և իրականացվելու են այն կապիտալ ծրագրերը, որոնք հնարավորինս առավելագույն ազդեցությունը կարող են ունենալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: Հետևաբար նմանատիպ մոտեցման պարագայում կձևավորվի կապիտալ ծրագրերի ընտրման նոր մշակույթ, որի համար անհրաժեշտ կլինի համապատասխան գործիքակազմ և կարողություններ:

Հիմնադրամի կողմից իրականացվող յուրաքանչյուր ծրագիր, անխոս, իր կարևոր դերակատարումն ու նշանակությունը կունենա տարածաշրջանի զարգացման գործում, ինչպես նաև կարող է ստեղծել նոր հնարավորություններ ամրապնդելու պետություն - համայնք - մասնավոր հատված

համագործակցությունը, որն էլ իր հերթին կնպաստի տարածքային կայուն և համաչափ զարգացմանը: Հետևաբար հիմնադրամի կայացումը և վերջինիս կողմից օգտագործվելիք գործիքակազմի շրջանակների ընդլայնումը պետք է հանդիսանա Հայեցակարգի կարևորագույն խնդիրներից մեկը:

Մարզային զարգացման ծրագրերի դերակատարման մեծացում տարածքային զարգացման գործընթացում – ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հավանության են արժանացել ՀՀ բոլոր մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերը: Ներկայումս այդ ծրագրերում ըստ էության ամփոփված են մարզերում առաջնային լուծում պահանջող կապիտալ ծրագրերը, որոնք ոչ մի կերպ չեն թղթակցվում մի կողմից միջնաժամկետ ծախսային ծրագրով և տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրերի հետ, իսկ մյուս կողմից համայնքային զարգացման քառամյան ծրագրերի հետ: Հետևաբար դրանք ըստ էության կրում են դեկլարատիվ բնույթ, և որևէ նշանակություն չունեն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: Մինչդեռ մարզի զարգացման գործընթացում մեծ է երկարաժամկետ զարգացման ծրագրի դերակատարումը, քանի որ նմանատիպ փաստաթղթում է, որ սահմանվում է մարզի զարգացման տեսլականին, այդ տեսլականու նվաճման համար անհրաժեշտ փոխկապակցված գործողությունների շարքը և այդ գործողությունների արդյունքում ակնկալվելիք արդյունքները, անհրաժեշտ ֆինանսական միջոցները, դրանց աղբյուրները և այլը: Հետևաբար անհրաժեշտություն է բարելավվելու մարզային զարգացման ծրագրերի կազմման մեթոդաբանությունը, մասնավորապես թիրախ դարձնելով մարզի տնտեսության ճյուղերի զարգացման, բիզնես միջավայրի բարելավվման, նոր ներդրումների ներգրավվման ուղղությունները: Ծրագրերը առաջարկում ենք դարձնել ավելի արդյունքահեն, ներդրումները ներկայացնելով ծրագրային ձևաչափով այսինքն գնահատելով յուրաքանչյուր ներդրման արդյունքում ակնկալվող արդյունքը: Հետևաբար այս ուղղությամբ աշխատանքների իրականացումը նույնպես պետք է հանդիսանա Հայեցակարգի կանոնակարգման առարկան:

«Քաշող» համայնքների հայտնաբերման մեթոդաբանության մշակման սկզբունքների առաջարկում - ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում առկա են որոշ համայնքներ, որոնք իրենց աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, մշակույթային արժեքներով, բնական և աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններով և այլ հանգամանքներով պայմանավորված իրենց մեջ պարունակում են որոշակի զարգացման պոտենցիալ: Տվյալ համայնքների առաջանցիկ զարգացումը ապահովելու նպատակով այլ պետություններում ցուցաբերվում է տարբերակված մոտեցում, քանի որ նմանատիպ համայնքները ունեն պոտենցիալ դառնալու «աճի բևեռներներ»: Այլ կերպ ասած այդպիսի համայնքները զարգանալով նպաստում են նաև հարակից համայնքների զարգացմանը: Հետևաբար ներդրումների իրականացումը նմանատիպ համայնքներում ավելի արդյունավետ է: Տվյալ ուղղությամբ աշխատանքների իրականացումը նույնպես պետք է հանդիսանա Հայեցակարգի առաջնային խնդիրներից մեկը:

Վերոթվարկյալ ուղղություններից բացի առկա են նաև մի շարք այլ ուղղություններ, որոնք պետք է դիտարկվեն Հայեցակարգային դրույթների շրջանակներում, մասնավորապես մարզերում արդյունաբերական գոտիների, ազատ տնտեսական գոտիների ստեղծման անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը և այլն:

ПОДХОДЫ К ПЕРЕСПЕКТИВНОМУ ТЕРРИТОРИАЛЬНОМУ РАЗВИТИЮ РА

Галстян А., к.э.н., МТУЧС

Проблемы регионального развития, в том числе равномерного, имели место во все времена и во всех обществах независимо от механизма управления данного государства и уровня развития. Эта проблема существует и в Армении. Разными государствами с целью осуществления эффективной политики регионального развития, а также уменьшения территориальной диспропорции, разрабатывают стратегические программы, где определяются проблемы, существующие в этой сфере, перспективы стратегического развития и осуществляемые в этом направлении действия. В статье обосновывается необходимость разработки новой стратегической программы регионального развития для Республики Армения, а также представлены те основные проблемы, которые должны быть предметом регулирования стратегической программы.

THE LONG-RANGE APPROACHES TO THE TERRITORIAL DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

GALSTYAN A., Ph.D in Economics, MTAEF

Issues concerning the territorial development including its equal development have always existed in all societies. The problem exists in Armenia too.

In order to execute efficient policy for and to reduce the disparities in the territorial development, different states devise strategic plans with precise elucidation of the problems existing in the field as well as the perspectives required for the strategic development and the functions to be implemented for this purpose.

In this article the necessity and the significance of the elaboration of a strategic plan for the territorial development in RA are grounded as well as the core issues that should be subject to the regulation for the strategic plan are presented.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԻՇԱ ԳՍՊՈՅԱՆ, աշխ. գիտ թեկնածու, դոցենտ ՀՀ ՊԿԱ
ԼԱՌԻՐԱ ԱՐՇԱԿՅԱՆ, դասախոս, ԵՊՀ

Հիմնաբառեր. տարածքային զարգացում, համայնք, մարզ, համայնքային բյուջե, դոտացիա, գյուղատնտեսություն, ագրոարդյունաբերություն, կոոպերատիվ, հարկաբյուջետային քաղաքականություն, դրամավարկային քաղաքականություն, հարկային արտոնություն:

Հայաստանի Հանրապետության տարածքի լեռնային բնույթը, բնաաշխարհագրական պայմանների բազմազանությունն ու բնառեսուրսային ներուժների տարբերություններն ի սկզբանե կանխորոշել են բնակավայրերի տեղաբաշխման, արտադրության, տրանսպորտային ուղիների և այլ ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման հնարավորությունները: Հենց դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հանրապետության մարզերն ու համայնքներն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց բնառեսուրսային և արտադրական ներուժով, այլև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներով:

Իհարկե, այդ երևույթը բնորոշ է ոչ միայն մեր հանրապետությանը: Այդպիսի իրավիճակ գոյություն

ունի բոլոր երկրներում, սակայն այն ավելի սուր է դրսևորվում հատկապես այն երկրներում, որոնց տարածքն աչքի է ընկնում ռելիեֆային և բնակլիմայական պայմանների, բնառեսուրսային ու արտադրական ներուժի ավելի մեծ տարբերություններով:

Բացի դրանից, հետխորհրդային շրջանում, տնտեսավարման շուկայական հարաբերություններին անցման սկզբից մինչև օրս, ՀՀ-ում կապիտալի նախնական կուտակումը, կապիտալ ներդրումները, արտադրության կազմակերպումն ու տեղաբաշխումը, արտադրատնտեսական հարաբերությունները, ապրանքային արտադրությունն ու իրացումը, ծառայությունների կազմակերպումն ու մատուցումը կողմնորոշվել են դեպի առավելագույն շահույթի և գերշահույթի, բարձր հավելյալ արժեքի, առավելագույն ռենտայի ստացումը: Այդ երևույթների արդյունքում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերություններն առավել ակնառու են. անհամաչափություններն ավելի են խորացել ինչպես Երևանի և մարզերի, այնպես էլ տարբեր մարզերի ու համայնքների միջև:

Այդ մասին են վկայում նաև ստորև բերված թիվ 1 աղյուսակում ամփոփված վիճակագրական փաստացի նյութերը:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի և Երևանի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում, 2013թ.-ին*

	մշտական բնակչության թվաքանակը, հազ. մարդ	արդյունա-բերություն, %	գյուղատն-տեսություն, %	շինարա-րություն. %	Մանրա-ծախ ռևտուր, %	ծառայութ-յուններ, %
ՀՀ	3026,.9	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ք.ԵՐԵՎԱՆ	1066,3	40.9	0.9	58.3	83.9	84.4
ԱՐԱԳԱԾՈՏՆ	133,0	2.0	9.7	2.9	1.0	0.9
ԱՐԱՐԱՏ	261,4	10.0	14.8	3.0	2.1	1.6
ԱՐՄԱՎԻՐ	267,1	4.0	17.8	2.8	2.0	2.0
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	235,6	1.9	18.0	2.6	1.3	1.0
ԼՈՌԻ	234,7	6.1	7.3	8.3	1.6	1.6
ԿՈՏԱՅՔ	255,3	13.4	6.1	6.4	3.1	3.5
ՇԻՐԱԿ	251,3	3.4	11.6	3.7	2.0	2.0
ՍՅՈՒՆԻՔ	141,7	16.5	6.8	5.4	1.4	1.3
ՎԱՅՈՑ ՁՈՐ	52,2	1.0	2.2	1.1	0.3	0.6
ՏԱՎՈՒՇ	128,3	0.8	4.8	5.5	1.3	0.7

* Աղյուսակի նյութերը վերցվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Երևան քաղաքը և մարզերը թվերով» վիճակագրական հրապարակումից:

Աղյուսակից ակնառու է, որ չնայած Երևանում է բնակվում հանրապետության բնակչության շուրջ 33 %-ը, որն ինքնին, բնակչության տարաբնակեցման և տարածքային զարգացման առումներով դիտվում է որպես բացասական երևույթ, այդուհանդերձ, Երևանում է կենտրոնացած հանրապետության արդյունաբերության 40,9 %-ը, շինարարության 58.3 %-ը, մանրածախ առևտրի 83.9 %-ը և բոլոր տեսակի ծառայությունների 84,4 %-ը:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունան տարածքային անհամաչափ զարգացման

հիմնախնդիրները, դրանց դրսևորման սրությունն ու խորությունը, պայմանավորված են նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են.

- հանրապետությունում ձևավորված հասարակական-քաղաքական կարգը, տնտեսավարման եղանակն ու պայմանները,
- տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտ մեխանիզմների առկայությունը,
- պետության և հատկապես վարչատարածքային միավորների կառավարման արդյունավետությունը:

Նպատակ չհետապնդելով քննարկելու արտադրատնտեսական հարաբերություններում պետության դերին վերաբերող գիտական տարբեր դպրոցների և դրանց հետևորդների տեսությունները, այդուհանդերձ, հարկ է նշել, որ եթե տեսաբաններից ոմանք տնտեսության զարգացման գործում բացարձականացնում են ազատ շուկայական հարաբերությունների դերը, ոմանք՝ պետության միջամտության դերը, ապա ոմանք էլ գտնում են, որ այդ երկու տեսություններն էլ, ի վերջո, տանում են փակուղի և գտնում են, որ շուկայական տնտեսությունը չի կարող կայուն և համաչափ զարգանալ՝ առանց պետության որոշակի միջամտության:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և քաղաքացիական հասարակություն ստեղծելուն միտված գործընթացների ակտիվացման արդի պայմաններում, ի հակադրություն «դասական» մոդելի [6, էջ 53], հատկապես կարևորվորվում են քեյնսյան մոդելի [3] հիման վրա ստեղծված պետական կարգավորման համակարգերը, որոնցում, շուկայական հարաբերությունները ձևավորվում են դրանց կարգավորման գործում պետության դերի բացարձականացման, և հաճախ նաև՝ ուղղակի միջամտության արդյունքում:

Տարածաշրջանների զարգացման մակարդակների անհավասարաչափության մեղմացման գործում կարևորելով պետության դերը, Հովհաննես Հարությունյանը նշում է, որ , տարածքային տնտեսական համակարգում գործունեությունն ու զարգացումը չեն կարող ինքնակարգավորվել միայն շուկայական մեխանիզմների գործողությամբ: Անհրաժեշտ է պետության միջամտությունը, որի բացակայությունը, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, կարող է բերել տարածաշրջանային ամբողջ շարք հակադրությունների, այդ թվում նաև սոցիալ-տնտեսական զարգացման անհավասարաչափությանե[2]:

ՀՀ-ում արտադրատնտեսական հարաբերությունների վրա պետության միջամտության աստիճանի օպտիմալացման համար, նախ անհրաժեշտ է որոշել, թե աշխարհի տարբեր երկրներում այսօր գործող տնտեսության պետական կարգավորման համակարգերից ո՞րն է ավելի շատ համապատասխանում ՀՀ պայմաններին ու հեռանկարային զարգացման խնդիրներին, և երկրորդ, ի՞նչ ձևերով (ուղղակի, թե՝ անուղղակի) և ինչպիսի՞ սահմաններում պետք է այդ միջամտությունը դրսևորվի:

Այդ հարցերի շուրջ միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյանը նշում է, որ ,մեր հանրապետության աշխարհաքաղաքական, սոցիալական և տնտեսական պայմաններին ամենաշատ համապատասխանում է պետական կարգավորման դիրիժիստական ձևի համակարգը[1, էջ 45]:

Հարկ է նշել, որ պետական կարգավորման դիրիժիստական համակարգի հիմնադրույթների աղբյուրը Ջ. Մ. Քեյնսի հանրահայտ տեսությունն է, ըստ որի պետությունը պետք է ակտիվորեն մասնակցի մակրոտնտեսական խնդիրների լուծմանը: Չնայած դրան, Ա. Խ. Մարկոսյանը գտնում է, որ «այդպիսի համակարգի գործումը չի բացառում պետության միջամտությունը նաև միկրոտնտեսական մակարդակում»[1, էջ 46]:

Միանգամայն հասկանալի է, որ ՀՀ վարչատարածքային միավորների (մարզերի և համայնքների) սոցիալ - տնտեսական զարգացումը պայմանավորված է այնպիսի կարևորագույն գործոններով, ինչպիսիք են պետական բյուջեից մարզպետարաններին հատկացվող ֆինանսական միջոցների

ծավալները, և որն ամենակարևորն է՝ համայնքների բյուջեների եկամուտների մակարդակները:

Որոշ հետազոտողներ, վկայակոչելով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, նշում են, որ զարգացած երկրներում տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրության տակ գտնվող բյուջեն կազմում է համախմբված բյուջեի մոտավորապես 20-28 %-ը[5, էջ 421]: Օրինակ, ԱՄՆ-ում այն կազմում է 22 %, Ֆրանսիայում՝ 17 %, Գերմանիայում՝ 28.7 %, Նիդերլանդներում՝ 23.6 %, Մեծ Բրիտանիայում՝ 22 %): Ընդ որում, դրանում, պետական բյուջեից ստացվող ամբողջ ֆինանսական օգնությունը (սուբսիդիա, սուբվենցիա, դոտացիա) կազմում է 25-30 %, իսկ բյուջեի եկամուտների մնացած՝ 70-75 %-ը, ձևավորվում է սեփական եկամուտներից[4]:

Այդ առումով միանգամայն այլ է պատկերը Հայաստանի Հանրապետությունում. տարիներ շարունակ համայնքների բյուջեի եկամուտները ՀՀ պետական բյուջեում կազմել են համախմբված բյուջեի եկամուտների 7-8 %-ը: Ընդ որում, ի տարբերություն վերը նշված երկրների, ՀՀ-ում տարածքային զարգացման անհամաչափություններն ավելի ակնառու և խորն են, ուստի և՝ ավելի շատ միջոցներ են անհրաժեշտ դրանց մեղմացման համար:

Մարզպետարանների դերը ևս չնչին է մարզի և համայնքների զարգացման գործում: Մարզպետարաններին պետական բյուջեից հատկացումները դեռևս լիարժեքորեն չեն ծառայում այն գլխավոր նպատակին, ինչի համար որ ստեղծվել են դրանք, այն է՝ որոշակի լիազորությունների իրա-կանացման ճանապարհով համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ստեղծումը և, դրանց միջոցով, համապատասխան հանրային ծառայությունների կազմակերպումն ու մատուցումը:

Քննության առնելով ՀՀ պետական բյուջեից մարզպետարաններին հատկացված միջոցների ծախսման ուղղություններն ու չափերը, կարող ենք փաստել, որ միջնակարգ կրթության ոլորտին ուղղված ծախսերը մարզպետարանների ընդհանուր ծախսերում կազմում են շուրջ 94,5 %, իսկ մարզպետարանների պահպանման ծախսերը, իրենց մեծությամբ (4,5 %), կրթության ոլորտից հետո երկրորդն են: Ընդ որում, մարզպետարանների պահպանման ծախսերի կազմում աշխատավարձին ուղղված միջոցների տեսակարար կշիռը կազմում է շուրջ (75,0 %): Մնացած բոլոր ոլորտներում պետական կառավարման տարածքային մարմինների լիազորությունների իրականացման համար կատարված ծախսերի տեսակարար կշիռն աննշան է (բոլոր ծախսերի ընդամենը 1,0 %-ը), ուստի, կարելի է ենթադրել, որ մարզպետարանների հիմնական գործառույթը հանդիսանում է համայնքներում միջնակարգ կրթության ոլորտի զարգացման ու պահպանման ֆինանսավորման իրականացումը:

Տարածքային անհամաչափությունների մեղմացման, կամ որ նույնն է թույլ զարգացած համայնքների և մարզերի զարգացումն ապահովող ամենախոշորամասշտաբ պետական միջոցառումը ՀՀ-ում հանդիսանում է համայնքներին պետական տրանսֆերտների (համահարթեցման դոտացիա, սուբսիդիա, սուբվենցիա) տրամադրումը՝ օրենքով սահմանված կարգով:

Առաջին հայացքից թվում է, թե իսկապես, գործող օրենսդրության պայմաններում, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի կիրառումը կնպաստի հանրապետությունում տարածքային անհամաչափությունների մեղմացմանը: Սակայն, նշված օրենքի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հեռու է այդ դերը խաղալուց: Բանը նրանումն է, որ Ֆինանսական համահարթեցման մեթոդաբանությունում խեղաթյուրվել է համահարթեցման բուն գաղափարը, այն է՝ առավել զարգացած համայնքներում և տարածաշրջաններում ստեղծված ՀՆԱ-ի մի մասը վերաբաշխման ճանապարհով տրամադրել սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից թույլ զարգացած տարածաշրջաններին ու համայնքներին: Այս գաղափարը չի գործում, որովհետև համահարթեցման դոտացիաներ են ստանում ՀՀ բոլոր համայնքները, այդ թվում՝ Երևան քաղաքը: Բացի դրանից, ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների, որտեղ համահարթեցման դոտացիան ունի

նպատակային բնույթ, ՀՀ - ում այն ծախսվում է ըստ նպատակահարմարության, ուստի և, որպես այդպիսին, չի վերահսկվում պետության կողմից: Ավելին, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ թե՛ համայնքային բյուջեի առումով, և թե՛ դոտացիայի չափով Երևանն աչքի է ընկնում իր բարձր տեսակարար կշռով (համայնքային բյուջեների վարչական մասի եկամուտների ընդհանուր գումարի ավելի քան 37,0 %-ը, համայնքներին տրված համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի շուրջ 33,0 %-ը), ապա պարզ կդառնա թե ֆինանսական ապահովվածության առումով որքան անմխիթար վիճակում են գտնվում ՀՀ մնացած համայնքները, մանավանդ՝ գյուղական համայնքները:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է հանգել այն եզրակացության, որ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և անհրաժեշտ հանրային ծառայությունների կազմակերպման ու մատուցման ասպարեզներում իրական արդյունավետություն չեն կարող ապահովել նաև համայնքների խոշորացմանն ուղղված միջոցառումները: Մեր կարծիքով, այդ հարաբերությունները, թե՝ համայնքներում, և թե՝ միջհամայնքային մակարդակում, պետք է խարսխվեն շուկայական տնտեսավարման սկզբունքներին և բխեն, առաջին հերթին, յուրաքանչյուր համայնքի շահերից:

Տարածքային անհամաչափությունների մեղմացման, գործազրկության և աղքատության մակարդակների նվազեցման, բնակչության արտագաղթի կանխման և համայնքների ու մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով անհրաժեշտ է.

1. Վերանայել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների սկզբունքներն այն հաշվով, որպեսզի արտոնություններն ունենան տարածքային և ճյուղային (առաջին հերթին՝ գյուղատնտեսության և ագրոարդյունաբերության, տեղական արդյունաբերության) ուղղվածություն և կոնկրետ նախապայմաններ (օրինակ, նոր աշխատատեղերի ստեղծման, զբաղվածության կենտրոնների միջոցով գործազուրկներին աշխատանքի ընդունման և այլն):

2. Պետական անտոկոս վարկերի տրամադրմամբ և նշված արտոնությունների կիրառման ճանապարհով նպաստել միջհամայնքային միավորումների և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանն ու զարգացմանը:

3. Վերը նշված հիմնախնդիրների լուծման նպատակով վերանայել գյուղատնտեսության նախարարության, մարզպետի և համայնքի ղեկավարի լիազորությունները և հատկապես, գյուղատնտեսության զարգացման և ագրոարդյունաբերական համալիրների ստեղծման ու զարգացման ոլորտներում նրանց վրա դնել որոշակի պարտավորություններ և պատասխանատվություն:

4. Համախմբված բյուջեում համայնքային բյուջեի եկամուտների տեսակարար կշիռն ավելացնել՝ կիրառելով շահութահարկից և եկամտային հարկից մասհանումների մեխանիզմը:

ПРОБЛЕМЫ ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Гспоян Г., к.г.н., доцент, АГУ РА
АршакянЛ., преподаватель, ЕГУ

В статье рассматриваются проблемы и причины, препятствующие равномерному территориальному развитию Республики Армения, которые, в первую очередь, обусловлены недостаточными финансовыми возможностями общин, неудовлетворительным уровнем эффективности управления марзов и общин, недостаточным потенциалом природных ресурсов общин, особенно, в использовании сельскохозяйственных природных ресурсов и низким уровнем развития кооперации и агропромышленной отрасли в этой сфере.

В заключительной части статьи даны интересные предложения по решению проблем территориального развития Республики Армения.

REGIONAL DEVELOPMENT ISSUES OF THE REPUBLIC OF ARMENIA

GSPOYAN G., PhD, Associate Professor, public administration academy RA,
ARSHAKYAN L., YSU

The article discusses the reasons hindering Armenia from balanced regional development and it should be noted, that problems are primarily due to the lack of financial resources, lack of efficiency in the management of regions and committees, natural resource potential, including usage of natural resources. The situation is also linked to the underdeveloped level in the agro-industry specific sector.

The last part of the article combines interesting proposals to solve regional development problems in the R/A.

Գրականություն

1. Մարկոսյան Ա.Խ., Պետությունը և շուկան: Գիրք առաջին, Երևան, «Տիգրան Մեծ», 2000:
2. Հարությունյան Հ., Տարածաշրջանային զարգացման մակարդակների անհավասարաչափության մեղմացման համաշխարհային փորձը: ,« Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթ, 27 հունվարի,2010թ., թիվ 3:
3. Քեյնս Ջ.Մ.- Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն (Թարգմանությունը՝ տնտ.գիտ թեկնածու Կ.Կիրակոսյանի, խմբագրությունը՝ տնտ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Մարկոսյանի և տնտ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ս.Դավոյանի): Ե., «Տիգրան Մեծ», 2006, 392 էջ:
4. Адуков Р.Х., Адукова А. Н. – Местное самоуправление на селе: актуальность, состояние, перспективы развития. В сб: “Материалы Всероссиской научно-практической конференции “Организационно-экономический механизм государственной поддержки сельского хозяйства”, Москва, 2004.
5. Проблемы реформы местного самоуправления: структурные и финансовые аспекты. Москва, ИЕПП, 2005, 544 стр.
6. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М., 1962.

ՈՒՂՂԱՁԻԳ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ , աշխ.գիտ. թեկ., դոցենտ , ՀՊՏՀ

Հիմնաբառեր- *ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներ, գոտիական մասնագիտացում, արտադրական ուղղություններ, ենթաճյուղեր, գյուղական տարածք, գյուղատնտեսական մթերքներ*

Շուկայական բարեփոխումների փուլում Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում անվիճելի հրատապություն են ձեռք բերել գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացմանը նպաստող ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների ագրոարտադրական ռեսուրսային ներուժի համակողմանի ուսումնասիրությունը և տնտեսական գնահատականը:

Ուստի միանգամայն օրինաչափ է այն փաստը, որ շուկայական-ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացներն առավել բարդ են մեր հանրապետության ագրարային հատվածի բազմազան և բնատնտեսական փոխադարձ կապերն ընդգրկող ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարրապատկերում: Այս համատեքստում փորձել ենք տարածական վերլուծության և ագրոկլիմայական շրջանցման մեթոդների օգնությամբ հիմնավորել յուրաքանչյուր ուղղաձիգ լանդշաֆտային գոտու ագրոարտադրական ռեսուրսային ներուժի գնահատականը՝ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման խորացման տեսանկյունից:

Ուղղաձիգ լանդշաֆտային գոտիականությունը զգալի չափով ազդում է գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման առանձնահատկությունների և ներճյուղային կառուցվածքի ձևավորման վրա, քանի որ ենթաճյուղերի քանակը և մասնագիտացման արտադրական ուղղությունները բացարձակ բարձրություններին համապատասխան օրինաչափորեն հերթափոխվում են: Այսպես, ցածրադիր ու նախալեռնային գոտիներում բարենպաստ ագրոկլիմայական պայմանների առկայությունը թույլ է տալիս զարգացնել բազմաճյուղ ագրարային տնտեսություն՝ մասնագիտացման տարբեր արտադրական ուղղություններով: Ընդ որում, մասնագիտացման հիմնական (գլխավոր) ենթաճյուղերի ընտրությունը որոշվում է ոչ միայն համապատասխան ագրոկլիմայական պայմանների առկայությամբ, այլև զուտ տնտեսական նկատառումներով՝ և ամենից առաջ՝ շուկայական պահանջներով: Լեռնային գոտում, որտեղ միագումար ջերմաստիճանների ոչ մեծ չափերի պատճառով վեգետացիոն ժամանակաշրջանի տևողությունն ավելի կարճ է, ագրարային հատվածի ենթաճյուղերի (հատկապես՝ բուսաբուծության) մասնագիտացման արտադրական ուղղությունների ընտրության հնարավորությունները խիստ սահմանափակ են, իսկ մասնագիտացման մակարդակը՝ ցածր:

Այսպես, ՀՀ լեռնային գոտու գյուղական տարածքների մեծ մասում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման գործակիցը ցածր է՝ 0-0.25, մինչդեռ ցածրադիր գոտու նեղ մասնագիտացված տարածաշրջանների համար բնորոշ են ավելի բարձր գործակիցներ՝ 0.5-0.75, իսկ առանձին խոշոր ապրանքային մասնագիտացված տնտեսություններում 0.75-1: Սակայն լեռնային գոտու տարածարջանների՝ Ապարանի, Արագածի, Ամասիայի, Աշոցքի և ուրիշների արտադրության մասնագիտացման մակարդակը համեմատաբար ավելի բարձր է, քանի որ տեղական ագրոկլիմայական պայմանները հնարավորություն չեն տալիս զարգացնել բազմաթիվ

ենթաճյուղեր, և գյուղացիական տնտեսություններում ու տնտեսավարման մյուս փոքր ձևերում հիմնականում արտադրում են մեկ-երկու, իսկ երբեմն էլ երեք տեսակի անասնապահական մթերքներ: Այսպես, Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանի (լեռնաանասնաբուծական ենթագոտի) ոչխարաբուծությունը ապահովում է ագրարային հատվածի ամբողջ ապրանքային արտադրանքի 90%-ը:

Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման դեպքում, ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների օրինաչափ հերթափոխության հետ մեկտեղ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև մի շարք գործոններ՝ լեռների պաշտպանական ու լանջերի դիրքադրության գործառույթները, գեոմորֆոլոգիական ձևերի առանձնահատկությունները, հողակտորների չափերը ու ուրվագիծը, մշտական դասավորվածությունը, բացարձակ բարձրությունները և այլն, որոնց հետևանքով, հարթավայրային տարածաշրջանների տնտեսությունների հետ համեմատած, լեռնային գյուղական տարածքներում ցածր է գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ու համակենտրոնացման մակարդակը, իսկ կոոպերացման ու կոմբինացման հիման վրա՝ նոր արտադրական ուղղությունների ձևավորման հնարավորությունները: Այսպես, Միջինարաքսյան գոգավորության ինտենսիվ խաղողագործության գոտում խաղողի տնարկների համահավաք տարածությունները 80-100 հա է, որը մասնագիտանում է կոնյակի, թունդ և սեղանի գինիների հումք ծառայող և թարմ օգտագործման սեղանի խաղողի արտադրության սորտատեսակների գործում: Մինչդեռ Հյուսիսարևելյան և Զանգեզուրի գյուղատնտեսական գոտիների գետահովիտներում, որտեղ տարբեր թեքության ու դիրքադրության լեռնալանջերի վրա են տեղաբաշխված մանրաուրվագիծ և անկանոն կառուցվածքով խաղողի տնկարկների տարածությունները (նրանց միջին չափերը տատանվում են 0.3-1.0 հա սահմաններում), զարգացած են եզակի մեծ տնտեսական նշանակություն և տարածման սահմանափակ արեալ ունեցող, չորացվող և սեղանի խաղողի սորտատեսակները:

Փաստորեն ՀՀ լեռնային տարածքն ագրոարտադրական նպատակներով օգտագործելու և գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացումը տարբերակելու հիմնական չափանիշ է համարվում ուղղաձիգ լադշաֆտային գոտիների առկայությունը կամ էլ բացակայությունը: Ինչպես արդարացիորեն գնահատել է Ֆ. Միլկովը «…լանդշաֆտային տեսանկյունից բնատարածքային համալիրների հարթավայրային կամ էլ լեռնային աստիճանակարգին պատկանելիությունը և գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման նպատակներով օգտագործումը (շեշտված մեր կողմից -Վ.Մ.) որոշվում են ոչ թե ծովի մակարդակից ունեցած բացարձակ բարձրությամբ և նույնիսկ ոչ էլ հարաբերական բարձրության տատանման չափերով, այլ լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականության առկայությամբ կամ էլ բացակայությամբ»[1]:

Յուրաքանչյուր ուղղաձիգ լանդշաֆտային գոտում համակողմանիորեն ուսումնասիրելով ողջ ագրոարտադրական ռեսուրսային ներուժը և տնտեսավարման ավանդույթները՝ հանգում ենք այն կարծիքին, որ լեռնային տարածքում գյուղատնտեսական արտադրությունը հնարավոր է մասնագիտացնել ըստ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների, իսկ արտադրատեխնոլոգիական արդյունավետ կապերը նպատակահարմար է կազմակերպել տարբեր գոտիների տնտե-

[1] Տե՛ս **Мильков Ф.Н.** Рельеф и ладшафты Земли (лекция спецкурса «Основные проблемы физической географии»).Вестник Московского университета, Научный журнал, Серия V, география 1978, թիվ 3,էջ 15:

սությունների միջև գործող ուղղաձիգ հարահոսի սկզբունքով[1]: Դա, ըստ էության, գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացների արդյունավետ տեխնոլոգիական անընդհատականության զուգակցումն է ինտեգրվող տնտեսությունների տարածքային ամբողջականության ամրապնդման հետ՝ անկախ դրանց ճյուղային և գոտիական պատկանելությունից:

Այս համատեքստում շատ կարևոր է ընդհանուր գծերով բնութագրել և գնահատել ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների ագրոարտադրական ռեսուրսային ներուժը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու ուղղաձիգ լանդշաֆտային և գյուղատնտեսական գոտիներից յուրաքանչյուրում ձևավորվող գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման բնատնտեսական պայմանների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը:

Սովորաբար, գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման, ինչպես նաև ագրոկլիմայական շրջանացման հարցերով զբաղվող մասնագետներն, ամբողջ լեռնային տարածքն ըստ բարձրաչափական հատկանիշի և ռելիեֆի բնույթի բաժանում են 3 ուղղաձիգ գոտիների՝ ցածրադիր, նախալեռնային և լեռնային, և, ելնելով կոնկրետ բնատնտեսական պայմաններից, սահմանված բացարձակ բարձրությանը և ձևաչափական բնութագրող մեծություններին համապատասխան անցկացնում են սահմանագծում առանձին ուղղաձիգ գոտիների միջև[2]: Ուստի, ըստ վերոհիշյալ մոտեցման, մեր հանրապետության տարածքը նույնպես բաժանել ենք 3 ուղղաձիգ գոտիների և փորձել ենք ներկայացնել դրանցից յուրաքանչյուրում տարածվող ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարրապատկերի ագրոարտադրական գնահատականը և գյուղատնտեսական արտադրության գոտիական ու ներճյուղային մասնագիտացման հնարավորությունները:

Ըստ բարձրաչափական հատկանիշի և ռելիեֆի բնույթի մինչև 1000 մ բացարձակ բարձրությունների վրա ՀՀ-ում տարածվող ցածրադիր գոտին զբաղեցնում է 2.92 հազ.կմ² տարածք, որը կազմում է հանրապետության ամբողջ տարածքի 9.9 %-ը: Այստեղ ապրում են 1196.3 հազ. մարդ, կամ հանրապետության ամբողջ բնակչության 37.2%-ը: Սա ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարրապատկերում գոտիական հերթափոխության համակարգի առաջին աստիճանն է, որտեղ լավ արտահայտված է հորիզոնական-ուղղաձիգ զոնայականությունը՝ համատարած գոտի չառաջացնող և առանձին տեղամասերում լեզվակներով տարածվող կիսաանապատային և չոր մերձարևադարձային լանդշաֆտները (մասնավորապես, առաջինը՝ Արաքսի միջին գոգավորությունում, իսկ երկրորդը՝ Աղստևի և Մեղրու գետահովիտներում):

Հանրապետության ցածրադիր գոտին համարվում է բացարձակապես ինտենսիվ և բարձրարժեք ջրովի երկրագործության զարգացած տարածաշրջան (տե՛ս քարտեզագրամա 1): Այստեղ թեք լեռնալանջերը յուրացնելու, ինչպես նաև էրոզիայի դեմ պայքարելու համար ավանդականորեն ստեղծվել են բազմաստիճան արհեստական դարավանդներ,որոնցում աճեցնում են խաղող, հունդավոր ու կորիզավոր և չոր մերձարևադարձային պտուղներ ու հատապտուղներ, բանջարաբոստանային մշակաբույսեր և այլն: Ցածրադիր գոտու գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման տեղայնացման օրինաչափությունները պայմանավորված են նաև ագրարային հատվածի զարգացման մակարդակով (և ամենից առաջ, ջրովի երկրագործության

[1] Տե՛ս ***Кузнецов Г***., География и планировка сельскохозяйственных районов. М.,Мысль,1971,էջ. 348:
[2] Տե՛ս **Иванов К.** Территориальные системы общественного производства. М.,Мысль,1975, էջ136-138:

արմատավորման) և տնտեսավարման ազգային ավանդույթներով (դարավանդային ու տնկավոր ճիմապատ այգեգործություն, թարմային խաղողագործություն, մարգային ու փոցխային բանջարաբուծություն, թփուտային հատապտղանոցներ և այլն):

Այս գոտում որպես գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման ռիսկային գործոններ, հանդես են գալիս ցրտահարությունը և կարկտահարությունը: Միջին բազմամյա տվյալներով գարնանային վերջին ցրտահարությունները լինում են ապրիլի երկրորդ տասնօրյակում, իսկ ամենաուշը՝ մայիսի սկզբներին, մինչդեռ աշնանային ցրտահարություններն սկսվում են հոկտեմբերին, որոնք գրեթե ամեն տարի որոշակի վնաս են հասցնում ագրարային հատվածին (հատկապես ջերմասեր պտուղներին, խաղողին և բանջարաբոստանային մշակաբույսերին):

Կարկտահարությունը եղել և մնում է մշտապես գործող բացասական գործոն, որը անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման դեպքում: Ըստ մասնագետների գնահատման՝ 2013թ.-ի մայիսին Արմավիրի տարածաշրջանի 43 գյուղական համայնքներում կարկուտը վնասել է ավելի քան 17 հազ. հա խաղողի, պտուղների ու հատապտուղների տնկարկների տարածություններ և բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածություններ՝ գյուղացիական տնտեսություններին և տնտեսավարման մյուս ձևերին պատճառելով մոտ 35-40 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վնաս:

Երկարատև վեգետացիոն փուլի շնորհիվ ցածրադիր գոտին մասնագիտացել է բարձրարժեք և շուկայական մեծ պահանջարկ ունեցող ջերմասեր պտուղների և հատապտուղների, խաղողի և բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման գործում, իսկ անասնաբուծությունը (առավելապես կաթնատու տավարաբուծությունը) ունի պահվածքի ու խնամքի մսուրաարոտային ուղղվածություն: Այստեղ առանձնացվում է գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հետևյալ ենթագոտիները.

Ջերմությամբ լավ ապահովված Միջինարաքսյան գոգավորության ցածրադիր ենթագոտի (մինչև 900-1000 մ բարձրագոտիներ), որտեղ գյուղատնտեսական արտադրությունը մասնագիտացել է ջերմասեր այնպիսի պտուղների, խաղողի և մշակաբույսերի աճեցման գործում, որոնք կարող են դիմակայել տարվա ցուրտ սեզոնի՝ կորիզավոր պտուղներ, խաղող (մեծ մասամբ այգեթաղ տարածքներով), որոշ տեխնիկական ու միամյա մշակաբույսերի կրկնվող ցանքերը և այլն:

Ջերմությամբ շատ լավ ապահովված Մեղրու և Ագստևի գետահովիտների ենթագոտի, որտեղ գյուղատնտեսությունը մասնագիտացել է կարճատև մեղմ ձմռանը դիմակայող ջերմասեր չոր մերձարևադարձային պտուղների աճեցման գործում (նռնենի, թզենի, ընկուզենի, զկեռենի, արևելյան խուրմա և այլն), ինչպես նաև մեծ են կրկնվող ցանքատարածությունների հնարավորությունները:



Քարտեզագրամա 1. Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացումը Հայաստանի Հանրապետությունում

Նախալեռնային գոտին ՀՀ-ում զբաղեցնում է 5.43 հազ կմ^2 տարածք կամ հանրապետության ամբողջ տարածքի 18.3%-ը: Այստեղ բնակվում է 725.7 հազ. մարդ կամ հանրապետության ամբողջ բնակչության 22.7%-ը: Այս գոտին նույնպես, ոչ թե միասնական ընդհանուր տարածք է, այլ միմյանցից առանձնացված զանգվածներ, սակայն այն ավելի ընդարձակ է, քան ցածրադիր գոտու կիսաանապատային և չոր մերձարևադարձային լանդշաֆտները: Գոտու ստորին և վերին սահմանները տարածվում են 1000-1500 մ, իսկ առանձին տարածաշրջանների հարավային և սահմանամերձ լանջերին նաև 1600 մ բացարձակ բարձրությունների վրա: Այս գոտու լանդշաֆտները ձևավորվում են չափավոր տաք կլիմայի պայմաններում, երբ տաք ու չոր արևոտ ամռանը հաջորդում են համեմատաբար ցուրտ ձմեռները (հունվարի միջինը՝ շուրջ -6^{0}C-ի)՝ հաստատուն ձնածածկով:

Ջերմության և բավարար խոնավության պայմաններում այստեղ նույնպես տիրապետող են բուսական կազմի համեմատաբար չորադիմացկուն տեսակները: Գյուղատնտեսական մշակաբույսերի և տարբեր պտուղների ու հատապտուղների, խաղողի աճեցումը հնարավոր է նաև անջրդի պայմաններում, սակայն այս դեպքում ստացվում է ցածր բերք: Պատահական չէ, որ հետբարեփոխումների տարիներին զգալի աշխատանքներ են կատարվում նախալեռնային գոտու

հողերը ջրովի դարձնելու համար (մի շարք միջտնտեսային ջրանցքների, ներհամայնքային ցանցերի, պոմպակայանների, մայր ջրանցքների վերանորոգումը և կառուցումը):

Նախալեռնային գոտում ջերմության և բավարար խոնավության շնորհիվ ձևավորվում են գյուղատնտեսության արտադրության մասնագիտացման երկու հիմնական ենթագոտիներ.

1. ***Միջինից բարձր ջերմությամբ ապահովված և բավարար խոնավության պայմաններ ունեցող չոր տափաստանային լանդշաֆտների ենթագոտի***, որի ագրոկլիմայական պայմաններն առավել նպաստավոր են տարբեր պտուղների ու հատապտուղների, խաղողի որոշ սորտատեսակների և որոշ մշակաբույսերի աճեցման համար: Արոտավայրերի խիստ սահմանափակության պատճառով անասնաբուծությունը կողմնորոշվում է դեպի դաշտային կերարտադրություն և լեռնային գոտու հեռագնա ալպյան ու ենթալպյան մարգագետինները, որոնք գյուղական բնակավայրերից հեռու են մինչև 20-80 կմ, իսկ երբեմն էլ՝ ավելի շատ: Մսուրային սեզոնի համար կերի պաշարումը կատարվում է ջրովի վարելահողերից և միջլեռնային գոգավորությունների ցածրադիր տեղամասերը, որտեղ տարածված են ցանովի խոտաբույսերի ցանքատարածությունները և խոտահունձի համար պիտանի հացազգատարախոտային բուսախմբակցությունները: Մեղմաթեք լեռնալանջերի և գետահովիտների ոչ մեծ տեղամասերի ջրովի վարելահողերի վրա աճեցնում են նաև կերային մշակաբույսեր (առվույտ, կորնգան, եգիպտացորեն սիլոսի, կանաչ կերի և սենաժի համար, միամյա հացազգիներ, կերային արմատապտուղներ և այլն):

2.Արարատյան դաշտի նախալեռնային և Վայքի գյուղատնտեսական գոտիների բարձր ջերմությամբ ապահովված ենթագոտի, որտեղ գյուղատնտեսական արտադրությունը մասնագիտացել է խաղողագործության, հնդավոր պտուղների, ծխախոտի, ինչպես նաև հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ: Այստեղ տարվա ցուրտ սեզոնին լեռնալանջերի ջերմային շրջադասության հետևանքով պտղահատապտղային և խաղողի տնկարկներն ավելի լավ են դիմակայում, քան փակ գոգավորությունների ցածրադիր տեղամասերում: Ավելին, ըստ բացարձակ բարձրության, լանջի ուղղությամբ պտղահատապտուղային և խաղողի տնկարկների աճեցման արեալի տեղաշարժը հնարավորություն է տալիս .ցրտահարվողե ցածրադիր տեղամասերն ազատելու վաղահաս կարտոֆիլի, բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսեր աճեցնելու համար: Դրանով է բացատրվում նաև այն, որ Արարատյան դաշտի նախալեռնային և Վայքի գյուղատնտեսական գոտիներում (մինչև 1000 մ բարձրության վրա) 10 տարվա ընթացքում պտուղների ու հատապտուղներ և խաղողի տնկարկների ուժեղ ցրտահարման հավանականությունը կազմում է 1-2 անգամ, իսկ գոգավորություններին հարող լեռնալանջերի վրա (1000-1400 մ) այդպիսի վտանգ չկա, կամ էլ կարող է լինել խաղողի վազի մատղաշ շիվերի աննշան ցրտահարություն: Ըստ Ռ. Մկրտչյանի տվյալների, առանց այգեթաղի, 10-15^0-ի թեքությամբ դեպի Արարատյան գոգավորություն իջնող լանջերի ցածրադիր տեղամասերը (50-100 մ բարձրությամբ) դարավանդավորելու միջոցով կարելի է օգտագործել խաղողի տնկարկների տարածությունների համար և ստանալ բարձր շաքարայնությամբ բերք[1]:

3. ***Նախալեռնային գոտու հարավային դիրքադրության 10-20^0 թեքությամբ լեռնալանջերը հեռանկարում կարող են դառնալ ինտենսիվ պտղաբուծության և խաղողագործության մասնագիտացված***

[1] Տես Мкртчян Р.С. Агроклиматическое районирование. В. кн "Агроклиматические ресурсы" Армянская ССР, Изд-во "Гидрометеоиздат", Л., 1976, էջ 45-61:

ենթագոտի, որտեղ ագրոկլիմայական պայմաններն առավելապես համապատասխանում են հնդավոր պտուղների աճեցման կենսաբանական և ագրոէկոլոգիական պահանջներին: Պատահական չէ, որ այդ նպատակով 1960-1980-ական թվականներին նախալեռնային գոտում Աշտարակի, Նաիրիի և Իջևանի տարածաշրջանների բարելավված և քարքարոտ հողերի վրա հիմնադրվեց հնդավոր պտուղների այգիներ, որոնց տարածքը 1000 հա-ից ավելի է: Նախալեռնային գոտում հնդավոր պտուղների աճեցումը միջին հաշվով տալիս է 600-650 հազ. դրամ/հա զուտ եկամուտ, իսկ Հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու անջրդի լեռնալանջերի վրա զուտ եկամուտը 1 հա խաղողի և պտղահատապտղային տնկարկների տարածության վրա միջին հաշվով հավասր է 300-350 հազ. դրամ: Ընդ որում, տարբեր տարածաշրջաններում լեռնալանջերի դարա-վանդավորման վրա կատարվող ծախսերը կազմում են 82-130 հազ. դրամ/հա, որոնք փոխհատուցվում են 4-5 տարվա ընթացքում: Սակայն այդ դեպքում ակնհայտ է, որ, ըստ բարձրա-չափական հատկանիշի և ռելիեֆային բնույթի, ագրոկլիմայական պայմանները թույլ են տալիս խաղողի, պտուղների և հատապտուղների աճեցման գոյություն ունեցող արեալը տեղաշարժել առաջ:

Լեռնային գոտին հանրապետությունում ամենաընդարձակն է՝ 20.39 հազ. կմ² կամ ամբողջ տարածքի 71.8%-ը: Այստեղ ապրում է 1288.3 հազ. մարդ, կամ հանրապետության ամբողջ բնակչության 40.1%-ը: Լեռնային գոտու ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների տարրապատկերին համապատասխան առանձնացվում են գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման երեք ենթագոտիներ.

1) ***Ջերմության միջին ապահովվածությամբ ենթագոտի, որը համապատասխանում է լեռնատափաստանային լանդշաֆտներին:*** Այն բնութագրվում է բարեխառն կլիմայով (տաք ամառ և ցուրտ ձմեռ, հաստատուն տևական ձյունածածկույթ):

Այս ենթագոտու գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքում վարելահողերի և բազմամյա տնկարկների տեսակարար կշիռը համապատասխանաբար 42,6% և 6,8% է: Ըստ ջերմության ապահովվածության աստիճանի՝ գերակշռում են միջին հասունության մշակաբույսերը (աշնանացան ցորեն, եգիպտացորեն՝ լրիվ հասունացման հատիկի համար, շաքարի ճակնդեղ, կարտոֆիլ, բանջարանոցային ու կերային մշակաբույսերի տարբեր սորտատեսակներ և այլն):

Գրեթե լավագույն ջրաջերմային հաշվեկշիռ ունեցող տեղամասերում տարածվող վարելահողերի մեծ մասն անջրդի երկրագործության պայմաններում օգտագործվում են աշնանացան հացահատիկային մշակաբույսեր աճեցնելու համար,որոնք զուգակցվում են բազմամյա ու միամյա խոտաբույսերի և կարտոֆիլի ու շաքարի ճակնդեղի, իսկ առանձին դեպքերում էլ գանգրավուշի և ուրիշ տեխնիկական ու բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների հետ:

Ջրովի երկրագործությունը զարգացած է մեղմ թեքության լեռնալանջերի հարթեցված տեղամասերի և ողողվող դարավանդների վրա: Այստեղ վարելահողերի մոտ 1/3-ը կազմող ջրովի ցանքատարածություններում գերակշռում են հացահատիկային ու կերային մշակաբույսերը՝ զուգակցված բանջարեղենի և կարտոֆիլի հետ,ինչպես նաև տեխնիկական մշակաբույսերի ոչ մեծ ցանքատարածությունները (ընդ որում՝ կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները հիմանականում կենտրոնացված են մարգագետնատափաստանային լանդշաֆտների վրա): Պտուղների և հատապտուղների տնկարկների տարածությունների

հիմնական զանգվածները (առավելապես հնդավոր և մանր կորիզավոր պտուղները) կենտրանացված են քամիներից պաշտպանված միջլեռնային գոգավորություններում և հարավային դիրքադրության լեռնալանջերին:

Այստեղ ագրոլանդշաֆտային պայմանների տարբերությունները հնարավորություն են տալիս կիրառել գյուղատնտեսական կենդանիների պահվածքի, կերակրելու և կերարտադրության տարբեր եղանակների զուգակցումներ: Մասնավորապես, մսուրային և արոտային կերապահովվածության հարաբերակցությունը թելադրում է նախիրի ու հոտի կառուցվածքը, գլխաքանակը և միջճյուղային ու ներճյուղային մասնագիտացումը, արտադրական ուղղությունները: Այսպես, մեղմաթեք լեռնալանջերի մարգագետնատափաստանային լանդշաֆտների հաշվին պաշարվող մսուրային կերերի շնորհիվ (մեկ պայմանական գլուխ խոշոր եղջերավոր անասունին միջին հաշվով ոչ պակաս 18-20ց կերային միավոր) զարգացել է տավարաբուծական-ոչխարաբուծական արտադրական ուղղությունը, իսկ բարձրադիր տեղամասերն օգտագործվում են գարնանային-ամառային փուլում կենդանիներին արածեցնելու համար: Աշնանը՝ բերքահավաքից հետո,կենդանիներն արածում են մշակաբույսերից ազատված ցանքատարածությունների և նրանց միջև տեղաբաշխված խոտհարքների վրա:

Ներճյուղային մասնագիտացման առումով հեռանկարում մեծ նշանակություն է ստանալու կարտոֆիլի արտադրությունը: Այսպես, Սևանի ավազանում երաշխավորվում է ագրարային հատվածի տավարաբուծական-ոչխարաբուծական-կարտոֆիլագործական արտադրական ուղղությունը, իսկ Մարտունու տարածաշրջանը հիմնականում մասնագիտանալու է կարտոֆիլի արտադրության գործում,քանի որ բարեխառն մեղմ կլիման ավելի է համապատասխանում այդ մշակաբույսի արդյունավետ աճեցմանը: Կարտոֆիլի ցանքատարածություններն ընդարձակվում են նաև հանրապետության լեռնային գոտու մի շարք տարածաշրջաններում: Հետբարեփոխումների տարիներին լեռնատափաստանային լանդշաֆտների գոտում զգալի զարգացում են ստացել ագրարային հատվածի այնպիսի արտադրական ուղղությունները , ինչպիսիք են տավարաբուծական-պտղաբուծականը (Սյունիքի մարզ, Լոռվա մարզի որոշ տարածաշրջաններ), տավարաբուծական-ծխախոտագործականը (Կոտայքի մարզ), խաղողագործական-տավարաբուծականը (Տավուշի մարզ), տավարաբուծական-թռչնաբուծական-կարտոֆիլագործականը (Գեղարքունիքի մարզ), ինչպես նաև տավարաբուծական-ճակնդեղագործականը (Շիրակի մարզ) (տեԲս քարտեզագրամա 1): Այդ արտադրական ուղղությունների տնտեսություններում հիմնական (գլխավոր) ենթաճյուղերին հաջողությամբ զուգակցվում են հացահատիկի արտադրությունը, կարտոֆիլագործությունը, որոշ տարածաշրջաններում՝ ճակնդեղագործությունը և դաշտային կերարտադրությունը: Այդ լանդշաֆտային գոտում տեղաբաշխված տնտեսությունների մեծ մասը աչքի է ընկնում մասնագիտացման բարձր մակարդակով,որը,սակայն,ոչ միշտ է ուղեկցվում արտադրության բարձր համակենտրոնացմամբ և առևտրային, մատակարարող, արդյունաբերական և ուրիշ տնտեսվարող կազմակերպությունների հետ արտադրական կոոպերացմամբ (շատ են սակավ հզոր,ցածր եկամտաբեր և վնասով աշխատող գյուղացիական տնտեսությունները և տնտեսավարման ուրիշ փոքր ձևերը):

2) ***Լեռնաանտառային լանդշաֆտների հիմնական զանգվածները կենտրոնացված են հանրապետության Հյուսիսարևելյան և Զանգեզուրի գյուղատնտեսական գոտիներում***: Այստեղ կլիման

մեղմ է, տաք ամառով (միջին ջերմաստիճանը18-20˚C –ի),մեղմ ձյունառատ ձմեռներով (միջին ջերմաստիճանը՝ շուրջ -4˚C-ի):

Լեռնաանտառային լանդշաֆտների գոտու ագրոկլիմայական պայմաններն ունեն մեծ հնարավորություններ խաղողի և պտուղների ու հատապտուղների տնկարկների տարածությունների, ինչպես նաև տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակման և դրանց համախառն բերքի ավելացման համար:

Հեռանկարում, կերահանդակների, հատկապես խոտհարքների արդյունավետությունը զգալիորեն բարձրացնելու միջոցով զարգացում են ստանալու կաթնամսատու տավարաբուծությունը, անտառալեռնային մսատու խոզաբուծությունը, իսկ ոչխարների համար սակավ մատչելի լեռնային արոտավայրերի վրա՝ կաթնատու և հազվադեպ բրդատու ու աղվամազավոր այծաբուծությունը: Տավուշի մարզի լեռնաանասնաբուծության ենթագոտում առկա են անտառներ՝ վայրի պտղատու ծառատեսակներով: Այստեղ կարելի է կազմակերպել ոչ պակաս 3000, այդ թվում՝ 300 մերուն գլխաքանակով խոշոր ապրանքային մասնագիտացված խոզաբուծական տնտեսություններ: Մասնավորապես, Նոյեմբերյանի տարածաշրջանում ուրվագծվում է խոզի մսի արտադրությունն ավելացնել հիմնականում ապխտած և թարմ խոզի միս մատակարարող առավել խոշոր համալիրներ (ագրոհոլդինգային և ագրոֆիրմային տիպի ձեռնարկություններ) շահագործման հանձնելու հաշվին:

Տավուշի մարզում պտղաբուծական-խաղողագործական, պտղաբուծական-խաղողագործական-տավարաբուծական (ծխախոտագործության հետ) արտադրական ուղղությունների տնտեսություններում զարգացում են ստանում արդյունաբերական բնույթի խոշոր այգիները: Այդ մասնագիտացված տնտեսություններում գյուղատնտեսական հողատեսքերի զբաղեցրած տարածքները կազմում են 250-300 հա, որից խաղողի և պտուղների տնկարկների տակ պետք է զբաղված լինեն 15-35%-ը:

Այս ենթագոտու հյուսիսային և արևելյան լանջերի դարավանդավորված հողերի վրա՝ հիմնականում դրանց ցածրադիր տեղամասերում, զարգացում են ստացել պտղաբուծությունը և խաղողագործությունը, որտեղ հողերը բավականաչափ հզոր են՝ խորը տարածվող հումուսակուտակման հորիզոններով:

3) ***Ալպյան լանդշաֆտներին համապատասխանող ջերմության միջինից ցածր ապահովվածության ենթագոտին*** բնութագրվում է չափավոր ցուրտ կլիմայով՝ կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Այս ենթագոտին, համեմատած նախորդի հետ, աչքի է ընկնում վեգետացիոն կարճատև փուլով, որն էլ կանխորոշում է վաղահաս և միջին հասունության մշակաբույսերի աճեցման անհրաժեշտությունը (միջին և վաղահաս հացահատիկներ, հատիկաընդեղեններ, վաղահաս կարտոֆիլ ու կաղամբ և կերային արմատապտուղներ): Գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքում գերակշռում են ամառային արոտավայրերը՝ փափուկ և հյութալի կերերով: Կերահանդակների մեզոֆիտ բնույթը, ինչպես նաև խոտածածկի խտությունը նույնիսկ թույլ են տալիս առանձին տեղամասերի ամբողջ տարածքն օգտագործել որպես խոտհարք:

Ալպյան լանդշաֆտների բուսածածկի խիստ բազմազանությունն էլ կանխորոշել է այս ենթագոտու գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացումը և արտադրական ուղղությունների ընտրությունը (մսակաթնատու և մսատու տավարաբուծություն, մսակաթնա-

բրդատու ոչխարաբուծություն, մասամբ էլ կաթնատու այծաբուծություն և ձիաբուծություն): Մանր եղջերավոր անասունների և տավարաբուծության զուգակցումը հնարավորություն է տալիս առավելագույնս օգտագործել ալպյան լանդշաֆտների դժվարամատչելի տեղամասերը, քանի որ վերին ալպյան բուսականությունը՝ «գորգերը», որ կազմված են շատ ցածրահասակ երկշաքիլավոր բուսախմբակացություններից, մատչելի է միայն մանր եղջերավոր անասունների համար: Այս ենթագոտում ըստ բացարձակ բարձրության 50 C-ի և 100 C-ի միագումար դրական ջերմաստիճաններից կախված պակասում է աճեցվող մշակաբույսերի լրակազմը: Ուստի ագրոարտադրական ռեսուրսների օգտագործումը բուսաբուծության ներճյուղային մասնագիտացման խորացման նպատակով պետք է խիստ տարբերակված լինի, քանի որ այստեղ հողածածկը շատ զգայուն է մարդածին ազդեցության նկատմամբ: Հողերի մշակման ավանդական գութանային շուռ տալու եղանակի կիրառումը հանգեցնում է հողային բերրիության անփոխարինելի կորուստների և հողերի էրոզիայի բարձրացման:

Հաշվի առնելով տեղանքի թեքության աստիճանը և աճեցվող մշակաբույսերի հողապաշտպան ունակությունները՝ անհրաժեշտ է խիստ տարբերակել հողի մշակման տեխնոլոգիան, որ բաժանվում է երեք խմբի՝ հողերը ողողումից լավ պահպանող բազմամյա խոտաբույսեր; հողերը ողողումից միջին մակարդակով պահպանող հասկավոր մշակաբույսեր ու միամյա խոտաբույսեր; թույլ հողապաշտպան ունակությունների տիրապետող հեռաշարացան մշակաբույսեր: Տարածքի ուրվագծալանդշաֆտային կազմակերպումը հնարավորություն է տալիս ինչ-որ չափով կարգավորել խոնավության կուտակումը և հողերի բերրիությունը, որն ունի կարևոր էկոլոգատնտեսական նշանակություն: Տարածքի այդպիսի կազմակերպման բարձր արդյունավետությունը և հողապաշտպան երկրագործությունն արդեն ստուգված է հանրապետության առանձին լանդշաֆտային գոտիներում:

4) ***Ջերմությամբ անբավարար ապահովված ենթագոտու բնական առանձնահատկությունները ձևավորվում են ցուրտ լեռնային կլիմայի փոխազդեցությամբ***: Զրոյից բարձր ջերմաստիճանների գումարը 1700-1200 է, հետևաբար երկրագործությունը գրեթե բացակայում է կամ էլ ներկայացված է առանձին օջախներով, քանի որ բացակայում են մշակաբույսերի վեգետացիայի համար անհրաժեշտ ջերմաստիճանները: Այստեղ ագրարային հատվածն առավելապես կողմնորոշվում է դեպի բնական կենսաբանական ռեսուրսները (մեղվաբուծություն, ջրլող թռչունների բազմացում և սնկերի ու վայրի դեղաբույսերի հավաքչություն), մասամբ էլ զարգացած են մարգային բանջարաբուծությունը և արածովի ոչխարաբուծությունը ու ձիաբուծությունը:

Ալպյան լանդշաֆտների տարածման բարձրադիր տեղամասերն արևոտ օրերի և ֆոտոսինթեզի ակտիվ ճառագայթների մեծ ինտենսիվության շնորհիվ աչքի են ընկնում մեղրատու և նեկտարով հարուստ բուսականության մեծ բազմազանությամբ, որոնք բարենպաստ պայմաններ են հայկական դեղին (լեռնային) մեղվաբուծության զարգացման համար:

Այսպիսով, ՀՀ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներն աչքի են ընկնում ագրոարտադրական ռեսուրսային ներուժի բազմազանությամբ, որոնք առայժմ օգտագործվում են անբավարար չափով: Մինչդեռ դրանցում կենտրոնացված են ագրարային հատվածի տարբեր ճյուղերի ու ենթաճյուղերի գործում գոտիական մասնագիտացման համար հսկայական ագրոարտադրական ռեսուրսային ներուժ: Դրանց առավելագույն արդյունավետ օգտագործումը պահանջում է ագրարային հատվածի կառավարման գիտականորեն հիմնավորված գոտիական համակարգի յուրացում և

տնտեսավարման ավանդական համակարգերի համակողմանի արմատավորում, որը ընդգրկում է բուսաբուծության և անասնաբուծության մեջ աշխատատար գործընթացների համալիր մեքենայացման խնդիրների լուծում, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցում, ինչպես նաև բերքահավաքի, պահեստավորման և տեղափոխության դեպքում կորուստների կրճատում: Լեռնային գոտու գյուղական տարածքների արդյունավետ յուրացումը և ագրարային հատվածի զարգացման համար դրանցում առկա հնարավորությունների խնայողաբար օգտագործումը թույլ է տալիս կանխատեսելի հեռանկարում կատարելագործել գյուղատնտեսական արտադրության գոտիական ու ճյուղային մասնագիտացումը, որը մեծ մասշտաբի ներդրում է համարվում այդ լանդշաֆտային գոտին բարձր արդյունավետության բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի գծով գոտիական մասնագիտացման տարածաշրջանի վերածելու և ՀՀ պարենային անվտագության ծրագրի կատարումն ապահովելու խնդիրների լուծման մեջ: Բացի դրանից, գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելով դեռևս չօգտագործվող ագրոարտադրական ռեսուրսներ ու պահուստներ,հնարավոր է նաև կարգավորել բնակչության արտագաղթի կանխարգելման գործընթացները և լքված ու սակավ բնակեցված գյուղական համայնքների և բնակավայրերի վերաբնակեցումը: Ըստ առաջնահերթության դրանց լուծումը նպաստելու է ոչ միայն ագրարային հատվածի, այլև գյուղական տարածքների համաչափ զարգացմանը:

ВЫСОТНЫЕ ЛАНДШАФТНЫЕ ПОЯСА КАК ФАКТОР ПОЯСНОЙ СПЕЦИАЛИЗАЦИИ СЕЛЬСКОХОЗАЙСТВЕННОГО ПРОИЗВОДСТВА РА

Манасян В .Г., к. г. н., доцент, АГЭУ

В статье на основе территориальной дифференциации производственых направлений аграрного сектора РА выявлен принцип сосредоточения производства конкретных видов сельскохозяйственной продукции в виде поясной специализации на высотных ландшафтных поясах с благоприятными агроклиматическими условиями. Картографическими методами проведено зонирование территории РА по производственным направлениям и рациональной технологической последовательности процесов прозводства сельскохозяйственной продукции. При этом сочетаются укрепление территориального единства интегрирующихся сельхозорганизаций независимо от их отраслевой принадлежности.

HIGEST LANDSCAPE ZONES AS A FACTOR OF ZONAL SPECIALIZATIONS OF AGRICULTURAL PRODUCTION OF RA.

MANASYAN V.G. **PhD, Associate Professor, ASUE**

In the article on the bases of territorial differentiation of productive directions of agrarian sector of RA, the principle of concentration of production of conerete types of zonal specialization on the highest landscape zones with the favorable climate conditions. By cartographic methods is done the zoning of the RA territory on productive directions and in rational technological order of the process of the production of agricultural products. Wherein the fortification of territorial unity integrating of agricultural organization nature independent of their.

ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ

ՄԻՏՈՒՇ ԹՈՐՈՍՅԱՆ , աշխ.գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՎԱՀԵ, լաբորանտ, ԵՊՀ

Յուրաքանչյուր երկրի աշխարհաքաղաքական իմիջի գլխավոր նախապայմաններից մեկը ժամանակակից տեխնոլոգիաների և սեփական էներգետիկ ներուժի վրա ստեղծված հուսալի էներգետիկ համակարգի կայուն զարգացումն է:

Միջին հաշվով մեր օրերում աշխարհում էներգիայի սպառման պահանջարկը տարեկան ավելանում է 5%: Հետևաբար վառելիքային ռեսուրսների նվազագույն՝ 2-3 % օգտագործման ավելացումը, օրգանական ծագման վառելիքի պաշարներն աշխարհում (բացառության քարածխի) սպառմանը կմոտենան 21-րդ դարի վերջին[1]: Այս վտանգը շատ երկրների համար նոր չէ: Սպառվող այդ վիճակը մեր հանրապետությունը կարող է շրջանցել, հենվելով 21-րդ դարի տեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի վրա: Դրա լավ օրինակ են այն երկրները (Բելգիա, Դանիա, Իսրայել և այլն), որոնք ՀՀ-ի նման աղքատ լինելով վառելիքաէներգետիկ ռեսուրսներով ունեն բարձր զարգացում և հստակ աշխարհաքաղաքական կողմնորոշում, մեծապես հենված են սեփական ճկուն էներգետիկ ռազմավարության վրա[2]: Հետևաբար կայուն զարգացման հավակնող երկրների էներգետիկայի տեսալականի հիմնական շեշտը պետք է ուղղել.

- սեփական էներգետիկ ներուժի բոլոր տեսակների ռացիոնալ օգտագործմանը,
- էներգիայի արտադրության (ավանդական և այլընտրանքային) ոլորտներում ժամանակակից էներգախնայող տեխնոլոգիաների ներդրմանը,
- ավանդական և էկոլոգիապես մաքուր այլընտրանքային էներգառեսուրսների համակցված օգտագործմանը,
- էլեկտրական էներգիայի ցանցային կորուստների նվազեցմանը, էներգիայի օգտագործման էֆեկտիվության բարձրացմանը,
- շրջակա միջավայրի վրա էներգահամակարգի էկոլոգիական վնասների նվազեցմանը,
- էներգահամակարգի տարածաշրջանային դերակատարման մեծացմանը:

Մինչև 20-րդ դարի 90-ական թվականների սկզբները Հայաստանը լինելով ԽՍՀՄ միասնական պլանային համակարգի բաղկացուցիչ մաս, այդ խնդիրներն անտեսվել էին և գլխավոր ուշադրությունը դարձվել էր էժան, տեխնիկապես հեշտ յուրացվող ջրաէներգետիկ պաշարների և ներկրվող վառելիքային ռեսուրսների հիման վրա, համեմատաբար հզոր էներգահամակարգի ստեղծմանը: Առանց ազգային ծրագրի, միութենական ընդհանուր շահերի թելադրանքով ստեղծված էներգետիկայի զարգացման աշխարհաքաղաքական բացերն ու սխալները երկար սպասել չտվին: Անկախության առաջին տարիներին ,ջրի երեսե դուրս եկավ, առաջին հայացքից բարձր զարգացած էներգետիկայի աշխարհաքաղաքական անմարտունակությունը, սկսվեց հանրապետության էներգետիկայի վայրէջքը, երկիրը ընկավ դժվարին կացության մեջ, սկսվեց տնտեսական և քաղաքական խորը ճգնաժամը:

---

[1] Թորոսյան Մ. ՀՀ էներգախնայողության և տեղական ներուժի օգտագործման խնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, 5, Գավառ 2001, էջ 106:

[2] Թորոսյան Մ., Վալեսյան Մ. Էներգետիկ ուսմունքի հիմնադրույթները որպես Հայաստանի տնտեսության կայուն զարգացման հիմք, Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 158:

Անկախության տարիներին էներգետիկ վիճակը բարելավվելու նպատակով համակարգում կատարվել է կառուցվածքային և տեխնիկական որոշ փոփոխություններ:

1. Վերակառուցվել է Հրազդա ՊՇԷԿ-ի 300 հազար Կվտ հզորության անավարտ շոգետուրբինային 5-րդ էներգաբլոկն՝ այն վերափոխելով 470 հազ. ԿՎտ հզորության համակցված շոգետուրբինային էներգաբլոկի:
2. Երևանի ՋԷԿ-ին կից, որպես առանձին էներգետիկ օբյեկտ, գործակցվել է 270 հազ, կՎտ հզորության համակցված նոր շոգեգազատուրբինային կայան:
3. Տեխնիկական փոփոխությունների է ենթարկվել Քանաքեռի Ջրէկ-ը,
4. Այլընտրանքային էներգառեսուրսներից օգտագործվել են փոքր գետերի էներգետիկ հնարավորությունները (2012 թ. Հանրապետությունում էներգիա են արտադրել 115 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմում է 158 Մվտ, նույն տարում կառուցման լիցենզիա են ստացել 88 ՓՀԿ,որոնց գումարային հզորությունը կազմում է մոտ 177 ՄՎՏ)[1]:
5. ՀՀ էներգահամակարգը «Ագարակ» 220 Կվ փոխանջատման կետի միջոցով կապվել է Իրանի Իսլամական Հանրապետության էներգահամակարգի հետ «Ահար – 1,2» 220 Կվ և կառուցվել 400 Կվ միջպետական գծերով: «Ալավերդի» 220 Կվ, «Լալվար» և «Նինոծմինդա» 110 ԿՎ օդային գծերով կապվել են Վրաստանի էներգահամակարգի հետ: 110 Կվ լարման 2 գծերով Հայաստանի էներգահամակարգը կապ է ստեղծել ԼՂՀ էներգահամակարգի հետ:

Չնայած վերջին տարիներին համակարգում կատարված աշխատանքներին առանց վերականգնվող ռեսուրսների լայնամասշտաբ օգտագործման բավարար չեն երկրի էներգետիկ անկախությունը ապահովելու համար: Կատարված տեխնիկական և որոշ կոսմետիկ փոփոխությունների հետ համակարգում մնում են չլուծված բազում խնդիրներ:

- Վառելիքաէներգետիկ հաշվեկշռում պահպանվում է ներկրվող ռեսուրսների գերակշիռ դերը, որի համակարգը հարմարեցված է ներկրվող ռեուրսներին,
- Արտադրված էլեկտրաէներգիայի ինքնարժեքի կախվածությունը ներկրվող և տարեց-տարի թանկացող վառելանյութից,
- Վառելիքային և ռադիոակտիվ Էներգակիրների ներկրման կախվածությունը հիմնականում մեկ երկրից,
- Խորհրդային տարիներին ստեղծված ջրաէներգետիկ համակարգի, մասնավորաբար՝ Սևանա լճից ջրթողի չլուծված էկոլոգիական խնդիրները:
- Օր օրի ավելացող փոքր ջրէկների, բնական միջավայրի և ջուրօգտագործող այլ սուբյեկտների հետ չլուծված խնդիրները:

Չնայած վերջին տարիներին կատարված դրական փոփոխություններին, աշխարհաքաղաքական առումով հանրապետությունն այսօր էլ չի ձերբազատվել էներգակիր մատակարար երկրներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կատարված աշխատանքները բավարար չեն էներգահամակարգի լիարժեք անկախացման համար:

Հայկական էներգահամակարգն արտաքին ռեսուրսների կախվածությունից նվազեցման հնարավորություն կարող են ընձեռնել այլընտրանքային, մասնավորաբար արեգակնային և քամու

[1] www.minergy.am էջ 452:

անսպառ ներուժի օգտագործումը[1], փոքր գետերի ջրաէներգետիկ ներուժի լիարժեք յուրացումը, դրանց զուգահեռ միաժամանակ ընդլայնել հանքաերկրաբանական նավթա-գազային նոր հետազոտությունների աշխարհագրությունը:

Վերականգնվող էներգաղբյուրներից ՀՀ-ի համար առաջնային և լուրջ նշանակություն ունեն ջրաէներգետիկ ռեսուրսները: Ջրային էներգառեսուրսների գումարային տեսական ներուժը գնահատվել է 21,8 մլրդ կՎտ ժ, որից 18,6 կՎտ ժ խոշոր և մնացած 3,2 մլրդ կՎտ ժ՝ փոքր գետերի համար[2]: Տեխնիկապես մատչելի պոտենցիալը կազմում է 7,5-8 մլրդ կՎտ ժ, իսկ տնտեսապես հիմնավորված ջրաէներգետիկ ներուժը կազմում է մոտ 3,6 մլրդ կՎտ ժ, որից 1,5 մլրդ կՎտժ արդեն յուրացված է, մնացած մասի յուրացումն ակնկալվում է իրականացնել առաջիկա 15-20 տարիների ընթացքում: Փոքր ՋրԷԿ-երի տնտեսապես հիմնավորված ներուժը կազմում է 800-850 մլն կՎտ, որից 200-220 մլն. կՎտԺ արդեն արտադրվում է առկա 144 փոքր ՋրԷԿ-երում: Ջրաէներգետիկ ռեսուրսների հետագա օգտագործումը Մեղրիի, Շնողի և Լոռի բերդի ՀրԷԿ-ների շինարարությունում սահմանափակվում է:

Հանրապետության տարածքում հանքաերկրաբանական ուսումնասիրությունները մինչև այսօր արդյունաբերական նշանակության վառելիքային ռեսուրսներ չեն հայտնաբերվել, եթե նկատի չունենանք ուրանի պաշարների ուսումնասիրությունների գործընթացը:

Բնական վառելիքային պաշարների բացակայության պայմաններում ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության 58,4 % բաժին է ընկնում ներկրվող էներգակիրներին և միայն 41,6 % տեղական ռեսուրսներին, որից հողմաէներգետիկայի բաժինը կազմում է ընդամենը 1,63 %: Աղյուսակ 1-ում պատկերված է էներգահամակարգի տեղակայված հզորությունները և էլեկտրաէներգիայի արտադրանքը:

Աղյուսակ 1

Էներգահամակարգի տեղակայված հզորությունները և էլեկտրաէներգիայի արտադրանքը

Էլեկտրական արտադրող կայան	Տեղական հզորության հազ.կվտ				Արտադրություն մլն կվժ				Արտադրության ընդհանուր տոկոսը %			
	2010	2013	2015	2020	2010	2013	2015	2020	2010	2013	2015	2020
ԱԷԿ	407,5	407,5	407,5	1000	2.400	2.400	2.400	5.600	41.3	38.8	36.7	57.3
ՋԷԿ-եր (պիկ բեռ)	2.082	2.082	2.082	2.082	1.059	1.210	1.362	0	18.3	19.7	20.9	0.0
Մեծ հիդրո	960	960	960	1100	2,020	2,020	2,020	2,700	34,9	32,8	31,0	27,3
Փոքր հիդրո	103	153	179	217	308	440	500	610	53,4	7,16	7,78	6.30
Հողմաէներգետիկա	2,6	43,6	102	302	4,6	100	236	700	0,08	1,63	3,62	7,14
Երկրաջերմային	0	0	0	25	-	-	-	185	0,00	0.00	0,00	1,90
Արեգակնային (ՖՎ)	0,1	0,4	0,6	1,1	0,16	0,65	0,98	1,80	0	0,01	0,02	0,02
Ընդհանուր վերականգնվող, ներառյալ մեծ ՀԷԿ-եր	1,066	1,157	1,242	1645	2,333	2,561	2,757	4,197	40,03	41,5	42,3	42,8
Ընդամենը	3,555	3,646	3,731	4727	5,792	6,171	6,519	9,797	100	100	100	100

[1] Թորոսյան Մ. ՀՀ էներգախնայողության և տեղական ներուժի օգտագործման խնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, 5, Գավառ 2001, էջ 107 :

[2] www.minergy.am էջ 448:

Անհրաժեշտ է փաստել, որ ջրաէներգետիկ ռեսուրսների օգտագործման 1317 Կվտ հզորությամբ էլեկտրական էներգիայի արտադրության հետագա ավելացման հնարավորությունները 2020 թ. սպառվում են:

Վերականգնվող էներգառեսուրսներից օգտագործման լայն հնարավորություն հանրապետությունում պահպանում է քամու ներուժը:

Աղյուսակ 2

Քամու արագությունը Հայաստանում

Ամիսներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Միջին տարեկան արագությունը ըստ բարձրության մ/վրկ	
													5 մ	10 մ
Միջին արագությունը մ/վրկ	8,5	9,0	8,3	7,3	6,3	7,4	8,6	8,4	6,9	6,1	7,3	7,9	6,9	7,7

Դիտարկումները ցույց են տվել, որ Հայաստանում 5 մ բարձրության վրա քամիների միջին տարեկան արագությունը 6,9 մ/վրկ է. 10 մ բարձրություններում այն հասնում է 7,7 մ/վրկ, ավելի բարձր է ձմռան ամիսներին 7,9-9 մ/վրկ: Քամու արագությունը բացի օդի ճնշման տարբերությունից, լեռնային շրջաններում կախված է նաև տեղական պայմաններից, մասնավորապես ռելիեֆի և տեղանքի ծածկվածությունից: Քամու արագությունը հարթավայրերի համեմատությամբ ըստ բարձրության 0,02 մ/վրկ ավելի արագ է աճում: Այդ հանգամանքը նկատի առնելով, հանրապետության տարածքում հողմակայանքի վայրն ընտրելու համար, բացի օդերևութաբանական կայանների տվյալներից, հարկավոր է տվյալ տեղանքի բարձրության և մակերևույթի ուսումնասիրություն:

Հայաստանի տարածքում Ա.Բաղդասարյանը ,հողմաէներգետիկայի տեսակետիցե առանձնացրել է 3 զոնա[1]: Մեր կարծիքով այդ առանձնացումն ըստ էության քամու ներուժի վերընթաց գոտիներն են: Գոտիներից առաջինը ներառում է 400-ից մինչև 1300 մ բարձրությունները: Այստեղ տիրապետող են լեռնահովտային քամիները, օրական և սեզոնային արագությունների լավ արտահայտված տատանումներով:

Երկրորդ գոտին ընդգրկում է 1300-3000 մ բարձրությունները: Քամիների միջին տարեկան արագությունն այստեղ 7,7 մ/վրկ է, որը ժամանակակից հողմակայանների աշխատանքային արագությունը գերազանցում է 2,2-4 անգամ: Գոտու սահմաններում հատկապես Սիսիանի, Որոտանի, Պուշկինի, Սևանի լեռնանցքներում, քամու միջին տարեկան արագությունը 17-25 մ/վրկ է, հողմակայանքների աշխատանքային արագությունը գերազանցում է 5 անգամ:

Լեռնանքներից զատ հողմաէներգետիկայի աշխատանքային պարամետրերին լիարժեք բավարորում է Սևանի ավազանը (Սևանի թերակղզի, Գավառագետի վերին ավազան, վարդենիս), ինչպես նաև Արագածի, Եռաթմբի բարձրադիր շրջանները, որտեղ քամու արագությունը հասնում է

[1] Багдасарян А. Ветры Армении и возможности их энергетического использования. Известия АН Арм ССР, 11 N 4, 1958, серия геолог. и географич. наук. ст. 60.

20-25 մ/վրկ-ի:

Երրորդ գոտին տարածվում է 3000-4000 բարձրությունների սահմաններում: Ըստ Խ.Պողոսյանի և Գ.Զուբյանի հաշվարկների քամու նվազագույն արագությունը կազմում է ամռան ամիսներին՝ 22-25 մ/վրկ, իսկ ձմռանը հասնում է 40-52 մ/վրկ: Այդ արագությունները նպատակահարմար են հզոր կայանների կառուցման համար:

Այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների օգտագործմանը զուգընթաց առաջնակարգ խնդիր է գործող էներգահամակարգի արդյունավետության բարձրացումը: Հանրապետության էներգահամակարգի արդյունավետության բարձրացման հնարավորություն կա բոլոր օղակներում, մասնավորապես.

1. Մոդիֆիկացնել 40-50 տարի առաջ տեղակայված, ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները (մաշվածության պատճառով ջերմաէլեկտրակայաններում 1 կՎտ ժ էներգիայի արտադրության համար 15 -20 % ավելի վառելանյութ է ծախսվում)
2. Հանրապետության բնակլիմայական պայմաններում էներգահամակարգի կորուստները, հաշված բարձրավոլտ և բաշխիչ ցանցերի մաշվածությունը, չպետք է գերազանցեն 10-11% (իրականում այն կրկնակի բարձր է)[1]:

Հայաստանում քամու էներգիայի օգտագործումն ունի ավելի մեծ հեռանկար և Հայաստանն ունի հողմաէներգետիկայի բավականին զգալի պաշարներ, որի ներուժը զիջում է միայն արեգակնայինին, որոնց տնտեսապես հիմնավորված պոտենցիալը գնահատվում է մոտ 1,26 մլրդ Կվտժ:

ԱՄՆ-ի գիտնականների հաշվարկով ջերմաէներգետիկայի համեմատությամբ հողմաէներգետիկան զգալի առավելություն ունի թե շրջակա միջավայրի պահպանության, թե արտադրանքի ինքնարժեքի տեսակետից: 6,7 մ/վրկ տարեկան միջին արագության քամու պայմաններում, հողմաէլեկտրակայանի արտադրած 1 կվտ/ժ արժեքը չի անցնի 2 ցենտից, այդ պատճառով հանրապետության էլեկտրաէներգետիկայի զարգացման հեռանկարում ավելի մեծ տեղ պետք է հատկացնել էկոլոգիապես մաքուր և միաժամանակ անսպառ հողմաէներգետիկ ռեսուրսների օգտագործմանը:

ՀՀ տարածքի քամիների ներուժի օգտագործման հնարավորությունները ուսումնասիրվել են տարբեր օտարերկրյա մասնագետների կողմից, այսպես, օրինակ 1999 թվականին Նիդերլանդների կառավարությունը Հայաստանին հատկացրել է դրամաշնորհ քամու էներգիայի մոնիթորինգ իրականացնելու համար: Տեղակայվել է հինգ կայան՝ Պուշկինի, Վարդենյաց, Քարախաչի լեռնանցքներում, Արդանիշ ավանում: Աշխատանքների կատարման արդյունքում կուտակվել են հողմաէներգետիկական ներուժն վերաբերյալ մեծածավալ տվյալներ, պատրաստվել է բիզնես առաջարկություն 20 Մվտ հզորության հողմաէլեկտրակայան կառուցելու համար:

2005 թվականի դեկտեմբերին Պուշկինի լեռնանցքում շահագործման հանձնվեց Հայաստանում, ինչպես նաև Կովկասում առաջին հողմաէլեկտրակայանը 2,6 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Այստեղ նախատեսվում է կառուցել մինչև 20 Մվտ ընդհանուր հզորությամբ հողմաէլեկտրակայան:

Հայաստանի հողմաէներգետիկ ներուժն ուսումնասիրելու և էներգետիկ ոլորտի այս ճյուղը

[1] Թորոսյան Մ. ՀՀ էներգախնայողության և տեղական ներուժի օգտագործման խնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, 5, Գավառ 2001, էջ 110:

զարգացնելու քայլերը սկսվեցին դեռ տարիներ առաջ:

Հայաստանում հողմաէներգետիկան զարգացնելու նպատակով ստեղծվել են օրենսդրական ու տնտեսական հատուկ դաշտ, որպեսզի ոլորտը գրավիչ լինի նաև մասնավոր ներդրողների համար: Միաժամանակ, արտադրվող էներգիան առանց մրցակցության պարտադիր պետք է ներառեն բաշխիչ ցանցերը:

ВЕТРОЭНЕРГЕТИКА КАК ГЕОПОЛИТИЧЕСКИЙ ФАКТОР

Торосян М., к.г. н., доцент, ЕГУ
Андреасян В., лаборант, ЕГУ

В статье рассмотрены геополитические последствия созданной в советское время без национальной программы и неэффективной на сегодняшний день армянской ветроэнергетики. Акцент сделан на использование собственных альтернативных энергоресурсов, в частности, на развитие неиссякаемой ветроэнергетики. Широкое использование ветроэнергетики будет способствовать независимости энергосистемы и одновременно поднимет геополитический имидж республики.

THE WIND ENERGY AS A GEOPOLITICAL POTENTIAL

M.TOROSYAN, Doctor of Geographical sciences, YSU
V.ANDREASYAN, laboratory assistant, YSU

In the article have been discussed the national program of the geopolitical consequences and remediation tasks of Armenian energetic system with its less effectiveness created by Soviet Union. We have emphasized the alternative resources, particularly have studied the endless wind-power development. The wide-scale usage of wind energy at the same time will promote and improve the independence of the geopolitical image of Armenia.

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ

Տիպաբանությունը գիտակարգ է, որն ընդհանրացված, իդեալական մոդելի կամ տիպի օգնությամբ ուսումնասիրում է օբյեկտների համակարգի մասնատումը, խմբավորումը և դասակարգումը: Տիպաբանությունը համեմատական ուսումնասիրության է ենթարկում համաժամանակյա և տարժամանակյա օբյեկտների էական հատկանիշները, կապերը, գործառությունները, հարաբերությունները: Այն հենվում է ուսումնասիրվող առարկաների նմանության և տարբերության բացահայտման, այդ առարկաների նույնացման հուսալի միջոցների որոնման վրա: Հասարակական աշխարհագրության մեջ տիպաբանությունն ուսումնասիրվող օբյեկտների դասակարգում է ըստ որակական հատկանիշների ամբողջության [1, էջ 60]:

Գոյություն ունեն քաղաքակրթությունների տիպաբանական տարբեր դասակարգումներ:

Քաղաքակրթությունների տիպաբանությունը հենվում է տարբեր չափանիշների ու պարամետրերի վրա: Մասնագետները քաղաքակրթություններն առանձնացնում են ***ըստ բնական միջավայրի տարրերի*** կամ ***աշխարհագրական-տարածական ընդգրկման*** (գետային, ծովային և օվկիանոսային, արևելյան և արևմտյան, լոկալ, ռեգիոնալ և գլոբալ քաղաքակրթություններ), ***ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի*** (մինչինդուստրիալ, ինդուստրիալ և հետինդուստրիալ տիպի քաղաքակրթություններ), ***ըստ տարածաժամանակային դրսևորման առումով՝ հին*** (անհետացած) և *նոր* (գոյություն ունեցող) ***քաղաքակրթությունների***:

Գետային, ծովային և օվկիանոսային քաղաքակրթությունները երեք փուլերով (գետային, ծովային, օվկիանոսային) պատմական մեծ գետերի՝ Նեղոսի, Տիգրիսի և Եփրատի, Ինդոսի և Գանգեսի, Խուանխեի և Յանցզիի հովիտներում, Միջերկրական ծովի, Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսների ափերին առաջացած քաղաքակրթություններն են [3, էջ 89]:

Մասնագետներն առանձնացնում են արևելյան և արևմտյան քաղաքակրթություններ: Դրանցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է տարբեր քաղաքակրթություն: Այսպես՝ արևելյանն ընդգրկում է չինական, հնդկական, ճապոնական, արևելաքրիստոնեական կամ ուղղափառ, մահմեդական քաղաքակրթությունները, որոնք միմյանցից տարբերվում են մշակույթների մեծ բազմազանությամբ, ազգային, կրոնական և այլ առանձնահատկություններով: Քրիստոնեական քաղաքակրթությունը բաժանվում է արևմտաքրիստոնեական կամ արևմտյան (արևմտաեվրոպական, հյուսիսամերիկյան, ավստրալա-նորզելանդական, լատինամերիկյան) և արևելաքրիստոնեական կամ ուղղափառ ենթաքաղաքակրթությունների (ենթամշակույթների): Քրիստոնեական քաղաքակրթության բաղկացուցիչ մաս է կազմում Հայաստանը: Հայկական լեռնաշխարհն իրավամբ համարվում է քաղաքակրթությունների ծագման օջախ, շփման, մերձեցման մի տարածք, որտեղ հայ ժողովուրդը ստեղծել է հոգևոր և նյութական մշակույթի վիթխարի արժեքներ:

Աշխարհագրական ընդգրկմամբ ամենափոքր տարածք զբաղեցնում են լոկալ (կամ ռեգիոնալ), իսկ ամենաընդարձակ՝ համաշխարհային կամ գլոբալ քաղաքակրթությունները: Լոկալ քաղաքակրթությունները եղել են ինչպես անցյալում, որոնք անհետացել են (օրինակ՝ Կրետեի, եգիպտական ևն), այնպես էլ կան ներկայումս (օրինակ՝ ճապոնական, հնդկական ևն): “Համաշխարհային կամ գլոբալ քաղաքակրթություն” հասկացությունը պայմանական է և ընդգրկում է համեմատաբար ընդարձակ տարածք՝ սովորաբար 2-3 աշխարհամաս: Օրինակ՝ քրիստոնեական քաղաքակրթությունն ընդգրկում է համարյա ամբողջ Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան (ԱՄՆ, Կանադա), Լատինական Ամերիկան, Ավստրալիան և Նոր Զելանդիան: “Ռեգիոնալ քաղաքակրթություն” հասկացությունը տարածաշրջանային ընդգրկում ունի: Օրինակ՝ մահմեդական քաղաքակրթությունը, որի տարածման շրջաններն են Հյուսիսային Աֆրիկան, Կենտրոնական, Հարավարևմտյան, Հարավային և Հարավարևելյան Ասիան:

Ամեն մի քաղաքակրթություն առանձնանում է իր անկրկնելի յուրահատկությամբ և միայն իրեն հատուկ ներքին կառուցվածքով: Այն կարող է ընդգրկել բազմաթիվ պետություններ (օրինակ՝ արևմտաեվրոպական) կամ միայն մեկ պետություն (օրինակ՝ Ճապոնիան): Սովորաբար “քաղաքակրթություն” հասկացությունն օգտագործվում է երեք իմաստով՝ համաշխարհային (գլոբալ), տարածաշրջանային (ռեգիոնալ) և տեղական (լոկալ):

Համաշխարհային քաղաքակրթությունը նաև մարդկության պատմության փուլ է, որը բնութագրվում է մարդու որոշակի մակարդակի պահանջմունքներով, ընդունակություններով, գիտելիքներով, հմտություններով և հետաքրքրությամբ, արտադրության տեխնոլոգիական և տնտեսական եղանակով, քաղաքական և հասարակական կարգով, հոգևոր զարգացման մակարդակով:

Համաշխարհային քաղաքակրթությունը բազմադարյան պատմության ցիկլ է, իսկ քաղաքակրթություն-ների հերթափոխությունն արտահայտում է պատմական գործընթացի առաջընթաց շարժումը, մարդկության ինքնազարգացումը:

Քաղաքակրթությունն աշխարհագրական և սոցիալական գործոնների էվոլյուցիոն զարգացում է, մարդկանց կենսագործունեության տիպերի հերթափոխություն, նրանց գոյության եղանակները: Ռուս հայտնի գիտնական Յու.Վ. Յակովեցն իր "Քաղաքակրթությունների պատմություն" աշխատության մեջ առաջարկել է պատմական գործընթացի իր սխեման՝ համաշխարհային քաղաքակրթությունների հերթափոխություն առանձնացնելով յոթ դարաշրջաններ՝ սկսելով նոր քարեդարից (նեոլիթից) [5, էջ 130]:

Քաղաքակրթությունները միմյանցից տարբերվում են սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, համաձայն որի բաժանվում են մինչինդուստրիալ, ինդուստրիալ և հետինդուստրիալ տիպերի: Մինչինդուստրիալ են աֆրիկյան, հիմնականում, մահմեդական քաղաքակրթությունները: Արևմտյան, Հյուսիսային, Հարավային Եվրոպայի երկրների մեծ մասը, ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան թևակոխել են զարգացման հետինդուստրիալ փուլ:

Արևմուտքն իրավամբ շարունակում է մնալ համաշխարհային արդիականացման առաջնորդը: Այն արդեն թևակոխել է զարգացման հետինդուստրիալ փուլ: Այդուհանդերձ, արևմտյան տիպի հասարակության մեջ կուտակվում են լուրջ հիմնախնդիրներ. բնապահպանական, պահանջարկի գերաճ, զանգվածային մշակույթի շրջանակներում կյանքի աճող գռեհկացում:

Արևմտյան հասարակության մեջ քաղաքակրթական գործոնի վրա ընկնում է մեծ ծանրաբեռնվածություն, քանի որ արդիականացումից ետ մնացած երկրներում շատ բան կախված է նրանից, թե որքանով ավանդական քաղաքակրթություններն ու մշակույթներն ի վիճակի են համեմատաբար պատմական կարճ ժամանակաշրջանում ընտելանան փոփոխություններին և իրենց համար վերցնեն ժամանակակից արժեքները:

Այստեղ մենք տեսնում ենք ոչ միատեսակ արդյունքներ: Առավել հաջող է տեղի ունենում Հեռավորարևելյան տարածաշրջանի արդիականացման գործընթացը՝ միավորելով ընդհանուր քաղաքակրթական գծեր: Այժմ արդեն համընդհանուր ճանաչում է գտել, որ "տնտեսական հրաշքը" սկզբում Ճապոնիայում, ապա Կորեայի Հանրապետությունում, այսօր արդեն Չինաստանում և սահմանակից այլ հասարակություններում կապված է այդ հասարակություններում սինտոյա-բուդդայա-կոնֆուցիական արժեքների հետ:

Համաշխարհային (գլոբալ) քաղաքակրթությունն իրենից ներկայացնում է փոխազդող, բավական բազմատեսակ լոկալ (ռեգիոնալ) քաղաքակրթությունների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է պատմամշակութային, էթնիկական, կրոնական, սոցիալ-տնտեսա-աշխարհագրական և առանձին երկրների ճակատագրով իրար հետ կապված երկրների խմբերի, էթնոսների այլ առանձնահատկություններ:

XIX դարի վերջին մշակութաբանության մեջ ձևավորվեց մի տեսություն, որը հայտնի է լոկալ քաղաքակրթությունների ցիկլային տեսություն անունով: Նրա հիմնադիրը գերմ. փիլիսոփա Օ. Շպենգլերն է [4, էջ 126]: Շատերն են ծանոթ նրա "քաղաքակրթություն" և "մշակույթ" հասկացությունների մեկնաբանմանը, համաձայն որի, "քաղաքակրթությունը ցանկացած մշակույթի ավարտական փուլն է": Ըստ Շպենգլերի, բոլոր մշակույթներն անցնում են ծագման, պատանեկության, հասունության և ծերության փուլեր: Յուրաքանչյուր մշակույթի "կյանքի ցիկլն" անցնում է երեք փուլ՝ միջմշակութային, բուն մշակութային և քաղաքակրթական [6]:

Աշխարհագետները լոկալ քաղաքակրթությունները դիտարկում են որպես տարածական

(աշխարհատարածական) կազմավորում, որպես որոշակի ներքին կազմակերպվածությամբ առանձնացող բարդ համակարգեր: Այդ հետազոտությունների հիմքի վրա ժամանակակից աշխարհագրության մեջ առաջատարը տարածաժամանակային վերլուծությունն է, որի կենտրոնում մարդն է, քանզի քաղաքակրթությունը միացնում է տարածությունը և ժամանակը:

Համաշխարհային քաղաքակրթությունը ժամանակի և տարածության մեջ միավորում է ամբողջ երկրագունդը, այն ունի որոշակի և դինամիկ տարածական կառուցվածք:Լոկալ քաղաքակրթությունները նույնպես տարածականորեն կազմակերպված են, բայց արդեն աշխարհի խոշոր տարածաշրջանների, երկրների խմբերի և առանձին պետությունների սահմաններում:

Գրականության մեջ հիշատակվում են նաև քաղաքակրթությունների այլ անվանումներ: Ս.Զավադսկին և Լ.Նովիկովան "Արվեստը և քաղաքակրթությունը" գրքում [2, էջ 63] ժամանակին առանձնացրել են համաշխարհային քաղաքակրթության զարգացման ագրարա-ավանդական, կապիտալիստական, կոմունիստական փուլի քաղաքակրթություններ, ըստ էության կատարելով քաղաքակրթության փուլային պատմական տիպաբանություն:

ТИПОЛОГИЧЕСКИЕ И ГЕОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЦИВИЛИЗАЦИЙ

Мурадян Ю., к.г.н., профессор, АГПУ

Исходя из типологических особенностей цивилизации обособляются: а) по географическим признакам (речная, морская и океаническая, восточная и западная, локальная, региональная и глобальная), б) по уровню социально-экономического развития (доиндустриальная, индустриальная и постиндустриальная), в) по времени проявления (исчезнувшие и современные цивилизации). Даны типологические и географические особенности отдельных цивилизаций.

TYPOLOGICAL AND GEOGRAPHICAL FEATURES OF CIVILIZATIONS

Muradyan Y., PhD, Professor, ASPU

Proceeding from typological characteristics is distinguished according to: a) geographical features (fluvial, naval and oceanic, eastern and western, local, regional and global), b) level of social- economic development (pre-industrial, industrial and postindustrial), c) time display (disappeared and modern civilizations). It is given typological and geographical features of separate civilizations.

Գրականություն

1. Մուրադյան Յուրիկ, Քաղաքակրթությունների աշխարհագրություն: Դասագիրք բուհերի աշխարհագր. մասնագիտ. համար: Գիտ. խմբ.՝ Արամ Ավագյան, Եր., Տիգրան Մեծ, 2011, 476 էջ:
2. Завадский С. А., Новикова Л.И. Искусство и цивилизация. – М.: Искусство, 1986, -227 с.
3. Мечников Л. И. Цивилизация и великие исторические реки. Пер. с франц., - М.: Голос труда, 1924, - 248 с.
4. Шпенглер О. Закат Европы. Очерки морфологии мировой истории, - М., 1993.
5. Яковец Ю. В. История цивилизаций. -М., 1997.
6. http://talinci.livejournal.com

ԲԱԺԻՆ II
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ , ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ԱԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, աշխ.գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Վարչատարածքային բաժանման միջոցով ապահովվում է երկրի պետական իշխանության և տեղական մարմինների տարածական բաշխումը և արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը: Դրանց սահմաններում տեղի է ունենում սոցիալ-տնտեսական և մշակութային շինարարության կոորդինացում ու կառավարման միավորում: Գիտականորեն հիմնավորված վարչատարածքային բաժանումը նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացին և արդյունավետ տարածաշրջանային քաղաքականություն իրականացնելու նախապայմանն է [5]: Տարածքի վարչական կարգավիճակը և դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական, կազմակերպական և կառավարման առումով կապերը բավականին կայուն են և զգալի դեր ունեն տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներում:

Երկրի վարչատարածքային բաժանումը և տարաբնակեցումն ունեն սերտ առնչություններ և փոխազդեցության մեջ են: Հասարակության տարածքային կազմակերպման այլ բաղադրիչների հետ համեմատած սրանք ավելի իներցիոն են՝ դանդաղ են ենթարկվում փոփոխությունների: Վարչական միավորների սահմանները, դրանցում կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծումը և վերջիններիս լիազորությունների հստակեցումը նշանակալից ազդեցություն է թողնում ինչպես ամբողջ տարաբնակեցման, այնպես էլ առանձին բնակավայրերի վրա: Վարչական տարբեր ենթակարգության կենտրոնների միջև ձևավորվում են կառավարման, տնտեսաարտադրական և մշակութային բնույթի և բնակչության սպասարկման գծով բազմաբնույթ կապեր: Վարչական կենտրոնների առանձնացումը, դրանցում համապատասխան պարտադիր օբյեկտների և ծառայությունների կենտրոնացումը, շրջակա (ենթակա) տարածքի հետ վարչական և սոցիալ-տնտեսական բնույթի կապերի հաստատումը տարաբնակեցման մեջ համակարգաստեղծ որոշակի դեր են խաղում: Ժամանակին ՀԽՍՀ քաղաքային և գյուղական խորհուրդների մի մասը ենթակա բնակավայրերի նկատմամբ իրականացնում էին տեղական կենտրոնների գործառույթներ:

Տասնյակ տարիներ լինելով ՀՀ-ի վարչատարածքային հիմնական միավորներ գյուղական շրջանները վարչական սահմանների շնորհիվ ստեղծել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների միասնական ցանց, մշակութային և սոցիալ-կենցաղային ծառայությունների ընդհանրություն: Նախկին շրջկենտրոնների մեծագույն մասը, ունենալով շրջանների սահմանների նկատմամբ կենտրոնական և տրանսպորտաաշխարհագրական բարենպաստ դիրք, ժամանակի ընթացքում ստեղծել են սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բավարար ներուժ, իսկ ենթակա բնակավայրերի հետ՝ համակարգաստեղծ կապեր: Դրանց շնորհիվ նախկին վարչական շրջանների սահմաններում ձևավորվել էին շրջանային տարաբնակեցման համակարգեր, որտեղ վարչական կապերից բացի համակարգաստեղծ դեր են ունեցել նաև արտադրական, աշխատանքային և սպասարկման գծով կապերը [1]: Ընդ որում, նախկին վարչական միավորների սահմաններում

ձևավորված տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներն իներցիոն ուժով շարունակվում են նաև ժամանակակից վարչատարածքային բաժանման պայմաններում:

Որպես օրինաչափություն լեռնային և կտրտված մակերևույթ ունեցող երկրներում վարչա-տարածքային բաժանման համակարգն առավել կարևոր դեր ունի գյուղական տարաբնակեցման կատարելագործման ու վերափոխման և առանձին գյուղական բնակավայրերի զարգացման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ ներկայիս վարչատարածքային բաժանման սխեման մշակելիս հաշվի չեն առնվել երկու կարևորագույն հանգամանք.

- անցումային ժամանակաշրջանում նոր վարչատարածքային բաժանումը պետք է իրականացվեր ոչ թե վարչական միավորների խոշորացման, այլ համեմատաբար փոքր միավորների ստեղծման ճանապարհով,
- նոր վարչատարածքային բաժանման սխեմայում անտեսվել է տնտեսական հատկանիշը: Հաշվի չեն առնվել առանձնացված վարչական միավորների տարածքի բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչության տարաբնակեցման առանձնահատկությունները, տնտեսության բնույթն ու զարգացման մակարդակը, հաղորդակցության ճանապարհների ուղղությունն ու խտությունը և այլ գործոններ:

Եթե Արարատի և Արմավիրի մարզերում համեմատաբար հարթավայրային ռելիեֆը, արտադ-րական ու սոցիալական ենթակառուցվածքների քիչ թե շատ զարգացած լինելը և մայրաքաղաք Երևանի մոտիկությունն ինչ որ չափով նպաստում են գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին և վարչատարածքային կառուցվածքը, մեղմ ասած, չի խոչընդոտում գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա նույնը չի կարելի ասել Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համար: Արարատի և Արմավիրի մարզերն ընդգրկում են վարչական նախկին երեքական միավոր և տարածքի մեծությամբ հանրապետությունում ամենափոքրերից են (Արարատի մարզը 7 քկմ-ով մեծ է Կոտայքից), իսկ ահա Շիրակի, Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերն ընդգրկում են վարչական նախկին 4-5 տարածաշրջան, որոնք առանձնանում են ռելիեֆի, կլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի և սոցիալ-տնտեսական զարգացման յուրահատուկ գծերով: Եթե Արարատի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերն իրենց մարզկենտրոններից ունեն առավելագույնը մեկժամյա տրանսպորտային մատչելիություն և անհրաժեշտության դեպքում օգտվում են մայրաքաղաքի տարաբնույթ ծառայություններից, ապա նույնը չի կարելի ասել Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի հարյուրավոր գյուղական բնակավայրերի համար: Այսպես, Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանների գյուղական բնակավայրերն առանձնանում են իրենց ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններով, սահմանային աշխարհագրական դիրքով, տնտեսության մասնագիտացման և զարգացման ցածր մակարդակով, փոքր մարդաշատությամբ և տարաբնակեցման ոչ բարենպաստ այլ հատկանիշներով: Այս տարածաշրջաններն ընկած են Աշոցքի բարձրադիր սարահարթում և Շիրակի լեռնաշղթայով բաժանված են Շիրակի դաշտից: Տարվա, հատկապես, ձմեռային ժամանակահատվածում (որն այստեղ երբեմն տևում է 5-6 ամիս) այդ տարածաշրջանների շատ գյուղական բնակավայրեր մեծ դժ-վարություններ են ունենում մարզկենտրոն Գյումրու հետ տրանսպորտային կապ հաստատելու համար: Այս հանգամանքը և սոցիալ-տնտեսական մի շարք այլ հիմնախնդիրներ էապես խոչընդոտում են այդ տարածաշրջանների և մասնավորապես գյուղական բնակավայրերի զարգացմանը: Գտնում ենք, որ նշված խնդրի լուծման ճանապարհին էական դեր կունենա նաև այս տարածաշրջանների առանձ-նացումը Շիրակի մարզից և նոր վարչական միավորի՝ Աշոցքի մարզի ստեղծումը Ամասիա կենտրոնով: Դրա շնորհիվ Ամասիա գյուղը տարածաշրջանի գյուղական բնակավայրերի համար կդառնա տեղական կենտրոն, ձեռք կբերի տնտեսական, վարչական, մշակութային և սպասարկման բազմազան

գործառույթներ և կնպաստի մնացած գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Վարչատարածքային նման վերակազմման կարիք ունեն նաև հատկապես Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը ևս, որոնք նույնպես առանձնանում են սահմանամերձ աշխարհագրական դիրքով, մակերևույթի խիստ կտրտվածությամբ և բարձրադիր դիրքով, գյուղական բնակավայրերի տեղագրական առանձնահատկություններով և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներով:

Համամիտ ենք պրոֆեսոր Ս.Մելքումյանի այն կարծիքին, որ ներկայումս ՀՀ-ում առավել հրատապ և հիմնավորված են վարչատարածքային վերակազմման հետևյալ փոփոխությունները [3,4].

- Սյունիքի մարզում Կապանի և Մեղրու տարածաշրջաններով ստեղծել նոր մարզ, իսկ Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններով առանձին մարզ,
- Լոռու մարզից առանձնացնել Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանները և ստեղծել նոր մարզ, իսկ Լոռու մարզի Թումանյանի և Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանները միավորել մեկ նոր վարչատարածքային միավորի սահմաններում,
- Կրասնոսելսկի տարածաշրջանը, որը տրանսպորտային մատչելիության առումով ավելի հարմար դիրք ունի Իջևանի հետ, միացնել Տավուշի մարզին,
- Գեղարքունիքի մարզից առանձնացնել Մարտունու և Վարդենիս տարածաշրջանները և ստեղծել նոր մարզ,
- Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններով ստեղծել նոր՝ Աշոցքի մարզ, Ամասիա մարզկենտրոնով:

Գտնում ենք, որ վարչատարածքային այդպիսի վերակազմումների շնորհիվ նշված մարզերի մեջ ընդգրկված, հատկապես, Մեղրու, Սիսիանի, Տաշիրի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Նոյեմբերյանի և Տավուշի տարածաշրջանների սահմանամերձ և լեռնային տասնյակ գյուղական բնակավայրեր ձեռք կբերեն սոցիալ-տնտեսական զարգացման առավել նպաստավոր պայմաններ, կնվազի բնակչության միգրացիան այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերից, առավել արդյունավետ կօգտագործվեն հարյուրավոր գյուղական համայնքների ենթակայության տակ գտնվող տարածքային, հողային և աշխատանքային ռեսուրսները:

Այսպիսով, ՀՀ ներկայիս գործող վարչատարածքային բաժանման սխեման և նրա առաջին աստիճանի միավորները՝ մարզերը, ըստ էության լիարժեքորեն չեն նպաստում իրենց ենթակայության տակ գտնվող գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մինչդեռ վարչատարածքային բաժանման կարևորագույն գործառույթներից է ոչ միայն պետական և տարածքային կառավարման իրականացումը տեղերում, այլ նաև առանձնացված վարչատարածքային միավորների և բոլոր բնակավայրերի համալիրային սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելը:

ՀՀ վարչատարածքային բաժանման երկրորդ աստիճանի միավորները քաղաքային և գյուղական համայնքներն են, որոնք հանդիսանում են տարաբնակեցման համակարգի սկզբնական օղակները: ՀՀ 953 գյուղական բնակավայրերից 866-ը հանդիսանում են գյուղական համայնքների կենտրոններ, իսկ 87 գյուղ ինքնուրույն համայնքներ չեն և մտնում են քաղաքային և գյուղական համայնքների մեջ: Ինքնուրույն համայնք չհանդիսացող առավել մեծ թվով գյուղեր գտնվում են Սյունիքի (25 գյուղ), Շիրակի (12 գյուղ), Լոռվա (11 գյուղ) և Վայոց ձորի (10 գյուղ) մարզերում: Այդպիսի հնգական գյուղ կան Տավուշի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, երկուական գյուղ՝ Կոտայքի և Արարատի մարզերում և ընդամենը մեկ գյուղ Արմավիրի մարզում: Հանրապետությունում 9 գյուղ վարչական առումով ենթական են քաղաքային բնակավայրերի:

Հայտնի է, որ ՀՀ հատկապես լեռնային և սահմանամերձ տարածաշրջանների գյուղական համայնքները և բնակավայրերն ունեն բազմազան տեղադիրք և մեծություն, սոցիալ-տնտեսական

զարգացման և բնակչության կենսագործունեության համար միանգամայն տարբեր պայմաններ, որոնց բացահայտումը և գնահատումը հնարավորություն կտա պարզել այդ տարածաշրջանների և գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և հաշվի առնել դրանք հեռանկարային զարգացման ծրագրեր մշակելիս:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ բարձրլեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում տարաբնակեցման տեղական մակարդակով համակարգաստեղծ բնույթ է կրում առավելապես մարդկանց արտադրական գործունեությունը, իսկ կրթական, մշակութային, կենցաղային և սպասարկման այլ ոլորտներում թույլ են արտահայտված միջբնակավայրային կապերը, տարբեր տեսակի ծառայությունների փոխլրացումը և ներդաշնակումը [2]: Այդպիսի տարածաշրջանների գյուղերի ամենօրյա օգտագործման ապրանքներով և ծառայություններով ապահովվածության և բնակչության թվի աճի միջև կա ուղիղ կախվածություն: Բնակչության արտահոսք և թվի նվազումը է նկատվում առաջին անհրաժեշտության ապրանքներով և ծառայություններով վատ ապահովված գյուղերից: Դրանք առավելապես փոքր և միջին մարդաշատության գյուղերն են:

Հաշվի առնելով գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների ձևավորման վրա գյուղական համայնքի բացարձակ բարձրությունը, հեռավորությունը մարզկենտրոնից և տրանսպորտային մայրուղիներից, մարդաշատությունը, բնակչության ապահովվածությունը վարելահողերով, այգիներով և բնակչության բյուջեի սեփական եկամուտները Մ. Մանասյանը կատարել է ՀՀ գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների գնահատումն և առանձնացրել է բնակչության կենսագործունեության անբավարար, բավարար և լավ պայմաններ ունեցող համայնքներ [2]: Նա գտնում է, որ ՀՀ գյուղական համայնքների զգալի մասը տարածական, ֆինանսական և ժողովրդագրական առումներով խիստ փոքր են, չեն ապահովում մարդկանց օրական կենսագործունեության լիարժեք և արդյունավետ իրականացում և առաջարկում է գյուղական համայնքների խոշորացում, միջհամայնքային միավորումների ստեղծում, որոնք կնպաստեն բնակչության ամենօրյա կենսագործունեության համար բավարար պայմանների ստեղծմանը:

Անշուշտ, խոշոր գյուղերը կամ էլ համայնքներն ավելի լայն հնարավորություններ ունեն բնակչության կենսագործունեության պահանջները բավարարելու, տնտեսական և սոցիալական առաջընթացի համար: Սակայն ՀՀ-ում գյուղական համայնքների թվի կրճատումը հղի է մի շարք բացասական հետևանքներով: Գտնում ենք, որ գյուղական համայնքների խոշորացման հարցերը քննարկելիս պետք է ելակետ ունենալ հետևյալ հանգամանքները.

1. Արարատյան հարթավայրի, Շիրակի և լոռվա դաշտերի և հարթավայրային մակերևույթ ունեցող այլ տարածքներում, գյուղական համայքների խոշորացումը կարելի է համարել նպատակահարմար, եթե չկան դրան խանգարող տեղային առանձնահատկություններ և համայնքի մեջ մտնող գյուղերի բնակչությունը դեմ չէ: (Այսպիսի համայնքի օրինակ է Էջմիածնի տարածաշրջանում Փարաքարի համայնքը, որը միավորում է Փարաքար և Թաիրով գյուղերը և ունի մոտ 9300 մարդ մշտական բնակչություն):
2. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակի պայմաններում ցանկալի չէ լեռնային և սահմանամերձ շրջաններում գյուղական համայնքների թվի կրճատումը: Այդպիսի տարածաշրջաններում փոքր գյուղերի համայնքի կարգավիճակի պահպանումը որոշակի դեր ունի այդ բնակավայրերի համար: Չնայած որ այդպիսի գյուղերում բնակչության կենսագործունեության ապահովումը կապված է մեծ դժվարությունների հետ, սակայն այդ տարածաշրջանների և պետության ռազմավարական շահերը պահանջում են պետական դոտացիայի միջոցներով ապահովել լեռնային ու սահմանամերձ շրջանների գյուղական բնակավայրերի ամրացումն ու զարգացումը: Այդպիսի

տարածաշրջաններում նույնիսկ հազարից ավելի բնակչություն ունեցող գյուղերի միավորումը մեկ համայնքի մեջ կարող է պատճառ դառնալ դրանց քայքայման համար: Ընդհուպ համայնքի ղեկավարի ընտրությունը, որի ժամանակ մեծ դեր ունեն նաև գյուղական բնակչության շրջանում ազգակցական և այլ կապեր, կարող է պատճառ դառնալ նոր ստեղծված համայնքի մեջ մտնող գյուղերից մեկնումեկի քայքայմանը: Հետևաբար՝ հարթավայրային տարածք և միջբնակավայրային համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ և լեռնային ու կտրտված մակերևույթ և միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցերի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Ընդհանրացնելով վերը բերված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ ՀՀ վարչատարածքային բաժանման վերակազմումն ու կատարելագործումը կարևորագույն խնդիր է, այն կնպաստի ՀՀ և, մասնավորապես, լեռնային ու սահմանամերձ գյուղական բնակավայրերի ամրացմանն ու զարգացմանը և տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ.Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե. , 2005, 400 էջ:
2. Մանասյան Մ.Գ., ՀՀ գյուղական համայնքների զարգացման մի քանի հարցեր, «Ագրոգիտություն», գիտական ամսագիր, Ե., 2011, թիվ 3-4:
3. Մելքումյան Ս.Ա., Վարչատարածքային բաժանման օպտիմալացումը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր նախապայմանն է, « Բանբեր » ԵՊՏՀ, 2004, թիվ 1:
4. Մելքումյան Ս.Ա. ՀՀ՝ գիտականորեն հիմնավորված նոր վարչատարածքային բաժանում, «Իրատես» հասարակական-քաղաքական թերթ, 2012 31-ը հուլիսի:
5. Պոտոսյան Ա.Հ., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. ,2013 թ., 416 էջ:
6. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Ե. , 2014:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОГО ДЕЛЕНИЯ РА КАК ФАКТОР СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ МЕСТНОСТЕЙ И ПОСЕЛЕНИЙ РА

Подосян А.А., к.г.н., доцент, ЕГУ

В статье обсуждаются вопросы взаимовлияния административно-территориального деления и сельского расселения РА. На основе проведенного анализа автор пришел к заключению, что преобразование административно-территориального деления РА будет способствовать совершенствованию системы расселения РА и, в частности, укреплению позиций сельских поселений горных и приграничных районов. По мнению автора статьи, в вопросах укрупнения сельских общин в зависимости от особенностей рельефа необходимо применить дифференцированный подход.

THE IMPROVEMENT OF ADMINISTRATIVE-TERRITORIAL DIVISION OF RA AS A FACTOR OF SOCIAL-ECONOMIC DEVELOPMENT OF RURAL HABITATIONS AND SETTLEMENTS

POTOSYAN A.A, PhD on geography, Associate Professor

The article was discussed the interference of administrative-territorial division and the rural settlement of Armenia. Based on the analysis the author has come to the conclusion that the conversion of the administrative -territorial division of RA will contribute to the improvement of the system of settlement of Armenia and, in particular, strengthening the position of rural settlements in mountainous and border areas. According to the author, in matters of integration of rural communities depending on topography need to apply a differentiated approach.

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԴԵՐԸ ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, աշխ.գիտ.թեկ. դոցենտ, ԵՊՀ
ՎԱՀԱՆ ՊՈՏՈՍՅԱՆ, մագիստրանտ, ԵՊՀ

ՀՀ բնական ռեսուրսների շարքում տարածքային ռեսուրսների առավել սահմանափակ լինելու հանգամանքը խիստ կարևոր է դարձնում դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման խնդիրը: Բացի այդ, ՀՀ քաղաքաաշխարհագրական ներկա վիճակը և սոցիալ-տնտեսական զարգացման շահերը պահանջում են հանրապետության տարածքի քիչ թե շատ հավասարաչափ և կայուն բնակեցում և տարածքի արդյունավետ օգտագործում:

ՀՀ-ի նման լեռնային և կտրտված մակերևույթ ունեցող երկրներում որքան մեծ է բնակավայրերի խտությունը, այնքան ավելի բարձր են հողային և տարածքային ռեսուրսների օգտագործման հնարավորությունները և դրանց արդյունավետությունը: Եթե նկատի ունենանք, որ ՀՀ տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1800 մ է, իսկ տարածքի ավելի քան 70 և բնակավայրերի 50.7 %-ը գտնվում են ծովի մակարդակից 1500 մ-ից ավելի բարձրության վրա, հասկանալի է դառնում, որ հանրապետության ողջ տարածքի քիչ թե շատ կայուն և համաչափ բնակեցումը և տարածքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը համապետական կարևորագույն խնդիր է[1]:

ՀՀ տարածքի լեռնային բնույթի ազդեցությունը մարդկային գործունեության ողջ համալիրի վրա առավել ցայտուն է դրսևորվում տարաբնակեցման միջոցով: Բարձրության գոտիների փոփոխմամբ փոփոխվում են նաև գոտիների բնական համալիրների մյուս տարրերը, իսկ այդ փոփոխման հետևանքով էլ մարդկանց արտադրական գործունեությունը և տարաբնակեցումը: ՀՀ տարածքի բարձրության յուրաքանչյուր գոտի առանձնանում է որպես համասեռ տարածքային միավոր, իրեն բնորոշ բնական պայմաններով, հողատարածությունների կառուցվածքով և օգտագործման բնույթով, տնտեսության մասնագիտացումով և բնակչության զբաղմունքով, տարաբնակեցման ձևերով և բնակավայրերի մարդաշատությամբ [1]:

Բազմաթիվ այլ գործոնների շարքում ՀՀ տարածքային ռեսուրսների օգտագործման

[1] Ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր շրջաններում գտնվում են ՀՀ գյուղական բնակավայրերի 51.6%-ը:

արդյունավետության բարձրացումը կախված է նաև գոյություն ունեցող տարաբնակեցումից և մասնավորապես գյուղական տարաբնակեցումից, քանի որ գյուղական բնակատեղերը ոչ միայն մարդկանց բնակության վայրերն են, այլ նաև մշակելի այն ամբողջ տարածքները և արտադրական հանդակները՝ արոտավայրերը, խոտհարքերը և անտառները, որոնք անմիջականորեն հարում են գյուղական բնակավայրին կամ ոչ մեծ տարածքներով ցրված են գյուղերի միջև և ակտիվորեն օգտագործվում են գյուղական բնակչության կողմից: Բնակատեղերին հարող տարածքների օգտագործման բնույթը, յուրացվածության աստիճանը և արդյունավետությունը մեծապես կախված է գյուղական տարաբնակեցման բնույթից, մասնավորապես գյուղական բնակավայրերի խտությունից, դրանց մեծությունից, արտադրատնտեսական մասնագիտացման ուղղությունից և գյուղական բնակավայրը բնութագրող այլ ցուցանիշներից [1]: Հայաստանի նման լեռնային երկրներում նշվածներին ավելանում է նաև գյուղական բնակավայրերին հարող տարածքների ռելիեֆի բնույթը, դրանց հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածության և թեքությունների աստիճանը, դիրքադրությունները և այլ գործոններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անցած տասնամյակների ընթացքում ՀՀ տարբեր տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել օգտագործվող տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների մակերեսի վրա: Եթե Արարատյան հարթավայրում և այն եզրավորող սարահարթերում գյուղական նոր բնակավայրերի ստեղծումը էապես նպաստել է նոր հողատարածքների յուրացմանը և գյուղատնտեսության զարգացմանն ու համախառն արտադրանքի ավելացմանը, ապա մյուս տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թվաքանակի կրճատման հետևանքով զգալիորեն նեղացել է մշակելի հողատարածքների մակերեսը:

Խորհրդային տարիներին գյուղական տարաբնակեցման հեռանկարային զարգացման ծրագիր էր համարվում գյուղացիական տնտեսությունների (կոլտնտեսությունների և սովխոզների) խոշորացումը և փոքր ու մանր գյուղերի վերացումը: Գյուղական տարաբնակեցման զարգացումը տարվում էր այն ուղղությամբ, որպեսզի ապացուցվեր կոլտնտեսային և սովխոզային արտադրության առավելությունները: Այդ քաղաքականությունն ամբողջ երկրի մասշտաբով իրականացվում էր նույն սկզբունքներով և չափանիշներով, հաշվի չառնելով առանձին տարածաշրջանների և մասնավորապես՝ լեռնային շրջանների բնաաշխարհագրական պայմանների և գյուղական տարաբնակեցման առանձնահատկությունները: Նման քաղաքականության պատճառով տուժում էր ոչ միայն գյուղատնտեսությունը, այլ նաև գյուղական տարաբնակեցումը: ՀՀ մի շարք առանձնահատկությունների պատճառով, այդ քաղաքականության հետևանքներն ավելի վատթար են եղել: 1926-1988 թթ. ընթացքում հանրապետությունում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 361-ով [2]: Այդ ընթացքում ՀՀ-ում վերացել է 274 գյուղ և 138 գյուղական տիպի ժամանակավոր բնակելի կետեր, 97 գյուղ միացել են այլ բնակավայրերի: Հասկանալի է, որ գյուղերի վերացման հետևանքով դրանց գոտում կրճատվում և տնտեսական շրջանառությունից դուրս էին գալիս վարելահողեր, տնամերձ հողատարածքներ և այլն: Ամենահամեստ հաշվարկներով դրանք կազմում են 173 հազար հեկտար [3]: Բնակչության հեռացումը բնակեցված տարածքներից նեղացրել է հանրապետության տարաբնակեցման արեալը, արդյունավետ չեն օգտագործվել տարածքային և մասնավորապես գյուղատնտեսական հողահանդակները: Այդ երևույթն առավել անցանկալի և վտանգավոր դրսևորումներ է ունեցել ՀՀ նախալեռնային ու լեռնային և սահմանամերձ շրջաններում:

ՀՀ-ում տնտեսության անհամաչափ տեղաբաշխման և բնաաշխարհագրական գործոնների ազդեցության հետևանքով բավական մեծ է բնակչության խտության տարբերությունները տարբեր

շրջանների, մասնավորապես՝ հարթավայրային և լեռնային տարածքների միջև: Դա տեղի է ունեցել ՀՀ-ում անհամաչափ ուրբանիզացիայի և լեռնային շրջաններից դեպի հարթավայրային-ցածրադիր շրջաններ բնակչության միգրացիայի պատճառով: Այդ ամենի հետևանքով հարթավայրային շրջաններում մեծացել է բնակեցված տարածքների մակերեսը, իսկ լեռնային շրջաններից շարունակվող արտահոսքի հետևանքով նվազել է առանց այն էլ սահմանափակ բնակեցված տարածքը: Գնալով մեծացել է Արարատյան դաշտի արժեքավոր հողերը բնակեցման և շինարարության համար օգտագործելու չափերը: Ներկայումս յուրաքանչյուր 100 քկմ-ն Մասիսի տարածաշրջանին բաժին է ընկնում 15, Էջմիածնի տարածաշրջանին 11, Արտաշատի տարածաշրջանին՝ 7.5 գյուղ: Իսկ Մարտունու, Գավառի, Հրազդանի և Վայքի տարածաշրջաններին՝ 1,5-1,7 գյուղական բնակավայր: Գյուղական բնակավայրերի խտությունը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է 14 տարածաշրջանում, իսկ գյուղատնտեսական հողատարածությունների հաշվով գյուղական բնակավայրերի խտությունը հանրապետության միջինից ցածր է 17 տարածաշրջանում:

ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջանների տարաբնակեցման համակարգում ավելի մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերը: Դրանց զարգացումից և առաջընթացից է կախված այդ շրջանների տնտեսության հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, լեռնային տարածքների լիարժեք օգտագործումը, ինչպես նաև բնակչության միգրացիայի կարգավորումը:

Պետք է առավելագույն չափով ուսումնասիրել ՀՀ լեռնային տարածքների (շրջանների) բնատնտեսական առանձնահատկությունները, դրանց տնտեսական զարգացման հնարավորությունները, սպասարկման ոլորտի կատարելագործումը և բնակչության սոցիալ-մշակութային մակարդակի բարձրացման խնդիրները: ՀՀ յուրաքանչյուր լեռնային տարածաշրջան պետք է դառնա երկրի տնտեսական համալիր օրգանական անքակտելի մասը: Դա էապես կնպաստի նաև այդ տարածաշրջաններում տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը, առանձին գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, կընդարձակի այդ շրջանների տարաբնակեցման արեալը և կմեծանա տարածքային ռեսուրսների օգտագործման աստիճանը:

ՀՀ լեռնային շրջանների զարգացումը և դրանցում բնակչության ամրացումը պահանջում է գոյություն ունեցող տարաբնակեցման կատարելագործում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի խոշորացում: Չնայած, որ գյուղական բնակավայրերը կրում են բնական գործոնների ուժեղ ազդեցությունը, սակայն տարաբնակեցման որոշակի ձևի կազմավորման ու զարգացման համար որոշիչ դեր ունեն նաև սոցիալ-տնտեսական գործոնները:

Ընդհանրապես, գյուղերի փոքր մարդաքանակը զգալիորեն խոչընդոտում է լեռնային շրջանների զարգացմանը և հանդիսանում է շատ շրջանների բնազրկման պատճառը: Այդպիսի գյուղերը, մի քանի տասնյակ բնակչով, բնակեցման համար հարմար չեն: Բնակչության փոքր թվի պատճառով դրանցում երբեմն հնարավոր չի լինում ունենալ դպրոց, մանկապարտեզ, կենցաղային ծառայություններ և այլն: Չնայած ՀՀ-ն առանձնանում է գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ չափերով, սակայն լեռնային շատ շրջաններում այն հանրապետության միջինից ցածր է 1,5-2 անգամ, իսկ օրինակ Ամասիայի, Մեղրու և Կապանի տարածաշրջաններում՝ 4.5-7.3 անգամ:

Ոչ միայն բնակչության աճն է գյուղերի մարդաշատությանը նպաստող գործոն, այլ գյուղական բնակավայրերի մարդաշատությունն իր հերթին հանդիսանում է գյուղական բնակչության ավելացման գործոն: Խոշոր գյուղերում հեշտ է ստեղծել սպասարկման ծառայություններ: Դրանք, սովորաբար, ունենալով նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք, իրենց ձգողական ուժի շնորհիվ դառնում են տեղական կենտրոններ գյուղական տարաբնակեցման տվյալ արեալում: ՀՀ լեռնային շատ տարածաշրջաններում տեղական կենտրոնների ցանցը դեռևս լավ չի զարգացած և դրանց կայացումը կապված է

տարաբնակեցման համակարգի կատարելագործման հետ:

ՀՀ 37 տարածաշրջաններից 24-ը սահմանային է, իսկ լեռնային շրջանների թիվը, չնայած որ վերջնականապես հստակեցված չէ, նույնպես մեծ թիվ է կազմում: Սահմանային այդ 24 տարածաշրջաններից 14-ը միաժամանակ նաև լեռնային են (Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերի բոլոր տարածաշրջանները և Կրասնոսելսկի, Վարդենիսի, Ամասիայի, Աշոցքի, Տաշիրի տարածաշրջանները): 2014 թ. դրությամբ այդ տարածաշրջաններն ունեին 368 գյուղ: Դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության մոտ 19,7 %-ը: Այդ տարածաշրջանների գյուղերի ճնշող մեծամասնությունը (290 գյուղ) գտնվում են բուն սահմանային գոտում, որից 39-ը՝ սահմանային առաջին գոտում, 136-ը՝ սահմանային երկրորդ գոտում և 115-ը սահմանային երրորդ գոտում:

1970-2014 թթ. ընթացքում այդ տարածաշրջաններում 14 գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 93 հազարով (30,1 %-ով), իսկ գյուղական բնակավայրերի թիվը՝ 9 -ով (աղ. 1): 1959 թ-ից հետո նշված տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 105-ով: Ներկայումս այդ տարածաշրջանների 26 գյուղական բնակավայր բնակչություն չունի:

1970-2014 թթ. ընթացքում, երբ հանրապետությունում համեմատաբար կայունացել է գյուղական բնակավայրերի թիվը, այս տարածաշրջաններում 2,7 անգամ ավելացել է մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, իսկ 501-1000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը նվազել է ավելի քան 1,7 անգամ:

Եթե 1970 թ. նշված լեռնային և սահմանամերձ 14 տարածաշրջաններում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 29.8 %-ը, ապա ներկայումս այն կազմում է ընդամենը 19.7 %: ՀՀ-ում այդ տարածաշրջանների գյուղական բնակչության տեսակարար կշռի այդպիսի աննախադեպ նվազումը, անշուշտ կրճատել է նաև դրանց տնտեսական ներուժը, նվազել է դրանց տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների օգտագործման արդյունավետությունը: Նույն այդ ժամանակահատվածում ավելի քան 204-ով նվազել է գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակը՝ հասնելով 824-ից 620-ի: Թիվ 2 աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ տարածաշրջանների գյուղերի 33 %-ից ավելին մանր և փոքր են, ունեն մինչև 200 բնակիչ, իսկ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերը կազմում են գյուղերի ընդհանուր թվի 63 %-ից ավելին, սակայն դրանց բաժին է ընկնում գյուղական բնակչության ընդամենը 21,6 %-ը:

Բերված վերլուծության արդյունքները թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ-ի գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման հեռանկարային զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը պետք է համարել նախալեռնայիին ու լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր և մանր գյուղերի խոշորացումը: Անթույլատրելի պետք է համարել այդպիսի գյուղերի վերացումը: Դա կկրճատի մեր երկրի բնակեցված տարածքը, կխոչընդոտի տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների ինտենսիվ օգտագործումը, վնաս կհասցնի բնական միջոցների վերարտադրությանը, կթուլացնի երկրի պաշտպանունակությունը: Ոչ միայն ամբողջովին պետք է պահպանվի ՀՀ գյուղական բնակավայրերի ներկայիս ցանցը, այլ նաև անհրաժեշտ է աշխատանքներ տանել ՀՀ տարբեր շրջաններում լքված և ավերված տասնյակ գյուղերի վերականգնման և բնակեցման ուղղությամբ:

Աղյուսակ 1

ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (1959-2011 թթ.)1

Տարեթվեր	Գյուղերի ընդհանուր թիվը	Գյուղական բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)												Գյուղերի միջին մարդաշատությունը	Բնակչության նվազեցում գյուղերը
			մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1959	446	283057	111 / 24.9	12164 / 4.3	152 / 34.1	49203 / 17.4	102 / 22.9	70001 / 24.7	71 / 15.9	108528 / 38,.3	7 / 1.6	25401 / 9,0	3 / 0.6	17760 / 6,3	635	
1970	377	310480	42 / 11,1	5392 / 1.7	125 / 33.2	41347 / 13.3	114 / 30.2	79729 / 25.7	88 / 23.3	150579 / 48.5	7 / 1.9	27000 / 8.7	1 / 0.3	6433 / 2.1	824	
1988	354	275026	72 / 20,.3	8170 / 3.0	116 / 32.8	40323 / 14.7	75 / 21.2	56055 / 20.4	81 / 22.9	130329 / 47.4	9 / 2.5	33255 / 12.0	1 / 0.3	6894 / 2.5	777	
1995	320	250095	73 / 22.8	8643 / 3.5	107 / 33.4	36759 / 14.7	62 / 19.4	42848 / 17.1	64 / 20.0	104865 / 41.9	12 / 3.8	44617 / 17.8	2 / 0.6	12363 / 5.0	782	
2011	368	212312	115 / 33,7	11912 / 5,6	101 / 29,5	34068 / 16,0	66 / 19,3	45686 / 21,5	52 / 16,2	88830 / 41,9	8 / 2,3	31816 / 15,0	-	-	620	26

1. Աղյուսակը կազմած է »ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային միավորների և սեռի 2011 թ. մարդահամարի« տվյալների հիման վրա: ա՝ գյուղերի թիվը, բ՝ բնակչության թիվը:

Աղյուսակ 2

ՀՀ լեռնային և սահմանային շրջանների գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի[1]

Տարածա-շրջաններ	մինչև 200 մարդ		201-500 մարդ		501-1000 մարդ		1001-3000 մարդ		3001-5000 մարդ		5001-ից ավելի մարդ	Բնակչություն չունեցող գյուղեր	Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա		ա	բ
Կրասնոսելսկի	4	532	4	1637	7	4642	1	1127	-		-	2	18	7938
Վարդենիսի	9	1042	12	4265	6	3726	6	9307	2	7575	-	1	36	25915
Տաշիրի	10	1042	6	1764	5	2398	3	4630	1	4578	-	0	25	14412
Ամասիայի	12	1104	8	2383	2	1287	1	1532	-		-	3	26	6306
Աշոցքի	10	1203	12	4412	2	1343	1	2132	-		-	0	25	9090
Կապանի	34	3442	7	1683	4	3078	-		-		-	8	53	8203
Գորիսի	4	416	6	1788	7	5501	7	13277	-		-	3	27	20982
Մեղրու	8	604	4	1193	1	571	-		-		-	0	13	2368
Սիսիանի	9	928	17	6139	5	3242	3	4739	-		-	0	34	15048
Եղեգնաձորի	6	618	6	2012	4	3287	10	15674	1	4460	-	4	31	26051
Վայքի	7	773	6	1988	5	3683	1	1380	-		-	2	21	7824
Իջևանի	2	208	8	2962	5	3014	5	9826	3	10783	-	2	25	26793
Նոյեմբերյանի			3	1065	7	5150	6	11275	1	4420	-	1	18	21910
Տավուշի	-		2	777	6	4764	8	13931	-		-	0	16	19472
Ընդամենը	115	11912	101	34068	66	45686	52	88830	8	31816		326	68	212312

[1] Աղյուսակը կազմած է »ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային միավորների և սեռի 2011 թ. մարդահամարի« տվյալների հիման վրա: ա՝ գյուղերի թիվը, բ՝ բնակչության թիվը:

ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր գյուղական բնակավայրերը սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առումով առավել անկայուն են և դրանց որոշ մասը ժամանակի ընթացքում կարող են կանգնել վերացման վտանգի առաջ: Անհրաժեշտ է ավելացնել այդպիսի գյուղերի բնակչության քանակն այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի դրանցում ունենալ դպրոց, մանկապարտեզ, խանութ, կենցաղսպասարկման կետ և այլ ծառայություններ: Միաժամանակ պետք է աշխատանքներ տարվի, որպեսզի փոքր գյուղերի մշակութային, կենցաղային և նույնիսկ արտադրական սպասարկման որոշ գործառույթներ իրականացվեն հարևան մեծ գյուղերի կողմից: Դրանք կհանդիսանան բավարար նախադրյալ մարզերի և բոլոր տարածաշրջանների կայուն հասարակական զարգացման, ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացի և երկրի պաշտպանունակության հզորացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պոտոսյան Ա.Հ., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե., 2013, 416 էջ:
2. Պոտոսյան Ա.Հ., ՀՀ գյուղական տարաբնակեցումը, Ե. ,1999:
3. Մանասյան Վ.Գ., Ռիսկերը և ՀՀ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման մեջ դրանց հաղթահարման հնարավորությունները, ,Բանբերեն, ՀՊՏՀ, 2013, թիվ 1, էջ 68-95:
4. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2013, Ե., 2014:
5. ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակներն ըստ վարչատարածքային միավորների և սեռի 2011 թ. մարդահամարի տվյալներով:
6. www. armstat.am

РОЛЬ РАССЕЛЕНИЯ В СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОМ РАЗВИТИИ И РАЦИОНАЛЬНОМ ИСПОЛЬЗОВАНИИ ТЕРРИТОРИАЛЬНЫХ РЕСУРСОВ ГОРНЫХ И ПРИГРАНИЧНЫХ РАЙОНОВ РА

Подосян А.А., к.г.н.,доцент, ЕГУ

Подосян В.А., магистрант, ЕГУ

В статье обосновывается точка зрения относительно того, что в странах, подобных Армении, чем выше плотность поселений, тем выше возможность и эффективность использования земельных и территориальных ресурсов. Решением одной из важнейших задач развития сельского расселения авторы статьи считают укрупнение малых и небольших сел, сохранение существующей сети поселений, восстановление и заселение десятков покинутых и заброшенных сел.

THE MOVING ROLE IN SOCIAL -ECONOMIC DEVELOPMENT AND EFFECTIVE USE OF TERRITORIAL RESOURCES OF MOUNTAINOUS AND BORDER AREAS OF RA

POTOSYAN A.A, PhD on geography, Associate Professor

POTOSYAN V. A., undergraduate, YSU

In the article explains the directly proportional relationship between the density of settlements and the possibility of efficient use of land and territorial resources in countries like Armenia. Addressing one of the major problems of rural settlement authors believe consolidation of small and small villages, preservation of the existing network of settlements, recovery and the settlement of dozens of derelict and abandoned villages.

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. տարածքային զարգացում, տարածքային կառավարում, տարածքային պլանավորում:

Տնտեսության տարածական համաչափ կազմակերպման և կայուն զարգացման հիմնախնդիրների լուծման նպատակով, անհրաժեշտություն է առաջանում գիտականորեն բազմակողմանի վերլուծել և հիմնավորել տարածքի հնարավորություններն ու պլանավորել դրանց օգտագործումը: Պլանավորումն ըստ էության՝ կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղիների տարածքային արտացոլումն է, դրանով իսկ հիմք հանդիսանալով կառավարման գործառույթների իրականացման համար:

Շատ երկրներում առանձնացվում է տարածքային պլանավորման ընդհանուր և ճյուղային ձևերը: Ընդհանուր տարածքային պլանավորումը մեծամասամբ հանդիսանում է քաղաքաշինական: Եվրոպական Միության անդամ երկրներում գոյություն ունի առավել ընդհանուր կատեգորիա, որը կոչվում է տարածական պլանավորում: Տարածական պլանավորման ճյուղային ձևերը վերաբերվում են տնտեսության առանձին ճյուղերի զարգացման տարածքային պլանավորմանը [1]:

Տարածքի լանդշաֆտային պլանավորումը հաճախ դիտվում է որպես պլանավորման ճյուղային ձևերից մեկը: Միաժամանակ այն հանդիսանում է միջճյուղային, որքանով զբաղվում է հողերի տարբեր նշանակության օգտագործմամբ և ուշադրություն է դարձնում լանդշաֆտի բոլոր գործառույթների վրա: Լանդշաֆտային պլանավորումն իրականացվում է տարբեր մասշտաբներով և տարածական մակարդակում համաձայնեցվում է ընդհանուր տարածական պլանավորման հետ: Լանդշաֆտի պլանավորումը կարող է նույնացվել տարածական այնպիսի պլանավորման հետ, որը նպատակաուղղված է տարածքների հեռանկարային զարգացման, վերականգնման, կազմավորման կանխորոշմանը:

Տարածական պլանավորման իրականացման ժամանակ վերլուծության համար օգտագործվում են տարածքի առանձնահատկությունների մասին բազմակողմ գիտելիքների ամբողջությունը: Դրանք տարածական վերլուծության գործընթացում ճյուղային և թեմատիկ ծավալուն նյութեր են, մշակված գիտական տարբեր մոտեցումներով և մեթոդներով:

Տարածական պլանավորման նախագծման փուլում ստացված արդյունքները համաձայնեցվում են լանդշաֆտների օգտագործման նպատակներին, իսկ վերջնական փուլում՝ ընդունված կառավարման որոշումների պահանջներին և իրավական սահմանափակումներին: Լանդշաֆտային մոտեցմամբ տարածական պլանավորման ամբողջ գործընթացը ենթադրում է տարբեր մակարդակներում արդյունքների համաձայնեցում և լայն քննարկում: Պատրաստված նախագիծը հանդիսանում է այդպիսի համաձայնության սկզբնական փուլը, որում հաշվի են առնվում տարածքի էկոլոգիական բնույթի տարբեր տեսակի տեղեկատվության զուգորդումները:

Տարածական պլանավորման ընդհանուր կառուցվածքը ներկայացվում է գործողությունների հետևյալ հաջորդականությամբ [2].

- տարածքի լանդշաֆտային բազմազանության բաղադրիչային և համալիր վերլուծություն,
- բնություն-հասարակություն-տնտեսություն հարաբերությունների զարգացումը սահմանափակող գործոնների գնահատում,
- տարածքային զարգացմանը նպաստող բնական միջավայրի ռեսուրսային ներուժի բացահայտում,
- համալիր բնութագրմամբ ռեսուրսների խմբավորում որոշակի կարգաբանական միավորում,
- շրջակա միջավայրի վիճակի գնահատում՝ մշակված չափանիշների համակարգի միջոցով,

- շրջակա միջավայրի գործառնական զարգացման նպատակների որոշակիացում և դրանց իրագործման համար միջոցառումների նախապատրաստում,
- հասարակության պահանջմունքների բավարարման համար տարածքային կառուցվածքի կատարելագործման մասին առաջարկների մշակում՝ հաշվի առնելով բնական միջավայրի և դիտարկվող տարածքում լանդշաֆտների հիմնական էկոլոգիական գործառույթների պահպանությունը:

Լանդշաֆտային մոտեցմամբ տարածական պլանավորման ընդհանուր նպատակն է՝ տարածքի զարգացման գերակայությունների կարևորության և զուգորդման հաշվառմամբ, էկոլոգիական ուղղվածությամբ հողօգտագործման կազմակերպական նախադրյալների բարելավումը: Վերլուծության ժամանակ ամբողջ տարածքը, որպես տարածքային ռեսուրս դիտարկվում է միևնույն մակարդակի կարևորությամբ: Միջոցառումների միջոցով որոշակիացվում է տարբեր տեսակի երկրահամակարգերի և դրանց վիճակի համար զարգացման անհրաժեշտ ուղղությունները: Պլանավորման ժամանակ այդպիսի մոտեցման հիմնական նպատակն է՝ մշակել տարածքի կայուն զարգացման համապարփակ հայեցակարգ, ուղղորդված ինչպես դրա բնական ներուժի վերականգնմանն ու պահպանությանը, այնպես էլ տեղի բնակչության բարեկեցիկ կյանքի իրավունքի երաշխիք տալուն: Նպատակին հասնել հնարավոր է երկու փոխկապված խնդիրների միաժամանակ լուծման դեպքում՝

1. տարածքի հողօգտագործման կանոնակարգված գոտևորում, որպես հետագա զարգացման չափորոշիչա-իրավական հիմք,
2. տարածքի պլանում՝ բնապահպանական նշանակության ռեժիմի պայմաններում, սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգի մշակում:

Տարածական պլանավորման լանդշաֆտային քաղաքականությամբ ձևավորված նպատակն ունի չափորոշիչային-իրավական ասպեկտ՝ հասցեավորված տարածքի կառավարման համակարգին: Ընդունվող որոշումների համար այն հանդիսանում է էկոլոգիական հիմնավորվածությամբ տեղեկատվական հենք: Նպատակի իրականացումը կայանում է ըստ էության լանդշաֆտային պլանի ստացմամբ և դրան ուղեկցող տեղեկատվական ու իրավական փաստաթղթերով:

Լանդշաֆտային մոտեցմամբ տարածական պլանավորման իրականացման դեպքում, բնական միջավայրի նախընտրելի օգտագործման և համապարփակ զարգացման հայեցակարգերի շրջանակում, առանձնացվում է նպատակների երեք հիմնական տեսակ՝ պահպանություն, զարգացում և բարելավում: Տարածական զարգացման լանդշաֆտային հայեցակարգը, մշակված տարածքի սոցիալ-տնտեսական պայմանների, ռեսուրսների գնահատման և առանձին բնական բաղադրիչների օգտագործման նպատակների վերլուծության հենքի վրա, թույլ է տալիս ներկայացվող տարածքը բաժանել բնական միջավայրի պահպանության և սոցիալ-տնտեսական զարգացման գոտիների: Այն հնարավորություն է ստեղծում տարածական մակարդակով տարանջատել էկոլոգիական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, հատկացնելով դրանց յուրաքանչյուրի որոշման համար իրենց տարածքները և հետագայում մշակել յուրաքանչյուր այդ գոտու նպատակային գործունեության արդյունավետացման գործողությունների ուղղությունը:

Տարածական պլաններում՝ բնական համալիրները, որոնք հանդիսանում են տարածքի միջավայրաստեղծ հիմնակմախքը կամ յուրահատուկ և գեղագիտական առանձնահատկությունների կրողը, տարանջատվում է օգտագործումից և միավորվում է նախընտրելի պահպանության մեկ գոտում: Այդ գոտու ստեղծումը երաշխիք է տալիս պահպանել տարածքի բնական լանդշաֆտների միջավայրաստեղծ գործառույթն ամբողջությամբ, ապահովում է բնական ռեսուրսների վերարտադրելիությունը, և վերջնական հաշվով, տարածքի բնության բնական բազմազանության և

յուրահատուկ լանդշաֆտների պահպանությանը: Պահպանվող գոտու բնական համալիրների զգայունակությամբ և նշանակությամբ պայմանավորված, դրանց օգտագործման կանոնակարգը կարող է լինել տարբեր: Հատուկ արժեքի լանդշաֆտների համար, որոնք իրենցից ներկայացնում են տարածքի միջավայրաստեղծ միջուկը, պահպանությունը դիտվում է օգտագործումից հրաժարում և այստեղ հաստատվում է կանոնակարգ, որը մոտ է արգելոցին: Գոտու մնացած բնական համալիրների պահպանության համար թույլատրվում է գոյություն ունեցող տեսակների էկոլոգիական հիմնավորմամբ օգտագործում՝ անհրաժեշտ պայմանների դեպքում: Գործունեության նոր տեսակների զարգացման կամ առակա օգտագործման ընդարձակումն այս գոտում սահմանափակվում է:

Բարձր միջավայրապահպան ներուժով օժտված բնական համալիրները ձևավորում են տարածք, որտեղ առավելապես կատարվում է առկա կամ պլանավորվող օգտագործման զարգացում: Այդպիսի գոտու առանձնացումը չի նշանակում դրա տարածքում բնապահպանական քաղաքականությունից հրաժարում: Այն ենթադրում է, որ այստեղ բնօգտագործման կազմակերպումն ուղեկցվում է ողջ տարածքի համար ամբողջությամբ բնապահպանական կարգավիճակի փոքր ռիսկերով: Բնական համալիրների միջավայրապահպան առանձնահատկությունների կոնկրետ մակարդակի հաշվառմամբ՝ գոտու օգտագործման ձևը պետք է ունենա էքստենսիվ բնութագիր: Այդ գոտին նախատեսվում է բնակչության տնտեսական գործունեության իրականացման համար: Դրա տնտեսական և էկոլոգիական տարողունակությունն ու ռեսուրսային ներուժը պետք է ապահովեն տարածքի երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացումն առանց բնօգտագործման ինտենսիվ ձևերի և էկոլոգիական վիճակի վատթարացման ռիսկերի առաջացման:

Խախտված բնական համալիրները վերականգնման և բարելավման նպատակով անհրաժեշտաբար միավորվում են մեկ կատեգորիայի մեջ: Վերականգնման տևողությունը և տեխնոլոգիան կարող է լինել տարբեր կախված լանդշաֆտի խախտվածության մակարդակից ու բնութագրից: Ներկայումս խախտված լանդշաֆտները մեծամասամբ կարող են ինքնավերականգնվել մարդածին ծանրաբեռնվածության վերացման դեպքում: Ոչ մեծ խումբ են կազմում այն լանդշաֆտները, որոնց վերականգնման համար պահանջվում են հատուկ միջոցներ:

Տարածքի լանդշաֆտային մոտեցմամբ պլանավորման մշակման և իրագործման ժամանակ իրավական կարգավորումն իրականացվում է բնօգտագործման և առանձին տարածքների բնապահպանական կարգավիճակը կարգավորող չափորոշիչային փաստաթղթերով: Դրանք չափորոշիչային որոշումներ են ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով, որոնք կարգավորում են մարդու հարաբերությունները բնական միջավայրի հետ ամբողջությամբ [2]:

Լանդշաֆտային քաղաքականությամբ առարկայական մշակված տարածական պլանը հանդիսանում է հասարակական կյանքի էկոլոգիապես նպատակահարմար կազմակերպման գործիք, որի գլխավոր նպատակն է ապահովել բնության ներուժի երկարաժամկետ կենսունակության երաշխիք: Այդ մոտեցմամբ մշակված տարածական պլանը պետք է ապահովի բնական միջավայրի բարդ և համալիր փոխազդեցությունների պահպանությունը, ներառելով կենսաբաղադրիչն ամբողջ բազմատեսակ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործընթացներով:

Տարածական պլանավորման փաստաթղթերն անհրաժեշտ է կազմել հետևյալ փուլերով [1]՝

- տարածքի առկա իրավիճակի համալիր ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում,
- տարածքի հեռանկարային զարգացման գործողությունների ամբողջական համակարգի մշակում:

Տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում՝ տարածքների կազմակերպման խնդիրներին առնչվող բոլոր շահագրգիռ

մարմինների մասնակցությամբ, ուստի ապահովում են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց ինտեգրման պայմանները:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ տարածական պլանավորման շրջանակներն արդեն իսկ ընդգրկում են լանդշաֆտային միջոցառումների բովանդակային մասը և կարող են արձագանքել լանդշաֆտային խնդիրների ողջ բազմազանությանը՝ գիտելիքի ձեռքբերման, հեռանկարային նպատակների սահմանման և դրանց հասնելու միջոցառումների մշակման առումով: Հետևաբար լանդշաֆտի հայեցակարգից բխող մի շարք կարևոր գործառույթներ նպատակահարմար է իրականացնել տարածքային փոփոխությունների կառավարման գործիքներով՝ տարածական պլանավորման (տարածքային հատակագծման նախագծեր, գլխավոր հատակագծեր, գոտևորման և կառուցապատման նախագծեր և այլն) մշակման միջոցով: Հաշվի առնելով հասարակության տնտեսական և սոցիալական պահանջների շարունակական զարգացումները, ինչպես նաև տարածքի բնական, մշակութային և այլ նախադրյալները՝ պլանավորման միջոցով ամրագրվում են լանդշաֆտների այնպիսի փոփոխություններ, որոնք կանխատեսելի են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ քննարկվող թեմայի արդիականությունը պայմանավորված է տարածական պլանավորման մեջ կայուն զարգացման սկզբունքների ներդրման և գործնականում դրանց կիրառման անբավարարությամբ: Հայաստանի Հանրապետությունում՝ երկրաէկալոգիական հենքով, գիտական հիմնավորմամբ տարածաշրջանային կայուն զարգացման տարածական պլանավորում գործնականում կատարված չէ: Նախկինում՝ վարչա-հրամայական համակարգի համար մշակված բնօգտագործման կառավարման տեսություններն ու մեթոդները, շուկայական տնտեսության պայմաններում ոչ միշտ են ընդունելի: Հայաստանի Հանրապետությունում շուկայական համակարգի և կառավարման լծակների թերզարգացվածությամբ պայմանավորված լանդշաֆտային պլանավորման արտասահմանյան փորձի ուղղակի փոխառությունը շատ դեպքերում անընդունելի է: Այդ պատճառով տարածքի համաչափ և կայուն զարգացման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշակել տարածական պլանավորման տեսությունների ու մեթոդների գիտական գործիքակազմ, որոնք ըստ էության ընդհանուր գծերով առկա են տարածական պլանավորման լանդշաֆտային հայեցակարգում:

Գրականություն

1. Территориально-пространственное планирование - Ключевой инструмент развития и эффективного управления с уделением особого внимания странам с переходной экономикой. Организация объединенных наций Нью-Йорк и Женева, 2008 год.
2. Guiding Principles for Sustainable Development of the European Continent. Strasbourg. 2000, 2002.

ЛАНДШАФТНАЯ КОНЦЕПЦИЯ ПРОСТРАНСТВЕННОГО ПЛАНИРОВАНИЯ

Арутюнян Н., к.г.н., доцент, ЕГУ

Пространственное планирование является в значительной степени функцией государственного сектора, призванной влиять на будущее распределение деятельности на территориях. Оно призвано обеспечить более рациональную территориальную организацию использования земель и связь между видами землепользования, сбалансированность потребностей развития и необходимости охраны окружающей среды и достижение социальных и экономических целей. Пространственное планирование включает меры по координации и улучшению территориально-пространственного воздействия политики, проводимой в других отраслях экономики, для более равномерного распределения экономического развития на конкретной территории, которое в противном случае было бы подвержено влиянию лишь рыночных сил. Поэтому, территориально-

пространственное планирование является важным инструментом обеспечения устойчивого развития и повышения качества жизни.

LANDSCAPE CONCEPT OF SPATIAL PLANNING

Harutyunyan N., PhD, Associate Professor, YSU

Spatial planning is a function of the public sector, designed to influence the future distribution of activities in the territory. It is intended to provide more rational territorial organization of land use and the relationship between land uses, the balance of the needs of development and the need to protect the environment and achieve social and economic goals. Spatial planning includes measures to improve coordination and spatial effects of policies in other sectors of the economy to a more equitable distribution of economic development in a particular area, which otherwise would have been influencedonly by market forces. Therefore, spatial planning is an important tool for sustainable development and improved quality of life.

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՍԵՐՈԲ ՍՈՒՋՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմատեղագրական բաժին

Հիմնաբառեր. *տարաբնակեցում, համակարգ, կառավարում, օրինաչափություն, սկզբունք, ենթակարգություն, կառուցվածք, պլանավորում, սիներգետիզմ:*

Ժամանակակից տարածքային կառավարման համակարգում առանձնացվում են մի շարք մոտեցումներ՝ համակարգային, սիներգետիկ, քաղաքակրթական, բնապահպանական, մարտավարական, որոնք ուղղված են տարաբնակեցման համակարգերի կայուն զարգացման ապահովմանը: Այս մոտեցումները սկսել են ձևավորվել 20-րդ դարի երկրորդ կեսին՝ տեսությունների համակարգերի շրջանակներում: Այս շրջանում էլ ձևավորվեցին տարաբնակեցման համակարգերի իրականացման հիմնական սկզբունքները՝ համակարգայնությունը, կառուցվածքայնությունը, ենթակարգությունը նպատակայնությունը, ճկունությունը: Տարածքային կառավարման և պլանավորման տեսության և գործնական զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ սկզբունքները չեն բավարարում բոլոր պահանջները և չեն կարող ապահովել կայուն զարգացում: Վերջին ժամանակներս գիտության տարբեր ճյուղերում ձևավորվում է բարդ համակարգերի տեսությունների նոր մեթոդաբանական բազա, որի հետ կապված էլ քաղաքաշինության տեսության և դրա գործնականում իրականացման շրջանակներում հատուկ դեր են ստանում բարդ համակարգերի մեկնաբանումն ու զարգացման սկզբունքների և օրինաչափությունների համակարգումը: Դրանով հանդերձ, առաջնային է տարաբնակեցման համակարգերի կազմակերպման սկզբունքների և օրինաչափությունների ընդհանրացումը, որը հաշվի է առնում քաղաքաշինության տարբեր մոտեցումների մեթոդաբանական առանձնահատկությունները: Ըստ Համակարգերի տեսության՝ բազային մեթոդաբանության տարածքային տարաբնակեցման կառավարման և պլանավորման օրինաչափություններն ու սկզբունքները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խումբը կազմում են համակարգերի նպատակայնության օրինաչափությունները, երկրորդը՝ համակարգի կառուցման և իրականացման օրինաչափությունները, երրորդը՝ համակարգի զարգացման օրինաչափությունները: Օրինաչափությունների յուրաքանչյուր խմբին վերաբերվում են տարաբնակեցման տարածքային պլանավորման կազմակերպման մի շարք սկզբունքներ և մեթոդներ:

1.Տարաբնակեցման համակարգերի նպատակայնության սկզբունքներն ու օրինաչափությունները: Նպատակայնության օրինաչափությունների խումբը կազմում են նպատակների առաջացման և ձևավորման, նպատակների կառուցվածքի ենթակարգության ձևավորման օրինաչափությունները:

1.1. Տարաբնակեցման տարածքային ն շրջանակներում ճանաչման փուլից և ժամանակից նպատակի կախվածության օրինաչափությունը բացահայտվում է հետևյալ սկզբունքներով.

✓ Նախածրագրային վերլուծության, տարաբնակեցման համակարգի նախագծման և իրականացման նպատակի առանձնացում:

✓ Տարաբնակեցման համակարգի զարգացման պլանավորման ժամանակավոր նախադրյալներից նպատակի կախվածության հաշվում:

Տարածքների զարգացման առաջարկների, ծրագրերի, պլանների իրականացման քաղաքաշինության ապահովմանն ուղղված նպատակները նախատեսում են ազգային (տարածաշրջանային, տեղական), ռազմավարական, սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական, բնապահպանական և տարաբնակեցման համակարգի տարածքների և նրա տարրերի զարգացման հետ կապված այլ առաջարկների հետևում:

Նման ծրագրեր են՝ բնակավայրերի և բնակեցվող տարածքների ռազմավարական ծրագրերի զարգացումը, արտադրական ուժի զարգացման և տեղաբաշխման սխեմաները, վերոնշյալ մակարդակների և հարակից տարածքների տարածքային պլանավորման սխեմաներ, տարածքների զարգացման իրավական հասկացություններ և այլ փաստաթղթեր:

Տարածքային պլանավորման և կառավարման մեջ, որպես կանխատեսման մեթոդներ դիտարկվում են՝ փորձագետային գնահատականների, տարբերակների, «էներգարտադրական փուլերի» (Ն.Ն.Կոլոսովսկի, Теория экономического районирования), հաշվեկշռային, տեխնիկատնտեսական վերլուծության, մաթեմատիկական, էքստրապոլյացիայի, ճարտարապետական նախագծման վերլուծության, քարտեզագրական, համանման տարածքների վերլուծության և նախագծման պայմաններում բնակեցման տարածքի պատմական փոփոխությունների վերլուծության մեթոդները:

1.2 Տարաբնակեցման տարածքային կառավարման և պլանավորման շրջանակներում արտաքին և ներքին գործոնների նպատակների օրինաչափությունների կախվածությունը բացահայտվում է հետևյալ սկզբունքներով՝ նպատակի կախվածության որոշումը ենթակարգության համակարգի վերևում գտնվող տարաբնակեցման համակարգի գոյություն ունեցող դիրքից, սեփական վիճակից, աշխարհաքաղաքական, բնապահպանական, սոցիալ-տնտեսական, պատմամշակութային և այլ գործոններից:

1.3. Գլոբալ նպատակի ձևավորման և նրա նախագծման խնդիրների համատեղման անհրաժեշտության և հնարավորության օրինաչափությունները հիմնված են գլոբալ նպատակի նախագծման կամ կազմալուծման անհրաժեշտության վրա, որն ապահովում է նրա իրական լինելը: Այս հասկացության հիմնական նպատակը հանրապետության տարածքի կայուն զարգացումն է, որն էլ հիմնված է սոցիալական, տնտեսական, ֆինանսական և ներդրումային գործունեության համակարգվածության վրա: Վերջինիս իրականացման հիմնական չափանիշներն են՝ շրջանների բնական և տնտեսական, սոցիալական ներուժի հավասարակշռվածությունը, էներգախնայողական քաղաքականությունը փակ էներգետիկ ցիկլի կամ տարատեսակ ռեսուրսների համալիր օգտագործման և ներգրավման դեպքում, տարածքի տնտեսական և ներդրումային ներգրավումը:

Որպես տարաբնակեցման ժամանակակից տարածքային կառավարման և պլանավորման գլխավոր նպատակ ավելի հաճախ դիտարկվում է տարաբնակեցման համակարգի զարգացման գլոբալ և տարածքային կողմնորոշումը: Գլոբալ և տարածքային կողմնորոշմանն ուղղված նպատակները պետք է հաշվի առնեն քաղաքաշինության օբյեկտների, որպես տարաբնակեցման բարդ համակարգերի և

ենթակարգային կառուցվածքի զարգացման օրինաչափությունները:

Տարաբնակեցման համակարգի գլոբալ և տարածքային զարգացմանն ուղղված նպատակները պետք է հաշվի առնեն քաղաքաշինական օբյեկտների օրինաչափությունները: Տարածքային կառավարման և պլանավորման համաշխարհայնացման կողմնորոշումը հիմնվում է տարաբնակեցման համակարգի միջազգային կառուցվածքի որոշակի ռազմավարական դերերի վրա: Տվյալ կողմնորոշումն ուղղված է առաջինը՝ ազգային և տարածքային քաղաքական, տնտեսական, բնապահպանական, քաղաքաշինական ապահովությանը՝ ապահովելով երկրի և տարածաշրջանի տարաբնակեցման կայուն կառուցվածք և միջքաղաքային, տարածքային և ազգային ինտեգրող կապեր, երկրորդ՝ ուղղված է համաշխարհային տնտեսական և սոցիալ-բնապահպանական կառուցվածքում տարաբնակեցման համակարգի տարածքի մրցողունակության ապահովմանն ու մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Տարածքային կառավարման և պլանավորման տարածաշրջանային կողմնորոշումը հիմնվում է համաշխարհային ուրբանիզացման պայմաններում տարաբնակեցման համակարգի տարածքի անվտանգության հարցերի վրա:

2.Տարաբնակեցման համակարգի կառուցվածքի սկզբունքներն ու օրինաչափությունները: Համակարգի կառուցվածքի օրինաչափությունների խումբը կազմում են ամբողջի և մի մասի փոխհարաբերությունների, համակարգի հիերարխիկ կարգավորումների և համակարգի իրականացման օրինաչափությունները:

2.1. Ամբողջի և մի մասի փոխհարաբերությունների օրինաչափությունները ներառում են համակարգի ամբողջականության, էմերջենտության և ներառականության օրինաչափությունները:

2.1.1. Տարաբնակեցման տեսությունում համակարգի ամբողջականության օրինաչափությունը ապահովում է տարաբնակեցման համակարգի ամբողջականությունը: Որպես անհրաժեշտ սկզբունքներ դիտարկվում են համակարգվածության, տարաբնակեցման համակարգի կառուցվածքայնության սկզբունքները:

2.1.2. Տարաբնակեցման համակարգի էմերջենտության օրինաչափությունը արտահայտվում է համակարգում նոր հատկանիշների առաջացմամբ, որոնք բացակայում են նրա ենթահամակարգերում և տարրերում, ինչպես նաև տարրերում նոր հատկանիշների առաջացմամբ, որոնք բացակայում են նրանցում համակարգից դուրս:

2.1.3. Տարաբնակեցման ներառական համակարգի օրինաչափությունը կապված է համակարգի ճարտարապետական պլանավորող ամբողջության պահպանմանն ուղղված գործոնների հետ: Տվյալ պարագայում սկզբունքների խումբը կազմում են տարրերի անհամասեռության և հակասականությունը հաշվի առնելու սկզբունքը:

2.2. Համակարգի ենթակարգային դասակարգման օրինաչափությունները բնութագրվում են տարաբնակեցման համակարգի և նրա միջավայրի, ենթահամակարգերի և միևնույն մակարդակի վրա գտնվող տարաբնակեցման այլ համակարգերի փոխազդեցություններով: Նման փոխազդեցությունները ենթադրում են նոր օրինաչափությունների և սկզբունքների առաջացում:

2.2.1. Տարաբնակեցման համակարգի հեռահաղորդակցության օրինաչափությանը բնորոշ է նման համակարգերի ներկառուցողականությունը, ճկունությունն ու հրապարակայնությունը: Ներկառուցողականության սկզբունքը հիմնված է քաղաքաշինական օբյեկտի և ըստ ենթակարգության ավելի բարձր և ավելի ցածր գտնվող տարաբնակեցման համակարգերի փոխհարաբերությունների վրա:

2.2.2. Ենթակարգության օրինաչափությանը բնորոշ է տարրերի և կապերի հիերարխիայի սկզբունքներին հետևելը: Որպես այս խմբի մեթոդներ հարկ է առանձնացնել հիմնակմախքների և կառուցվածքների գործառական պլանավորող կապերի և տարրերի հիերարխիայի, ինչպես նաև

տարաբնակեցման համակարգի գործառնական ենթակարգային կախվածության հաստատման մեթոդները, հիմնակմախքների, համակարգերի կապերի և տարրերի մոդելավորման մեթոդը՝ հաշվի առնելով նրանց կախվածությունը և ենթակայությունը ենթակարգային կառուցվածքներում:

2.3. Համակարգի իրականացման օրինաչափություններն են՝ բազմազանության անհրաժեշտությունը և պոտենցիալ արդյունավետությունը:

2.3.1. Տարաբնակեցման համակարգի արդյունավետության օրինաչափությունը բնորոշում է ,ժամանակից կախում չունեցողե համակարգի առավելագույն հնարավորություններն ու արտաքին պայմանները (Լ.Ֆոն Բերտալանֆի, Общая теория систем): Այս օրինաչափությունը հիմնված է տարաբնակեցման համակարգի առավելագույն, սահմանային սկզբունքների սահմանման վրա: Որպես այս խմբի մեթոդներ դիտարկվում են տարաբնակեցման համակարգի, նրա հիմնակմախքների, տարրերի և կապերի զարգացման առավելագույն ցուցանիշների սահմանման մեթոդը, տարաբնակեցման համակարգի, նրա հիմնակմախքների, տարրերի և կապերի մոդելավորման մեթոդը:

2.3.2. «Անհրաժեշտ բազմազանության» (ՈՒ.Ռ.Էշբի, Общая теория систем) **օրինաչափությունը** հիմնված է համակարգի առավելագույն իրականացման անհրաժեշտության վրա: Այս օրինաչափության սկզբունքներից են այլընտրանքի, բազմազանության ձևավորման, ստանդարտացման և տիպավորման չափավոր կիրառումը: Որպես այս խմբի մեթոդներ դիտարկվում են տարաբնակեցման համակարգի զարգացման և գործարկման այլընտրանքային ուղիների առանձնացումն ու մոդելավորումը, տարաբնակեցման համակարգի կապերի և տարրերի բազմազանության առանձնացումն ու մոդելավորումը, տարածքային գոյացությունների, տարրերի և կապերի տիպային կիրառումը, ընդհանուր և տեղային նորմատիվների կիրառումը:

2.3.3. «Պոտենցիալ արդյունավետության» օրինաչափությանն են վերագրվում (Բ.Ս.Ֆլեյշման, Основы системалогии) կենսունակության, վստահելիության, համակարգի հարմարվողականության, արդյունավետության գնահատման չափանիշների սահմանման սկզբունքները: *Կենսունակության սկզբունքը* հիմնված է պարամետրերի նախագծային նշանակությունների և արտաքին ,միջավայրին, տարաբնակեցման ավելի բարձր, ավելի ցածր կամ միևնույն մակարդակի վրա գտնվող համակարգերի հետ փոխհամաձայնեցվածության վրա: *Ապահովության սկզբունքը* հիմնված է տարաբնակեցման համակարգի գործելու ունակության ապահովանն այն դեպքում, երբ շարքից դուրս են գալիս համակարգի մեկ կամ մի քանի տարրերն ու կապերը, նախատեսված ժամանակում համակարգի չափորոշիչների և նախագծային նշանակությունների պահպանման վրա: *Հարմարվողականության սկզբունքը* ուղղված է քաղաքաշինական համակարգի հարմարեցմանը անընդհատ փոփոխվող արտաքին միջավայրին:

3. Տարաբնակեցման համակարգի զարգացման օրինաչափություններն ու սկզբունքները: Օրինաչափությունների այս խումբը կազմում են համակարգի պատմականության և ինքնակազմակերպման օրինաչափությունները: Առաջին խմբի օրինաչափություններն են ալիքաձև պարբերական զարգացման սկզբունքը, համակարգի և համակարգի իներցիոն զարգացումը, իսկ ինքնակազմակերպման օրինաչափություններն են սիներգետիկայի կանոններն ու սկզբունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Волкова В.Н., Денисов А.А. Теория систем, Учеб. Пособие, М. Высшая школа, 2006, 511 с.
2. Перцик Е.Н. Районная планировка (территориальное планирование). Учебное пособие для студентов вузов. М., Гардарики, 2006, 398 с.
3. Родонов И.Б. Теория систем и системный анализ. URL: http. //victor-safronov.narod. ru/systems-ana(ysis/lectores/

ПРИНЦИПЫ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ СИСТЕМЫ РАССЕЛЕНИЯ

Суджян С., к.г. н., военно-топографический отдел ГШ ВС РА

Закономерности, принципы и методы устойчивого развития территориально-планировочных систем расселения на основе методологической базы теории сложных систем важны для дальнейшего изучения принципов и методов организации и управлении систем расселения в рамках современных интеграционных подходов к территориальному планированию. К таким подходам следует отнести цивилизационный, экологический, стратегический, синергетический и ноосферный. Данные подходы должны быть ориентированы на устойчивое развитие систем расселения с учетом уникальности их территорий и обеспечения процессов интеграции. Результаты работы могут быть использованы также при формировании методических рекомендаций для разработки схем территориального планирования.

THE PRINCIPLES OF TERRITORIAL MANAGING OF SETTLEMENT SYSTEMS

SUJYAN S., PhD on geography, Department of military topography of the General Staff of the RA

The regularities, principles and methods of the stable development of territorial planning and organizing are essential for the studies of modern settlement systems for the peculiarities of their development and clarification of directions. The current study will serve as a basis for further research of the principles and methods of settlement systems. The following approaches should tend to the development of the settlement system taking into account the peculiarities of areas and ensuring of the integration processes. The results of the work can be used during the methodological development of patterns of territorial planning.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԳՈՀԱՐ ԵՂՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան

Հիմնաբառեր. *սոցիալ-տնտեսական զարգացում, ժողովրդագրական իրավիճակ, կենսամակարդակ, աշխատուժի վերականգնման հիմնախնդիրներ:*

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում կարևոր նշանակություն են ստանում ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնահարցերը, որոնք խիստ սրվել են ամբողջ հանրապետությունում և նրա առանձին տարածաշրջաններում՝ մարզերում, որտեղ դրանք դրսևորվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ գծերով՝ պայմանավորված մարզերի սոցիալ-տնտեսական և բնաշխարհագրական պայմաններով ու առանձնահատկություններով:

Վերջին 25 տարիները Հայաստանի և տարածաշրջանների համար դարձան քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումների ժամանակաշրջան: Այդ ընթացքում տեղի ունեցան քաղաքական և սոցիալ-տնտեսական մի շարք իրադարձություններ, որոնք շրջադարձային փոփոխություններ առաջ բերեցին հանրապետության և նրա մարզերի տարածքա-արտադրական համակարգերում, զգալի տեղաշարժեր՝ բնակչության թվաքանակի ու կառուցվածքի, տեղաբաշխման ու տարաբնակեցման, ժողովրդագրական իրավիճակի և այլ ոլորտներում: Բազում անցանկալի երևույթների և զարգացումների իրական հետևանքը եղավ այն, որ 21-րդ դար Լոռու մարզը մուտք գործեց քայքայված տնտեսությամբ, գործազրկության բարձր և աշխատանքային ռեսուրսների զբաղվածության

ցածր մակարդակներով: Մարզն այժմ էլ գտնվում է սոցիալ-տնտեսական ծանր վիճակում, դեռևս վերականգնված չեն արտադրական հզորությունները և հիմնականում լուծված չէ աշխատանքային ռեսուրսների զբաղվածության հարցը, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝

1) առկա արդյունաբերական ձեռնարկությունների՝ նոր շուկայական համակարգում ընդգրկվելու համար սպառողական շուկայի ձեռքբերման դժվարություններով, պետական օժանդակության բացակայությամբ կամ ցածր մակարդակով,

2) մարզի արդյունաբերության զարգացման ընդհանուր ծրագրի բացակայությամբ: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավության պատճառով նախկինում գործող ձեռնարկությունների գործարկման, առավել ևս նորերի կառուցման անհնարինությամբ, նոր սարքավորումների և առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակով,

3) շուկայական տնտեսության մրցակցության պայմաններում գործարարությամբ զբաղվելու, ինչպես նաև ներդրումային բարենպաստ դաշտի բացակայությամբ,

4) մարզի բնական հարուստ ռեսուրսների օգտագործման շատ ցածր մակարդակով:

Տնտեսության կազմալուծման հետևանքով վերը նշված բացասական զարգացումները վիթխարի ազդեցություն թողեցին և շարունակում են թողնել Լոռու մարզի բնակչության կենսամակարդակի, տնտեսության և հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա, ի հայտ բերելով հրատապ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հանդիսանում են մարզի զարգացումը կասեցնող իրական նախադրյալներ: Դրանց թվում առավել սրությամբ աչքի են ընկնում.

▪ Զբաղվածության շատ ցածր մակարդակը և մեծ չափերի հասնող գործազրկությունը, որոնք նպաստել են բնակչության սոցիալական և ժողովրդագրական լարվածության մեծացմանը: Այսօր գործազրկության մակարդակով՝ 19,2%, Լոռու մարզը զիջում է Երևանին, Շիրակի և Կոտայքի մարզերին, իսկ քաղաքային գործազրկությամբ՝ 29,6%[4], զիջում է միայն Շիրակի մարզին:

▪ Բնակչության սոցիալական պայմանների սրումը, կենսամակարդակի անկումը և աղքատության աճը:

▪ Աշխատատեղերի բացակայության և գործազրկության պատճառով մեծ չափերի հասնող արտագաղթը և դրա հետևանքով մարզի երիտասարդ բնակչության՝ հիմնական աշխատուժի հսկայական կորուստները, որը կրում է ինչպես սոցիալ-ժողովրդագրական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթ:

Առաջին հերթին այն ազդում է բնակչության գենոֆոնդի վրա, ինչի արձագանքը կզգացվի տարիներ հետո (լինելով համապետական խնդիր, շոշափում է համազգային շահեր և դառնում ազգային անվտանգության հիմնախնդիր): Հարցը նրանում է, որ արտագաղթի հետևանքով խիստ նվազել է մարզի բնակչության բացարձակ թվաքանակը (1990-2014թթ.-ի ընթացքում նվազել է մոտ 132,6 հազ. մարդով) [1;6]: Արտագաղթողները հիմնականում չեն վերադառնում և նրանց մեծ մասին սպասվում է ասիմիլյացիա՝ ձուլում այլ ազգերի հետ:

▪ Երիտասարդ տղամարդկանց արտագաղթի հետևանքով արդեն վտանգված է աշխատուժի վերականգնման խնդիրը: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների, արտագաղթողների հատկապես առաջին ալիքի մեծ մասը կազմել են աշխատունակ, երիտասարդ տարիքի քաղաքաբնակ տղամարդիկ: Մի կողմից դա բացասաբար ազդեց բնակչության սեռատարիքային կառուցվածքի, ամուսնությունների, ծնելիության և բնական աճի մակարդակների վրա, մյուս կողմից՝ քաղաքները զրկվեցին երիտասարդ տղամարդ աշխատուժից: Նրանք հեռանալով, փաստորեն չեն մասնակցում ազգային տնտեսության զարգացմանը և իրենց իսկ երկրի ՀՆԱ-ի ստեղծմանը:

▪ Լոռու մարզում ստեղծված ժողովրդագրական անմխիթար իրավիճակը, Ժողովրդագրական գործընթացների խիստ անբավարար մակարդակները: Արտագաղթի հետևանքով, առավելապես երիտասարդ տղամարդկանց արտահոսքով խախտվել է մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի համամասնությունը, ինչով պայմանավորված՝ մարզում նվազել են ամուսնությունները, ծնունդները, դրանց փոխարեն ավելացել են ամուսնալուծությունները և մահացությունները, որոնց պատճառով խիստ ընկել է բնական աճի մակարդակը: Այսպես, 2001թվին մարզում բնական աճի մակարդակը կազմել է 2.5‰[1], 2014թվին՝ 1.5‰[2]:

▪ Ժողովրդագրական անբավարար գործընթացների (քիչ ամուսնությունների, ցածր ծնելիության և այլն) պատճառով երեխաների տեսակարար կշռի կրճատում, որի հետևանքով վտանգված է սերունդների համաչափ հերթափոխման գործընթացը:

▪ Արտագաղթի հետևանքով բարձր որակավորման մասնագետների կորուստը: Աստիճանաբար մարզը զրկվում է իր աշխատանքային որակյալ կադրերից, որոնց մեծ մասը, հաստատվելով այլ երկրներում, այլևս չի վերադառնում: Դրա իրական հետևանքն այն է, որ խախտվել է որակյալ աշխատուժի վերարտադրության բնականոն ընթացքը, ընկել են աշխատանքի որակական ցուցանիշները, արտադրության կազմակերպման մակարդակը, արտադրողականությունը և մրցունակությունը:

▪ Մարզի բնակչության գիտական կադրերի արտահոսքը: Ի սկզբանե արտագաղթն ու դեպի մայրաքաղաք հոսքն ընդգրկել է բնակչության տարբեր շերտեր՝ սկսած թերի միջնակարգ կամ միջնակարգ կրթություն ունեցող բնակչությունից մինչև գիտական աստիճան ունեցողները:

▪ Ընտանիքի միջին մեծության փոքրացումը:

▪ Շարունակվող արտագաղթի և ծնելիության անկման հետևանքով մարզում ի հայտ է եկել մանկապարտեզների, դպրոցների և ԲՈՒՀ-երի՝ համապատասխան կոնտինգենտով ապահովման հիմնախնդիրը: Գնալով նվազել է մանկապարտեզ և դպրոց հաճախող երեխաների թվաքանակը (1997թ. դպրոց հաճախող 57952 աշակերտների դիմաց 2013-14 ուս. տարում դպրոց է հաճախել 30055 աշակերտ[2], իսկ դպրոցների թիվը 178-ից դարձել է 168): Ժողովրդագրական վատթար իրավիճակով պայմանավորված՝ աշակերտների թվաքանակի նվազումն իր հերթին նվազեցրել է ուսանողների թվաքանակը, որը վերադրվելով արդյունաբերական ձեռնարկությունների փակման պատճառով պահանջարկի բացակայությանը, վտանգի տակ է դրել արտադրական և կիրառական-բնագիտական որոշ մասնագիտությունների գծով մարզի բուհերում մասնագետների վերարտադրության խնդիրը (շինարար-ճարտարագետների, մեխանիկ-ճարտարագետների, ֆիզիկոսների, քիմիկոսների և այլն): Նշենք, որ մարզի գլխավոր երկու ԲՈՒՀ-երը՝ ՎՊՀ-ն և ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղը, ինչպես նաև միջին-մասնագիտական ուսումնական հաստատությունները ապահովում էին ՀՀ հյուսիսային շրջանների կրթական ոլորտին և տնտեսության տարբեր ճյուղերին որակյալ մասնագետներով:

▪ Արտագաղթը և ցածր ծնելիությունը մեծ չափով հակասում են նաև երկրի պաշտպանունակության և ռազմական հզորության շահերին: Այն ընդգրկում է առաջին հերթին զինակոչային տարիքի երիտասարդությանը, որի թվաքանակը ևս նվազել է: Առաջիկա տարիներին ավելի ծանր վիճակ է սպասվում, որովհետև զինակոչային տարիք են մուտք գործել 1990-ական թթ. ծնվածները, որոնց թվաքանակը խիստ քիչ է:

▪ Քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակների հարաբերակցության փոփոխումը՝ գնալով կրճատվել է նրանց տարբերությունը: Այսպես, եթե 1989 թվին մարզում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 67.9% էր[1], ապա 2014 թվին՝ 58.4%[3]: Սա պայմանավորված է մի կողմից մեծ թվով քաղաքաբնակ գործազուրկների արտագաղթով, մյուս կողմից՝ մարզի սահմաններում բնակչության ոչ ռացիոնալ ներքին տեղաշարժերով՝ քաղաքից գյուղ ուղղությամբ, ինչը մարզի հեռանկարային

զարգացման տեսանկյունից բացասական երևույթ է, որովհետև գյուղատնտեսությունը ձեռք է բերում ոչ թե ապրանքային, այլ բնամթերային ուղղվածություն:

Մարզում տնտեսության վերականգնման և հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ է բնակչության զբաղվածությունը բարձրացնելու նպատակով տնտեսության բոլոր ոլորտներում իրականացնել արմատական բարեփոխումներ, ինչը զգալի չափով կմեղմացնի սոցիալական լարվածությունը և կնպաստի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Տնտեսության, հատկապես արդյունաբերության ընդլայնումն իր հետ կբերի աշխատուժի պահանջարկի մեծացում, գործազրկության նվազեցում, արտագաղթի կասեցում, աղքատության մեղմացում, սոցիալական պայմանների բարելավում, որոնց վերջնական արդյունքում կդիտվի բնակչության թվաքանակի աճ, վերարտադրության գործընթացների ակտիվացում, ժողովրդագրական իրավիճակի կարգավորում:

Մարզի տնտեսական բարեփոխման նպատակների իրականացման համար առաջարկում ենք սոցիալ-տնտեսական մի շարք միջոցառումներ.

1) *Աշխատանքային ռեսուրսների նպատակային օգտագործում*: Լոռու մարզի տնտեսության տարածքային զարգացման, տեղաբաշխման, արտադրական հզորությունների վերականգնման կարևորագույն խնդիր է աշխատանքային ռեսուրսների նպատակային օգտագործումը, որը վճռական դեր կխաղա երիտասարդ բնակչության արտագաղթը կասեցնելու գործում: Քանի որ աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը բաժին են ընկնում մարզկենտրոն Վանաձորին և մյուս քաղաքներին, ուստի խնդրի լուծման համար կարևոր քայլ կլինի հատկապես աշխատատար արտադրական համալիրների վերագործարկումը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը:

2) *Առկա բնական ռեսուրսների, հատկապես օգտակար հանածոների արդյունավետ օգտագործում*: Սա հիմք կհանդիսանա մարզի տնտեսության, առավելապես արդյունաբերության զարգացման համար: Մարզում կան հանքային ռեսուրսների բավարար պաշարներ (հիմնականում մետաղային և շինարարական՝ պղինձ, բազմամետաղներ, ոսկի, գրանիտ, բազալտ, տուֆ, հրակայուն կավեր, հանքային ներկեր և այլն): Բնականաբար, այսօր ֆինանսական սուղ միջոցների պատճառով այդ հանքանյութերի արդյունահանման հիման վրա հնարավոր չի մարզում կազմակերպել համապատասխան լրիվ ցիկլի արտադրություններ: Պարզապես, կարելի է տեղերում կազմակերպել հումքի արդյունահանման և նախնական վերամշակման կենտրոններ, ինչը որոշ չափով կլուծի զբաղվածության հիմնախնդիրը: Դրա նախատիպն արդեն կա Թեղուտում և Արմանիսում:

3) *Գյուղատնտեսական հումքի վերամշակման տեղական կենտրոնների ստեղծում* և դրա հիման վրա սննդարդյունաբերության մի շարք ենթաճյուղերի զարգացում: Կարելի է իրար մոտ գտնվող գյուղական համայնքների համար ստեղծել նմանատիպ կենտրոններ, ինչը մասամբ կլուծի գյուղական համայնքների բնակչության զբաղվածության խնդիրը:

4) *Տարաբնակեցման համակարգի համամասնական զարգացում*: Հարկավոր է սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման շնորհիվ զարգացնել փոքր և միջին բնակավայրերը: Անհրաժեշտ է թույլ զարգացած ծայրամասերում տնտեսական գործունեության ծավալում և բնակչության կազմակերպված վերաբաշխում՝ կենտրոնից դեպի ծայրամասեր: Հույժ կարևոր են սահմանամերձ, բարձրալեռնային և նախկինում լքված գյուղերի վերականգնումն ու տարածքների արդյունավետ օգտագործման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

5) *Տրանսպորտային ենթակառուցվածքների և ճանապարհների բարելավում*, տրանսպորտային փոխադրումների կանոնավորում և ընդլայնում: Սա հնարավորություն կտա մեծացնել կապերը համայնքների, նախկին շրջկենտրոնների և մարզկենտրոնի միջև:

6) Սահմանամերձ, ինչպես նաև ժողովրդագրական վատ իրավիճակներ ունեցող համայնքների բնա-

կիչներին՝ *հարկերից ազատում* և արտոնյալ պայմաններով՝ *երկարաժամկետ վարկերի տրամադրում*:
7) *Զբոսաշրջության*, դրա հետ էլ՝ *սպասարկման ոլորտի զարգացում*, որոնք ևս աշխատատեղերի բացման ասպարեզ են և կարևոր գործոն՝ մարզի հեռանկարային զարգացման համար:

Ինչ խոսք, Լոռու մարզը ՀՀ ինքնատիպ և սոցիալ-տնտեսական հզոր ներուժ ու զարգացման հեռանկարներ ունեցող տարածաշրջաններից է, որտեղ սոցիալ-տնտեսական միջոցառումների իրականացումն իր դրական հետևանքները կունենա տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի, ժողովրդագրական միտումների և իրավիճակի վրա:

Հիմնախնդիրների լուծմանը կարող են նպաստել նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կողմից տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ճիշտ քաղաքականության իրականացումը:

Գրականություն

1. Եղյան Գ., Լոռու մարզի ժողովրդագրական իրավիճակի աշխարհագրական վերլուծությունը, Ե.,, շ2011:
2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2012, Ե., 2012:
3. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2014, Ե., 2014:
4. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2009-2013թթ., Ե., 2014:
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվարին, Ե., 2015:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, Ե., 2015:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ЛОРИЙСКОГО МАРЗА И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Егян Г., к. г. н, Ванадзорский гос. у-т им. О. Туманяна

В данной статье рассмотрены социально-экономические и демографические проблемы Лорийского марза, представлены причины их возникновения, а также предложены возможные пути преодоления сложившегося положения.

LORI REGION DEMOGRAFHIC AND SOCIO-ECONOMIC PROBLEMS AND THEIR POSSIBLE SOLUTION WAYS

Yeghyan G., PhD, Vanadzor State University after H.Toumanyan

The article touches upon some problematic issues related to socio-economic and demographic state of population in Lori Region. We've discussed the existing problem as a whole as well as stated some probable solution ways.

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ, տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

Հիմնաբառեր. *տարածական զարգացում, վարչական տարածք, միջհամայնքային համագործակցություն:*

Տարածական զարգացումը վերջին տարիներին ինչպես երկրների միջև, այնպես էլ տարբեր պետությունների ներսում ձեռք է բերել ընդլայնման միտումներ: Հարկ է ընդգծել, որ տարածական զարգացման ռազմավարությունները մշակվում են որոշակի տարածքների համար՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ տարածքը գտնվում է որևէ երկրի ներսում, թե ընդգրկում է ավելի լայն շրջանակներ[1]:

Տարածական զարգացման ռազմավարությունների մշակման ընթացքում կարևորություն են տրվում ազգային, տարածքային և տեղական հիմնահարցերի հետևյալ ուղղություններին՝ տրանս-պորտային մատչելիություն, ենթակառուցվածքներ, շրջակա միջավայր, տնտեսաաշխարհագրական առանձնահատկություններ և այլն: Այսինքն՝ տարածական զարգացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ կարևորություն է տրվում որոշակի տարածքի սոցիալ-տնտեսական հնարավորություններին, անկախ տվյալ տարածքի վարչատարածքային բաժանման մեխանիզմից: Դա նշանակում է, որ ՀՀ-ում տարածական զարգացման ծրագրերի կազմման ընթացքում պետք է իրականացվի տնտեսական ու աշխարհագրական գործոնների հետ կապված ուսումնասիրություններ, որի ընթացքում վարչական սահմանները՝ լինի դա համայնքի թե մարզի, չպետք է հանդիսանան քննարկման առարկա: Հետևաբար վարչատարածքային բաժանման համակարգը, որը մեր հանրապետությունում ունի բազմաթիվ խնդիրներ՝ թե համայնքային, թե մարզային կտրվածքով, ըստ էության, չպետք է դերակատարում ունենա որոշակի տարածքի զարգացման ծրագրերի մեջ: Ի հակադրություն այս մոտեցման, ՀՀ-ում իրականացված բոլոր ծրագրերը վերաբերվել են միայն վարչական տարածքների՝ մարզերի կամ համայնքների: Սակայն տարբեր վարչական սահմաններով առանձնացված մարզերը կամ համայնքները կարող են ունենալ զարգացման միևնույն հնարա-վորությունները, մասնավորապես՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, հանքարդյունա-բերության, զբոսաշրջության ոլորտներում, որոնք տարածական զարգացման ծրագրերով դիտարկելու դեպքում վարչական սահմանները կանտեսվեն և համանման ռեսուրսները կմիավորվեն, ապահովելով մասշտաբի էֆեկտ:

Տարածական զարգացման հիմքում դրվում է որոշակի տնտեսական կամ աշխարհագրական տարածքի սուբյեկտների միջև համագործակցության սկզբունքը: Եթե այդ սուբյեկտները տիրապետում են այնպիսի ռեսուրսների, որոնք ապահովում են համագործակցության լայն դաշտ, ապա անհրաժեշտ է անտեսել վարչական սահմանները և մշակել տարածական զարգացման ծրագրեր: Մեր հանրապետությունում կարող են լինել տարբեր մարզերի վարչական սահմաններում գտնվող համայնքներ, որոնք կունենան այնպիսի ռեսուրսներ ու զարգացման հնարավորություններ, որ համադրելի են միմյանց ու կարող են ապահովել սոցիալ-տնտեսական զարգացման ավելի մեծ արդյունավետություն: Մասնավորապես՝ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի բազմաթիվ համայնքների համար գյուղատնտեսությունը կարող է հանդիսանալ գերակա ճյուղ և հնարավոր է այդ

[1] COWI The Planning Model, Volume 2, Spatial Development Framework, p. 4.

համայնքների համար մշակել գյուղատնտեսության զարգացման միասնական ծրագիր: Իսկ նույն մարզերի այլ համայնքների համար (օրինակ Արարատի մարզի այն համայնքները, որոնք վարչական առումով սահմանակից են զբոսաշրջային ռեսուրսներով հարուստ Վայոց ձորի մարզի) հետ գյուղատնտեսական միասնական ծրագրի մեջ ընդգրկվելը մեծ արդյունավետություն չի ապահովի:

Տարածական զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է ներդնել նպատակային միջհամայնքային միավորումների ձևավորման համակարգ՝ տարբեր մարզերում գտնվող համայնքներին օրենսդրորեն թույլատրելով միմյանց հետ կազմելու նպատակային միություններ, այդ կառույցներին տրամադրելով նույնիսկ որոշակի լիազորություններ: Նպատակային միջհամայնքային միավորման գործունեությունն ուժեղացնելու նպատակով պետությունը կարող է պատվիրակել նաև որոշակի լիազորություններ՝ դրանք վերցնելով տարածքային կառավարման մարմիններից: Դա կարող է հանգեցնել մարզերի՝ որպես վարչատարածքային միավորների դերի նվազեցմանը և տեղական ինքնակառավարման երկրորդ՝ ավելի ուժեղ մակարդակի ձևավորմանը: Տարածական զարգացման այս մոդելի կիրառմամբ հնարավոր կլինի ոչ միայն ապահովել զարգացման նոր հնարավորություններ, այլև աստիճանաբար իրականացնել վարչատարածքային բարեփոխումներ, որոնք այսօր հրատապ են մեր հանրապետության համար:

Տարածական զարգացման քաղաքականությունը նպաստում է նաև ինտեգրացիոն գործընթացներին: Եվրոմիության երկրների ինտեգրացիոն գործընթացների խորացմանը մեծ չափով նպաստել են հենց տարածական զարգացման ծրագրերը: Եվրոմիության ծրագրային քաղաքականության մշակողները փաստում են, որ եվրոպական տարածական զարգացման հեռանկարների վերաբերյալ քաղաքական քննարկումները կարևոր էին եվրոպական ինտեգրացիայի առաջընթացի համար[1]: Այս համատեքստում պետք է նշել, որ եվրոպական երկրների հարաբերությունների հիմքում դրված է եղել նաև գիտական գործունեությունը[2]: Ակնհայտ է, որ տարածական զարգացման քաղաքականությունը հանգեցնում է համագործակցության նոր դրսևորումների, որի դեպքում վարչական սահմանների գործոնը գրեթե անտեսվում է: Եթե մեր հանրապետությունում մարզերի կամ համայնքների վարչական բաժանումը խնդիրներ է առաջացնում կառավարման տեսանկյունից, ապա տարածական զարգացման ծրագրերի մշակման ու կենսագործման պարագայում կարող են ձևավորվել նոր հարաբերություններ, որոնք ուղղված կլինեն որոշակի տարածքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ինչպես արդեն նշվեց, տարածական զարգացման համար կարևոր գործոններ են հանդիսանում տնտեսաաշխարհագրական ռեսուրսները: Տարածական զարգացումն իր բնույթով տարբերվելով վարչական միավորների զարգացումից, ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք բնորոշում են այդ գործընթացը: Մասնավորապես.

- Կարող է միավորել ենթակառուցվածքներով իրար հետ փոխկապված համայնքներ:
- Կարող է ձևավորվել համագործակցություն սուբյեկտների միջև (օրինակ՝ համայնքների) միայն նպատակային ծրագրերի շուրջ, իսկ միավորումներ տեղի չունենա:
- Կարող է ձևավորվել համագործակցություն տեղական մակարդակներում՝ փոխհարաբերությունների մեջ չմտնելով տարածքային կառավարման մարմինների հետ:

Այստեղից ակնհայտ երևում է, որ նկարագրված գործընթացների իրականացումը կարող է

[1] European Spatial Development Perspective, Towards Balanced and Sustainable Development of the Territory of the European Union, Potsdam, 10-11 May 1999,p. 29

[2] Peters, M. A. (2010) *The Rise of Global Science and the Emerging Political Economy of International Research Collaborations,* in S. Marginson, P. Murphy and M. Peters (eds.) *Global Creation: Space, Mobility and Synchrony in the Age of the Knowledge Economy,* New York: Peter Lang, p. 239

վերաբերվել այնպիսի համայնքների, որոնք պարտադիր չէ, որ լինեն միևնույն մարզից: Նշված պայմանները բնորոշ են միջհամայնքային համագործակցության սկզբունքներին, հետևաբար տարածական զարգացումը կարելի է դիտարկել որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման միջոց:

Միջհամայնքային համագործակցությանը վերաբերող տարածական զարգացման ծրագրերը մեր հանրապետությունում կարող են դրսևորվել նաև կլաստերների տեսքով՝ միավորելով, օրինակ, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը և գինեգործությունը: Այսպիսի ծրագրի հնարավորություն է ընձեռում զբոսաշրջության հարավային միջանցքի նախագիծը[1], որի դեպքում Սյունիքի, Վայոց ձորի և Արարատի մարզերի մի շարք համայնքների համար միջհամայնքային համագործակցության հիմքում կարող է դրվել զբոսաշրջային, գյուղատնտեսական և գինեգործության կլաստերի ձևավորման գործոնը:

Ինչպես երևում է, միջհամայնքային համագործակցությունը տարածական զարգացման ծրագրերի միջոցով կարելի է դնել կառավարման նոր մակարդակի վրա, որտեղ ընդգծված կլինեն ոչ թե ներկայում գործող տեղական ինքնակառավարման ու տարածքային կառավարման սկզբունքները, այլ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: Այսինքն տարածական զարգացման սկզբունքները մի կողմից կբարձրացնեն սուբյեկտների միջև համագործակցության արդյունավետությունը, մյուս կողմից կնվազեցնեն այդ համագործակցության ընթացքում վարչատարածքային բաժանման գործոնների դերը: Դա էականորեն կարող է փոփոխության ենթարկել հանրային կառավարման սկզբունքները և գործընթացները, քանի որ մեր հանրապետությունում այդ գործընթացների մեջ մինչ այժմ գերիշխող են եղել վարչատարածքային սահմաններում գործող կառավարման համակարգերը: Նոր, ավելի արդյունավետ հարաբերությունների ձևավորումից հետո վարչատարածքային բաժանման գործող մեխանիզմներն անպայման կվերանայվեն և տեղական ինքնակառավարման ու տարածքային կառավարման քաղաքականությունը կձևավորվի համագործակցության առավել արդիական համակարգերի սկզբունքներին համապատասխան:

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССА РАЗРАБОТКИ ПОЛИТИКИ ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ В РА

Хачикян С., к.э.н. доцент, АГЭУ, Ехегнадзорский филиал

Современное административно-территориальное деление нашей республики является причиной появления некоторых проблем, которые связаны с расширением возможностей сотрудничества на региональном уровне. Во избежание проблем можно внедрить принципы территориального развития, в рамках которого формируются планы развития, в которых игнорируется фактор административных границ. С помощью планов территориального развития может активизироваться межмуниципальное сотрудничество между регионами разных областей, в результате чего формируются целевые объединения и кластеры, обеспечивающие социально-экономическое развитии регионов. Осуществляемое межмуниципальное сотрудничество с помощью планов территориального развития будет способствовать развитию новых принципов общественного управления и осуществлению административно-территориальных реформ.

[1] Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի նախագիծ, կազմվել է ՀՀ կառավարության համար, 28 փետրվարի 2011թ. Ազգային մրցունակության հիմնադրամ:

SPATIAL DEVELOPMENT POLICY PROCESSING FEATURES OF THE REPUBLIC OF ARMENIA

Khachikyan S., PhD, Associate Professor, ASUE Yeghegnadzor Branch

The territorial administrative division of our republic causes some problems that are related to the amplify of cooperation in the municipal level. In order to obviate the problems it is possible to invest the principles of spatial development, in the framework of which the administrative borders are not considered during the formation of development projects. By means of spatial development projects the inter-municipal cooperation between various regions can be activate, in the result of which will be established target unions and clusters that will provide more effectiveness for municipal social-economic development. The inter-municipal cooperation implemented by spatial development projects will support the development of new public management principles and territorial administrative reforms of RA.

ՀՀ ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԳՈՀԱՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ, դասախոս, ԵՊՀ

Հիմնաբառեր. տնտեսական քաղաքականություն, արտադրողական ուժեր, ռեգիոնալ զարգացում, ռեգիոնալ քաղաքականություն, աճի բևեռներ, աճի կենտրոններ:

Երկրի զարգացման գործընթացում, հատկապես ազգային տնտեսության ձևավորման և վերաձևավորման փուլերում, մեծապես կարևորվում է կառավարության միջամտության և գիտականորեն հիմնավորված ռեգիոնալ (տարածաշրջանային) տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունը:

Պետական տնտեսական քաղաքականությունը պետության կողմից կիրառվող միջոցառումների և եղանակների ամբողջությունն է, որն ուղղված է տնտեսական գործընթացների կարգավորմանը:

Ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը պետական կարգավորման բաղկացուցիչ մաս է, օրենսդրական, վարչական և տնտեսական միջոցառումների համալիր, որը նպաստում է արտադրողական ուժերի առավել արդյունավետ տեղաբաշխմանը և բնակչության կյանքի մակարդակի համահարթմանը: Ռեգիոնալ քաղաքականության գլխավոր նպատակը երկրի շրջանների միջև սոցիալական և տնտեսական առավել սուր անհամամասնությունների հարթեցումն է [5]:

Ընդունելով պետական տնտեսական կառավարման ու ռեգիոնալ տնտեսական քաղաքականության կարևորությունը, այնուհանդերձ, պետք է ընդունենք նաև, որ այն չպետք է լինի ինքնանպատակ և գտնվի ակտիվ կառավարման ու հսկողության դերում: Այլ պարզապես պետք է լինի այն հոգատար ,«ձեռքը» որ գիտականորեն հիմնավորված միջոցներ է ձեռնարկում իր առջև դրված նպատակների և խնդիրների լուծման համար: Կախված ժամանակի հրամայականից, երկրի զարգացման մակարդակից, երկրում առկա խնդիրներից և բազմաթիվ այլ պատճառներից, տնտեսական քաղաքականությունը կարող է լինել ակտիվ կամ պասիվ, և, կարող է ցուցաբերել քանակական (դրամական) կամ որակական (իրավական) աջակցություն:

Պետք է ընդունենք նաև, որ աջակցության միջոցառումները դրական արդյունք կարող են ապահովել միայն հասարակության զարգացման օրենքների ու օրինաչափությունների շրջանակներում

գործելու դեպքում: Դրան հակառակ գործընթացները, որքան էլ նպատակները լինեն ցանկալի, դրական արդյունք չեն ապահովում, որի մասին վկայում են ռեգիոնալ քաղաքականության պատմության անհաջող փորձերը, կամ էլ պահանջում են մեծ ներդրումներ՝բարենպաստ պայմանների ստեղծման համար:

Ռեգիոնալ զարգացման կարգավորման գործընթացներ սկսել են իրականացվել դեռևս XIX դարի կեսերին, սակայն այն զանգվածային բնույթ ստացել է միայն XX դարում: Ռեգիոնալ քաղաքականության առաջին գործընթացները սկսել են 1930-ական թվականներին և գլխավոր պատճառը 1929-1932թթ. տնտեսական ճգնաժամի հետևանքների վերացումն էր, որոնք առավելապես դրսևորվել էին ծայրամասային և թույլ զարգացած շրջաններում: Այդ ժամանակաշրջանում ռեգիոնալ քաղաքականության ծրագրեր իրականացվել են հատկապես Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում:

Գծագիր 1[3]



Տարբերում են ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկու տիպ՝ համահամակարգային և սելեկտիվ (գծագիր 1): Համահամակարգային ռեգիոնալ քաղաքականությունն ուղղված է երկրի ռեգիոնալ զարգացման ընդհանուր նախադրյալների ստեղծմանը: Պետական կառավարման մարմինների միջոցառումները չունեն ընտրողական մոտեցում և հավասարապես են ազդում երկրի բոլոր տարածաշրջանների վրա, ձևավորելով նրանց ինքնուրույն ակտիվության համար տնտեսական, կազմակերպչական, իրավական բարենպաստ միջավայր: Սելեկտիվ ռեգիոնալ քաղաքականությունն ակնկալում է պետական կառավարման մարմինների նպատակային աջակցություն ընտրյալ տարածքներին՝ նպատակ ունենալով ապահովել տնտեսական ակտիվության արդյունավետ կամ համաչափ բաշխում:

Սելեկտիվ ռեգիոնալ քաղաքականության օբյեկտի, այսինքն աջակցության ենթակա տարածքների, ընտրությունը կախված է պետության ռեգիոնալ տնտեսական քաղաքականության նպատակներից:

Նպատակներից առաջինը երկրի մրցունակության ապահովումն է, որն ակնկալում է մրցունակ կենտրոնների ստեղծում և դրանց զարգացման արագընթաց տեմպերի ապահովում: Իր հիմքում ունի շուկայական հարաբերությունների առանցքային գործընթացը՝ բևեռացումը և զարգացման տարածքային անհամամասնությունների սրումը:

Նպատակներից երկրորդը՝ տարածքային զարգացման անհամամասնությունների կրճատումն է, որն էլ ակնկալում է հետամնաց (ճգնաժամային և թույլ զարգացած) շրջաններում կենտրոնների ստեղծում, դրանցում զարգացման խթանում, իսկ առաջատար զարգացած շրջաններում՝ զարգացման

սահմանափակումներ: Իր հիմքում ունի պետական աջակցությամբ, զարգացման անհամամասնությունների մեղմացումը, որի իրականացման գործընթացները սակայն հաճախ հակասում են բնական զարգացման միտումներին: Խնդիրը նրանումն է, որ, ըստ բնական զարգացման միտումների, արտադրությունները ձգտում են զարգացած կենտրոններ, ուր առկա են զարգացման համար նպաստավոր պայմաններ ու նախադրյալներ, այն ինչ թույլ զարգացած շրջաններում աշխատանքի արտադրողականությունը ցածր է, կապիտալի փոխհատուցումը՝ վատ, դեպի ուր կապիտալի արհեստական հրապուրումը հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի անկման:

Ստացվում է հակամարտություն՝ տնտեսության աճի տեմպերի բարձրացման և տարածքային զարգացման անհամամասնությունների կրճատման գործընթացում: Այս հիմնախնդիրը լավ ուսումնասիրված է արևմտյան գրականությունում, որտեղ այն ստացել է ‚հավասարություն-արդյունավետություն՝ հակամարտություն անվանումը [2]:

Ըստ պետության առջև դրված նպատակների էլ ձևավորում են ռեգիոնալ քաղաքականության երկու մոդելները՝ ***համահարթեցման***, որի դեպքում ընտրողական աջակցությունը տրվում է ճգնաժամային և հիմնախնդրային տարածաշրջաններին և սահմանափակվում զարգացած տարածաշրջանների զարգացումը, և ***բևեռացման***, որի դեպքում էլ աջակցություն տրվում է առավել զարգացած տարածաշրջաններին՝ ***աճի բևեռներին***:

Սելեկտիվ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրությունը բավականին բարդ և հակասական խնդիր է:Սակայն այսօր, ռեգիոնալ զարգացման հայեցակարգերի տեսական հիմքերի ուսումնասիրությունների, ինչպես նաև հասարակության զարգացման օրենքների ու օրինաչափությունների ընդհանրացումների, տարածքի զարգացման փուլա-էվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունների ամբողջացման արդյունքում, կարող ենք այս հակասական խնդրին տալ լուծում:

Լուծումը ***‚աճի բևեռներ ու կենտրոններ՝*** հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունն է, որը հնարավորություն է ընձեռում միավորել սելեկտիվ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկու մոդելները: Հայեցակարգը շատ արագ Արևմուտքում վայելել է մեծ հեղինակություն և դեռևս 60-ական թվականներից դրվել եվրոպական գրեթե բոլոր երկրների ռեգիոնալ քաղաքականության հիմքում: Այս հայեցակարգի վրա կառուցված ռեգիոնալ քաղաքականության առանձնահատկությունը նրանումն է, որ եթե ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընդունված մոտեցումներում կատարվում է ռեգիոնների տարբերակում՝ տիպաբանում ըստ տարբեր հատկանիշների կամ ինտեգրալ համաթվերի, նրանցից յուրաքանչյուրում բացահայտվում է ռեգիոնալ և ազգային հիմնախնդիրները, մշակվում դրանց հաղթահարման ուղիներ,աջակցության կամ սահմանափակման ծրագրեր, ապա ‚աճի բևեռներ և կենտրոններ՝ հայեցակարգի վրա կառուցված տնտեսական քաղաքականությունը երկրի տարածքի զարգացման և տարբերությունների համահարթման խնդրի լուծման համար առաջարկում է ***ազգային տնտեսության ճյուղային և տարածքային առավելությունների բացահայտում՝***‚զարգացման բևեռների՝ (տնտեսության առաջատար ճյուղերի և արտադրությունների) և ***‚աճի կենտրոններին՝ (արտադրության և բնակչության կենտրոնացման օջախների) հիմնավորված տարբերակում*** և որպես հենակետային սյուներ՝ դրանց զարգացման խթանում և կառուցողական լուծումների իրականացում, որոնք իրենց զարգացմամբ, ավելի ուշ փուլերում արդեն ներցիոն ձևով կարող են նպաստել երկրի ողջ տնտեսական զարգացմանը և տարածքի զարգացման մակարդակների տարբերությունների մեղմացմանը:

Ըստ այս մոտեցման, կարևորվում են հետևյալ առանձնահատկությունները:

առաջին. ‚աճի կենտրոններին՝ ընտրության առանձնահատկությունն է: Ելնելով հայեցակարգի բևեռային զարգացման մոտեցումից, մասնագետների մի խումբ հայեցակարգի սկզբունքներում

հասկանում է աջակցություն մրցակցային կենտրոններին, իսկ հետամնաց տարածքների զարգացումն ընկալում որպես առաջատարների զարգացման հետագա տարածում: Մասնագետների մի այլ խումբ էլ հայեցակարգի սկզբունքներում հասկանում է հետամնաց շրջաններում աճի կենտրոնների ստեղծում և վերջիններիս զարգացմամբ տարածքի հետամնացության հաղթահարում: Սակայն, հայեցակարգի հետագա կատարելագործման և պատմական գործնական կիրառման արդյունքների վերլուծությունների արդյունքում, այսօր հայեցակարգը միավորում է վերոհիշյալ երկու մոտեցումներն ու ,աճի կենտրոն-ները դիտում որպես տարաբնակեցման, տարածական կառուցվածքի հենքեր, որոնք իրենց ազդեցությունը դաշտում կընդգրկեն երկրի ողջ տարածքը, անկախ նրանից գտնվում են մրցունակ թե հետամնաց տարածքում և կլուծեն երկրի թե՛ մրցունակության և թե՛ տարածքի հավասարաչափ զարգացման խնդիրները:

Երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ աջակցություններ տրվում են ոչ թե դրա անհրաժեշտությունն ունեցող ռեգիոններին, այլ առանձին օջախներին՝ կենտրոններին, որոնց վրա հենվում է ռեգիոնի հետագա զարգացումը: ,Այս մոդելի կիրառման դեպքում կրճատվում են աջակցության ենթակա տարածքները. Իսկ աջակցության կենտրոններ կարող են հանդես գալ ինչպես առանձին բնակավայրերը, այնպես էլ նրա առանձին հատվածներըե[4]: Այս հայեցակարգի տեսական դրույթների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության դեպքում առավել հեշտ է կողմնորոշվել ռեգիոնալ ծրագրերի մշտապես աճող համակարգում և ճիշտ ուղղորդել մշտապես սահմանափակ ֆինանսական օգնությունը:

Երրորդ առանձնահատկությունն էլ «աճի բևեռների» գործառույթային տարբերակումներն են: Զարգացած կենտրոններում նպատակահարմար է, նորամուծության դիֆուզիայի օրենքներին համարժեք, նորագույն ճյուղերի զարգացման խթանումը և հնացած արտադրությաունների սահմանափակումները և արտամղումը կիսաձայրամաս կամ ծայրամաս, իսկ հիմնախնդրային շրջաններում՝ նոր կամ ավանդական ճյուղերի զարգացումը:

Չորրորդ առանձնահատկությունը դա ,զարգացման բևեռների և «աճի կենտրոնների» մասշտաբային տարբերություններն են: Այսպես, «զարգացման բևեռները » կարող են լինել մասնագիտացման ճյուղերից մինչև տեղական նշանակության արտադրություններ, իսկ ,աճի կենտրոններըե՝ միջազգային մրցունակության կենտրոններից մինչև տեղական նշանակության կենտրոններ:

Ըստ էության ,աճի բևեռներ և կենտրոններե հայեցակարգի տեսական սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ քաղաքականության համար կարևորվում է գործառույթային հենքի՝ «զարգացման բևեռների» և տարածքային հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծումը և դրանց տարբերակված աջակցությունը:

,Աճի բևեռներ և կենտրոններե հայեցակարգը ոչ միայն տեսական հիմք է ապահովում ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրության և իրականացման առանձնահատկությունների համար, այլ նաև ազգային տնտեսության համալիր ու գիտական ուսումնասիրության, տնտեսության ճյուղային և տարածքային հիմնավորված կազմակերպման ու տարբերակման համար (անցում տեսությունից գործնական կիրառության):

Մեր կողմից մշակվել է «զարգացման բևեռների» և ,աճի կենտրոններիե ուսումնասիրության և տարբերակման մոդել: Մոդելավորումն ակնկալում է ԱՏՀ-երի (աշխարհագրական տեղեկատվական համակարգերի) կիրառում, որն հնարավորություն է ընձեռում ստեղծել տեղեկատվական հզոր բազա, կատարել բարդ հաշվողական վերլուծություններ և որակական գնահատումներ:

Մոդելն ընդգրկում է մի քանի հաջորդական փուլեր: Յուրաքանչյուր փուլ ակնկալում է ուսումնասիրության երեք մակարդակ՝ միջազգային, հանրապետական և տեղական: Մոդելում

ակնկալվում է «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» առանձին ուսումնասիրություններ, ապա դրանց սինթեզ և միասնական տարածագործառույթային հենքի ստեղծում:

Այսպիսով, « աճի բևեռներ և կենտրոններ» հայեցակարգը հնարավորություն է ընձեռում լուծել երկրների համար կենսական նշանակություն ունեցող մրցունակության և տարածքային համաչափ զարգացման խնդիրները:

Այսօր ՀՀ ,…տնտեսական քաղաքականությունը կրում է օպերատիվ իրավիճակային բնույթ…ե [1,էջ154]: ,Անցած տարիների տնտեսական քաղաքականությունը մեծապես հրամցվել է միջազգային կազմակերպությունների կողմից՝ իրականացվող ծրագրերի տրամաբանությամբ [1,էջ186]: Այսօր օրակարգային խնդիր է տնտեսական կառավարման և ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկարաժամկետ ռազմավարության մշակումը և տեսական հիմքի ընտրությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա. Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, “Զանգակ-97”, 2014, 550 էջ
2. Артоболевский С.С.Полюса роста важны, но это не панацея. В плане Минрегионразвития акценты можно расставить иначе. Российское экспертное обозрение, N1 (13), 2005http://www.bossmag.ru/view.php?id=3498
3. Леонов С.Н., Сидоренко О.В. Селективная региональная политика как самостоятельный тип региональной политики государства, Государственное управление. Электронный вестник .Выпуск № 28. Сентябрь 2011 г. http://e-journal. spa. msu. ru/ uploads/ vestnik/ 2011/ vipusk28._sentjabr _2011_g./pravovie_i _polititcheskie_aspekti_ upravlenija/leonov_sidorenko.pdf
4. Садыкова А.К. Роль межрегиональных связей в теории полюсов роста для практической реализации региональной политики Казахстана http:/ /www. rusnauka. com/ 4_ SWMN_ 2010/ Economics/ 59036.doc.htm http://ru.wikipedia.org/wiki/

К ВОПРОСУ О ВЫБОРЕ РЕГИОНАЛЬНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ В РА

Гамбарян Г.Г., преподаватель, ЕГУ

В статье подчеркивается важность государственного управления и региональной экономической политики в процессе регионального развития. Обсуждаются их разновидности, преимущества и слабые стороны известных моделей. В заключении сделано заключение, что целесообразнее отдать предпочтение модели региональной экономической политики, построенной на основе теоретических принципов концепции, полюсов и центров развития.

THE QUESTION OF THE CHOICE OF REGIONAL ECONOMIC POLICY IN RA

Ghambaryan G.G., Lecturer, YSU

The article emphasizes the importance of public administration and regional economic policy in the regional development. Discuss their types, advantages and weaknesses of well-known models. In conclusion, we come to the opinion that it would be best to give preference to the model of regional economic policy is built on the basis of the theoretical principles of the concept of ,growth poles and growth centersն.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ և ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, աշխ.գիտ.թեկ. դոցենտ ԵՊՀ

Մեղրիի տարածաշրջանում 2015 թ. հուլիսի 1-ի դրությամբ բնակվում է 11100 մարդ: Բնակեցված է տարածաշրջանի ամբողջ տարածքի (664 կմ^2) միայն 40%-ը: Միջին խտությունը 1 քառ. կմ-ում կազմում է 17 մարդ: Այս ցուցանիշը միայն բնակեցված տարածքի համար կազմում է 50 մարդ: Տարածաշրջանի բնակչության թիվը ներկայումս կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության 0,3 %-ը, իսկ Սյունիքի մարզի 7 %-ը:

Այսօր Մեղրիի տարածաշրջանն ունի 15 բնակավայր, որից երկուսը քաղաքային , 13-ը գյուղական: Դրանք են՝ Մեղրի և Ագարակ քաղաքները, համապատասխանաբար 4600 և 4300 բնակիչներով. Այգեձորը (25 բնակիչ), Ալվանքը (311), Գուդեմնիսը (39), Թխկուտը (70), Լեհվազը (623), Լիճքը (139), Կարճևանը (230), Կուրիսը (58), Նռնաձորը (125), Շվանիձորը (298), Վահրավարը (37), Վարդանի ձորը (230) և Տաշտունը (95):

Տարածաշրջանի բնակավայրերը տեղաբաշխված են 600- 2000 մ ընկած բարձրություններում: ընդ որում 1400-1600մ բարձրություններում բնակավայրեր չկան: Բնակավայրեր չկան նաև մինչև 600 մ-ը և 2000 մ-ից բարձր ընկած վայրերում: Մեղրիի տարածաշրջանի ամենախիտ բնակեցված հատվածը մերձարաքսյան հովտային շրջանն է, որտեղ կենտրոնացված է բնակչության 2/3-ը: 1600-2000 մ բարձրություններում՝ բնակվում է մոտ 300 մարդ:

Չնայած 13 գյուղերի առկայությանը, քաղաքային բնակչությունը տարածաշրջանում կրկնակի գերազանցում է գյուղականին, ինչը կապված է աշխատանքային ռեսուրսների ոչ ճիշտ բաշխման, կուլտուր- կենցաղային պայմանների բացակայության և իհարկե լեռնահանքային արդյունաբերության բուռն զարգացման հետ:

Սահմանների ապահովության երաշխիք է այն հանգամանքը, որ տարածաշրջանի երկու ամենախոշոր բնակավայրերը՝ Մեղրի և Ագարակ քաղաքները՝ յուրաքանչյուրը մոտավորապես 4500-ական բնակչով, ընկած են հարավային սահմանագոտում՝ առանցքային ճանապարհների երկայնքով:

Ինչպես նկատում ենք, բնակչությունը բաշխվում է թիկունքից դեպի սահման ավելանալով, ինչը ևս աշխարհաքաղաքական տեսանկյունից կարևոր գործոն է տարածաշրջանի համար: Սահմանային գոտու համար անչափ դրական է նաև բնակչության ազգային միատարրությունը, որը 1980 թվականների վերջերին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների արդյունք է:

Մեղրիի տարածաշրջանի բնակչության և բնակավայրերի մասին խոսելիս, աներկբալիորեն պետք է հենվել նաև նշանավոր հետազոտող-վիճակագիր Զ. Կորկոտյանի բազմահարուստ տվյալներին, որոնք առնչվում են բնակավայրերի տիպերին, նրանց աշխարհագրական դիրքի առանձնահատկություններին, ծովի մակարդակից ունեցած բարձրությանը, վարչական ենթակայությանը, ազգային ու կրոնական կազմին:Ըստ նրա դեռևս 1831 թվականին Մեղրիի տարածաշրջանի տարածքում ապրում էր 2174 մարդ, որից հայերը 1031 հոգի, այլազգիները՝ 1143:

1897 թվականին բնակչության թիվն հասավ 9866 մարդու, որից հայերը՝ 7888 հոգի, այլազգիները՝ 1978: Տեղի էր ունենում բնակչության կազմի փոփոխություն, ինչպես ի հաշիվ մեխանիկական, այնպես էլ բնական աճի: Փոխվում էր բնակչության թե ազգային, և թե սոցիալական կազմը [4]:

1939 թվականին Մեղրիի տարածաշրջանի տարածքում բնակվում էր 9686 մարդ՝ ամբողջովին գյուղական բնակչություն: Իսկ ահա 1970 թվականին այս թվերը կտրուկ փոխվեցին, տարածաշրջանի բնակչությունը կազմեց 14265 մարդ, որից գյուղական՝ 6221, իսկ քաղաքային՝ 8044:

Արդյունաբերության զարգացման հետ փոփոխություններ առաջացան բնակչության կառուցվածքում: Տարեցտարի ավելացավ քաղաքային բնակչության թիվը, ինչպես ի հաշիվ բնական աճի, այնպես էլ տարածաշրջանի ներսում կատարված տեղաշարժերի: Ըստ տարիների փոփոխություններ տեղի ունեցան նաև ազգային կազմում: 1985 թվականին հայերի թիվը կազմեց 10800 մարդ: 1987 թվականին հայերը կազմում էին բնակչության 72%-ը:

Մինչև 1988 թվականի հայտնի իրադարձությունները՝ կապված հայ- ադրբեջանական հարաբերությունների բարդացման հետ, Մեղրիի տարածաշրջանի չորս բնակավայրերում՝ Նյուվադի, Վարդանիձոր, Թխկուտ և Ալվանք, բնակվում էին բացառապես ադրբեջանցիներ:

Ռուսներն ու փոքրաթիվ այլազգիները (հույներ, ուկրաինացիներ, բելոռուսներ) հիմնականում բնակություն են հաստատել Ագարակ և Մեղրի քաղաքներում:

1988 թվականից հետո, երբ ադրբեջանցիներն աստիճանաբար լքեցին տարածաշրջանի տարածքը, գյուղերը բնակեցվեցին Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված մեր հայրենակիցներով, ինչը նպաստեց ազգային միատարության ամրապնդմանը:

Ցավով ենք նշում այն փաստը, որ այսօր Հայաստանի քարտեզի վրա մենք չենք գտնում Մեղրիի տարածաշրջանի մի շարք գյուղեր, որոնք լուծում չստացած սոցիալ- տնտեսական բազմաթիվ հիմնահարցերի պատճառով աստիճանաբար զրկվել են բնակիչներից և կիսավեր տեսք ստացել: Այդ բնակավայրերն են երբեմնի Վանքը, Կալերը, Մալևը, Արևիքը, Ափկեզը, Մոզքը, Ամրաքարը, Թաղամիրը, Լիճքվազը, Թեյը, Թոսը, Մնաշուն, Էրնաձորը և Փիշկագը:

Քաղաքների և գյուղերի մասին տրված այս պատկերացումներից պարզ է դառնում, որ բնակչության տեղաբաշխումը և տնտեսական գործունեությունը Մեղրիի տարածաշրջանում մեծապես պայմանավորված է են նաև մակերևույթի թեքությամբ: Դա է պատճառը, որ բնակավայրերը տարածաշրջանի տարածքում սփռված են համեմատաբար հարթ մերձարաքսյան հովտային գոտուց դեպի բարձր լեռնային հատվածն ընկած տարածքներում՝ աստիճանաբար նվազելով հարավից դեպի հյուսիս ուղղությամբ:

Մեր կարծիքով, ըստ այդմ տարածաշրջանի 15 բնակավայրերը կարելի է ընդգրկել 3 խմբում. Առաջին խմբի բնակավայրերը սահմանի երկայնքով սփռված քաղաքներն ու գյուղերն են՝ Ագարակ, Մեղրի, Կարճևան, Ալվանք, Շվանիձոր, Նյուվադի:

Երկրորդ խմբում ընդգրկված են միջին գոտու բնակավայրերը, որոնք թվով 7-ն են՝ Թխկուտ, Այգեձոր, Լեհվազ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար:

Երրորդ գոտին զբաղեցնում են բարձր լեռնային գյուղերը՝ Լիճքը և Տաշտունը:

Բացի այդ բնակչության բաշխվածության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունների վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև բնակլիմայական և հողաբուսական պայմանները: Բնական այդ գոտիները և նրանց տարածքի չափերը,- ինչպես իրավացիորեն նշում է Գ. Ավագյանը,- զգալիորեն պայմանավորում են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը, հետևաբար նաև գյուղական բնակչության տնտեսական գործունեության բնույթը [1]:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ Մեղրիի տարածաշրջանի բնակավայրերին ու բնակչության թվաքանակին վերաբերող տվյալները իրենց վրա կրում են երկրում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների և սոցիալ- տնտեսական փոփոխությունների կնիքը:

Եվ պատահական չէ, որ Մեղրիի տարածաշրջանի բնակչությունը՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակներից մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը (1831-1913թթ.), առաջին համաշխարհայինի և ազգամիջյան կռիվների տարիներին (1913-1920թթ.), խորհրդային իշխանության տարիներին (1921-1991թթ.) և անկախության նվաճումից հետո (1991-ից

մինչև օրս) կրել է բազմաթիվ փոփոխություններ՝ մերթ նվազել, մերթ աճել, ունենալով ազգային և կրոնական կազմի փոփոխություններ:

Բնակավայրերի տեղաբաշխումը Զանգեզուրում, այդ թվում և Մեղրիի տարածաշրջանում, ինչպես իրավացիորեն նշում է Ստ. Լիսիցյանը, ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության և թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին [6]:

Ահա այսպես են ուրվագծվում Մեղրիի տարածաշրջանի բնակչությունը և բնակավայրերը՝ երեկ և այսօր: Իսկ թե ինչպիսի նոր փոփոխություններ են ակնկալվում բնակչության ու բնակավայրերի հարցում առաջիկա ժամանակներում, կարող է ցույց տալ միայն ժամանակը: Մեղրիի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի ամրացումը, լքված բոլոր գյուղերի վերականգնումը համապետական և համազգային հիմնահարցեր են: Դա պայմանավորված է Հայաստանի ամենահեռավոր տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությամբ, նրա առանձնահատուկ դիրքով և կարևորությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Ե. 1975:
2. Ավետիսյան Խ. , ՀԽՍՀ բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Ե. 1987:
3. Խաչաբեկյան Վ. , Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե.1979 թ.:
4. Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.), Ե. 1932:
5. Վալեսյան Լ., Հայկական ԽՍՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրություն , Ե. 1989:
6. Լիսիցյան Ս., Զանգեզուրի հայերը, Ե., 1969 :
7. Պոտոսյան Ա. , ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. 2013:.

ОСОБЕННОСТИ РАЗМЕЩЕНИЯ НАСЕЛЕНИЯ И НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ В МЕГРИНСКОМ РАЙОНЕ

Алексанян К.В. , к.г. н., доцент, ЕГУ

В исследовании были обсуждены и проанализированы характеристики распределения населения и населенных пунктов в Мегринском регионе. Были изучены действующие и заброшенные села, которые образовались в силу исторических, социальных и политических событий.

THE CHARACTERISTICS OF POPULATION AND LOCALITIES DISTRIBUTION OF MEGHRI REGION

Alexanyan K.B., PhD on geography, Associate Professor, YSU

In the study have been discussed and analyzed the characteristics of population and localities distribution of Meghri regiontaking into account spatial-temporal and various factors. We have been separated from the changes between main population and ethnic composition, existing and abandoned homes, which are because of historical, social and political events.

ՍՈՑԻԱԼ- ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 1991-1997ԹԹ.

ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, աշխ.գիտ.թեկ. դոցենտ, ԵՊՀ

ԱՐՓԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ, Կապանի թիվ 6 հիմնական դպրոց, ուսուցչուհի

Մեղրիի տարածաշրջանն աչքի է ընկնում մի շարք սոցիալ-ժողովրդագրական հիմնա-խնդիրներով, որոնց քննարկումը հատկապես անկախության առաջին տարիներին գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Անդրադառնանք դրանցից ամենակարևորներին՝ ծնելիության և մահացության իրավիճակին, ամուսնությունների և ամուսնալուծությունների խնդրին , ինչպես նաև գործազրկության պատկերին:

Ծնելիությունը և մահացությունը մարդկային կյանքի անբաժան ուղեկիցներն են: Հատկապես նրանց միջոցով է հնարավոր դառնում պարզել բնակչության թվի աճի փոփոխություններն աշխարհի ամենատարբեր երկրներում և տարածաշրջաններում: Այս առումով յուրատեսակ պատկեր է ձևավորվել Հայաստանի ամենահարավային տարածաշրջանում՝ Մեղրիում:

Մեղրիի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի տվյալներով 1991 թվականին տարածաշրջանում ծնվել է 297 մարդ, որը վերջին վեց տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Այդ տարվան է բաժին ընկնում նաև բնական աճի ամենաբարձր ցուցանիշը՝177: Մահացությունների թիվն անկախության առաջին տարում եղել է 120, որը երկրորդ բացասական ցուցանիշն է 1994 թվականի համեմատ (131): 1992 թվականին Մեղրիի տարածաշրջանում մահացությունների թիվը նվազեց՝ հասնելով 109-ի: Բայց ցավալիորեն նվազեց նաև ծնունդների թիվը՝ դառնալով 249: Բնական աճը կազմեց 140 մարդ:

1993 թվականին բնական աճը կտրուկ նվազեց՝ հասնելով 80 –ի: Նախորդ տարվա համեմատ ավելացավ մահացությունների թիվը՝116, ինչը կապված էր սահմանամերձ տարածաշրջանում սկիզբ առած պատերազմական գործողությունների և կյանքի պայման-ների վատթարացման հետ:Նախորդ տարվա համեմատ նվազեց նաև ծնվածների թիվը՝196:

Ծնունդների այս պատկերը գրեթե նույնությամբ արտացոլվեց 1994 թվականի տվյալներում, որտեղ այն կազմեց՝194:

1995 թվականին, երբ սկսվեց զինադադարի ժամանակահատվածը և կյանքի պայմանների որոշակի բարելավում նկատվեց, Մեղրիի տարածաշրջանում մահացությունների թիվը նվազեց՝ հասնելով 112-ի, բնական աճը փոքրիկ դրական միտում ունեցավ՝68:

Մահացությունների նվազման՝95, և բնական աճի ավելացման՝76, միտումը նկատելի էր 1996 թվականի ցուցանիշներում: Այդ տարի ծնունդների թիվը հասավ 171-ի:

1991-1997 թթ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մեղրիի տարածաշրջանում նկատվել է ծնունդների թվի աստիճանական նվազում՝297-ից հասնելով 171-ի, ինչը պայմանավորված է քաղաքական և սոցիալ- տնտեսական պատճառներով:

Բայց եթե ծնունդների թիվը հաստատուն կերպով միայն նվազել է, ապա այլ է պատկերը մահացությունների բնագավառում, որտեղ նկատվել են տատանումներ՝ 109-ից հասնելով 131 և նվազելով մինչև 95: Ըստ բնական աճի ցուցանիշների, վեց տարիների ընթացքում նկատվել է երկու միտում՝ նվազման և աստիճանական վերելքի: Նվազման փուլն ընդգրկեց 1991-ից 1994 թվականը՝ 177-ից 63, իսկ աստիճանական վերելքի փուլն հակընկավ 1994-ից 1997 թվականներին՝ 63-ից 76:

Փաստորեն, Մեղրիի տարածաշրջանում բնակչության թիվը վերջին վեց տարիների ընթացքում ավելացել է 604 մարդով՝ միայն բնական աճի հաշվին: Միջին հաշվով մեկ տարում բնակչության թիվն աճել է 100 մարդով: Սա մի թիվ է, որը մտորելու, խորհելու տեղիք է տալիս: Չէ որ, վերջին հաշվով հենց մարկային ռեսուրսներն են որոշում սահմանամերձ տարածաշրջանի ճակատագիրը:

Յուրաքանչյուր նոր ընտանիքի ծնունդ հատկապես սահմանամերձ տարածաշրջանում, Հայաստանի նորանկախ հանրապետության համար անչափ կարևոր հանգամանք է:

Մեղրիի տարածաշրջանը Հայաստանի համար աշխարհաքաղաքական և ռազմավարական կարևոր նշանակություն ունի և այնտեղ յուրաքանչյուր ընտանիքի կազմավորում նախևառաջ պետականության ամրապնդմանն ուղղված քայլ է, սահմանի ապահովության երաշխիք:

Անկախության վեց տարիների ընթացքում Հայաստանի ամենահարավային տարածաշրջանում ուրվագծվել է ամուսնությունների և ամուսնալուծությունների մի պատկեր, որն իր հերթին հետաքրքիր մտորումների և եզրահանգումների առիթ է տալիս:

1991 թվականին՝ անկախության հռչակման առաջին տարում, Մեղրիի տարածաշրջանում գրանցվել է 106 ամուսնություն և 5 ամուսնալուծություն: Հետագա վերլուծությունը ցույց կտա, որ հենց 1991 թվականին է տարածաշրջանում արձանագրվել ամենաբարձր ցուցանիշը ամուսնությունների և ամենանվազագույնը՝ ամուսնալուծությունների գծով:

1992 և 1993 թվականներին ամուսնությունների թիվը նվազել և հասել է 82-ի, ինչը պայմանավորված էր ոչ միայն այդ տարիների սոցիալ – տնտեսական դժվարություններով, այլ նաև սահմանային գոտում բռնկված պատերազմական գործողությունների սաստկացմամբ:

Ամուսնալուծություններն այդ թվականներին համապատասխանաբար կազմել են 6 և 18: 1993 թվականն առանձնանում է ամուսնալուծությունների ամենաբացասական ցուցանիշով, ինչը պայմանավորված էր Ադրբեջանի տարբեր վայրերից Մեղրիի տարածաշրջան ներգաղթած մեր հայրենակիցների էթնոհոգեբանությամբ, նոր միջավայրին չհարմարվելու ունակությամբ, վարքի և կենցաղի առանձնահատկություններով: Մեղրիի տարածաշրջանի համար, որտեղ ամուսնալուծություններն ավանդաբար քիչ են լինում, այդպիսի բացասական ցուցանիշը՝18 արձանագրվել է ի հաշիվ ներգաղթածների ընտանիքներում առաջացած հակասությունների:

1994 թվականը, որը պատերազմական գործողությունների թեժացման և միաժամանակ դրան հաջորդած զինադադարի տարի էր, ամուսնությունների համար ոչ բարենպաստ էր և կազմավորվեց ընդամենը 68 ընտանիք: Ամուսնալուծությունները նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազեցին՝18-ից հասնելով 8-ի:

1995 թվականը ամուսնությունների տեսակետից ևս գոհացնող չէր, չնայած որ սկսվել էր զինադադարը և որոշակի տնտեսական ձեռքբերումներ կային: Արձանագրվել է ընդամենը 63 ամուսնություն, ամուսնալուծությունների թիվը կազմել է 12:

Ամուսնությունների աստիճանական նվազման այս շարքին՝ 106-ից 63, կարծես փոքր-ինչ հուսադրում է 1996 թվականի ցուցանիշը՝ 65 ամուսնություն, որը հույս է տալիս , որ կարող է նկատվել դրական միտում և առաջընթաց: Դա է փաստում նաև ամուսնալուծությունների ցուցանիշը՝7:

Վեց տարիների ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամուսնությունների թիվն ընդհանուր առմամբ Մեղրիի տարածաշրջանում նվազել է՝106-ից հասնելով 65-ի, իսկ ամուսնալուծությունների պատկերը՝ վայրիվերումներով հանդերձ՝ գրեթե նույնն է մնացել (5-ից՝ 7):

Սակայն, երբ համեմատության մեջ ենք դնում 1995 և 1996 թվականների ցուցանիշները, ապա դրական միտումը, որի մասին հիշատակեցինք վերևում (63-ի փոխարեն 65 ամուսնություն, 12-ի փոխարեն 7 ամուսնալուծություն), առկա է, և հավատ է ներշնչում եզրակացնելու, որ անցումային

շրջանի սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարմամբ, հեռավոր տարածաշրջանի ներքին խնդիրների կարգավորմամբ, շուկայական հարաբերությունների դեռևս չկարգավորված օրենքների հստակեցմամբ, կովկասյան տարածաշրջանի հակամարտությունների լուծմամբ բարերար հող կստեղծվի ամուսնությունների ավելացման և ամուսնալուծությունների նվազման համար:

Կարծում ենք, որ առաջիկա տարիներին նոր ընտանիքների թիվը կավելանա նաև Մեղրիի տարածաշրջանում և Սյունիքի մարզի ամենահարավային հատվածը կդառնա Հայաստանի ապագայի և վերելքի յուրատեսակ օազիսը, խաղաղ ընտանիքների լեռնակղզի- հանգրվանը:

Գործազրկության դեմքը նկատելի է նաև փոքր տարածաշրջաններում: Բացառություն չի կազմում Մեղրիի տարածաշրջանը, որտեղ 1997 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործազուրկի կարգավիճակ ուներ 345 մարդ: Փաստորեն, տարածաշրջանի ողջ բնակչության 2,4 %-ը և աշխատունակ բնակչության 4,9%-ը հայտնվել է կարիքի մեջ:

Մեղրի քաղաքի զբաղվածության կենտրոնի տվյալներով, նախորդ տարվա ընթացքում նրանց վճարվել է 2 միլիոն 825 հազար դրամ նպաստ: Խորհելու առիթ են տալիս գործազուրկների բանակի սոցիալական վիճակը և դրությունը, սեռատարիքային կազմը, կրթական մակարդակը:

Մեղրիի տարածաշրջանում գործազուրկների գերակշռող մասը՝ 250 հոգի, կանայք են, 95-ը՝ տղամարդիկ: Ընդ որում, կանացից 39-ը մինչև երկու տարեկան երեխա ունեցող մայրեր են: Գործազուրկների մեջ առավել մեծ թիվ են կազմում բանվորները՝265: Ծառայող գործազուրկների թիվը հասնում է 80-ի: Թե բանվորների և թե ծառայողների մեջ զգալի թիվ են կազմում կանայք՝ բանվորներից 178-ը, ծառայողներից՝ 72-ը:

Սեռատարիքային կազմի թվական տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ Մեղրիի տարածաշրջանում գործազուրկների գերակշռող մասը 30-ից 50 տարեկան քաղաքացիներն են՝ 134 հոգի, որից 106-ը՝կանայք: Նրանց հաջորդում են 22-ից 30 տարեկան քաղաքացիները՝ 116 հոգի, որից 84-ը՝ կանայք: 18-ից 22 տարեկան քաղաքացիների մեջ գործազուրկների թիվը հասնում է 82-ի, որից 53 – ը՝ կանայք:

Մինչև 18 տարեկանների մեջ գործազուրկների թիվը հասնում է 6-ի, որի կեսը կանայք են: Գրեթե նույն պատկերն է 50-ից բարձր տարիք ունեցող գործազուրկների շրջանում՝ 7 գործազուրկ, որից 4-ը՝ կանայք:

Ըստ կրթական մակարդակի գործազուրկների բանակում մեծ թիվ են կազմում ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 198 հոգի, որից 136-ը՝ կանայք: Միջնա-կարգ մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների թիվը հասնում է 93-ի, որից 72-ը՝ կանայք: Թերի միջնակարգ կրթություն ունեն 35 հոգի, որից 25-ը կանայք: Բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների ճնշող մեծամասնությունը (19-ից 17-ը) կանայք են:

Ահա այսպիսին է գործազրկության պաշտոնական պատկերը Մեղրիի տարածաշրջանում: Մի պատկեր, որն առչվում է 345 մարդու ճակատագրի և դեռ ավելին՝ նրանց խնամքին ու հոգածությանն սպասող էլ ավելի շատ թվով մարդկանց հետ: Այնպես որ խնդիրը լուրջ է և շոշափում է 345 տարբեր ընտանիքների ճակատագրեր: Ընտանիքներ, որոնք շուկայական հարաբերությունների մեր օրերում հայտնվել են ծանր կացության մեջ:

Խնդիրը կարևորում և հնչեղություն է ձեռք բերում նաև այն տեսանկյունից, որ առնչվում է Հայաստանի ամենառազմավարական և կենսական կարևորություն ունեցող տարածքի հետ, և որպեսզի կանխվի ոչ ցանկալի արտահոսքը, անհրաժեշտ է գտնել հարցի կշռադատված և համալիր լուծում:

Ահա այսպիսին է Հայաստանի ամենահարավային տարածաշրջանի սոցիալ-ժողովրդագրական պատկերը անկախության առաջին տարիների կտրվածքով,ինչը հնարավորություն է տալիս հետագայում վերլուծություններ և համեմատություններ կատարել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Семья в СССР (справочник)- М, 1990 г.
2.Օգտագործված են Մեղրի քաղաքի վիճակագրական բաժնի տվյալները, 1997թ.հունվարի 1-ի դրությամբ:

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ МЕГРИНСКОГО РАЙОНА В 1991-1997 Г.Г.

Алексанян К., к.г.н., доцент, ЕГУ
Акопян А., преподаватель школы N 6, г. Капан

В статье, основанной на статистических данных, анализируются социально-демографические вопросы Мегринского района Армении (браки, разводы, безработица, рождаемость, смертность), которые дают представление об этом отдаленном районе в первые годы независимости.

SOCIAL –DEMOGRAPHIC PROBLEMS OF MEGHRI REGION IN 1991-1997

Alleksanyan K. , PhD on geography, Associate Professor, YSU
Akopyan A., teacher of Kapan School, N 6

This article is based on statistical data, analyzes the socio-demographic questions of Meghri region of Armenia (marriage, divorce, unemployment, fertility, mortality), which give an idea of a remote area in the early years of independence.

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԸ

ՀԱՅԿ ՄԱՆԱՍՅԱՆ, ասպիրանտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. *տարաբնակեցման համակարգ, ուրբանիզացման մակարդակ, միգրացիայի սալդո, մարզկենտրոն, բնական շարժ:*

Բնակչության միգրացիան սոցիալ-տարածական բարդ երևույթ է և պատճառահետևանքային կապերով փոխկապված է հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետ: Պատահական չէ, որ միգրացիայի տարբեր կողմերի և հիմնահարցերի ուսումնասիրությամբ ակտիվորեն զբաղվում են տնտեսագետները, սոցիոլոգները, հոգեբանները և այլն, սակայն դրանցում անտեսվում են միգրացիայի համալիրային բնույթն ու գործառույթային և պատճառահետևանքային կապերը: Այս գործում կարծում ենք, որ մեծ դեր ունեն կատարելու հատկապես աշխարհագետները, քանի որ միգրացիայի ուսումնասիրությունը պահանջում է տարածաժամանակային մոտեցում:

Բնակչության բնական և մեխանիկական շարժերը, դրանց տարածաժամանակային դրսևորումները հանդիսանում են տարաբնակեցման կարևորագույն գործոններ, որոնք պայմանավորում են տարաբնակեցման փոփոխության միտումները (3): Ընդ որում, եթե բնական շարժն ավելի էականորեն ազդում է տարաբնակեցման քանակական տեղաշարժերի վրա, երբ փոխվում են բնակավայրերի մարդաշատության ցուցանիշներն ու դրանց հարաբերակցությունները, ապա միգրացիաները տարաբնակեցման մեջ ավելի շատ առաջացնում են որակական կառուցվածքային փոփոխություններ և զգալի տեղաշարժեր:

Ներկայումս ՀՀ բոլոր բնակավայրերը մասնակցում են բնակչության միգրացիոն գործընթացներին, և պետք է փաստենք, որ միգրացիայի սալդոն գրեթե բոլոր բնակավայրերում բացասական է: Ներքին միգրացիայի ծավալը նվազել է համեմատած նախորդ տասնամյակների հետ: Եվ եթե առաջներում գյուղական բնակավայրերից բնակչության միգրացիաներն առավելապես ներհանրապետական բնույթ էին կրում և իրենց ծավալներով առանձանանում էին հատկապես գյուղից քաղաք և ապա նաև քաղաքից գյուղ միգրացիոն ուղղությունները, ապա հիմա գրեթե բոլոր բնակավայրերը դարձել են արտաքին միգրացիայի ակտիվ մասնակիցներ:

Արտագաղթողների կազմի մեջ մեծանում է բարձրագույն կրթություն ունեցողների և երիտասարդ մասնագետների բաժինը, որի արդյունքում բազմաթիվ բնակավայրեր աստիճանաբար զրկվում են տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու իրական ռեսուրսներից և հնարավորություններից: Փաստորեն, պետությունը միջոցներ է ծախսում մասնագետների պատրաստման վրա, որոնք հայրենիքում ստացած գիտելիքները օգտագործում են այլ երկրների տնտեսությունների զարգացման գործում: Սա մտահոգիչ խնդիր է և կարծում ենք որ ՀՀ իշխանություններն այստեղ լուրջ մտորելու տեղ ունեն:

Որոշ բնակավայրերի գործազուրկ բնակչության արտագաղթն ինչ-որ առումով ունի նաև դրական կողմեր, մասնավորապես՝ հայտնվելով այլ երկրներում և ունենալով բարձր վարձատրվող աշխատանք, նրանք իրենց դրամական փոխանցումներով օգնում են հայրենիքում մնացած իրենց հարազատներին: Դրսում ապրող հայ բարերարները իրենց հայրենի բնակավայրերում կառուցում են եկեղեցիներ, կրթական, մշակույթային, առողջապահական, արտադրական և բնակչությանը սպասարկող այլ հիմնարկներ և հաստատություններ, ստեղծում են աշխատատեղեր, և դրանով նպաստում են բնակավայրերի զարգացմանը (2):

ՀՀ բնակչության միգրացիան զգալի ազդեցություն է թողնում ուրբանիզացման գործընթացների և տարաբնակեցման կառուցվածքի վրա: Գիտենք, որ Երևանը միգրացիոն տեսանկյունից գրավիչ է ՀՀ այլ բնակավայրերի բնակչության համար, այդ պատճառով էլ գնալով ավելի է աճում Երևանի բնակչության բաժինը ՀՀ ընդհանուր և քաղաքային բնակչության մեջ: Մասնավորապես՝ 2013թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Երևանի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր բնակչության մեջ կազմել է 35%, իսկ ՀՀ քաղաքային բնակչության մեջ՝ 56%: Սակայն վերջին տասնամյակում, Երևանը շարունակելով գրավիչ մնալ ՀՀ այլ բնակավայրերի բնակիչների համար, ինքն է դարձել բնակչության արտագաղթի խոշոր կենտրոն: ՀՀ անկախության առաջին տարիներին արտագաղթում էին հատկապես ՀՀ քաղաքային բնակիչները, որը պայմանավորված էր առաջին հերթին ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությամբ, մասնավորապես արդյունաբերության, շինարարության ծավալների կտրուկ նվազման հետ: Գյուղերից արտահոսքի համեմատաբար ցածր ցուցանիշները հիմնականում կապված էին այդ ժամանակաշրջանում տնտեսության այլ ճյուղերի նկատմամբ հողի սեփականաշնորհման հետ կապված գյուղատնտեսության ավելի բարվոք վիճակում գտնվելու հետ: Այդ պատճառով էլ ՀՀ ուրբանիզացման մակարդակը 67%-ից իջավ 64%-ի: Սակայն կապված գյուղատնտեսական արտադրության զարգացման որոշ դժվարությունների և հիմնախնդիրների, գյուղատնտեսական տնտեսությունների խոշորացման

առկա միտումների հետ, վերջին տարիներին ավելի ինտենսիվ և մասշտաբային է դարձել նաև գյուղական բնակչության արտագաղթը: Սրա հետևանքով վերացման վտանգի տակ են փոքր գյուղերը, ծերանում է գյուղական բնակչությունը, գյուղատնտեսական հողահանդակները լիարժեք չեն օգտագործվում և այլն: Եթե նախկինում բնակչության արտահոսք էր նկատվում հիմնականում լեռնային փոքր և սահմանամերձ բնակավայրերից, ապա վերջին մեկ-երկու տասնամյակներին՝ նաև մեծ և խոշոր գյուղական բնակավայրերից: Պատճառն այն է, որի հողի սեփականաշնորհման հետևանքով խոշոր գյուղերում գյուղատնտեսությունը ի վիճակի չէ ամբողջապես օգտագործել առկա աշխատանքային ռեսուրսները: Մոտակա տասնամյակում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հետ կապված գյուղատնտեսության ոլորտում տասնյակ հազարներով զբաղվածների թիվը նվազելու է, և եթե միջոցառումներ չձեռնարկվեն գյուղական վայրերում և քաղաքներում տնտեսության այլ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ, ապա գյուղական բնակչության արտագաղթի մասշտաբները մոտակա տասնամյակում էլ ավելի մեծ չափերի կհասնեն:

ՀՀ տարաբնակեցման համակարգի տարբեր կարգի և մեծության քաղաքներում միգրացիայի մասշտաբերը տարբեր են: Բնակչության արտահոսքի մասշտաբները հատկապես մեծ չափերի հասան նախկին վերամշակող արդյունաբերության կենտրոններում (Գյումրի, Վանաձոր, Չարենցավան և այլն), որոնք կորցրեցին իրենց միգրացիոն ձգողական ուժը և դարձան արտահոսքի օջախներ (2): Հիմնական պատճառը տնտեսական հիմքի՝ վերամշակող արդյունաբերության խիստ անկումն էր և գործազրկության ահռելի չափերը:

Ինչպես հայտնի է, ցանկացած բնակավայրի բնակչության թվաքանակը փոփոխվում է երկու եղանակով՝ բնական և մեխանիկական շարժի միջոցով: Եվ եթե մենք ունենք տվյալ ժամանակահատվածում ծնվածների և մահացածների բացարձակ թվերը և նույն ժամանակահատվածում տվյալ բնակավայրի բնակչության թվի փոփոխությունը, ապա կարող ենք որոշել, թե բնակչության թվի փոփոխության որ մասն է պայմանավորված միգրացիայով: Ընդ որում, հարկ է նշել, որ տվյալ մեթոդի կիրառման արդյունքում ստացված տվյալները մեր համոզմամբ ավելի արժանահավատ են և կարող են հիմք հանդիսանալ տարաբնակեցման և միգրացիայի փոխադարձ կապերի վերլուծության համար: Դրա վառ ապացույցն է այն օրինակը, որ ըստ պետական պաշտոնական տվյալների՝ 2002-2011թթ.-ի ընթացքում բնական շարժի միջոցով բնակչության թվաքանակը ավելացել է մոտ 126 հազ. մարդով, իսկ մեխանիկական շարժի միջոցով պակասել է մոտ 58 հազ. մարդով (5): Այսինքն ստացվում է, որ այս տարիների ընթացքում ՀՀ բնակչությունը պետք է ավելացած լիներ 68 հազարով: Սակայն 2011թ.-ի մարդահամարի արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ բնակչության թվաքանակը 2002-2011 թթ.-ի ընթացքում ոչ միայն չի ավելացել, այլև պակասել է մոտ 194 հազարով. 2001թ.-ի մարդահամարի տվյալներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3.213.011 մարդ, իսկ 2011թ.-ի մարդահամարի տվյալներով՝ 3.018.854 մարդ: Ընդ որում, քանի որ 2001 և 2011 թթ. մարդահամարները անցկացվել են հոկտեմբեր ամսին, այդ պատճառով էլ հաշվարկները կատարել ենք սկսած 2002 թ.-ից ավարտված 2012թ.-ով: Իսկ վերոնշյալ մեթոդի կիրառմամբ ստացվում է, որ 2001-2002թթ.-ի ընթացքում միգրացիայի միջոցով Հայաստանի Հանրապետությունը լքել է ավելի քան 320 հազար քաղաքացի: Համոզված ենք, որ այս տվյալներն ավելի մոտ են իրականությանը:

Վերոնշյալ մեթոդի օգնությամբ ստացել ենք ՀՀ քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի ինտենսիվության ցուցանիշը 1000 մարդու հաշվով 2012-2013թթ.-ի համար: Միգրացիայի սալդոյի (մնացորդի) ինտենսիվության գործակիցը 1000 մարդու հաշվով ստանալու համար օգտագործել ենք հետևյալ բանաձևը՝ $Գ_{Մu} = \frac{Մu}{\overline{Բ}} \times 1000$, որտեղ $Գ_{Մu}$-ն միգրացիայի սալդոյի գործակիցն է, $Մu$-ն միգրացիայի սալդոյի ցուցանիշը, իսկ $\overline{Բ}$-ն տվյալ ժամանակաշրջանում բնակչության միջին տարեկան թվաքանակը

(1):

Նախ նշենք, որ 2012-2013թթ.-ի ընթացքում ՀՀ բոլոր քաղաքներում միգրացիայի սալդոյի ինտենսիվության գործակիցը եղել է բացասական: Հաշվարկների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերում մեծ է մայրաքաղաք Երևանի դերը, քանի որ նկատվում է այն օրինաչափությունը, որ միգրացիայի սալդոյի ամենաբարձր բացասական գործակիցներն ունեն հիմնականում հենց Երևանից հեռու քաղաքները՝ Դաստակերտը (-28‰), Թալինը (-25.6‰), Մարտունին (-19.0‰), Արթիկը (-18.8‰), Գավառը (-17.9‰), Ալավերդին (-17.6‰), Նոյեմբերյանը (-17.5‰), Թումանյան (-17.3‰), Եղեգնաձոր (-17‰), որոնք տնտեսապես ավելի թույլ են կապված մայրաքաղաքի հետ: Դրան հակառակ, միգրացիայի սալդոյի համեմատաբար ցածր բացասական գործակիցներ ունեն Երևանին մոտ գտնվող քաղաքները, որոնք տնտեսապես ինտենսիվորեն կապված են մայրաքաղաքի հետ, մասնավորապես՝ Արարատը (-2.3‰), Վաղարշապատ (-2.8‰), Նոր Հաճընը (-3.8‰), Մասիսը (-4.1‰), Աբովյանը (-4.3‰): Այս շարքում բացառություն է կազմում Դիլիջան քաղաքը (-2.6‰), որը չնայած գտնվում է Երևանից բավականաչափ հեռու, սակայն լինելով ռեկրացիոն կենտրոն, տնտեսապես համեմատաբար ավելի քիչ է կախված Երևանից: Ռեկրացիոն կենտրոններից Ծաղկաձորում ու Ջերմուկում նկատվել են Հանրապետության մակարդակով միջին ցուցանիշներ, համապատասխանաբար՝ -12.7‰ և -15.6‰: Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ քաղաքների բնակչության միգրացիոն տեղաշարժերը նպաստում են ՀՀ մասշտաբով տարաբնակեցման անհամաչության մեծացմանը, տարաբնակեցման միասնական համակարգում Երևանյան ագլոմերացիայի դերի մեծացմանը:

Վերլուծվող ժամանակահատվածում (2012-2013 թթ.) բոլոր մարզկենտրոններում գրանցվել են միգրացիայի սալդոյի ինտենսիվության համեմատաբար բարձր ցուցանիշներ: Այս ցուցանիշը համեմատաբար ցածր է Կապան քաղաքում (-5.5‰): Ինչպես արդեն նշել ենք, չնայած որ Երևանը վերջին տարիներին ինքն է արդեն դարձել արտահոսքի խոշոր օջախ, սակայն համեմատած ՀՀ այլ բնակավայրերի հետ, դեռևս շարունակում է հրապուրիչ մնալ բնակչության համար, այդ պատճառով էլ մայրաքաղաքում գրանցվել է ՀՀ քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի ինտենիսվության ամենացածր ցուցանիշը՝ -1.3‰:

Միգրացիայի կառավարումը անհրաժեշտություն է ցանկացած պետության համար, սակայն Հայաստանի Հանրապետության դեպքում այն կարելի է որակել որպես խիստ հրատապ լուծում պահանջող խնդիր, քանի որ բնակչության միգրացիայի թողած սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, տարաբնակեցման և սոցիալ-քաղաքական բացասական հետևանքներն աղետալի են այն աստիճան, որ նույնիսկ արդեն վտանգում են մեր երկրի ազգային անվտանգությանը (4): Ինչպես արդեն նշել ենք, ներկայումս Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերի միգրացիայի սալդոն բացասական է, այսինքն բնակչության արտահոսքը գերազանցում է ներհոսքին: Սակայն խնդիրը միայն բնակչության քանակի նվազումը չէ: Ինչպես գիտենք, եթե բնական շարժի հետևանքով փոփոխվում է հիմնականում բնակավայրերի բնակչության թվաքանակը, ապա մեխանիկական շարժերի հետևանքով տեղի են ունենում նաև բնակավայրերի բնակչության կառուցվածքի որակական փոփոխություններ:

Վերջին տարիներին քաղաքականապես անկայուն որոշ երկրներից (Սիրիա, Լիբանան, Իրան, Իրաք) նկատվում է մարդկանց ներհոսք դեպի Հայաստան, որոնց գերակշիռ մասը կազմում են հայերը (6): Պետությունը պետք է նրանց ներառի ներքին միգրացիայի գործընթացներում և փորձի բնակեցնել Արարատյան դաշտից դուրս գտնվող բնակավայրերում, եթե հնարավոր է հատկապես սահմանամերձ և լեռնային բնակավայրերում, որոնք մեր պետության համար ունեն ազգային ռազմավարական նշանակություն, այնտեղ ստեղծելով կյանքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Դա

հնարավորություն կտա բնակչության միգրացիոն գործընթացներն օգտագործել ամբողջ ՀՀ-ի և առանձին մարզերի սահմաններում ավելի հավասարակշռված տարաբնակեցում ձևավորելու համար:

Թվարկված բացասական հետևանքներից խուսափելու կամ դրանք թեկուզ մեղմելու համար հարկավոր է տարաբնակեցման և միգրացիայի կարգավորմանն ուղղված պետական համապատասխան միջոցառումների համակարգի և ծրագրերի մշակում:

ВЗАИМОСВЯЗЬ МИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ РА И РАССЕЛЕНИЯ

Манасян А., аспирант, ЕГУ

В статье рассмотрена взаимосвязь миграции населения РА и расселения. На основе фактических данных 2012-2013гг. проанализировано влияние миграции населения на структуру расселения и перемещение населения. Рассчитаны показатели интенсивности сальдо миграции населения городов, на основе которых были выявлены особенности миграции населения различных центров расселения.

THE RELATIONSHIP BETWEEN MIGRATION OF RA AND SETTLEMENT.

Manasyan H.PHD , student, YSU

In the article examined the relationship of migration of RA and settlement. Evidence-based in 2012-2013 analyzed the impact of migration on the structure of the settlement and on population movement. Calculated indicators intensity migration balance of cities, and, based on identified characteristics of migration of various centers of population.

Գրականություն

1. Մանասյան Մ.Գ Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, Եր., 2008թ., 260 էջ:
2. Մանասյան Մ.Գ. ՀՀ բնակչության միգրացիան և տարաբնակեցման հիմնախդիրները, ԵՊՀ. «Տարեգիրք 2012», 451-461 էջեր:
3. Մանասյան Մ.Գ. , ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե., ԵՊՀ, 2005թ., 397 էջ:
4. Арутюнян Л. Новые перепетии армянской миграции: аккуммулятивная причинность и возможные последствия. Е. , Տարեգիրք 2011, с. 54-70.
5. www.armstat.am
6. www.crrc.am

ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ, դասախոս, ԱրՊՀ

Հիմնաբառեր. դեպոպուլյացիա, բնակչության միգրացիա, բնակչության վերարտադրություն, սեռատարիքային կազմ:

Ցանկացած երկրում բնակչության վերարտադրության փոփոխությունը պայմանավորված է մի շարք ժողովրդագրական գործոններով՝ ծնելիությամբ, մահացությամբ, ընտանեկան կազմով, միգրացիոն շարժով, սեռատարիքային կազմով, ամուսնության միջին տարիքով, ամուսնալուծութ-

յունների թվաքանակով: Բացի ժողովրդագարական գործոններից կարևոր են նաև բնակենսաբանական, սոցիալ տնտեսական, պատմական, հոգեբանական, սոցիալ մշակութային և այլ գործոնները [1]:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավումը հայտարարվել է պետական քաղաքականության գերակայություն և ազգային - պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարր: Այդ իսկ պատճառով մեծ կարևորություն է տրվում բնակչության բնական և մեխանիկական աճի՝ վերարտադրության ուսումնասիրմանը, ինչպես նաև ժողովրդագրական մի շարք միջոցառումների իրականացմանը, որոնք ուղղված են ինչպես բնական աճի ավելացմանն, այնպես էլ արտագաղթի ծավալների կրճատմանը:

Բնական աճը դա բնակչության վերարտադրության որոշիչ գործոնն է, որն էլ հենված է ծնելիության և մահացության ցուցանիշների վրա: Բնական աճը ԼՂՀ-ում միշտ էլ ունեցել է դրական ցուցանիշ, բացառությամբ պատերազմական տարիներին: 1926 թվականին ԼՂՀ-ում բնակչության թիվը կազմել է 125.3 հազար մարդ, այնուհետև շարունակել է աճել և 1989 թվականին ունեցել է իր առավելագույն ցուցանիշը, ամբողջ 20-րդ դարի և 21-րդ դարի առաջին տասնամյակի համար: Այդ ժամանակ ԼՂՀ բնակչության թիվը կազմել է 189.1 հազար մարդ: Սակայն այդ թիվը պատերազմական գործողություններով պայմանավորված կտրուկ նվազել է և հետպատերազմական տարիներին՝ 1995թ. կազմել է 122.6 հազար մարդ, որից հետո նորից աճել է 2013 թվականին կազմել է 146.8 հազար մարդ:

Որոշիչ նշանակություն ունի բնակչության ծնելիության ցուցանիշը , որը ԼՂՀ-ում գերակշռում է մահացության ցուցանիշին, ինչն էլ ապահովում է բնական աճի դրական ցուցանիշը: 2006 թվականից սկսած ծնելիության ցուցանիշի կտրուկ աճ է գրանցվել, ինչը պայմանավորված էր նաև ծնելիության ցուցանիշի բարձրացման ժողովրդագրական քաղաքականության ծրագրերի իրականացման հետ: Այդ տարում ծնելիության ցուցանիշը կազմել է 9.4 ‰, այն աստիճանաբար աճել է և 2009 թվականին գրանցվել է վերջին տասնամյակում ծնելիության ամենաբարձր ցուցանիշը՝ 20‰, իսկ մահացությունը՝ 9 ‰, բնական աճն այդ տարում կազմել է 11‰: Դրանից հետո որոշակիորեն նվազել է բնական աճի ցուցանիշը և 2012-2013թթ-ին այն կազմել է 1268 մարդ կամ 8.6‰, որն էլ մեխանիկական աճի հետ միասին կազմել է 1601 մարդ, ինչով էլ պայմանավոված բնակչության հավելաճը եղել է 1.1% [2], իսկ առանց մեխանիկական աճի բնակչության վերարտադրությունը՝ 0.9%:

Աղյուսակ 1.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տարիներ	Ընդամենը			1000 բնակչի հաշվով		
	Ծնվածներ	Մահացած-ներ	Բնական Աճը	Ծնելիութ-յուն	Մահացութ-յուն	Բնական աճ
2006	2102	1235	867	15.3	9.0	6.3
2007	2145	1227	918	15.4	8.8	6.6
2008	2418	1317	1101	17.3	9.4	7.9
2009	2821	1266	1555	20.0	9.0	11.0
2010	2694	1341	1353	18.8	9.3	9.4
2011	2586	1297	1289	17.9	9.0	8.9
2012	2560	1264	1296	17.6	8.7	8.9
2013	2500	1232	1268	17.0	8.4	8.6

ԼՂՀ-ում որպես հետպատերազմյան երկիր կարևորվում է բնական աճի բարձր ցուցանիշը, այդ է պատճառը, որ ժողովրդագրական քաղաքականության այն ծրագրերը, որոնք իրականացվում են ԼՂՀ-ում պետք է ավելի ընդլայնվեն և ինտենսիվորեն իրագործվեն: Բացի դրանից, հնարավորինս պետք է

խուսափել այն բոլոր խոչընդոտներից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բնակչության բնական աճի վրա: Խոսքն հատկապես վերաբերում է սոցիալական խնդիրներին, որոնք բնական աճի վրա ազդող կարևորագույն գործոն են համարվում:

Ժողովրդագրական գործոնների շարքում կարևոր է սեռատարիքային կազմը: Այս առումով զգալի տարբերություններ չկան կանանց և տղամարդկանց տարիքային խմբերում: Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 15-ից մինչև 30 տարեկան տարիքային խմբում տղամարդկանց թիվը փոքր ինչ գերակշռում է կանանց թվին, համապատասխանաբար կազմելով ընդհանուր բնակչության մեջ 9% և 7%: 30-35 տարեկանների տարիքային խմբում տղամարդկանց և կանանց թիվը հավասարվում է, իսկ ավելի բարձր տարիքային խմբերում գերակշռում են կանայք: ԼՂՀ-ի ընդհանուր բնակչության մեջ գերակշռում է կանանց թվաքանակը, որի պատճառներից մեկն էլ այն է, որ տղամարդկանց մահացության ցուցանիշը տարբեր տարիքային խմբերում ավելի բարձր է քան կանանցը [2]:

Բնակչության բնական աճի վրա ազդող կարևոր ժողովրդագրական գործոն է նաև ամուսնությունների թիվը, ամուսնության միջին տարիքը, ամուսնալուծությունների ցուցանիշը [1]: Ամուսնությունների թիվն 1995 թ-ից մինչև 2009 թիվն աճել է, որից հետո նորից սկսել նվազել: 2013 թվականի տվյալներով այն կազմել է 5.9‰: Ինչ վերաբերում է ամուսնալուծություններին՝ ԼՂՀ-ում, գնալով այս ցուցանիշի աճ է նկատվում: Եթե 2006 թվականին այն կազմել է 0.9‰, ապա 2013 թվականին հասել է 1‰-ի: Ինչպես տեսնում ենք ամուսնությունների թիվը գնալով կրճատվում է, իսկ ամուսնալուծություններինն՝ աճում, ինչն էլ իր բացասական ազդեցությունը կունենա բնակչության բնական աճի վրա:

Ամուսնության միջին տարիքը ԼՂՀ–ում բավականին բարձր է և կազմում է 26 տարեկան: Այն ծնելիության մակարդակի իջեցման վրա ազդող հիմնական գործոններից մեկն է, քանի որ այս դեպքում կրճատվում է կանանց պտղաբերության, վերարտադրական ժամանակահատվածը և փոքրանում երկուսից ավելի երեխա ունենալու հավանականությունը: Այդ է պատճառը, որ երրորդ և հերթական երեխայի ծննդի ցուցանիշների մեջ, մինչև 2009 թվականը գրանցված աճը սկսել է նվազել կազմելով ծնվածների ընդհանուր թվաքանակում 29%, նախկին 32%-ի փոխարեն: Ընդհանուր առմամբ երրորդ և հերթական երեխայի ծննդի ցուցանիշները մեծ են հատկապես ԼՂՀ գյուղերում, ինչն էլ մեծ մասամբ պայմանավորված է հոգեբանական գործոնով՝ ինչ որ չափով պահպանվել է գյուղական բնակավայրերում բազմավակ ընտանիք ունենալու հոգեբանական ավանդույթը:



Նկար 1: ԼՂՀ Բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշները

Բնական աճի վրա ազդող երկրորդ կարևոր գործոնը մահացության ցուցանիշն է, ինչը պատերազմական տարիներին ԼՂՀ-ում զգալիորեն աճեց: Զգալի թվով երիտասարդներ իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի ազատության, բնակչության թվաքանակը կրճատվեց մոտ 6500-ով: Քանի որ զոհվածների մեծամասնությունը երիտասարդ տղաներ էին, ապա այն

անդրադարձավ նաև բնակչության հետագա բնական աճի վրա: Այդ տարիներին, ինչպես տեսանք, բնակչության թիվը ոչ միայն չէր աճում, այլև զգալիորեն նվազում էր, Այդ ամենի հետևանքով առաջացավ սեռային կազմի անհամամասնություններ, որը ևս պատճառ դարձավ հետագա տարիներին ծնելիության ցածր ցուցանիշի համար, որը սկսել է աստիճանաբար ավելանալ 2000 թ-ից հետո:

Ինչպես գիտենք մահացության ցուցանիշը գլխավորապես պայմանավորված է տվյալ պետության առողջապահության զարգացման մակարդակով: ԼՂՀ-ում վերջին մի քանի տարվա ընթացքում առողջապահական համակարգը զգալիորեն առաջընթաց է ապրել, որն էլ իր կնիքն է թողել մահացության ցուցանիշի վրա՝ այն զգալիորեն կրճատելով, իսկ մանկամահացութունը հասել է նվազագույնի: Բավական է միայն նշել, որ 2006 թվականին մանկամահացության գործակիցը կազմել է 14.7 ‰, իսկ 2013 թվականին այդ գործակիցը նվազել է, հասնելով 7.6-ի: Եթե խոսենք ընդհանուր մահացությունների գործակցի մասին, ապա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2006 թվականից մինչև 2013 թվականն զգալիորեն նվազել է՝ 9 ‰-ից իջնելով 8,4 ‰ :

ԼՂՀ-ում մահացության ցուցանիշն ըստ քաղաքային և գյուղական բնակչության նկատելի տարբերություններ ունի: 2013 թ-ի տվյալներով քաղաքային բնակչության համար այն կազմել է 7,3 ‰, իսկ գյուղական բնակչության համար՝ 9,4 ‰:

2014 թվականին հայ ադրբեջանական սահմանում անընդհատ թշնամու կողմից հրադադարը խախտվում էր, ինչը պատճառ դարձավ երկու կողմում էլ մարդկային զոհերի, որով պայմանավորված մահացության ցուցանիշի որոշակի աճ նկատվեց:

Բնակչության բնական աճի վրա անուղղակիորեն ազդեցություն են ունենում նաև արտագաղթի և ներգաղթի ծավալները: Հետպատերազմյան տարիներին, մինչև 2006 թվականը, բնակչության մեխանիկական աճն ունեցել է բացասական ցուցանիշ, այսինքն՝ արտագաղթը գերակշռել է ներգաղթին, սկսած 2007 թվականից այդ բացասական ցուցանիշը նվազել է, իսկ 2008 թվականից այն դարձել է դրական: Արդեն դրական դարձած ցուցանիշը գնալով աճում է, սա նշանակում է, որ ԼՂՀ ավելի շատ մարդ է ներգաղթում, որը 2011 թվականի տվյալներով հետևյալ պատկերն է ունեցել ներգաղթողների թվաքանակը 1.7 անգամ գերակշռել է արտագաղթողների թվաքանակին, որն էլ իր անուղակի դրական ազդեցությունն է ունենում բնական աճի վրա: Հատկանշական է այն փաստը, որ ներգաղթողների մեջ վերջին երկու տարում գերակշռում է կանանց թիվը [3]:

Ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք ասել, որ պատերազմական նման գոտում գտնվելու փաստը ԼՂՀ-ին կանգնեցնում է ժողովրդագրական լուրջ խնդրի լուծման առաջ՝ այն է հնարավորինս ապահովել բնակչության բնական աճի բարձր ցուցանիշ, ինչը մեր հանրապետության համար ունի ազգային-պետական անվտանգության պահպանման նշանակություն: Իսկ բնական աճի բարձր ցուցանիշի ապահովման համար կատարվում են արդեն իսկ առաջին քայլերը: Իրականացվում է ժողովրդագրական քաղաքականություն, որը տարեցտարի ընդլայնում է իր ծավալները, այն ուղղված է ոչ միայն բնական աճի բարձրացմանն այլև ներգաղթի խրախուսմանը: Ժողովրդագրական քաղաքականության ծրագրերի ինտենսիվ իրագործումը և բնակչության բնական աճին խոչընդոտող բոլոր գործոնների հնարավոր նվազագույնը , կհանգեցնի որոշակի արդյունքների՝ բնական աճի հետագա բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Աշխարհի բնակչությունը, Ե., 2011:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տեղեկագիրք, Ստեփանակերտ, 2013:
3. Միգրացիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությաունում 2011-2012թթ. ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ 2012:
4. В.М. Медведов, Основы демографии, М.1985г.
5. А.Я.Боярский, Курс демографии, М. 1985г.

ВОСПРОИЗВОДСТВО НАСЕЛЕНИЯ НКР

Балаян К., преподаватель, АГУ

В статье кратко описывается два важных показателя естественного прироста населения НКР – рождаемость и смертность. В соответствии с данными показателями рассчитан прирост населения НКР в процентах. Подробно обсуждаются факторы, влияющие на естественный прирост населения. Отмечается важная роль интенсивного осуществления демографических программ и минимализация факторов, препятствующих приросту населения, что приведет к дальнейшему увеличению естественного прироста населения.

INCREASE OF POPULATION OF NKR

Balayan Q., lecturar, ASU

In the article two important indicators of a natural increase of the population of NKR – the birth rate and mortality are briefly described. According to these indicators the increase of NKR population in percentage is calculated. Data showed that the increase of population belongs to the first type. The factors influencing the natural increase of the population are in detail discussed. The important role of intensive implementation of demographic programs and minimizing the factors interfering the increase of population that will lead to further natural increase of the population are noted.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, մագիստրանտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. Տարաբնակեցում, տարաբնակեցման տարածաշրջանային համակարգ, արտագաղթ, միջին մարդաշատություն, տարածաժամանակային կենսագործունեության պայմաններ, համայնքների միավորում:

Տարաբնակեցումը որևէ տարածքի բնակեցման գործընթացն է ու դրա արդյունքում ձևավորված բնակավայրերի ցանցը: Տարաբնակեցման համակարգ (ՏՀ) ասելով՝ հասկացվում է փոխկապակցված քաղաքային և գյուղական բնակավայրերի խումբը, որը ձևավորվել է որոշակի արտադրական և սոցիալական խնդիրների լուծման հիման վրա և որն ապահովում է տարածաշրջանի բնակավայրերի և տնտեսության զարգացման միասնությունը: Եվ այդ միասնության ներդաշնակության աստիճանն էլ պայմանավորում է տարածաշրջանի բնական և արտադրական ուժերի օգտագործման արդյունավետությունը: Բնակավայրերի այդպիսի խմբերում ամեն մի բնակավայր կրում է իրեն բնորոշ

փոխլրացնող տնտեսական և սոցիալական գործառույթներ:[3]

Տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության ժամանակ պետք է պարզել, թե ինչպես փոխվել տվյալ ժամանակահատվածում բնակավայրերի թվաքանակը, ինչ նոր բնակավայրեր են ստեղծվել, կամ վերացել, ինչպես է փոխվել նրանց մարդաշատությունը, և ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները:[2]

Լոռու մարզի ժամանակակից տարաբնակեցման ցանցն իր հիմնական գծերով սկսել է ձևավորվել 19-րդ դարի 30-ական թթ.-ից: Այստեղ տարաբնակեցման արեալներն ընդգրկում են գլխավոր գետի՝ Դեբեդի ու դրա վտակների՝ Փամբակի ու Ձորագետի հովիտները, որտեղ կենտրոնացած է մարզի բնակչության 70-75 %-ը:[4] Ըստ բարձրության գոտիների մարզի առանձին տարածաշրջաններում նկատվում են ինչպես բնակավայրերի և բնակչության թվի, այնպես էլ բնակավայրերի մարդաշատության զգալի տարբերություններ:

1926-1989 թթ. ժամանակահատվածում Լոռու մարզի բնակչության թվաքանակն անընդհատ աճել է: Ընդ որում, այդ աճը տեղի է ունեցել հիմնականում քաղաքային բնակչության թվաքանակի ավելացման հաշվին՝ պայմանավորված մարզի արդյունաբերության արագ զարգացմամբ և նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Ինչ վերաբերվում է գյուղական բնակչությանը, ապա այդ ժամանակահատվածում դրա թիվը մնացել է գրեթե անփոփոխ, սակայն գյուղական բնակավայրերի թիվը նվազել է՝ 1926-1989 թթ., 162-ից հասնելով 115-ի:

1989թ.-ից հետո, սակայն, կտրուկ նվազել է մարզի թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչությունը: Քսանհինգ տարվա ընթացքում մարզի բնակչության թվաքանակը նվազել է 29,5%-ով, այսինքն մոտ 100000 մարդով, ինչը ՀՀ մարզերում դիտված բնակչության ամենամեծ կրճատումն է:

Բնակչության թվի նվազումը պայմանավորված է ինչպես բնական աճի կտրուկ անկմամբ, այնպես էլ միգրացիայի աննախադեպ մեծությամբ:[1] Եթե 1980-ականներին բնական աճը կազմում էր 22-23 ‰, ապա այժմ՝ 1,2 ‰: Ինչ վերաբերվում միգրացիային, ապա այն մեծ չափերի է հասել թե գյուղական, թե քաղաքային բնակավայրերից, հատկապես մարզկենտրոն Վանաձորից: Արտագաղթն իր հերթին ազդում է բնական աճի վրա, քանի որ արտագաղթում են հիմնականում երիտասարդ ընտանիքները:

Մարզի բոլոր քաղաքներում 2001-ից 2013 թ-ը բնակչության թվաքանակը նվազել է: Եթե համեմատենք գյուղական բնակչության թվաքանակի կրճատման հետ, կտեսնենք, որ քաղաքային բնակչությունն առավել մեծ չափով է կրճատվել (համապատասխանաբար 19 % և 16 %), և դրան համապատասխան 2001-ից 2013 թ-ի ընթացքում նվազել է մարզի ուրբանիզացման մակարդակը՝ 59.4-ից 58,5 %: Դա բացատրվում է մարզի նախկին հզոր արդյունաբերության փլուզումով, որն էլ պատճառ է հանդիսացել քաղաքային բնակչության շրջանում գործազրկության մեծացմանը և արտագաղթին:

2001-ից 2013 թ-ի ընթացքում մարզի բնակավայրերի մեծ մասում բնակչության թվաքանակը նվազել է, և միայն 8 գյուղական բնակավայրում է տեղի ունեցել բնակչության թվաքանակի ավելացում: Այս ժամանակահատվածում նվազել է գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը: Եթե 2001 թ. այն կազմում էր 969 մարդ, ապա 2013 թ-ին միջին մարդաշատության ցուցանիշը կազմում էր 801 մարդ: Եթե բնական շարժի նվազումն ավելի շատ ազդեց տարաբնակեցման քանակական տեղաշարժերի վրա, այսինքն փոխեց բնակավայրերի մարդաշատությունը, դրանց հարաբերակցությունը, ապա մեխանիկական տեղաշարժերն ավելի շատ որակական փոփոխություններ առաջացրին, որն արտահայտվեց տարաբնակեցման թե տարածքային, թե հիերարխիկ կառուցվածքի փոփոխությունների մեջ:

Արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա, պատճառ դառնալով դրա անհամամասնությունների: 2011 թ.-ի մարդահամարի

արդյունքները ցույց են տալիս, որ Լոռու մարզում և նրա բոլոր տարածաշրջաններում բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք: Տարածաշրջանային կտրվածքով կանանց ամենաբարձր մասնաբաժնով աչքի է ընկնում Տաշիրի տարածաշրջանը:

Աղյուսակ 1

Լոռու տարածաշրջանների բնակչության սեռային կազմը

Նախկին վարչական Շրջաններ (տարածաշրջաններ)	Առկա բնակչություն 2011 թ. %		Մշտական բնակչություն 2011 թ. %	
	կին	տղամարդ	կին	Տղամամարդ
Գուգարք	53,7	46,3	51	49
Թումանյան	53,4	46,4	52,4	47,6
Սպիտակ	54,2	45,8	50,4	49,6
Ստեփանավան	53,8	46,2	52,3	47,7
Տաշիր	59,9	40,1	52,5	47,5

Ըստ սեռային կազմի, առկա և մշտական բնակչության մասնաբաժինների մեծ տարբերությունները պատկերացում են տալիս հատկապես արական բնակչության միգրացիոն շարժերի մասին, որոնք առավել մեծ ազդեցություն են ունենում ժողովրդագրական իրավիճակի վրա, քանի որ ավելի ինտենսիվ արտագաղթում են երիտասարդ տարիքի տղամարդիկ, որոնք վերարտադրության գործընթացի ամենաակտիվ մասնակիցներն են: Ըստ ժողովրդագիր Վ. Խոջաբեկյանի հաշվումների՝ միայն 1989-97 թթ. ընթացքում Լոռու մարզում բնակչության 1/3-ը՝ մոտ 120-130 հազ. մարդ, արտագաղթել են: Նշենք, որ անհամապատասխանություն կա պաշտոնական վիճագրական տվյալների և տարբեր ժողովրդագիրների ներկայացրած տվյալների միջև: Մյուս կողմից, անհամապատասխանություն կա նաև մարդահամարի տվյալների և ընթացիկ հաշվառումների տվյալների միջև, ինչը բարդացնում է խնդրի ուսումնասիրությունը: Միգրացիայի վերաբերյալ պաշտոնական տվյալները վերաբերվում են միայն գրանցումից դուրս եկած և գրանցված քաղաքացիներին: Իրականում արտագաղթողների մեծ մասը դուրս չի գալիս գրանցումից և արդյունքում, լինելով ՀՀ քաղաքացիներ, տարիներ շարունակ ապրում և աշխատում են արտերկրում, իսկ քանի որ նրանց գերակշռող մասը երիտասարդներ են, ուստի ամուսնանում և ընտանիք են կազմում, երեխաներ ունենում Հայաստանից դուրս: Այդ ամենի հետևանքով մարզում նվազում է երիտասարդ բնակչության թվաքանակը, որն էլ բերում է ամուսնությունների և ծնունդների անկման, փոխարենը՝ բնակչության տարիքային կազմում ավելանում է ծերերի տեսակարար կշիռը:

Մարզի 113 համայնքներից 41-ում ծերերի (63 տ-ից բարձր տարիքի բնակչության) կշիռը բնակչության մեջ 15% -ից ավելի է, Իսկ Գուգարքի տարածաշրջանի Քարաբերդ գյուղական համայնքում ծերերի թիվը կազմում է 45%, այսինքն բնակչության մոտ կեսը ծերեր են: Անհանգստացնող է այն հանգամանքը, որ ծերերի կշիռն ավելի բարձր է մանր գյուղերում, ինչն այդ գյուղերի համար ժողովրդագրական առումով խիստ մտահոգիչ է:

Գիտական ու գործնական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում մարզի գյուղական համայնքների բնակչության տարածաժամանակային կենսագործունեության (ՏԺԿ) պայմանների գնահատումը: Բնակչության ՏԺԿ-ի վրա ազդում են մի շարք գործոններ, որոնց մի մասը՝ մասնակի սոցիալ- հոգեբանական գործոններ են,որոնք ազդում են կենսագործունեության այս կամ այն կողմի վրա, իսկ մյուս մասը՝ ինտեգրալ գործոններն են, որոնք զգալի չափով պայմանավորում են բնակչության կենսագործունեության տարածաժամանակային և գործառութային ամբողջական համալիրը:

Հաշվի առնելով մարզի առանձնահատկությունները, կարելի է առանձնացնել գյուղական համայնքների բնակչության ՏԺԿ պայմաններն ապահովող հետևյալ գործոնները [3].

1) Գյուղական համայնքի բացաձակ բարձրությունը, նկատի ունենալով, որ տեղանքի բացարձակ բարձրության մեծացման զուգընթաց վատանում են բնակչության ՏԺԿ պայմանները
2) Գյուղական համայնքի հեռավորությունը ՏԿ-ից , նկատի ունենալով, որ հեռավորության մեծացման զուգընթաց վատանում են բնակչության ՏԺԿ պայմանները
3) Գյուղական համայնքի հեռավորությունը տրանսպորտային մայրուղիներից, նկատի ունենալով, որ հեռավորության մեծացման զուգընթաց վատանում է բնակչության ՏԺԿ պայմանները
4) Գյուղական համայնքը տրանսպորտային մայրուղիներին կապող ճանապարհների վիճակը (ասֆալտե, բետոնե ծածկույթով, կամ առանց ծածկույթի)
5) Գյուղական համայնքի մարդաշատությունը, նկատի ունենալով, որ բնակչության թվի ավելացմանը զուգընթաց լավանում են բնակչության ՏԺԿ պայմանները
6) Գյուղական համայնքի բնակչության ապահովվածությունը վարելահողերով և այգիներով, նկատի ունենալով, որ ապահովվածության (մեկ շնչի հաշվով) մեծացման զուգընթաց լավանում է բնակչության ՏԺԿ պայմանները
7) Գյուղական համայնքի բնակչության բյուջեի սեփական եկամուտները, նկատի ունենալով, մեկ շնչի հաշվով դրա ավելացմանը զուգընթաց լավանում են բնակչության ՏԺԿ պայմանները:

Գյուղական համայնքների կենսագործունեության պայմանների գնահատումն իրականացրել ենք բալային մեթոդով: Յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը գնահատել ենք մեկից մինչև չորս բալի սահմաններում: Այնուհետև գումարել ենք բոլոր գործոնների ազդեցության բալերը և ստացել ենք գումարային բալը, որը մեր կարծիքով, ընդհանուր առմամբ արտահայտում է մարզի գյուղական համայնքների բնակչության ՏԺԿ պայմանների առկա տարբերությունները: Ամենաբարձր բալն ունի Սպիտակի ենթաշրջանի Ջրաշեն գյուղական համայնքը (24 բալ), իսկ ամենացածրը՝ Տաշիրի ենթաշրջանի Պաղաղբյուր գյուղական համայնքը (7 բալ) :

Բնակչության կենսագործունեության համար խիստ անբավարար պայմաններ ունեցող (0-10 բալ) գյուղական համայնքները 14-ն են, որից 6-ը գտնվում են Տաշիրի, 6-ը Թումանյանի տարածաշրջան-ներում: Դրանց մեծ մասը բարձր լեռնային, սահմանամերձ, մայրուղիներից հեռու, փոքր հողակտորներով մանր բնակավայրեր են:

Տարածաշրջաններն ըստ ՏԺԿ պայմանների Աղյուսակ 2

Նախկին վարչական շրջաններ	Գյուղ. համայնքների թիվը ըստ բնակչ. ՏԺԿ պայմանների			
	Խիստ անբավարար 0-10 բալ	Անբավարար 10-15 բալ	Բավարար 15-20 բալ	Լավ 20-ից ավելի
Գուգարքի	1	9	11	1
Թումանյանի	6	12	7	2
Սպիտակի	-	5	13	1
Ստեփանավանի	1	6	9	2
Տաշիրի	6	9	4	-

Ընդհանուր առմամբ, բնակչության ՏԺԿ-ի համար լավ պայմաններ ունեն Սպիտակի տարածաշրջանի գյուղական համայնքները:

Ներկայումս մարզի տարաբնակեցման կարևորագույն հիմնահարցերից է մանր և փոքր

գյուղական համայնքների մեծաթիվ լինելը, որոնց սակավ ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս հոգալու համայնքի առջև ծառացած խնդիրները: Մարզի 113 համայնքների շարքում մանր (մինչև 500 մարդ) և փոքր (500-1000 մարդ) գյուղական համայնքների թիվը կազմում է համապատասխանաբար՝ 46 և 16, այսինքն համայնքների ընդհանուր թվի 55%-ը: Դրանց թիվը զգալի է Թումանյանի և Ստեփանավանի տարածաշրջաններում, համապատասխանաբար 74% և 63%:

Լոռու մարզի տարաբնակեցման համակարգի շատ խնդիրների լուծում կարող է լինել նախկին շրջանային կենտրոնների արտադրական և ոչ արտադրական ոլորտների զարգացումն է: Պետք է հաշվի առնել հարևան գյուղերի արտադրության բնույթը և բնակչության պահանջմունքները: Դա հնարավորություն կտա հատկապես մարզկենտրոնից զգալի հեռավորություն ունեցող գյուղերի բնակչությանն իրենց սպասարկումը կազմակերպել մոտակա քաղաքում:

Տարաբնակեցման համակարգի հիմնահարցերի լուծում կարող է հանդիսանալ նաև միջ-բնակավայրային կապերի զարգացումը, միջհամայնքային միավորումների ստեղծումը, մանր համայնքների խոշորացումը: Դա սուր է արտահայտված Թումանյանի տարածաշրջանում:Մյուս տարածաշրջաններում միջբնակավայրային կապերի անհրաժեշտությունը ավելի թույլ է արտահայտված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղյան Գ., ,«Լոռու մարզի բնակչության ժողովրդագրական իրավիճակի աշխարհագրական վերլուծությունը», //Լոռու մարզի սոցիալ- տնտեսական զարգացման և բնօգտագործման արդի խնդիրներն և հեռանկարները//, գիտագործնական կոնֆերանսի նյութերի ժողովածու, Վանաձոր, 2007, էջ 18-24:
2. Մանասյան Մ.Գ., Հասարակական աշխարհագրության հետազոտության մեթոդները, Ե., 2008, 260 էջ:
3. Մանասյան Մ.Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե.,2005:
4. Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե., 2013, 416 էջ:
5. www.armstat.am

ПРОБЛЕМЫ РАССЕЛЕНИЯ В ЛОРИЙСКОМ МАРЗЕ

Аветисян Г ., аспирант, ЕГУ

В статье рассматриваются проблемы расселения в Лорийском марзе. Проанализированы выявленные изменения в системе расселенния, которые обусловлены изменениями демографической ситуации. Сделана попытка найти оптимальные решения этих проблем, используя програмное обеспечение Arcgis.

RESETTLEMENT PROBLEMS OF LORI MARZ

Avetisyan G. PHd student

The article discusses current resettlement issues of Lori marz. An analysis of occurring trends conditioned by demographic changes has been carried out. In addition, we have tried to find solutions to the outlined issues by using Arcgis software package.

ԻՐԱՆԻ ԳԻԼԱՆ ՆԱՀԱՆԳԸ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ասիստենտ, ԵՊՀ

Գիլանը Իրանի հյուսիսային մերձկասպյան նահանգներից է, որը գտնվում է Կասպից ծովի հարավ-արևելքում, ըստ Գրինվիչի միջօրեականի հյուսիսային լայնության 38՝27Բմինչև 36՝34Բու արևելյան երկայնության 50՝34Բմինչև 47՝53Բմիջև: [1]

Մատենագիտական ակնարկ

"Gīlān" անունը հիշատակված է հայ մատենագրության մեջ և վաղիսլամական պատմա-աշխարհագրական աղբյուրներում:

Գիլան անունը հայ մատենագրության մեջ զանազան ձևերով է գործածված՝ *Գիլան, Գելան, Գեղ, Գեղան, Գեղում, Գեղումք, Գեղումն, Գեղանազգի, Գելմնազգի,Գելմն, Գեալմն, Գելօք, Գեղմայ երկիր*, որը նշանակել է «Գիլան» գավառը և այդտեղ ապրող գիլանցի ցեղը: 5-րդ դարի պատմիչ Եղիշեն այսպես է հիշատակում Գիլանը. «Իսկ զգունդն զապարհայիկ, և զԿատշաց և զՀոնաց և զԳեղաց, և զայլս ևս ամենայն զընտիր զՕրուն մարդիկ ի մի վայր ժողովեր ...»[2]:

Հայ պատմագրության պատմահայր Մովսես Խորենացին իր ,Հայոց պատմությանն երկրորդ գլխում գրում է. «Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանունիւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին: Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեառն, և ծովեզերեայք, և այսր ևս քան զնոսա. նա և Կասբից երկիրն յայն սակս ապստամբեն ի մերոյ արքայեն բառերինՁ[3]: Խորենացին իր «Աշխարհացոյց-ի Վրկանի, Վրկանաց ծովի (Կասպից ծովի անվանումը հայկական աղբյուրներում) նկարագրության մեջ նշում է նաև ¦Գեղաւք և ԴիլումսՁ աշխարհները[4], իսկ «Աշխարհք ընդհանուր Ասիոյ» բաժնում բերում «Գելք » և «Դիլումք» անունները[5]:

7-րդ դարի պատմիչ Սեբեոսը ևս հիշատակում է Գեղ, Գեղում, Գեղումք, Գեղմայ երկիր. «... և ինքեանք ապստամբեալք գնացին 'ի Գեղումս ...»,[5] «... գնայր և ապստամբն ըստամ յամուր երկիրն Գեղմայ... »,[6] «...և զաւրք Գեղումք ոչ աւելի քան զերկուս հազարս»:[7] Սեբեոսը հիշատակում է նաև «Դելն, Դելումք և Դելումն» անվանումները. «...զժիր ու զքաջ ազգացըն զաւրութիւնս՝ որ բնակեալ էին 'ի նոսա, Դելն ու Դելումն»: [8] Սեբեոսի մոտ հանդիպում ենք նաև «Դելն ու Դելումն» անվանումները:[9]

---

[1] Faxte, Q., Negāhi be Gilān zamin, Tehrān, 2007/1386, p. 1.

[2] Եշիշէի վարդապետի, Վասն Վարդանայ եի հայոց պատերազմին եի քննադատութիինք Միքայեէլ Փաշայի Փորթուգալ, Ի տպարանի Սուրբ Ղազարու, Վենետիկ, 1903, էջ 361:

[3] Խորենացիոյ Մովսիսի, Պատմութիին Հայոց, Ի Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 1827, էջ 271, Մովսէս Խորենացու, Հայկական պատմութիին, Ս. Պետերբուրգ, 1889, աշխարհաբար թարգմանեց ւ լուսաբանեց Խորէն ծայրագոյն Վարդապետ Ստեփանէ, ծանոթ. 380, էջ 188-190, տե՛ս նաև Патканов К. П., Армянская география VII вька по Р. Х., типографія Императорской Академіи Наукъ, Санктпетербургъ, 1877. Աշխարհացոյց Է դարու, էջ 60-61:

[4] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացիոյ, Վենետիկ, 1881, էջ 12:

[5] Նույն տեղում, էջ 41:

[5] Պատմութիին Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Ի Կոստանդուպոլիս, Իտպարանի Յովհաննու Միիհէնմիսեան, 1851, էջ 60:

[6] Նույն տեղում էջ 94, 96:

[7] Նույն տեղում էջ 99:

[8] Նույն տեղում էջ 99:

[9] Նույն տեղում էջ 230:

Անանիա Շիրակացու (VIIդ.) ,Մատենագրությանն մեջ այսպես է հիշատակվում. « Պտղոմեոսն ասում է, թե մարերը բնակություն են հաստատել Կասպից ծովի արևելքում և [հարավում], որոնք ասում են ունեցել են մի միասնական իշխանություն, բայց այժմ այստեղ մարեր չկան: Պտղոմեոսը սրանց բնակավայրն է համարում Կասբը, Գելքը և Դիլմունքը, Ռեյը և Ասպահանը մարաց քաղաքներն են»[1]:

,Գիլանն անունը հիշատակում է նաև Առաքել Դավրիժեցին (XVIIդ.) իր ,Պատմությանն մեջ[2]:

Գիլան նահանգի անունը հանդիպում է նաև վաղ իսլամական աղբյուրներում:

X դարի անհայտ հեղինակի "Hodud al-'ālam" երկում վկայված է. ,Գիլանը մի շրջան է ծովի և լեռան միջև՝ բազում հոսող գետերով: Sapīdh-rūdh գետը հոսում է Գիլանի միջով և թափվում Կասպից ծով, որն բաժանում է երկու մասի՝ ծովի և այգիների միջև, որն անվանում են գետի ,այս կողմն (īn-sūy-i-rūdhī), մյուս մասն էլ գետի և լեռների միջև է, որն անվանում են գետի ,այն կողմն (ān-sūy-i-rūdhī)ն[3] (տե՛ս քարտեզ I):

Սամանյան շրջանի (Xդ.) հեղինակներից Իբն Հաուկալն իր " Surat al-arz" գրքում այսպես է հիշատակում Գիլանը. ,Դեյլամ երկրամասը բաղկացած էր դաշտավայրային և Ջիլ շրջաններից: Դաշտավայրայինը Գիլանն էր, որ գտնվում էր Կասպից ծովի հարավային շրջանում և Դեյլամ լեռան ստորոտումն[4]: Աբու Աբդոլլահ Մոկադասին (Xդ.) իր "Ahsan al- taqasim fi ma'refat" գրքում խոսում է Գիլանի քաղաքների մասին, սակայն չի հիշատակում Գիլան անվանումը[5]: XIIIդ. հեղինակ Յաղութ Համավին շրջելով Իրանի հյուսիսային նահանգներում, իր "M'ojam al-Boldan" գրքում գրում է. ,Գիլանում մեծ քաղաքներ չկան, փոքր գյուղեր են՝ ցրված անտառներում ու լեռների մեջն[6]:

Այուբյան տոհմից (XIII-XIVդ.)Աբու Ալ-Ֆադա Ամիր Ֆազելը՝ "Tārix-e Abu al- Fada" իր քառահատոր գրքում այսպես է հիշատակում Գիլան անունը. ,Գիլանը մոնղոլների հարձակման ժամանակ ուներ 12 քաղաք, որոնք բոլորն էլ ինքնուրույն էին և չէին ենթարկվում միմյանցն[7]:

Մեկ այլ վկայություն է բերում XIV դարի նշանավոր պատմագիր, աշխարհագրագետ՝ Համդոլլահ Մոսթոուֆին, իր "Tārix-e Gozide" գրքում, որտեղ բացի Գիլան անվանումից, հիշատակում է նահանգի նշանավոր քաղաքներ Ռաշտը, Լահիջանը, Ֆումանը (Ֆումանն անվանում նաև "Dara ol- Jilanat")[8]:

XIV դարի իրանցի գիտնական Անսարի Դամեշղին իր "Noxbat al-dahr" գրքում գրում է. ,Գիլանն անվանում են նաև Ջիլան, որը գտնվում է Դեյլամ լեռան ստորոտում: Կասպից ծովի առափնյա շրջանի քաղաքներից էին Լահիջանը, Համամը (Խոմամ), Ռաշտը, Ֆումանը, որոնք ինքնիշխան էին և չէին ենթարկվում միմյանցն[9]:

«***Գիլանը»*** բազմիցս հիշատակվում է միջնադարյան աղբյուրներում ու քարտեզներում նաև որպես *«Գիլանի ծով»*: Բ. Դորնը հիշատակում է Կասպից ծովի յոթանասուն անվանում՝ Կասպից, Հիրկանաց, Աստրախանի, Բաբ (Բաբ-ալ-Աբվաբ), Գիլանի, Դեյլամի և այլն[10]: Ծովանունը « *Գիլանի ծով»* ձևով ներկայացված է նաև XVIII դարում Փարիզում լույս տեսած Իրանի և Թաբարեստանի ծով

---

[1] Շիրակացի Անանիա, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 304-305:

[2] Դավրիժեցի Ա. , Պատմություն, Երևան, 1988, էջ 373:

[3] Minorsky, V.,Hudūd al- ʿālam (The regions of the world), 1982, Cambridge,Hudūd al-ʿālam, 1982, p. 136, 137.

[4] Ebn-e Huqal, Surat al-arz, tarjome J. Ša'āfar, Tehran, 1966/1345, p. 119.

[5] Ahsan al- taqāsim, tarjome A. Manzuy, Tehran, 1982/1361, j. 2, 52.

[6] Tāheri, A., Rāhnamā-ye siāhat o ziārat dar Gīlān, 1996/1375, p. 83.

[7] Ketāb-e Gilān, j.1, p. 483.

[8] Նույն տեղում, էջ 484:

[9] Damešqi, A., Noxbat ol- dahr, tarjome S. Tabibian, Tehran, 1978, p. 383

[10] Дорн, Б., Каспий, о походах древних русских в Табарестан, С. Петербург, 1875, ст. 63; Mofakham-Pāyām, L., Daryā-yeXazar, Tehrān,1996, s. 37.

քարտեզում (տես՛ քարտեզ II)[1]:

« *Գիլանի ծովը* » հիշատակում է նաև Ֆիրդուսին իր ,Շահնամեե պոեմում: ,*Գիլանե* անունը հիշատակում են նաև այն ճանապարհորդները, զբոսաշրջիկներն ու դեսպանները, որոնք դեռևս XIդ-ից սկսած ճանապարհորդել են Իրանում[2]:

Ներկայումս Գիլանն իր 14.711կմԱ տարածքով, որը կազմում է Իրանի ամբողջ տարածքի 9%, հյուսիսում սահմանակցում է Կասպից ծովին և Ադրբեջանի Հանրապետությանը, արևելքում՝ Մազանդարան նահանգին և Կասպից ծովին, հարավում՝ Ղազվին, Զանջան նահանգներին, իսկ արևմուտքում՝ Արդաբիլ նահանգին: Էլբուրս (Ալբորզ, 3000մ) լեռնաշղթան ձգվելով նահանգի արևմուտքից դեպի հարավ, այս շրջանն առանձնացնում է Իրանական բարձրավանդակից: Նահանգն ըստ իր բնական անհարթությունների բաժանվում է երեք շրջանի.

1. *հովտային շրջաններ* (Գիլանի հյուսիս-արևմտյան, կենտրոնական, արևելյան շրջաններ և Էլբուրսի հյուսիսային լանջերի ու Կասպից ծովի հարավային ափերի միջև գտնվող շրջաններ: Այս շրջանին են պատկանում Գիլանի տարածքի մոտավորապես 34,7 %, որոնք առատ տեղումների և ջրառատ գետերի շնորհիվ ապահովում են երկրի ամենաբերրի հողերը).
2. *նախալեռնային շրջաններ* (Էլբուրսի հյուսիսային և Թալեշի լեռնաշղթայի արևելյան լեռնահովտային շրջաններ՝ դեպի Կասպից ծով ընկած լանջերով: Նախալեռնային շրջանները կազմում են Գիլանի տարածքի մոտավորապես 12,2%: Այս շրջաններն ընկած են 100-500մ բարձրության միջև և այն տեղերում, ուր թեքություններն ավելի քիչ են, հողագործության համար նպաստավոր պայմաններ են ստեղծված).
3. *լեռնային շրջաններ* (Գիլան նահանգի բնական անհարթությունների մեջ գերակշռում են լեռնային շրջանները, որոնք Գիլան նահանգի ամբողջ տարածքի 52.1%-ն են զբաղեցնում են): Այս շրջանները բաժանվում են երկու մասի՝

- *արևելյան,* որոնք ընդգրկում են Թալեշի լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթներն են Մասուլեդաղը (3050մ), Հեսարբոլաղին (2904մ) և Փոշթեքուհը (2867մ)[3]: Այս շրջանի լեռներից են նաև Բաքրոդաղը կամ Բաղրոդաղը (3198մ)՝ Թալեշում, Շահմոալլեմը (3096մ)՝ Մասուլեում, Ասեմանսարան (2711մ)՝ Մաքալվանի (Ֆուման) հարավում, Լաթեբերեհնեն (2867մ)՝ Ռուսթամաբադի արևմուտքում, Մալմաբարը (1139մ)՝ Թալեղանշաֆթ գյուղի արևելքում, Համբորջիդաղը (1397մ), Ալլահ Բարլուդաղը (1685մ), Օրդեն (1817մ), Շադուլդաղը (2550մ)՝ Մասուլեի հյուսիս--արևելքում, Աջամդաղը (3009մ)՝ Թալեշ-Արդաբիլ սահմանում, Ասբինասը՝ (2005մ) Ասթարայում, Գերդեքուլին՝ (1628մ) Թալեշում, Բանդեսանգեն (2465մ)՝ Ֆումանում, Շահզադե Էբրահիմը (1840մ), Դիգանը (2611մ)՝ Շանդերմանում, Հաֆթեխունիդալին (2471մ), Վանեյը (3050մ) և Փոշթեքուհը (2867 մ)[4]:
- *արևմտյան,* որոնք առանձնանում են արևելյան շրջանի լեռներից Սեֆիդռուդ գետով: Դրանք են՝ Դարֆաք կամ Դելֆաք լեռը (2705մ)՝Ռուդբարում, Ասեմանսարան (2375մ), Սամամուսը (3620մ)՝ Ռուդսարում, Խորրամդաշթը (3329մ), Թանհաջը (3278մ) և Գորջին՝ (3334մ) Աշքուրում, Նաթաշքուհը(3000մ)՝ Ամլաշում, Թաբրին (1591մ)՝ Ամլաշի հյուսիս-արևմուտքում, Քաքուն (1055մ)՝ Սիահքելի հարավ-արեվելքում, Հոլուդաշթը (1410մ)՝ Ամլաշի հարավում, Չաքանեն (2963մ)՝ Ռահիմաբադում, Արքսարը (2523մ)՝ Չաբոքսարում[5]:

---

[1] Afšār I., Daryā-ye Māzandarān, Daftar-e motāl՛āsiyāsi va beyn-ol-mellali, Tehrān, 2001/1381, p. 105.
[2] Šāhnāme-ye Ferdousi“ that-e nazar-e I. A. Bertels, Tehran, 1977, j. 9.
[3] Ja’fari, Dāyerat ol mo’āref-e Dāyerat ol mo'āref-e jogrāfia-ye Irān,Tehrān, 2005/1384, p. 278.
[4] Mohandes Abbas Jafari, Dāyerat ol mo’āreb joγrāfyā-ye Irān, Tehrān, 1384, ş. 278.
[5] axte Q., 2007/1386, s. 12,13.

Հաշվի առնելով Գիլանի աշխարհագրական դիրքը, կարելի է նշել, որ այն Իրանի ամենականաչ, ամենաբերրի ու ջրառատ նահանգներից մեկն է: Գիլան նահանգի խոնավ կլիման են ապահովում տասնյակ մեծ ու փոքր գետեր, որոնք բոլորն էլ սկիզբ են առնում Էլբուրս լեռնաշղթայի ստորոտներից և թափվում Կասպից ծով:Այդ գետերի ջրառատությունը տարվա ընթացքում նույնը չէ: Անձրևների առատության հետևանքով Գիլանում շատ կան մշտական հոսող գետեր: Սեֆիդռուդը (765մ), որը ոչ միայն Գիլանի, այլև Իրանի ամենաջրառատ ու ամենաերկար գետն է, պատկանում է նաև Զանջան, Արևելյան Ադրբեջան, Քրդստան նահանգների ջրային ավազանին: Գետն իր բազմաթիվ վտակներով՝ Գելռուդ, Խոմամռուդ, Նոուռուդ, Թուշախուբ, Հեշմաթռուդ և այլն, միակն է, որ սկիզբ է առնում Իրանական բարձրավանդակից[1]: Սկիզբ առնելով Չեհելչեշմե (Քրդստան նահանգ) լեռներից և անցնելով Քրդստանով, այնտեղ գետը ստանում է ,Ղըզըլ Օզանե (,Կարմիր հոսանքե) անվանումը: Այնուհետև հոսելով Բիջար քաղաքի (Քրդստան նահանգ) հյուսիսով, Զանջան քաղաքում (Զանջան նահանգ) խառնվում է Զանջանչայ գետին, մտնում է Արևելյան Ադրբեջան նահանգ, ապա անցնում Ղաֆլանքուհ լեռնաշղթայի կիրճերով (Արևել. Ադրբեջան), Միանե քաղաքի շրջակայքում միախառնվում է Այդողմուշ գետին ու թեքվելով դեպի հարավ-արևելք՝ Թարեմսոֆալի դեհեստանում (Զանջան շահրեսթան), խառնվում է Շահռուդ գետին (205 կմ) ու առաջացնում Սեֆիդռուդ լիճը: Այստեղից հոսելով դեպի հյուսիս-արևելք, Ռաշթ շահրեստանից տարածվում Գիլանի դաշտում, որտեղից էլ վերջապես Քիանշահր քաղաքի հյուսիսից թափվում Կասպից ծով[2]: Արևմտյան Գիլանի ջրային ավազանին պատկանող գետերն են՝ Ասթարաչայ (33 կմ, սահմանային գետ Իրանի և Ադրբեջանի Հանրապետության միջև), Մորդաբ Ասթարա, Քանռուդ, Լավանդվիլ, Չելվանդ, Լոմիր, Փելասի,Չուբար, Հավիղ, Շիրաբադ, Լիսար, Խոթբեսարա, Ղալ'եբին, Դավան, Թորքմահալե, Նոուքանդ, Գյարքանռուդ, Խալեսարա, Քանգսար, Դինաչալ, Փիլամբարա, Շաֆառուդ, Ջույբարթազեաբադ, Քյարիմարգիլ, Թուլառուդ, Նիքքյարի, Նավռուդ,Չաֆ, Մորդաք (Շանդերման), Խալքայի, Զաղեռուբար, Փալանգվար,Մասուլեռուդխան, Գազռուբար, Շախռոզ (Զոմ'եբազար, Փիշռուդբար), Փասիխան, Փիրբազար և այլն[3]:

Մեծ և փոքր շատ գետեր են հոսում նաև Գիլանի արևելքով: Դրանցից են Փոլռուդ (82 կմ, արևելյան Գիլանի ամենամեծ գետը), Լանգեռուդ, Շալման,Շալմանռուդ, Քիառուդ, Գյազաֆռուդ, Սամուշ, Բիբալան, Մարսառուդ, Խոշքռուդ, Հաչինռուդ, Աղուզքյալլե, Խոշքելաթ գետերը և այլն[4]:

Գիլանի ջրային ավազանին են պատկանում նաև Անզալի ճահճուտը (այն նախկինում Կասպից ծովի մի մասն է եղել, որն ավազային պատվարների միջոցով, քամու և ալիքների շարժումների հետևանքով առանձին է մնացել ծովից), Ամիր քալայե և բազմաթիվ այլ ջրավազաններ ու ջրանցարաններ:

Համաձայն 2003թ. (1382 հիջ.թվ.) Գիլան նահանգի վարչական բաժանման՝ նահանգն ունի 11 շահրեստան[5], 94 քաղաք, 27 շրջան, 95 գյուղական շրջան և 3043 գյուղ[6]: Նահանգի վարչական կենտրոնն է Ռաշթ քաղաքը:

1. **Ասթարա(Āstārā)[7]՝** Կենտրոնական շրջան
2. **Ասթանե-յե Աշրաֆիե (Āstāne-ye Ašrafiyyeh)՝** Քիյանշահրի, Կենտրոնական շրջաններ

---

[1] Նույն տեղում, էջ 15:
[2] նույն տեղում, էջ 709:
[3] Pāyān–Mofakham, L. Daryā-ye Xazar, Rasht, 1375/1996, s. 235.
[4] Ghorbān Faxte, ş. 16.
[5] Երկրի վարչական բաժանման հետևանքով առաջացած միավոր, որը բաղկացած է մի քանի շրջաններից (մանրամասն տե՛ս Loghatnāme-ye Dehxodā, j. 9, 12880):
[6] Ketāb-e Gilān, j.1, s. 33-54.
[7] Հաշվի առնելով հոդվածի ծավալը և ձևաչափը, գիտական տառադարձմամբ տրվում է միայն շահրեսթանների անվանումները:

3. **Բանդար-ե Անզալի (Bandar-e Anzali)՝** Կենտրոնական շրջան
4. **Թալեշ (Tāleš)՝** Ռեզվանշահրի, Մասալ և Շանդերմանի շրջաններ
5. **Ռաշթ (Rašt)՝** Կենտրոնական, Խոմամի,Սանգյարի, Քուչէսֆահանի, Լաշթնեշայի շրջաններ
6. **Ռուդբար (Rudbar)՝**Ռահիմաթաբադ և Բոլուքաթի, Ամարլուի, Կենտրոնական շրջաններ
7. **Ռուդսար (Rudsar)՝** Ամլաշի, Ռահիմաբադի, Կենտրոնական շրջաններ
8. **Սոումեսարա (Someeh sarā)՝** Թավալեմի, Կենտրոնական, Միրզա Քուչեքխանի շրջաններ
9. **Ֆուման (Fuman)՝** Շաֆթի, Կենտրոնական շրջաններ
10. **Լահիջան (Lāhījān)՝** Դեյլամանի, Սիյահքելի, Կենտրոնական շրջաններ
11. **Լանգերուդ (Langerud)՝** Կենտրոնական շրջան:

Գիլանի նահանգի էթնիկ պատկերը բավականին խայտաբղետ է եղել: Նահանգը մինչ արիացիների մուտքը բնակեցված էր տարբեր ցեղերով՝ *կասպեր, կադուսներ, մարդեր կամ ամարդներ, դերբիկներ, դեյլամներ, գելեր, անարիկները, տապուրներ, սակեր, կասիտներ,* որոնք դեռևս հնագույն ժամանակներից Գիլանի բնակիչներն էին և նույնիսկ իրենց պետական կազմավորումներն ունեին:Այս ցեղերը, որոնք ամենայն հավանականությամբ կուտիների և կասսիտների ազգականներն են եղել, հիշատակված են դեռևս հին հունահռոմեական, վաղ իսլամական աղբյուրներում[1]:

Հին հույն պատմիչ Կտեսիաս Կնիդացին (մ.թ.ա. V-IVդդ.), որը նաև Արտաքսերքսես II բուժակն էր, իր ‚Persikaե աշխատության[2] մեջ հիշատակում է մի շարք ցեղեր, որոնց նա անվանում է *տապուրներ (Ταπύροι), բակտրիացիներ(Βακτριοι), պարթևներ (Παρθυαῖοι), հիրկանցիներ (Ὑρκάνιοι), սակեր (Σάκαι), դերբիկներ (Δέρβικες) և դիրբեյներ (Δυρβαῖοι)[3]:* Կտեսիասը հյուսիսում գտնվող ծովն անվանում է ‚Մեծ ծովե (لبحر بزرگ) ‚Կասպյան երկրումե: Մ.թ.ա V դարի հույն հեղինակ, պատմագրության պատմահայր-հիմնադիր Հերոդոտոսն իր ‚Պատմություն ինը գրքիցե երկում մանրամասն նկարագրելով Աքեմենյան տերության սատրապությունները և Դարեհի արշավանքներին մասնակցող տարբեր ազգերի, խոսում է Կասպից ծովի տարածքում ապրող *կասպերի, սակերի, մարդերի* մասին[4]:

Հույն պատմիչ-աշխարհագրագետ Ստրաբոնի (մ. թ. ա. 64/63- մ. թ. 23/24) նկարագրությամբ Կասպից ծովի հարավային ափերի բնակիչներն էին *կասպերը, կադուսները, մարդերը կամ ամարդները, գելերը, հիրկանցիները, անարիկները և ուտիները[5]:* Մեկ այլ տեղում Ստրաբոնը գրում է. ‚Եթե Հիրկանաց ծովից (Կասպից ծովի անվանումներից՝ կապված այժմյան Գորգան նահանգի հետ)[6] ուղղվենք դեպի արևելք, ապա աջ կողմում լեռներ են, որ ձգվում են մինչև Հնդկական ծով: Հույների մոտ այն կոչվում է Տավրոս, որ սկսվում է Պամֆիլիայից և Կիլիկիայից ու ձգվում արևելքից մինչև այդտեղ անբաժան մի շղթայով՝ ընդունելով այս կամ այն անունը: Դրանից հյուսիս, ապրում են գելերը, կադուսները, ամարդները և հիրկանցիները: Լեռը, որ ձգվում է Հայաստանից մինչև այդ տեղը, կոչվում է Պարախոաֆրաե[7]:

Կասպից ծովի հարավային շրջաններն իրենց նպաստավոր կլիմայի շնորհիվ, անընդհատ

---

[1] Дьяконов И. М. История Мидии, Москва-Ленинград, 1956, с. 225.

[2] Կտեսիասի “Persika” աշխատությունը մեզ է հասել շատ համառոտ դրվագներով, հիմնականում ավելի ուշ հեղինակների կողմից՝ Դիոդոր (մ.թ.ա. Iդ.) և Փոտ պատրիարք (մ.թ. IXդ.):

[3] The complete fragnents of Ctesias of Cnidus: University of Florida, 2008, tranlation and commentary with an introduction by Andrew Nichols, p. 59.

[4] Հերոդոտ, Պատմություն ինը գրքից, ՀՍՍՀ ԳԱՀ, Երևան, 1986, Գ.III, էջ՝197, 408, Գ. I, էջ 64, 388, 408, 495, Գ. I, էջ 37, 55:

[5] Страбон. “География”, Москва, 1964, перевод, статья и комментарий Г.А. Стратановского, Книга XI, VII/ 1, с. 481.

[6] Գորգանը հին պարսկական աղբյուրներում (Բիսեթունյան արձանագրություն, երկրորդ սյուն, 16-րդ կետ (Afshār Iraj, Daryā-ye Māzandarān,Daftar-e motāle.āt-e siāsi o beyn ol-mellali, Tehrān, 1381/2002, s. 93) հանդիպում է Varkāna ձևով, ավ. Vehrkana, որը նշանակում է «գայլերի երկիր»:

[7] Страбон, Книга VII/ 1, с. 483.

ուշադրություն են արժանացել տարբեր ցեղերի կողմից: Գիլանի բնակիչներն անցած դարերի ընթացքում դաշտային և լեռնային շրջաններից ավելի հարավային շրջաններ են գաղթել և որոշներն էլ միախառնվելով նոր էթնիկ խմբերին՝ շարունակել ապրել:

Ներկայումս Գիլանը Թեհրան նահանգից հետո երկրի ամենախիտ բնակեցված նահանգն է համարվում[1]: Համաձայն 1986թ. (հ.ջ. 1365) վիճակագրական տվյալների՝ Գիլան նահանգի տարածքի յուրաքանչյուր 478կմ^2 վրա մեկ քաղաք և յուրաքանչյուր 5կմԱ վրա մի գյուղ կա, իսկ 1996թ. (հ.ջ 1375) մարդահամարի տվյալների՝ Գիլանի բնակչությունը հասնում է 2 241 896 հզ. մարդու, (1965թ. տվյալների համաձայն՝ կրկնակի անգամ ավելացել է), որի 46.86 % քաղաքներում և 53.15% գյուղական վայրերում է բնակվում: Համեմատելով այս թվերը երկրի վիճակագրական տվյալների հետ, որի յուրաքանչյուր 3322կմ^2 վրա մի քաղաք և յուրաքանչյուր 25կմ^2 վրա մի գյուղ կա, ապա ակնհայտ է դառնում Գիլան նահանգի խիտ բնակեցված լինելը[2]:

Գիլանն Իրանի ամենահին հայաբնակ համայնքներից մեկն է եղել: 11-14 դդ. հայկական բնակավայրեր կային Գիլանի Ռաշտ քաղաքում[3]: Իրանում հայաբնակ խոշոր օջախներ ստեղծվեցին 17-րդ դարի սկզբին՝ Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայերի մասսայական բռնագաղթի հետևանքով: Առաքել Դավրիժեցու ,Պատմությունը՝ վկայում է, որ հայերը բնակվում էին Թավրիզում, Գիլանի Ռաշտ և Էնզելի (Փեհլևի) քաղաքներում: 17-19 դդ. կեսերը մետաքսի առևտրով զբաղվող հայ վաճառականներից շատերը բնակվել են Գիլանում[4]: Գիլանում բնակված հայերի մասին տեղեկություններ է տալիս նաև Հ. Լ. Ռաբինոն (Անգլիայի հյուպատոսն Իրանում՝ 1906-1912թթ.)՝ նշելով, որ հայերը քառասուն ընտանիք էին Ռաշտում, նրանց մի մասն էլ Էնզելիում էր բնակվում[5]:

Ստորև ներկայացված է Գիլանի հայկական համայնքի բնակչության թիվը՝ համաձայն 1956-1966-1985թ. համընդհանուր մարդահամարի, պետական վիճակագրական տվյալների և եկեղեցական աղբյուրների[6].

	Ռաշտ	Էնզելի	Լահիջան,Լանգեռուդ, Ֆուման
1924թ.	590	578	
1926թ.			
1927թ.	450		
1928թ.	500	250-300	
1931թ.	596		
1933թ.		578	
1950թ.	800	400	400
1956թ.	407		
1966թ.	557		
1975թ.	257	194	
1980թ.	284	200	
1985թ.	769		
1995թ.	78		

Ներկայումս Գիլանի հայկական համայնքը շատ է նվազել՝ կապված միգրացիոն երևույթների հետ:

[1] Arbani E., Ketāb-e Gilān, Tehran, j.1, 2005/1384, s. 470.
[2] Ketāb-e Gilān, Tehran, j. 2, s. 290.
[3] Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 5, Իրան, խմբ. կոլ.՝ Հ. Մ. Եգանյան, Հ. Գ. Ինճիկյան, Ն. Հ. Հովհաննիսյան և այլոք, Երևան, 1975, էջ 194:
[4] Փահլևանյան Հ. Լ., Իրանահայ համայնքը, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1989, էջ 25-26:
[5] Rabino, H.L Velayat-e dar ol marz-e Irān, Gilan, Rasht, 1374/1995, Entešārāt-e Tā'eti, s. 23, 158:
[6] Talebi Faramarz, Tarix-e armanian-e Gilan, Rasht, 2007, s. 18-19.

Համայնքը կենտրոնացված է միայն Ռաշտում: 2012 թ-ին Գիլան կատարած դաշտային աշխատանքները և հանդիպումները տեղի փոքրաթիվ հայկական համայնքի հետ, ստեղծեցին ամբողջական պատկեր: Այլևս չի գործում Ռաշտի «Մարիամ Ա. Յորդանանեան» ազգային դպրոցը, դպրոցի գրադարանը, չնայած այն բանին, որ գործում է Ռաշտի Ս. Մեսրոպ եկեղեցին և եկեղեցա-դպրոցական հոգաբարձությունը:

Համաձայն 2011 թվականի Իրանում անցկացրած վերջին մարդահամարի, Գիլանի բնակչության թիվը կազմում էր 3 241 896 հզ. մարդ: Կանխատեսումների համաձայն նահանգի բնակչությունը 2011թ-ից (1390թ.) էլ ավելի կավելանա՝ հասնելով 3 600 000-ի, ընդ որում, քաղաքաբնակների թիվը կհասնի մինչև 55 %[1]: Եվ սա պատահական չէ, որովհետև կլիմայական նպաստավոր պայմանները, բերքառատ հողը, հսկայական ջրային պաշարները, զով եղանակն ու թարմ օդը նպաստում են նահանգի էլ ավելի խիտ բնակեցմանը:

Քարտեզ I



Գեղը և Դիմունք ըստ «Սահմանք աշխարհի» (*Hudūd al- ʿĀlam*, X դ.)

Քարտեզ II

[1] Negāhi be Gilānzamin, s. 25.

ПРОВИНЦИЯ ГИЛЯН (ИРАН): НАСЕЛЕНИЕ И ОСОБЕННОСТИ ЗАСЕЛЕНИЯ ТЕРРИТОРИИ

Хачатрян З., ассисент, ЕГУ

Статья посвящена одной из северо-прикаспийских провинций Ирана – провинции Гилян, которая находится на юго-востоке Каспийского моря. Название, GILAN упоминается еще в редких исламских историко-географических источниках и армянских летописях. До вхождения арийцев, Гилян был населен различными племенами: каспы, кадусы, марды или амарды, дербики, дейламы, гелы, анарики, тапуры, саки, каситы, которые с давних времен являлись жителями Гиляна и даже имели свои государственные образования. В настоящее время провинция Гилян является одной из самых обеспеченных лесными, водными и почвенными ресурсами, чем обусловлена высокая плотность населения (на каждые 478 км^2- один город, а на каждые 5 км^2 - одна деревня).

IRAN'S GILAN REGION: PEOPLE AND THE PECULIARITIES OF THE SETTLEMENT

Chachatryan Z, lecturer

The article is dedicated to Gilan: the one of the North Precaspic regions of Iran, which is situated on the south-east of the Caspian sea. The name "Gilan" is mentioned in the early Islamic historical and geographical sources and in the Armenian bibliography. Before Aryan migrations, Gilan was settled with different tribes: Casps, Caduces, Mards (Amard), Derbikes, Deylames, Geles, Anarikes, Tapures, Sakes, Qasites, who were the residents of Gilan for a long time and even had their republical constructions. Gilan is one of the most green and fertile provinces and this is the reason of the population density (on every 478 km^2- one city, and on every 5 km^2 - one village). According to the forecast after 2011 (1392) the population of Gilan will increase to 3.600.000, and the population of the cities will become 55%.

ԻՐԱՆԻ ԱՀՎԱԶ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԱԳՅԱՆ Ա.Ռ. , պրոֆեսոր, ԵՊՀ
ԱԲԴՈԼԱՀ ՅԱՐՀԱՄԱԴԻ, ասպիրանտ, ԵՊՀ

Ահվազը Խուզիստանի վարչական կենտրոնն է, ունի 1,38 մլն բնակչություն: Ահվազը արդյունաբերական խոշոր կենտրոն է, ունի նավթավերամշակման, պողպատաձուլության, մեքենաշինության, թեև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններ;

Ահվազը տրանսպորտային խոշոր հանգույց է, երկրի հարավային և հյուսիսային և արևմտկան շրջանների միջև: Նա միմյանց է միացնում Թեհրանը, Բանդուր Էմամ Խոմեյին, Մահշահր և Աբդան քաղաքները: Նա երկաթուղային, ավտոմոբիլային և գետային տրանսպորտի միջոցով ելք է ապահովում դեպի Պարսից ծովի նավահանգիստներ: Ահվազը օդային գծերի խոշոր հանգույց է: Այն ունի ուղիղ հատակագծում, այստեղ մակերևույթը հարթ է և քաղաքի ընդարձակման, փողոցների շախմատաձև գծապատկերների պահպանման համար որևէ խոչընդոտ չկա:

Քաղաքի զարգացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծում հարմար աշխարհագրական դիրքը, շրջակայքի նավթի մեծ պաշարները, ջրառատ ու նավարկելի Քարուն գետը, անընդհատ աճող աշխատանքային ռեսուրսները:

Ահվազի զարգացմանը զուգահետ առաջանում են մի շարք սոցիալական, էկոլոգիական խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն են թողնում բնակչության ապրելակերպի վրա: Օդի բարձր ջերմաստիճանը տեղումների խիստ պակասը հարավային անապատներից փչող չոր, տաք փոշախառն օդային հոսանքները քաղաքի օդը դարձնում են հեղձուցիչ: Դրան ավելանում է տրանսպորտային արտանետումները:

Ահվազի էկոլոգիական վիճակի վրա բացասական ազդեցություն է թողնում հոսքային ջրերը: Քաղաքը ծովի մակարդակից գտնվում է 18 մ բարձրության վրա: Ջրահեռացումը կատարվում է ճամփեզրերին գտնվող առուների միջոցով: Փողոցների և առուների քիչ թեքության պատճառով անձրևաջրերը, տիղմն ու աղբը կուտակվում են առուներում և հաճախ խցանումների պատճառով դուրս է գալիս և լցվում են փողոցներում և շոգ եղանակներին ամենուրեք տարածվում է գարշահոտություն: Տեղին է հիշել միջնադարում այստեղ բռնկված ժանտախտը և խոլերիան, որոնք քաղաքը կործանման հասցրին:

Ահվազի պատմությունը սոցիալական անհավասարությունների պատմություն է: Իր հազարամյա պատմության ընթացքում միշտ էլ ունեցել է սոցիալական անհավասար պայմաններում ապրող բնակչություն: Պատճառը բնակչության բազմազգությունն է, բազմացեղությունը, կենցաղային տարբեր սովորույթները, մշտական դարձած ներգաղթը, հատկապես նահանգի և այլ շրջանների գյուղական բնակավայրերից և նախկին գյուղաբնակներին անսովոր քաղաքային կենցաղավարությունը:

Իր հազարամյա պատմության ընթացքում Ահվազը գոյատևել է որպես փոքր բնակավայր: Նա բուռն զարգացում ապրեց Փեհլևյան դինաստիայի Ռեզա շահի օրոք: Հենց այդ ժամանակ էր, որ կատարվեց նրա առաջին շախմատաձև հատակագծումը: Քաղաքը մեծանալով դարձավ խոշոր առևտրական հանգույց: Երկրի հյուսիսային շրջաններից դեպի Ահվազ էին գալիս բրդյա մետաքսե գործվածքներ, գորգեր, շաքար, որտեղից նավերով փոխադրվում էին դեպի Պարսից ծոցի նավահանգիստներ այնուհետև արտահանվում Հնդկաստան, Ռուսաստան այլ երկրներ:

Քաղաքի զարգացման համար նոր պայմաններ ստեղծվեցին 1887 թ. երբ Նասերգիս շահը օտարերկրացիների համար Քարուն գետի նավարկությունը ազատ համարեց: Նա կառուցել տվեց նոր նավահանգիստ: Սկսեցին Ահվազ գալ օտարերկրյա նավեր, որը աշխուժացրեց առևտուրը, ավելացան եկամուտները , սկսեցին ստեղծվել սպասարկման նոր ենթակառուցվածքներ, քաղաքը սկսեց վերելք ապրել:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Իրանի հյուսիսային շրջանները մոտ էին պատերազմական գոտիներին և հայտնվել էին ծանր տնտեսական պայմաններում դեպի հարավ տարվող բեռնափոխադրումների գործում մեծանում է Ահվազի դերը:

Ահվազի զարգացման համար նոր պայմաններ ստեղծվեցին 1924 թ. երբ նա դարձավ Խուզիստանի նահանգական կենտրոն: Քաղաքում սկսվեցին կառուցվել վարչական շենքեր, կառավարմանը անհրաժեշտ ենթակառուցվածքներ, արդյունաբերական ձեռնարկություններ: Քաղաքների զարգացմանը զուգահեռ մեծացավ բնակչության ներգաղթը, սկսեցին ձևավորվել արվարձանային թաղամասերը իր խայտաբղետ բնակչությամբ, սոցիալական բազում խնդիրներով:

Անցյալ դարի 60-ական թվականներին սկսվեցին շահագործվել Ահվազի շրջակայքի նավթահանքերը: Քաղաքում կառուցվեց նավթավերամշակման ձեռնարկություն իրեն անհրաժեշտ ենթակառուցվածքներում: Բանվորական ուժի մեծ պահանջարկը մեծացրեց ներգաղթը: Դրան ավելացան երկրում սկսված հոային ռեֆորմները, որի պատճառով գյուղացիների մի հսկայական բանակ դարձան գործազուրկ և առաջացնելոց դեպի քաղաք գնացողների ալիքը: Ինչպես Ահվազը, այնպես էլ Խուզիստանը դրձան ներգաղթողների ընդունող բևեռներից մեկը:

Իրանա-Իրաքյան պատերազմի ընթացքում (1980-88 թթ.) հարավային քաղաքների՝ Խորամշաերի, Աբադանի և նրանց շրջակայքի նավթային տնտեսությունների ավերածությունը ավելի խթանեցին

Ահվազի զարգացմանը: Այստեղ ընդարձակվեց նավթարդյունաբերությունը՝ հանույթը և վերամշակումը փոխհատուցելու հարավի կորուստները:

Արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ Ահվազի տարածքը 1966 թ. 2500 հա-ից 2006 թ, հասավ 20215 հա: Քաղաքի կենտրոնի շրջակայքում ընդարձակվեցին արվարձանային թաղամասերը:

Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցմանը զուգահեռ առաջացան շատ աշխատատեղեր, հնարավորություն տալով մեծացնելու զբաղվածությունը: Սակայն սկսվեց առաջանալ մեկ այլ դժվար լուծելի խնդիր կային ազատ աշխատատեղեր և կային մեծ թվով գործազուրկներ: Քաղաքում կուտակվել էր մարգելանների (գործազուրկների) մի հսկայական բանակ, որոնք աշխատանքային ցածր մշակույթի պատճառով չէին կարողանում գործարանային պայմաններում աշխատել: Նորաստեղծ գործարաններին անհրաժեշտ էին բարձր որակավորում ունեցող աշխատատեղեր, իսկ գաղթականների մեծ մասը չունեին և այժմ էլ չունեն անհրաժեշտ որակավորում: Քաղաքի 1,1 մլն բնակչության 11 %-ը անգրագետ է:

Քաղաքի շրջակայքում մեծ քանակությամբ գաղթականների կուտակումները ավելի սրեցին առանց այն էլ սոցիալական պայմանները: Կյանքի անկայուն պայմանները, գործազրկության մասայական աղքատությունը ստեղծեցին յուրահատուկ միջավայր: Հատկապես գաղթականներով բնակեցված թաղամասեում, օրինակ Մալաշիա թաղամասում չկա կոյուղի, կենցաղային ջրերը բաց առուների միջով գնալով թափվում են կեղտաջրերի համար փորված մասերում, շրջակա միջավայրը տարածելով գարշահոտության: Այսպիսի մասսայական գործազրկության պայմաններում Մալաշիան մեկուսացված է հասարակությունից: Հասարակական մերժմանը պարարտ հող է ստեղծում հանցագործ տարրերի և երևույթների զարգացման համար:

Գաղթականների և գործազուրկների բանակը Ահվազի բոլոր թաղամասերի հոգսն է: Չաշխատող և ընչազուրկ բնակիչները գոյատևման համար դիմում են բազմաթիվ անթույլատրելի միջոցների, ընդհուպ մինչև թմրամոլության, թմրանյութերի առք ու վաճառքի գոյությունը, մարմնավաճառությունը, ամեն տեսակի խարդախությունները: Մանրամասն տես աղյուսակ համ. 1

Հանցագործությունների (ըստ ազատազրկվածների) տեսակները Ահվազում

Հանցագործության տեսակը	Հանցագործությունների քանակը	
	Քաղաքի կենտրոնական շրջաններում	Արվարձաններում
Ընտանեկան վեճեր	0	1
Ճանապարհատրանսպորտային	1	0
Գողություններ	82	125
Խուլիգանություն	12	47
Մաքսանենգություն	23	39
Խպանություն	22	26
Ֆինանսական	15	18
Իսլամի նորմերի խախտում	179	160
Թմրանյութեր	3	2
Փաստաթղթերի կեղծում	0	3

* ըստ Խուզիստանի պլանավորման վարչության 2009 թ.

Ծանր է գաղթականների բնակարանային պայմանները: Նրանց մի մասը ապրում է ամեն տեսակի հնոտիքներից կառուցված կացարաններու, որոնք զուրկ են տարրական հարմարություններից: Այսպես քաղաքի գաղթականներով բնակեցված 6-րդ թաղամասում կրթվածությունը մոտ հինգ անգամ ցածր է երկրորդ և չորրորդ թաղամասերի համեմատությամբ:

Գաղթականներով բնակեցված թաղամասերում շատ ցածր է նաև առողջապահության մակարդակը, քիչ են կանաչտարածքները, սպորտի և հանգստի վայրերը: Աղքատաբնակ թաղամասերի առողջապահական համակարգը շուրջ վեց անգամ զիջում է համեմատաբար ունևոր թաղամասերին, հանգստյան և սպորտի ներուժի տարբերությունները 15-20 անգամ է:

Խնդրի լուծման ուղիներն են համապատասխան աշխատատեղերի ստեղծումը, բնակարաններով ապահովումը, քաղաքային կյանքի բարելավումը, կայուն զարգացման նախադրյալների ստեղծումը: Այն հնարավոր է իրագործել նավթային փողերի հաշվին և պետական նպատակային ռեգիոնալ քաղաքականության, ռեգիոնալ պլանավորման ու ռեգիոնալ ծրագրերի իրագործման միջոցով:

АНАЛИЗ СОЦИАЛЬНО- ЭКОНОМИЧЕСКИХ ПРОБЛЕМ ГОРОДА АГВАЗ РЕСПУБЛИКИ ИРАН

Авагян. А Р., д.г.н., профессор, ЕГУ
Абдула Ярахмади, аспирант,ЕГУ

В городе Агваз, административном центре Хузиастана, проживает 1,38 млн. жителей. Географическое положение и богатые нефтяные ресурсы обеспечили быстрый экономический рост региона. Заселение региона народами разного социально-культурного уровня породило ряд социальных проблем.

Основными являются:

- обеспечение новыми рабочими местами
- обеспечение жильем
- улучшение условий жизни населения
- обеспечение устойчивого развития

Решение данных проблем возможно за счет целевого финансирования на осуществление государственной региональной политики.

ANALYZE OF SOCIAL-ECONOMIC PROBLEM OF AHVAZ CITY OF THE REPUBLIC OF IRAN

Avagyan A.R., A.Jarahmadi

Ahvaz is the administrative center of Khuzistan region with the 1.38 mln inhabitants. Geographical position and reach oil resources has provided rapid economic grow of the region. Region has many kind of nations with the different social-economic level of development which has caused a range of social problems:

- lack of workplaces
- lack of accommodations
- improvement of life conditions of inhabitants
- provision of sustainable development

The solution can be done by the financing and implementation of regional policy.

ԲԱԺԻՆ III

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱՀԱՇՎԱՌԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(Վայոց ձորի մարզում գինեգործության զարգացման օրինակով)

ԼԻԼԻԹ ՔՈԼՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

Հիմնաբառեր. *կլաստեր, կլաստերային քաղաքականություն, տարածաշրջանային զարգացում, գինեգործություն*

ՀՀ տնտեսության տարածական զարգացման համար կարևոր է տնտեսության բոլոր տարածքային բաղադրիչների համաչափ և կայուն զարգացումը: ՀՀ տնտեսության տարածական կայուն զարգացումը ենթադրում է ինչպես ՀՀ մարզերի, այնպես էլ տարբեր համայնքների, շրջանների ու «վայրերի» ներդաշնակ զարգացում:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել «տարածքի» զարգացման բացարձակ և համեմատական առավելությունները, բացահայտել սոցիալ-ժողովրդագրական հնարավորությունները, տնտեսության ճյուղային կառուցվածքի և տարածական զարգացման կազմակերպման առանձնահատկությունները և ակնհայտ հիմնախնդիրները:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածքի ճյուղային մրցունակության գնահատման և մրցունակության բարձրացման լավագույն փորձը կլաստերներն են:

Մ.Պորտերի սահմանմամբ կլաստերը կենտրոնացված, աշխարհագրական հատկանիշով փոխկապված ընկերությունների, (որոնք մասնագիտացված են մատակարարման և ծառայությունների մատուցման մեջ), համապատասխան ոլորտների ընկերությունների, ինչպես նաև որոշակի բնագավառներում փոխկապված գործունեություններով կազմակերպությունների խումբ է, որոնք միմյանց հետ գտնվում են մրցակցության մեջ և միևնույն ժամանակ իրականացնում են համատեղ աշխատանք[1]:

Զարգացած երկրներում իրականացված բազմաթիվ տեսական և փորձարարական հետազոտությունները վկայում են, որ աշխարհագրորեն իրար կողք գտնվող երկու ընկերությունների գործունեությունը հիմնականում ավելի արդյունավետ է, քան մեկուսացածների դեպքում:

Տարածաշրջաններում կլաստերների ձևավորման հնարավորությունների վերլուծություններն ամբողջությամբ հիմնված են բիզնես միջավայրի ուսումնասիրման, մրցունակ արտադրության առկայության, արտադրության կառուցվածքի տարբերակման աստիճանի, կազմակերպությունների նորարարական ակտիվության, բիզնեսի ենթակառուցվածքների ապահովվածության բարելավման վրա:

Սխեմատիկ ձևով այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տե՛ս նկ.1).

[1] **Портер М.** Конкуренция / Пер. с англ. - М.: Изд. дом «Вильямс», 2005. - С.256.



Նկար 1. Կլաստերների զարգացման պարբերաշրջանային մոդելը

Ներկայացված մոդելում ներառված են 4 հիմնական բլոկներ.

1) Կլաստերի միջավայր: Այն ներկայացնում է տարածաշրջանի գործարար միջավայրի ընդհանուր ցուցանիշները, որոնք ձեռնարկությունների տեղաբաշխվածության համար բնութագրում են տարածքի գրավչությունը:

2) Կլաստերի շարժիչ ուժեր: Դրանք ռեսուրսային ցուցանիշներ են, որոնք անհրաժեշտ են կլաստերների ձևավորման համար (օրինակ, մարդկային ռեսուրսներ, գիտական նվաճումներ, փոխներգործության կապուղիներ և այլն):

3) Կլաստերի զարգացում: Ցուցանիշներ, որոնք բնութագրում են կլաստերավորման ընթացիկ գործընթացները (օրինակ, ձեռնարկությունների այն զանգվածը, որը միտված է համագործակցության, կազմակերպությունների և գիտական հաստատությունների միջև համատեղ նախագծերի առկայությունը և այլն):

4) Կլաստերի արդյունքներ: Արդյունքային ինդիկատորներ, որոնք արտացոլում են կլաստերի ազդեցությունը նորարարական ակտիվության վրա, ցանցային փոխազդեցության զարգացման գործընթացները և տարածաշրջանի մրցունակությունն ամբողջությամբ:

Առաջին երեք բլոկերը իրենցից ներկայացնում են մուտքային ինդիկատորներ (input), իսկ վերջին բլոկը՝ արդյունքային (output):

Կլաստերների զարգացմանն առնչվող հետազոտություններում ցուցանիշների վերջնական սանդղակ են հայտնվում ինչպես հասանելի վիճակագրական ինդիկատորները, այնպես էլ փորձագիտական ճանապարհով ստացված արդյունքները: Կլաստերավորման գործընթացի գնահատման ժամանակ հիմնականում հնարավոր չէ հետազոտությունը ձևավորել և ներկայացնել վիճակագրական քանակական ինդիկատորների տեսքով՝ դրանց իսկ բացակայության պատճառով: Հետևաբար հետազոտություններում, որպես տեղեկույթի հավաքման մեթոդ, կիրառվում է փորձագիտականը:

Հայաստանում կլաստերների զարգացման մակարդակը, ըստ մրցունակության համաշխարհային զեկույցի, գնահատվում է բավական ցածր՝ 2,93՝ 7 հնարավորից, ինչի արդյունքում ՀՀ-ն 151 երկրների շարքում 108-րդն է[1]:

Ստորև ներկայացնենք գինեգործությունը և դրա զարգացման հնարավորությունները ՀՀ Վայոց Ձորի մարզում, որպես ճյուղային կլաստերի օրինակ:

Գինեգործությունը ավանդաբար եղել և այժմ էլ համարվում է Վայոց Ձորի մարզի առաջատար ճյուղերից մեկը: Գինու արտադրությունը զարգացած է ինչպես արդյունաբերական մակարդակով՝ համապատասխան գործարաններում, այնպես էլ տնային պայմաններում: Գինեգործությունը հատկապես տարածված է ցածրադիր և միջին գոտիներում, որտեղ զարգացած է խաղողագործությունը, հիմնականում Եղեգնաձորի տարածաշրջանում: Արենի, Աղավնաձոր, Գետափ, Մալիշկա, Վերնաշեն, Արփի և այլ գյուղերի տնտեսությունների մինչև 50%-ը տնային պայմաններում զբաղվում է գինու արտադրությամբ:

Վայոց Ձորի մարզում շշալցված գինու արտադրությամբ զբաղվում են առնվազն 9 ընկերություններ, որոնք տարածքային առումով տեղակայված են հետևյալ կերպ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Վայոց Ձորի մարզի գինեգործական ընկերությունները[2]

Ընկերության անվանումը	**Վայրը**
«Արենի Գինու Գործարան»	գ.Արենի
«Քիմլեյ»	գ.Արենի
«Գետափի Գինու Գործարան»	գ.Գետափ
«Գինեթաս»	գ.Արփի
«Քարանձավ»	գ.Արփի
«Գինեքար»	գ.Աղավնաձոր
«Մեծ Սյունիք»	գ.Աղավնաձոր
«Գետնատուն»	ք.Եղեգնաձոր
«Վայք Գրուպ»	ք.Վայք

Մարզում խոշորագույն գինի արտադրողը ,Գետափի գինու գործարաննե է, որը հիմնվել է 1938թ. և հանդիսանում է «Վեդի-Ալկո» ընկերության մասնաճյուղը:

Վայոց Ձորի մարզում գինու արտադրությունը հիմնականում հիմնված է «Արենի» տեսակի խաղողի հումքի բազայի վրա: Ըստ գինեգործական ընկերությունների ղեկավարների, հենց այս տեսակի խաղողի օգտագործմամբ է պայմանավորված գինու բարձր իրացվելիությունը և պահանջարկը: Խաղողի մթերումներն իրականացվում են բացառապես Վայոց Ձորի մարզում: Ժամանակին մի քանի ընկերություններ փորձել են այլ մարզերում հիմնել «Արենի» տեսակի խաղողի այգիներ և հետագա վերամշակման ենթարկել ստացված բերքը, սակայն արդյունքն իր որակական հատկանիշներով զգալիորեն զիջել է Վայոց Ձորի մարզում աճեցված խաղողից ստացված գինու հատկանիշներին:

2001-2004 թվականներին Վայոց Ձորում ընդլայնվել են խաղողի տնկարկների տարածությունները և մինչ այսօր շարունակվում է: Այն կազմում է 928 հա, որից 885 հա՝ բերքատու:

---

[1] http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010_arm.pdf

[2] Վայոց Ձորի մարզի տնտեսական հետազոտություն: Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր. Հոկտեմբեր 2004:

Քանի որ «Արենի» տեսակի խաղողն աճեցվում է բացառապես Վայոց Ձորի մարզում, ապա դրա առաջարկը խիստ սահմանափակ է, ինչը մթերողների սուր մրցակցության պայմաններում, հանգեցրել է խաղողի գների կտրուկ բարձրացման: 2014թ.-ին մթերումներն իրականացվել են 150-250 դրամ/կգ գնով: Արենի սորտի խաղողը մթերվել է 220-240 դրամով, իսկ սպիտակ սորտերը 140-170 դրամով: Մթերման ծավալների մոտ 50%-ը իրականացվում է «Գետափի գինու գործարան»-ի կողմից (հավելված 2): Շուկայի նման իրավիճակը ստիպել է գինեգործական ընկերությունների մի մասին հիմնել սեփական խաղողի այգիներ, ինչը թույլ է տալիս սեզոնին մթերել անհրաժեշտ քանակությամբ բարձրորակ հումք: Նման այգիների ամենամեծ ծավալը՝ մոտ 150 հա, հիմնվել է «Գետափի գինու գործարան»-ի կողմից: Առնվազն 50 հա այգիներ հիմնվել են այլ կազմակերպությունների կողմից:

Հումքային բազայի ընդլայնումը կարևորվում է նաև այն առումով, որ գինեգործական կազմակերպություններն աշխատում են իրենց իրական հզորության 30-40%-ի չափով: Հումքային բազայի սակավությանը զուգահեռ, գինեգործների գործունեությունը դժվարանում է նաև սուր մրցակցության, ներքին շուկայի հագեցվածության և հատկապես ֆինանսական միջոցների սակավության պատճառով:

Վայոց Ձորի մարզի գինեգործական կազմակերպություններից 5-ը սերտորեն համագործակցում են USDA MAP ծրագրի հետ, որն աջակցել է նրանց ոչ միայն հիմնման փուլում, այլ նաև հետագայում՝ տրամադրելով վարկեր և դրամաշնորհներ՝ 5-75 հզր. ԱՄՆ դոլարի սահմաններում:

2014 թվականին մեր երկրից արտահանվել է 2 մլն 120.7 հազար լիտր խաղողի գինի՝ արձանագրելով 50% աճ, չնայած որ արտադրության ծավալները կրճատվել են 8.2%-ով: Ավանդաբար հայկական գինու խոշորագույն շուկան համարվել է Ռուսաստանը և այս միտումը պահպանվել է առ այսօր: 2014թ.-ին Ռուսաստան է արտահանվել շուրջ 1 մլն 713.8 հազար լիտր գինի: Երկրորդ տեղում Բելառուսն է՝ 65.2 հազար լիտր, ապա՝ հաջորդում է ԱՄՆ-ն՝ 53.8 հազար լիտր, Լիտվան՝ 48.2 հազար լիտր և Չինաստանը՝ 44.6 հազար լիտր:

Վայոց Ձորի մարզի գինեգործների արտադրանքից Ռուսաստան է արտահանվում ,Գետափի գինու գործարան-ի արտադրանքի 40%-ը և մյուս ընկերությունների արտադրանքի 15-20%-ը: Ռուսական շուկայում հայկական գինու հիմնական մրցակիցը վրացական գինին է: Թեև նրանք գործում են տարբեր շուկայական սեգմենտներում: Բացի Ռուսաստանից, Վայոց Ձորի մարզի գինիներն արտահանվում են նաև Ղազախստան և Եվրոպա:

Գինեգործը գիտի, որ տվյալ ապրանքի միջազգային շուկան խիստ պահանջներ է ներկայացնում արտադրանքի որակական (համահոտային) հատկանիշների, փաթեթավորման և արտաքին տեսքի համար:

Վայոց Ձորի մարզի գինեգործական ընկերություններն իրենց արտադրանքն իրացնում են տեղական առաքիչների, «Փեթակ» մեծածախ առևտրի համալիրի և կոնկրետ խանութների ցանցի միջոցով: Հինգ ընկերություններ համագործակցում են Մոսկվայի ,Արենիե մեծածախ իրացման կենտրոնի հետ: Բոլոր ընկերություններն ապրանքային վարկեր են տրամադրում իրենց հաճախորդներին՝ իրացումները կազմակերպելու համար:

Վայոց Ձորի մարզի գինեգործները համագործակցում են իրար հետ: Չորս ոչ մեծ ընկերություններ միավորվել են՝ ստեղծելով Գինեգործների միություն, ինչը նրանց թույլ է տալիս համատեղել իրենց ջանքերը շշերի և պիտակների ձեռք բերման գործում, ինչպես նաև սահմանել խաղողի մթերման ընդհանուր գներ:

Վայոց Ձորում գինեգործական կլաստերի հնարավոր տարբերակի դիտարկման համար իրականացվել է տարածքում գինու արտադրության և իրացման պայմանների SWOT վերլուծություն թվով 5 փորձագետների շրջանում (տեսՙ աղյուսակ 2):

Նկար 2-ում ներկայացվում է գինեգործության կլաստերավորման գործընթացի մասնակից միավորների փոխկապվածությունը, որը տեղայնացվել է Վայոց Ձորի մարզում գինեգործության կլաստերի ձևավորման պայմաններին:

Աղյուսակ 2.

Գինեգործության ոլորտի SWOT վերլուծություն Վայոց Ձորի մարզում

Ուժեղ կողմեր	*Թույլ կողմեր*
▪ *Ճանաչում վայելող ,Արենիի գինի* ▪ *,Արենիի տեսակի տեղական հումքի բավարար քանակության առկայություն* ▪ *Ավանդաբար բարձր զարգացած ոլորտ* ▪ *Տեղական աշխատուժի առկայություն* ▪ *Վերամշակող ձեռնարկության մոտ գտնվելը հումքի և ռեսուրսներին* ▪ *Ժամանակակից հմտություններով մասնագետների առկայություն* ▪ *Արտահանման շուկաներում հայկական Սփյուռքի առկայություն* ▪ *«Արենի» գինու փառատոն*	▪ *Մարքեթինգի և մենեջմենթի թույլ հմտություններ,* ▪ *հնացած տեխնոլոգիաներ,* ▪ *փոքրածավալ արտադրություն արտաքին շուկա մտնելու համար,* ▪ *ֆինանսական սուղ ռեսուրսները: Մատչելի ֆինանսական ռեսուրսների բացակայություն:* ▪ *Տեղական սպառման շուկայի սահմանափակություն* ▪ *Տեղեկատվության պակաս գինու արտադրության արդի տեխնոլոգիաների վերաբերյալ* ▪ *Ժամանակակից տեխնիկայի և արտադրական հնարավորությունների բացակայություն* ▪ *Գինու փորձաքննության մեթոդների բացակայություն* ▪ *Գինու համտես սրահների բացակայություն*
Հնարավորություններ	*Վտանգներ*
▪ *Գինու արտահանման պոտենցիալ աճ:* ▪ *Խաղողի մթերման ծավալների մեծացման հնարավորություն:* ▪ *ԱՊՀ շուկաներում հայկական գինու համբավի դրական արձագանք* ▪ *Կողմնորոշվածության մեծացում դեպի արտահանման շուկաներ* ▪ *Համագործակցության ծրագրերի զարգացումներ (USDA-ի աջակցության ծրագրեր):* ▪ *ՓՄՁ ԶԱԿ գործունեության միջոցով պետական աջակցություն* ▪ *Կաթիլային ոռոգման համակարգի ներդրում* ▪ *Գինու որակի բարելավում միջազգային ստանդարտներին համապատասխան:* ▪ *Կառավարության ակտիվ քաղաքականություն ուղղված գինեգործությանը* ▪ *2012-2020 թթ. գինեգործության մրցունակության ռազմավարության հաստատում* ▪ *Գինու համալսարանի հիմնում Վայոց ձորի մարզում (բանակցային փուլում է)* ▪ *Հայկական գինիներ հովանոցային բրենդի հայեցակարգի ստեղծում*	▪ *Բնակլիմայական աղետներ, որոնք կարող են նվազեցնել խաղողի բերքը:* ▪ *Բնական աղետների դեմ պատրաստվածության ցածր մակարդակ* ▪ *Արտագաղթ գյուղական բնակավայրերից* ▪ *Հայկական գինի բրենդի այժմյեան բացակայություն* ▪ *Վրացական գինու հետ սուր մրցակցություն արտաքին շուկայում (ՌԴ)* ▪ *Հարկային և մաքսային դաշտի անբարենպաստ պայմանները գինու արտադրության ՓՄՁ ոլորտում*

Ընդհանրացնելով ներկայացված վերլուծությունը նշենք, որ գինեգործության ոլորտը Վայոց Ձորի մարզում զարգացման լուրջ հեռանկարներ և հնարավորություններ ունի և հիմք է տալիս գինեգործության կլաստերավորման քաղաքականության իրագործմանը:

Ամփոփելով նշենք, որ գյուղատնտեսների, արտադրողների, կրթական և գիտական հաստատությունների զբոսաշրջային ընկերությունների, առևտրային և մարքեթինգային կազմակերպությունների ու կլաստերավորման գործընթացի մասնակից սուբյեկտների սերտ համագործակցության արդյունքում հնարավոր է ստեղծել մրցունակ գինեգործության կլաստեր:



Նկար 2. Վայոց Ձորի մարզի գինեգործական կլաստերի սխեմատիկ պատկերը

Աջակցություն իրականացնող կազմակերպություններին Վայոց Ձորի մարզում գինեգործության կլաստերի ձևավորման և զարգացման գործում խորհուրդ է տրվում իրականացնել հետևյալ գործողությունները.

- ստեղծել երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներից մատչելի պայմաններով օգտվելու հնարավորություններ,
- նպաստել ՓՄՁ-ներում սարքավորումների արդիականացմանը,
- գինեգործական ընկերություններին ապահովել գինեգործության ժամանակակից զարգացումների, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվությամբ,
- օժանդակել գինեգործությամբ զբաղվող ՓՄՁ-ներին մարքեթինգային ռազմավարություն մշակելու և իրականացնելու հարցում,
- նպաստել խաղողի մթերման ծավալների ավելացմանը,
- ապահովել հարկային արտոնություններ ուղղված կլաստերին մասնակից սուբյեկտների գործունեությանը:

ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ ОТРАСЛЕВЫХ КЛАСТЕРОВ
(на примере развития виноделия в марзе Вайоц Дзор)

Колян Л., к.э.н., доцент, АГЭУ

Статья посвящена теории развития пространственной экономики. Рассматриваются вопросы отраслевой кластеризации региона. Наблюдаются механизмы и условия кластеризации региона как метод повышения конкурентоспособности экономики. Автор предлагает пример кластера виноделия в марзе Вайоц Дзор.

SOME QUESTIONS CONCERNING TO THE FORMATION OF CLUSTERS IN REGION
(Using the development of winemaking in the region Vayots Dzor as an example)

Qolyan L., PhD, Associate Professor, ASUE

The article is dedicated to the theory of development of spatial economics. The issues which concerning the field of clustering region is reviewed. Observed the mechanisms and conditions of the clustering region as a method of increasing competitiveness, suggested an example of winemaking cluster in the region of Vayots Dzor.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վայոց Ձորի մարզի տնտեսական հետազոտություն: Հայաստանի տարածքային զարգացման եվրոպական ծրագիր. Հոկտեմբեր 2004, 181 էջ:
2. **Портер М.** Конкуренция / Пер. с англ./, М.: Изд. дом ,Вильямс, 2005. С.256.
3. **Ускова Т.В.** Развитие региональных кластерных систем. // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз 1 (1)2008, стр. 92-103.
4. **W.Polt.** The role of governments in networking.// Innovative Networks: Co-operation in National Innovation Systems. OECD Publications, 2001.
5. http://report.gov.am
6. http://vdzor.gov.am/enterprises/
7. http://www.armenianwinefestival.am
8. http://www.cf.am/files/news/226/7ca0682dcce8c76b.pdf
9. http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010_arm.pdf
10. http://www.smednc.am

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ, դասախոս, ԵՊՀ

Հիմնական բառեր. տնտեսության ճյուղային կառուցվածք, համախառն ներքին արդյունք, զբաղվածության ճյուղային կառուցվածքը, Հիմնական միջոցների կառուցվածքը:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի առկայությունը բնատնտեսությունը հաղթահարած ցանկացած հասարակության ունիվերսալ բնութագրիչն է: Միաժամանակ, այն ցանկացած երկրի սոցիալական և տնտեսական ենթահամակարգերի զարգացման օրինաչափ արդյունքը և դրանց կառուցվածքի բարդացումն է, ինչը ենթադրում է մասնագիտացած տնտեսական սուբյեկտների համախմբությունից որոշների առանձնացում՝ այս կամ այն տեխնոլոգիական գործառույթների կատարման վերապահմամբ: Սոցիալական տարածությունում այդ սուբյեկտները զբաղեցնում են համասեռ կարգավիճակ ունեցող դիրքեր և կազմավորում են ճյուղը՝ որպես սոցիալական ընդհանրություն[1]: Մյուս կողմից, ժամանակակից դարաշրջանում մարդկային հասարակության հետագա զարգացման որոշիչ պայմանը դարձել է ոչ թե պարզ ընդլայնումը, նրա պարամետրերի (բնակչության թվաքանակ, արտադրության ծավալներ, ռեսուրսների սպառում) քանակական աճը, այլ կառուցվածքային փոփոխությունն՝ անցումը ռեսուրսասպառողից ռեսուրսախնայող ռազմավարության[2]: Կարելի է փաստել, որ տնտեսության ճյուղային կառուցվածքը պետության, որպես համաշխարհային տնտեսության մասնակցի, ընդհանուր մասնագիտացման ձևավորման հիմնական գործոնն է: Դրա կատարելագործումը վիթխարի նշանակություն ունի ազգային տնտեսության հաշվեկշռվածության և տնտեսական աճի տեմպերի բարձրացման համար: Արևմուտքի երկրների մեծ մասի հաջող տնտեսական զարգացումը բացատրվում է հենց ճյուղային կառուցվածքի առաջադիմական վերափոխումներով:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբում արձանագրված տնտեսական խորը անկման արդյունքում խորհրդային տարիներին ձևավորված Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքն արմատական փոփոխություններ կրեց: Տնտեսության մի շարք ճյուղեր պարզապես դադարեցին գոյություն ունենալ:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը նախնառաջ վերլուծվում է համախառն ներքին արդյունքի, ինչպես նաև զբաղվածների թվաքանակի և ըստ ճյուղերի հիմնական միջոցների համակենտրոնացման հիման վրա:

[1] *Елисеева И., Юзбашев М.* Общая теория статистики: Учебник / Под ред. И.И. Елисеевой. - 5-е изд., перераб. и доп. - М.: Финансы и статистика, 2004. - с. 597.

Նկար 1. Հայաստանի ՀՆԱ, մլն. դոլար, *ՀՆԱ աճի իրական տեմպը (%)**



**Կազմված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

ՀՆԱ ճյուղային կառուցվածքը: Վերջին տարիներին ՀՆԱ աճի տեմպերը դանդաղել են նախաճգնաժամային ցուցանիշների համեմատությամբ (տե՛ս գրաֆիկ 1): ՀՆԱ իրական աճը 2010թ. կազմել է 2.2%, 2011թ.՝ 4.7%, 2012թ.՝ 7.2%[1]: Աճի հիմնական շարժիչ ուժի դերում հանդես են եկել հանքարդյունաբերությունն ու հումքի առաջնային վերամշակում ենթադրող ճյուղերը (սննդարդյունաբերություն և գունավոր մետալուրգիա): Հատկանշական է, որ 2009 թվականից սկսած շինարարության ճյուղը, որը մինչ այդ աճի հիմնական շարժիչ ուժն էր, անկում է ապրում: 2009թ. շինարարության ճյուղում անկումը կազմել է 36%, 2010թ.՝ 3.3%, իսկ 2011թ.՝ 11.5%: Աճն այս ճյուղում 2012թ. կազմել է ընդամենը 0.2%:

Հետճգնաժամային տարիներին Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը ձեռք է բերել որոշակի կայունություն: ՀՆԱ-ի կառուցվածքն արտացոլում է մեր երկրի տնտեսությունում վերջին տարիներին ձևավորված ճյուղային համամասնությունները և տեղաշարժերը, համաձայն որի Հայաստանի տնտեսության երեք ամենախոշոր ճյուղերն են՝ ***գյուղատնտեսությունը, առևտուրը*** և ***շինարարությունը***: Այս երեք ճյուղերի գումարային կշիռը 2012թ. ստեղծված ՀՆԱ-ում կազմել է 44.2%: Տնտեսության հաջորդ մեծ ճյուղը վերամշակող արդյունաբերությունն է, որին 2012թ. բաժին է ընկել ՀՆԱ-ի 9.9%-ը: Տնտեսության ճյուղային կառուցվածքի նման պատկերը չի խոսում դրա զարգացվածության մասին: Զարգացած երկրների տնտեսությունում ծառայությունների ոլորտի կշիռն այսօր կազմում է ՀՆԱ 60%-ից (Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա) մինչև 80%-ը (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա), գյուղատնտեսության կշիռը՝ մոտ 3%, արդյունաբերության կշիռը՝ 25%: Ըստ ճյուղային կառուցվածքի նոր ինդուստրիալ և Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրները գտնվում են մոտավորապես տնտեսական զարգացման նույն մակարդակի վրա. Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում ՀՆԱ 6-10%-ը, արդյունաբերությանը՝ 25-40%-ը, ծառայությունների ոլորտին՝ 45-55%[2]. Ավելին, խնդիրը ոչ միայն այդպիսի կառուցվածքի ինքնին առկայության մեջ է, այլև դրա էությունն է: Այդ երկրների արդյունաբերությունը բնութագրվում է բարձր արտադրողականությամբ և բազմազան ենթաճյուղերի առկայությամբ, գյուղատնտեսությունում գերիշխում են գործունեության ինտենսիվ եղանակները, ծառայությունների ոլորտում մեծ է տեղեկատվական, ֆինանսական և որակյալ մասնագիտական գործունեության կշիռը:

[1] Современная экономическая теория, http://modern-econ.ru/makro/nac-econom /vosproizvodstvo/ otraslevaya.html:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը կարելի է բնութագրել հետևյալ գծերով.

1. Գյուղատնտեսության մեծ կշիռը ՀՆԱ-ում վկայում է մեր երկրի տնտեսության ագրարային հատկանիշների մասին: Այս ճյուղի հիմքը կազմում է բուսաբուծությունը, որին 2012թ. բաժին է ընկել գյուղատնտեսական արտադրանքի 61.3%-ը (516 մլրդ. դրամ)[1]: Բացի այդ, Հայաստանի գյուղատնտեսությունն արտադրողական չէ (զբաղվածները ստեղծում են ընդամենը արտադրանք),այն մեծ չափով կախված է բնակլիմայական գործոններից (2010թ. ճյուղի արտադրանքի 16%-ով անկումը պայմանավորված էր հենց անբարենպաստ բնակլիմայական գործոններով):

2. ՀՆԱ կառուցվածքում փոքր է վերամշակող արդյունաբերության կշիռը (9.9% 2012թ.՝ 2011թ. 10.6%-ի փոխարեն): Փոխարենը նկատվում է հանքարդյունաբերության ճյուղի արտադրանքի աճ: Այս ճյուղի տեսակարար կշիռն աճել է 2008թ. 1.6%-ից մինչև 2.9% 2012թ.: Մեծ է ճյուղի կշիռը Հայաստանի արտահանման կառուցվածքում (2012թ. տվյալներով՝ 20.2%)[2]: 2008-2012թթ. ՀՆԱ կառուցվածքում աճել է նաև էներգետիկայի ճյուղի կշիռը՝ 2.7%-ից մինչև 4%:

3. 2001-2008թթ. շինարարության աճի միջին տարեկան տեմպը կազմել է 19.6%, որի արդյունքում այս ճյուղի կշիռը ՀՆԱ-ում մոտ 10%-ից հասել է մինչև 27%-ի:

4. ՀՆԱ-ում ծառայությունների ոլորտի կշռով Հայաստանն, առաջին հայացքից, կարծես թե նման է նոր ինդուստրիալ և Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրներին: Սակայն, ծառայությունների ոլորտը Հայաստանում ունի պարզունակ կառուցվածք: Կրթության և առողջապահության ոլորտներին 2012թ. բաժին է ընկել ՀՆԱ ընդամենը 6.8%-ը, ինչը 2 անգամ պակաս է առևտրի ոլորտի տեսակարար կշռից (12.9%):

Զբաղվածության ճյուղային կառուցվածքը: 2012թ. տվյալներով գյուղատնտեսության ճյուղին բաժին է ընկել Հայաստանի զբաղված բնակչության 37.3%-ը: Նույն տարում զբաղվածության շուրջ 15.7%-ը բաժին է ընկել սոցիալական ոլորտին (առողջապահություն, կրթություն, մշակույթ), 11.8%-ը՝ արդյունաբերությանը, 9.7%-ը՝ առևտրի ոլորտին, 6.3%-ը՝ տրանսպորտի և կապի համակարգին, 5.9%-ը՝ շինարարությանը, 6.6%-ը՝ կառավարման համակարգին և այլն: Հանքարդյունաբերությունում, որն ապահովում է արտահանման մի զգալի մասը, աշխատում է ընդամենը 10 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածների 0.8%-ը:

[1] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, էջ 297:
[2] Նույն տեղում, էջ 470:



Նկար 2. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության խմբերի 2012թթ.*

** Կազմված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

Այսպիսով, կարելի է փաստել, որ Հայաստանն ունի զբաղվածության ծայրահեղ հետամնաց կառուցվածք, որի համար նախևառաջ բնորոշ է գյուղատնտեսությունում զբաղվածների մեծ տեսակարար կշիռը: Այն ավելի քան 10 անգամ գերազանցում է տնտեսության զարգացած կառուցվածք ունեցող երկրների համապատասխան ցուցանիշը, որին վերջիններս հասել են գյուղատնտեսական արտադրանքի պահպանման, տեղափոխման և վերամշակման ճյուղերի զարգացման շնորհիվ:

Հիմնական միջոցների կառուցվածքը: Հիմնական միջոցներն ազգային հարստության կարևորագույն մասն է: Եթե պետությունը զարգանում է, եթե տնտեսության ճյուղերն արդյունավետ աշխատում են, ապա ակնհայտ է, որ հիմնական միջոցների արժեքն ավելանում է:

*Նկար 3. Հայաստանի տնտեսությունում հիմնական միջոցների առկայությունը 2012թթ.՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների**



** ներառված են միայն վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված խոշոր և միջին կազմակերպությունների ու պետական հիմնարկների հիմնական միջոցների արժեքը հաշվեկշռային և մնացորդային արժեքներով (ըստ հաշվետվությունների տվյալների)*

Ինչպես տեսնում ենք, հիմնական միջոցների 24.7%-ը բաժին է ընկնում էներգետիկայի, իսկ 19%-ը՝ տրանսպորտի և կապի ոլորտներին, այսինքն՝ այս ենթակառուցվածքներին բաժին է ընկնում տնտեսությունում առկա հիմնական միջոցների 43.7%-ը: Հատկանշական է, որ երկրի ՀՆԱ կառուցվածքում այս երկու ճյուղերի համախառն տեսակարար կշիռը շատ ավելի համեստ է (ընդամենը 7.2% 2012թ. տվյալներով): Իհարկե, կասկած չկա, որ այդ հիմնական միջոցների մի մասը պարզապես թղթի վրա են, այսինքն՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված են և ընդամենը ,կախված են՝ հաշվեկշռում: Ավելին, դրանց մի մասի հետագա շահագործումն անօգուտ է, նույնիսկ՝ վտանգավոր: Այնուամենայնիվ, այս երկու ճյուղերի մեծ տեսակարար կշիռը հիմնական միջոցների կառուցվածքում վկայում է Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքի թույլ զարգացվածության մասին: 2012թ. մշակող արդյունաբերությունում կենտրոնացված է եղել հիմնական միջոցների ընդամենը 15.5%-ը, ջրամատա-

կարարման համակարգում՝ 4.3%-ը (ինչը վկայում է այդ համակարգի հնացածության և մաշվածության մասին): Հիմնական միջոցներով աղքատ է հատկապես գյուղատնտեսությունը: Վերջին տարիներին այս ճյուղի կշիռը հիմնական միջոցների կառուցվածքում ունեցել է նվազման միտում: 2012թ. տվյալներով հիշյալ ցուցանիշը կազմել է ընդամենը 4.4% (2009թ. 6.6%-ի փոխարեն), այն դեպքում, երբ գյուղատնտեսությունում ստեղծվում է երկրի ՀՆԱ-ի շուրջ 20%-ը: Հատկանշական է, որ ֆինանսական և ապահովագրական գործունեություն, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործունեություն ճյուղերում կենտրոնացված է հիմնական միջոցների 6.5%-ը (դրանք շենքեր են, թանկարժեք մեքենաներ և տեխնիկա), այսինքն 1.5 անգամ ավել, քան գյուղատնտեսությունում:

Հանքարդյունաբերության ծավալների ընդլայնումն իր արտահայտությունն է գտել հիմնական միջոցների կառուցվածքում: Չնայած հանքագործության ճյուղի տեսակարար կշիռը հիմնական միջոցների կառուցվածքում 2009-2012թթ. նվազել է 9.9%-ից մինչև 9%, այն մնում է համեմատաբար մեծ այլ ճյուղերի համեմատությամբ:

Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները: Տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունն ուղեկցվում է տնտեսական ներուժի ընդհանուր մակարդակի աճով: Հայտնի է, որ ինդուստրիալ երկրների տնտեսության ներուժի հիմքն արդյունաբերությունն է: Հայտնի է նաև, որ մեծ է արդյունաբերության ազդեցությունն ամբողջ տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունների վրա: Իր հերթին այդպիսի ազդեցության աստիճանը պայմանավորված է արդյունաբերության ներճյուղային կառուցվածքով: Իհարկե, արդյունաբերության ճյուղի իդեալական կառուցվածք գոյություն չունի: Սակայն հայտնի է, որ վերամշակման բարձր աստիճան ունեցող ճյուղերի մեծ կշիռը ազդում է տնտեսության ընդհանուր արդյունավետության, ինչպես նաև տնտեսության աճի երկարաժամկետ տեմպերի մեծության և կայունության վրա: Այլ կերպ ասած՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքում արտացոլվում է երկրի ինդուստրիալ զարգացման և տնտեսական ինքնուրույնության մակարդակը, արդյունաբերության տեխնիկական հագեցվածության աստիճանը: Արդյունաբերության զարգացումը նպաստում է արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմանը, տարածքային համաչափ զարգացմանը, բնական ռեսուրսների արդյունավետ և խնայողական օգտագործմանը:

Արդյունաբերության կառուցվածքի առաջադիմության մասին դատում են ինչպես ըստ դրա մեջ մտնող ենթաճյուղերի կազմի և տեսակարար կշիռների, այնպես էլ ըստ արդյունաբերության այս կամ այն ճյուղի ներճյուղային կառուցվածքի կատարելության: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի առաջադիմությունը բնութագրվում է առանձին ճյուղերի և արտադրությունների այնպիսի քանակական հարաբերակցություններով, որոնց դեպքում ապահովվում է գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների, արտադրության կազմակերպման ձևերի և մեթոդների, նյութական և աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի որակի գնահատման համար որպես հիմնական ցուցանիշներ կարելի է վերցնել՝ մեքենաշինության կշիռը վերամշակող արդյունաբերության ընդհանուր ծավալում, հանքային արտադրանքի կշիռն արտահանման ապրանքային կառուցվածքում, պարենամթերքի կշիռը ներմուծման ապրանքային կառուցվածքում, ծառայությունների ոլորտի կշիռը ՀՆԱ-ում, ՀուՄ(հետազոտություններ ու մշակումներ) ծախսերը ՀՆԱ-ում: Սակայն, արդյունաբերության ճյուղային կառուցվածքի վերլուծության համար ավելի հաճախ օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝ առանձին ճյուղի կշիռը արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալում և դրա փոփոխությունը դինամիկայում, առաջադիմական ճյուղերի կշիռը արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալում և դրա փոփոխությունը դինամիկայում, առաջանցիկության գործակիցը, արդյունահանող և վերամշակող ճյուղերի միջև հարաբերակցությունը:

Առաջադիմական են համարվում այն ճյուղերը, որոնց զարգացումն ապահովում է ԳՏԱ-ի արագացումը ամբողջ տնտեսությունում: Դրանց զարգացումից զգալի աստիճանով կախված է հասարակական արտադրության արդյունավետությունը: Այս ճյուղերին են դասում մեքենաշինությունը, էլեկտրաէներգետիկան և քիմիական արդյունաբերությունը: Դրանց կշռի աճը նշանակում է, որ ճյուղային կառուցվածքում տեղի է ունենում առաջադիմական տեղաշարժեր և դա բարենպաստ է ազդում ամբողջ տնտեսության վրա:

Առաջանցիկության գործակիցն արտահայտում է ճյուղի աճի տեմպը $Տ_ճ$ ամբողջ արդյունաբերության աճի տեմպի $Տ_ա$ նկատմամբ և հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $Գ_ա = Տ_ճ / Տ_ա$:

ՀՀ ԱՎԾ տվյալները ցույց են տալիս, որ.

1. Վերջին տարիներին մետաղական հանքաքարի արդյունահանման ենթաճյուղին բնորոշ է եղել արտադրության ծավալի աճի կայուն դինամիկա: Արդյունքում՝ մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալներն ընթացիկ գներով գրեթե կրկնապակվել է՝ 2008թ. 97.5 մլրդ. դրամից հասնելով 187.4 մլրդ. դրամ 2012թ.: Ինչ վերաբերում է հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերին, ապա դրանց արտադրության ընդհանուր ծավալը նույն ժամանակահատվածում կրճատվել է 7.9 մլրդ. դրամից մինչև 5.9 մլրդ. դրամ:

2. Սննդամթերքի (ներառյալ խմիչքների) արտադրությունը 2012թ. տվյալներով կազմել է մշակող արդյունաբերության արտադրության ընդհանուր ծավալի 50.2%-ը: 2008թ. այդ ցուցանիշը կազմել է 46.5%: Սննդամթերքի (ներառյալ խմիչքների) արտադրության ծավալը քննարկվող ժամանակահատվածում աճել է 48%-ով՝ 2008թ. 236.7 մլրդ. դրամից հասնելով 350.7 մլրդ. դրամի: Ընդ որում 2010-2012թթ. խմիչքների արտադրության աճի տեմպերը էականորեն գերազանցել են զուտ սննդամթերքի արտադրության աճի տեմպերին: 2012թ. խմիչքների արտադրությունը կազմել է զուտ սննդամթերքի արտադրության (249.9 մլրդ. դրամ) 40.3%-ը (100.8 մլրդ. դրամ):

3. Սննդամթերքի արտադրությունից հետո մշակող արդյունաբերության հաջորդ խոշոր ենթաճյուղը հիմնային մետաղների արտադրությունն է, որի տեսակարար կշիռը 2012թ. տվյալներով կազմել է 23.6%: 2008թ. այդ ցուցանիշը կազմել է 20.6%:

4. 2012թ. տվյալներով բարձր տեխնոլոգիական արտադրանքի[1] արտադրության (27.2 մլրդ. դրամ) տեսակարար կշիռը մշակող արդյունաբերությունում կազմել է 3.9%, ամբողջ արդյունաբերությունում՝ 2.4%, ՀՆԱ-ում՝ 0.68%:

5. 2008-2012թթ. արտադրության անկում է արձանագրվել մանածագործական արտադրատեսակների արտադրությունում՝ 2012թ. կազմելով 754.6 մլն. դրամ 2008թ. 1.95 մլրդ. դրամի փոխարեն, պոլիգրաֆիական գործունեությունում՝ 2012թ. կազմելով 10.9 մլրդ. դրամ 2008թ. 14.1 մլրդ. դրամի փոխարեն, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունում՝ 2012թ. Կազմելով 7.5 մլրդ. դրամ 2008թ. 15.3 մլրդ. դրամի փոխարեն, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունում՝ 2012թ. կազմելով 11.8 մլրդ. դրամ 2008թ. 19.1 մլրդ. դրամի փոխարեն:

6. Քննարկվող ժամանակահատվածում առաջանցիկ զարգացման տեմպեր են գրանցվել հանքագործական արդյունաբերությունում, խմիչքների արտադրությունում, դեղագործական արտադրանքի արտադրությունում: Առաջանցիկության գործակիցը նշված ճյուղերում 2012թ. համար կազմել է համապատասխանաբար՝ 1.05, 1.05, 1.2:

---

[1] Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն, դեղագործական արտադրանքի արտադրություն, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն, էլեկտրական սարքավորանքի արտադրություն, ուրիշ խմբավորումներում չներառված մեքենաների և սարքավորանքի արտադրություն:

7. Քննարկվող ժամանակահատվածում արդյունաբերության կառուցվածքի փոփոխություններն ըստ արտադրության հատվածների չեն խոսում մշակող արդյունաբերության դերի բարձրացման մասին: Եթե հանքարդյունաբերության, մշակող արդյունաբերության և էներգետիկայի ու ջրամատակարարման հատվածների կշիռը արդյունաբերության կառուցվածքում 2008թ. կազմել է համապատասխանաբար 14.03%, 67.74% և 18.23%, ապա 2012թ. նշված հարաբերակցությունն ունեցել է հետևյալ պատկերը՝ 17.25%, 62.29% և 20.46%:

Եզրակացություններ.

1. ՀՆԱ աճը կարող է լինել ,պղպջակայինե, եթե այն չամրապնդվի առաջադեմ ճյուղային կառուցվածքի փոփոխություններով: Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին տեղի են ունեցել ոչ խորը փոփոխություններ և տնտեսական զարգացման համար չի ձևավորվել որակապես նոր հիմք: Տնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է գյուղատնտեսության կշիռը (ընդ որում գյուղատնտեսությունում ցածր է արտադրողականությունը), թույլ է զարգացած վերամշակող արդյունաբերությունը: Արդյունքում՝ Հայաստանը չափազանց թույլ և միակողմանի է ընդգրկված միջազգային մասնագիտացման համակարգում:

2. Տնտեսության թույլ զարգացած ճյուղային կառուցվածքն իր արտացոլումն է գտել զբաղվածության և հիմնական միջոցների կառուցվածքում: Հայաստանի զբաղված բնակչության շուրջ 40%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսության ճյուղին, ինչն ագրարային հասարակությանը բնորոշ գիծ է: Էներգետիկայի, տրանսպորտի և հանքարդյունաբերության ճյուղերին բնորոշ է ֆոնդատարության բարձր մակարդակ, այն դեպքում, երբ գյուղատնտեսությանը բաժին է ընկնում հիմնական միջոցների ընդամենը 4.4%-ը, իսկ ամբողջ մշակող արդյունաբերությանը՝ 15.5%-ը:

3. Հայաստանի արդյունաբերությունը բազմաճյուղ չէ, արդյունաբերական արտադրանքի թողարկման կառուցվածքում ընդհանուր առմամբ փոքր է վերամշակող հատվածի կշիռը: Բացի այդ, ըստ գործունեության տեսակների արդյունաբերական արտադրության աճի տեմպերի հարաբերակցությունը և դրանց տեսակարար կշիռների փոփոխությունները ցույց են տալիս, որ արդյունաբերության կառուցվածում վերջին տարիներին տեղի չեն ունեցել այնպիսի լուրջ տեղաշարժեր, որոնք կարող են հանգեցնել դրա որակական կատարելագործմանը: Արդյունաբերական արտադրության ճյուղային կառուցվածքը հիմնականում պահպանվել է, նույնիսկ խորացել է դրա հումքային ուղղվածությունը (ավելացել են հանքարդյունաբերության և մետալուրգիայի ճյուղերի տեսակարար կշիռները): Բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտադրության տեսակարար կշիռը կազմել է ՀՆԱ-ի ընդամենը 0.68%-ը:

4. Արդյունաբերության և հատկապես գիտատեխնիկական առաջընթացն ապահովող ճյուղերի հետագա զարգացումը մեր երկրի տնտեսական զարգացման և մրցունակության բարձրացման կարևորագույն նախադրյալն է: Տնտեսության կառուցվածքի փոփոխությունը տեղի է ունենում միմյանց փոխլրացնող շուկայական մեխանիզմների և պետական կառուցվածքային քաղաքականության ազդեցությամբ: Այս իմաստով լրամշակման կարիք ունի ,Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունե փաստաթուղթը՝ նախատեսելով պետական աջակցման ավելի ընդգրկուն և ամբողջական մեխանիզմ:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЕ ОТРАСЛЕВОЙ СТРУКТУРЫ ЭКОНОМИКИ РА И ПУТИ ЕЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ

Саркисян Л., преподаватель, ЕГУ

В статье представлена структура экономики РА в период рыночных отношений. Проанализирована структура валового внутреннего продукта, число занятых по отраслям

промышленности и концентрация основных фондов. Основываясь на анализе полученных результатов даны пути совершенствования структуры экономики страны.

TENDENCIES OF DEVELOPMENT OF ECONOMIC STRUCTURE OF RA AND WAYS OF IMPROVING.

Sargsyan L., lecturar, YSU

The article presents the structure of the economy of Armenia in the market period. The structure of the gross domestic product, the number of employees by industry and the concentration of assets. Based on the analysis of the results were given to ways to improve the economic structure of the country.

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ, դասախոս, ԵՊՀ

Հիմնական բառեր. շուկայական տնտեսություն, արդյունաբերություն,ճյուղային կառուցվածք, աճի բևեռներ:

Ինչպես հատնի է շուկայական վերափոխումների արդյունքում, ՀՀ-ում սկսեց ձևավորվել տնտեսության նոր ճյուղային կառուցվածք, ինչը ամբողջական տեսք ստացավ 2000-ական թվականների առաջին տասնամյակում: 2011թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն» փաստաթղթով, ըստ էության, հայտարարվում է տնտեսության նոր ճյուղային կառուցվածքի (որի հիմքը պետք է կազմի դիվերսիֆիկացված կառուցվածք ունեցող արդյունա-բերությունը) ձևավորման քաղաքականության մասին: Այդ քաղաքականությունը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Նախանշվել են արտահանման տեսանկյունից հեռանկարային 11 ոլորտներ, որոնցից 4-ի (կոնյակագործություն, դեղագործություն, ճշգրիտ ճարտարագիտություն և գինեգործության) ոլորտային ռազմավարություններն և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերն արդեն իսկ մշակվել և հավանության են արժանացել ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստում: 2013 թվականի փետրվարի 14-ին ՀՀ կառավարության N 166 -Ն որոշմամբ հաստատվել է «Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացման ծրագիրը», որի շրջանակներում «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ» ընտրված ոլորտների ընկերություններին նախատեսվում է տրամադրել պետական աջակցություն հետևյալ ուղղություններով՝

1.Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտումն,

2.Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում,

3.Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում,

4.Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում,

5.Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում,

6.Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան, գործարար կապերի հաստատումն,

7.Վերապատրաստման դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆի-նանսավորում[1]:

Ինչպես տեսնում ենք, բոլոր նշված միջոցառումները հիմնականում ինստիտուցիոնալ բնույթի են և չեն ենթադրում պետության ակտիվ միջամտություն տնտեսության նոր ճյուղերի ստեղծման հարցում:

Ճյուղային կառուցվածքի վերակառուցման մեխանիզմն ավելի լայն է, քան ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակը: Այն իրենից ներկայացնում է տնտեսության և նախնառաջ արդյունաբերության տարբեր ճյուղերի միջև սահմանափակ ռեսուրսների առավել ռացիոնալ բաշխումն ապահովող, ինչպես նաև նոր ճյուղերի ստեղծմանն ուղղված եղանակների ամբողջություն: Դա հնարավոր է շուկայի և կառուցվածքային տեղաշարժերի պետական կարգավորման փոխգործակցու-թյան պայմաններում: Այսինքն՝ կառուցվածքային կերպարափոխման պետական կարգավորման մեխանիզմը կոչված է լրացնելու տնտեսական օրգանիզմի շուկայական կարգավորման մեխանիզմը և արագացնելու նոր ճյուղային կառուցվածքի ձևավորումը:

Չնայած զարգացած շուկայական տնտեսությամբ պետություններում (օրինակ, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում) կիրառվել են կառուցվածքային վերափոխման տարբեր մոդելներ, սակայն, պետության կողմից նոր ճոյուղերի համընդհանուր աջակցության գիծը բնորոշ է եղել բոլորին: Նոր ճյուղերի ստեղծումը և զարգացումը կապված է նոր տեխնիկայում և տեխնոլոգիաներում կապիտալ ներդրումների կատարման հետ և ուղեկցվում է մեծ առևտրային ռիսկով, ինչով էլ պայմանավորված է պետական աջակցության անհրաժեշտությունը: Զարգացած երկրների փորձից հետևում է երկու եզրակացություն՝ պետությունը մեծ դեր ունի արդյունաբերության կառուցվածքային վերափոխումների իրականացման և դրանց անցկացման ժամանակաշրջանի տևողության հարցերում: Ընդ որում պետությունը պետք է հստակ ձևակերպի ընթացիկ և հեռանկարային խնդիրները, որպեսզի բացառի ռեսուրսների «փոշիացումը» տնտեսության բոլոր բնագավառներում: Կառուցվածքային վերափո-խումների հաջող կառավարման համար անհրաժեշտ է ձևակերպել արդյունաբերության կառուց-վածքային վերակառուցման հայեցակարգային առանցքը: Այդ առանցքը նպատակահարմար է ձևա-կերպել պետության կառուցվածքային քաղաքականության տեսքով՝ 8-10 տարի ժամանակահատվածի համար: Հայեցակարգը պետք է ներառի արդյունաբերության կառուցվածքային վերափոխումների նպատակները, ազգային գերակայությունները և պետական կարգավորման մեթոդները՝ բյուջետային, հարկային, ներդրումային քաղաքականության շրջանակներում:

Ինչպես վկայում է զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը, կառուցվածքային վերափոխումը հարկ է սկսել «աճի բևեռներիե որոշումից» այսինքն՝ պետք է հստակ պատկերացում լինի, թե որ ճյուղերի զարգացման վրա պետք է հիմնվել ներկայում և ապագայում: Աճի բևեռներ կարող են լինել ոչ միայն գոյություն ունեցող ճյուղերը, այլև նոր ստեղծվողները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բնական ռեսուրսներով հարուստ բազմաթիվ զարգացող երկրներ չեն կարողացել ստեղծել զարգացած կառուցվածք ունեցող տնտեսություն, քանի որ չեն կարողացել ժամանակին որոշել ,աճի բևեռներրե և նրանց միջև ճիշտ բաշխել ռեսուրսները:

«Աճի բևեռների» որոշման համար անհրաժեշտ է տնտեսության արագացված կառուցվածքային

[1] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերական քաղաքականություն, http:// www. mineconomy. Am /arm/35/gortsaruyt.html:

վերակառուցման քաղաքականության իրականացում: Աճի բեռները պետք է նվազագույնի հասցնեն առևտրի անհաշվեկշռվածությունը և տան բարենպաստ երկրորդական էֆեկտ, քանի որ ցանկալի է, որպեսզի գերակա ճյուղերը նպաստեն տնտեսության այլ ճյուղերում արտադրության արդյունավետության բարձրացմանը: Սակայն, շուկան ինքնին ընդունակ չէ ժամանակին բացահայտել այն ճյուղերը, որոնց վրա կարելի է հիմնվել ապագայում և արագ համակենտրոնացնել անհրաժեշտ ռեսուրսները՝ այդ ճյուղերի արագացված զարգացման համար: Այլ խոսքերով, շուկան ի վիճակի չէ իրականացնել տնտեսության արագացված կառուցվածքային վերակառուցում: Այդ գործառույթն հաջողությամբ կատարում է պետությունը՝ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման ճանապարհով:

Հայաստանի համար այսօր կարևոր խնդիր է ներդրումային քաղաքականության ակտիվացումը: Միայն տնտեսության առաջադեմ ճյուղերում կապիտալի ներդրման բազմակի ավելացումը թույլ կտա նոր տեխնոլոգիական հիմքի վրա ապահովել մրցունակ ճյուղերի վերածնունդը, ստեղծել գիտատար արտադրության աճի կենտրոններ, վերազինել տրանսպորտը և այլ ճյուղեր: Առաջին պլան են մղվում այն խնդիրները, որոնք կապված են Հայաստանի տնտեսության կառուցվածքային անհամասնությունների վերացման, գիտատար և վերամշակման բարձր աստիճան ունեցող արտադրանքի արտադրության աճը, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող և ընդլայնված վերարտադրության հիմքը կազմող ճյուղերի աջակցության հետ: Իհարկե, այդ նպատակով կառուցվածքային քաղաքականության թիվ մեկ գերակայությունը մնում է արտահանմանը կողմնորոշված արդյունաբերական քաղաքականության իրականացումը: Սակայն, այդ խնդրի լուծումը ենթադրում է առաջադիմական կառուցվածքային տեղաշարժերի պետական աջակցման ավելի ընդգրկուն և ամբողջական մեխանիզմի մշակում, որը կարող է պետք է ներառի.

- մակրոմակարդակում արդյունաբերական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը (տնտեսության պետական կարգավորման կատարելագործում՝ բյուջետային, հարկային, մաքսային, ներդրումային, ամորտիզացիոն, վարկային քաղաքականությունների շրջանակներում):
- ԳՏԱ ապահովող նոր և նորագույն ճյուղերի ու արտադրությունների զարգացման խթանումը,
- անդրազգային կորպորացիաների կազմի մեջ ձեռնարկությունների ներառման համար չափորոշիչների որոշումը,
- նպատակաուղղված տարածքային տնտեսական քաղաքականության ձևավորումը (տեղական բյուջեների ինքնուրույն ձևավորման համակարգի ներդնում, տարածքների պատասխանատվություն տնտեսական զարգացման համար, զարգացման տարածքային ծրագրերի մշակում և այլն):

Նշված միջոցառումների իրականացումը պետք է ապահովի հանրապետության ճյուղային կառուցվածքի հետագա կատարելագործումը, բարձրացնելով տնտեսության մրցունակությունը և երկրի տնտեսական անվտանգության մակարդակը:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОЛИТИКИ В ПРОМЫШЛЕННОСТИ РА.

Саркисян Л., преподаватель, ЕГУ

В статье обсуждается политика, проводимая в промышленности Армении и ее основные направления. Изложены некоторые предложения, которые могут обеспечить дальнейшее совершенствование отраслевой структуры, повышение конкурентоспособности экономики и экономической безопасности страны.

MAIN AREAS OF INDUSTRIAL POLICY OF RA.

Sargsyan L., lecturar , YSU

In the article discusses the industrial polotika Armenia and its main directions. We set out some suggestions that may further improve the industry structure and competitiveness of the economy and economic security.

ՎԱՐԿԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

Բանալի բառեր: ֆինանսական համակարգ, բանկային գործունեություն, վարկային հարաբերություններ, բանկային գործառույթներ, վարկեր, տնտեսություն

Այնպիսի տնտեսական երևույթների գոյության հնարավորությունը և անհրաժեշտությունը, ինչ-պիսիք են վարկը և վարկային հարաբերությունները, կապված են տնտեսությունում օբյեկտիվորեն տեղի ունեցող իրար հետ փոխկապակցված շրջապտույտների և մասնավոր կապիտալի շրջանառությամբ:

Յուրաքանչյուր մասնավոր կապիտալ իր գործունեության ընթացքում սովորաբար անցնում է երեք հաջորդողական փուլերով, ընդգրկելով արտադրության և շրջանառության ոլորտները, որոնք միասին կոչվում են շրջապտույտ: Ընդ որում, յուրաքանչյուր փուլում կապիտալն ունենում է դրան հատուկ գործառնական ձև՝ դրամային, արտադրական, ապրանքային: Գործընթացի ավելի մանրակրկիտ հետազոտությունը ցույց է տալիս, որ իրականում կապիտալը յուրաքանչյուր պահի զուգահեռաբար գտնվում է երեք փուլերում և բոլոր գործառնական ձևերում, ինչը գործունեության անընդհատության ապահովման պարտադիր պայման է: Այնուամենայնիվ, սա գործընթացի ընդհանուր պատկերն է: Կապիտալի շարժի ընթացքում անխուսափելիորեն ձևավորվում են «հոսող և արտահոսող» փողեր և այլ արտադրական ռեսուրսներ, ժամանակավորապես ավելանում կամ նվազում են այդպիսի ռեսուրսների կարիքները, նաև փոխվում են դրանց բավարարման աղբյուրները, ռեսուրսի մի մասը ժամանակավորապես դուրս է գալիս շրջանառությունից մինչև այն պահը, երբ իր մասնակցությունն այդ շարժման մեջ նորից չի դառնում արտադրական անհրաժեշտություն:

Արտադրության հիմնական միջոցներն օգտագործվում են արտադրության ընթացքում երկար ժամանակահատվածում, և դրանց գինը մաս առ մաս, և հետևաբար, նույնպես երկար ժամանակահատվածում փոխանցվում է (մաշվածության մասհանումների տեսքով) դրանց օգնությամբ ստեղծվող արտադրանքի (աշխատանքի, ծառայության) արժեքին: Խնայած գումարներն աստիճանաբար կենտրոնացվում են համապատասխան ձեռնարկությունների և կազմակերպությունների բանկային հաշիվներում: Կուտակված գումարները, մի կողմից, դեռևս անհրաժեշտ չեն լինում դրանց սեփականատերերին, մյուս կողմից՝ մինչև որոշակի պահ դեռ բավարար չեն լինում հիմնական միջոցները լրիվ նորերով փոխարինելու համար: Ձեռնարկությունների և կազմակերպությունների մոտ արտադրության հիմնական միջոցների գործողության տևողությունը, դրանց մաշվածության աստիճանը (փոխարինման անհրաժեշտությունը) և կուտակված մաշվածության ֆոնդերի չափը տարբեր է լինում: Այդ իսկ պատճառով որոշ ժամանակահատվածում տնտեսավարող սուբյեկտներից որոշների մոտ գոյանում է ժամանակավորապես ազատ գումարներ, որոնք նրանք պատրաստ են տրամադրել այլ

տնտեսավարող սուբյեկտների՝ ժամանակավորապես տնօրինման: Մինչդեռ մյուսն տնտեսավարողները, որոնք ցանկանում են նորացնել իրենց հիմնական միջոցները, կարիք են ունենում ներգրավել ֆինանսական ռեսուրսներ:

Այսպիսով, տնտեսական գործառնությունների իրականացման ընթացքում կազմակերպությունների շրջանառու միջոցների մի մասը ժամանակավորապես գտնվում են ազատ վիճակում, կամ էլ, օրինակ, որոշ դեպքերում, արտադրության և շրջանառության գործընթացների կազմակերպման առանձնահատկությունների, ինչպես նաև օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառների հետ կապված, առաջանում են դրամական միջոցների ժամանակավոր կամ լրացուցիչ պահանջ: Օբյեկտիվորեն, արտադրական ծախսերի և եկամուտների ու շահույթի ստացման ժամկետների միջև գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն, այսինքն՝ արտադրության և շրջանառության գործընթացները, ժամանակի առումով չեն համապատասխանում: Վարկն այս դեպքում հնարավորություն է տալիս մի կողմից արդյունավետ կազմակերպել արտադրության ու շրջանառության գործընթացները, իսկ մյուս կողմից՝ հնարավորության շրջանակներում կրճատել արտադրական պարբերաշրջանի տևողությունը[1]: Բոլոր նշված գործընթացներում շատ, թե քիչ մասնակցում է պետությունը, որի խնդիրներից են է ապահովել հնարավորինս հարթ, հակաճգնաժամային հասարակական արտադրության զարգացում և իր սոցիալական գործընթացների կատարում:

Այս ամենը նշանակում է, որ ժամանակակից տնտեսությունում վարկային հարաբերությունները կոչված են ապահովել հասարակական արտադրության անընդհատությունը և դրա հնարավոր առավելագույն արդյունավետությունը: Ժամանակակից արտադրությունն անհնար է պատկերացնել առանց զարգացած վարկային հարաբերությունների[2]:

Վարկը դա փոխատուի կողմից փոխառուին տրված փոխատվություն է փողի կամ ապրանքների տեսքով, որը տրամադրվում է վերադարձելիության, վճարելիության և անհետաձգելիության (ժամկետայնության) սկզբունքներով: Վարկն ապահովում է դրամական կապիտալի փոխարկումը փոխառու կապիտալի և ներկայացնում է փոխատուի և փոխառուի միջև ձևավորվող հարաբերությունները: Դրա օգնությամբ ձեռնարկությունների, անհատների և պետության ազատ դրամական միջոցները և եկամուտները կուտակվում են, փոխարկվում փոխառական կապիտալի, որն էլ իր հերթին վճարի դիմաց տրամադրվում է ժամանակավոր օգտագործման[3]:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ ՔՕ) 890-րդ հոդվածով տրված է ապրանքային վարկի սահմանումը, իսկ 891-րդ հոդվածով առևտրային վարկի սահմանումը, ըստ որի այն պայմանագրերով, որոնց կատարելը կապված է դրամական գումարը կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքը մյուս կողմի սեփականության հանձնելու հետ, կարող է նախատեսվել վարկի տրամադրում՝ ներառյալ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կանխավճարի, նախավճարի, դրանք ժամկետանց կամ տարաժամկետ վճարելու ձևերով (առևտրային վարկ), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով[4]: ՌԴ ՔՕ 822 և 823 հոդվածներով համապատասխանաբար սահմանվում են ապրանքային և առևտրային վարկերը: Ուսումնասիրելով ՔՕ հոդվածները տեսնում ենք, որ ապրանքային վարկի և առևտրային վարկի պայմանագրերը նույնատիպ են: Հիմնական տարբերությունը վարկի օբյեկտն է: Նշվածից հետևում է, որ վարկի օբյեկտները կարող են լինել՝ փողերը, ինչպես նաև որպես կանոն արժեքային (դրամային) գնահատական ունեցող նյութական բարիքներ, գյուղատնտեսական ապրանքներ, նյութեր և այլն: Փողերը կարող են լինել վարկային հարաբերությունների առարկա հետևյալ ստանդարտ դեպքերում՝

---

[1] Մխիթարյան Ա., Սահակյան Ռ. «Վարկի մենեջմենթ. Ուսումնամեթոդական ձեռնարկ», Եր. 2013թ., էջ 13:

[2] **Тавасиев А.М., Мазурина Т.Ю.,** Банковское кредитование: Учебник / Под ред. А.М. Тавасиева, М: ИНФРА-М, 2010. — с. 9.

[3] Деньги, кредит, банки. Под.ред В.В. Иванова, Б.И. Соколова. М.: Проспект, 2003, стр 103:

[4] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 891:

- երբ դրանք փոխանցվում են կամ փոխանակվում են մեկ անձից մյուսին ժամանակավոր օգտագործման և վերադարձի պայմանով,
- բ) երբ դրանք փոխանցվում են կամ փոխանակվում են որպես ապրանքի, աշխատանքի, ծառայության կամ նրանց մասի (երբ վարկատուն համարվում է ապրանքի, աշխատանքի, ծառայության ձեռքբերողը) դիմաց նախնական վճարում:

Այսպիսով, վարկի հասկացությունը (որպես օբյեկտ) չի կարելի համարել միայն ,փողը, համապատասխանաբար վարկն ինչպես գործընթաց չի կարելի դիտարկել որպես փողի շարժ՝ փոխանցված մեկ անձից մյուսին:

Ամբողջ վարկի կյանքն իր մեջ ներառում է 3 խումբ հարաբերություններ մասնակիցների միջև՝

- վարկերի տրամադրում / ստացում,
- վարկի օբյեկտի օգտագործում ստացողի կողմից (եթե վարկի օբյեկտը ենթակա է վերադարձման իր սեփականատերին),
- վարկ ստանալու պարտավորությունների կատարում վարկառուի կողմից :

Այժմ վերլուծության ենթարկենք բանկային վարկերն ընդհանուր տնտեսության մեջ: ՀՀ ֆինանսական համակարգում բնակչության և տնտեսավարող սուբյեկտների վարկավորումը իրականացվում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով[1]: Վարկերի ծանրակշիռ մասը տրվում են առևտրի ոլորտի, սպասարկման, տնտեսության այլ ճյուղերի վարկավորման և սպառողական վարկերի տեսքով (գծապատկեր 1): Ուսումնասիրելով միջազգային փորձը, տեսնում ենք, որ օրինակ Ֆրանսիայում 2015 թվականի հունվար ամսին տնտեսության իրական հատված տրվել են 2014.9 մլրդ եվրոյի վարկեր, որոնցից գերակշիռ մասը կազմել են սպառողական և առևտրային վարկերը[2]:



Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի կառուցվածքը[3]:

---

[1] Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հրապարակված տվյալների, 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկ և մեկ զարգացման բանկ, 32 վարկային կազմակերպություններ: Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2014թ. վերջի դրությամբ կազմել են 3 տրլն 410.9 մլրդ ՀՀ դրամ:

[2] Համաձայն Ֆրանսիայի Հանրապետության կենտրոնական բանկի 19.03.2015թ. հրապարակված զեկույցի

[3] Գծապատկերի կազմման հիմք է հանդիսացել՝ ՀՀ ԿԲ բանբեր, 2014թ. չորրորդ եռամսյակ, էջ 5:

Բանկային համակարգի ընդհանուր վիճակը ավելի լավ պատկերացնելու համար դիտարկենք բանկային համակարգի կողմից տրված վարկերի տոկոսադրույքները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Վարկերի տոկոսադրույքներն ըստ վարկատեսակների[1]

Վարկատեսակը	**Միջին տոկոսադրույքը 2015թ. մարտ ամսվա դրությամբ**	**Միջին տոկոսադրույքը 2014թ. մարտ ամսվա դրությամբ**
Առևտրային վարկեր	13-16%	12-15%
Գյուղատնտեսական վարկեր	14-20%	14-18%
Ֆինանսական լիզինգ	12-16%	11-16%
Շինարարության վարկեր	14-17%	14-16%
Սպառողական վարկեր	22-24%	19-22%
Ավտովարկեր	16-19%	15-18%
Հիփոթեքային վարկեր	12-15%	11-14%
Հիփոթեքային (վերանորոգման) վարկեր	16-20%	12-15%

Վարկերի տոկոսադրույքների մասին վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարվա ընթացքում վարկերի տոկոսադրույքների մեջ տեղի են ունեցել աննշան փոփոխություններ: Փոփոխությունները ակնառու են հատկապես ստորին նիշերում: 2014 թվականի դեկտեմբեր ամսում արժութային շուկայում տեղի ունեցած ցնցումները, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվների խստացումները ստիպեցին ֆինանսական կազմակերպություններին վերանայել վարկերի տոկոսադրույքները, հատկապես ավելացնելով ՀՀ դրամով տրվող վարկերի տոկոսադրույքների ստորին շեմը: Եվրոպական շուկայում վարկերի տոկոսադրույքները տատանվում են 1.5-4% սահմաններում: Օրինակ Ֆրանսիայում ՓՄՁ վարկերի միջին տոկոսադրույքը 2014 թվականի վերջի դրությամբ կազմել է 1.8%, իսկ միկրովարկերի միջին տոկոսադրույքը՝ 2.4%[2]:

Վերոնշյալ վերլուծությունների և մեկնաբանությունների հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ, որ վարկն օգտակար է և արդյունավետ դրա անհրաժեշտությունը ճիշտ գնահատելու և դրա ազդեցության ֆինանսական մոդելը ճիշտ կազմելու պարագայում : Վարկի ազդեցությունը երկրի տնտեսության վրա ամբողջությամբ և յուրաքանչյուր վարկառուի ու վարկատուի ֆինանսական դրության վրա կարող է լինել դրական միայն տվյալ գործիքն օգտագործելով տնտեսապես հիմնավորված սահմաններում ու մասշտաբներում: Բացասական արդյունքների կարող են հանգեցնել ինչպես վարկի պակասորդը, այնպես էլ դրա ավելցուկը:

Վարկը կարելի է համարել տնտեսապես հիմնավորված, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

---

[1] Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի պաշտոնական ինտերնետային կայքերը, ինչպես նաև http://varker.am/ կայքի տվյալները:

[2] Աղբյուրը՝ Ֆրանսիայի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած տվյալները՝ https://www.banque-france.fr/en/economics-statistics/stats-info/detail/sme-financing.html:

Պոտենցիալ վարկատուի տեսանկյունից՝

- ազատ վարկային ռեսուրսներն առկա են կամ դրենց հայտնվելը մոտակա ժամանակում իրական է,
- ազատ ռեսուրսների ավելի արդյունավետ տարբերակները բացակայում են տվյալ պահին և մոտ ժամանակաշրջանում,
- ռեսուրսների նկատմամբ առկա է վճարունակ պահանջարկ, վարկը կապահովի ընդունելի (միջին շուկայականից ոչ պակաս) եկամտի մակարդակի ստացում,
- պոտենցիալ վարկառուն նախընտրում է օգտագործել վարկն իրական, տնտեսապես ռացիոնալ և ֆինանսական առումով շահավետ նախագիծ իրականացնելու համար. անհրաժեշտության դեպքում պատրաստ է առաջարկել վարկի ընդունելի ապահովվածություն, վստահություն է ներշնչում:

Պոտենցիալ վարկառուի տեսանկյունից՝

- առկա է արտադրական կարիք, որն սկզբունքորեն կարող է բավարարված լինել տարբեր միջոցներով և համարվում է օբյեկտիվորեն հասունացած և անհետաձգելի,
- ներկայումս և մոտակա ժամանակահատվածում բացակայում են (բացի վարկի ստացումից) ֆինանսական պակասուրդի լուծման այլընտրանքային տարբերակները (այլ ֆինանսավորման աղբյուրներ), իսկ եթե այդպիսի տարբերակներն առկա են, ապա բանկային վարկավորումը համարվում է առավել շահավետ կամ ավելի ընդունելի այլ չափանիշներով,
- վարկային միջոցների օգտագործմամբ նախագծի իրականացումը կապահովի ընդունելի շահույթի մակարդակ:

Այսպիսով, ժամանակակից աշխարհում վարկը ժողովրդական տնտեսական հարաբերությունների ակտիվ և բավականաչափ արդյունավետ մասնակից է: Առանց վարկավորման իրենց բնականոն գործունեությունը չեն կարող ապահովել ոչ պետությունները, ոչ ձեռնարկություններն ու կազմակերպությունները, ոչ բնակչությունը: Վարկի օգնությամբ տեղի է ունենում ռեսուրսների, կապիտալի տեղաբաշխում, ստեղծվում է նոր արժեք: Սակայն պետք է հաշվի առնել նաև, որ որոշակի հանգամանքներում այն կարող է թողնել նաև բացասական հետևանքներ՝ թաքցնել ապրանքների գերարտադրությունը, պարտապանների իրական դրությունը, աջակցել տնտեսական և սոցիալական հակասությունների սրմանը:

Վարկային գործունեությունը համարվում է այն կարևորագույն հատկանիշներից մեկը, որը ստեղծում է հենց բանկային հասկացությունը: Հստակ և արդյունավետ վարկավորման մեխանիզմների կարգավորումը կարևոր է ինչպես բանկերի, այնպես էլ ողջ տնտեսության համար: Նշված մեխանիզմների ստեղծումը և կարգավորումը խնդիրների կարևորագույններից մեկն է, որոնք կանգնած են երկրի ողջ բանկային համակարգի առջև:

Գրականություն

1. Մխիթարյան Ա., Սահակյան Ռ., ,Վարկի մենեջմենթ. Ուսումնամեթոդական ձեռնարկ, ,Լիմուշ հրատ., Եր., 2013, 255 էջ:
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 2003, 431 էջ:
3. ՀՀ ԿԲ բանբեր, չորրորդ եռամսյակ 2014, 27 էջ:
4. "Обзор банковского сектора РФ; аналитические показатели" Центральный Банк Российской Федерации, департамент банковского надзора, №150 2015 год, 43 стр.
5. Тагирбекова К.Р. Основы банковской деятельности, Издательский дом «Инфра-М», Москва, 2003г., 712 стр.
6. Деньги, кредит, банки. Подред В.В. Иванова, Б.И. Соколова. М.: Проспект, 2003, 624 с.

7. Тавасиев А.М., Мазурина Т.Ю. Банковское кредитование: Учебник / Под ред. А.М. Тавасиева, М:ИНФРА-М, 2010. — 656 с.
8. Piter S. Rose, Sylvia C. Hudgins "Bank management and financial services", seventh edition, McGraw publ, 2008, 752 pages
9. http://www.cba.am
10. http://www.cbr.ru/
11. https://www.banque-france.fr
12. http://www.varker.am
13. http://www.armstat.am/am/

СУЩНОСТЬ И РОЛЬ КРЕДИТА И КРЕДИТОВАНИЯ В ЭКОНОМИКЕ

Мхитарян А., к.э.н., доцент, АГЭУ

Кредит во многом является условием и предпосылкой развития современной экономики, неотъемлемым элементом экономического роста. Кредит выступает опорой современной экономики. Его используют как крупные предприятия и объединения, так и малые производственные, сельскохозяйственные и торговые структуры.

DEFINITION AND ROLE OF CREDIT TRANSACTIONS IN ECONOMY

Mkhitaryan A., PhD, Associate Professor, ASUE

The credit in many respects is a condition and the prerequisite of development of modern economy, the integral element of economic growth. The credit is the integral element of economic development. It is used by both the large enterprises and associations, and small production, agricultural and trade structures.

ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

ՌՈՄԱՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ, տնտ. գիտ. թեկնածու, ՀԱԱՀ

Հիմնաբառեր. կրթություն, մարդկային կապիտալ, կրթական համակարգ, հանրակրթություն, մասնագիտություն:

Սոցիալական ոլորտի հիմնական բաղադրիչներից է կրթությունը, որը մարդկային կապիտալի արժեքի բարձրացման ու աշխատանքային ռեսուրսների վերարտադրության ապահովման կարևորագույն նախադրյալներից է: Մեր երկրում կրթությունը բոլորի համար հավասարապես մատչելի դարձնելու և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով նրա բոլոր մակարդակներում իրականացվում են բարեփոխումներ: Կրթական համակարգի առջև ծառացած հիմնախնդիրները բազմազան են՝ պայմանավորված կյանքի օբյեկտիվ անհարժեշտությամբ, որոնք առաջանում են կրթության գլոբալացման և մրցունակության անհրաժեշտությունից: Ոլորտի զարգացման քաղաքականությունը պետք է համահունչ լինի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված լինի երկրի տնտեսական աճին, աղքատության կրճատմանն, անհավասարության համահարթեցմանը և մարդկային զարգացման մյուս գործընթացների իրականացմանը: Հենց այդ տեսանկյունից էլ պետք է դիտարկել

Սյունիքի մարզի կրթության զարգացման ռազմավարությունը:

Կրթական համակարգի կենտրոնական օղակը մնում է միջնակարգ կրթությունը, որտեղ կառավարման ներկա փուլում իրականացվում են արմատական բարեփոխումներ՝ ուղղված կրթության որակի բարձրացմանը և աշխատանքի շուկայի պահանջների բավարարմանը: Այն հանդիսանում է նախամասնագիտական կրթությունն ապահովող հիմնական օղակը, որը կնպաստի սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և ուսումնառության հաջողությանը:

Թիվ 1աղյուսակի տվյալներից երևում է, որ Սյունիքի մարզում 2013/2014 ուս. տարում գործել են 121 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորել են 16598 աշակերտ, որը 2009/2010 ուսումնական տարվա համեմատ պակաս է եղել 850 աշակերտով: Չնայած այն հանգամանքին, որ 2009/2010 ուս տարվա համեմատ վերջին երեք տարիներին մարզում դպրոցների թվաքանակը նվազել է, այնուհանդերձ դրան զուգահեռ նվազել է նաև միջին հաշվով մեկ դպրոց հաճախող աշակերտների թվաքանակը:

Աղյուսակ 1.

Հանրակրթական դպրոցների հիմնական ցուցանիշները 2009-2014թթ.[1]

	Հայաստանի Հանրապետություն					**Սյունիքի մարզ**				
	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2012/ 2013	2013/ 2014	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2012/ 2013	2013/ 2014
Դպրոցների քանակը, ընդամենը	1457	1450	1441	1435	1434	125	123	121	121	121
Աշակերտների թվաքանակը	392946	370892	386439	368708	360446	17448	16810	17733	16985	16598
Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	269.7	255.8	268.2	256.9	251.4	139.6	136.7	146.6	140.4	137.2
Դասարանների քանակը մեկ դպրոցում	15.8	13.9	14.6	15.8	15.5	8.4	10.8	11.7	15.4	11.4
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	17.1	18.4	18.4	16.2	16.2	16.6	12.7	12.5	9.1	12.0
Մանկավարժների թվաքանակը	41512	41402	41757	40830	39843	2507	2493	2487	2420	2371
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	9.5	9.0	9.3	9.0	9.0	7.0	6.7	7.1	7.0	7.0

Աշակերտների թվաքանակի նվազման միտումն ակնհայտ է, իսկ դա իր հերթին բերում է դասարանների և ուսուցիչների կրճատմանը: 2013/2014 ուս տարում Սյունիքի մարզն ուսուցիչ -

[1] ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, վիճակագրական ժողովածուներ 2007-2011, Եր. 2012, էջ 122-123; 2009-2013, Եր. 2014, էջ 122-123:

աշակերտ հարաբերակցության ցուցանիշով հանրապետությունում զբաղեցրել է ամենացածր տեղերից մեկը՝ գերազանցելով միայն Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերին, իսկ միջին հանրապետական ցուցանիշին զիջում է գրեթե 1.3 անգամ: Նման իրավիճակի պատճառն արտագաղթն է և թերհամալրված դասարանների միավորումը:

Աշակերտների թվաքանակի նվազմանը զուգընթաց մեծանում է մեկ աշակերտին հատկացվող տարեկան միջին դրամական չափը: Դրա վրա ազդում են երկու խումբ գործոններ.

1. աշակերտների ընդհանուր թվի նվազումը,
2. ոլորտին պետական բյուջեից ընդհանուր ֆինանսական հատկացումների աճը:

Աղյուսակ 2.

Սյունիքի մարզի կրթության ոլորտին պետական բյուջեից հատկացումները 2010-2014թթ. (մլն. դրամ)[1]

Կրթության ոլորտ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Հանրակրթություն	3674.5	3591.1	3532.0	3615.2	3897.3
Հատուկ կրթություն	202.1	190.4	175.0	167.7	178.0
Արտադպրոցական դաստիարակություն	28.0	31.0	34.8	38.0	55.2
Ընդամենը	3904.6	3812.5	3741.8	3820.9	4130.5

Ինչպես երևում է թիվ 2 աղյուսակի տվյալներից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում մարզում պետական բյուջեից հանրակրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներին ընդհանուր հատկացումներն ավելացել են շուրջ 250.0 մլն. դրամով, այդ թվում հանրակրթության ոլորտում՝ 222.8 մլն. դրամով:

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Սյունիքի մարզում 2013/2014 ուս. տարում կազմել է 100% (աղյուսակ 3):

Մարզի հանրակրթության ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր (շենքերի վերանորոգում, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների վերապատրաստման ծրագրեր), որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա: Չնայած, իրականացվող միջոցառումներին, ներկայումս կրթական հաստատություններում համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս համապատասխան գույքի խիստ կարիք ունեն, հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

[1] Համաձայն Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության տվյալների:

Աղյուսակ 3.

ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական հաստատությունների և դրանցում սովորողների բաշխվածությունը 2013/2014 ուս. տարում[1]

Ուսումնական հաստատություններն ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի	Քաղաքային		Գյուղական	
	ուսումնական հաստատու-թյունների թիվը	սովորող աշակերտների թիվը	ուսումնական հաստատու-թյունների թիվը	սովորող աշակերտների թիվը
Տարրական դպրոցներ (1-4-րդ դասարաններ)	-	-	2	15
Հիմնական դպրոցներ (1-9-րդ դասարաններ)	17	4878	20	289
Ավագ դպրոցներ (10-12-րդ դասարաններ)	5	2396	-	-
Միջնակարգ դպրոցներ (1-12-րդ դասարաններ)	14	3562	63	5458
Ընդամենը	36	10836	85	5762

Կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն նյութատեխնիկական բազայից, այլ նաև ուսուցիչների գիտելիքներից և մանկավարժական արհեստավարժությունից: Վերջին տարիներին համոզիչ հետազոտական ապացույցներ կան այն մասին, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու առանցքային փոփոխականը ուսուցիչներն են: Ըստ կրթության տնտեսագետ Հանուշեկի[2], միջինից բարձր մակարդակ ունեցող ուսուցիչներն արձանագրում են 50% ավելի բարձր արդյունք աշակերտների մոտ, քան միջին մակարդակ ունեցող ուսուցիչները: Միաժամանակ, միջինից ցածր մակարդակ ունեցող ուսուցիչները 50% ավելի ցածր արդյունք են արձանագրում, քան միջին մակարդակ ունեցող ուսուցիչները: Այսպիսով՝ միջինից բարձր մակարդակ ունեցող ուսուցիչները երեք անգամ ավելի բարձր արդյունք են արձանագրում, քան միջինից ցածր մակարդակ ունեցող ուսուցիչները:

Ներկայումս խիստ արդիական է դարձել ուսուցիչների գիտելիքները և մասնագիտացումը արդի պահանջներին համապատասխանեցնելը, ինչի համար կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը: Մարզում պարբերաբար իրականացվում են դպրոցների տնօրենների և ուսուցիչների մասնագիտական, մեթոդական զարգացման աջակցության նպատակով վերապատրաստումներ, թեմատիկ սեմինարներ և խորհրդատվություններ:

Բացի նշված գործոններից, կրթության որակը շատ բանով կախված է նաև դպրոցի կառավարման համակարգից: Ներկայումս դպրոցը որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ չի կայացել: Դպրոցի կառավարման համակարգում ձևական բնույթ է կրում ծնողների ու աշակերտների մասնակցությունը: Կառավարման խորհրդի անդամները հիմնականում տեղյակ չեն դրա կանոնադրական և գործառնական խնդիրներին: Համայնքը և տեղական իշխանությունները համարյա աջակցություն չեն ցուցաբերում դպրոցին՝ գտնելով, որ դա պետության խնդիրն է:

[1] http://stat.armedu.am/.

[2] Eric Hanushek, The Economic Value of Higher Teacher Quality", Economics of Education Review, volume 30, Issue 3, June2011, pp. 466-479:

Սյունիքի մարզի գյուղական դպրոցների կրթամակարդակի վրա բացասաբար են ազդում դրանց ոչ լրիվ համալրվածությունը ուսուցիչներով, գույքով, սարքավորումներով, գրականությամբ ու մեթոդական հրահանգներով: Գյուղական շատ դպրոցներում աշակերտների թիվը բավարար չէ դպրոցի լիարժեք գործելու համար, որի պատճառով էլ աշակերտները ստիպված են հաճախել մոտակա համայնքների դպրոցները կամ էլ հաճախել բազմակոմպլեկտ դասարաններ: Անհրաժեշտ է պետական կրթական առանձին քաղաքականություն իրականացնել գյուղական դպրոցի նկատմամբ: Ժողովրդագրական բացասական միտումների հետ կապված բավականին լուրջ հիմնախնդիր է դարձել մարզի սահմանամերձ, լեռնային սակավաթիվ բնակչությամբ համայնքներում գյուղական դպրոցի պահպանության խնդիրը: Առկա միտումների պահպանման դեպքում առանձին համայնքներ կկանգնեն դպրոցների փակման վտանգի առջև, ինչն էլ իր հերթին զգալի բացասական ազդեցություն կունենա գյուղապահպանության խնդրին:

Կրթության զարգացումն առավել արդյունավետ ու նպատակային դարձնելու համար Սյունիքի մարզում անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ.

- բարելավել հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազան և կադրերով ապահովվածությունը,
- իրականացնել պետական կրթական առանձին քաղաքականություն գյուղական դպրոցի նկատմամբ, հնարավորություն ստեղծել լուծելու այն կարևորագույն, առաջնահերթ խնդիրները, որոնք տեղերում խոչընդոտում են այդ դպրոցների գործունեության բարելավման գործընթացը,
- հստակեցնել կրթական հաստատությունների տարածքային բաշխվածության սկզբունքները, ապահովել դրանց արդյունավետ համապատասխանությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին,
- բարձրացնել հանրակրթական դպրոցներում համակարգչային դասավանդման որակը, ընդլայնել ինտերնետային կապը և համակարգչային ապահովվածության շրջանակները և այլն:

Մարզի արտադպրոցական կրթության համակարգում պետության ռազմավարությունն ուղղված է դրա արդիականացմանը և հետագա զարգացման նախադրյալների ստեղծմանը, որի առաջնային ուղղություններն են՝ օրենսդրական դաշտի ու կառավարման գործընթացի կատարելագործումը, կադրերի վերապատրաստումը, նյութատեխնիկական բազայի բարելավումը և այլն:

2013/2014 ուսումնական տարում մարզում գործել են 17 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, որտեղ սովորել են 2402 երեխա, որից՝ 285-ը անվճար : 2009/2010 ուսումնական տարվա համեմատ այս դպրոցներում աշակերտների թվաքանակը ավելացել է 222-ով, սակայն անվճար սովորողների ընդհանուր թվաքանակը նվազել է 138 աշակերտով:

Ներկայումս այդ դպրոցներն ունեն մի շարք խնդիրներ, մասնավորապես.

1. շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան,
2. աշակերտների ընտրության սահմանափակությունը,
3. համայնքների բյուջեների հնարավորությունների սահմանափակությունը:

Մարզում գործում է երկու հատուկ դպրոց թույլ տեսողությամբ, մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաների համար: Սակայն աշխարհագրական ցրվածության պատճառով, դժվարություններ են առաջանում այդ կարգի բոլոր երեխաներին ներգրավելու առումով:

Ներկայումս, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Սյունիքի մարզում դժվար լուծելի խնդիր է դարձել միջին մասնագիտական կադրերի պատրաստումը, որը պետք է իրագործվի արհեստագործական հիմնարկների միջոցով: Դրանք գրեթե չեն գործում, քանի որ, մի կողմից աշխատաշուկայում նվազել է պահանջարկը, իսկ մյուս կողմից՝ պետությունը չի ֆինանսավորում այդ

մասնագետների պատրաստումը: Դրա համար էլ, ելնելով երկրի սոցիալ-տնտեսական պահանջներից և ինքնաֆինանսավորման սկզբունքից, որոշակի զարգացում ստացան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հանդեպ մի շարք մասնագիտություններ, որոնք հաջողությամբ գործում են մարզի թվով 4 նախնական և 7 միջին մասնագիտական հաստատություններում (աղյուսակ 4):

Մարզում բարձրագույն ուսումնական կրթություն իրականացնում են Գորիսի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը, Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի Սիսիանի մասնաճյուղը և Գորիսի <<Սյունիք>> ինստիտուտը:

Աղյուսակ 4.

Սյունիքի մարզի նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության հիմնական ցուցանիշները 2009-2014թթ.[1]

Ուսումնական հաստատության տեսակը	Ուսումնական հաստատության քանակը	Ուսանողների քանակը			Մանկավարժական, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի քանակը
		Ընդամենը	Անվճար	Վճարովի	
2009/2010 ուսումնական տարում					
Նախնական	4	311	257	54	34
Միջին մասնագիտական	8	1303	525	778	231
Բարձրագույ	4	2477	339	2138	205
2010/2011 ուսումնական տարում					
Նախնական	4	263	221	42	75
Միջին մասնագիտական	8	1324	536	788	218
Բարձրագույն	4	2301	298	2003	213
2011/2012 ուսումնական տարում					
Նախնական	3	255	226	29	79
Միջին մասնագիտական	7	1229	546	683	210
Բարձրագույն	4	2056	227	1829	206
2012/2013 ուսումնական տարում					
Նախնական	4	299	281	18	58
Միջին մասնագիտական	7	1187	664	523	235
Բարձրագույն	4	1955	1737	218	210
2013/2014 ուսումնական տարում					
Նախնական	4	349	347	2	86
Միջին մասնագիտական	7	1225	865	360	221
Բարձրագույն	4	1772	123	1649	198

Աղյուսակ 4-ում բերված տվյալներից երևում է, որ մարզում 2009/2010 ուսումնական տարվա համեմատ ուսումնասիրվող վերջին տարում նվազել են միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների թվաքանակը համապատասխանաբար՝ 78 և 705 ուսանողով: 2013/2014 ուսումնական տարում նախնական մասնագիտական ուսումնական հաստատու-

[1] ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, վիճակագրական ժողովածուներ 2007-2011, Եր. 2012, էջ 127-143; 2009-2013, Եր. 2014, էջ 127-142:

թյուններում անվճար համակարգով սովորել են ընդամենը սովորող ուսանողների 99.4%-ը, իսկ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխանաբար՝ 70.6 և 6.9%-ը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզի սահմանամերձ և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի աշակերտների հիմնական մասը, ցածր վճարունակության և համեմատաբար ցածր կրթամակարդակի պատճառով, հատկապես բարձրագույն ուսումնական հաստատություններում, սովորելու հնարավորությունից զրկված են: Այս նպատակով առաջարկում ենք ստեղծել կրթությանն ուղղված սոցիալական հատուկ ծրագրեր, ներգրավելով անվճարունակ ուսանողներին, լավ առաջադիմությամբ ուսանողների հետ կնքել երեքամյա աշխատանքային պայմանագրեր՝ ապահովելով թե' կատարված պետական ծախսերի մասնակի հետ գնումը, և թե' աշխատաշուկան որակյալ կադրերով համալրելու հարցը: Ընդհանուր առմամբ, մարզում այս ուսումնական հաստատությունների առկայությունը, որոշակիորեն մեծացնում է մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողների շրջանակները, քանզի մայրաքաղաքում կրթություն ստանալը՝ լրացուցիչ ծախսերի հետ կապված, սոցիալական մի շարք խմբերի համար դեռևս մնում է անհասանելի:

Այսպիսով, ուսումնասիրելով և վերլուծելով Սյունիքի մարզի կրթական համակարգի իրավիճակը, կարելի է եզրակացնել, որ մարզում կրթությունը միշտ էլ ունեցել է մեծ հարգանք, պահանջարկ վայելող արժեք, քանի որ մարդիկ գիտակցում են, որ գիտելիքը բարձրացնում է մարդկային կապիտալի մակարդակը, մեծացնում նրանց ներուժը և նպաստում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Այնուհանդերձ, ներկայումս կրթությունը դժվար հասանելի է որոշ խմբի մարդկանց, հատկապես գյուղական բնակչությանը, որոնք թեև գիտակցում են կրթության կարևորությունը, բայց դեռևս օբյեկտիվ պատճառներով չեն կարողանում ձեռք բերել այդ կարևոր հոգևոր բարիքը, քանի որ դրան հասնելու համար անհրաժեշտ է նախ լուծել նյութական բնույթի պահանջմունքների բավարարման հարցը:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ В СФЕРЕ ОБРАЗОВАНИЯ СЮНИКСКОГО МАРЗА РА

Акобджанян Р., к.э. н., НАУА

Образование как основной компонент социальной сферы является одной из важнейших предпосылок к поощрению людских резервов и воспроизводства рабочей силы. Оно должно быть направлено на экономический рост страны, снижение уровня бедности, регулирование неравенства и осуществление других функций человеческого развития.

Вопросы развития образования в Сюникской области рассматриваются в данной статье с этой точки зрения.

THE ISSUES OF EDUCATION IMPROVEMENT IN RA SYUNIK REGION

Hakobjanyan R., Ph.D in Eonomics, ANAU

Education as the main component of the social sphere is considered one of the most important prerequisites to human resources promotion and labour resources reproduction. It must be directed at the country’s economic growth, poverty reduction, inequality leveling and realization of other functions of human development.

The issues of education improvement in Syunik region are examined from that very point of view.

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՆԱՐԵԿ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ , ասպիրանտ, ՀՀԳԱԱ, Մ. Քոթանյանի անվ.տնտ. ինստիտուտ

Հիմնաբառեր. սոցիալ-տնտեսական, միգրացիա, անվտանգություն, գիտելիքահենք, գիտակրթական, համալսարան, զարգացում, տեղաշարժ, մտավոր կարողություն:

Այսօր ՀՀ սոցիալ-տնտեսական կյանքի վրա զգալի ազդեցություն է թողնում միգրացիան: *Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի մշտական բնակավայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան, այլ աշխարհագրական շրջան կամ այլ երկիր տեղափոխման ձևով*[1]*:*

Երկու դեպքում էլ վտանգված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը: Առաջին դեպքում առկա է քաղաքային կենտրոնացում, ինչը հանգեցնում է տնտեսության ոչ հավասարաչափ զարգացմանը և կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ երկրի սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար, իսկ երկրորդ տարբերակում երկիրը կորցնում է բնակչության աշխատունակ զանգվածը, քանի որ արտագաղթում են հիմնականում աշխատունակ բնակչությունը:

Չնայած միգրացիա-սոցիալտնտեսական իրավիճակ կապը կարելի է դիտարկել նաև հակառակ ուղությամբ, սակայն դա ըստ էության չի փոփոխում այն հարցը, որ այսօր միգրացիոն քաղաքականությունը լուրջ ազդեցություն է թողնում երկրի ընդհանուր տնտեսության վրա և կարող է զգալի վնասներ հասցնել ինչպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը այնպես էլ երկրի անվտանգությանը:

Աշխարհում դեռևս 2005 թ-ին մոտ 191 միլիոն մարդ՝ աշխարհի բնակչության 3 տոկոսը, ապրում էր իր հայրենիքից դուրս: Իր ծավալի և բաղադրյալ բնույթի պատճառով միջազգային միգրացիան կարևոր ուժ է դարձել զարգացման տեսանկյունից և առաջնահերթ խնդիր՝ թե՛ զարգացող, թե՛ զարգացած երկրների համար: Միգրանտների մեծ մասը հատում է սահմաններն ավելի լավ տնտեսական եւ սոցիալական հնարավորությունների փնտրտուքներով:

Երկրների ներսում ընթացող ներքին միգրացիան նույնպես աճում է. մարդիկ տեղափոխվում են՝ արձագանքելով ռեսուրսների, ծառայությունների ու հնարավորությունների անհավասարությանը կամ փախուստ տալով բռնությունից կամ բնական աղետներից: Գյուղական վայրերից քաղաքային վայրեր բնակչության շարժը մոլորակով մեկ հանգեցրել է քաղաքների պայթյունանման աճի:

Ըստ ՀՀ միգրացիոն պետական ծառայության ներկայացրած հաշվետվության 2009-2012թթ ժամանակահատվածում տնային տնտեսությունների անդամների 9,5%-ը ներգրավված են եղել տարբեր տեղաշարժերում: Այդ տեղաշարժերի 28,7%-ը եղել են ներհանրապետական, իսկ 71,3%-ը՝ միջպետական, որոնց 90%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը:

Արտաքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրված տնային տնտեսությունների անդամների մեկնելու հիմնական պատճառ է հանդիսացել աշխատելու գործոնը:

Տնային տնտեսությունների անդամների 67.0%-ը (շուրջ 166 հազ.մարդ) 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ դեռևս բացակայել են իրենց նախկին բնակության վայրից, իսկ 33.0%-ը (82 հազ.մարդ) վերադարձել են մեկնումներից, որոնց 74.6%-ը՝ այլ երկրներից:

Տնային տնտեսությունների վերադարձած անդամների 74.1%-ի բացակայության տևողությունը

[1] http://mtrcarm.com/74.html.

կազմել է մինչև մեկ տարի (որոնցից 29.6%-ինը՝ երեք ամիս և պակաս, որոնք չեն դիտարկվում որպես միգրանտներ), իսկ 25.9%-ի բացակայության տևողությունը կազմել է մեկ տարի և ավելի:

2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների անդամների 64.6%-ը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում, իսկ 16.4%-ը՝ այլ երկրներում: Ընդ որում, արտերկրում գտնվողների 11.6%-ի ՀՀ-ից բացակայելու տևողությունը կազմել է երեք ամիս և պակաս, 54.6%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 33.8%-ինը՝ մեկ տարի և ավելի:

Արտաքին միգրանտները 2009-2012թթ-ին կազմել են հաշվառման ժամանակ երկրից բացակայած տնային տնտեսությունների անդամների (չվերադարձածների)՝ 87%-ը (մոտ 115 հազ. մարդ կամ միջին տարեկան հաշվով շուրջ 29 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 4-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները կազմել են արտաքին միգրանտների համակցության 62%-ը, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 38%-ը: [1]

Միգրացիոն քաղաքականության վրա ազդող գործոնները բազմաթիվ և բազմաբնույթ են: Հենց այդ գործոններից է կախված այն հանգամանքը, որ միգրացիան ՀՀ-ում ստացել է նման բարձր տեմպ:

Չխորանալով մնացած գործոնների մեջ կցանականայինք ուշադրություն դարձնել գիտակրթական քաղաքականությանը, գործոն, որը զգալի ազդեցություն ունի ինչպես երկրի ընդհանուր զարգացման այնպես էլ նրա անվտանգության համար:

Այսօր ՀՀ-ն չունենալով աշխարհաքաղաքական բարենպաստ դիրք, /ծով, օգտագար հանածոներ/, սպառման լայն շուկա մրցունակ, արտադրանքի լայն անվանացանկ այնուամենայնիվ պետք է կարողանա դիմակայել շուկայական մարտահրավերների և երկիրը տանել դեպի կայուն զարգացում: Այստեղ է, որ գիտակրթական քաղաքականությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության վրա:

Հայ ազգը դարեր շարունակ հայտնի է եղել իր բնատուր խելքով, գիտելիքների ու մտավոր կարողությունների բարձր ցուցանիշներով, և մինչև օրս էլ շարունակում է ցուցաբերել նման վարքագիծ: Սակայն գիտակրթական քաղաքականության ոչ ճիշտ և արդյունավետ կառավարման, ինչպես նաև մի շարք այլ գործոնների պատճառով, ՀՀ գիտակրթական համակարգը չի օգտագործում իր ամբողջ պոտենցիալը:

Գիտակրթական քաղաքականության զարգացման և կարևորության մասին է խոսում նաև այն փաստը, որ ՀՀ միգրացիայի պետական կառավարման քաղաքականության մեջ նշվող բազմաթիվ խնդիրների մեջ ընդգծվում է նաև Հանրապետության մտավոր և գիտական ներուժի, ինչպես նաև որակյալ աշխատուժի զգալի ծավալների հասնող արտահոսքի նվազման մասին[2]:

Այս առումով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը՝ ԱԱՌ-ն, գիտակրթական համակարգի արդյունավետության և միջազգային ներգրավվածության ոչ բավարար մակարդակները, ինչպես նաև յուրաքանչյուրի համար մասնագիտական կրթության ոչ լիարժեք մատչելիությունը համարում է Հայաստանի Հանրապետության անվտանգության ներքին սպառնալիքներից, ուստի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հիմնական երաշխիքների շարքին է դասում նաև գիտակրթական համակարգի արդիականացումը, կրթության մատչելիությունը, հոգևոր-մշակութային ոլորտների շարունակական զարգացումը:Այս ուղղության կյանքի կոչումը, ի թիվս այլ խնդիրների, ենթադրում է նաև տնտեսության և հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական աշխատուժի, մասնավորապես՝ գիտական և գիտամանկավարժական

[1] http://www.smsmta.am/?menu_id=143.

[2] <<Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ>> 2010թ.:

ներուժի վերարտադրությունը, ինչպես նաև «ուղեղների արտահոսքի» կանխումը: Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթների (ԳԲՀԴ) համաձայն, գիտական ներուժի վերարտադրությանը նպատակաուղղված քաղաքականության բացակայությունն օրախնդիր է դարձրել որակյալ գիտական կադրերի, առաջին հերթին երիտասարդների արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում մեկնումը արտերկիր: Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ծրագրերի խիստ անբավարար ծավալները և երիտասարդ գիտնականների արտահոսքը վտանգավոր սահմանագծի են մոտեցրել ինչպես գիտական դպրոցների պահպանումն ու զարգացումը, այնպես էլ բուհերում որակյալ գիտամանկավարժական կազմի ապահովման հարցը: Այդ փաստաթուղթը գիտության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակ է հայտարարում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որին հասնելու առաջնահերթ ուղիներից մեկն էլ դիտում է գիտական ներուժի երիտասարդացմանն ու արտահոսքի մեղմացման ներուժ պարունակող երիտասարդ գիտնականների դրամաշնորհների և կրթաթոշակների հատուկ համակարգի ստեղծումը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած միջազգային ստանդարտներին հնարավորինս համապատասխանեցնելու նպատակով Հայաստանի մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացման և բարեփոխման ծրագրերին, միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն տրամադրող ինստիտուտները դեռևս քանակական, կառուցվածքային և որակական հատկանիշների (ներառյալ օտար լեզուների և համակարգչային ունակությունների ուսուցումը) առումով համապատասխան կերպով չեն արձագանքում ոչ միայն միջազգային, այլև տեղական աշխատանքային շուկայի պահանջներին: Որոշ չափով դա կապված է ֆինանսական ռեսուրսների պակասի, իրավական դաշտում առկա խնդիրների, հնացած և մաշված նյութատեխնիկական բազայի և, ի վերջո, դասախոսական անձնակազմի պակասի և որակավորման խնդիրների հետ[1]:

Հարկ է նշել նաև, որ գիտակրթական քաղաքականության ոչ ճիշտ և արդյունավետ կառավարման պատճառով այսօր նկատվում է գիտության և կրթության խիստ կենտրոնացում, ինչ ինքնստինքյան բերում է քաղաքային բնակչության թվաքանակի աճին և նպաստում ներքին միգրացիայի աճին:

Այսօր ՀՀ-ում բարձրագույն կրթական հաստատությունների մեծ մասը գտնվում է մայրաքաղաք Երևանում և բնականաբար բարձրագույն կրթություն ստանալու համար ՀՀ տարբեր համայնքներում բնակվող երիտասարդները ժամանանում են Երևան ուսում ստանալու համար: Իսկ ուսումն ավարտելուց հետո մեծ մասը մնում է Երևանում կամ տարբեր ծրագրի և առաջարկների շնորհիվ մեկնում է հանրապետությունից, դրանով իսկ նպաստելով արտաքին և ներքին միգրացիայի աճին:

Չնայած այսօր ՀՀ-ի տարբեր մարզերում կան գործող տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ և մասնաճյուղեր, սակայն դրանցում ներգրավված ուսանողների թվաքանակն անհամեմատ փոքր է և չի տալիս ցանկալի արդյունք:

Ըստ ,Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների ուսումնական միգրացիան ունի հետևյալ տեսքը /գծապատկեր 1/[2]:

[1] http://www.ktak.am/doc/Buheri_varkanishavorum_2013_Final.pdf:
[2] http://www.ilo.org/public/russian/region/eurpro/moscow/info/publ/migr_dev_study_arm.pdf:



Գծապատկեր 1

Գծապատկերից երևում է, որ Երևանին մոտ քաղաքներից ուսումնական միգրացիան բարձր տոկոս է կազմում՝ Էջմիածնից՝ 97%, Հրազդանից՝ 74.8%: Ինչ վերաբերում է այն քաղաքներին, որտեղ կան միքանի բարձրագույն ուսումնական հաստատություններ և բուհերի մասնաճյուղեր, ինչպես Գյումրին և Վանաձորը, այդ քաղաքների ուսանողների համապատասխանաբար 14.4% և 9.5% սովորում է Երևանի բուհերում: Գորիսում և Գավառում, որտեղ կան տեղի մեկական պետական բուհեր, Երևան գալիս են սովորելու ուսանողների համապատասխանաբար 11.8% և 13.3%, իսկ Դիլիջանից, Իջևանից և Եղեգնաձորից, որտեղ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղերն են, Երևանի բուհերում են սովորում ուսանողների համապատասխանաբար 22.2%, 12.5% և 14.3%:

Այս հարցումը թերևս լավագույն կերպով արտահայտում է վերը նշված մեր այն միտքը, համաձայն որի գիտակրթական քաղաքականության ոչ ճիշտ և արդյունավետ կառավարման պատճառով տեղի է ունենում գիտակրթական հաստատությունների և ուսանողների կենտրոնացում:

Իսկ ինչպես կարող է ազդել գիտակրթական քաղաքականությունը, մասնավորապես մարզերում, միգրացիոն քաղաքականության և սոցիալ-տնտեսական կյանքի վրա:

Ինչպես արդեն նշել էինք, գիտակրթական հաստատությունների կենտրոնացման պատճառով երիտասարդների մեծ մասը ժամանում է Երևան ուսում ստանալու համար դրանով իսկ նպաստելով հետևյալ գործոնների առաջացմանը.

1. Մարզային համայնքներից տեղի է ունենում երիտասարդների միգրացիա դեպի Երևան, երբեմն նաև դեպի արտասահման: Դրա պատճառով մարզային բնակչության թվաքանակը նվազում է, իսկ Երևանի բնակչությունն ավելանում, էլ ավելի մեծ տեմպեր տալով կենտրոնացման գործընթացին, որն էլ խանգարում է տարածքային զարգացմանը:

2.Մարզային կապիտալի արտահոսք դեպի Երևան: Գաղտնիք չէ, որ այսօր մարզային ուսանող-ների մեծ մասը Երևանում բնակվում են վարձակալած բնակարաններում, գումարած դրան վճարում են ուսման վարձ և օգտվում քաղաքային մի շարք ծառայություններից և առևտրի կետերից: Այսինքն ստացվում է, որ այն գումարները, որոնք կարող էին ներդրվել մարզերում, օգտագործվում են Երևանում:

3. Սոցիալական վիճակի վատթարացում: Մարզային բնակչության մեծ մասը դժվարությամբ է կարողանում հոգալ քաղաքային ծախսերը, իսկ շատ դեպքերում մեծ պարտք են անում, որպեսզի կարողնան հոգալ քաղաքային ծախսերը, դրանով իսկ դժվարացնելով սոցիալական, առանց այն էլ

դժվար իրավիճակը:

4. Ընտանիքների տեղաշարժ: Որպեսզի կարողանան գոնե ինչ որ չափով նվազեցնեն ծախսերն ընտանիքներն իրենց ուսանող երեխաների հետ տեղափոխվում են Երևան: Հակառակ դեպքում, ընտանիքը բաժանված էլ ինում երկու մասի, և ծախսը կատարվում է երկու տեղ, նման կերպ ընտանիքները հույս ունեն խուսափել այդ իրավիճակից:

5. Համապատասխան աշխատանքի բացակայություն: Ուսումն ավարտելուց հետո ուսանողները չեն կարողանում գտնեն համապատասխան աշխատանք: Աշխատանք որը գոնե կարդարացնի իրենց այդքան տարիների չարչարանքը և գոնե կփոխհատուցի ուսման ընթացքում նրանց կատարած ծախսերը, այդ իսկ պատճառով մեծ մասը մնում է Երևանում կամ մեկնում արտասահման:

Սրանք թերևս այն փոքր մասն է մեծ ցանկից, որոնք ազդում են միգրացիոն քաղաքականության և սոցիալ-տնտեսական կյանքի վրա և որոնք կարելի է լուծել գիտակրթական քաղաքականության միջոցով:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի ամենատարբեր մարզերում, հնարավոր է ստեղծել խիստ մասնագիտացված գիտակրթական հաստատություններ, որոնք օգտագործելով տվյալ մարզի առանձնահատկությունները և գիտական ներուժը կարող են մեծ քանակությամբ աշխատատեղեր ստեղծել ինչպես ՀՀ երիտասարդ գիտնականների համար, այնպես էլ ուսման համար լավ պայմաններ առաջարկել այլ երկրների հետազոտողներին, ներկայացնելով հայտ տարածաշրջանում գիտակրթական զարգացած կենտրոն դառնալու համար: Նշենք որ նման նախատիպ մենք արդեն ունենք: Օրինակ Արագածոտնի մարզում, ընդամենը մեկ աստղադիտարանն ապահովում է մի շարք մարդկանց աշխատատեղերով դարձնելով այդ տարածաշրջանը գիտական պոտենցիալով առաջատար մարզ: Նմանատիպ կենտրոններ այսօր հնարավոր է ստեղծել նաև ՀՀ-ի այլ մարզերում ևս:

Օգտագործելով մարզերի ներուժը կարելի է ստեղծել գիտակրթական հաստատություններ, որոնք իրենց տեսակի մեջ տարածաշրջանում, իսկ միգուցե նաև ողջ աշխարհում հնարավոր է լինեն յուրօրինակ և եզակի, ապահովելով մեծ քանակությամբ մասնագետների և ֆինանսական միջոցների ներհոսք դեպի ՀՀ՝ նպաստելով միգրացիայի կրճատմանը ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

Այսպիսով, գիտակրթական քաղաքականությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ միգրացիոն քաղաքականության վրա, ինչպես նաև նպաստել սոցիալ-տնտեսական կյանքի բարելավմանը:

ВЛИЯНИЕ ОСНОВАННОЙ НА ЗНАНИЯХ ЭКОНОМИКИ НА МИГРАЦИОННУЮ ПОЛИТИКУ РА

Саратикян Н., аспирант, НАН РА, ин-т экономики

Сегодня процессы миграции оказывают негативное влияние на социально-экономической развитие РА. Переход к экономике, основанной на знаниях будет способствовать экономическому развитию страны, что приведет к снижению темпов эмиграции.

THE KNOWLEDGE-BASED ECONOMY'S IMPACT ON MIGRATION POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA

Saratikyan N., PhD student, NAS of RA Institute of economics after M.Kotanyan

Today the social-economic life of the RA is highly affected by the migration process. Because of migration the population shifts from their permanent place of residence which causes the population's displacement out to the country's borders, or atbest results its centralization in the cities. In both cases, the social-economic security of the

Republic of Armenia is put into risk.

Without having enough quantity of financial resources for economical empowerment the Republic of Armenia can and should develop the scientific and educational activities and make the transition to a knowledge-based economy. The knowledge-based economy will not only ensure the country's economic growth, but also contribute to reduce the migration rates.

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, հայցորդ, ԵՊՀ

Հիմնաբառեր՝ ՀՀ տնտեսության կառուցվածք, ներդրումներ, կապիտալ, արտահանում:

ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները լրջագույն խոչընդոտներ են ստեղծում ներդրումային գործընթացի արդյունավետ կազմակերպման ճանապարհին: Արդի տնտեսական զարգացումների աճող ներգործությամբ պայմանավորված գնալով առավել արդիական է դառնում արդյունքների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտության հիմնահարցը: Ներդրումների ներգրավման հնարավորությունների և ներդրումների իրականացումից հետո առաջացող հարաբերությունների կարգավորման նպատակով ուշադրություն ենք դարձրել նախ հանրապետության տնտեսության կառուցվածքին: Վերջինս որպես տնտեսական ժառանգություն փոխանցվել է նախկին տնտեսակարգից, և հատկապես անկախացման առաջին տասնամյակում մեծամասամբ համապատասխանում էր տնտեսական զարգացման նախկին հնարավորություններին: ԽՍՀՄ նախկին բոլոր հանրապետությունների նման Հայաստանը ևս իր վրա կրելով նոր տնտեսակարգի ձևավորման բոլոր հնարավոր ռիսկերը՝ անկախացման երկու տասնամյակում մասամբ կարողացել է հաղթահարել նախկին և շուկայական տնտեսվարմանը բնորոշ կառուցվածքային անհամապատասխանության խնդիրները:

Բնականաբար, հարց է առաջանում՝ ինչպե՞ս և ո՞ր ոլորտների հաշվին է Հայաստանում ապահովվել մինչճգնաժամային երկնիշ տնտեսական աճը, արդյոք այդ ոլորտներն են կլանել ներդրումային հոսքերը, և ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործվել հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ներդրումները: Զարգացման միտումները որոշ չափով ընդհատվել են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ճնշող ազդեցության ներքո. եթե մինչճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման հիմնական ոլորտը շինարարություն էր, ապա հետճգնաժամային ժամանակահատվածում կառուցվածքային զգալի փոփոխություններ են տեղի ունեցել ՀՆԱ-ի կառուցվածքում: ՀՀ տնտեսության իրական հատվածի կարևոր ոլորտներ համարվող գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը նախաճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական աճին նպաստման տեսանկյունից այնքան էլ աչքի չեն ընկել: Ավելին, շատ հայրենական տեսաբաններ, հաշվի առնելով շինարարության՝ ոչ արտահանելի ոլորտ հանդիսանալու հանգամանքը, ՀՀ տնտեսական իրականության մինչճգնաժամային ժամանակահատվածը բնութագրում են որպես կորցրած հնարավորությունների ժամանակաշրջան[1]:

[1] Գ. Ղարիբյան, Ա. Մարկոսյան, Բ. Ավագյան, Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և հակաճգնաժամային միջոցառումները –Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ., էջ 120:

Գծապատկեր 1.

ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ տնտեսության հիմնական ոլորտներ 2005-2014թթ. ընթացքում[1]



	2005թ	2006թ	2007թ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ
Ծառայություններ	32.4	31.1	32.5	34.3	43	41.9	42.4	42.7	44	44.7
Շինարարություն	21.6	26.7	25.6	27.1	18.8	16.9	12.6	12.2	10.3	9.3
Արդյունաբերություն	18.7	17.3	15.7	13	13.6	14.9	16	17.2	17.3	17.4
Գյուղատնտեսություն	18.8	17.9	17.5	15.7	16.2	16.9	20.7	19.1	19.3	19.3

Գծապատկեր 2. Տնտեսության հիմնական ոլորտների՝ ՀՆԱ-ի աճին նպաստման չափը /տոկոսային կետով/ 2005 - 2014թթ. ընթացքում[2]



	2005թ	2006թ	2007թ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ
Արդյունաբերություն	1.40%	-0.20%	0.60%	0.40%	-1.00%	1.30%	2.30%	1.10%	0.90%	0.0%
Գյուղատնտեսություն	2.50%	-0.10%	1.70%	0.20%	0.00%	-2.20%	2.40%	1.90%	1.40%	1.5%
Շինարարություն	5.40%	8.10%	4.50%	1.80%	-11.40%	0.60%	-2.10%	0.60%	-1.40%	-0.4%
Ծառայություններ	3.70%	4.60%	4.00%	2.90%	0.30%	1.90%	2.60%	2.80%	2.60%	2.3%

Խնդիրը այստեղ այն է, թե արձանագրված ,տնտեսական աճըե երկրում արդյոք ստեղծել է կապիտալ ներգրավելու հնարավորություններ: Իհարկե, բոլոր ոլորտներն էլ համակարգաստեղծ ազդեցություն ունեն երկրի տնտեսությունում, սակայն առանձնահատուկ ուշադրության են արժանի տնտեսության այն ոլորտները, որոնք տնտեսությանը զարգացման ազդակներ կհաղորդեն: Տվյալ պարագայում էլ առանձնակի կարևորություն է ձեռք բերում արտաքին առևտուրը: Որպես փոքր սպառման շուկա և սահմանափակ ռեսուրսային պոտենցիալ ունեցող երկիր, հանրապետությունը կարող է ՀՆԱ աճ ապահովել գերազանցապես արտաքին շուկայի հաշվին: Այսինքն, ՀՆԱ կառուցվածքում կառուցվածքային փոփոխություններ ապահովել, որ վերջինս առավել արտահանման կողմնորոշում ունենա:

Մասնավորապես, 2014թ. ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճ է արձանագրվել, ինչի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասորդը 2013թ. ՀՆԱ-ի 26,5% է կազմել[3]՝ 2013թ. համեմատ նվազելով 2,4 տոկոսային կետով՝ 28.9%: Ի դեպ, 2013թ. դեկտեմբերի համեմատությամբ արտահանման ծավալների ինդեքսը 2014թ. դեկտեմբերի 103,1% է կազմել: Դիտարկելով տնտեսության արտահանման հակվածությունը բնութագրող արտահանում / ՀՆԱ հարաբերական գործակիցը որպես

[1] Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները հաշվարկված են առանց զուտ անուղղակի հարկերը

[2] ՀՀ ԱՎԾ հրապարակումները 2006-2014թթ. – www.armstat.am.

[3] ՀՀ սոցիալ- տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին, արտաքին առևտուր:

տնտեսության՝ կապիտալ ներգրավելու հնարավորությունը բնութագրող ցուցանիշ՝ կարելի է ենթադրել, որ ՀՀ տնտեսությունը բավական շահեկան դիրքերում է. 2014թ. տվյալ ցուցանիշը 14% է կազմել, 2013թ.՝ 14,2%, իսկ 2000-2011թթ. տվյալ ցուցանիշի միջինը տատանվել է 14%-ի շրջակայքում, որը համաշխարհային մակարդակով համարվում է գնահատելի ցուցանիշ:

Արտահանման ռիսկերից հիմնականը այն է, որ այն խիստ կենտրոնացված է ինչպես ապրանքային, այնպես էլ տարածքային առումով: Մասնավորապես, հանրապետությունում արտահանումը շարունակում է մնալ խիստ ռեսուրսաինտենսիվ և մի քանի ոլորտներում կենտրոնաց-ված. 2000-2014թթ. ՀՀ-ում արտահանումը կենտրոնացված է 4 ապրանքախմբերի գծով, որոնց 2014թ. տվյալներով բաժին էր ընկնում արտահանման մոտավորապես 83,2%-ը[5]:

Ստացվում է, որ երկրին դեռևս չի հաջողվում ապահովել առավել զարգացած երկրներին բնորոշ արտահանման կառուցվածքը. Հայաստանի արտահանման զամբյուղի որակը ցածր է վերջինիս թույլ դիվերսիֆիկացիայի պատճառով: Կառուցվածքային վերոնշյալ խնդիրները զգալիորեն թուլացնում են արտահանման դերը Հայաստանի տնտեսական աճը խթանելու գործում: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները վկայում են, որ ՀՆԱ-ի աճին նպաստման տեսանկյունից արտահանումը զգալորեն մեծ նշանակություն ունի. արտահանման միավոր աճը հանգեցնում է ՀՆԱ-ի 1,5 անգամ ավելի աճի: Այսինքն, կապիտալի կուտակումն արտահանվող տնտեսության ոլորտներում տնտեսական աճի ապահովման հիմնական երաշխիքներից է:

Վերոնշյալով հանդերձ հարց է առաջանում, թե արդյոք տնտեսության և որպես վերջինիս հետևանք նաև արտահանման ձևավորված կառուցվածքի պատճառը ներդրումների թիրախավորումն է հանդիսանում: Տնտեսական զարգացման ապահովումը որպես ճիշտ մշակված և իրականացվող ներդրումային քաղաքականության արդյունք, ի թիվս այլ գործոնների, ուղղակիորեն կախված է ներդրումների կառուցվածքային ճիշտ համամասնությունների ձևավորումից, ինչն էլ, պայմանավորված է տնտեսության կառուցվածքով և արտահանման գերակայություններով:

Մասնավորապես, արդյունաբերության ոլորտն ըստ հետճգնաժամային զարգացման ցուցանիշների կլանում է ներդրումների մոտ կեսը, որից ավելի քան $^3/_4$ -ը ուղղվում է հումքի արդյունահանման և վերամշակման ոլորտ, այսինքն՝ արտադրություն որպես այդպիսին չի կազմակերպվում, սակայն ապահովում է արտահանման մոտ 95%, որից $^2/_3$ բաժին է ընկնում մետաղական հումքին: Եվ այսքանով հանդերձ ապահովում է ՀՆԱ-ի $^1/_5$ -ից էլ ավելի փոքր մասը և նպաստում ՀՆԱ-ի աճի մոտ $^1/_6$ –ը: Սակայն, արդյոք առկա պատկերը արդարացված է ռեսուրսային սահմանափակ պոտենցիալ ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է: Ստացվում է, արդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումների ընդամենը $^1/_6$ - ն է ուղղվում մշակման արդյունաբերություն, որն ի դեպ, ապահովում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի մոտ $^2/_3$ - ը, իսկ արտահանման մոտ $^1/_3$ - ը: Այսինքն, մշակող արդյունաբերությունը ներդրումների օգտագործման տեսանկյունից կարող է ապահովել բավարար արդյունավետություն, իսկ արտահանման ընդլայնման տեսանկյունից՝ բավական մեծ պոտենցիալ: Չնայած որ մշակման արդյունաբերության ոլորտում ներքին ներդրողների դերակատարումը ևս պետք չէ անտեսել:

Ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ոլորտների վերլուծելիս, բնականաբար, կարևորվում է նաև հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ոլորտը՝ գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են բնակչութ-

[5] ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005-2013թթ. հրապարակումներ:

յան ընդհանուր թվի 45,6%, ինչը վկայում է, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի[1]: Ինչպես փաստում է վիճակագրությունը, ոլորտում ներդրումները չափազանց սահմանափակ են և նույնիսկ անհանգստացնող: Տարիներ շարունակ ոլորտը անտեսված է եղել ներդրողների կողմից, միայն սկսած 2006թ.-ից սկսեցին մասամբ ուշադրություն դարձնել նաև այս ոլորտին: Ոլորտում ներդրումների կտրուկ աճ արձանագրվել է 2008թ. 23.8մլն դոլար/ներդրումների մոտ 1.9%-ը/՝ պայմանավորված կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով, սակայն 2009-2011թթ. ընթացքում ներդրումներն աստիճանաբար կրճատվել են, իսկ 2012թ.՝ արձանագրված ցուցանիշը անգերազանցելի է եղել ՀՀ տնտեսական իրականությունում՝ 36.4մլն դոլար՝ կլանելով ներդրումների շուրջ 4.8%-ը, իսկ 2013-2014թթ. ցուցանիշը կրկին զարգացման նախկին վարքագիծն է կրկնել՝ կլանելով ներդրումների ընդամենը 1 – 2 % - ը: Եվ դա այն դեպքում, երբ գյուղատնտեսության ոլորտը արտադրում է ՀՆԱ-ի մոտ $^1/_5$ -ը և ապահովում ՀՆԱ-ի աճի $^1/_4$-ը՝ աշխատելով գերցածր արտադրողականության պայմաններում: Իսկ արտահանման մեջ էլ ունի մոտ 5.7% մասնաբաժին: Հաշվի առնելով տնտեսությունում առկա պոտենցիալն ու արձանագրված զարգացումները գյուղատնտեսության ոլորտի ապագան տեսնում ենք որպես մրցունակ և արտահանման ներուժ ունեցող:

Այդուհանդերձ հարց է առաջանում, թե արդյոք տնտեսության և որպես վերջինիս հետևանք նաև արտահանման ձևավորված կառուցվածքի պատճառը ներդրումների թիրախավորումն է հանդիսանում: Վերլուծության հիմնական արդյունքները հանգում են հետևյալին. տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումների առյուծի բաժինը պատկանում է արդյունաբերության և ծառայությունների ոլորտին, և դա այն պարագայում, որ ՀՆԱ-ի հավելաճին առավելապես նպաստում են գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտը: Այսինքն, այս ոլորտներում է ամենամեծ ավելացված արժեք ստեղծվում: Չնայած որ արդյունաբերության ոլորտում զգալի ներդրումներ են կատարվում, վերջինիս կողմից ստեղծված ավելացված արժեքը զգալի զիջում է գյուղատնտեսության ոլորտին: Ինչն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ արդյունաբերության ոլորտում կատարված ներդրումները եղել են ոչ շահութաբեր, չեն ստեղծել բավարար ավելացված արժեք և նպաստել երկրի մրցունակության բարձրացմանը: Պատճառներն հիարկե մի քանիսն են. նախ այն, որ ներդրումների զգալի մասը արդյունաբերության ոլորտում կլանվում է հանքարդյունաբերության և բնական մենաշնորհների ենթաոլորտները: Ինչևէ, ներդրումները հոսել են տնտեսության այն ոլորտներ, որոնք հանրապետության տնտեսությունում գնահատվել են տնտեսական ներուժ պարունակող և առավել հեռանկարային: Սակայն վերոնշյալով հանդերձ՝ տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտում կապիտալի ներգրավման հիմնահարցը շարունակում է արդիական մնալ ՀՀ տնտեսական իրականությունում: Այսպիսով, ՀՀ տնտեսությունում 2005-2014թթ. ընթացքում ներգրավված կապիտալը նպատակային չի օգտագործվել, առավելապես ունեցել է իրավիճակային բնույթ, ինչն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ երկրում ներդրումների կողմնորոշում է անհրաժեշտ:

Այսօր խնդիրը հանրապետությունում ոչ միայն նոր ներդրումների ներգրավումն է, այլ նաև թե վերջիններս տնտեսության որ ճյուղերում են կենտրոնացվում և ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործվում՝ տնտեսական պոտենցիալի վերարտադրման տեսանկյունից: Արտահանման աճի վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելն առավել նպատակահարմար է ՀՀ տնտեսության զարգացման նոր հեռանկարներ ապահովելու տեսնակյունից, ինչն էլ իր հերթին պահանջում է ճշգրտել

[1] ՀՀ կառավարության գործունեության արդյունքները / իրական հատված/ գյուղատնտեսություն http://report.gov.am/?id=4:

ոչ միայն ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը, այլ նաև ներդրումային հոսքերի թիրախները ըստ արտահանման մասնագիտացման ոլորտների:

Ի դեպ, ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս, ինչին հանգել ենք 2004-2013թթ. եռամյակային տվյալների հիման վրա իրականացրած ռեգրեսիոն վերլուծության արդյունքում. կապիտալի կուտակման աճի ազդեցությունն արտահանման աճի վրա բավական փոքր է, ինչն էլ, պայմանավորված է ներդրումների ոչ այնքան արդյունավետ կառուցվածքով: Խնդիրը թերևս հանգում է տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններին, որոնք էլ իրենց հերթին կանխորոշում են արտահանման ու ներդրումների կառուցվածքը: Իսկ ինչ վերաբերում է արտահանման աճի ազդեցությանը կապիտալի կուտակման աճին, ապա ռեգրեսիոն կախվածությունը վիճակագրորեն նշանակալի է, իսկ ազդեցության գործակիցը բավական մեծ: Այսինքն, արտահանման աճի միավոր փոփոխությունը հանգեցնում է համախառն կուտակման մոտ չորս անգամ ավելի մեծ փոփոխության: Վիճակագրորեն նշանակալի է նաև արտահանման աճի ազդեցությունը ՀՆԱ աճի վրա. արտահանման միավոր աճը հանգեցնում է ՀՆԱ-ի 1.5 անգամ ավելի մեծ աճի: Այսպիսով, ինչպես վկայում են ռեգրեսիոն վերլուծության արդյունքներն ու գործակցային ցուցանիշները, համախառն կուտակման աճը կարող է ՀՆԱ-ի աճի պատճառ դառնալ, եթե ներդրումներ թիրախավորվեն դեպի տնտեսության այն ոլորտներ, որոնք արտահանելի են:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НАКОПЛЕНИЕ КАПИТАЛА И СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ ЭКОНОМИКИ АРМЕНИИ

Карапетян Л., соискатель, ЕГУ

В статье рассмотрены структурные особенности экономики Армении и наиболее эффективные подходы распределения инвестиции по отраслям, с учетом факторов экономического роста страны.

SOME QUESTIONS OF CAPITAL ACCUMULATION AND THE STRUCTURAL FEATURES OF THE ECONOMY IN ARMENIA

Karapetyan L., PhD student, YSU

The article deals with the structural features of the economy of Armenia and the most effective approaches distribution investments by industry, taking into account the factors of economic growth of the country.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍԱՉԱՓԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ԲԱԳՐԱՏ ԳԵՂԱՄՅԱՆ ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ
ԱՆՆԱ ՍԱՀՐԱԴՅԱՆ, ասպիրանտ, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

Հիմնաբառեր. էլեկտրոնային, վճարումներ, թրենդ, կորելյացիայի գործակից, ինքնակորելյացիա, ժամանակային, դինամիկ, էկոնոմետրիկ, տնտեսաչափական, ամենափոքր քառակուսիներ, լագ, շարքեր,մակարդակ, պարզ հարթեցում, ռեգրեսիվ:

Արդի էլեկտրոնային բանկային համակարգի արդյունավետ գործունեություն իրականացնելու հարցում շատ մեծ է էլեկտրոնային վճարումների համակարգի դերը: ՀՀ-ում գոյություն ունեն էլեկտրոնային եղանակով վճարումների իրականացման տարբեր համակարգեր: Այդ վճարումները տարվա տարբեր ամիսներին ունենում են ծավալային և քանակական տարբեր արժեքներ: Օգտվելով ԿԲ կողմից մեզ հասանելի 2007-2014թթ.-ին էլեկտրոնային եղանակով իրականացված վճարումների ծավալների վիճակագրական տվյալներից [1], կատարենք տնտեսաչափական (էկոնոմետրիկ) [2,3] հետազոտում, որով կպարզաբանվեն վճարումների սեզոնայնությունը, աճման միտումները: Նշված տվյալները բերված են Աղյուսակ 1-ում: Կազմվում է ժամանակային շարք, որտեղ 2007թ.-ի առաջին եռամսյակը համարակալված է 1 թվով, 2007թ.-ի երկրորդ եռամսյակը՝ 2 թվով, այդպես շարունակ մինչև 2014թ.-ի երրորդ եռամսյակ՝ 31 համարը:

Աղյուսակ 1.

Եռամսյակ t	1	2	3	4	5	6	7
Ծավալը Y_t (դրամ)	1419863	1219958	1318209	1779548	3447505	3909445	4447866
8	9	10	11	12	13	14	15
4935715	989806	1260960	2121563	1617979	1262858	1755508	2240052
16	17	18	19	20	21	22	23
2265156	1782526	1772684	1741856	1912121	2042452	1942582	1849931
24	25	26	27	28	29	30	31
2045787	1732258	2051756	2087728	2559790	2505795	2845660	2434794

Ժամանակային (դինամիկ) շարքերի եղանակով պարզաբանենք էլեկտրոնային վճարումների Y ծավալների. Y=f(T,S,E), (1) կախվածության (գումարային կամ արտադրյալային) առնչության մեջ T թրենդի (միտման) առկայությունը, S սեզոնայնությունը:

Էլեկտրոնային վճարումների ծավալների աղյուսակ 1-ի վիճակագրական տվյալները ներկայացված են Նկար 1-ում պատկերված ուրվագծով: Ուրվագծից երևում է, որ հինգերորդից մինչև ութերորդ եռամսյակում կամ՝ 2008թ.-ի ժամանակահատվածում առկա է ծավալների արժեքների կտրուկ փոփոխության դեպք (այս երևույթը գրականության մեջ հայտնի է. ինտերվենցիաե անվանումով):

Եռամսյակներն իրենցից ներկայացնում են առանձին դիտումներ, որոնց ժամանակ ստացած արժեքները կոչվում են մակարդակներ, այնպես որ՝ դիտարկվող շարքում մակարդակների թիվը հավասար է 31-ի, և (1) օրենքն ամեն մի մակարդակում (t=1,2,…,31) կունենա հետևյալ տեսքը. $y_t= T_t+ S_t+ E_t$, (1Բ):

Խնդիրը հետազոտելիս նպատակահարմար է նկար 1-ում բերված գծապատկերի փոխարեն դիտարկել դրա հարթեցված պատկերը: Դրանով հնարավոր է լինում վերացնել առկա անհարկի սրությունները, շարքի անդամների ոչ էական ցածր կամ բարձր արժեքները: Կատարենք պարզ հարթեցում, որի համար կիրառենք սահող միջինի եղանակը. յուրաքանչյուր՝ (սկսած երկրորդից մինչև նախավերջին) մակարդակի արժեքը կփոխարինենք այդ մակարդակի և դրան հարող երկու մակարդակների միջին արժեքով, իսկ որպես առաջին և վերջին մակարդակների արժեքներ կվերցնենք համապատասխանաբար՝ $(5y_1+2y_2-y_3)/6$ և $(5y_{31}+2y_{30}-y_{29})/6$ թվերը: Պարզ հարթեցման այս եղանակով մակարդակների արժեքների ողորկ ուրվագիծը պատկերված է նկար 2-ում:



Նկար 1:



Նկար 2:

Նկար 1-ի տեսողական վերլուծությամբ կարելի է եզրահանգել, որ ժամանակային շարքում սեզոնային պարբերություններ որոշակի աղավաղումներով առկա են, ընդ որում՝ դրանք շատ թույլ են արտահայտված: Դրա փոխարեն թրենդային գործոնն այստեղ արտահայտիչ է և ունի գծային օրենք:

Ժամանակային շարքի բաղադրիչների որոշման համար կառուցենք համապատասխան ինքնակորելյացիայի ֆունկցիան: Ինքնակորելյացիան միևնույն դինամիկ շարքի երկու մակարդակների հաջորդականությունների ($y_1,y_2,\ldots,y_{n-L}$ և $y_{1+L},y_{2+L},\ldots,y_n$) միջև եղած կորելյացիոն կապն է, որոնք մեկը մյուսի նկատմամբ շեղված են L միավոր ժամանակահատվածով: L-ը բնական թիվ է, այն կոչվում է լագ (անգլերեն՝ lag՝ ուշացում, հետ մնալ), հետազոտման ընթացքում ընդունում է արժեքներ՝սկսած 1-ից: Մեր խնդրում դիտարկվել են L=1, L=2, …, L=23 դեպքերը, որոնցից Աղյուսակ 2 –ում բերված են մինչև L=4 դեպքերը: Այդ դեպքերից յուրաքանչյուրի համար հաշվենք ինքնակորելյացիան բնութագրող մեծությունը՝ կորելյացիայի գործակիցը.

$$r_{t,t-L} = \frac{\overline{Y_t \cdot Y_{t-L}} - \overline{Y}_t \cdot \overline{Y}_{t-L}}{\sigma_t \cdot \sigma_{t-L}}, \qquad (2)$$

որտեղ

$$\sigma_t = \sqrt{\frac{\sum (Y_t - \overline{Y}_t)^2}{n}} \qquad \sigma_{t-L} = \sqrt{\frac{\sum (Y_{t-L} - \overline{Y}_{t-L})^2}{n}} \qquad (3)$$

Աղյուսակ 2:

t	y_t	y_{t-1}	y_t	y_{t-2}	y_t	y_{t-3}	y_t	y_{t-4}
1	-	-	-	-	-	-	-	-
2	1,219	1,419	-	-	-	-	-	-
3	1,318	1,219	1,318	1,419	-	-	-	-
4	1,779	1,318	1,779	1,219	1,779	1,419	-	-
5	3,447	1,779	3,447	1,318	3,447	1,219	3,447	1,419
6	3,909	3,447	3,909	1,779	3,909	1,318,	3,909	1,219
7	4,447	3,909	4,447	3,447	4,447	1,779	4,447	1,318
8	4,935	4,447	4,935	3,909	4,935	3,447	4,935	1,779
9	989	4,935	989	4,447	989	3,909	989	3,447
10	1,260	989	1,260	4,935	1,260	4,447	1,260	3,909
.	.	.	.	.	.	.	.	.
.	.	.	.	.	.	.	.	.
.	.	.	.	.	.	.	.	.
29	2,505	2,559	2,505	2,087	2,505	2,051	2,505	1,732
30	2,845	2,505	2,845	2,559	2,845	2,087	2,845	2,051
31	2,434	2,845	2,434	2,505	2,434	2,559	2,434	2,087
	$r_{t,t-1}$=0.5555		$r_{t,t-2}$=0.1412		$r_{t,t-3}$=-0.0894		$r_{t,t-4}$=-0.3517	

Աղյուսակ 2–ում բերված մակարդակների առաջին կարգի (y_t և y_{t-1} մակարդակների միջև), երկրորդ կարգի (y_t և y_{t-2} մակարդակների միջև), …,մինչև L=21 դեպքերում ինքնակորելյացիայի գործակիցների համար կարելի է կազմել կորելագրամը, որը ներկայացվում է հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 3

Լագ	Մակարդակների ինքնակորելացման գործակցի արժեքը	Կորելագրամ	
1	0.5555		******
2	0.1412		*
3	-0.0894	*	
4	-0.3517	***	
5	-0.408	****	
6	-0.3185	***	
7	-0.1507	**	
8	0.1382		*
9	0.1256		*
10	0.0527		*
11	-0.1041	*	
12	-0.1938	**	

13	-0.1829	**	
14	-0.1652	**	
15	-0.1419	*	
16	-0.0894	*	
17	-0.3355	***	
18	-0.3527	***	
19	-0.3285	***	
20	-0.0651	*	
21	0.2277		**

Հայտնի է, որ եթե ինքնակորելացման գործակցի ամենամեծ արժեքն ստացվել է առաջին կարգի համար, ապա ժամանակային շարքը հիմնականում ունենում է թրենդային բնույթ: Մեր խնդրին համապատասխանող ժամանակային շարքի համար գրաֆիկների միջոցով արված եզրակացություններն այս եղանակով ևս հաստատվեցին:

Գտնենք այդ թրենդը բնութագրող գծային ռեգրեսիվ առնչությունը.

$$Y_t = a + b \cdot t \qquad (4)$$

Այս գծային օրենքը գտնելու համար օգտվենք ամենափոքր քառակուսիների եղանակից որտեղից էլ աղյուսակ 1-ի համաձայն ստացվում են.

$$a = 2212271,\ b = -2582 \ (5)$$

Այսպիսով՝ $Y_t = 2212271 - 2582 \cdot t$ (6)

Նկար 1-ի գրաֆիկում պատկերված է (6) բանաձևով ստացվող թրենդի ուղիղ գիծը, որն ունի թույլ նվազման միտում և այն համարյա զուգահեռ է ժամանակի առանցքին:

Այլ իրավիճակ կստեղծվի, եթե «ինտերվենցիայի» մասը (2008թ.-ի չորս եռամսյակները) չդիտարկվի: Դա նշանակում է, որ հետազոտությունները պետք է սկսվեն 2009թ.-ից: Այդ դեպքում էլեկտրոնային վճարումների համակարգի համախառն ծավալներն ըստ եռամսյակների կներկայացվեն Աղյուսակ 4-ի միջոցով՝ սկսված 9-րդ եռամսյակից և համարակալումն՝ սկսված 1-ից .

Աղյուսակ 4

1	2	3	4	5	6	7	8	9
989806	1260960	2121563	1617979	1262858	1755508	2240052	2265156	1782526
10	11	12	13	14	15	16	17	18
1772684	1741856	1912121	2042452	1942582	1849931	2045787	1732258	2051756
19	20	21	22	23				
2087728	2559790	2505795	2845660	2434794				

Նկար 3-ում բերված է աղյուսակ 4-ին համապատասխանող հարթեցված շարքի գրաֆիկը:



Նկար 3:

Այս դեպքում հաշվելով ինքնակորելացման գործակիցները L=1,2,…,12 լագի արժեքների դեպքում կստանանք Աղյուսակ 5-ում բերված հիստոգրամը:

Աղյուսակ 5:

Լագ	Մակարդակների ինքնակորելացման գործակցի արժեքը	Կորելագրամ	
1	0.6261		******
2	0.256		**
3	0.3263		***
4	0.4952		*****
5	0.268		***
6	0.068		*
7	0.12		*
8	0.303		***
9	0.3312		***
10	0.3113		***
11	0.1563		**
12	0.3608		****

«Ինտերվենցիայի» բացակայությունը հանգեցրեց նրան, որ՝ ի տարբերություն նախորդ հիստոգրամի, ինքնակորելացման բացասական գործակիցներ չկան: Շարքի ժամանակային զարգացման բնույթն էական տարբերություն չունի՝դարձյալ L=1 լագի դեպքում ինքնակորելացման գործակիցը մոտ է մեկին, այնպես որ թրենդի (նկար 3-ից երևում է, որ գծային տեսքի) առկայությունը հաստատվում է, իսկ սեզոնայնությունը դարձյալ վառ արտահայտում չունի: Թրենդի գծային օրենքի գործակիցները որոշվում են ամենափոքր քառակուսիների եղանակով. $a = 1383007$, $b = 47146$ (7):

Հետևաբար՝ $Y_t = 1383007 + 47146 \cdot t$ (8) հավասարմամբ տրվող թրենդը պատկերված է նկար 3-ում ներկայացված գրաֆիկի վրա: Այստեղ «ինտերվենցիայի» խաբուսիկ ազդեցությունը չկա և ըստ թրենդի գրաֆիկի կարելի է արձանագրել էլեկտրոնային եղանակով իրականացված վճարումների ծավալների կայուն և զգալի աճ:

Այսպիսով, թե՛ «ինտերվեցիայի» առկայության դեպքում և թե՛ առանց դրա էլեկտրոնային եղանակով իրականացված վճարումների ծավալները ժամանակի ընթացքում փոխվում են գծային օրենքով ներկայացված կարգով: Պատահական բնույթ ունեցող «ինտերվենցիայի» ազդեցությունն զգալի

է. Էլեկտրոնային եղանակով իրականացված վճարումների ծավալների աճը շատ փոքր է, իսկ «ինտերվենցիայից» հետո ժամանակահատվածի համար արդեն արձանագրվում է էլեկտրոնային եղանակով իրականացված վճարումների ծավալների զգալի աճ՝ գծային թրենդի միջոցով:

Գրականություն

[1]. https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx

2.Գ. Վարդանյան Էկոնոմետրիկայի հիմունքները, Ե., 2003թ.:

[3.] Магнус Я. Р., Катышев П. К., Пересецкий А. А. Эконометрика, Москва 2004.

АНАЛИЗ ПРИМЕНИЯ ЭЛЕКТРОННОГО МЕТОДА ПЛАТЕЖЕЙ И ЕГО ЭКОНОМЕТРИЧЕСКАЯ ОЦЕНКА

Гегамян Б., к.физ-мат.н., доцент, ЕГУ

Сахрадян А., аспирант, АГЭУ, Ехегнадзорский филиал

В статье проводится эконометрическое исследование объемов электронных платежей, даются некоторые оценки этого. Составляются временные ряды, соответствующие статистическим данным, которые предоставлены Центральным банком РА. Построены графики этих рядов, составлены автокорреляционные таблицы для разных значений лагов и вычислены коэффициенты корреляций. Рассмотрены случаи наличия <интервенции> или ее отсутствия. Применяя метод наименьших квадратов, найдены тренды временных рядов в виде линейных функций. Показано наличие слабовыраженных сезонных колебаний. Выявлена роль воздействия “интервенции”.

E-PAYMENTS ANALISIS, ECONOMETRIC ESTIMATES

Geghamyan B., PhD, Associate Professor, YSU

Sahradyan A. ASUE Yeghegnadzor Branch

The article focuses on econometric study and assessment of e-payments. On the basis of statistical data provided by the Central Bank of RA e-payments time series have been developed. The graphs of these series have been formed, autocorrelation tables for different meanings of lags have been drawn and the quotient of correlation have been calculated. Cases of presence or absence of “intervention” have been observed. By the application of the method of least squares the trends of time series have been found, which have a linear appearance. Weak seasonality is observed and the effect of intervention is revealed.

ԲԱԺԻՆ 4
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԴԻՐԱՅԻՆ (ՍԻՆԹԵՏԻԿ) ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐԱԳՄԱՏԻԿ ԲԱՂԱԴՐԻՉ (ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, աշխ.գիտ.դոկտ. պրոֆ., Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, ՀՊՄՀ

Աշխարհագրական գիտության համակարգի հիմնարար ուղղությունների զարգացման հետ զուգընթաց, անընդհատ կարիք է զգացվել հետազոտություններից ստացված գիտական արդյունքները ամրագրել անհրաժեշտ և համապատասխան գրաֆիկական եղանակներով, այսինքն դրանք պատկերել այս կամ այն թեմատիկ քարտեզի վրա: Գրաֆիկական այդ նյութերը, այնուհետև, հնարավորություն են տվել վերլուծել ու գնահատել քարտեզագրված օբյեկտների և երևույթների զարգացման տարբեր աստիճանները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև կանխատեսել դրանց զարգացման միտումները:

Սակայն, հայտնի է նաև, որ աշխարհագրական գիտության զարգացման տարբեր աստիճանները, դրանց տեխնիկական հագեցվածության զինանոցը միշտ էլ պայմանավորված է եղել տվյալ պետության, տվյալ հասարակարգի, տվյալ ժամանակաշրջանի արտադրողական ուժերի զարգացման մակարդակներով: Այս իմաստով քարտեզները, ըստ էության, արտահայտել են տվյալ հասարակարգում գիտության զարգացման համապատասխան աստիճանները, ինչն իր հերթին պայմանավորվել է նաև տվյալ հասարակարգում բնակչության կողմից քարտեզների օգտագործման պահանջները:

Ընդհանուր քարտեզագրական և նրա առանձին ճյուղերի զարգացման գիտական ու նոր որակական թռիչքները, որպես կանոն, համընկել են ձևավորվող հասարակական – քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև աշխարհագրական խոշոր իրադարձությունների հետ: Այդպիսին են եղել, օրինակ լայնամասշտաբ պատերազմական գործողությունները, Աշխարհագրական Մեծ հայտնագործությունները, քարտեզագրական ստեղծագործությունների նկատմամբ պահանջարկի աննախադեպ մեծացման գործընթացները և այլն:

Ակնհայտ է, որ դրանով է պայմանավորված եղել նաև ընդհանուր և հատուկ (մասնագիտական) քարտեզագիտության հիմնարար ուղղությունների զարգացման անընդհատությունը: Մյուս կողմից, հասարակության աճող պահանջների բավարարման համար քարտեզագրական նվաճումների ներդրումները պետք է պայմանավորեն նաև աշխարհագրական ընդհանուր և ճյուղային հետազոտությունների իրացման համապատասխան անհրաժեշտությունը:

Անհրաժեշտ է եղել, հատկապես բնական ռեսուրսների դաշտային հետազոտությունների արդյունքները գրաֆիկական եղանակներով ամրացումը, այսինքն անալիտիկ քարտեզագրումը: Դրանք այնուհետև օգտագործվել են յուրաքանչյուր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մշակման և իրականացման համար:

Տարածաշրջանների տնտեսական մասնագիտացված ճյուղերի զարգացման հետ կապված առաջ է եկել նաև դրանց ընդհանուր և ճյուղային կառուցվածքների փաստագրվամ անհրաժեշտությունը: Դրանով իսկ սկիզբ է դրվել ինչպես ճյուղային (թեմատիկ), այնպես էլ համադիրային և (ատլասային) ավելի ծավալուն և հիմնարար քարտեզագրական աշխատանքների իրականացմանը:

Ակնհայտ է, հասարակական – տնտեսական, քաղաքական փոփոխությունների ավելի ուշ փուլերում թեմատիկ քարտեզագիտության ընդհանուր զարգացման վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև քարտեզագրական ստեղծագործությունների նկատմամբ պետությունների հոգածության աննախադեպ աճը: Մեր օրերում գիտական, տնտեսական, ռազմական, ճանաչողական և այլ նպատակների համար կազմված բազմաբովանդակ քարտեզագրական նյութերի ստեղծման աշխատանքներն արդեն իսկ դառնում են յուրաքանչյուր պետության քաղաքականության կարևոր բաղադրիչներ, գիտական տեղեկատվական կարևոր միջոցներ: Այդ ամենն ըստ ամենայնի նպաստել է ճյուղային քարտեզագրության գիտական ընդհանուր զարգացման համար, անհրաժեշտ պայմաններ ստեղծման, փաստագրական նյութերի հավաքագրման, կարգաբանման և պահպանության համար:

Յուրաքանչյուր տնտեսական միավորի զարգացման առաջընթացն ապահովելու համար տարբեր ժամանակաշրջաններում անհրաժեշտ է նաև իրականացնել աշխարհագրական բնական համալիրների խոշորամասշտաբ հետազոտություններ, ուսումնասիրել և փաստագրել յուրաքանչյուր տարածաշրջանի ընդերքի հարստությունները, գնահատել դրանց պաշարները, օգտագործման տեխնիկա-տնտեսական հնարավորությունները և այլն: Անշուշտ, այդ ամենն իրականացման համար անհրաժեշտ է մշակել նաև քարտեզագրական և քարտեզաչափական համապատասխան մեթոդներ, սկզբունքներ և դրանց իրականացման համար կոնկրետ եղանակներ և միջոցներ:

Քարտեզագրական հրապարակումների մասնագիտական վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ չնայած ներկայումս գործնական քարտեզագրության զգալի առաջընթացին, այնուհանդերձ, քարտեզագիտական տեսական ու մեթոդաբանական բազմաթիվ հարցեր դեռևս մշակված չեն գիտական անհրաժեշտ մակարդակներով: Խնդիրը վերաբերվում է հատկապես քարտեզագիտական այնպիսի առանցքային հարցերին, ինչպիսին են համադիրային (սինթետիկ) քարտեզների քարտեզագրական անհրաժեշտ հիմքերի ստեղծման, դրանց ընտրության, մասնագիտական բովանդակության տարրերի մշակման, բացատրագրերի կառուցման և գրաֆիկական արտահայտություններին: Այդ վիճակում են նաև քարտեզների բովանդակության .ցենզայինե չափանիշների մշակման բազմաթերթ ու բազմագույն խիստ ծանրաբեռնված քարտեզները ֆոնային ձևավորումների և այլ հիմնարար հարցերը: Բոլոր այդ խնդիրները, ի վերջո, հանգեցնում են քարտեզագիտության և տեխնիկական գիտական այլ ճյուղերի հետ ակտիվ սերտաճմանը, բնագիտական ու հասարակական գիտությունների համակարգում քարտեզագիտության սահմանային դիրքի ճշգրտմանը:

Հատուկ նպատակների համար կազմված համադիրային քարտեզները հնարավորություն են տալիս զարգացնել ոչ միայն աշխարհագրական ընդհանուր մտածողությունը, այլ նաև պարզաբանել այդ գիտելիքները, դրանով իսկ ի հատ բերել ինչպես երևույթների տարածական տեղաբախշման, այնպես էլ գործընթացների պատճառահետևանքային կապերի բացահայտման

կարողությունները: Այս կտրվածքով պետք է հաշվի առնել նաև այն, որ քարտեզը համարվում է բյեկտիվ իրականության ճանաչողության առանձնահատուկ չափանիշ:

Հատուկ քարտեզագրության նշանակությունը կարևորվում է հատկապես խոշորամասշտաբ և կարևոր նշանակություն ունեցող տեխնիկա-տնտեսական նախագծերի մշակման և իրականացման համար:

Հայաստանի հանրապետության առանձին տարածաշրջանի բնական պայմանների ու ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և բնապահպանական նպատակների համար համադիրային քարտեզագրական աշխատանքները մենք սկսել ենք դեռևս սկսած 1967թ: Սկզբում դրանք իրականացվել են Սևանա լճի ավազանում, այնուհետև Տավուշում և Լոռիում:

Սևանա լճի ավազանում ստացիոնար հետազոտությունների առաջին փուլում գեոդեզիական - տեղաչափագրական և գեոմորֆոլոգիական բնական դիտարկումները կրել են անալիտիկ քարտեզագրման բնույթ: Այդ փուլում կատարվել են ավազանի նաև սոցիալ-տնտեսական բաղադրիչների բաղադրամասային բնական հետազոտություններ, անշուշտ՝ հիմնական շեշտը դնելով լճի ափամերձ հարթությունների և ջրից ազատված տարածքների մանրամասն դիտարկումների վրա:

Երկրորդ փուլում հավաքված այդ փաստագրական նյութին տրվել է գնահատման ուղղվածություն և ստեղծել Սևանի ազգային պարկի ստեղծման, զբոսաշրջության կազմակերպման համար հուսալի տեղեկատվական բազա:

Հետազոտությունների հաջորդ փուլում հիմք ընդունելով հավաստի այդ փաստագրական նյութերը, կազմել ենք Սևանի ավազանի ռելիեֆի դինամիկայի 1:100000 մասշտաբի ինժեներաաշխարհագրական համադիրային քարտեզը:

Տեխնիկական պատճառներով այս և մնացած վկայակոչված քարտեզները մենք այստեղ չեն կարող ներկայացնել և սահմանափակվել ենք միայն դրանց բացատրագրերի ցուցադրմամբ:

Քարտեզի մասնագիտական ծանրաբեռնվածությունը մենք նպատակահարմար ենք համարել խմբավորել հետևյալ հիմնական բաժիններում.

I. Սևանա լճի ափագծի փոփոխման դինամիկան (սկսած 1932թ)
II. Լճի ջրից ազատված տարածքի և առափնյա հարթությունների դինամիկան 1967-2002թթ.
III. Մեղմաթեք հարթությունների ստորին հատվածների, գետահովիտների լանջերի զարգացման ընթացքը (տեղատարման, տեղափոխման և կատակումային գործընթացներ):
IV. Ռելեֆի ժամանակակից վերամշակման ընթացքը լեռներում:
V. Հիպերգենեզի տիրապետող տիպերը:
VI. Նորագույն տեկտոնիկան և սեյսմիկան:
VII. Երկրաբանական կառուցվածքը և ապարակազմությունը:
VIII. Այլ նշաններ.

Քարտեզի մասնագիտական ծանրաբեռնվածությունը հնարավոր է եղել պատկերել քարտեզագրական 78 գծային և ֆոնային նշանների միջոցով, որտեղ առավել դինամիկ օբյեկտները և երևույթները բնութագրվել են նաև ոչ միայն իրենց որակական, այլ նաև հետազոտություններից ստացված քանակական ցուցանիշներով:

Նման սկզբունքներով և բովանդակությամբ, 1:100000 մասշտաբի քարտեզ ՀՀ և նախկին ԽՍՀՄ-ում կազմվել էր առաջին անգամ և ընդունվել հաջողված փորձերից մեկը: Դա իր հերթին

վկայում է այն մասին, որ աշխարհագրական հետազոտությունները նկարագրական բնույթից անցում են կատարել կոնստրուկտիվ-կառուցողական աշխարհագրական որակական փոփոխությունների: Նման բովանդակության և ծանրաբեռնվածության քարտեզը, ըստ էության համարվում է այդ անցման հաջողված առաջին փորձերից մեկը:

ՀՀ լեռնային բնատեխնածին գեոհամակարգերի տարածքների առանց խոշոր ռիսկերի տնտեսական օգտագործման հետազոտությունների և համադիրային քարտեզագրական՝ այսինքն գրաֆիկական եղանակներով դրանց հիմնավորումների համար, որպես ուսումնասիրությունների օբյեկտ է ընտրվել է Լոռվա գոգավորության Ձորագետի ավազանը, որտեղ նախկին "Հայհիդրոէներգոնախագիծ, ինստիտուտը նախագծել էր կառուցել Արմանիսի ջրամբարը՝ Ձքնաղ գետի հովտում (նախկին Կույբիշև, ներկայիս Ուրասար գյուղի տարածքում), Լոռի Բերդ-1, Լոռի Բերդ-2 ջրաէլեկտրակայանները՝ Ձորագետի հովտում և Շնողի էլեկտրակայանը Շնող գետի հովտում:

Ինչպես երևում է, այստեղ խնդիր էր դրված հետազոտել ու կանխատեսել նշված այդ ջրաէներգետիկ կառույցների հնարավոր բացասական հետևանքները Լոռվա գոգավորության էկոլոգիական բնական հավասարակշռության պահպանման վրա: Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր նախագծի բացի տեխնիկա-տնտեսականից, տալ նաև դրա էկոլոգա-բնապահպանական հիմնավորումները: Այստեղ հարկ ենք համարում նշել նաև, որ մեր հանրապետությունում մինչ այդ նման աշխատանք դեռևս չէր կատարվել և զգացվում էր փոփոխութունների կանխատեսման գիտամեթոդական սկզբունքների պակաս:

Պատվիրատու կազմակերպության պատվերը կատարելու համար, սկսած 1980թ. կազմակերպվել է բնական բաղադրիչների բաղադրամասային դաշտային հետազոտությունների ստացիոնար, կիսաստացիոնար և երթուղային դիտարկումներ:

Առաջին հերթին անհրաժեշտ էր հետազոտել բնատեխնածին լանդշաֆտային բաղադրամասերի ժամանակակից փոխկապակցվածությունները: Այսինքն կատարել դաշտային բաղադրամասային հետազոտություններ և փաստագրել դրանք գրաֆիկական եղանակով: Անհրաժեշտ էր կազմելԼոռվա գոգավորության լանդշաֆտների, ժամանակակից արտածին ռելիեֆառաջացնող պրոցեսների, կլիմայի, ջրային օբյեկտների, հողային ծածկույթի և հողահանդակների, ինչպես նաև արտադրական այլ ոլորտներում գտնվող տարածքների, բնական հուշարձանների, հաղորդակցության միջոցների 1:25000 և 1:50000 մասշտաբով անալիտիկ քարտեզները: Այդ ամենը իրականացնելու համար ավելի քան 10 տարիների ընթացքում պահանջվել են կատարել ստացիոնար, կիսաստացիոնար և երթուղային դիտարկումներ:

Բնատեխնածին գեոհամակարգերի բնական և սոցիալ-տնտեսական բաղադրամասերի համալիրային հետազոտություններն ավատելուց հետո պատվիրատու կազմակերպությանն է ներկայացվել հետևյալ հիմնական եզրակացությունները:

1. Նախագծվող ջրամբարն իր մակերեսի ու ծավալի փոքրության պատճառով, շրջակա միջավայրի վրա կունենա սահմանափակ ազդեցություն:
2. Ջրամբարի բացասական ազդեցությունը, առաջին հերթին, կարտահայտվի Լոռվա դաշտի մի հատվածի հողօգտագործման վրա, քանի որ մոտ 720 հա հողատարածք ծածկվելու է ջրով և դուրս է մնալու գյուղատնտեսական նպատակով օգտագործման ոլորտից, ինչը նպատակահարմար չենք համարում մեր սակավահող հանրապետության համար:

3. Իր փոքրության պատճառով ջրամբարը առանձնակի նշանակություն չի կարող ունենալ Լոռվա գոգավորության կլիմայի փոփոխության վրա: Ջրամբարի շահագործումից հետո կանխատեսվում է օդի ջերմաստիճանի ոչ մեծ՝ 1-ից մինչև 2,5 աստիճան դրական փոփոխություն, այն էլ միայն ջրամբարի առափնյա գոտու վրա: Իսկ խոնավության բալանսի փոփոխություն տեղի կունենա նույնպես ոչ մեծ տարածքի վրա, որը կապված կլինի ջրամբարի ջուրը ոռոգման նպատակներով օգտագործման հետ:
4. Ջորագետ, Տաշիր, Լոռի-Գետ, Գառգառ գետերի հոսքերի արհեստական կարգավորումը չի կարող ազդել դրանց հովիտների էկոլոգիական բնականոն զարգացման վրա: Այդ գետերը հիմնականում հոսում են խորը գետահովիտներով, մասնակի ջրառը չի փոփոխի դրանց էկոլոգիական ծախսերը:
5. Ջրամբարի շահագործման ընթացքում նրա հյուսիսային և հյուսիս-արևմտյան ափամերձ ոչ մեծ (մոտ 2,5-ից 3,0 հա) տարածքի վրա կանխատեսվում է ճահճացում և գերխոնավացում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա ռեկրեացիոն նպատակով օգտագործման ժամանակով:
6. Հողային ծածկույթի և բուսականության որոշակի փոփոխություն կանխատեսվում է միայն Բազումի լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերի ստորոտներին և Լոռվա դաշտի այդ հատվածի մեղմաթեք դելյուվիալ ծածկոցների շրջանում, այստեղ որտեղ դրանք ներգրավվելու են գյուղատնտեսական արտադրական ոլորտ: Այդ տարածքի վրա ակտիվանալու են և իռիգացիոն, ճանապարհային էրոզիոն և մակերևութային լվացման անցանկալի պրոցեսները:
7. Եթե ջրամբար հոսող ջրերի և ջրամբարի ջրերի որակը պահպանվի ու արհեստականորեն չկեղտոտվի, դրանք նպատակահարմար է օգտագործել ինչպես արդյունաբերական-ձկնաբուծական, այնպես էլ սիրողական ձկնորսության ու ռեկրեացիոն նպատակներով:

Հանրապետության տնտեսության անընդհատ զարգացումը, բնակչության աճը, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության հետ կապված լայնածավալ շինարարական աշխատանքները բնականաբար, անհետևանք չէին կարող մնալ այդ տարածքների զարգացման ընդհանուր միտումի վրա:

Ինչպես հանրապետության տարածքի գրեթե բոլոր ռեգիոններում, այստեղ նույնպես բնական ռեսուրսների տնտեսական օգտագործման գործընթացում առավել ակտիվ են արտահայտվում նաև մարդածին գործոնները: Մարդածին գործոնները, որպես կանոն, հանդես են գալիս իրենց յուրահատուկ ձևերով, բնույթով, հզորությամբ ու տարածման մասշտաբներով:

Մեծ են նաև զարգացման լարվածության տարբերությունները ոչ միայն միևնույն գեոհամակարգերի սահմանների ներսում, այլ նաև տարբեր համակարգերում: Ըստ երևույթին, դրանով է պայմանավորված նաև լեռնային տարածաշրջանների համալիրային հետազոտությունների կանխատեսման և կառավարման աշխատանքների դժվարությունները: Այդ դժվարությունները, մեր կարծիքով, ունեն իրենց ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառները: Բանն այն է, որ համադիրային քարտեզագրման ժամանակ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում մեկ քարտեզի վրա արտապատկերել բնական միջավայրի ինչպես համեմատաբար ստատիկ, այնպես էլ դինամիկ ու արագ փոփոխվող կատեգորիաներ: Դրանց հետ են կապված ժամանակի որոշակի տիրույթներում այդ փոփոխությունների բնույթը,

արագությունները, տարածման մասշտաբները, սպասվելիք հիմնական միտումներն ու դրանց կանխատեսումները:

Մարդածին գործոնի բացասական ազդեցության դասական օրինակ կարելի է համարվել Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցման հետ կապված բազմաթիվ բացասական պրոցեսների և երևույթների առաջացումը և աննախադեպ ակտիվացումը: Դա ժամանակի համեմատաբար փոքր հատվածներում (մոտ 60 տարի) զգալի փոփոխություններ մտցրեց ավազանի բնական միջավայրի բնականոն զարգացման մեջ:

Նմանատիպ օրինակ կարելի է համարել նաև Աղստև գետի հովտում մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացած բազմաթիվ բացասական գործընթացներն ու երևույթները: Եթե Սևանա լճի ավազանում բնական միջավայրի կտրուկ փոփոխությունները կապված էին էրոզիոն բազիսի արհեստական արագ իջեցման հետ, ապա Աղստև հովտում այն կապված էր հատկապես Իջևան-Դիլիջան-Հրազդան երկաթուղագծի և դրա շահագործման համար անհրաժեշտ ինժեներաշինարարական օբյեկտների կառուցման և շահագործման հետ:

Աղստևի հովիտը բնակեցված լինելով դեռ վաղ անցյալում, նրա ստորին ,հարկը՝ ավելի շատ է ենթարկվել մարդածին գործոնների ազդեցությանը և ավելի շատ է ,կերպարանափոխվել՝: Եվ, ի տարբերություն նախորդ երկու գեոհամակարգերի այս տարածքի դինամիկան պայմանավորվել է, հիմնականում տեխնոգեն գործոնների հետ: Դրանք զգալի փոփոխություններ են մտցրել հովտի հատկապես ջրային ռեժիմի, լանջերի ծանրահակ և միկրոսեյսմիկ բնական հավասարակշռության, մարդածին ծանրաբեռնվածության, տնտեսվարման և այլ երևույթների մեջ: Բոլոր այդ անցանկալի երևույթների դինամիկայի բացահայտման, ինչպես նաև Դիլիջան քաղաքի կառուցապատված տարածքի ու Իջևան-Դիլիջան-Հրազդան եկաթուղագծի շահագործման անվտանգության գնահատման համար ՀՀ նախկին Մինիստրների Խորհրդի որոշմամբ սկսած 1977թ.-ից մինչև 1988թ. կազմակերպվել է այս ավազանի բնական համալիրի աշխարհագրական, երկրաբանական և բնապահպանական խոշորոմասշտաբ համալիրային ստացիոնար և կիսաստացիոնար հետազոտությունները: Միայն Դիլիջան քաղաքի կառուցապատված տարածքի վրա ակտիվ զարգացող սողանքների դինամիկայի հետազոտությունների համար ֆոտոթեոդոլիտային 18 բազիսներից կատարվել է ստերեոհանույթ և իրականացվել ստերեոզույգերի գրաֆո-մեխանիկական լաբորատոր մշակում:

Հետազոտությունների այդ մեթոդը մեզ հնարավորություն տվեց հետազոտել տարբեր չափերի ու արագության շարժվող սողանքների դինամիկան՝ հետազոտությունների նշված ժամանակահատվածի համար գնահատել նաև դրնց շարժման արագությունները:

Դաշտային ստացիոնար և կիսաստացիոնար համադիրային հետազոտությունների միջոցով բացահայտվեց, որ Իջևան-Դիլիջան-Ֆիոլետովո երկաթուղագծի ընդհանուր 48 կմ երկարության միան 18 կմ-ն է անվտանգ շահագործման ենթակա: Մնացած 30 կմ հատվածն անցնում է սողանքային ակտիվ մարմինների, սելավաբեր ձորակների և այլ անբարենպաստ տեղագրական մակերևույթ ունեցող տարածքներով: Գրեթե նույն վիճակում է նաև Դիլիջան-Իջևան-Նոյեմբերան ավտոխճուղին:

Աղստև հովտի ցածրադիր գոտու մոտ 40-45 % - ը արդեն դարձել է խոցելի՝ հատկապես սողանքային, սելավային, գրունտների նստեցումների, փլուզումների, քարաթափերի և այլ բացասական երևույթներով ու գոծընթացներով:

Բնական դիտարկումների ավարտից հետո, նախկին ՀՀ Մինիստրների խորհուրդ է ներկայացվել հետազոտությունների հիմնական եզրակացությունները և առաջարկությունները: Դրանց հիման վրա կազմվել էժամանակակից արտածին ռելիեֆառաջացնող պրոցեսների ինժեներաաշխարհագրական 1:200000 մասշտաբի համադիրային քարտեզը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Գ. Ա., Աշխարհագրական կանխատեսման (պրոգնոզի) էությունը, տեսակները, կատարման եղանակները լեռնային տարածքների տնտեսական օգտագործման ժամանակ, ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, N 2 Ե.,2005, էջ 50-55:
2. Կարապետյան Գ. Մ., Իջևան-Դիլիջան-Հրազդան երկաթուղագծի շահագործման հուսալիության մի քանի հարցերի մասին, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի 45-րդ գիտական նորաշջանի նյութեր, Ե., 1990. էջ 24-26:
3. Карапетян Г. М. Об опыте составления аналитических и синтетических карт, динамики рельефа басс. оз. Севан, Изд. АН. Арм ССР, Науки о Земле, N3, Е.,1978, с. 66-74.
4. Карапетян Г. М. К методике прогнозирования влияния проектируемых водохранилищ на изменение прилегающих к ним территорий (на примере Арманисского гидрокомплекса), Ученые Записки, ЕГУ N 3, (154) Е. 1973г. с. 130-136.

СИНТЕТИЧЕСКОЕ КАРТОГРАФИРОВАНИЕ КАК ПРАГМАТИЧЕСКАЯ СОСТАВЛЯЮЩАЯ КОНСТРУКТИВНОЙ ГЕОГРАФИИ (НА ПРИМЕРЕ РА)

Г. М. Карапетян, д..г., н., профессор, АГПУ
А. Г. Карапетян, к.г. н., АГПУ

Одной из существенных проблем современной прикладной картографии является синтетическое картографирование природных ресурсов и социально-экономических систем.

Однако, до настоящего времени недостаточно разработаны теоретические вопросы переработки первичной информации для составления синтетических природных и социально-экономических карт конструктивного характера.

Разработка спецсодержания многих синтетических инженерно-географических карт серьезная и трудоемкая работа, которая, в итоге, заканчивается синтезом многих аналитических карт констатационного типа.

На примере трех горных природно-техногенных систем РА рассматриваются некоторые аспекты синтетического картографирования в конструктивно-географических целях.

SYNTHETIC MAPPING AS PRAGMATIC COMPONENT OF CONSTRUCTIVE GEOGRAPHY

ABSTRACT

G.M. Karapetyan Doctor of Geographical Sciences, Professor,
A. G. Karapetyan, PhD of geografhyASPU after Kh. Abovyan

Synthetic mapping of natural resources and socio-economic systems is one of the essential problems in the modern attached mapping.

But the theoretical issues of treatment of the initial information for compiling of synthetic natural and socio-economic maps of the constructive character have not be elaborated sufficiently up to now.

The elaboration of the special content of many synthetic engineering-geographical maps is a serious and voluminous work, which as a result ends with the synthesis of many analytical maps of a constant type.

Some aspects of synthetic mapping with the constructive-geographic purposes are considered on the example of three mountainous natural-anthropogenic systems of the Republic of Armenia.

ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԱՑՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ՀՀ ԱԳՐՈՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, աշխ.գիտ. թեկ. դոցենտ, ԵՊՀ

Երկար տարիներ տնտեսության ինտենսիվացումը պատկերացվում էր որպես աշխատանքի մեքենայացում, արտադրողականության բարձրացում, եկամուտների ավելացում և այլն, առանց հաշվի առնելու, թե այդ գործընթացում ինչքան է փոփոխվում շրջակա միջավայրի՝ օդի, հողի, ջրի, կենսոլորտի, ինչպես նաև մարդու առողջության վիճակը: Խոսք չկար այն մասին, որ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները բնական ռեսուրսներ են, իսկ մարդու առողջությունն՝ արտադրության շարժիչ ուժը և կազմակերպիչը: Բոլոր տիպի բարիքներ ստեղծող արտադրությունները, որոնք մշտապես օգտվում են այդ ռեսուրսներից, ի վերջո, կդադարեն գործելուց, եթե չապահովվի դրանց անաղարտ պահպանությունը և էկոլոգիապես անհաշվենկատ շահագործումը: Այսօր, երբ բնօգտագործման բնագավառում «դանակը ոսկորին է հասել», շատերը հասկացել են այս աքսիոմայի կարևորությունը, սակայն կոնկրետ քայլեր կատարողները դեռևս քիչ են: Ինչպիսի նոր ռեսուրս էլ մարդը ստեղծի, միևնույն է «բնությունից դուրս» չի կարող լինել, հետևաբար դա ևս պետք է լինի բնօգտագործման մի տեսակ և պետք է միտված լինի բնապահպանությանը:

Ռեսուրսների օգտագործման էկոլոգացման տեսության այս դրույթները վերաբերում են բոլոր չափի, խոշոր թե փոքր ռեսուրսներին և մասնավորապես, միկրոկլիմայական ռեսուրսներին, որոնք սովորաբար զբաղեցնում են սահմանափակ, իսկ առանձին դեպքերում՝ խիստ սահմանափակ տարածքներ: Դրանք մեր լեռնային պայմաններում հանդիպում են ամենուրեք, հատկապես՝ գյուղատնտեսության բնագավառում: Այստեղ բարենպաստ միկրոկլիմաներն օգտագործվում են հավելյալ կամ բարձրորակ բերք ստանալու, իսկ անբարենպաստ կլիմայի պարագայում՝ վնասներից խուսափելու համար:

Տնտեսության բոլոր ճյուղերն այս կամ այն չափով օգտվում են կլիմայական ռեսուրսներից, սակայն գյուղատնտեսությունը, առողջապահությունը, քաղաքաշինությունը, տրանսպորտը և այլ բնագավառներ իրենց առօրյա և հեռանկարային գործունեությամբ առավել սերտորեն են կապված կլիմայական (միկրոկլիմայական) ռեսուրսների անմիջական օգտագործման հետ:

Գյուղատնտեսության արտադրության կենտրոնական արտադրական օբյեկտը, առաջնային նյութի միակ ստեղծողը՝ մշակաբույսը, չափազանց զգայուն է կլիմայական (եղանակային) պայմանների նկատմամբ, այդ պատճառով բուսաբուծության արդյունավետությունը մեծապես կախված է «հող-բույս-մթնոլորտ» վիճակից: Բնական պայմաններում այդ հարբերակցության վիճակը տարածաժամանակային կտրվածքով փոփոխվում է բազմաթիվ պատճառներով, հատկապես կախված ռելիեֆի և գործող մակերևույթի վիճակի բազմազանության հետ: Որպես հետևանք այդ բազմազանություններում ձևավորվում են ուրույն միջավայրեր բույսի լուսասինթեզի, հետևաբար, բուսազանգվածի ձևավորման համար:

Դեռևս 1956 թ. հայտնի կլիմայագետ Տորնտվեյտը [1] դիպուկ նկատել է, որ «կլիմաների բաշխվածությունը երկրագնդի վրա վաղուց պարզաբանված է, կլիմայական հիմնական տարրերը հուսալի ճշտությամբ քարտեզագրված են, կլիմաների դասակարգման գործում հասել են զգալի հաջողությունների: Այդ բոլորը բավական օգտավետ են: Սակայն այսօր առավել կարևոր հարցը միկրոկլիմայագիտության զարգացումն է: Իրականում կենսաբանին առավել կարևոր է իմանալ կլիմայական տարրերի բաշխվածությունը հողի և ծառերի սաղարթի միջև, դաշտի բուսածածկում, անասնագոմում, քան երկրագնդի վրա կլիմայատիպերի բաշխվածությունը » :

Միկրոկլիմայի սահմանումը տվել են բազմաթիվ հետազոտողներ (Р.Гейгер, С.Thorntwibe, И.Голцберг, С.Хромов, Г.Селянинов, С.Сапожникова, А. Скворцов, Р.Мкртчян և ուրիշներ) [1, 2, 3,5, 6, 8], սակայն մեր կարծիքով սպառիչ ձևակերպումը տվել է Ի.Ա.Գոլցբերգը [2], ըստ որի «միկրոկլիմա» ասելով հասկացվում է ոչ մեծ տարածքի կլիմա, որը ձևավորվում է ռելիեֆի, բուսածածկի, հողի վիճակի տարբերությունների պայմաններում, ջրավազանների, շինությունների, և գործող մակերևույթի այլ առանձնահատկությունների ազդեցությամբ: Դա գյուղատնտեսական դաշտի, բլրալանջի, անտառապուրակի, լճափի, ճահճի, քաղաքի և այլնի կլիման է: Ըստ Ս.Պ.Խրոմովի միկրոկլիման լանդշաֆտային ֆացիաների կլիման է [3]: Հետազոտությունները ցույց են տվել, որ առանձին դեպքերում միկրոկլիմայի ազդեցությունը տարածվում է օդի գետնամերձ շերտում՝ մինչև 100-150 մ բարձրությունները:

Եթե «միկրոկլիմա» հասկացությունը բնորոշ է համեմատաբար փոքր տարածքներին, իսկ «կլիման» ընդգրկում է երկրներ, մայրցամաքներ, ապա դրանց միջակայքում ոմանք առանձնացնում են «մեզոկլիմա» հասկացությունը: Սակայն քանի որ դժվար է տարանջատել միկրո և մեզոկլիմաների տարածական սահմանները, ապա խորհուրդ է տրվում օգտագործել միայն «միկրոկլիմա» տերմինը: Ե.Ն.Ռոմանովայի բնորոշմամբ [4] միկրոկլիմայական տարածքները կարող են ձգվել հորիզոնական ուղղությամբ մինչև 10 կմ, իսկ ուղղահայաց ուղղությամբ՝ 100-200 մ, և նպատակահարմար է դրանք քարտեզագրել 1:10000 և 1:100 000 մասշտաբներով:

Միկրոկլիմայի սահմաններում կարող են առանձնանալ նանոկլիմաներ՝ ավելի փոքրամասշտաբ անհամասեռություններ և օբյեկտներ՝ հողաթմբեր, իջվածքներ, միայնակ ծառ կամ թուփ և այլն, որոնք կարող են ունենալ հորիզոնական ուղղությամբ 1-3 մ, իսկ վերընթաց ուղղությամբ՝ 0,5-1,0 մ չափեր:

Մեզո-միկրո և նանոկլիմաների առանձնացումը խոսում է այն մասին, որ դրանց ուսումնասիրությունն ունի տնտեսական լուրջ կարևորություն, քանի որ այդ մասշտաբի կլիմայական պայմաններում օդի, հողի, ջերմային, խոնավացման, արևի ճառագայթային և այլ ցուցանիշների հորիզոնական և ուղղաձիգ փոփոխականությունը (գրադիենտը) շատ ավելի մեծ են, քան նշված կլիմայական տարրերինը՝ ըստ աշխարհագրական լայնության և բարձրադիր գոտիների:

Ըստ Ե.Ն.Ռոմանովայի [4, էջ 9] հարակից, բայց տարաբնույթ կլիմա ունեցող մակերևույթների վրա (խոնավ ու չոր, մերկ ու խոտածածկ, հարավահայաց ու հյուսիսահայաց և այլն) ճառագայթային և ջրաջերմային օդերևութաբանական տարրերի տարբերությունները շուրջ 10 անգամ մեծ են, քան երկու հարևան բնական զոնաների կամ վերընթաց գոտիների միջև: Այլ կերպ ասած, օդերևութաբանական տարրերի տարբերությունները հարակից միկրոկլիմաներում համապատասխանում են մոտ 1000 կմ լայնության բնական զոնայի և մոտ 1000 մ վերընթաց գոտու սահմաններում դիտվող տարբերություններին:

Հայտնի է, որ գյուղատնտեսության հիմնական արտադրամասերը՝ բուսաբուծությունը, անասնապահությունը, մեքենաները, մինչև անգամ ջերմոցները, աշխատելով բաց երկնքի տակ, մշտապես օգտագործում են մակրո-մեզո-միկրոկլիմայական ռեսուրսները՝ լույսը, ջերմությունը, խոնավությունը, մթնոլորտային օդը և ակամա ենթարկվում են եղանակային և կլիմայական կամակորություններին: Հողի աշխատավորը մշտապես ձգտում է առավելագույնս օգտվել այդ ռեսուրսներից և միաժամանակ պաշտպանվել (խուսափել) վտանգներից: Այդ որոնումներն անհրաժեշտություն են հատկապես լեռնային երկրագործության, բազմաթիվ և բազմաբնույթ մեզո-միկրոկլիմաների պայմաններում:

Միկրոկլիմայական, ինչպես և կլիմայական ռեսուրսները, ներկայացնում են օդերևութաբանական երևույթների՝ արևի լուսաջերմաճառագայթման, օդի խոնավության, տեղումների, քամիների տարեկան ռեժիմը՝ արտահայտված ֆիզիկական մեծություններով: Այդ կոմպլեքսների միջավայրաստեղծ դերը արտահայտված է երկրի վրա տարբեր ջրաջերմային գոտիների ձևավորմամբ: Յուրաքանչյուր կլիմայական գոտում, ցամաքի և ծովերի, ռելիեֆի, բուսածածկի և տեղական այլ պայմանների ազդեցությամբ ստեղծվում են տարաբնույթ կլիմայական ռեժիմներ (տիպեր), որոնց տարածական չափերը կարող են հասնել մի քանի քառակուսի մետրից մինչև հազարավոր հեկտարներ: Նման մեզո-միկրոկլիմայական բազմությունները կրում են «մայր գոտու» կլիմայական ներուժը, իսկ առանձին դեպքերում (հատկապես լեռնային երկրներում) խիստ տարբերվում են ընդհանուրից դրական կամ բացասական շեղումներով: Այդ շեղումները պայմանավորված են նրանով, թե ինչպե՞ս է տրանսֆորմացվում արևից ստացած լուսաջերմային էներգիան, ջրաջերմային հաշվեկշռում ո՞ր տարրն է դոմինանտ դերում տվյալ միկրոշրջանում: Բուսաբուծության համար միկրոկլիմայական դրական շեղումների թվին կարելի է դասել լավ լուսավորվածությունը, 100-ից բարձր ջերմաստիճանների մեծ գումարները, վեգետացիոն ժամանակահատվածի երկարատևությունը, էքստրեմալ ջերմաստիճանների անվտանգ արժեքները, տեղումների բավարար քանակը, քամիների անվտանգությունը և այլն: Ֆերմերի խնդիրն է՝ գնահատել այդ շեղումների կենսաբանական արժեքը և գտնել ուղիներ դրական շեղումները (ռեսուրսները) արդյունավետ օգտագործելու, իսկ բացասական շեղումների դեպքում՝ կորուստներից խուսափելու համար:

Ինչպես նշում է պրոֆ. Ռ.Ս.Մկրտչյանը միկրոկլիմայի ուսումնասիրության արդիականությունը և տարբերությունը մակրոկլիմայից կայանում է նրանում, որ նախ և առաջ մարդու գործունեության մեծ մասն ընթանում է միկրոկլիմայական պայմաններում, և երկրորդը, միկրոկլիմաները իրենց բնույթով ֆիզիկական կոնկրետություններ են, և հեշտությամբ կարելի է վերափոխել: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ գյուղատնտեսական դաշտերում, այգիներում, արոտավայրերում մշակաբույսերի, անասունների մթերատվությունը ձևավորվում է հիմնականում միկրո-մեզոկլիմայական պայմաններում: Հենց այդ պատճառով մշակաբույսերի, անասնացեղերի շրջանացումը և տեղաբաշխումը, հատկապես լեռնային երկրներում, կատարվում է հաշվի առնելով առաջին հերթին միկրո-մեզոկլիմայական պայմանները: Ցանկացած հողատարածքի գյուղատնտեսական, քաղաքաշինական, հանգստի և այլ նպատակներով օգտագործելու պարագայում անխտիր ձևով հաշվի են առնվում տեղի մեզո-միկրոկլիմայական ցուցանիշները և ըստ այդմ մշակվում են այդ տեղամասի շահագործման տեխնոլոգիաները, գնահատվում հողի բերրիության աստիճանը, մայրուղիների, օդանավակայանների, արդյունաբերական օբյեկտների և այլնի շահագործման և պահպանման անվտանգության կանոնները: Բնակավայրերի կառուցապատման նախագծումների ժամանակ տեղի միկրոկլիմայական ցուցանիշների հաշվառումը պարտադիր պայման է:

1950-ական թվականներին մեր հանրապետությունում սկսվեցին ոռոգվող նոր հողատարածքներ յուրացնելու լայնածավալ աշխատանքներ: Այդ տարածքների մեծ մասը նախատեսվում էր բազմամյա տնկարկների՝ խաղողի, պտղատուների համար: Այգիների հիմնումը համարվում էր կապիտալ ներդրում 30-50 տարիների ժամկետով, հետևաբար, պտղատուների տեսակների և խաղողի սորտերի տեղաբաշխումը յուրաքանչյուր հողատարածքում պետք է կատարվեր մանրամասն՝ հաշվի առնելով միկրոկլիմայական և հողային պայմանները: Այդ նպատակով Այգեգործության և պտղաբուծության ինստիտուտում ստեղծվեց ագրոկլիմայագետների, խաղողագործների, պտղաբույծների, հողագետների, հողաշինարարների մի հանձնախումբ, որի դաշտային հետազոտությունների արդյունքում 1950-1970 թթ. մշակվեց համապատասխան քարտեզ-նախագծեր Բագրատաշենի, Կողբ-Բերդավանի, Այրում-Ճոճկանի, Վահագնի, Աչաջրի, Այգեհովիտ-Վազաշենի, Գետափ-Աղավնաձորի, Գլաձոր-Մալիշկայի, Սուրենավան-Պարյուր Սևակի, Պռոշյանի, Արտենի-Արագածավանի տնտեսություններում՝ նոր ոռոգվող հողատարածքներում խաղողի, պտղատուների և այլ մշակաբույսերի ռացիոնալ տեղաբաշխման համար:

1950-1990 թթ. ընթացքում Ռ.Ս.Մկրտչյանի ղեկավարությամբ կազմվեցին շուրջ 200.000 հեկտար նոր ոռոգելի հողատարածքների միկրոկլիմայական քարտեզները: Դրանցում տրված էին տարածքի ջերմային ռեսուրսների ($t > 10^0$ ջերմաստիճանների գումարը), ձմեռային վտանգավոր ցրտերի ($t < -18^0$) հավանականությունները, գարնանային և աշնանային ցրտահարությունների ժամկետները և հավանականությունները, քամիների գերակշիռ ուղղությունները, հողատիպերը և այլ ցուցանիշներ:

Յուրաքանչյուր նոր ոռոգվող հողամասում պտղատուների և խաղողի սորտերի տեղաբաշխման քարտեզները, կից բացատրական տեքստերով, հանձնվում էին տնտեսությունների ղեկավարներին և շրջանի գյուղվարչությանը՝ տնկումներն իրականացնելու նպատակով;

Ցավոք, 1980-1990-ական թվականների սոցիալտնտեսական, քաղաքական և ռազմական լուրջ իրադարձությունները թույլ չտվեցին իրականացնել մի շարք տարածքների գիտականորեն

հիմնավորված յուրացումը այգիների տակ: Դադարեցվեցին նաև նման մեթոդով գյուղատնտեսական հողատարածքների գնահատման և մշակաբույսերի ռացիոնալ տեղաբաշխման հետազոտական աշխատանքները հանրապետությունում:

2000-ական թվականներից վերսկսվեցին միկրոկլիմայական հետազոտությունները խաղողագործության և գինեգործության տարածական մասնագիտացման խնդիրները որոշելու և լուծելու նպատակով: Հանրապետության գինեգործությունն արտաքին շուկա դուրս բերելու համար անհրաժեշտ էր ստեղծել բարձրորակ հումքի հուսալի բազա՝ մրցունակ խաղողի սորտեր, հումքի մշակման նորագույն տեխնոլոգիաներ, ինքնատիպ գինիներ և այլն: Հետազոտությունները կատարվեցին Հայաստանի գինեգործների միությունում Ա.Ֆ.Հարությունյանի ղեկավարությամբ՝ արշավախմբային մեթոդով, մի շարք մասնագետների (սորտագետ, հողագետ, ագրոկլիմայագետ, տնտեսագետ) մասնակցությամբ:

Գույքագրելով ՀՀ խաղողագործական շրջանների շուրջ 300 հողամասերի կադաստրային տասնյակ ցուցանիշներ՝ ռելիեֆի, հողի, միկրոկլիմայի և այլնի մասին, գնահատվեցին յուրաքանչյուր հողամասի կենսակլիմայական ներուժը և խաղողի հումքի հավանական որակական ցուցանիշները, ըստ այդմ՝ սպասվելիք գինու որակը և շուկայական արժեքը:

Այսպիսով, ՀՀ-ում առաջին անգամ միկրոկլիմայական, հողային և այլ բաղադրիչների համակարգային ուսումնասիրությունների արդյունքում մշակվեց հանրապետության խաղողագործության և գինեգործության մասնագիտացման խոշորամասշտաբ քարտեզներ ըստ առանձին հողամասերի: Հիմնավորվեց արտաքին շուկայում մրցունակ գինիների ստացման բազայի կենսակլիմայական ներուժը: Արդյունքները հրատարակվեցին ստվար մենագրության մեջ, որն արժանացավ մասնագետների բարձր գնահատականին [10]:

Ամփոփելով մեզո-միկրոկլիմայական ռեսուրսների ձևավորման օրինաչափությունների, դրական և բացասական հատկությունների, ինչպես նաև դրանց գյուղատնտեսության մեջ օգտագործման ուղիների և բարելավման միջոցառումների վերլուծությունը, հարկ ենք համարում նշել.

- Անհրաժեշտ է բացահայտել և կադաստրավորել (գույքագրել) մեզո-միկրոկլիմայական ռեսուրսները յուրաքանչյուր հողօգտագործող տնտեսության տարածքում, նշելով դրանց օգտագործման կամ բարելավման ուղիները, իսկ հարկ եղած դեպքում՝ կազմակերպել հատուկ ուսումնասիրություն:
- Նշված ռեսուրսներն ունեն ոչ միայն գյուղատնտեսական մեծ ներուժ, այլ նաև դրանք կարելի է օգտագործել առողջապահություն, քաղաքաշինության, ճարտարագիտության, ճանապարհաշինության, անտառարդյունաբերության, էներգետիկայի, կենսաբանության և այլ բնագավառներում:
- ՀՀ լեռնային պայմաններում գյուղատնտեսության կլիմայական և մեզո-միկրոկլիմայական ռեսուրսները համարյա համազոր են: Եթե գյուղատնտեսության տարածական մասնագիտացումը, մշակաբույսերի և անասնացեղերի շրջանացումը, ինչպես նաև ագրոզոոտեխնիկական տեխնոլոգիաների չափորոշիչները (ստանդարտները) մշակելիս հաշվի են առնվում հողակլիմայական ռեսուրսները, ապա յուրաքանչյուր դաշտի, այգու, անասնապահական ֆերմայի խնամքը, բերքի ձևավորումը, որակը և այլն ընթանում են մեզո-միկրոկլիմայական պայմանների անմիջական ազդեցությամբ:

- Մեզո-միկրոկլիմայական ռեսուրսները հեշտությամբ կարելի է օգտագործել և բարելավել ֆերմերի ուժերով, առանց խոշոր ներդրումների, մինչդեռ կլիմայական պայմանները համարյա ենթակա չեն վերափոխման: Այս առումով մեզո-միկրոկլիմայական ռեսուրսների օգտագործումը գյուղատնտեսության մեջ պետք է դասել պարտադիր կիրառվող ագրոզոոկանոնների շարքին և համարել տնտեսության վարման բարձրակարգ մշակույթ:
- Բոլոր տիպի հողատարածքների տնտեսական գնահատականը (բոնիտետը) որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հողամասի մեզո-միկրոկլիմայական ցուցանիշները:

Նշենք, որ միկրոկլիմայական ռեսուրսների կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք հեշտությամբ կարող են բարելավվել թե շահութաբերության, և թե էկոլոգիական առումով: Միկրոկլիմայագիտության տեսության բոլոր ասպեկտների ուսումնասիրություններն ունեն կիրառական կարևոր նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Thorntwibe C.W. Introduction to arid Climatology. Climatology and microclimatology. Paris, 1958, 424 p.
2. Гольцберг И.А. Мезо -и микроклиматическое районирование Ленинградской об. Тр. ГГО, 1977, вып. 385, с. 39-49.
3. Хромов С.П. , Петросян М.А. Метерология и климатология. Изд.- МГУ, М., 1994, 519 с.
4. Романова Е.Н., Мосолова Г.И., Береснева И.Д. Микроклиматология и ее значение для сельского хозяйства, 1983, 245 с.
5. Селянинов Г.Т. Принципы агроклиматического райониров, СССР. В кн. Вопросы агрокл, районир. СССР, М. 1958
6. Сапожникова С.А. Микроклимат и местный климат, Л. 1950, 242 с.
7. Гейгер Р. Климат приземного слоя воздуха. М. 1960, 486 с.
8. Скворцов А.А. Орошение с/х полей и микроклимат, Л. 1964, 274 с.
9. Мкртчян Р.С. , Акопян А.С., Хачатрян Л.А. и др. Особенности формирования и с/х оценка микроклимата в зоне нового орошения Араратской долины. Сб. работ гидроменцентра Арм. УГМС, вып.4, 1978, с. 37-40
10. Арутюнян А.Ф. Природная среда Армянского вина. Е., 2009, 952 с.

АСПЕКТЫ РАЦИОНАЛЬНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ И ЭКОЛОГОЗАЦИИ МИКРОКЛИМАТИЧЕСКИХ РЕСУРСОВ В АГРОСИСТЕМАХ РА

Григорян А.Т., к. г. н., доцент, ЕГУ

В статья отмечен богатый потенциал агрокомплексов Армении, а также необходимость дальнейшего изучения и кадастрирования большого разнообразия микроклиматических ресурсов республики в масштабе каждого землепользователя, указывая цели использования микроклимата и пути его улучшения. Такая

постановка вопроса природопользования направлена на улучшение территориальной организации, а также на обеспечение комплексного использования микроклиматических ресурсов и их экологизацию.

THE ASPECTS OF RATIONAL USAGE AND GREENING OF MICROCLIMATIC RESOURCES IN AGRO SYSTEMS OF RA

Grigoryan A.T. PhD on geography, Associate Professor, YSU

The article notes a rich research experience agro complexes of Armenia, and the necessity for further study and cadastre of the variety of microclimatic resources of the republic on the scale of each landholder, stating the purposes and ways of improvement of the usage of microclimate.

These aspects of nature use, at the same time, are aimed to improving the territorial organization, as well as to assuring a complete use of the rich microclimatic resources and their greening.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ
ՄԱՐԳԱՐՅԱՆ Մ. Ք., Հրազդանի № 12 հիմնական դպրոց, ուսուցչուհի

Հիմնաբառեր. *բնապահպանական և էկոլոգիական կրթություն, կրթություն՝ հանուն կայուն զարգացման, էկոլոգիական մտածելակերպ, էկոլոգիական ճգնաժամ, էկոլոգիական հավասարկշռություն, էկոլոգիական հիմնախնդիր, էկոլոգիական ռազմավարություն և քաղաքականություն, շրջակա միջավայրի պահպանություն և օգտագործում:*

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել Երկիր մոլորակի ամբողջականության և հավասարակշռության վերաբերյալ աշխարհայացք ունեցող քաղաքացու ձևավորումը, ով կգիտակցի, որ հասարակության կայուն զարգացման համար պետք է բնական էկոհամակարգի կայունություն, տնտեսության համաչափ զարգացում, համապատասխան սոցիալական պայմանների ապահովում: Դրան կարելի է հասնել, եթե որպես զենք օգտագործվի կրթությունը հանուն կայուն զարգացման, որը կապահովի մարդկային հասարության գոյատևումը, կայուն զարգացումը, բնական պայմանների ու պաշարների արդյունավետ օգտագործումը, շրջակա միջավայրի որակի պահպանումը: Այդ կերպ էկոլոգիական մտածելակերպը կդառնա կենսակերպ և մշակույթ [3]:

Բնապահպանական կրթությունը (ԲԿ) կոչված է կրթել, ձևավորել այնպիսի հասարակություն, ով ոչ միայն տեղյակ է բնապահպանական հիմնախնդրին ու հարակից հարցերին և մտահոգված է դրանցով, այլև ունի որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, հմտություններ, շարժառիթներ՝ անհատապես և միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար: Բնապահպանական կրթությունն այսօր հասել է այն մակարդակին, որ այն արդեն դիտվում է որպես աշխարհի կայունությանը հասնելուն նպաստող մի գործոն:

Ներկայումս ՀՀ-ն կանգնած է այնպիսի մարտահրավերների առջև, որոնք միտված են խթանելու և

բարելավելու երկրում էկոլոգիական կրթությունը և իրազեկման զարգացումը: Էկոլոգիական կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները՝ նախադպրոցական (էկոլոգիական կրթությունն ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում), միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական, հասարակության լայն խավերի, այդ թվում զինված ուժերի կրթությունը:

Ելնելով վերոշարադրյալից, մեր աշխատանքի նպատակն է եղել քննարկել, բացահայտել և վերհանել բնապահպանական կրթության դրվածքն ու դաստիարակությունը, կրթության կազմակերպման ու արդի հիմնախնդիրները ՀՀ միջնակարգ դպրոցում, մշակել բնագավառի զարգացման խթանմանը նպաստող ուղիներ: Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ համապատասխան ուսումնասիրությունները, մասնավորապես, բնապահպանական և էկոլոգիական կրթությանը նվիրված աշխատությունները [3-8], ՀՀ իրավական և օրենսդրական ակտերը, ՀՀ գիտության և կրթության, բնապահպանության նախարարությունների հաշվետվությունները, զարգացման ծրագրերը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները [2], ինչպես նաև համացանցում առկա տվյալներն ու նյութերը: Աշխատանքում օգտագործվել է՝ ընդհանուր գիտական, բնութագրման, իրավիճակային, համակարգային, աշխարհագրական մեթոդներն ու հնարները, ինչպես նաև մանկավարժական փորձը:

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը էկոլոգիայի կիրառության ոլորտներն են, որոնց զարգացման համար հիմք են համարվում էկոլոգիայի տեսական գիտելիքները: էկոլոգիան, որպես օրգանիզմների և նրանց գոյության միջավայրի փոխազդեցությունների մասին հիմնարար գիտություն, ունի ավելի լայն ընդգրկում, քան բնական միջավայրի պահպանության մասին ուսմունքը: Բնական միջավայրի պահպանության հիմնախնդիրը մարդկային հասարակության և բնության փոխհարաբերության հիմնախնդիր է: Այդ փոխհարաբերությունը եղել է ի սկզբանե, բայց համամարդկային հիմնախնդրի է վերածվել 20-րդ դարի կեսերից սկսած:

Հայաստանի բնապահպանության ոլորտի կայուն զարգացման հիմնահարցը՝ էկոլոգիական հավասարկշռության և դինամիկ զարգացման ապահովումն է էկոհամարգերի բոլոր մակարդակներում: Ըստ որի, կարևոր հիմնախնդիր է հանդիսանում՝ շրջակա միջավայրի պահպանությունը, բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, բնապահպանության մշակույթի ապահովումը (կարևոր ուղղություններից է՝ անձի էկոկրթության և էկոդաստիարակության մշտական ապահովումը [4]:

Մեր երկրում բնակչության էկոլոգիական կրթության պետական քաղաքականության սկզբունքները, իրավական, կազմակերպչական և ֆինանսատնտեսական հիմքերը կարգավորվում են .Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասինե ՀՀ օրենքով (2001) [1]:

Հանրապետությունում շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանադրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքացիների էկոլոգիական բարձր մշակույթ , որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է օժտված լինի էկոլոգիական մտածելակերպով, որը հիմք կհանդիսանա բնության հետ ճիշտ հարաբերվելու, առողջ ապրելակերպի և էկոլոգիական մշակույթի ձևավորման համար և հնարավորություն կտա ակտիվ մասնակցելու շրջակա միջավայրի ու կայուն զարգացման որոշումների կայացմանը:

Էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների, ունակությունների ու հմտությունների ստացման և յուրացման ընթացքն է ու արդյունքը, որը նպատակաուղղված ձևով կազմակերպվում և հետևողականորեն իրականացվում է կրթական, գիտակրթական ու դաստիարակչական հաստատություններում կամ ինքնուրույն: Էկոլոգիական կրթության ոլորտում պետական

քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝ քաղաքացու՝ էկոլոգիական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ստանալու պետական երաշխիքի ապահովումը, էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը, էկոլոգիական կրթության հարցերի ընդգրկումը էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում, էկոլոգիական կրթության ուղղվածությունը շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում [9]:

Էկոլոգիական կրթության համակարգը ՀՀ միասնական կրթական համակարգի բաղադրիչ է: Այն պետական կրթական չափորոշիչների, կրթական հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակների և ուղղվածության կրթական ծրագրերի, դասընթացների, ուսումնական հաստատությունների ու կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է [9]:

Ներկայումս կրթության ոլորտը գտնվում է բարեփոխումների փուլում: Բարեփոխման փաթեթն իր մեջ ընդգրկում է նաև բնապահպանական հարցեր, որոնցից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Շրջակա միջավայրի որակի բարելավման կարևոր միջոցներից է կրթադաստիարակչականը. 1) բնապահպանական գիտելիքների տարածումը և բնակչության էկոլոգիական մշակույթի բարձրացումը, 2)բնապահպանության գծով որակյալ մասնագետների պատրաստում:

Բնապահպանական կրթության գլխավոր խնդիրը շրջակա միջավայրի բնապահպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Իրազեկության տեսանկյունից թիրախային խմբերը բազմազան են: Սակայն, դրանցից ամենակարևոր խմբերից են երեխաները, քանի որ նրանք են հանդիսանում երկրի ապագան կերտողները: Բնապահպանական տարբեր թեմաներին անդրադառնալու միջավայր են հանդիսանում տարրական և միջնակարգ դպրոցները, ինչպես նաև էկոակումբները:

Բնապահպանական կրթությունը հիմնվում է ,զգացմունք-փորձառություն-գործողությունն շղթայի վրա: Այլ կերպ ասած, անձնական վերաբերմունքը և գիտակցությունը հանգեցնում են վարքագծի փոփոխության, որը ձեռք են բերում անձնական փորձի միջոցով: Իսկ փորձը սովորեցնել հնարավոր չէ: Հետևաբար, բնապահպանական կրթության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում փորձառական կրթությունը: Ներքուստ յուրաքանչյուր գործընթացին մեծապես նպաստում են ոչ միայն մտքի և հոգու, այլ անձամբ գործելու միջոցով: Այդ պատճառով, բնապահպանական կրթության և փորձառական կրթության զուգակցումը դպրոցում բնապահպանական գիտակցության ձևավորման ամենաարդյունավետ եղանակն է:

ԲԿ-ն ուսումնական մյուս առարկաների նման դասավանդվում է առարկայակենտրոն մոտեցմամբ, այսինքն՝ դասավանդման նպատակն է գիտելիքների փոխանցումը: Սակայն, անհատի և հասարակության կրած փոփոխությունները նոր մոտեցումների պատճառ դարձան: Ճիշտ է, այսօր դեռևս բնապահպանության դասերի ընթացքում ուսուցիչներն են ուղղորդում աշակերտներին, սակայն անհրաժեշտ ենք համարում դասերը դարձել ավելի գործնական, դասերի ընթացքում կիրառել ուսուցման նորանոր մոտեցումներ ու եղանակներ՝ ընդհուպ մինչև դպրոցից դուրս (անմիջապես բնության գրկում) անցկացվող պարապմունքների կազմակերպում:

Նոր արդյունավետ մեթոդների օգնությամբ ուսուցիչն աշակերտներին կարող է ներգրավել այնպիսի աշխատանքների մեջ, որտեղ նրանք կարող են կիրառել դասերի ընթացքում իրենց ձեռք բերած գիտելիքները: Կարող են, նույնիսկ, գտնել հնարավոր լուծումներ, իրականացնել նախագծեր:

Բնապահպանության դասերը բազմաբովանդակ են. դրանք կարող են տարբեր ուղղվածություն ունենալ, ընդգրկել տարբեր բնագավառներ: Այսպես, հաճախ է պատահում, որ բնապահպանության դասերն իրենց մեջ ներառում են այլ գիտությունների (ինչպես բնական, այնպես էլ հասարակական) թեմաներ: Ուստի, անհրաժեշտ ենք համարում այս դասընթացի ընթացքում աշակերտների մոտ

արմատավորել ու զարգացնել միջառարկայական դաստիարակությունը: Դրանք ևս կարող են նպաստել հիմնախնդիրներն ըմբռնելու ունակության զարգացմանը, վերլուծելու քաղաքական ու տնտեսական խնդիրները, որոնք իրենց հերթին կարող են ազդել և նպաստել բնապահպանական հիմնահարցերի վրա:

ԲԿ-ի մեջ շատ կարևոր է տարբեր թեստային աշխատանքների, խաղերի և գործնական աշխատանքների կիրառումը: Առանձնապես խաղերը մեծ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների շրջանակներում: Ստեղծագործական ու արհեստագործական մոտեցումների (օրինակ, թափոններից պետքական իրերի պատրաստում), խաղերի, մրցույթների, ուրախ նախագծերի օգնությամբ երեխաներին կարելի է ընդգրկել բնապահպանական տարբեր միջոցառումների մեջ, որոնք վերաբերում են կոնկրետ հենց իրենց դպրոցին, բակին, համայնքին: Այդ դեպքում աշակերտներն իրենց ավելի վստահ կզգան, որպես հասարակության կարևոր անդամների: Ուստի, չափազանց կարևոր ենք համարում նմանատիպ և բազմաբովանդակ աշխատանքների իրականացում հանրապետության մյուս դպրոցներում:

Որպես ԲԿ-ի արդյունավետ ուսուցման կարևոր մեթոդ համարում ենք դասարանային պարապմունքներին զուգահեռ կրթական միջոցառումների, ներառյալ էքսկուրսիաների, ճամբարների, դպրոցական խմբակների, շաբաթօրյակների, ծառատունկի և այլնի կազմակերպումը: Բարենպաստ եղանակին ուսուցիչը կարող է աշակերտների հետ ուսուցողական զբոսանք կատարել մոտակա գետ, լիճ, այգի, անտառ, գործարան կամ հանքավայր: Էքսկուրսիաների դերը կարևորվում է նրանով, որ աշակերտներն ամրապնդելով ստացած տեսական գիտելիքները՝ ձեռք են բերում նաև գործնական կարողություններ և հմտություններ:

Բնապահպանական կրթության և դաստիարակության ուսուցման անբաժանելի մաս ենք համարում գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպումը: Գործնական աշխատանքների արդյունքում աշակերտները կարողանում են կիրառել տեսական գիտելիքները, ուղիղ կապ են տեսնում հայրենի բնության գեղեցկության և տեսական տեղեկատվության միջև, դրսևորում են բնապահպանական խնդիրներ լուծելու կարողություններ ու ունակություններ, ձեռք բերած փորձը կարողանում են կիրառել իրենց գյուղում, քաղաքում, բակում:

ԲԿ-ի դասավանդման ընթացքում շատ կարևոր է նաև բնապահպանական բառապաշարի ձեռքբերումը: Աշակերտները ուսումնառության ընթացքում հանդիպում են բազմաթիվ առանցքային հասկացությունների (բնապահպանում և բնօգտագործում, էկոհամակարգ, էկոլոգիական ճգնաժամ, էկոլոգիական քաղաքականություն, բնական միջավայրի դեգրադացիա, թափոն և այլն), որոնք անհրաժեշտ է նշել տերմինների բառարանում: Կարևոր է նաև աշակերտների կողմից դրանց գիտակցումը և կիրառումը առօրյայում:

Դասավանդման ընթացքում, կիրառելով ԲԿ-ի ռազմավարությունները, աշակերտների վրա ազդեցությունը կարելի է դարձնել տևական ու շարունակական: Ընդլայնելով երեխաների մտահորիզոնը հայրենի երկրի բնապահպանական ժառանգության վերաբերյալ՝ ուսուցիչը կարող է օգնել նրանց ուսումնասիրել բնաշխարհը, իմանալ իրենց, որպես քաղաքացիների, բնապահպանական իրավունքները, կոնկրետ քայլեր ձեռնարկել, կամք հաղորդել նրանց և վստահություն, որ իրենք կարող են ինչ-որ բան փոխել իրենց շրջապատում:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշակի քայլեր ձեռնարկել բնապահպանական կազմակերպությունների ու կենտրոնների ստեղծման ուղղությամբ, որոնց աշխատանքների իրականացմանը պետք է անմիջական մասնակցություն ունենան հասարակության լայն խավերը, այդ թվում նաև ուսուցիչներն ու աշակարտները: Նշենք, որ հանրապետությունում ստեղծվել են նման կազմակերպություններ ու կենտրոններ, որոնց թիվը դեռևս սահմանափակ է:

Այսպես, 1990-ականներին հիմնադրվել է «Էյ Թի ՓԻ» ԲՀ-ն («Հայաստան ծառատունկ» ծրագիր) բնապահպանական կազմակերպությունը, որն իրականացնում է ծառատունկ Հայաստանում [10]: 2005-ից այն իրականացնում է ծառատունկ Հայաստանի բոլոր մարզերում: Բացի ծառատունկից, այդ ծրագրի մյուս հիմնական ուղղություններն են՝ բնապահպանական կրթությունը և կայուն զարգացման նախաձեռնությունները: Կազմակերպության բնապահպանական կրթություն ծրագրի նպատակն է՝ երիտասարդների ներգրավումը բնապահպանական հիմնախնդիրներին, «կանաչ» մտածելակերպի կերտումը, սեփական բնության ժառանգության գնահատումը, բնապահպապանական մտածողությամբ օժտված նոր սերնդի զարգացումը, առողջ և կայուն շրջակա միջավայր ունենալու անհրաժեշտության գիտակցումը: «Էյ Թի Փի» -ի անձնակազմը կազմակերպում է նաև վերապատրաստման դասընթացներ ՀՀ դպրոցների ուսուցիչների համար՝ օգտագործելով «Միտք սերմանիր, ծառ տնկիր» ուսուցչի ձեռնարկը:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների ու առաջարկությունների.

- բնապահպանական կրթությունը դինամիկ, շարունակական և զարգացող գործընթաց է, որը պետք է ունենա ինտենգրված մոտեցում,

- բնապահպանական և էկոլոգիական կրթադաստիարակությունը դարձնել դասավանդվող բոլոր առարկաների խնդիրները,

- բնապահպանական կրթությունը բնապահպանական հիմնախնդիրների գնահատման և լուծման, բնակչության անվտանգության ապահովման, կյանքի որակի բարձրացման, հանուն կայուն զարգացման գործիք է,

- բնապահպանական կրթադաստիարակության դերի ուժեղացում ՀՀ կրթական համակարգում;

- բնապահպանական մտածելակերպի ձևավորում,

- բնապահպանական կրթադաստիարակության ժամանակակից սկզբունքների և մոտեցումների ներդրում,

- բնապահպանական կրթադաստիարակության և իրազեկման համակարգի օրենսդրական հիմքերի ու ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործում և փոփոխությունների ապահովում;

- բնապահպանական կրթադաստիարակության չափորոշիչների մշակում և հաստատում՝ պահպանելով կրթական բոլոր մակարդակներում իրականացվող բարեփոխումների, միջազգային կրթական ստանդարտների հետ ներդաշնակությունը,

- բնապահպանական կրթության նոր մեթոդաբանության մշակում՝ հաշվի առնելով ավանդական և ժամանակակից մեթոդներն ու միջազգային փորձը,

- բնակչության բնապահպանական իրազեկության բարձրացում՝ բնապահպանական գիտելիքների տարածմամբ,

- բնապահպանական գիտելիքների ձեռքբերման ծրագրերի մշակում և հնարավորությունների ստեղծում;

- բնապահպանական տեղեկատվության մատչելիության և տարածման արդիական միջոցների օգտագործման ապահովում,

- վերապատրաստման ծրագրերի մշակում ու ներդրում, դասընթացների պարբերաբար կազմակերպում, մասնագետների որակավորման բարձրացում,

- բնապահպանական ՀԿ–ի ստեղծման և ազգային ու տեղական էկոլոգիական խնդիրների լուծ-ման աջակցում,

- բնապահպանական տեղական կենտրոնների, տարածաշրջանային ուսումնամեթոդական

կենտրոնի ստեղծում,

- հասարակության լայն խավերի, այդ թվում աշակերտների, ներգրավում տեղական բնապահպանական միջոցառումներին և խնդիրների լուծմանը,

- միջազգային գիտակրթական համագործակցության իրականացում և ապահովվում, միջգերատեսչական համագործակցության ուժեղացում:

ОРГАНИЗАЦИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ И ОБРАЗОВАНИЯ В СРЕДНИХ ШКОЛАХ РА

Маргарян В.Г., к.г.н., доцент, ЕГУ

Маргарян М.Р., преподаватель школы № 12, г.Раздан,

В работе выявлены, подняты и обсуждены вопросы экологического воспитания и образования, современные проблемы организации образования в средних школах Армении, разработаны пути, способствующие развитию в этой области.

NATURE PROTECTION TRAINING AND ORGANIZATION OF EDUCATION IN SECONDARY SCHOOLS OF ARMENIA

Margaryan V.G., PhD, Associate Professor, YSU

Margaryan M.R., Hrazdan sity, school № 12,

In the work are discussed and clarified tasks about statement and training of nature protection education, about modern problems and organization of education in secondary schools of Armenia, are worked out the ways of support of development of sphere.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 17 դեկտեմբերի 2001թ., ՀՕ-264:

2. Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1551-Ն որոշումը, - Ե., 2010:

3. Գասպարյան Ա., Պողոսյան Գ., Մարգարյան Ն. Էկոլոգիական կրթության հիմնախնդիրների լուծումը և ռազմավորությունների կատարելագործումը կայուն զարգացման համատեքստում: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում: Միջազգային գիտաժողովի նյութեր: 20-21 նոյեմբեր, 2008, Ե., 2008: - էջ 113: ISBN 978-99941-2-250-9:

4. Ջիրոյան Ա. Հայաստանի բնապահպանական հիմնախնդիրները կայուն զարգացման հեռանկարում: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում: Միջազգային գիտաժողովի նյութեր, 20-21 նոյեմբեր, 2008, Ե., - 2008, էջ 13-14: ISBN 978-99941-2-250-9:

5. Կարապետյան Մ., Էկոլոգիական դաստիարակությունը որպես հասարակության կայուն զարգացման երաշխիք: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում, Եր., 2008, էջ 115: ISBN 978-99941-2-250-9:

6. Մելքումյան Լ.Ս., Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ (ուսումնական ձեռնարկ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար): - Ե., 2009, 93 էջ:

7. Պետրոսյան Ռ., Էկոլոգիական կրթության ռազմավարական ուղղվածությունը Հայաստանի Հանրապետությունում: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում, Ե., 2008, էջ 118: ISBN 978-99941-2-250-9:

8. Սահակյան Դ., Ղուկասյան Է., Հայրապետյան Ա. Բնապահպանական կրթության և հանրային իրազեկման խնդիրները Հայաստանում: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում: - Ե. 2008: էջ 120: ISBN 978-99941-2-250-9:

9. http://hy.wikipedia.org/wiki/Էկոլոգիական_կրթություն

10. www.econews.am/hy/?p=3712

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր: Բնօգտագործում, բնապահպանություն, ռեսուրս, պաշար, հումք, տնտեսություն, արտադրություն, արդյունավետություն:

Էկոլոգիական ենթահամակարգն, ըստ էության, շրջակա բնական միջավայրն է, որից արտահանվող բնական ռեսուրսները համարվում են ձեռնարկությունների արտադրական գործունեության անհրաժեշտ պայմանը: Իր հերթին, տնտեսական ենթահամակարգը բնական և արտադրական ռեսուրսների մուտքային նյութաէներգետիկ հոսքերի մի մասը վերափոխում է սպառման առարկաների ելքային հոսքերի, այսինքն, պատրաստի արտադրանքի: Իսկ բնական ռեսուրսների հիմնական մասը նորից վերադարձվում է էկոլոգիական ենթահամակարգ, սակայն արդեն ձևափոխված ձևով՝ շրջակա միջավայրն աղտոտող տարատեսակ թափոնների տեսքով:

Ժամանակակից արտադրության մեջ գնալով մեծանում է էկոլոգիական գործոնի դերը, որը որոշ դեպքերում հանդես է գալիս արտադրությանը խթանող, իսկ որոշ դեպքերում էլ՝ արտադրությունը սահմանափակողի դերում, երբ այն բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի վրա:

Արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ է ունենալ որոշակի ռեսուրսներ, որոնց մեջ առանձնանում են [1].

1. «բնական ռեսուրսներ» ՝ բնական բարիքներ, որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների արտադրության ժամանակ,
2. « մարդկային ռեսուրսներ » ՝ աշխատողների ֆիզիկական և մտավոր հնարավորությունները,
3. « կապիտալ ռեսուրսներ » ՝ շենքերը, շինությունները, մեքենաները, սարքավորումները, ինչպես նաև այն փողը, որը ծախսվում է դրանց ձեռք բերման համար,
4. «ձեռնարկատիրական ռեսուրսներ» ՝ եկամտաբեր արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ գործարանների կառավարչական գիտելիքները:

Արտադրության յուրաքանչյուր գործոն ընդունակ է իր սեփականատիրոջն ապահովել եկամտի որոշակի տեսակով: Եթե ռեսուրսի սահմանային արտադրողականությունը համեմատենք դրա շուկայական գնի հետ, ապա պարզ կդառնա, թե ինչքանով է նպատակահարմար լրացուցիչ ծախսեր կատարելը: Արտադրության արդյունավետ կառուցվածքը պետք է ստեղծել՝ հաշվի առնելով արտադրական բոլոր գործոնների փոխներգործությունը և համատեղելիությունը: Այսպես, եթե չի ապահովվում տեխնիկական առաջադիմության համաչափությունը, ապա աշխատանքի միավորի յուրաքանչյուր լրացուցիչ ծախսը դառնում է պակաս արդյունավետ: Տեղի է ունենում աշխատանքի

արտադրողականության և սահմանային արդյունքի իջեցում: Հետևաբար, բոլոր արտադրական գործոնների օգտագործման առավելագույն տարբերակը կախված կլինի դրանցից յուրաքանչյուրի սահմանային արտադրողականությունից:

Արտադրության, «տնտեսական» կազմակերպումը ծագում է այն ժամանակ, երբ ծախսերի և արդյունքների միջև առաջանում է արտադրությունը կարգավորող հակադարձ կախվածություն, որը պահանջում է պարտադիր կերպով համադրել ստացված արդյունքները կատարված ծախսերի հետ: Տնտեսապես արդյունավետ է այն արտադրությունը, որտեղ առավելագույն արդյունքի ձեռք բերումն ապահովվում է սահմանափակ ռեսուրսների պայմաններում՝ սահմանափակ ծախսերով [3]:

Արդյունավետության տեսությունն ունի իր հաշվարկման մեթոդները՝ ծախսերի փոփոխման և արդյունքների գործառնական համակարգման ասպարեզում, հատկապես արդյունաբերության և դրա առանձին հատվածների գնահատման ժամանակ: Ծախսերի տեսակներից և ստացված արդյունքներից ելնելով, դրանք համեմատվում կամ ուղղակի գնահատվում են: Եթե համեմատման տարբերակներ չկան, ապա չափանիշների ժամանակ կիրառվում են ուղղակի կամ անուղղակի արդյունքներ: Օգտագործվող արդյունավետության ցանկացած ցուցանիշ արտացոլում է արտադրության մեջ իրականացվող փոփոխությունները:

Այլընտրանքային մեթոդներն արդյունաբերության տարբեր մակարդակներում նույն ռեսուրսի օգտագործման ժամանակ տալիս են որակական ոչ նույնատիպ արդյունքներ: Ծախսերի արդյունքը չի կարելի արտահայտել մեկ թվով, քանի որ գոյություն ունի ցանկալի և նյութական արդյունքների զուգակցում: Բարդությունը պայմանավորված է նաև արտադրության տարբեր բնագավառներում կատարվող ծախսերի ժամանակ առկա ուղիղ և հակադարձ ազդեցություններով: Ինչպես նաև, արտադրության և բնական ռեսուրսների օգտագործման ժամանակ դրամական ծախսերը չեն համարվում համընդհանուր ծախսերի հիմնավոր արտացոլանքը:

Այսպիսով, արդյունավետության որակական գնահատականները բնօգտագործման գործընթացում չեն կարող տալ հստակ տեղեկատվություն հետագա որոշումների կայացման համար, բայց կարող են հանդիսանալ առաջնային նյութեր՝ վերլուծություններ կատարելու համար:

Ժամանակակից արտադրությամբ պայմանավորված՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը լուծում է հումքի բնական աղբյուրների պահպանման խնդիրը: Բացի այդ, հատուկ նշանակություն ունի նաև նյութական ռեսուրսների օգտագործման բարելավումը, որի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ արդյունաբերությունում արտադրական ընթացիկ ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում նյութական ծախսերը: Հետևաբար ռեսուրսների ծախսի չափորոշման ,տեխնիկապես հիմնավորված չափորոշիչներըե համարվել են առավել իրատեսական [2]:

Տիրապետող է դարձել ամբողջական տեխնոլոգիայով արտադրական ձեռնարկություններում ռեսուրսների օգտագործման մեթոդի ընտրությունը և դրա գործնական կիրառումը, որը ռեսուրսների օգտագործման բարելավման ժամանակակից մոտեցումների հիման վրա գնահատման առավել հեռանկարային զարգացման ուղիների ու սկզբունքերի որոշումն է, ինչպես նաև դրանց կառավարման համակարգի կազմակերպան խնդիրների հետազոտումը: Դրանց բնորոշ են նաև արտադրության աճող մասշտաբները, գիտատեխնիկական հեղափոխության արագ տեմպերը, տնտեսության կառուցվածքի բարելավումը և այլն: Այդ ամենը նպաստավոր պայմաններ են ստեղծում հասարակության կենսամակարդակի բարձրացման համար: Հետևաբար խիստ կարևոր նշանակություն է ստանում երկրի աճող արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրը: Արտադրության մասշտաբների ավելացման հետ մեկտեղ մեծանում են նաև արտադրական կորուստների բացարձակ չափերը,

յուրաքանչյուր կորուստ դառնում է ավելի շոշափելի: Բացի այդ ավելի կարևոր է այն, որ գնալով նվազում են բնական ռեսուրսների պաշարները:

Ներկայումս «հասարակություն-բնություն-տնտեսություն» հարաբերությունների համակարգում առաջացել են համակարգային խնդիրներ: Անշուշտ, այստեղ սոցիալական գործոնը մեծ դեր է խաղում, այն որոշում է դրանց դրսևորման բնույթը, զարգացման ընթացքը, և իհարկե նաև դրանց որոշման ձևերն ու եղանակները: Այնուամենայնիվ առաջացող համամոլորակային խնդիրը նախ և առաջ կախված է իրականում գոյություն ունեցող արտադրության ընթացքից, որը ենթադրում է նյութերի և էներգիայի մշտական փոփոխություն մարդու և բնության միջև:

Ինչ վերաբերվում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրներին՝ ներառյալ էներգետիկ, հումքային և պարենամթերքի, շրջակա միջավայրի պաշտպանության, ապա դրանց լուծումն անմիջականորեն կապված է տնտեսության հարցերի հետ: Ավելի քիչ էներգատար, նյութատար, ջրախնայող և այլ առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը համամոլորակային խնդիրների լուծման կարևորագույն ուղղություններից մեկն է, հատկապես այդպիսի տեխնոլոգիական որոշումներն առավել տնտեսող են հասարակական տեսանկյունից:

Անցումը վերարտադրության ինտենսիվ տիպին նշանակում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց հետևանքով արտադրության աճն առաջանում է օգտագործվող ռեսուրսների ընդհանուր ծավալի մեծացմամբ, բարձրանում է արդյունքների աճի բաժինն ի հաշիվ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման, և վերջապես այդ բաժինը դառնում է գերակշռող: Այլ կերպ ասած, ինտենսիվացման գործընթացը նշանակում է հետագա տնտեսական աճի ապահովում որակի բարելավման և ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ճանապարհով, բայց ոչ դրանց ծավալների ավելացման:

Ընդ որում, կարևոր է նշել, որ արտադրության ինտենսիվացումը պետք է բերի ռեսուրսների օգտագործման գումարային արդյունավետության բարձրացման: Ինտենսիվացման ժամանակ տեսականորեն հնարավոր են տնտեսական աճն ապահովող հարաբերությունների տարբերակներ՝ ռեսուրսների օգտագործվող ծավալների մեծացման և դրանց արդյունավետության բարձրացման միջոցով:

Նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ռազմավարության ծանրության կենտրոնը հանդիսանում է տեխնիկական և տեխնոլոգիական նոր գաղափարների մարմնավորումը, մասնավորապես սակավաթափոն և անթափոն ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառումն արտադրության բոլոր փուլերում՝ սկսած հումքի ձեռք բերումից մինչև վերջնական արտադրանքի թողարկումը: Երկրորդային նյութական ռեսուրսների օգտագործումը և առաջնային ռեսուրսների խնայողաբար օգտագործումը կարող են զգալիորեն սահմանափակել պահանջմունքները, երկարացնել գոյություն ունեցող բնական ռեսուրսների պաշարների օգտագործման ժամկետները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը: Արդյունաբերությունում նյութական ծախսումների տեսակարար կշիռն արտադրական ընթացիկ ծախսումների մեջ կազմում է ավելի քան 80% և ունի աճի միտում [2]:

Արդյունաբերության մի շարք ճյուղերում մեծ ուշադրություն է դարձվում երկրորդային նյութերի օգտագործմանը: Երկրորդային նյութական ռեսուրսներ են՝

- արդյունահանող արդյունաբերության ուղեկցող նյութերը և թափոնները,
- մշակող ճյուղերի թափոնները,
- ծառայության ժամկետն անցած ոչ պիտանի արտադրական և ոչ արտադրական սպառման արտադրանքները:

Ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նպատակով դրանք նորմավորվում են, այսինքը քանակապես որոշվում են յուրաքանչյուր արտադրատեսակի միվորի արտադրության համար պահանջվող հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, վառելիքի ծախսի նորմաները: Ժամանակին մշակվող հումքի և նյութական ծախսի առաջադիմական նորմաները՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում մեծ դեր են խաղում: Ամենամեծ արդյունքը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ ապահովվում է ռեսուրսների համալիր օգտագործումը, այսինքն՝ դրանցից բոլոր արժեքավոր բաղադրիչների և ուղեկցող տարրերի կորզումը: Ռեսուրսների համալիր օգտագործման կարևորությունը տնտեսության համար առաջին հերթին կայանում է դրանում, որ այն հավասար է արտադրության ոլորտ հումքի նոր տեսակների նեգրավմանը: Առաջադիմական տեխնոլոգիայի կիրառումը նյութական ռեսուրսների տնտեսման նշանակալի պաշարներից մեկն է:

Երկրորդային նյութական ռեսուրսների օգտագործումը և առաջնային ռեսուրսների խնայողաբար օգտագործումը կարող են զգալիորեն սահմանափակել դրանց նկատմամբ պահանջմունքները, երկարացնել գոյություն ունեցող բնական ռեսուրսների պաշարների օգտագործման ժամկետները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը:

Արդյունավետության ընդհանուր գումարը որոշվում է ինչպես տարեկան դրամական արդյունքի ծախսերի՝ այդ թվում ընթացիկ, այնպես և կապիտալ, տարեկան ամորտիզացիոն ծախսերի, կիրառվող զեղջերի, այլընտրանքային մեթոդների և այլ չափորոշիչներով [3]: Այլընտրանքային մեթոդների, նախագծերից կիրառվում է այն առաջնայինը, որը տալիս է առավելագույն գումարային արդյունավետություն, իսկ զեղջերի չափերն օգտագործվում են որպես չափանիշներ: Գործնականում եղել են դեպքեր, երբ նախագծերի իրացման արդյունքները հնարավոր չեն եղել արտահայտել դրամական արժեքով: Այդ ժամանակ հաշվի են առնվել օգտագործվող զեղջերի նվազագույն տարբերակները: Եթե համեմատում ենք երկու այլընտրանքային տարբերակներ, որոնցից մեկում, ավելի շատ է կապիտալ ներդրումները, քան ընթացիկ ծախսերը, ապա այն համարվում է արդյունավետ և նպատակաուղղված:

Արտասահմանյան ընկերությունների կառավարման փորձում մեծ ճանաչում ձեռք բերեց դրամական հոսքի զեղջային համակարգի և դրա հետ կապված փոփոխությունների օգտագործումը: Օրինակ, երկարաժամկետ հուսալիության ապահովում այլընտրանքային մեթոդների ժամանակ [3]: Այլընտրանքային մեթոդների կիրառման արդյունավետությունը կայանում է դրանում, որ հուսալի է դարձնում անկանխատեսելի փոփոխությունները, բնութագրվող ծախսերը, ստացվող արդյունքերը՝ աշխատանքների, ծառայությունների իրացման գործընթացում: Գոյություն ունեն տնտեսագիտական վերլուծությունների երկու տարբեր մոտեցումներ՝ պոզիտիվ և նորմատիվ, որոնք վերաբերվում են տնտեսական համակարգին և շրջակա միջավայրին: Պոզիտիվ տնտեսությունը նկարագրում է այն ինչ կա, և ինչ կարող է լինել: Պոզիտիվ տնտեսությունը վերլուծում է նոր արտադրական գործընթացները, հատկապես, եթե դրանք արդյունավետ տարբերակներն են: Իսկ նորմատիվ տնտեսությունը հակառակը, գործ ունի դրա հետ, որը պետք է լինի: Նորմատիվ մոտեցման էությունը կայանում է նրանում, որ առավելագույնի հասցվեն արժեքային տարրերը: Պոզիտիվ տնտեսության հիմքում ընկած է որակական վերլուծությունը, իսկ նորմատիվի ժամանակ՝ գնահատման մեթոդները: Երկու մոտեցումներն էլ օգտագործելի են:

Բնական ռեսուրսների բաշխումն ապահովում են վիճակագրական արդյունավետության չափանիշները, եթե մաքուր հասույթը բնական ռեսուրսների օգտագործմամբ առավելագույնի են հասցվում հետևյալ բաշխվածությամբ՝ մաքուր հասույթը հավասար է ընդհանուր հասույթի և դրա ստացման հետ կապված ծախսերի տարբերությանը: Վիճակագրական արդյունավետության չափանիշները շատ կարևոր են ռեսուրսների բաշխվածության համեմատության համար, եթե

ժամանակը չի համարվում կարևոր պայման: Եվ ցանկացած որոշում այս պահին կարող է դրական ազդեցություն թողնել հետագա զարգացման և սերնդի լավ ապրելակերպի վրա: Հենց սա էլ կոչվում է դինամիկ արդյունավետություն: Այն ընդհանրացնում է վիճակագրական արդյունավետությունը: Սա էլ իր հերթին է նպաստում մաքուր եկամտի մեծացմանը, որոնք անդնհատ համեմատության մեջ են դրվում տարբեր տարիներից ստացված եկամուտների մեծության հետ:

Այսպիսով, դինամիկ արդյունավետությունն արտացոլում է այն համընդհանուր նպատակը, որը հաշվեկշռում է ընթացիկ և հետագա արդյուքները ռեսուրսների առավելագույն օգտագործման իրական գնահատականների ժամանակ, որի ընթացքում մեծանում է նաև մաքուր հասույթը: Պակասորդը բերում է այլընտրանքային ծախսերի իրականացմանը, որոնք էլ համարվում են նպատակային օգատակար ծախսեր:

Ժամանակակից գիտատեխնիկական մակարդակը թույլ չի տալիս արտադրության զարգացումից բացասական բնապահպանական հետևանքները վերացնել միայն այլընտրանքային տարբերակների կամ տեխնոլոգիաների հիման վրա: Մինչդեռ այդ խնդրի լուծման համար օգտագործվող ավանդական բնապահպանական մոտեցումները սակավ արդյունավետ են չափորոշիչային-իրավական բազայի անկատարության, իշխանության բնապահպանական մարմինների կառավարման, կազմակերպական կառուցվածքի բարեփոխման մասնակի և ոչ համալիր գործընթացի, տարբեր մակարդակի ղեկավարների կողմից բնապահպանական ծրագրերի ոչ արդյունավետ իրականացման պատճառով:

Ամբողջությամբ վերցված բնապահպանական մենեջմենթն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես շուկայական գործիք, որը նպաստում է արտադրության զարգացմանը և լրացուցիչ շահույթի ստացմանը, այլ նաև որպես ժամանակակից արդյունաբերական բնապահպանական մշակույթի դրսևորում:

Կազմակերպություններում բնապահպանական մենեջմենթի համակարգի ներդնումը թույլ կտա նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աստիճանը, բացահայտել ռեսուրսների տնտեսման, արտադրական շրջանառության մեջ թափոնների ներառման և արտադրանքի ինքնարժեքի նվազեցման ներուժը, ապահովել լավ համբավ, բանկերում ստանալ ավելի շահավետ վարկեր, կնքել ապահովագրության մասին պայմանագրեր ավելի շահավետ պայմաններով, այսինքն, լավացնել սեփական հնարավորությունները խիստ մրցակցության պայմաններում:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունները կանգնում են կարևոր հիմնա-խնդիրների առջև, որոնցից շատերը կապված են ձեռնարկության բնապահպանական քաղա-քականության հետ՝ շահույթի ստացման, թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացման, արտադրանքի որակի կատարելագործման, միջազգային չափանիշներին դրանց համապատաս-խանեցման և այլն: Տվյալ հարցերի լուծմանը կարող է օգնել անկախ բնապահպանական վերահսկողության անցկացումը:

Գրականություն

1. Бобров А.Л. Устойчивое развитие и экономика природопользования. М., 2002.
2. Гусев А.А. и др. Современные экономические проблемы природопользования. М., 2004.
3. Экономика природопользования на рубеже XXI века. М., 2003.

ПРОБЛЕМЫ ЭФФЕКТИВНОСТИ ПРИРОДОПОЛЬЗОВАНИЯ

Арутюнян Н., к.г.н., доцент, ЕГУ

Теория эффективности природопользования имеет своей целью разработку методов измерения затрат и результатов функционирования систем, и в частности, производства и его отдельных секторов. В зависимости от видов затрат и результатов они сопоставляются или просто оцениваются. Если нет вазможности сопоставления, то в качестве критерия используются косвенные или прямые эффекты.

THE EFFICIENCY OF THE NATURE USE

Harutyunyan N., PhD, Associate Professor, YSU

The theory of effective of the nature use aims to develop methods for measuring the costs and benefits of the operation of systems, and in particular the production and its selected sectors. Depending on the types of costs and the results they are compared or just evaluated. If there is no way of comparison, it is used as a criterion for direct or indirect effects.

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՄԱՍՐԻԿԻ ԳԵՏԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. *ջրային ռեսուրսներ, գետային հոսք, մոնիթորինգ, ջրօգտագործում, ջրամատակարարում, ջրահեռացում, պահպանում, կարգավորում, կառավարում, գետային հոսքի փոփոխության դինամիկա, հիմնախնդիր, կարգավորման ուղիներ:*

Մարդկությանը հուզող գլոբալ հիմնախնդիրներից է ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, որին լուրջ ուշադրություն են հատկացնում աշխարհի գրեթե բոլոր պետություններում: Ներկայումս երկրագնդի բնակչության զգալի մասն ունի որոշակի դժվարություններ՝ բավարարելու իր պահանջները կենսականորեն անհրաժեշտ այդ բնական ռեսուրսի նկատմամբ: Մյուս կողմից, մարդու գործունեության արդյունքում տեղի է ունենում ջրային ռեսուրսների աղտոտում:

Հետևաբար, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու պահպանումը չափազանց կարևոր, սակայն միաժամանակ բարդ խնդիր է: Կարևորությունը կայանում է նրանում, որ ջուրն օգտագործվում է տնտեսության բոլոր ոլորտներում, իսկ ջրի սպառման ծավալները տարեցտարի աճում են: Սակայն, ջրի պաշարները սահմանափակ են, և ոչ բոլոր շրջաններն են ապահովված տեղական ջրով, իսկ տեղափոխումը մի վայրից մյուսը կապված է հսկայական ծախսերի հետ:

Ցանկացած երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման հիմքում ընկած է ջրօգտագործող ոլորտների զարգացումը: Ջրօգտագործող այս կամ այն ոլորտի զարգացմամբ կարող է մեծանալ նրա ջրապահանջը, որը սահմանափակ ջրային ռեսուրսների դեպքում կարող է ուղղակիորեն ազդել դրանց զարգացման վրա: Այս հարցի համակարգումը մտնում է ջրային ռեսուրսների կառավարման և պլանավորման կամ գործնական կարգավորման գործառույթների մեջ:

Այդ պատճառով, ներկայումս ամբողջ աշխարհում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում, կարևորվում է ջրային ռեսուրսների արդունավետ օգտագործման և ջրամատակարարման, պահպանման և կառավարման, ջրի որակի բարձրացման հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները:

Ուստի, աշխատանքի նպատակն է վերհանել և գնահատել ուսումնասիրվող տարածքի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահմանման, կառավարման հիմնախնդիրները, մշակել

դրանց ճիշտ կազմակերպման և լուծման ուղիները: Այդ նպատակով աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ հիդրոլոգիական բնութագրերի մասին առկա մոնիթորինգային ինֆորմացիոն նյութերի հավաքագրում, ամփոփում և մշակում, ուսումնասիրվող տարածքի ջրային ռեսուրսների տարածաժամանակային բաշխման օրինաչափությունների գնահատում և վերլուծում, ջրային ռեսուրսների օգտագործման և պահմանման առկա հիմնախնդիրների վերծանում և պարզաբանում:

Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել համապատասխան ուսումնասիրությունները, մասնավորապես, ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանման հիմնախնդիրներին նվիրված աշխատությունները, այդ հիմնախնդիրներին առնչվող ՀՀ իրավական ակտերը:

Որպես մեթոդաբանական հիմք աշխատանքում օգտագործվել է՝ ինտեգրալ, համակարգային, էկոլոգիական, աշխարհագրական և տարածքային ուսումնասիրությունների սկզբունքները: Հետազոտության ընթացքում կիրառվել են՝ ընդհանուր գիտական, բնութագրման, իրավիճակային, համակարգային, վիճակագրական վերլուծությունների, մաթեմատիկական, համադրման, համեմատական վերլուծությունների մեթոդները և մեթոդական հնարները:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ՀՀ ՏԿԱԻՆ Հիդրոմետ ծառայության հիդրոլոգիական փաստացի դիտարկումների արդյունքները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, մարզային կառավարման համապատասխան մարմինների հաշվետվությունները, ՀՀ օրենսդրական և նորմատիվային ակտերը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ջրային տնտեսության, պետական կոմիտեի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ բնապահպանության նախարարության նյութերը, ինչպես նաև համացանցում առկա տվյալներն ու նյութերը:

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով:

Վերջին տասը տարիների ընթացքում ջրային պաշարների կառավարման և պահպանման ոլորտում Հայաստանի Հանրապետությունը հասել է օրենսդրական և ինստիտուցիոնալ զգալի նվաճումների, որոնք հիմնականում ուղղված էին երկրում ջրային պաշարների ինտեգրված կառավարման ներդրմանն ու կիրառմանը: Վերջինիս իրականացմանն օժանդակել են մի շարք միջազգային հաստատություններ՝ Համաշխարհային բանկը (ՀԲ/WB), Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը (ՄԱՄԶԳ/USAID), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ/UNDP), Շրջակա միջավայրի համաշխարհային հիմնադրամը (ՇՄՀՀ/GEF), Եվրոպական Միության (ԵՄ) տեխնիկական աջակցությունն ԱՊՀ երկրներին (ՏԱԱՊՀ/TACIS), ԵՄ Ջրային նախաձեռնությունը (ԵՄՋՆ/EUWI), Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական հանձնաժողովը Եվրոպայի երկրների համար (ՄԱՏՀԵ/UNECE):

Մասրիկը Սևանի ավազանի ամենամեծ ջրհավաք ավազանի մակերես (685 կմ^2) ունեցող գետն է: Գետի երկարությունը 45 կմ է, միջին թեքությունը՝ 27 ‰: Գետը սկիզբ է առնում 2880 մ բարձրությունից: Վերին հոսանքում գետահովիտը V-աձև է: Միջին և ստորին հոսանքներում գետն անցնում է Մասրիկի դաշտով, որտեղ բխում են խոշոր աղբյուրների (Խաչաղբյուրի, Ակունքի, Լուսակունքի և այլն) ջրեր: Ջրհավաք ավազանի հարավային և հարավարևմտյան մասերում (հիմնականում Մասրիկի հարթավայր) տարածված են արտեզյան ճնշումային ջրեր:

Գետային ցանցի խտությունը 0.85 կմ/կմ^2 է [11-12] (հանրապետության միջինը՝ մոտ 0,81 կմ/կմ^2):

Աղյ. 1-ում տրված է ուսումնասիրվող տարածքի գետերի ձևաչափական հիմնական բնութագրերը:

Աղյուսակ 1.

Մասրիկի գետավազանի գետերի ձևաչափական հիմնական բնութագրերը

Գետի անվանումը	Թափում է	Հեռավորությունը գետաբերանից, կմ	Երկ., կմ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ²	10 կմ-ից պակաս երկ. ունեցող գետերը	
					քանակը	ընդ. երկ.
Մասրիկ	Սևանա լիճ	-	45	685	20	36
Կոշաբուլաղ	Մասրիկ	33	13	59,4	24	40
Սոթք	Մասրիկ	18	20	204	19	42
Կութ	Սոթք	8,0	10	31,7	8	18
Ինագդաղ	Սոթք	5,0	13	25,2	14	22
Ազիզ	Սոթք	0,8	17	73,2	18	37
Նարիման	Ազիզ	0,5	10	27,6	5	14
Դարին	Մասրիկ	12	20	32,8	19	27
Սևջուր	Մասրիկ	12	14	49,8	16	22
Չանլի	Սևջուր	4,0	10	13,0	16	23
Դաշքենդ	Մասրիկ	7,7	18	47,8	3	6
Ակնաջուր	Մասրիկ	6,5	22	49,0	9	12
Լուսակունք	Ակնաջուր	5,5	16	89,0	5	3
Սուբատան	Լուսակունք	2,0	15	71,4	2	8
Սպիտակջուր	Լուսակունք	5,0	21	17,5	6	7

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման, ինչպես նաև քանակական և որակական գնահատման համար չափազանց կարևոր է ջրային և կլիմայական ռեսուրսների մոնիթորինգի անխափան իրականացումը: Ուսումնասիրվող տարածքում ջրաբանական ուսումնասիրություններ կատարվել են 20-րդ դարի 40-ական թվականներից սկսած: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող տարածքի գետերի վրա գործել են մոտ 8 ջրաչափական դիտակետեր: Դիտակետերից շատերն ունեն դիտարկումների կարճատև (5-10 տարի) շարք: Դիտարկումների համեմատաբար երկար շարք (1952-ից մինչև այժմ) ունի Մասրիկ գետի Ծովակ ջրաչափական դիտակետը: Վերջինս էլ մի քանի անգամ տեղափոխվել է: Սակայն, ուսումնասիրություններից պարզվել է, որ այդ տեղափոխություններն էական ազդեցություն չեն ունեցել հոսքի շարքի անընդհատության խախտման վրա: Ուստի, աշխատանքում գետային հոսքի ուսումնասիրությունները կատարվել են դիտակետի բացման օրվանից սկսած:



Նկար 2. Հոսքի տարեկան ընթացքը Մասրիկ գետի Ծովակ գետահատվածքում

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման կառավարման, կարգավորման և պլանավորման աշխատանքների համար անհրաժեշտ է հոսքի ներտարեկան, ինչպես նաև տարածական, բաշխման ու փոփոխության դինամիկայի իմացությունը: Հոսքի ներտարեկան բաշխման տակ հասկացվում է գետերում ջրի քանակի փոփոխություններն ըստ ամիսների (նկ. 2) և տարվա եղանակների: Հոսքի ներտարեկան բաշխումը որոշվում է ջրային հաշվեկշռի հիմնական բաղադրիչների տարեկան փոփոխություններով, որոնք լեռնային երկրներում ենթարկվում են վերընթաց գոտիականության օրենքին: Մեծ է նաև գետի ջրհավաք ավազանի մեծության, մակերեսի ձևաբանական կառուցվածքի, երկրաբանական կառուցվածքի, հողաբուսական ծածկույթի, լոկալ առանձնահատկությունների, անթրոպոգեն և այլ գործոնների ազդեցությունը: Ներկայումս զգալի է դարձել մարդու ազդեցությունը հոսքի ներտարեկան ռեժիմի վրա՝ կապված ջրային օբյեկտների հիմնական վիճակի խախտման հետ, որը հանգեցնում է հոսքի վերաբաշխման տարվա մեջ [17]:

Մասրիկի հոսքը հիմնականում ձևավորվում է 2400-2500 մ և ավելի բարձրություններից, որտեղ մթնոլորտային տեղումները գերազանցում են գումարային գոլորշացմանը:

Գետն աչքի է ընկնում իր բնական կարգավորվածությամբ [9]: Դա բացատրվում է գետի ստորերկրյա սնման (75-78 %) գերակշռությամբ [7, 11-12]: Նույնը չի կարելի ասել Մասրիկ գետի վերին աջակողմյան վտակների (Սոթք, Կութ և այլն) մասին: Վերջինները բնութագրվում են գարնանային հորդացումների ծավալի մեծ արժեքներով, ամառային ոչ մեծ ջրառատությամբ և ձմեռային սակավաջրությամբ:

Մասրիկ գետի գարնանային հորդացումների հոսքը ամառ-աշնանային և ձմեռային հոսքի համեմատ շատ ջրառատ չէ՝ պայմանավորված գետավազանի միջին և ստորին հոսանքների աղբյուրներով: Ամառ-աշնանային և ձմեռային սակավաջուր փուլերում գետը հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով: Առաջին դեպքում որոշակի է նաև անձրևաջրերի դերը: Գարնանամառային հորդացման շրջանում գետը սնվում է նաև հալոցքաանձրևային ջրերով: Այսպես, Մասրիկ գետի եզրափակիչ հատվածքով միջին հաշվով տարեկան անցնում է 3,37 մ^3/վ ջուր. գետի հոսքի տարեկան ծավալը կազմում է 106 մլն. մ^3: Ապրիլից հունիս ամիսների ընթացքում գետով անցնում է տարեկան հոսքի 36 %-ը, հուլիսից նոյեմբեր ամիսների ընթացքում՝ 36 %-ը, դեկտեմբերից մարտ ամիսներին՝ 28 %-ը:

Գարնանային հորդացումների ընթացքում գետի եզրափակիչ հատվածքով (գ. Մասրիկ - դ. Ծովակ) միջին հաշվով անցնում է տարեկան հոսքի 25-30 %-ը, ջրառատ (ձնառատ) տարիներին՝ 50-55 %-ը, իսկ ջրասակավ տարիներին՝ 7-10 %-ը: Հորդացումները դիտվում են մարտի երրորդ-ապրիլի առաջին տասնօրյակներից մինչև հունիսի երրորդ-հուլիսի առաջին տասնօրյակները (երբեմն մինչև հուլիսի կեսերը)՝ միջինը 80 օր տևողությամբ: Հաճախ գարնանային ջրառատ սեզոնի ընթացքում տարածաշրջանի գետերով անցնում են ջրի բացարձակ առավելագույն ելքերը: Հորդացումներից հետո գետն անցնում է ամառ-աշնանային և ձմեռային սակավաջրության տևական (մոտ 8-9 ամիս տևողությամբ) փուլերին: Նշենք, որ ի հաշիվ հեղուկ տեղումների, ուսումնասիրվող տարածքի գետերում ջրի մակարդակի երկրորդական բարձրացում նկատվում է սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին:

Ծովակի հատվածքում Մասրիկ գետի հանքայնացումը տարվա մեջ միջինը կազմում է 200-300 մգ/լ, գետաբերուկների ընդհանուր քանակը՝ 0.26 կգ/վ [11]:

Մասրիկ գետը ձմռան ընթացքում սովորաբար չի սառցակալվում: Այստեղ հաստատուն սառցածածկ կարող է ձևավորվել միայն շատ ցուրտ ձմեռներին: Սովորաբար դիտվում է ափասառույց: Երբեմն որոշ հատվածներում ձևավորվում է նաև սղին: Գետի ջրի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 7,3 ԵՀ, բացարձակ առավելագույնը՝ 26,8:

Մասրիկ գետն ունի նաև բավականաչափ մեծ քանակի հունատակ ջուր, որը հիմնականում բեռնաթափվում է Սևանա լճի մեջ:

Աշխատանքում, ուսումնասիրելով գետային հոսքի արժեքների փոփոխության դինամիկան, պարզվել է, որ Մասրիկի եզրափակիչ գետահատվածքում նկատվում է ջրի ելքի նվազման միտում տարվա կտրվածքով և սակավաջրության փուլերում: Իսկ տարվա ջրառատ սեզոնի ընթացքում հոսքի փոփոխության դինամիկան ունի աճման միտում: Այստեղ առաջանում է լուրջ խնդիր ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու պահպանման կարգավորման և կառավարման ճիշտ կազմակերպման տեսանկյունից: Ուստի, անհրաժեշտ է տարածաշրջանի բարձրադիր գոգավորություններում կուտակել ձնահալոցքային և անձրևային ջրերը, բարձրադիր գոտում կառուցել փոքր չափի ջրամբարներ և այնտեղ կամ առկա փոքր լճերում ամբարել ջրառատ սեզոնի հոսքը՝ սակավաջրության փուլում այն օգտագործելու նպատակով: Չնայած, որ այդ ջրերը լցվում են Սևանա լիճ:

2001-ից սկսած ՀՀ կառավարությունն իրականացրել է ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման ոլորտի ավելի կոնկրետ և գործնական բարեփոխումներ: Այսպես, 2001թ. ստեղծվել է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն, իսկ 2002թ. ընդունվել է ՀՀ ջրային նոր օրենսգիրքը, ինչպես նաև ընդունվել են կառավարության մի շարք կարևոր որոշումներ ու հրահանգներ՝ ջրային տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու համար: Համաձայն օրենսգրքի՝ ջրային ռեսուրսների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի օգտագործման, վերականգնման և պահպանման տնտեսական կարգավորման հիմնական սկզբունքը ջրօգտագործման վճարելիությունն է: Ջրի համար գանձվող վարձավճարները կխթանեն ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, վերականգնումն ու պահպանումը:

Ջրային օրենսգիրքը ջրային ոլորտի հասկացությունները և հարաբերությունները սահմանող և կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթն է: Ջրային օրենսգիրքը կարգավորում է ջրային ռեսուրսների և համակարգերի պահպանման, օգտագործման, բախշման հետ կապված խնդիրները, ինչպես նաև սահմանում է մասնավոր հատվածի ներգրավման սկզբունքներն ու ձևերը: Ջրային օրենսգրքի խնդիրներն են՝ 1) ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը, 2) ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը, 3) ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, 4) ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը, 5) բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, 6) ջրամատակարարման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, 7) ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը [13]:

Նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ

ունենալով բարձրացնելու համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրը: Խմելու ջրի համակարգը կշարունակի մնալ պետական ներդրումային գերակայությունների շարքում: Համակարգում տարեկան ներդրումների մակարդակը կկազմի ՀՆԱ-ի 0,4 %-ը: Ջրահեռացման բնագավառում կարևորվում է նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի կոյուղացման համակարգի վերակառուցումը և հեռացվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը [6]:

Չնայած իրականացվող աշխատանքներին՝ ակտուալ խնդիրներից է մնում ջրի ոչ արդյունավետ օգտագործումը: Ջրային ռեսուրսների ոլորտում առավել սուր են ջրերի աղտոտման և բնակչությանը մաքուր ջրով ապահովելու խնդիրները: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է արդյունավետ քայլեր ձեռնարկել, մասնավորապես, ջրամաքրման կայաններ ստեղծելու միջոցով: Բնակավայրերում ջրի տնտեսման և մաքրման խնդրի լուծումներից մեկը պետք է դառնա պետական մակարդակով հատուկ ծրագրերի մշակումը՝ ջրային ռեսուրսների կառավարման որակը բարձրացնելու նպատակով [14]:

Այսպես, Մ. Մասրիկ համայնքում կառուցվել և շահագործման է հանձնվել՝ Շատջրեք-Մեծ Մասրիկ 10 կմ խմելու ջրատարը, որի շահագործմամբ համայնքը լրացուցիչ ստացել է 30 լ/վ խմելու որակյալ ջուր: Դրանով լուծվեց համայնքի բնակչության խմելու ջրի հիմախնդիրը: Համայնքում գործում է 12 խորքային հոր, Ակունք-Մեծ Մասրիկ ջրանցքը, որոնց շնորհիվ համայնքում ջրովի տարածքները կհասցվեն 1000 հա-ի [8]: Իսկ վերջինս հնարավորություն կտա համայնքը դարձնելու հացահատիկի իսկական շտեմարան: Ի տարբերություն Մ. Մասրիկ համայքի, դեռևս շատ բնակավայրերում լուծված չէ խմելու ջրի, ջրերի մաքրման, կոյուղացման, ինչպես նաև աղբահանության հարցերը: Այդ ուղղությամբ հատկապես բավական մեծ աշխատանքներ պետք է կատարվի նշված համայքին բավական մոտ և նման բնակլիմայական պայմաններ ունեցող Փ. Մասրիկ համայնքում, որտեղ դեռևս մինչև հիմա լուծված չէ խմելու ջրի հարցը:

Ուսումնասիրվող տարածքի գետերի ջրերը հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական հողահանդակների ոռոգման նպատակով: Ուսումնասիրվող տարածքում բացակայում են ջրամբարները: Նշենք, որ Սևանի լճավազանում կառուցված են ընդամենը մի քանի փոքր ջրամբարներ, այն էլ հիմնականում Գավառագետի ավազանում: Հետևաբար, ուսումնասիրվող տարածքի գետերի հոսքն ավելի շատ խախտվում է անմիջապես գետերից վերցվող ջրառների պատճառով: Արդյունքում նվազում է գետերի ամառային սակավաջուր փուլի հոսքը՝ խախտելով վեգետացիոն շրջանի ջրային հոսքի բնական ռեժիմը: Անհրաժեշտ է նշել, որ գետերից կատարվող ջրառի վերաբերյալ տվյալները բացակայում են, իսկ երբեմն էլ հավաստի չեն: Ուստի, եղած տվյալները բավարար չեն վտակների բնական հոսքը լրիվ կամ մեծ ճշտությամբ վերականգնելու համար:

Մարդու գործունեության արդյունքում տեղի է ունենում ջրային ռեսուրսների աղտոտում: Այդ պատճառով ներկայումս ամբողջ աշխարհում կարևորվում են ջրի որակի բարձրացման հետ կապված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև այն հիմնական կանխարգելիչ միջոցառումները, որոնք կիրառվում են այդ խնդրի լուծման համար: Այդ տեսանկյունից հատկապես առաջնային պետք է համարել առևտրային կազմակերպությունների կողմից ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական տեսակների բացահայտումը և դրանց մաքրման եղանակների

առավելությունների շարադրումը [3]:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման հիմնախնդրի լուծման համար ոչ միայն պետք է ուշադրություն դարձնել դրանց քանակական, այլ նաև որակական հատկությունների ուսումնասիրությունների վրա: Հանրապետության, ինչպես նաև տարածաշրջանի, գետերի ջրերի աղտոտումը հիմնականում կոմունալ-կենցաղային է, առանձին գետերում՝ նաև հանքաարդյունաբերական: Ի տարբերություն վերջինիս, կոմունալ-կենցաղային աղտոտվածությունը ժամանակավոր է և դարձելի:

Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ Բնապահպանության նախարարության 5-րդ դասի բաժանվող էկոլոգիական նորմերի ցանկում Մասրիկ գետի ջուրը, պայմանավորված ֆոսֆատ իոնով, որոշ հատվածներում էկոլոգիական նորմերով ամենացածր՝ 5-րդ դասի վատորակ ջուր ունի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Մասրիկ և Սոտք գետերն անցնում են Սոտքի ոսկու բաց հանքավայրի տարածքով: Արդյունքում Մասրիկ գետը թունավոր նյութերով և ծանր մետաղների խառնուրդով թափվում է Սևանա լիճ: Մյուս կողմից հանքավայրից քամին փոշին (որն իր մեջ պարունակում է բազմաթիվ տոքսիկ նյութեր և ծանր մետաղներ) քշում է Սևանա լճի ուղղությամբ: Վերջինս հատակային նստվածքի հետ կուտակվում է գետաբերանի հատվածի տիղմային շերտում: Դա ջրի վրա դեռ ուղղակի ազդեցություն չունի, սակայն հատակային նստվածքի վրա անմիջապես երևում է: Իսկ դա հանքարդյունավերության աղտոտում է: Ըստ ձկնաբանների, ձկներն ու խեցգետինները ծանր մետաղների կուտակիչներ են: Ուստի, հետևում է, որ Սևանից որսված ձուկը կարող է վնասել մարդու առողջությանը [18-19]:

Մասրիկ գետի գետաբերանի ջրերը, համաձայն Ռոմանենկոյի մակերևութային ջրերի որակի էկոլոգասանիտարական գնահատման, շատ մաքուրից չափավոր աղտոտված կարգի է, իսկ ակունքի ջրերը՝ շատ մաքուրից բավական մաքուր կարգի [16]:

Եթե ջրային ռեսուրսների որակը կամ ջրօգտագործումը վտանգ է սպառնում մարդկանց կյանքին կամ անվտանգությանը կամ, եթե աղտոտվում են ջրային ռեսուրսները, ապա այդ մասին տեղյակ յուրաքանչյուր անձ կարող է տվյալ իրավիճակի և դրա տեղանքի մասին ծանուցել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսներն աղտոտողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղյակ պահել Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին: Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն այս մասին անհապաղ տեղյակ է պահում հասարակությանը՝ երաշխավորելով վտանգի տակ գտնվող անձանց ռիսկի աստիճանը և տեղեկացնում հնարավոր հետևանքների մասին [13]:

Աշխատանքում որոշակիորեն շոշափվել են նաև ուսումնասիրվող տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման հարցերը: Սակայն, վերջինս ուսումնասիրության այլ խնդիր է և այն ավելի հանգամանալից կքննարկվի մեր հետագա ուսումնասիրութուններում:

ՀՀ-ում [10], այդ թվում նաև ուսումնասիրվող տարածքում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մեծ մասը գտնվում են ոչ միայն անբավարար տեխնիկական վիճակում, այլև բազմաթիվ տարածքներ դեռևս ապահովված չեն ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքներով [1-2, 4]: Որոշ գյուղական համայնքներում ջուրը դեռևս վերցվում է ընդհանուր ծորակներից կամ մատակարարվում է 3-4 օրը մեկ անգամ, իսկ շատերում էլ

ջուրը մատակարարվում է առանց ախտահանման, բացակայում են կոյուղաջրերի հեռացման կենտրոնացված համակարգերը: Ուսումնասիրվող տարածքի ջրամատակարարման համակարգի խնդիրները պայմանավորված են ոչ թե ջրի սակավությամբ, այլ ջրամատակարարման խողովակների քայքայվածությամբ և հնամաշությամբ, պահպանման ու վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությամբ, արտահոսքով և կորստով (հատկապես կոմերցիոն և խողովակների մաշվածությունից առաջացող կորուստներ), համայնքների ուշադրության պակասով և այլն:

Բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ և կենցաղային սպասարկման կարիքների համար հատկացվող ջուրը պետք է համապատասխանի խմելու ջրի ստանդարտներին:

Ուստի, համաձայն մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2012-15թթ. ծրագրի [5], ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի առաջնահերթություններից են՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգումը և տեղադրումը, խմելու ջրի ու ջրահեռացման աշխատանքների, մաքրման կայանների հիմնումը՝ առավելապես ուշադրության կիզակետում պահելով գետաբերաններին գտնվող և կեղտաջրերն անարգել լիճ թողնող լճի ափամերձ բնակավայրերը:

Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծի ՀՀ Կառավարության 2013թ. հուլիսի 18-ի N 746-Ն որոշման մեջ մարզի ջրահեռացման համակարգի վիճակն անբավարար է գնահատված [21]:

Տարածաշրջանի բնակավայրերից կեղտաջրերն առանց մաքրման և վարակազերծման Մասրիկ գետով թափվում են Սևանա լիճ: Դա էլ է լուրջ խնդիր Սևանա լճի համար: Մասրիկ գետն աղտոտվում է ոչ միայն կոյուղու և հորերի կեղտաջրերով, այլ նաև Սոթքի ոսկու կոմբինատի և այլ օբյեկտներից հոսող կեղտաջրերով:

Կոյուղացման խնդիրը, ոչ լրիվ ծավալով, լուծված է միայն Վարդենիս քաղաքում: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող ,Սևանա լճի բնապահպանական ծրագրիե շրջանակներում շահագործման է հանձնվել Վարդենիս քաղաքի կեղտաջրերի մաքրման կայանները: Ընդ որում, կառուցված մաքրման կայանները մեխանիկական են և ոչ քիմիական: Կոյուղին լցվում է մաքրման կայան, կոշտ մասերը հանվում են, իսկ մնացածը լցվում է լիճ. քիմիական մաքրում չի կատարվում:

Տարածաշրջանում լուծված չէ նաև աղբավայրերի խնդիրը: Այսպես մարզի 92 համայնքներից միայն 27-ն ունի աղբավայր, որոնցից 2-ը գտնվում է Վարդենիսի տարածաշրջանում [15, 20]:

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման խնդիրները կապված են ոչ թե ջրի պակասի, այլ ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերանորոգման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայության, արտահոսքի և կորուստների առկայության, համայնքների կողմից ուշադրության պակասի, մատակարարված ջրի դիմաց գանձումների ոչ լիարժեք մակարդակի, ջրի որակի խնդիրների, ջրաչափերի բացակայության հետ:

Ուսումնասիրվող տարածքում ջրամատակարարման խնդիրն ինչ-որ չափով լուծված է, իսկ ջրահեռացման խնդիրները դեռևս հստակեցված չեն և այդ ուղղությամբ անելքիները չափազանց զգալի են: Ջրահեռացման նոր համակարգերի կառուցումը մարզում պլանավորված է սկսել 2016 թվականից: Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է համարվում մաքրման կայանների կառուցումը:

Այսպիսով, ելնելով ուսումնասիրվող տարածքի ջրային ոլորտի իրավիճակից ու առկա խնդիրներից՝ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանման, կարգավորման և կառավարման, առաջնային հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է.

- ջրային ռեսուրսների քանակական և որակական բազմակողմանի, համակարգված ու անընդհատ դիտարկումներ,
- էկոհամակարգային ուսումնասիրություններ,
- գիտահետազոտական և նախագծային աշխատանքների կազմակերպում,
- ջրօգտագործման գործընթացում ջրի կորուստների նվազեցում և կանխում,
- ոռոգման ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, ջրհան կայանների, խորքային հորերի, պոմպակայանների վերանորոգում և վերաշահագործում, նորերի կառուցում,
- ջրօտագործման փաստացի ծավալների չափագրման տեխնիկական և կազմակերպչական բնույթի հարցերի կատարելագործում,
- ջրերի աղտոտման կանխում, որակի բարելավում ու վերահսկում, ջրային ռեսուրսների սանիտարական նորմերի պահպանում, սանիտարական գոտիների ցանցի ընդլայնում,
- ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական տեսակների բացահայտում և դրանց մաքրման եղանակների առավելությունների շարադրում,
- մաքրման կայանների վերականգնում և նորերի կառուցում, ժամանակակից տեխնոլոգիաների աստիճանական ներդրում,
- համայնքներում թափոնների կազմակերպված հեռացման մասնագիտացված պոլիգոնների և աղբավայրերի ստեղծում,
- ընդերքի օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ունեցած վնասակար ազդեցությունների վերացմանն ուղղված բնապահպանական ծրագրերի կազմում և համալիր միջոցառումների իրականացում՝ թափոնների օգտագործում, հավաքում և պահեստավորում, փոխադրում և մշակում, օգտահանում, հեռացում, վնասազերծում և թաղում, մշակված հանքավայրերի տարածությունների խախտված հողերի վերականգնում ու բարելավում,
- այլ նպատակներով խմելու ջրի օգտագործման խստիվ արգելում կամ ծայրահեղ դեպքում վարձավճարների գանձում սահմանված սակագների բազմապատիկի չափով,
- ջրի օգտագործման և մաքրման կենտրոնների ստեղծում, ջրի խնայում և կրկնակի օգտագործում, անձրևային ջրերի ու կեղտաջրերի հավաքման համակարգի շահագործում,
- ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում,
- ջրամատակարարման և ջրահեռացման սակագնային քաղաքականության վերանայում,
- ջրամատակարարման առկա համակարգերի պահպանում և վերականգնում, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացում, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար ֆինանսական մեծ ներդրումներ,
- հաշվառման ամբողջական և հստակ համակարգի ստեղծում, որի շնորհիվ հնարավոր կլինի կառավարել ջրակորուստների, գանձումների և ծախսերի մակարդակները. հաշվառման հստակ համակարգի ստեղծումը շուրջօրյա ջրամատակարարման անցնելու պարտադիր և անհրաժեշտ պայման է,
- ջրամատակարար-սպառող հարաբերությունների ամբողջովին փոխադրում առևտրային հիմ-

քերի վրա, ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում,

- օրենսդրական (իրավական) և ինստիտուցիոնալ դաշտի հզորացում և բարեփոխումների իրականացում,
- շուկայական պահանջներին համապատասխանող ջրամատակարարման կառուցվածքային բարեփոխումների իրականացում, կառավարման հստակ և արդյունավետ գործող մեխանիզմների ներդրում,
- ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում,
- ջրային բնական պաշարների կառավարման ռազմավարության մշակում և ջրային ոլորտի կանոնակարգմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներ
- ջրի շրջանառու համակարգի ստեղծում,
- հիդրոլոգիական ռեժիմի և գոյություն ունեցող անտառատնկումների վերականգնում,
- պետության և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից բավարար ներդրումներ: Ընդ որում, անհրաժեշտ է, որ կատարված ներդրումները լինեն թափանցիկ հասարակության համար, ուղղված կոնկրետ որոշակի ծրագրերի իրականացմանը և վերահսկվեն անշահախնդիր մարմինների կողմից,
- համայնքների, հասարակության լայն խավերի մասնակցություն բնօգտագործման և բնապահպանական հարցերին:

СОВРЕМЕННЫЕ ПУТИ УПРАВЛЕНИЯ И РЕГУЛИРОВАНИЯ ПРОБЛЕМЫ ПОТРЕБЛЕНИЯ И СОХРАНЕНИЯ ВОДЫ В ЭКОСИСТЕМЕ БАССЕЙНА РЕКИ МАСРИК

Маргарян В.Г., к.г.н., доцент, ЕГУ

В работе обсуждены, проанализированы и выяснены закономерности пространственно-временного распределениях водных ресурсов речного бассейна Масрик, проблемы водоснабжения и канализации, продуктивного использования и охраны водных ресурсов, представлены соответствующие предложения по их улучшению, проанализированы уязвимость и риск речного стока, предложены механизмы по их уменьшению и адаптации, обсуждены некоторые вопросы по регулированию и рациональному управлению водных ресурсов.

MODERN PROBLEMS OF WATER CONSUMPTION AND PROTECTION AND THE WAYS OF MANAGEMENT AND REGULATION IN ECOSYSTEM OF MASRIK BASIN

Margaryan V.G., PhD, Associate Professor, YSU

The regularities of spatiotemporal distribution of water resources of Masrik river basin are discussed, analyzed and cleared up in this work, the problems of water supply and sewerage, productive utilization and protection of water resources, are submitted suitable suggestions for their improvement, are analyzed vulnerability and risk of river runoff, are suggested mechanisms for their decreasing and adaption, are discussed some questions for regulation and productive management of water resources.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադանալյան Ա.Լ., Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Եր.: 2012, էջ 32:
2. Բնակավայրերի կեղտաջրերն առանց մաքրման և վարակազերծման թափվում են Սևանա լիճ: // Մինասյան Ա.: 19 մարտ, 2014: http://www.lrahos.com/
3. Թոքմաջյան Հ., Մարկոսյան Ա., Մարդոյան Ա. Ջրային ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման, դրանց աղտոտման կանխարգելման ուղիները: // Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա. - Եր.:, № 8-9, 2004, էջ 8-16:
4. Հայաստանի Հանրապետություն: Նոթեր ջրամատակարման ոլորտի մասին (P121249): Հաշվետվություն № 61317-AM: Մայիս 2011թ.: 165 էջ:
5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Հավելված ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 1-ի № 308 - Ն որոշման: Գավառ 2012: 239 էջ:
6. Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի № 442 - Ն որոշման հավելված: 216 էջ:
7. Հայկական ՍՍՀ ջրագրությունը: - Եր.:, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981,177 էջ:
8. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղապետարանի կողմից կատարված 2011թ աշխատանքների մասին: Հաշվետվություն: էջ 4:
9. Մարգարյան Վ.Գ., Վարդանյան Թ.Գ. Սևանա լճի ավազանի գետային հոսքի ձևավորման և ներտարեկան բաշխման առանձնահատկությունները: ,Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը: (Լ.Հ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր): ԵՊՀ: Եր.: ԵՊՀ հրատ., 2011. - էջ 211-223: - ISBN 978-5-8084-1388-7:
10. Մարտիրոսյան Տ.Ս. Ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: - Եր.:, 2013: 49 էջ:
11. Մնացականյան Բ.Պ. Սևանի ավազան (Բնությունը, կլիման և ջրերը): - Ե.: 2007, 139 էջ:
12. Չիլինգարյան Լ.Ա., Աղաբաբյան Կ.Ա., Թոքմաջյան Հ.Վ. Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը: Եր., 2002, 49 էջ:
13. «Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով տեխնիկական զեկույց, որը պարունակում է Հայաստանում ,Ջուր և առողջությունն արձանագրության ներքո նպատակների սահմանման գործընթացի հետ կապված իրավական, ինստիտուցիոնալ և նյութաիրավական ասպեկտների ելակետային վերլուծությունը: Եր.: 2014, 181 էջ:
14. « Ռիո+20 » վեհաժողովի որոշումների իրականացման 2015-2025թթ. ազգային ռազմավարական ծրագրի հայեցակարգ: Հանքարդյունաբերության գործունեություն, բնապահպանություն և մարդկանց առողջություն: 51 էջ:

15. Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծ: Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 10-ի նիստի № 22 արձանագրային որոշման: Եր.: 2011: 37 էջ:
16. Վարդանյան Հ.Ս., Մինասյան Ա.Մ., Հովհաննիսյան Ռ.Հ., Գուլանյան Վ.Գ., Նավասարդյան Է.Գ. Սևանա լճի և լիճ թափվող գետերի ջրերի որակի գնահատումը ըստ մանրէաբանական ցուցանիշների: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա: Հայաստանի կենսաբանական հանդես, 1(64): Փորձարարական և տեսական հոդվածներ: Եր.: 2012, էջ 26-30:
17. Маргарян В.Г. Проблемы использования и охраны водных ресурсов в марзе Вайоц Дзор. КАЗАНТИП-ЭКО-2014. Инновационные пути решения актуальных проблем базовых отраслей, экологии, энерго- и ресурсосбережения: сборник трудов XXII Международной научно-практической конференции, Харьков, июнь 2014 г. В 2 т. Т. 2 / ГП ,УкрНТЦ ,Энергосталь‗. – Х.: НТМТ, 2014. – с. 251-258.
18. http://armworld.am/detail.php?paperid=4901&pageid=150623&lang
19. http://shabat.am/?p=15071&l=am#sthash.pIkDjCUv.dpuf
20. http://www.mud.am/lows/files/23_06_11_h1.pdf
21. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2013/07/13_746.pdf

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԹԱՄԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ասպիրանտ, ՀՊՏՀ

Հիմնաբառեր. *հանքարդյունաբերություն, բնական ռեսուրսներ, զտման համալիր, արդյունավետություն, բնապահպանական ռիսկեր, համագործակցություն:*

Հանքարդյունաբերությունը հանդիսանում է ՀՀ արդյունաբերության այն հիմնարար ճյուղերից մեկը, որն էական դեր է խաղում ոչ միայն արդյունաբերության, այլ նաեւ ամբողջ տնտեսության զարգացման մեջ: Պայմանավորված այն հանգամանքով, որ ոլորտի գործունեությունն ուղղակիորեն կապված է ազգային հարստություն համարվող սահմանափակ եւ չվերականգնվող ռեսուրսների արդյունահանման եւ օգտագործման հետ, ոլորտի ընկերությունների եւ ամբողջ տնտեսության համար առաջնային է դառնում բնական ռեսուրսների եւ առհասարակ դրանց մշակման գործընթացում ընդգրկված ակտիվների արդյունավետ ու օպտիմալ օգտագործումը և կառավարումը:

Հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության այն առանձնահատուկ ոլորտներից է, որն ունենալով մեծ դեր երկրի ՀՆԱ-ի, պետական բյուջեի եկամտային մասի ձեւավորման մեջ, ինչպես նաեւ ՀՀ արտահանման կառուցվածքում, միաժամանակ հանդիսանում է բնապահպանական ամենամեծ ռիսկեր առաջացնող ոլորտը երկրում: Հանքարդյունաբերական ընկերությունները ոչ միայն նվազեցնում են երկրի ընդերքի բնական պաշարներն, այլ նաեւ վերացնում են հանքի մակերևույթին գտնվող բնական ծածկույթը, պոչամբարների ազդեցության չեզոքացման գործառույթների ոչ պատշաճ իրականացման հետեւանքով աղտոտում են բնական միջավայրը՝ հաճախ դառնալով հանքին մոտ ապրող բնակչության համար մի շարք հիվանդությունների առաջացման եւ սրման պատճառ: Հետևաբար ոլորտի առաջխաղացման եւ զարգացման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե առանձնացված, այլ վերը ներկայացված խնդիրների համատեքստում:

Նախ, առավել հանգամանորեն դիտարկենք ՀՀ-ում բնական ռեսուրսների, մասնավորապես մետաղական հանքերի օգտագործման արդյունավետության հիմնահարցերը, քանի որ միայն լեռնամետալուրգիան հանքարդյունաբերության ոլորտում թողարկում է ընդհանուր հանքարդյունաբերական արտադրանքի ավելի քան 97 տոկոսը: Այսպես, ՀՀ-ում մոլիբդենի խտանյութն արտադրվում է մոլիբդենի 60% պարունակությամբ, ինչը մոլիբդենի արտադրության մեջ համարվում է վերջնական արտադրանք, որի արդյունաբերական հատկանիշները կարող են կիրառվել այլ ոլորտներում: Մի շարք այլ մետաղների (ինչպիսիք են օրինակ՝ոսկին, արծաթը եւ երկաթը) վերջնական վերամշակումն իրականացվում է տեղում՝ ապահովելով ազգային հարստության տնտեսական արդյունքի ստեղծում անմիջապես երկրի ներսում:

Այլ է իրավիճակը պղնձի խտանյութի արտադրության ոլորտում. պղնձի օգտակար, արդյունաբերական հատկանիշների կիրառման համար անհրաժեշտ է մաքուր, զտված պղինձ, ինչի արտադրությունը Հայաստանում չի իրականացվում: Արդյունահանումից եւ հարստացումից հետո պղինձը որպես կանոն արտահանվում է՝ տնտեսական ավելի բարձր արդյունք ապահովելով այն երկրների համար, որտեղ իրականացվում է պղնձի հետագա վերամշակման, մասնավորապես՝ ձուլման եւ զտման գործընթացները: Գործընթացները Ալավերդու պղնձաձուլարանը միակն է Հայաստանում, որտեղ պղնձի խտանյութը մշակվում է մինչև սև պղնձի վիճակ, սակայն հատկանշական է, որ պղնձաձուլարանը բավականին հին է, իր գործառնական գործունեության իրականացման համար հիմնականում օգտագործում է ֆիզիկապես եւ բարոյապես մաշված սարքավորումներ, որի արդյունքում իր ամբողջական արտադրական հզորությամբ աշխատել չի կարող: Հետագա վերամշակման համար պղնձաձուլարան է հանձնվում հանրապետության պղնձի խտանյութի միայն շատ փոքր քանակություն (2011թ. տվյալներով գործարանում ընդամենը 2000 տոննա սեւ պղինձ է արտադրվել) :

Խնդրի արդիականությունը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ այժմ պղնձի հանքերի ոչ օպտիմալ շահագործման դիմաց գանձվող վճարների հարկային բազան համարժեք չէ երկրի ազգային հարստությանը տրվող վնասներին: ԱԱՀ եւ շահութահարկի դրույքաչափերը կիրառվում են մի քանի անգամ ավելի ցածր հարկային բազայի նկատմամբ, քանի որ վերջնական վերամշակում անցած արտադրանքի գինը մի քանի անգամ գերազանցում է այն արտադրանքի գնին, որն այսօր թողարկվում է պղնձի արտադրության ոլորտում:

Հիմք ընդունելով վերոնշյալ դիտողությունները՝ հանքարդյունաբերության ոլորտում ակտիվների օպտիմալ կառավարման հիմնախնդիրները դիտվել են պղնձի խտանյութի արտադրության ոլորտում՝ կարևորելով օպտիմալացման խնդրի առաջադրումը եւ լուծումը ոչ միայն ընկերության, այլ նաեւ ոլորտի եւ երկրի համար:

Պետք է նշել, որ այսօր զարգացած հանքարդյունաբերություն ունեցող երկրներում առավել մեծ կիրառություն ունի ֆլեշ-ձուլման (flash smelting) տեխնոլոգիան, որը դասվում է նորարարական եւ նվազագույն բնապահպանական ռիսկեր առաջացնող տեխնոլոգիաների շարքին: Այս տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ստանալ բարձր որակի վերջնական արդյունք՝ միաժամանակ նվազեցնելով բնական միջավայր արտանետվող պոչամբարի ծավալները:

Հաջորդ գծապատկերում ներկայացված է պղնձի արտադրության օպտիմալացման մոդելը ՀՀ-ում. ներկա մոդելում արտադրության վերջնական փուլ է համարվում հարստացումը (ձուլման փուլը, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում իրականացվում է միայն Ալավերդու պղնձաձուլարանում, այն էլ հին սարքավորումներով, քիչ ծավալով եւ բնակապահանական լուրջ ռիսկեր է պարունակում):

Գծապատկեր 2

ՀՀ-ում պղնձի արտադրության օպտիմալացման մոդել



Արտադրության շղթայի օպտիմալացումը ըստ էության համարվում է գործառնական գործունեության օպտիմալացման կարեւոր ճանապարհներից մեկը: Ընդ որում օպտիմալացումն անհրաժեշտ է իրականացնել թե՛ հորիզոնական, թե՛ ուղղահայաց ուղղությամբ՝ արտադրական շղթայում ներառելով պղնձի զտման եւ էլեկտրական զտման, ինչպես նաեւ առաջացած պոչամբարի հետագա մշակման գործընթացները: Սակայն նման փոփոխության իրականացումը միշտ կապված է լինելու մեծ կապիտալ ներդրումների հետ, հետեւաբար այն պետք է իրականացնել միայն նախնական խորքային վերլուծության և ընդհանուր համակարգի վրա այդ փոփոխության համալիր ազդեցության գնահատման հիման վրա:

Մեր կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունների եւ վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ պղնձի արտադրության համար ՀՀ-ում առավելագույն հասույթ ապահովող փուլը զտման այն փուլն է, որի արդյունքում արտադրվում է 90-95% պղնձի պարունակությամբ պղնձի խտանյութ:

Հետեւապես, ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում ակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացման եւ օտիմալ կառավարման համար կարեւոր թռիչքային քայլ ենք համարում երկրի ներսում պղնձի հետագա մշակման, մասնավորապես նոր, ժամանակակից ֆլեշ-ձուլման (flash smelting) տեխնոլոգիայի կիրառմամբ պղնձի ձուլման եւ զտման գործընթացների կազմակերպումը, որը ոչ միայն հանքարդյունաբերական ընկերությունների ու ոլորտի համար կապահովի էական տնտեսական արդյունք, այլ նաեւ կունենա իր դրական մակրոտնտեսական եւ բնապահպանական ազդեցությունը (ֆլեշ-ձուլման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս էապես իջեցնել բնապահպանական ռիսկը):

Ոլորտի միջազգային մասնագետները փաստում են, որ պղնձի ձուլման եւ զտման գործարանի կառուցումը տնտեսապես արդարացված կլինի միայն 100 000 եւ ավելի տոննա պղնձի տարեկան արտադրողականություն ապահովելու դեպքում: Պղնձի ձուլման գործարանի կառուցման պարագայում ենթադրվում է նույնիսկ վերագործարկել այժմ չշահագործվող հանքավայրեր, որոնք ևս ներկայացված են հաջորդ աղյուսակում.

Աղյուսակ 1

Հայաստանում պղնձի արտադրության գործող եւ հնարավոր աղբյուրները[1]			
Հանքավայր	**Խտանյութի արտադրություն/տոննա**	**Պարունակության տոկոսը/ %**	**Մաքուր պղնձի արտադրություն/տոննա**
Քաջարան	133 500	28%	37 380
Թեղուտ	86 100	28%	24 108
Կապան, Շամլուղ եւ Ալավերդու հումքային հենք	70 000	28%	19 600
Ագարակ	23 000	26%	5 980
Հանքասար	7 800	28%	2 184
Ընդամենը	**320 400**		**89 252**

Ինչպես տեսնում ենք թիվ 1 աղյուսակի տվյալներից, զտման գործարանի կողմից գնվող խտանյութի արտադրության ծավալի վրա էական ազդեցություն կունենա Վալլեքս խմբին պատկանող ,Թեղուտի պղնձամոլիբդենային գործարանի գործարկումը: Ընդհանուր առմամբ մասնագետները Հայաստանում պղնձի տարեկան արտադրողականությունը գնահատում են մոտ 320 000 տոննա խտանյութ, մոտ 90 000 տոննա մաքուր պղնձի պարունակությամբ: Եվս 10 000 տոննա պղնձի խտանյութ Հայաստանը կարող է գնել Վրաստանից ևս ԼՂՀ պղնձի գործարանից, որտեղ եւս պղինձը վերջնական վերամշակում չի անցնում:

Ոլորտի միջազգային մասնագետները փաստում են, որ պղնձի համաշխարհային սպառումը ինչպես նախկինում, այնպես էլ 2014թ.-ից հետո կշարունակի աճել. կանխատեսվում է պղնձի սպառման ծավալների 3-5%-ի աճ: Պղինձը հանդիսանում է սահմանափակ ապրանք, որի գինը բնականորեն աճում է յուրաքանչյուր տարի պղնձի հանքաքարի սահմանափակվածության եւ արդյունաբերության մի շարք ոլորտներում աճող օգտագործելիության պատճառով: Հետևաբար, նախագծի արդյունք հանդիսացող զուտ պղնձի իրացման ռիսկը բացակայում է. ավելին, ներքին շուկայում համեմատաբար մատչելի պղնձի առկայությունը (բացառվում են տրանսպորտային ծախսերը եւ հետագա վերամշակողների վերադիրները) կարող է հանդիսանալ արդյունաբերության այլ ճյուղերի զարգացման խթան եւ բերել պղնձի ներքին սպառման ծավալների աճի:

CESL նորարարական ընկերության նախաձեռնությամբ Դեյվիդ Ջոնսի գլխավորությամբ ստեղծված գիտական խմբի իրականացված հաշվարկները ներկայացնում են նորագույն, տեխնոլոգիապես կատարելագործված եւ նվազագույն բնապահպանական ռիսկեր պարունակող սարքավորումներով հագեցած պղնձի զտման գործարանի կապիտալ և գործառնական ծախսերը, որոնք հիմնված են այլ երկրներում զտման գործարանների կառուցման ծախսերի մանրամասն ուսումնասիրության և տնտեսամաթեմատիկական իրատեսական հաշվարկների ու կանխատեսումների վրա:

Կապիտալ և գործառնական ծախսերը բերվել են ներկա արժեքի՝ հաշվի առնելով ուսումնասիրման և ընթացիկ տարիների արդյունահանողների գների ինդեքսի ինֆլյացիան. հաշվարկների ներկա արժեքները ներկայացված են թիվ 2 աղյուսակում:

[1] www.armworld.am, հոդվածը Հրաչյա Ավագյանի, Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ

Աղյուսակ 2

Պղնձի ձուլման-զտման գործարանի ստեղծման կապիտալ ներդրումները եւ տարեկան գործառնական ծախսերը, բացի ինքնարժեքից, ըստ արտադրության ծավալների[1]

Պղնձի զտման գործարանի կապիտալ ներդրումները եւ գործառնական ծախսերը ըստ արտադրության ծավալների, մլն ԱՄՆ դոլար								
Զուտ մետաղի արտադրության ծավալները	10,000	20,000	40,000	60,000	80,000	100,000	200,000	300,000
Գործարանի կապիտալ ներդրումներ	76.58	103.22	153.17	209.77	256.39	291.35	499.46	699.24
Գործարանի գործառնական ծախսերը	0.10	0.13	0.21	0.28	0.37	0.44	0.81	1.19

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, 100 000 տոննա զուտ պղնձի ձուլման գործարանի ներդրումային ծախսերը կկազմեն 291.35 մլն ԱՄՆ դոլար:

Ոլորտի եւ ընկերության համար նման խոշոր ներդրում պահանջող նախագիծն իրագործելու համար, պետք է ներգրավել ֆինանսական եւ ոչ ֆինանսական շահ հետապնդող բոլոր կողմերը: Նախագծի իրականացման ֆինանսավորման հնարավոր աղբյուրները հետեւյալն են.

- Ոլորտի ընկերությունների կապիտալ ներդրումներն ազատ ներդրումային միջոցների հաշվին,
- Պետությունն ուղղակի ներդրումների կամ սուբսիդավորման, հարկային արտոնությունների, վարկային երաշխավորությունների տրամադրման ձեւով,
- Օտարերկրյա և ներքին նոր ներդրողներ. ելնելով այն հանգամանքից, որ գործ ունենք երկրի բնական սահմանափակ ռեսուրսները սպառող առաջնային ոլորտի հետ՝ կարծում ենք, որ օտարերկրյա ներդրումների ծավալն անհրաժեշտ է սահմանափակել ձայների իրավունքի գերակշիռ մաս չկազմելու պայմանով,
- Տեղական եւ միջազգային բանկեր, վարկային կազմակերպություններ,
- Բաժնետոմսերի թողարկում արժեթղթերի շուկայում (IPO). առավել հավանական շուկաներն են Հայաստանի Նասդաք Օ-Էմ-Էքս եւ Վարշավայի արժեթղթերի շուկաները:

Նախագծի նախնական ֆինանսական հաշվարկների համաձայն՝ իր գործարկման առաջին իսկ տարում ձուլման գործարանն ապահովում է զուտ շահութաբերության 4.9%, ինչն արդեն իսկ գերազանցում է Դամոդարանում 2014թ. հանքարդյունաբերության համար սահմանված զուտ շահութաբերության միջին ցուցանիշը: Ընդհանուր առմամբ նախագծում ներդրումների ետ վերադարձման ժամկետը կանխատեսվում է 11 տարի, ինչը նման մեծածավալ նախագծերի համար ընդունելի նորմ է:

Նախագիծը ոլորտում եւ տնտեսության մեջ տարեկան ապահովում է ավելի քան 168-280 մլրդ դրամ լրացուցիչ շրջանառությունն ինչը կազմում է 2014թ. հանքարդյունաբերության ոլորտի շրջանառության ավելի քան 90%-ը, արդյունաբերական ամբողջ արտադրանքի շուրջ 13-22%, իսկ ՀՆԱ-ի ՝ 4-6%-ը:

Քեյնսյան տնտեսական մոդելի տրամաբանությամբ նախագիծը ՀՀ տնտեսության վրա իր ուղղակի արդյունքից բացի կունենա նաեւ անուղղակի ազդեցություն՝ կապված ներդրումների բազմարկման արդյունքի հետ: Ծախսումների բազմարկիչը հաշվարկելու համար պետք է սահմանել Սպառման սահմանային հակումը (MPC), որը ցույց է տալիս լրացուցիչ մեկ միավոր եկամտի ստեղծման ընթացքում ակնկալվող լրացուցիչ սպառումը: Այլ կերպ ասած, MPC-ն ցույց է

[1] David Jones, CESL, on-site processing vs. Sale of copper concentrates, Perth, WA, Australia, 2005.

տալիս, թե տնօրինելի եկամտի աճի դեպքում որքան լրացուցիչ գումար է ծախսում աշխատողն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար: Այն իրենից ներկայացնում է սպառման ծախսերի հավելաճի (ΔC) եւ տնային տնտեսությունների եկամուտի հավելաճի (ΔY) հարաբերությունը (MPC = ΔC/ΔY[1]):

Ներդրումային անուղղակի արդյունքի հաշվարկման համար կիրառվում է Խնայումների սահմանային հակման գործակիցը (MPS), որը ցույց է տալիս, թե տնային տնտեսությունները լրացուցիչ ստացված մեկ դրամական միավորի որ մասը կուղղեն խնայումներին և ներդրումներին՝ ($MPS = \frac{1}{1-MPC}$)[2]:

Հաշվարկված ներդրումային գործակիցը 2.15 է կազմում, ինչը նշանակում է, որ ՀՀ տնտեսության մեջ պղնձի ձուլման-զտման համալիրի գործարկումից ակնկալվող լրացուցիչ ուղղակի արդյունքը կրկնապատկվում է ներդրումային էֆֆեկտի շնորհիվ, որը կրկնապատկում է նախագծի ընդհանուր արդյունքը ՀՀ տնտեսության մեջ և ստեղծում ՀՀ տնտեսական աճի համար նոր եւ կայուն հենասյուն:

Ըստ նախնական հաշվարկների նախագծի գործարկումը թույլ կտա նաև ապահովել հարկային եկամուտների աճ մոտ 2.5%-ով:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ակտիվների արդյունավետ օգտագործման և օպտիմալ կառավարման առանձնահատկությունները, առաջարկում ենք հանքարդյունաբերական ընկերությունների, պետության, գիտահետազոտական կազմակերպությունների եւ հնարավոր ներդրողների համագործակցությամբ ստեղծել պղնձի ձուլման-զտման գործարան, որը կունենա էական դրական տնտեսական արդյունք նախագիծը գործարկող ընկերության/նների, հանքարդյունաբերության ոլորտի, արդյունաբերության, ինչպես նաեւ ամբողջ տնտեսության համար՝ ապահովելով նաեւ բնապահպանական ռիսկի էական նվազում:

ВНЕДРЕНИЕ ИННОВАЦИОННЫХ РЕШЕНИЙ РАЦИОНАЛЬНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ПРИРОДНЫХ РЕСУРСОВ В РА

Оганнесян Т., аспирант, АГЭУ

В статье кратко описаны микро и макроэкономические проблемы эффективного использования природных ресурсов РА, в частности, меди. На основе проведенного исследования, было предложено создание аффинажного комплекса меди с участием отраслевых компаний, государственных учреждений и других заинтересованных сторон. В статье представлен прямой и косвенный (с учетом инвестиционного мультипликатора) эффект нового экономического сотрудничества в отрасли, государственном бюджете и экономике в целом с учетом снижения экологического риска.

INTRODUCTION OF INNOVATIVE SOLUTIONS FOR RATIONAL USE OF NATURAL RESOURCES IN THE REPUBLIC OF ARMENIA

Hovhannisyan T., **PhD student, ASUE**

The problems regarding efficient use of RA natural resources, namely copper, have been studied and briefly presented in this article in both micro and macro levels. Based on the studies implemented a proposal was made to build a copper refinery complex with the participation of the companies of mining sector, the state and

[1] KM: The Multiplier Model - Principles of Macro - RIT - Dr. Jeffrey Burnette Vancouver Community College Learning Centre, HOSP 2207, Macroeconomics, MPC, MPS and Multipliar effect.

[2] նույն տեղում:

other interested parties. The possible direct and indirect (by the application of investment multiplier) effects of the new economic cooperation on the sector; the state budget and the whole economy with the condition to reduce environmental risk were presented in this article.

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ՍՈՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. շրջակա միջավայր, մոդելավորում, բնապահպանություն, ֆունկցիա, տնտեսական աճ:

Շրջակա միջավայրի վրա տնտեսական զարգացման ազդեցության գնահատումը և փոխգործակցման օրինաչափությունների բացահայտումը կարևոր գիտական խնդիր է, որի ուսումնասիրության համար նախապես պետք է մշակել համապատասխան գործիքներ, որոնց թվում՝ հետազոտման մաթեմատիկական մոդելներ: Վերջիններս թույլ կտան հետազոտել տնտեսագիտական և էկոլոգիական ցուցանիշների միջև փոխկապակցվածությունը, հայտնաբերել գոյություն ունեցող օրինաչափությունները: Խնդրո առարկա հիմնախնդրի լուծմանն ուղղված մոտեցումները թույլ են տալիս որոշել նպատակային ֆունկցիայի պարամետրերի և տարբեր մակարդակների ցուցանիշների (ամբողջ տնտեսության և առանձին սեկտորների) միջև փոխկապակցվածությունը, գնահատել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը և ներդրումների կառուցվածքի փոփոխությունը՝ ըստ տեսակների, հետազոտել սեկտորների միջև ռեսուրսների բաշխման տարբերակները և տարբեր չափանիշների հիման վրա կառուցել դրանց օպտիմալ բաշխումը:

Դժվարությունը նրանում է, որ տնտեսության զարգացումը երկակի է ազդում էկոլոգիական ցուցանիշների վրա՝ կախված գործունեության տեսակից և ներդրումների կառուցվածքից: Տնտեսության զարգացումը հիմնականում բերում է պարամետրերի քանակական աճին, ներդրումային նախագծերի մեծամասնությունն ավելի հաճախ բացասական ազդեցություն են ունենում բնության վրա, ստեղծվող նոր արտադրություններն ավելացնում են շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ծանրաբեռնվածությունը: Ինովացիոն և տնտեսության կառուցվածքի փոփոխության հետ կապված այլ նախագծերը, ընդհակառակը, կարող են դրականորեն ազդել. օրինակ արտադրության արդիականությունը և անցումը նոր տեխնոլոգիաների էականորեն նվազեցնում են ծանրաբեռնվածությունը շրջակա միջավայրի վրա:

Բնապահպանական գործունեությունը, նախագծերը, որոնք ուղղված են մաքրման համակարգերի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնում են տարբեր մակարդակի արդյունավետությամբ, որն էլ կարելի է գնահատել ելնելով տվյալների վերլուծությունից: Միևնույն ժամանակ ընթացիկ ծախսերի և ներդրումների մի մասն էլ չի բերում շրջակա միջավայրի վիճակի փոփոխությանը: Այս առանձնահատկություններն արտացոլելու համար, անհրաժեշտ է վերլուծել իրական տվյալների վրա հիմնված պարզ կախվածությունները, որոնք թույլ կտան հետազոտել էկոլոգո-տնտեսական գործընթացները:

Բնապահպանական իրավիճակին համարժեք գնահատական տալու համար ուսումնասիրվում են էկոլոգիական ցուցանիշներ, որոնք բնութագրում են շրջակա միջավայրի վիճակը և տնտեսության զարգացման փոխազդեցությունը՝ ստացիոնար աղբյուրներից աղտոտող նյութերի արտահանում, աղ-

տոտված հոսող ջրերի արտահոսք դեպի մակերևույթային ջրամբարներ, բնական ջրային աղբյուրներից ջրառն արդյունաբերության մեջ օգտագործման համար, թունավոր թափոնների գոյացում:



Նկար 1. CO_2 արտանետումների շարքը, 2000-2010թթ., Գգ

Աղբյուրը՝ ՀՀ Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն, 2012թ.

Ինչպես երևում է ներկայացված հաշվարկային արդյունքներից, արտանետումների զգալի աճ է արձանագրվում 2006թ. և 2008թ. ՝ համեմատած 2007թ. հետ: Դրանց հիմնական դրդապատճառները համաձայն հաշվետվությունների (www.armrusgasprom.am) այն է, որ 2008-ից հետո իրականացվել է Հայաստանի տարածքի աննախադեպ ծավալների գազաֆիկացում, ինչի հետևանքով կտրուկ աճել է բնական գազի սպառումը՝ հատկապես բնակչության կողմից: Այսպես, այն 2007թ.ավելացավ 32.3%-ով 2006թ. նկատմամբ և ևս 11.2%-ով՝ 2008 թ.: Ոչ պակաս աճ է նկատվում տրանսպորտի ոլորտում: Ըստ ՀՀ Մաքսային ծառայության պաշտոնական տվյալների (www.customs.am) 2007թ. Հայաստան ներկրված տրանսպորտային միջոցների թիվն աճել է 32.6%-ով նախորդ տարվա համեմատ, և ևս 20.9%-ով՝ 2007թ. համեմատ, ինչը հանգեցրել է բնական գազի և այլ նավթամթերքի օգտագործման ավելացմանը:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված ջերմոցային գազերի արտանետումների և կլանումների բաշխումն ըստ գազերի և ըստ բաժինների (գիգագրամներով):

Արտադրությունների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա տարբեր է: Ելնելով դրանից, տվյալների վերլուծության ընթացքում կատարվում է որոշակի ճյուղերի ագրեգացում ըստ գործունեության և ձևավորվում են սեկտորներ, որոնց առանձնացումը թույլ է տալիս ուսումնասիրել կառուցվածքային քաղաքականությունը, վերլուծել հնարավոր ռազմավարական որոշումների հետևանքները և տնտեսության զարգացման տարբեր սցենարների համար ստանալ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատականներ: Որպես առանցքային գործոն է դիտարկվում ներդրումների բաշխումներն ըստ սեկտորների: Ագրեգացումը կարող է կատարվել ըստ պարզ կամ էլ համալիր ցուցանիշների՝ կախված դրված խնդիրներից և սեկտորների առանձնացումից:

Աղյուսակ 1.

ՋԳ արտանետումների և կլանումների բաշխումը ըստ գազերի և ըստ բաժինների, Գգ

Բաժիններ	Զուտ CO2	CH4	N2O	HFCs, CO_2 համ.	CO_2 համարժեք.
Գումարային արտանետումներ	4464.63	107.67	1.56	255.19	7463.7
Էներգետիկա	4231.031	35.64	0.09	ԱՉ	5008.71
Արդյունաբերություն*	225.96	ԱՉ	ԱՉ	255.19	481.16
Գյուղատնտեսություն**	-	44.26	1.26	ԱՉ	1320.50
Թափոններ	7.64	27.77	0.20	ԱՉ	653.33

Աղբյուրը՝ ՀՀ Ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն, 2012թ.:

* ներառում է գործընթացները և արտադրանքի օգտագործումը:

** ներառում է անտառտնտեսությունը և այլ հողօգտագործումը:

Աղյուսակ 1-ից կարելի է տեսնել, որ արտանետումների 68 %-ը կազմում են արտանետումներն «էներգետիկա » բաժնից:

Զարգացման սցենարների վերլուծության համար առանձնացվում են 3 սեկտոր՝ըստ շրջակա միջավայրի վրա նրանց ազդեցության: Մթնոլորտի վրա ամենաշատ ազդեցությունն են ունենում հետևյալ ճյուղերը, որոնք կարելի միավորել առաջին սեկտորում՝ էլեկտրաեներգետիկա, սև և գունավոր մետաղագործություն և տրանսպորտ:

Երկրորդ սեկտորը ներառում է շինարարություն, ագրարային սեկտոր, սննդի արդյունաբերություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն ճյուղերը: Համապատասխան գործունեության տեսակներն են՝ հանքարդյունաբերությունը, սննդամթերքի արտադրությունը և գյուղատնտեսությունը: Սրանց միավոր արտանետումները ցածր են տնտեսության միջին ցուցանիշից: Երրորդ սեկտորը ներառում է գործունեության այլ տեսակները, նախևառաջ ծառայությունների ոլորտը:

Մաթեմատիկական մոդելը: Առաջարկվող աղտոտվածության ֆունկցիաների կապակցող հիմնական հատկությունն այն է, որ դրանք թույլ են տալիս հետազոտել ներդրումների էկոլոգիական արդյունավետության դինամիկան, վերլուծել ներդրումների և տնտեսության կառուցվածքի փոփոխության ազդեցությունը և հաշվի առնել մի գործոնը մյուսով փոխհատուցելու հնարավորությունը: Աղտոտվածության ֆունկցիան, անբացահայտ տեսքով, կարող է տրվել երկգործոն կամ եռագործոն, պարզ կամ համալիր էկոլոգիական ցուցանիշների հիման վրա.

$Z(t)=F(U_1(t),U_2(t),t)$ $Z(t)=F(U_1(t),U_2(t),U_3(T),t)$

Որտեղ $Z(t)$-ն ուսումնասիրվող էկոլոգիական ցուցանիշն է, $U_1(t)$-ն գործոն, որը արտացոլում է տնտեսության զարգացումը և, որպես կանոն, բացասական է ազդում շրջակա միջավայրի վրա (ներդրումներ տնտեսությունում, նոր շինարարություն,ՀՆԱ և այլ ուղղություններ), $U_2(t)$–գործոն, որը արտացոլում է բնապահպանական գործունեությունը և դրական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա (ներդրումներ շրջակա միջավայրի պահպանությունում, շրջակա միջավայրի պահպանության համար անհրաժեշտ ընթացիկ ծախսեր և այլն), $U_3(t)$-ն գործոն, որը արտահայտում է տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունները և, որպես կանոն, դրական է ազդում շրջակա միջավայրի վրա:

Տնտեսա-բնապահպանական գործընթացների հատկությունների արտացոլման համար ներմուծվում է փոխհատուցման սահմանային նորմի և փոխհատուցման առաձգականության

հասկացությունները[1]: Ներմուծվում է F ֆունկցիայի γ աստիճանի միօրինակության հասկացությունը, եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին՝ $F(\lambda U_1(t),\lambda U_2(t),t)=\lambda^{\gamma} F(U_1(t),U_2(t),t)$:

Փորձարարական հաշվարկները ցույց են տվել, որ համասեռությունը զգալիորեն փոքր է մեկից, և առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում զրոյական համասեռությամբ ֆունկցիաները:

Արտադրական ֆունկցիաներում ներմուծվում է գործոնային առաձգականության հասկացությունը, որը աղտոտվածության ֆունկցիաների լոգարիթմի ածանցյալն է ըստ գործոնների: Սահմանվում են ε_1 և ε_2 պարամետրերը, որպես աղտոտվածության առձգականություն ըստ գործոնների, որը որոշում է նրա արդյունավետությունը: Գործոնային առաձգականությունը բնութագրում է գործոնների ազդեցության մակարդակը՝ ըստ որի համախառն արդյունքի (կամ այլ տնտեսական ցուցանիշի) 1% ավելացման դեպքում ուսումնասիրվող էկոլոգիական ցուցանիշը աճում է ε_1 –ով, իսկ շրջակա միջավայրի պաշտպանության համար ներդրումների (կամ այլ բնապահպանական ցուցանիշի) 1% աճի դեպքում,այն նվազում է ε_2-ով, քանի որ ε_2-ի առաձգականությունը բացասական է:

Վերլուծական նկատառումներից ելնելով նպատակահարմար է ներմուծել ,չեզոքե էկոլոգիական առաջընթացի `p-ի, հասկացությունը, որը կապվում է աղտոտվածության մակարդակի փոփոխության հետ և կախված է ժամանակից կամ այլ գործոններից: Չեզոք էկոլոգիական առաջընթացի վրա ամենաշատ ազդեցություն ունեն կառուցվածքային տեղաշարժերը: Երկգործոն աղտոտվածության ֆունկցիայի պարամետրերի վրա դրանց ազդեցության մակարդակի գնահատման համար կառուցվում են հետևյալ հավասարումները.

$$\varepsilon_1=\sum_i \varepsilon_{1,i} Z(t)/Z(t), \quad \varepsilon_2=\sum_i \varepsilon_{2,i} Z(t)/Z(t)$$

$$p=\sum_i p_i Z_i(t) \ /Z(t)+\varepsilon_0$$

$$\varepsilon_0=\sum_i (\varepsilon_{1,i} \ (I_{1,i}-I_1)+\varepsilon_{2,i}(I_{2,i}-I_2))Z_i(t)/Z(t)),$$

որտեղ Z(t)-ն ուսումնասիրվող էկոլոգիական ցուցանիշն է, I_1 – տնտեսական ցուցանիշի լոգարիթմական ածանցյալն է , I_2 - բնապահպանական ցուցանիշի լոգարիթմական ածանցյալնէ, t-ն տարին, i-ն սեկտորը:

Աղտոտվածության ֆունկցիայի հիմնական պարամետրերի և ցուցանիշների՝ գործոնային առաձգականությունների և չեզոք էկոլոգիական ցուցանիշների տեմպերի միջև փախազդեցության մոտավոր գնահատման համար կառուցվել են դրանց հետագծերը, որոնք ցույց են տալիս էկոլոգիական և տնտեսագիտական ցուցանիշների դինամիկան և դրանց հարաբերությունը[1]: Արդյունքում առանձնացվում են գործընթացների հիմնական բնութագրերի պոտենցիալը գերազանցող վարքի ժամանակահատվածները, կատարվում են աղտոտվածության ֆունկցիայի մասին ենթադրություններ, սահմանվում են աղտոտվածության ֆունկցիայի պարամետրերի հնարավոր սահմանափակումները:

Ստորև ներկայացվող գծապատկերում տրված են հետազոտության բազային հիմնական պարամետրերը:

---

[1] Дружинин П. В.-Влияние развития экономики на окружающую стеду, Экономика и математические методы, 2010.

[1] Ռ.Ա.Ավետիսյան, Ն.Ս.Քոչինյան, Օպտիմալ կառավարման մաթեմատիկական մեթոդները տնտեսագիտության մեջ, Ե., 2009:



Նկար 2. ՀՆԱ մլրդ դրամ., էլէլեկտրաէներգիայի արտադրությունը մլն. դրամ, CO2 արտանետումները էներգետիկա սեկտորիղ հազար տ. շարքը, 2000-2014թթ.

Աղբյուրը՝ http://www.armstat.am

Մեր կողմից կառուցված մոդելով հաշվարկներ կատարելու համար կարող է ընտրվել աղտոտվածության հիմնական աղբյուր հանդիսացող էներգետիկա սեկտորը:

К ВОПРОСУ ОЦЕНКИ ВЗАИМОВЛИЯНИЯ ЭКОНОМИКИ И ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

Саргсян С., к.э. н., доцент, ЕГУ

Работа посвящена изучению влияния развития экономики на окружающую среду. Предлагается подход, в рамках которого строится несколько типов функций, связывающих экономические показатели с экологическими. Приводится исследование свойств функций, характеристики основных параметров. Предлагаются области применения задачи оптимального управления.

ABOUT THE PROBLEM OF ASSESSMENT OF INTERFERENCE OF THE ECONOMY AND THE ENVIRONMENT.

Sargsyan S. PhD, associate professor, YSU

In this article the impact of economic development on the environment is studied. Offers an approach under which built several types of functions linking environmental and economic indicators. Presented a study of properties of functions, characteristics of the main parameters. We offer an area of application of the problem of optimal control.

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՆԵՐՍԵՍ ՍԱՄՎԵԼՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ ,Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ

Հիմնաբառեր. զբոսաշրջության ինդուստրիա, ռեկրեացիոն ծառայություն, ռեկրեացիոն ներուժ, ռեկրեացիոն բնօգտագործում, տարածքային պլանավորում:

Ժամանակակից աշխարհում արտադրողական ուժերի զարգացման, արտադրական հարաբերությունների տարածական ընդարձակման, ուրբանացման բարձր տեմպերի և, վերջապես, հասարակության աշխատանքային զբաղվածության աննախադեպ աճի պայմաններում մարդկանց առողջության, մտավոր և ֆիզիկական ուժերի վերականգնումը, հոգևոր պահանջմունքների բավարարումն ու հանգստի կազմակերպումը դարձել են կենսական նշանակության հիմնախնդիրներ: XX հարյուրամյակի 80-ական թթ.-ից գիտության, տեխնիկայի ու արտադրական նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց հանգստի և զբոսաշրջության ինդուստրիան աստիճանաբար վերածվեց համաշխարհային տնտեսվարման սպասարկման ոլորտի առավել պահանջված և եկամտաբեր բնագավառներից մեկի: Ռեկրեացիոն ծառայություններն այսօր հիրավի հասարակության առաջնահերթ պահանջմունքներից են և դարձել է հասարակական կյանքի տարածքային կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը:

Ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում բնակչությանը տրամադրվող ռեկրեացիոն ծառայություններն աշխարհում վերաճեցին այն աստիճան զարգվածային երևույթի, որ հայտնվեցին տնտեսագետ-աշխահագետների գիտական ուշադրության կենտրոնում, իսկ ռեկրեացիայի և ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման ու կառավարման հիմնահարցերը ստացան գիտական ուսումնասիրությունների հատուկ առարկայի կարգավիճակ:

Ռեկրեացիոն բնօգտագործման պլանավորման աշխատանքներում հստակ ուրվագծվում են բնակչության զանգվածային հանգստի կազմակերպման հետ կապված բազում հիմնախնդիրներ: Միաժամանակ, ակնհայտ են դարձել այդ հիմնախնդիրների աշխարհագրական բնույթն ու բովանդակությունը՝ ռեկրեացիոն գործունեության կազմակերպման տարածական ասպեկտներն ու կապն աշխարհագրական միջավայրի բնալանդշաֆտային պայմանների և հատկությունների հետ:

Ինչպես հայտնի է, հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող աշխարհագրական միջավայրը դարեր շարունակ մարդուն ծառայել է որպես նյութաէներգետիկ ռեսուրսների ստացման աղբյուր: Անշուշտ, բնության նկատմամբ նման մոտեցումը կպահպանվի նաև ապագայում, եթե հաշվի առնենք հասարակության անընդհատ աճող նյութական պահանջմունքները: Սակայն, արդեն այսօր, ավելի քան երբևէ, նկատելի են բնակչության աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու առօրյա «հոգսերը» թոթափելու, արտաաշխատանքային հանգիստը կազմակերպելու, մտավոր, հոգևոր ու ֆիզիկական ուժերը վերականգնելու հասարակական պահանջի աճի միտումները: Այդ պայմաններում արդիական հնչեղություն է ստանում ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման, հանգստի և զբոսաշրջության նպատակներով աշխարհագրական միջավայրի բնալանդշաֆտային և սոցիալ-տնտեսական բաղադրիչների ռեկրեացիոն հատկությունների (ներուժի) բացահայտման, արժևորման, արդյունավետ օգտագործման և կառավարման անհրաժեշտությունը: Ռեկրեացիոն տնտեսվարման կառուցողական հնչերանգ ունեցող այս հիմնահարցերը գտնվում են կիրառական լանդշաֆտագիտության արագ զարգացող ուղղություն-ներից մեկի՝ ռեկրեացիոն լանդշաֆտագիտության ուսումնասիրությունների ոլորտում:

Ռեկրեացիոն տնտեսությունը բնօգտագործման այն առանձնահատուկ բնագավառներից է, որի կազմակերպման ու զարգացման հնարավորությունները մեծապես կանխորոշվում են աշխարհագրական միջավայրի բնական և սոցիալ-տնտեսական տարրերի գրավչության աստիճանով, գեղագիտական արժեքով, մարդու հանգիստը կազմակերպելու, ֆիզիկական, մտավոր ու հոգևոր պահանջմունքները բավարարելու պոտենցիալ հատկությունների ճիշտ ու նպատակային օգտագործման անհրաժեշտությամբ: Ռեկրեացիայի ընթացքում բնությունը հանդես է գալիս որպես մարդու հանգստի կազմակերպման, առողջության, ֆիզիկական և հոգևոր ուժերի վերականգնման հիմնական գործոն: Սակայն, շատ հաճախ, շուրջամյա, զանգվածային և տարածքային պլանավորման գիտական հիմնադրույթներին հակասող ռեկրեացիոն գործունեությունը հսկայական ծանրաբեռնվածություն է ստեղծում բնական լանդշաֆտում և բնության վրա թողնում է բացասական ազդեցություն: Ռեկրեացիոն ռեսուրսներն անսահմանափակ չեն ինչպես քանակապես, այնպես էլ իրենց որակական բնութագրիչներով: Հետևաբար ռեկրեացիոն ռեսուրսների անհաշվենկատ ու տարերային օգտագործումը կարող է հանգեցնել դրանց պաշարների քանակական սպառմանն ու որակական հատկությունների անկմանը:

Ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման և բնապահպանության հիմնախնդիրներն առավել տագնապահարույց են և հրատապ լուծում են պահանջում հատկապես լեռնային երկրներում, որոնք, մի կողմից առանձնանում են ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման լայն հնարավորություններով, մյուս կողմից հանդիսանում են խիստ անկայուն ու մարդածին ներգործության նկատմամբ առավել զգայուն, խոցելի գեոհամակարգեր:

Լեռնային երկրներում ռեկրեացիոն բնօգտագործման աշխարհագրական նախադրյալների բազմազանությունը հատուկ է նաև Հայաստանի հանրապետության բնատարածքին: ՀՀ բնալանդշաֆտային միջավայրն առանձնանում է ռեկրեացիոն տնտեսության կազմակերպման ռեսուրսային բացառիկ հնարավորություններով, որոնք, կարծում ենք, հեռանկարում թույլ կտան զարգացնելու լեռնային ռեկրեացիոն զբաղմունքի բոլոր տիպերը՝ բուժառողջարանային, ռեկրեացիոն-սպորտային, էկոզբոսաշրջային, ռեկրեացիոն-իմացական և այլն [7]:

ՀՀ ռեկրեացիոն ռեսուրսների սպառման հնարավորությունը, տեսականորեն որոշվում է օգտագործման ընթացքում դրանց սահմանային ծանրաբեռնման աստիճանով, որի չարաշահման դեպքում ռեսուրսները կամ կորցնում են իրենց ռեկրեացիոն արժեքն ու նշանակությունը, կամ ենթարկվում են դեգրադացիայի /ռեկրեացիոն դիգրեսիա/: Բնամարդածին տարրերի ռեկրեացիոն ներուժի արդյունավետ օգտագործման դեպքում դրանց ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի բնամարդածին ռեկրեացիոն համակարգերի կայունության սահմանային մակարդակը: Տարածքի ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը որոշվում է տարվա առավել ,աշխույժ՝ ժամանակահատվածում 1 հա մակերեսի հաշվով մեկ օրում այցելողների միջին թվով: Սովորաբար, այն չափվում է միավոր մակերեսի վրա մարդկանց քանակով (մարդ/հա):

Ինչ վերաբերվում է ,ռեկրեացիոն ռեսուրսների կայունությունն՝ հասկացությանը, ապա նշենք, որ վերջինս բնամարդածին ռեսուրսների՝ ռեկրեացիոն ծանրաբեռնմանը հակազդելու այն սահմանանիշն է, որից անցման դեպքում ռեսուրսը կորցնում է ինքնավերականգնման հատկությունը: Ռեկրեացիոն բնօգտագործման պլանավորման աշխատանքներում տարածքի ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունն ու կայունությունն արտահայտում են բնական և մարդածին համալիրների ու դրանց բաղադրիչների ռեկրեացիոն տարողությունը՝ այսինքն ռեկրեացիոն «ճնշմանն» ու մարդածին ծանրաբեռնմանը դիմակայելու հատկությունը:

Ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող տարածքների և դրանց ռեսուրսների ռեկրեացիոն

տարողության ու կայունության որոշումը ՀՀ ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման և արդյունավետ կառավարման հիմքն է [1, 4]:

Հայաստանի հանրապետությունում ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման ու արդյունավետ կառավարման աշխարհագրական, էկոլոգիական և բնապահպանական հիմնախնդիրները լուծելու գրավականը, մեր կարծիքով, ռեկրեացիոն մասնագիտացման տարածքների (տիպերի) առանձնացումն ու տարածքի ֆունկցիոնալ զոնավորման գիտականորեն հիմնավորված համակարգի մշակումն է: Առանձնացված ռեկրեացիոն տարածքային միավորների լանդշաֆտային կայունության պահպանումը պետք է նախատեսի դրանց սահմաններում ռեկրեացիոն գործունեության և բնության ինքնամաքրման ու ինքնավերականգնման հնարավորությունների հաշվենկատ, ներդաշնակ զուգակցում: Գործնականում դա նշանակում է, որ ռեկրեացիոն նշանակության տարածքների պլանավորման և ռեսուրսների շահագործման հիմքում պետք է դրվեն բնալանդշաֆտային միջավայրը ծանրաբեռնելու գիտականորեն հիմնավորված նորմեր [6,7]:

Ելնելով վերը շարադրածից՝գտնում ենք, որ ՀՀ –ում ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման աշխատանքները պետք է հիմնվեն հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1. **Համակարգայնության սկզբունք**. հիմնվում է ռեկրեացիոն տարածքային համակարգի միջբաղադրիչային ուղղաձիգ և միջլանդշաֆտային հորիզոնական սերտ կապերի հաշվառման վրա: Այս սկզբունքի կիրառումը ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման ընթացում ենթադրում է.

- ռեկրեացիոն բնօգտագործման տարածական ձևերի՝ ռեկրեացիոն տարածքային համակարգերի կազմակերպման և դրանց ռեկրեացիոն գործառույթների իրականացման ընթացքում համակարգի բոլոր տարրերի միջև ֆունկցիոնալ կապերի հաշվառման անհրաժեշտություն: Ընդ որում, այստեղ հատկապես կարևորում ենք ռեկրեացիոն բնօգտագործման տարածական ձևերի ազդեցությամբ ռեկրեացիոն ռեսուրսների հնարավոր փոփոխությունների գնահատումն ու ռեկրեացիոն տարածքային համակարգի վրա փոփոխված բնության հակազդեցության ու դրա հետևանքների կանխատեսումը:
- ռեկրեացիոն տարածքային համակարգերի բոլոր հատկությունների պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացում, առանց որի անհնարին կլինի ապահովել համակարգի բնականոն և կայուն զարգացումը:

2. **Տարածքայնության սկզբունք**. Հիմնվում է աշխարհագարական-տարածական մոտեցման վրա և ենթադրում է կոնկրետ տարածաշրջանի բնական ու սոցիալ-տնտեսաաշխարհագրական պայմաններից ռեկրեացիոն տարածքային համակարգերի զարգացման ու ֆունկցիոնալ գործունեության կախվածության հաշվառում: Վերջինս կանխորոշում է ռեկրեացիոն տարածքային համակարգերի որակական և գործառութային առանձնահատկությունները: Ռեկրեացիոն տարածքային յուրաքանչյուր համակարգ գտնվում է այս կամ այն միջավայրում և հատկանիշներով տարբերվում է մյուս համակարգերից: Ռեկրեացիոն տարածքային համակարգերի որոկական տարբերությունները թույլ են տալիս դրանք սահմանազատել:
3. **Լեռնային լանդշաֆտների պարագենետիկ և պարադինամիկ հորինվածքի հաշվառման սկզբունք**. Հայտնի է, որ ՀՀ լեռնային բնատարածքային համալիրները ծագումնաբանորեն համակցված պարադինամիկ համակարգեր են, որոնց միջև անընդհատ տեղի է ունենում նյութերի ու էներգիայի շրջանառություն՝ ապահովելով լանդշաֆտային գոտիական ողջ սպեկտրի ֆունկցիոնալ գործունեությունը: Հետևաբար, ռեկրեացիոն ռեսուրսների յուրացման և ռեկրեացիոն բնօգտագործման տարածական ձևերի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել լեռնային լանդշաֆտների պարադինամիկ հորինվածքն ու բացահայտել միջլանդշաֆտային գենետիկական-ֆունկցիոնալ

կապերը: Այլ կերպ ասած, ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման աշխատանքները ՀՀ-ում պետք է կազմակերպել լանդշաֆտային-պարագենետիկական հիմքերի վրա՝ ներառելով վերընթաց գոհական ամբողջ համալիրը: Միայն այս դեպքում կարելի է ապահովել լեռնային լանդշաֆտների ու դրանց բաղադրիչների ռեկրեացիոն ներուժի, տարողության և կայունության ճիշտ գնահատում, առանձնացված տարածքային միավորների ռեկրեացիոն մասնագիտացման և գործառույթի ուղղվածության ճիշտ ընտրություն, և վերջապես՝ ռեկրեացիոն ռեսուրսների արդյունավետ օգտագործում և պապանում:

4. **Բնապահպանական-էկոլոգիական միջոցառումների կիրառման անհրաժեշտության սկզբունք.** Այն բխում է ռեկրեացիոն բնօգտագործման ընթացքում բնական համալիրների դեգրադացիայի կանխարգելման և միջավայրի լանդշաֆտա-էկոլոգիական հավասարակշռության պահպանության անհրաժեշտությունից: Բնալանդշաֆտային անխախտ հորինվածքով բարձրաճաշակ և էկոլոգիապես բարեկարգ բնական միջավայրն է կանխորոշում ռեկրեացիոն բնօգտագործման արդյունավետությունը:

Գիտական փորձը ցույց է տալիս, որ լեռնային բնատարածքային համալիրների հորինվածքը, հատկություններն ու ֆունկցիոնալ կառուցվածքը պարզելու, դրանց արտադրական ներուժը գնահատելու, շրջակա միջավայրի վերափոխման, բարելավման, բնական հարստությունների արդյունավետ օգտագործման ու պահպանման հիմնախնդիրները լուծելու ամենահուսալի ուղին խոշորամասշտաբ լանդշաֆտային հետազոտություններն են:

Հայաստանի հանրապետության բնալանդշաֆտային միջավայրի բնական ու սոցիալ-տնտեսական գործոնների ռեկրեացիոն ներուժի գնահատման և ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման հիմնահարցերը գտնվում են, ինչպես նշել ենք, կիրառական լանդշաֆտագիտության ուղղություններից մեկի՝ ռեկրեացիոն լանդշաֆտագիտության ուսումնասիրությունների ոլորտում: Ժամանակի խոշոր լանդշաֆտագետ, պրոֆ. Ա. Գ. Իսաչենկոն, անդրադառնալով կիրառական լանդշաֆտագիտության խնդիրներին, նկատում է, որ ռեկրեացիոն հետազոտություններում հիմնական հիմնահարցը տարածքի ռեկրեացիոն ներուժի գնահատումն ու, տարողության և կայունության սահմանային մակարդակների բացահայտումն է [5]: Հավելենք, որ լանդշաֆտային ուսումնասիրություններում կիրառվող համալիր (կոմպլեքսային) հետազոտության մեթոդը, հնարավորություն է տալիս պարզել լանդշաֆտի բնական բաղադրիչների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը և ելնելով դրանից՝ապահովում բնատարածքի լանդշաֆտաէկոլոգիական առանձնահատկություններին համապատասխան ռեկրեացիոն բնօգտագործման ձևերի արդյունավետ պլանավորում, ռեկրեացիոն ռեսուրսների հաշվենկատ օգտագործում ու պահպանում:

Մեր կարծիքով, ՀՀ-ում ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորկան հիմնախարցերում կիրառական լանդշաֆտագիտության խնդիրները հանգում են հետևյալին.

1. բնատարածքային համալիրների կայունության աստիճանի ու ռեկրեացիոն ծանրաբեռնման սահմանային մակարդակների, լանդշաֆտային միջավայրի ռեկրեացիոն հարմարավետության ու տարողության որոշում և գնահատում,
2. ռեկրեացիոն արդյունավետ բնօգտագործման, բնառեկրեացիոն լանդշաֆտների բարելավման ու պահպանման խնդիրների լուծմանն ուղղված գիտականորեն հիմնավորված միջոցառումների մշակում,
3. ռեկրեացիոն լանդշաֆտների ձևավորման տարածական օրինաչափությունների բացահայտում, մարդածին ներգործության նկատմամբ դրանց էկոլոգիական կայունության աստիճանի գնահատում,
4. բնական և պատմամշակութային համալիրների, սոցիալ-տնտեսական պայմանների, բնամարդածին

ռեսուրսների ռեկրեացիոն ներուժի բացահայտումն ու ռեկրեացիոն գնահատման մեթոդների մշակումը,

5. ռեկրեացիոն սպասարկման տարածքային կազմակերպման օրինաչափությունների բացահայտում,
6. ռեկրեացիոն գործունեության տեսակների ու ձևերի, դրանց տարածային կազմակերպման աշխարհագրական առանձնահատկությունների ու հնարավորությունների վերլուծություն ու գնահատում,
7. ռեկրեացիոն շրջանների և այդ նպատակով առանձնացված տարածքների տարողության և ծանրաբեռնման սահմանային մակարդակների որոշում ու ռեկրեացիոն մասնագիտացման հիմնավորում,
8. ռեկրեացիոն շրջանագոյացման գործոնների ու պայմանների, օրինաչափությունների և հատկությունների բացահայտում,
9. ռեկրեացիոն շրջանացման տարածքային կարգաբանական միավորների առանձնացման և քարտեզագրման սկզբունքների ու մեթոդների մշակում,
10. ռեկրեացիոն շրջանացման տարածքային միավորների համակարգի մշակում, դրանց կարգաբանական մակարդակների բացահայտում, տիպաբանական դասակարգում և քարտեզագրում,
11. ռեկրեացիոն արդյունավետ բնօգտագործման կազմակերպման, ռեկրեացիոն ռեսուրսների նպատակային օգտագործման ու պահպանման գիտականորեն հիմնավորված ուղիների և մեթոդների մշակում:

ПРИНЦИПЫ ТЕРРИТОРИАЛЬНОГО ПЛАНИРОВАНИЯ РЕКРЕАЦИОННОГО ПРИРОДОПОЛЬЗОВАНИЯ И ЗАДАЧИ ПРИКЛАДНОГО ЛАНДШАФТОВЕДЕНИЯ (НА ПРИМЕРЕ РА)

Самвелян Н.И., к. г. н., доцент, АГПУ,

Ландшафтное планирование территориальных видов рекреационной деятельности имеет свои специфические особенности при освоении горных природно-территориальных комплексов. Горные ландшафты со сложной структурой и разнообразием природно-рекреационных ресурсов относятся к регионам активного развития рекреационной деятельности. В связи с этим, исследование и оценка природных комплексов горных территорий для целей организации рекреационного хозяйства приобретает ведущую роль в выявлении их функционального назначения в общей системе рекреационного природопользования.

В статье на примере РА представлены основные принципы территориального планирования рекреационного природопользования, намечены задачи прикладных ландшафтных исследований по рационализации территориальной организации рекреационной деятельности, охране и рациональному использованию рекреационных ресурсов республики.

THE PRINCIPLS OF RECREATIONAL USE OF NATURAL PLANNING AND AND PRACTICAL ISSUES OF LANDSCAPE STUDIES THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA.

Samvelyan N.I., PhD on geography, Associate Professor, **ASPU**

The assessment of conditions in the recreational potential of the natural economy, the efficient use of the recreational use of natural resources and regional planning, the socio-economic development of our strategic plan is an important issue.

The article discusses the practical perspective of the recreational use of natural resources landscape studies basic principles of territorial planning and outlining the main issues, the solution of which will secure balanced regional development in the further development of recreational economy.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Колбовский Е.Ю. Ландшафтное планирование, Изд-во Академиа, Москва, 2008.
2. Кочкина В.Е. Ландшафтно-рекреационный анализ горных территорий, Вестник ТГПУ, вып. 5 (107), 2011, стр. 155-159.
3. Лысенкова З.В. Рекреационное природопользование: От теории к практике, Вестник ТГПУ, вуп. 6 (69), Серия естественные и точные науки, Томск, 2007, стр. 54-57.
4. Оборин М.С. Системная методология как один из подходов изучения рекреационного природопользования, Науки о Земле, Биология, Вестник Удмуртского университета , вып. 3, 2010, стр. 12-17.
5. Исаченко А.Г. Методы прикладных ландшафтных исследований, Ленинград, 1980.
6. Самвелян Н.И. К вопросу оценки природных комплексов горных территорий при ландшафтном планировании рекреационного природопользования, Вестник МАНЭБ, т. 17, No 4, вуп. 3, Санкт-Петербург, 2011, стр. 15-18.
7. Սամվելյան Ն.Ի. Ռեկրեացիոն բնօգտագործման լանդշաֆտային պլանավորման հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր՝ նվիրված ՀՀ անկախության 20 ամյակին, ԳՊՄԻ հրատ, 2012, էջ 156-160:

ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍԻՐԻՆԵ ԿՈՍՅԱՆ, Երևանի Ալ.Բլոկի անվան №122 հիմնական դպրոց, ուսուցչուհի

Բանալի բառեր. Անապատացում, խոնավացում, սողանք, երաշտ, աղակալում:

Անապատացում հասկացության ներքո մասնագիտական գրականության մեջ հասկացվում է մարդու գործունեության հետևանքով հողի բերրիության աստիճանաբար անկման, բուսականության նոսրացման (հնարավոր է նույնիսկ անհետացման) շարժընթացների ամբողջությունը: Անապատացման խնդիրն արդիական է ողջ մոլորակի համար. այն կարող է ունենալ մի շարք ակնհայտ բացասական հետևանքներ քաղաքական, սոցիալական, բնապահպանության և այլ ոլորտների համար:

Անապատացումը հողի բնական խոցելիության և մարդկային գործունեության արդյունքն է: Բնության ծանրաբեռնումը մարդկանց կողմից հանգեցնում է հսկայական հողատարածությունների քայքայմանն ու ամայացմանը [1]:

Հայաստանում անապատացման երևույթը պայմանավորված է մարդու կողմից չափից ավելի ակտիվ բնօգտագործումից: Այդ երևույթը Հայաստանում դիտվել է դեռևս հնագույն ժամանակներից, սակայն իրավիճակը խիստ արագացել է անցած դարի 20-ական թվականներից սկսած՝ պայմանավորված արդյունաբերության արագ աճի տեմպերով:

Ըստ պատմաբան Մովսես Խորենացու՝ ,Հայոց պատմությանե Արարատյան դաշտը մեր թվարկությունից առաջ 4-րդ դարում պատված է եղել խիտ սոճու անտառներով, որտեղ եղել են մեծ թվով եղջերուներ, արջեր, վայրի խոզեր, առյուծներ և այլ վայրի կենդանիներ: Ներկայումս այն ունի կիսաանապատի կարգավիճակ:

Հայաստանում անապատացման խնդիրը խիստ արդի է, քանի որ այն, գտնվելով չոր մերձարևադարձային կլիմայական մարզում, ունի չոր տարածաշրջանին բնորոշ բոլոր հատկանիշները: Բացի այդ տարեցտարի ավելի ու ավելի է ուժեղանում մարդածին գործոնի ազդեցությունը լանդշաֆտների վրա,

որի հետևանքով ակտիվանում է հողի դեգրադացիան (մասնավորապես ջրի էռոզիայի ակտիվացման հետևանքով): Հայաստանի տարածքի կեսից ավելին ենթարկվում է սելավային երևույթներին, որն ակտիվացնում է անապատացման գործընթացը՝ մեծացնելով մակերույթային արտահոսքը:

Երևանը մշտապես գտնվում է սելավային հոսքի աղետի վտանգի տակ: Հողի դեգրադացիայի ակտիվացման մեջ մեծ դեր է խաղում գերոռոզման հետևանքով հողի աղակալումը: Շատ գետավազաններում զարգացած են սողանքային օջախները:

Մարդածին գործոնի ազդեցության արդյունքում հետզհետե գործածությունից դուրս են գալիս վարելահողեր, կրճատվում են արոտավայրեր ու անտառներ:

Ըստ հաշվարկների և վերլուծության՝ Հայաստանի տարածքում միջին ջերմաստիճանի շեղումը միջին-կայունից (1961-1990 թթ), 1998 թ. կազմում էր 0,7 ԵՀ: Ջերմաստիճանի նշանակալից փոփոխություններ են նկատվում հատկապես ձմռան ամիսներին: Բացի այդ, մթնոլորտային տեղումների քանակը վերջին 100 տարիների ընթացքում նվազել է մոտ 6 %:

Ընդամենը մեկ դար առաջ Արարատյան հարթավայրում խոնավացման գործակիցը ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրությունները կազմում էր 0,25 , իսկ հիմա այն դարձել է 0,2: Խոնավացման գործակիցը դա տարեկան տեղումների հարաբերությունն է տվյալ լանդշաֆտի տարեկան գոլորշունակությանը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$K_y = \frac{R}{E},$$

որտեղ՝ K_y- գոլորշունակության գործակիցն է, R — միջին տարեկան տեղումների քանակը (մմ), E - գոլորշունակության քանակն է (մմ), $K_y>1$ - խոնավությունը պակաս է (տունդրա, անտառատունդրա, տայգա), $K_y\approx1$ - խոնավությունը բավարար է (խառը և լայնատերև անտառներ), $K_y<0.3$ — խիստ անբավարար (եթե $K_y<0.1$ - անապատ, $K_y>0.1$ - կիսաանապատ):[2]

Տափաստանային գոտում կանխատեսվում է բոլոր վերընթաց գոտիների տեղաշարժ դեպի վեր՝ մոտ 150 մ հյուսիսում, իսկ հարավում 200-250 մ:

Գոլորշունակությունը Հայաստանի տարածքում ավելի է ակտիվանալու կապված երկրամերձ շերտում օդի և հողի ջերմաստիճանի բարձրացմամբ և տեղումների միջին քանակի նվազեցման հետ, որն էլ բերելու է բացարձակ և հարաբերական խոնավության նվազեցման:

Ամառային ամիսներին հանրապետության տարածքը էլ ավելի հաճախակի է գտնվելու արևադարձերից ներթափանցող չոր օդային զանգվածների ազդեցության տակ, որոնք կազդեն ծովի մակարդակից մինչև 2000 մ բարձրությունների վրա: Ամառային ամիսներին օդի հարաբերական խոնավությունը հաճախակի է նվազելու 20 %-ից էլ ցածր: Կավելանա անամպ օրերի թիվը և արևափայլի տևողությունը: Այս ամենը կբերի նաև հողմահարման ակտիվացման:

Անապատացման բնածին գործոնների պատճառ են հանդիսանում հանրապետության տարածքում հաճախակի կրկնվող երաշտը և չոր քամիները (հատկապես Արարատյան դաշտում և Սյունիքի ու Վայոց ձորի նախալեռներում):

Հայաստանի տարածքը հարուստ չէ բնական ջրերի պաշարներով: Ցածրադիր վայրերում տեղումների տարեկան քանակը կազմում է 250 մմ, միջին լեռնային գոտում՝ 400-600 մմ, իսկ բարձրադիր գոտիներում՝ 800-1000 մմ:

Ջրային ռեսուրսներն անհավասարաչափ են տեղաբաշխված ոչ միայն տարածապես, այլ նաև՝ ըստ սեզոնայնության: Գարնանը գետերի ջրառատությունը տասնապատիկ անգամ ավելանում է և հալոցքաջրերը դուրս են գալիս հանրապետության տարածքից: Ամռան երկրորդ կեսին, երբ տեղումները

հասնում են նվազագույնի, գետերը սնվում են հիմնականում ստորերկրյա ջրերից. գետերի մեծ մասը գրեթե չորանում են, հոսքաջրերը՝ կրճատվում տասնապատիկ անգամ: Գետային հոսքի 50% ձևավորվում է գարնանը:

Անապատացման բնական գործոններից են հանդիսանում նաև տարածքի երկրաձևաբանական յուրահատկությունները, ռելիեֆի կտրտվածությունը, լանջերի դիրքադրությունները և մեծ թեքությունները:

Տարածքի 32 %-ն ունի լեռնալանջերի դեպի հարավ թեքություն, 27 %-ը՝ դեպի հյուսիս, 20 %-ը՝ արևելք և արևմուտք և միայն հանրապետության 21 %-ն է հարթավայրային. հանրապետության լեռնալանջերի մեծ մասը ունեն դեպի հարավ թեքվածություն, որտեղ օդի ջերմաստիճանը բարձր է, խոնավությունը քիչ և որոնց բնորոշ են շատ ակտիվ մեխանիկական հողմահարում և տեղատարում: Իսկ հյուսիսայի և հյուսիսարևելյան լանջերի տեղումները համեմատաբար բարձր է, որի հետևանքով էլ անտառները հիմնականում տեղաբաշխված են այդ լանջերում [5]:

Սողանքային երևույթներ. Սողանքները բնորոշ են Հայաստանի տարածքի 500 կմ^2 տարածքի վրա (2 %), հատկապես միջին լեռնայի գոտում: Սողանքները շատ ակտիվ են Ախուրյան, Դեբեդ, Աղստև, Վեդի, Որոտան, Գետիկ գետերի հովիտներում: Սողանքը խախտում է հողաբուսական ծածկը, կառույցներ, անգամ բնակավայրեր, օրինակ՝ Մարմարաշեն գյուղը, կառուցված Ախուրյան գետի ձախ ափին, հիմնովին վերացել է և այն ստիպված տեղափոխել են հարակից տուֆային բարձունքի վրա, նույն պատկերը դիտվում է Դիլիջանում:

Սողանքային վտանգ է սպառնում ևս 125 բնակավայրի այդ թվում նաև մի շարք պատ-մամշակութային հուշահամալիրների, ինչպիսիք են Մակարավանքը, Գոշավանքը, Ջուխտակ վանքը և ուրիշներ:

Սողանքային երևույթները վտանգում են նաև հանրապետության մի շարք տրանսպորտային հաղորդակցության կառույցներ [8]:

Սելավներ: Սելավները ընդգրկում են հանրապետության տարածքի կեսից ավելին միջին լեռնային գոտում, որտեղ տեղումների հաճախականությունը տարվա ընթացքում կազմում է 4-6 %: Սելավները գոգավորություններում են կուտակում ալուվիալ նստվածքները:

Երևանը, գտնվելով Ջրվեժ, Բերդաձոր, Ողջաբերդ գետերի սելավային խաչմերուկում, ենթարկվում է մեծ աղետային սպառնալիքի: Սելավային հոսքաջրերի վտանգը մեծ է Սյունիքի, Բայոց ձորի, Գեղարքունիքի, Սավուշի. Շիրակի և Կոտայքի մարզերի մոտ 200 բնակավայրերում:

Ջրածածկումներ, ողողումներ: Ջրածածկումները հանրապետության տարածքում հատկապես լայն տարածում ունեն Արարատյան ու Շիրակի հարթավայրերում, Սևանա լճի շրջակա գոտու որոշ հատվածներում, ինչպես նաև Լոռու, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի առանձին բնակավայրերում ու տեղամասերում: Ջրածածկումներով ընդգրկված ամենամեծ տարածքները գտնվում են Արարատյան հարթավայրի սահմաններում և կազմում են դրա ընդհանուր մակերեսի շուրջ 3 %, որի զգալի մասը գյուղատնտեսական հողեր են: Այդ տարածքներում գտնվում է շուրջ 80 բնակավայր: Ջրածածկումները պատճառ են հանդիսանում մեկ այլ երևույթի՝ հողերի աղակալման համար: Հանրապետության տարածքում աղուտները հիմնականում տարածված են Արարատյան հարթվայրում՝ կազմելով դրա մակերեսի շուրջ 10 %:

Ողողումների զգալի մասը պայմանավորված են սելավային հոսքերով և առաջանում են սելավային ավազանների որոշ հատվածներում, հատկապես ռելիեֆի թեքությունների մեղմացման գոտիներում: Նմանապես, վարարումների ջրերով առաջացող ողողումները դիտվում են գետերի ավազանների հիմնականում հարթավայրային հատվածներում, մասնավորապես Արաքս, Հրազդան,

Որոտան, Աղստև և այլ գետերի ավազաններում: Օրինակ՝ Հրազդան քաղաքում , Հրազդան գետի և նրա Մարմարիկ վտակի որոշ հատվածներում, Աթարբեկյան, Զրառատ բնակավայրերը պարբերաբար ենթարկվում են ողողումների՝ կրելով թե առողջապահական, թե տնտեսական մեծ վնասներ: Վերը նշված պրոցեսները տարածված են շուրջ 56 հազ. հա վրա:

Բնական աղակալում: Հողերի աղակալումն արդի կլիմայական պայմաններում անապատացման դրսևորման տիպիկ ձևերից է: Այն տեղի է ունենում հարթավայրերի ցածրադիր տարածքներում, որտեղ ստորգետնյա ջրերի մակարդակը մոտ է երկրի մակերևույթին: Հողագրունտների միներալային և մեխանիկական կազմով պայմանավորված՝ ստորգետնյա ջրերի մազական բարձրացումը կարող է հասնել 1-5 մ: Եթե ստորգետնյա ջրերի մակարդակը հասնում է երկրի մակերևույթից 0-1 մ խորության, ապա այն հանգեցնում է տեղանքի գերխոնավացման ու ճահճացման. հիմնականում տարածված է Արարատյան հարթավայրում:

Հողերի դեգրադացիայի համար տեխնածին գործոն է հանդիսանում քաղաքաշինությունը, ինչպես նաև ցանկացած կառույցների, այգիների, արտադրությունների ու նոր բնակաբայրերի կառուցումը:

Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսությունը հողօգտագործման այն ձևն է, որի արդյունքում ակնհայտորեն երևում է մարդ-բնություն փոխհարաբերությունն ուփոխազդեցությունը՝իր դրական ու բացասական կողմերով: Քանի որ անապատացման պրոցեսը առաջին հերթին առնչվում է հողային ռեսուրսների օգտագործման հետ, իսկ վերջինիս վրա էլ ուղղակի անմիջական ազդեցություն ունի գյուղատնտեսությունը, ստացվում է, որ ՀՀ գյուղատնտեսությունը անապատացմանը նպաստող ամենաուժեղ գործոնն է:

Գյուղատնտեսությունը և անապատացումը իրար հետ կապված են հատկապես հետևյալ գործոններով.

- Վարի կանոնների խախտումը, երբ վարը կատարվում է լանջի թեքության ուղղությամբ: Դրա հետևանքով ՀՀ տասնյակ հազարավոր վարելահողեր շարքից դուրս են եկել, ջրային էրոզիայի հետևանքով մերկացել են լեռնալանջերը:
- Ցանքաշրջանառության ոչ ճիշտ կիրառումը կամ բացակայությունը նույնպես հանդիսանում է անապատացման գործոն: Հողակտորների փոքր լինելը թույլ չի տալիս լիարժեք կատարել ցանքաշրջանառություն:
- Ջրերի ոչ արդյունավետ օտագործումը: Ոռոգման համար օգտագործվող ջրի կեսը դաշտ չի հասնում, կորչում է՝ առաջացնելով ճահիճներ և աղուտներ: Նախկինում Արաքս գետից և նրա ձախափնյա գրեթե բոլոր վտակներից սնվող ջրանցքներով 8 ամիս ոռոգման ժամանակահատվածում Արարատյան հարթավայր է հասցվել վայրկյանում 40 մ^3 ջուր: Ջրամբարներից և ջրանցքներից մեծաքանակ ֆիլտրացիոն կորուստները, ոռոգման տեխնիկայի բացակայությունը և հին եղանակների կիրառումը, ջրման նորմերի գերազանցումը և այլ պատճառները հանգեցնում են ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացմանը: Ոռոգման մեծածավալ աշխատանքները, բնականաբար ուղեկցվել են նաև չորացման աշխտանքներով: Վերջին 50 տարվա ընթացքում կառուցվել է ավելի քան 1700 կմ երկարության ցամաքուրդակոլեկտորային ցանց: Սակայն չորացման միջոցառումները զգալիորեն հետ են մնացել իռիգացիոն աշխատանքներից, ինչը հանգեցրել է ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացմանը: 1920-ական թվականներից Արարատյան հարթավայրը սկսեց առատորեն ջրվել նաև ի հաշիվ արտեզյան ավազանի ջրերի, որոնց թիվը հաշվվում է հազարներով, իսկ չկարգավորված ոռոգման հետևանքով՝ երբևէ:

Ի հայտ է գալիս երկրորդային աղակալում: Արարատյան դաշտի անապատացմանը մեծ արագություն է հաղորդում նաև ձկնաբուծական տնտեսությունների կողմից արտեզյան ջրերի անխնա

օգտագործումից [9] :

- Անասունների գերարածեցումը հանգեցնում է նոր էրոզիոն օջախների առաջացմանը: Անասունների կճղակների տակ ժամանակի ընթացքում ձևավավորվում են մանրադարավանդներ, որոնք զրկվում են բուսածածկից: Հաճախ դրանց եզրերը քայքայվում է և ջրաշիթերը էրոզիոն օջախներ են ստեղծում: Արագածի, Գեղամա և այլ լեռնազանգվածների մարգագետինների տարածքներում նկատելի են անասունների արածեցման հետևանքով ստեղծված էրոզիայի օջախներ:

Անտառահատում: Անապատացման կարևոր պատճառներից մեկն էլ հանդիսանում են անտառների անկանոն հատումները: Արդյունքում դիտվում են ակտիվ սողանքային երևույթներ, այդ թվում նաև քաղաքներում և գյուղերում: Այդպիսի աղետային երևույթներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ և ժամանակին կազմակերպել սանիտարական հատումները:

Վերջին երեք տասնամյակի ընթացքում գյուղատնտեսության արտադրողականության ծավալի մեծացման անհրաժեշտությունը (Երկիր մոլորակի վրա աճող բնակչությանը սնելու նպատատով) մեծ ճնշում գործադրեց հողային և ջրային ռեսուրսների վրա: 1970-ականների համեմատ՝ ներկայումս անհրաժեշտ է կերակրել 2.2 մլդ մարդ ավելի: Մինչ այժմ սննդի արտադրության տեմպերը հետ չէին մնում երկրի բնակչության թվի աճի տեմպի, սակայն դրա շարունակական աճը նշանակում է, որ մոտակա 30 տարում անհրաժեշտ կլինի 60 % ավելի սննդային ռեսուրսներ: Գյուղատնտեսության նշանակության հողերի հանդեպ աճող պահանջմունքը հանդիսանում է երկրի տարածքի 60-80 % հողերի անտառահատման պատճառ:

Ընդերքի օգտագործումը: Հանքարդյունբերությունը հանգեցնում է ոչ միայն խախտված, աղտոտված հողերի և պոչամբարների թափոնների, նոր տիպերի հողատարածքների առաջացմանը, այլ նաև բուսածածկույթի, կենդանական աշխարհի, ջրային օբյեկտների աղտոտմանը և վնասմանը:

Հանրապետությունում օգտակար հանածոների արդյունահանումը բաց եղանակով բերել է խախտված հողերի առաջացման, որոնք կազմում են մոտ 8000 հա: Այդ խախտված տարածքը աղտոտում է միջինում ավելի քան 10 հա տարածք՝ առաջացնելով էրոզիայի նոր օջախներ: Հատկապես կարելի է նշել Սյունքի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերը [4]:

Հողերի աղտոտում: Հայաստանում հողերն աղտոտող աղբյուրներից են հանդիսանում գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը (լեռնահանքային, քիմիական, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրությունները), էլեկտրաէներգիայի արտադրությունը, տրանսպորտը, կոմունալ-կենցաղային տնտեսությունը և այլն:

Գյուղատնտեսության մեջ թունաքիմիկատների ու պարարտանյութերի չափից ավել օգտագործումը հանգեցնում է հողերի աղտոտման: Վնասատուների դեմ օգտագտագործվող թունաքիմիկատներ պահպանվում են հողի մեջ 15-20 տարի:

Աղտոտման զգալի աղբյուր է հանդիսանում լեռնահանքային արդյունաբերությունը, հատկապես Ագարակի լեռնահարստացնող, Ալավերդու լեռնամետաղաձուլական, Արարատի ոսկու կորզման կոմբինատները, որոնք հողն աղտոտում են այնպիսի մետաղներով ինչպիսիք են , պղինձ, սնդիկ, նիկել, կադմիում, կապար, քրոմ, մոլիբդեն, ասմիում և այլն:

Լեռնահանքային ձեռնարկություններին հատկացված 9700 հա հողատարածքից 8275 հեկտարի հողերը աղտոտված են, իսկ 1400 հեկտարի վրա էլ կառուցված են պոչամբարներ:

Հայաստանում շահագործվող մոտ 130 մեծ և փոքր հանքավայրեր շահագործվում են բաց եղանակով, որն էլ բերում է շրջապատող միջավայրի օդային և ջրային ավազանի աղտոտման:

Որոշ գետերում (Դեբեդ, Ողջի) դիտվում է ջրի քիմիական և մեխանիկական աղտոտում, որոնք խառնվելով ոռոգման համակարգին, աղտոտում են շրջապատը և վնասում բուսակենդանական

աշխարհին: Բնորոշ է նաև այն, որ լեռնահանքային կազմակերպությունների մեծ մասը գտնվում են բարձր նիշերում (Քաջարանի հանքերը՝ 2000 մ, Սոտքի ոսկու հանքերը՝ 2500 մ, Մեղրաձորի ոսկու հանքը՝2000 մ ծովի մակարդակից բարձր են), որի հետևանքով իրենց հոսքաջրերով մեծ վնաս են հասցնում ցածրադիր լանդշաֆտային գոտիներին:

Ալավերդու լեռնամետաղաձուլական ֆաբրիկան 3 կմ շառավղով աղտոտում է միջավայրը ծանր մետաղներով, որի բաղադրությունը անցնում է թույլատրելիի սահմանը 20-40 անգամ: Ծանր մետաղներով շրջակա միջավայրը աղտոտում է նաև Արարատի ոսկու կորզման կոմբինատը:

Քարի վերամշակման ձեռնարկությունները, քիմիական գործարաններից արվող արտանետումները ևս աղտոտում են հողը:

Շրջապատը և հողերը աղտոտող ՀՀ էլեկտրակայաններից են՝ Երևանի ՋԷԿ-ը; Հրազդանի ՀԷԿ-ը; Քանաքեռի ՀԷԿ-ը; էլեկտրակայաններին կից տրանսֆորմատորային ենթակայանները:

Հողի աղտոտման աղբյուրներից է հանդիսանում ավտոմոբիլային տրանսպորտը, որը իր արտանետումներով ոչ միայն աղտոտում է հողը, այլ նաև օդային ավազանը:

Արդյունաբերությունից տարեկան կատարվում է 36,5 մլն տ. արտանետումներ, որից 20 հազ տ.՝ թունավոր, որոնց մեջ ծանր մետաղներից բացի կան մեծ քանակությամբ ֆտոր, քլոր , զանազան լուծիչներ և այլ նյութեր: Վնասակար նյութեր կան նաև կենցաղային թափոնների մեջ:

Մինչև հիմա հանրապետությունը չունի հատուկ մասնագիտացված աղբավայր կամ աղբի վերամշակման գործարաններ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 82 %-ը ենթարկված է տարբեր աստիճանների անապատացման. սուր ազդեցության ենթարկված տարածքը կազմում է ընդհանուր տարածքի 26.8%, ուժեղ ազդեցությանը՝ 26.4%, միջին ազդեցությանը՝19.8%, թույլ ազդեցությանը՝ 8.8% և միայն տարածքի 22,6 % -ի վրա առայժմ անապատացման պրոցեսներ արտահայտված չեն [4]:

ՀՀ-ում անապատացման ռիսկն ամենաբարձրն է Արարատի,Արմավիրի, Սյունիքի մարզերում և մայրաքաղաք Երևանում:

Հայաստանում անապատացման դեմ պայքարելու համար առավել նպատակահարմար է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Ժամանակավորապես դադարեցնել անապատացման ենթարկվող շրջաններում հողերի մշակումը,
2. Չյուրացված հողատարածքները ենթարկել շահագործման,
3. Իրականացնել հողի բերրիության գնահատում և չօգտագործել լավագույն բերրի գյուղատնտեսական հողերը կառույցների տակ,
4. Լեռնալանջային հողահանդակներում կատարել միայն լայնակի հերկում,
5. Մեծ թեքություն ունեցող հողակտորների եզրերին իրականացնել ծառատունկ՝ սողանքը կանխելու նպատակով,
6. Վարել ռացիոնալ անասնապահություն՝ պարբերաբար փոփոխելով արոտավայրերը,
7. Հիմնվելով բնապահպանական կազմակերպությունների հետազոտությունների վրա՝ Հայաստանը տարածքի ընդամենը 8% է անտառապատ, որը բավարար չէ տնտեսական շահագործման համար, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կատարել միայն սանիտարական անտառահատումներ,
8. Լեռնալանջերին ցանել խոտ և տնկել անտառներ,
9. Խուսափել գերոռոգումից, որը հանգեցնում է հողերի աղակալման,
10. Անցկացնել մի շարք ուսուցողական միջոցառումներ գյուղի բնակչության հետ՝ գյուղատնտեսության վարման կուլտուրան բարձրացնելու համար:

Գրականություն

1. Ալեն Ռ. ,Ինչպես փրկել Երկիրը
2. Գաբրիելյան Հ.Կ. Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը; Ե., 1983թ.
3. Դ. Ռաֆաիտի Բեդերդինով Անապատացումը և նրա դեմ պայքարը
4. Խոյեցյան Ա.Վ., Մկրտչյան Ռ.Ս. Անապատացման պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային գնահատման սկզբունքները ՀՀ-ում:
5. Վարդևանյան Ա. Հայաստանում անապատացման դեմ ազգային պայքարի գործողությունների ծրագիր: -Ե.: 2002
6. http://www.dissercat.com/content/opustynivanie-i-borba-s-nim-s-landshaftno-ekologicheskikh-pozitsii#ixzz3ERyHGmeX
7. http://econews.am/
8. http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1843596
9. http://lratvakan.com/news/88161.html

ПРОБЛЕМА ОПУСТЫНИВАНИЯ В АРМЕНИИ

Косян С.Р., преподаватель школы №122, г.Ереван

В данной работе посвящена исследованию, разьяснению и анализу причины процесса опустынивания. Здесь также отмечены и разработаны пути борьбы с опустыниванием в Армении.

THE PROBLEM OF DESERTIFICATION IN ARMENIA

Kosyan S.R., Kosyan S.R., basic school №122 after Al.Block

In this work we discusse, clarify and analyze the causes and consequences of the formation of desertification. Here we also mentione and develope the ways of combating the desertification in Armenia.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲՅՈՒՍՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, դասախոս , ԵՊՀ

Հիմնաբառեր. կենցաղային թափոն, աղբյուս, բուֆերային գոտի, երկրաբանական նստվածք, բնապահպանական շահ, աշխարհատեղեկատվական ձևայնացում:

Երևան քաղաքում ներկայումս տարեկան ձևավորվում է 1386,5 հազ.խոր.մ. կոշտ կենցաղային թափոն (ԿԿԹ) (2013թ. տվյալներով), որը մեկ բնակչի հաշվով կազմում է 1.2մ^3, (մոտ 280-300կգ) իսկ օրեկան կտրվածքով ավելի քան 0.8կգ: Ձևավորված ԿԿԹ ողջ զանգվածը տեղափոխվում է քաղաքային աղբյուսներ: Աղբյուսների գոյությունը անխուսափելի է, միևնույն ժամանակ՝ անհրաժեշտություն, որովհետև միևնույնն է. որքան էլ ԿԿԹ-երը ենթարկվեն վերամաշակման, այնուամենայնիվ մնում է որոշակի զանգված, որի թաղումն անխուսափելի է:

Աղբյուսների տեղի ընտրության համար հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ և չափորոշիչներ: Ըստ այդ գործոնների ու չափորոշիչների հիման վրա իրականացրել ենք

աշխարհատեղեկատվական մոդելավորում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում աղբյուսների տեղադրման համար տարածքի գնահատման նպատակով:

ԱՏՀ մոդելավորման նպատակով, աղբյուս-միջավայր փոխազդեցության գնահատման համար ընտրել ենք բուֆերային գոտիավորման և վերդրման կշռայինի սկզբունքները:

Բուֆերային գոտիավորումը կիրառել ենք այն գործոնների համար, որոնց տրվող չափորոշիչները օբյեկտներից պահանջել են որոշակի հեռավորություն: Նախ գործոնները խմբավորել ենք ըստ քարտեզում ունեցած երկրաչափական պատկերների, որոնք են՝ կետային, գծային և մակերեսային (պոլիգոնային): Յուրաքանչյուր խմբում ներառված գործոնների օբյեկտներին, որպես ատրիբուտային տվյալ, տրվել է չափորոշիչային մեծություն, որն էլ ծառայել է որպես բուֆերային գոտու հեռավորություն: Յուրաքանչյուր խմբի գործոններին պատկանող բոլոր օբյեկտների շուրջ տարել ենք բուֆերային գոտիներ, համապատասխան նրանց չափորոշիչային մեծության: Ապա դրանք ըստ գործոնների առանձին տարրերի, գործոնների խմբերի, և խմբերն էլ իրենց հերթին հաջորդաբար միավորել ենք: Այնուհետև որոշել ենք ստացված բուֆերային գոտիների և Երևան քաղաքի վարչական տարածքի տարբերությունը, ստանալով աղբյուս տեղադրելու համար արգելվող և ազատ տարածքները:

Աշխարհատեղեկատվական մոդելավորման ժամանակ, իրական աշխարհում տարածական երևույթները կամ օբյեկտները բնութագրվում են հատուկ մաթեմատիկական ապարատի օգնությամբ: Այդպիսի բնութագրումը անվանում են ձևայնացված [1]:

Բուֆերային գոտիավորման եղանակով աղբյուսների տեղի ընտրության աշխարհատեղեկատվական ձևայնացումը ներկայացրել ենք հետևյալ տեսքով.

$$A_{1,1} \cup A_{2,1} \cup A_{i,1} \cup A_{k,1} \rightarrow m_1 ,$$

$$A_{1,2} \cup A_{2,2} \cup A_{i,2} \cup A_{k,2} \rightarrow m_2 ,$$

$$\cdots\cdots\cdots\cdots\cdots\cdots\cdots\cdots\cdots\cdots$$

$$A_{1j} \cup A_{2j} \cup A_{ij} \cup A_{kj} \rightarrow m_j ,$$

որտեղ A -ն մեկ օբյեկտի բուֆերային գոտին է, j-ն՝ գործոնը, i-ն՝ j-րդ գործոնի i-րդ օբյեկտը, k-ն՝ j-րդ գործոնի օբյեկտների քանակը, m-ը՝ իմպլիկացիան (հետևությունը), որը մեկ գործոնի բոլոր օբյեկտների միավորումն է:

Այնուհետև ստացված արդյունքները միավորել ենք ըստ առանձնացված խմբերի՝ համապատասխանաբար ելքային օբյեկտների երկրաչափական պատկերների՝

$$m_{1P} \cup m_{2P} \cup m_{jP} \cup m_{kP} \rightarrow M_P ,$$

$$m_{1L} \cup m_{2L} \cup m_{jL} \cup m_{kL} \rightarrow M_L ,$$

$$m_{1Pt} \cup m_{2Pt} \cup m_{jPt} \cup m_{kPt} \rightarrow M_{Pt} ,$$

որտեղ M_P-ն՝ մակերեսային, M_L-ը՝ գծային և M_{Pt}-ն՝ կետային գործոնների բուֆերային գոտիների միավորումներն են: Վերջիններս ևս միավորել ենք միմյանց հետ՝

$$M_P \cup M_L \cup M_{Pt} \rightarrow M ,$$

որտեղ M-ը բոլոր բուֆերային գոտիների միավորումն է: Այնուհետև ստացված բուֆերային գոտիների միավորումը հարաբերելով հետազոտվող տարածքին, տվյալ դեպքում Երևան քաղաքի վարչական տարածքին, մասնատել ենք և ստացել աղբյուսներ տեղադրելու նպատակով ցանկալի և անցանկալի տարածքները:

$$S \setminus M \rightarrow s,$$

որտեղ S-ը վարչական տարածքն է, իսկ s-ը վարչական տարածքում ցանկալի տարածքները, որտեղ թույլատրվում է աղբյուս տեղադրել:

Մեր կողմից մշակված և կազմված ԱՏՀ գրաֆիկական մոդելը, որը ցույց է տալիս աղբյուս-միջավայր փոխհարաբերության տեսակետից աղբյուսների օպտիմալ տեղի որոշման ողջ տրամաբանական կառուցվածքը, բխում է աշխարհատեղեկատվական ձևայնացումից (նկար 1):



Նկար 1. Աղբյուսների տեղաբաշխման նպատակով բուֆերային գոտիավորման գրաֆիկական մոդելը

Նրանում պատկերել ենք տվյալների, ֆունկցիաների և միջանկյալ ու վերջնական արդյունքների տրամաբանական հաջորդականությունը:

Բերված սխեմայով ArcGIS Desktqp ծրագրային միջավայրում ստեղծել ենք նրա ֆիզիկական մոդելը (նկար 2): Երևան քաղաքի համար կատարված հաշվարկի արդյունքը ներկայացված է նկար 3-ում:

Աղբյուսների օպտիմալ տեղի որոշման նպատակով կիրառված գործոններից՝ երկրաբանական նստվածքները, ջրաերկրաբանական իրավիճակը, երկրաշարժա-վտանգավորությունը, մորֆոդինամիկ վտանգավոր երևույթները, տեղանքի բարձրաչափությունը, ռելիեֆի թեքություններն ու կողմնադ-րությունները, մակերևույթի ջերմունակությունը, բուսականությունը, հողերի տարածագնահատման գոտիները, շենքերի և շինությունների տարածագնահատման գոտիները բուֆերային գոտիավորման եղանակով գնահատումը հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ ենք համարել կիրառել կշռային եղանակը՝ գործոնների ու նրանց տարրերի ստանդարտավորման մեթոդով:



Նկար 2. Աղբյուսների տեղաբաշխման նպատակով բուֆերային գոտիավորման հաշվարկի ֆիզիկական մոդելը



Նկար 3. Աղբյուսների տեղաբաշխման նպատակով ԱՏՀ վերլուծության արդյունքում ստացված բուֆերային գոտիների պատկերը

Ստանդարտավորումը կատարել ենք միմյանց նման բայց որոշակի տարբեր մոտեցումներով գոյություն ունեցող ֆունկցիաների համադրմամբ [2]:

Yij = (Xij-Xj min)/(Xj max- Xj min), (1)

Yij = (Xj max - Xij)/(Xj max- Xj min), (2)

որտեղ՝

Yij–ն j-րդ գործոնի i-րդ տարրի ստանդարտ արժեքն է,

Xij-ն j-րդ գործոնի i-րդ տարրի իրական մեծությունն է,
Xj min-ը j-րդ գործոնի իրական նվազագույն մեծությունն է,
Xj max-ը j-րդ գործոնի իրական առավելագույն մեծությունն է:

Երբ տվյալ գործոնի առանձին տարրերի արժեքների աճը բացասական ազդեցություն ունի աղբյուսների տեղադրման վրա, ապա Yij-ի հաշվարկը կատարվում է (1) բանաձևով, հակառակ դեպքում (2) բանաձևով:

Աղբյուսների տեղի որոշման վերջնական S արժեքը ստացել ենք տվյալ կետում բոլոր գործոնների տարրերի Yij-ի միջին թվաբանականից (3): S-ի արժեքն ընկած է 0-1 միջակայքում: 0-ն վատագույն պայման է, իսկ 1-ը՝ լավագույն (նկ.4):

$$S = \frac{\sum_{j=1}^{n} Y_{ij}}{n}$$, (3):



Նկար 4. Երևան քաղաքում աղբյուսների տեղաբաշխման նպատակով, կշռային եղանակով կատարված ստանդարտավորման արդյունքները

Հաշվարկն իրականացրել ենք ArcGIS Desktqp ծրագրային միջավայրում, օգտագործելով Map Algebra գործիքը:

Ստացված քանակական գնահատականների արժեքներին կարելի է տալ նաև որակական գնահատականներ: Ընդ որում որքան պայմանները վատ են, այնքան մեծ են աղբյուսների կառուցման և բնապահպանական ծախսերը: Դրանք միմյանց հակադարձ համեմատական են: Ուստի որակական գնահատումը պետք է բխի տնտեսական և բնապահպանական շահերից: Մեր կողմից առաջարկվում է քանակական գնահատականներին համապատասխան հետևյալ որակական գնահատականները. 0.00-0.20 ծայրահեղ վատ, 0.21-0.40 շատ վատ, 0.41-0.60 վատ, 0.61-0.80 միջին, 0.81-1.00լավ պայմաններ:

Ամփոփելով պետք է ասել, որ Երևան քաղաքի վարչական տարածքում աղբյուսներ տեղադրելու համար լավ պայմաններ չկան: Համադրելով բուֆերային գոտիավորման և կշռային եղանակով ստացված արդյունքները, ստացվում է, որ Երևանի վարչական տարածքում աղբյուսներ տեղադրելու

համար բուֆերային ցանկալի գոտում կա ընդամենը 102 հա տարածք, չորս հիմնական առանձին հատվածներով, որտեղ գլխավորապես կշռային ստանդարտավորման արդյունքներով միջին և վատ պայմաններ են:

Գրականություն

1. Иванников А.Д., Кулагин В.П., Тихонов А.Н., Цветков В.Я. Геоинформатика. – М.: МАКС Пресс, 2001. – 349с.
2. Javaheri H., Nasrabadi T., Jafarian M. H., Rqwshan G. R., Khqshnam H. – Site Selection Of Municipal Sqlid Waste Landfills Using Analytical Hierarchy Prqcess Methqd In A Geqgraphical Infqrmatiqn Technqlqgy Envirqnment In Girqft-Iran//J. Envirqn. Health. Sci. Eng., 2006, Vql. 3, Nq. 3, pp. 177-184.

ГЕОИНФОРМАЦИОННАЯ МОДЕЛЬ РАЗМЕЩЕНИЯ СВАЛОК НА АДМИНИСТРАТИВНОЙ ТЕРРИТОРИИ ГОРОДА ЕРЕВАНА

Наапетян С.А., преподаватель, ЕГУ

Для определения месторасположения свалок учитываются различные факторы и критерии. Согласно этим факторам и критериям было проведено геоинформационное моделирование с целью оценки территории для размещения свалок на административной территории Еревана.

Для ГИС-моделирования были выбраны принципы буферного зонирования и весовых коэффициентов.

При сопоставлении результатов анализа буферного зонирования и метода весовых коэффициентов выяснилось, что на административной территории Еревана в пределах приемлемой буферной зоны можно выделить под свалки лишь 102га земли в виде четырех основных участков, которые согласно результатам стандартизации весовых коэффициентов имеют в основном средние и плохие условия.

GEOINFORMATION MODEL OF THE PLACEMENT OF DUMPS IN THE ADMINISTRATIVE TERRITORY OF YEREVAN CITY

Nahapetyan S.A., Lecturer, YSU

To determine the location of the dumps various factors and criteria were consider. In accordance with these factors and criteria GIS modeling was conducted in order to assess area for placement of dumps in the administrative territory of Yerevan.

For GIS modeling we selected the principles of buffer zoning and weighting factors.

A comparison of the results of analysis of the buffer zoning and the method of weighting coefficients revealed that within an acceptable buffer zone in the administrative territory of Yerevan can be identified under the dump only 102 hectares of land as four main areas, which have the middle and bad conditions in according to the results of standardization of weighting coefficients.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՎԱՀԱԳՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ , աշխ.գիտ.թեկնածու, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն

ԼԻԼԻԹ ԱԲՈՎՅԱՆ, ուսանող, ԵՊՀ

Հիմնաբառեր. Լանդշաֆտների գեղագիտություն, քարտեզագրում, ԱՏՀ, Սյունիքի մարզ

Ժամանակակից աշխարհագրության հեռանկարային ճյուղերից մեկն է համարվում լանդշաֆտների գեղագիտական հատկությունների ուսումնասիրումը: Լանդշաֆտների՝ մարդկանց հոգեկան-գեղագիտական պահանջների բավարարման հատկությունը քիչ է ուսումնասիրվել: Լանդշաֆտների գեղագիտական գնահատման միջոցով կարելի է ոչ միայն հիմնավորված պնդել տարբեր բնական օբյեկտների պահպանման անհրաժեշտությունը, բացահայտել մարդկանց ներդաշնակ և հարմարավետ կենսագործունեությունն ապահովող տարածքային միավորները, այլև իրագործել ռեկրեացիոն գործունեության պլանավորում[6]:

Լանդշաֆտի գեղագիտությունը լանդշաֆտագիտության հատուկ ուղղություն է, որնուսումնասիրում է բնական, բնական-անթրոպոգեն լանդշաֆտների գեղեցկությունը, գեղատեսիլությունը, նրանց գեղագիտական, ընկալման և գնահատման առնձնահատկությունները[7]:

Բնության գեղագիտական արժեքների գաղափարն ունի խորը պատմական արմատներ: Ոչ պակաս երկարատև պատմություն ունեն բնության գեղագիտական որակների գնահատման փորձերը: Բնության գեղեցկության մաթեմատիկական վերլուծության հնարավորության մասին առաջին մտքերը հայտնվել են Պյութագորասի աշխատանքներում[5]:

Արդեն 1960-ական թվականներից ձևավորվել են

լանդշաֆտների գեղագիտական գնահատման 2 մոտեցում՝ ,օբյեկտիվ և ,սուբյեկտիվ: Առաջին մոտեցումը ենթադրում է գեղագիտական գրավչության օբյեկտիվ չափանիշների, լանդշաֆտի ֆիզիկական բնութագրիչների բացահայտումը, իսկ երկրորդն ուսումնասիրում է տարբեր խմբի մարդկանց մոտ լանդշաֆտագեղագիտական նախապատվությունների առանձնահատկությունները[4]:

Օբյեկտիվ մոտեցման ժամանակ կիրառվում է բաղադրիչային մոտեցումը, որտեղ լանդշաֆտի յուրաքանչյուր ,նշանակալի գործոն (օրինակ՝ ռելիեֆի, բուսականության առանձնահատկությունները) գնահատվում են առանձին, սովորաբար, բալային սանդղակով: Ապա յուրաքանչյուր ցուցանիշից ստացված մասնավոր գնահատականների համադրման ընթացքում կատարվում է բնատարածքային համալիրի ինտեգրալ գնահատում[4,5]:

Առավել քիչ է տարածված լանդշաֆտների գեղագիտական գնահատման սուբյեկտիվ մոտեցումը: Այս դեպքում ուսումնասիրողը հենվում է մարդկանց սուբյեկտիվ կարծիքի այս կամ այն բնապատկերի գեղագիտական գրավչությունից ստացած տպավորությունների վրա: Սուբյեկտիվ մոտեցման նպատակն է բացահայտել գեղագիտական ռեսուրսների գլխավոր օգտագործողների բնապատկերային նախապատվությունները [4,7]:

Լանդշաֆտների գեղագիտական գնահատում է կատարել նաև Դ.Ա.Դիրինը[3]: Որպես մոդելային հատված ընտրվել է Մուլտա գետի ավազանը, որտեղ առկա են Ալթային բնորոշ լանդշաֆտների հիմնական տիպերը: Գեղագիտական արժեքների գնահատման համար տարածքի վրա տեղադրվել են դիտակետեր, որոնք ֆիքսել են շրջակա բնապատկերներում բոլոր վիզուալ փոփոխությունները: Հենց այդ

կետերից էլ գնահատվել է գեղագիտությունն ըստ առանձնացված ցուցանիշների: Տեղագրական քարտեզի թվային մոդելի վրա ArcView գեոինֆորմացիոն համակարգի միջոցով ուրվագծվել է տեսանելիության զոնան և նրա վրա որպես հաջորդ շերտ տեղադրվել է լանդշաֆտային քարտեզը:

ՀՀ տարածքում լանդշաֆտների գեղագիտական գնահատում է կատարել Լ.Մ.Մարտիրոսյանը [2]: Գնահատվել է Սևանա լճի ավազանի լանդշաֆտները: Գնահատման հիմքում դրվել են հետևյալ բաղադրիչները՝ ռելիեֆ, բուսածածկ, ջրեր, ինչպես նաև մարդածին բաղադրիչը: Նշված ցուցանիշները գնահատվել են քառաստիճան համակարգով՝ 0-3 բալ: Առանձնացվել է չորս բնապատկերային համալիրներ, հաշվարկել յուրաքանչյուրի տոկոսային չափն ամբողջ տարածաշրջանից, որոշել տեսակարար էսթետիկական արժեքը $L=S_iN_i\sum(SN)$ բանաձևով, որտեղ L-ը տեսակարար էսթետիկ ականարժեքն է, S_i-ը մակերեսը, N-ը առանձնացված միավորի գնահատականը բալերով: Ապա որոշվել է յուրաքանչյուր բնապատկերային համալիրի էսթետիկական արժեքի տեսակարար գործակիցը՝ $r_i=L_i/P_I$, որտեղ P_i_ տվյալ բնապատկերային համալիրի մասնաբաժինն է տարածաշրջանում, r_i_ էսթետիկական արժեքի տեսակարար գործակիցը: Հաշվարկների արդյունքում ամենաբարձր ցուցանիշներն են ստացել լճային և եռնային բնապատկերները:

Մեր կողմից որպես հետազոտության օբյեկտ ընտրվել է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան հատվածում գտնվող Սյունիքի մարզը կամ Զանգեզուրի ֆիզիկաշախարհագրական շրջանը և նրանում տարածված լանդշաֆտային գոտիները: Սյունիքի մարզը բնատնտեսական յուրօրինակ շրջան է և դարեր շարունակ ենթարկվելով բնական և անթրոպոգեն գործոնների ազդեցությանը, անընդհատ փոփոխվել է: Տարածաշրջանն իրենից ներկայացնում է մի բարդ բնական առանձին համակարգ, որն աչքի է ընկնում բնական բաղադրիչների բազմազանությամբ և առանձնահատկությամբ, երկրաբանական և ռելիեֆի բարդ կառուցվածքով, կլիմայական հողաբուսական ծածկի խիստ բազմազանությամբ, ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր տարածքի վրա իրար հաջորդող կիսաանապատային, չորտափաստանային, տափաստանային, անտառատափաստանային, անատառային, մերձալպյան, ալպյան և նիվալ լանդշաֆտայինգ ոտիներով[1]:

Լանդշաֆտների օբյեկտիվ գնահատման ժամանակ օգտագործվել է ArcGIS ծրագրային միջավայրը, որտեղ տեղադրվել են Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գհահատման համար անհրաժեշտ քարտեզագրական շերտերը (ռելիեֆի թվային մոդել, կողմնադրություն, թեքություն, բուսականություն, լճեր, գետեր, հատուկ պահպանվող տարածքներ, լեռնագագաթներ, հուշարձաններ, կլիմա, բնակավայրեր, ճանապարհներ, ժայռեր): Առաջին հերթին կատարվել է առկա բոլոր տվյալների ֆորմատային նույնացում, վեկտորային ֆորմատից փոխադրում ռաստրային ֆորմատի (featurestoraster), ապա կատարվել է այդ տվյալների վերադասավորում (reclassification): Այնուհետև WeightedOverlay ֆունկցիայի միջոցով կատարվել է վերադասավորման հետևանքով ստացված շերտերի համադրում: Արդյունքում ստացվել է Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գրավչությունն արտահայտող քարտեզը (նկար 1):

Քարտեզից երևում է, որ առավել մեծ գեղագիտական արժեք են ներկայացնում ալպյան, մերձալպյան, մասամբ նաև տափաստանային և անտառային լանդշաֆտները, որոնք համեմատաբար զերծ են մնացել մարդկային գործունեության հետևանքներից:



Նկար 1.Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գրավչության քարտեզ

Սուբյեկտիվ գնահատման համար ընտրվել են Սյունիքի մարզի 4 տարբեր լուսանկարներ, կազմվել է հարցաթերթիկ, որտեղ առկա են բնապատկերի գեղագիտական-էկոլոգիական հատկանիշների, էմոցիոնալ գնահատման աղյուսակներ՝ 1-ից 7 բալային սանդղակով: Այսպես, 1-ին սյունը նշանակում է .ծայրահեղ բացասական տպավորություն, իսկ 7-րդը՝ .բավական դրական, 4-րդը .չեզոք, մնացածը միջանկյալ դիրք են զբաղեցնում: Հարցմանը մասնակցել են 14-ից մինչև 50 տարեկան 30 անձ:

Բնապատկերների գեղագիտական գնահատման հարցաթերթիկ

1. Նշեք Ձեր ծննդյան տարեթիվը, սեռը, ազգությունը, մասնագիտությունը.
2. Կրթությունը. միջնակարգ, անավարտ բարձրագույն, բարձրագույն (անհրաժեշտ է ընդգծել),

   Հիմա Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այն բնապատկերների մասին հարցերի շարքը, որոնք դուք տեսնում եք:
3. Ինչպես եք գնահատում լանդշաֆտի գեղագիտական-էկոլոգիական հատկանիշներն ընդհանուր առմամբ: (Խաչ դրեք աղյուսակ 1-ի համապատասխան վանդակում):

Աղյուսակ 1.

Բնապատկերի գեղագիտական-էկոլոգիական հատկանիշների գնահատում

Հատկություն	Գնահատման սանդղակ							Հատկություն
	1	2	3	4	5	6	7	
Միօրինակ								Բազմազան
Աններդաշնակ								Ներդաշնակ
Սովորական								Էկզոտիկ
Տգեղ								Գեղեցիկ
Վտանգավոր								Անվտանգ
Խախտված								Չխախտված

4. Ինչպես եք Դուք գնահատում բնապատկերի հանդեպ Ձեր էմոցիոնալ ռեակցիան: (Խաչ դրեք աղյուսակ 2-ի համապատասխան վանդակում):

Աղյուսակ 2

Բնապատկերի էմոցիոնալ գնահատումը

Էմոցիոնալ տպավորությունը	Գնահատման սանդղակ							Էմոցիոնալտպավորությունը
	1	2	3	4	5	6	7	
Վախիզգացում								Ուրախություն
Գրգռվածություն								Խաղաղություն
Ընկճվածություն								Հոգեկանվերելք
Տխրություն								Հիացմունք

Լուսանկարների գեղագիտական-էկոլոգիական հատկանիշների գնահատման արդյունքում առավելագույն բալերը հավաքել է նկար 5-ը (1110), ապա 4-ը (1078), 2-ը (929), 3-ը (928): Էմոցիոնալ գնահատման արդյունքում կրկին առավելագույն բալերը հավաքել է նկար 5-ը (743), ապա 4-ը (741), 2-ը (608), 3-ը (604):

Նկ.2. Մեղրի քաղաքի համայնապատկերը

Նկ. 3 Մև լիճ

Նկ.4 Որոտանի կիրճը Տաթևի ճոպանուղուց Նկ. 5Շիկահողի արգելոց

Վերլուծելով հարցման արդյունքները՝ կարելի է եզրակացնել, թե որքան մեծ ազդեցություն է մարդկանց վրա թողնում գունային գամման, ինչպես նաև պեյզաժում մի քանի բաղադրիչների ներդաշնակ համադրությունը: Հայտնի է, որ կարմիր, նարնջագույն, դեղին գույները համարվում են տաք: Դրանք ազդում են աստիճանաբար, արթնացնում և ակտիվացնում են: Այդ է պատճառը, որ նկար 5-ը գետի, ծառերի, դրանց բազմերանգ տերևների ներդաշնակ համարդրության շնորհիվ ստացել է առավելագույն բալերը: Նկար 4-ում առկա ռելիեֆի (լեռների ու հովտի), բուսականության (կանաչ խոտածածկի ու մանուշակագույն ծաղիկների) համադրությունը ևս գրավել է հարցվողներին: Կապույտ, երկնագույն երանգները սառը գույներ են: Դրանք համարվում են հանգստացնող գույներ: Հենց դա է պատճառը, որ նկար 3-ը կապույտ լճով և երկնքով, ինչպես նաև ռելիեֆի համեմատաբար միատարությամբ նվազագույն բալերն է ստացել: Նկար 2-ը ևս աչքի է ընկնում բաղադրիչների բազմազանությամբ (լեռը, ծառերը, շենքերը): Սակայն գունային գամման, ինչպես նաև մարդու կողմից խախտված բնությունը թույլ չեն տվել, որ այն առավելագույն բալերը հավաքի:

Գրականություն

1. ՄանասյանՄ.Գ., ԳրիգորյանԱ. Թ., ՊոտոսյանԱ. Հ., Սյունիքի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը): Ե., ԵՊՀիրատ., 2002, էջ 155:
2. ՄարտիրոսյանԼ. Մ., Սևանա լճի ավազանի լանդշաֆտների էսթետիկական գնահատումը և քարտեզագրումը ռեկրեացիոն զարգացման նպատակով, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2014, էջ 41-46 :
3. Дирин Д.А., Подходы к оценке эстетических ресурсов горных ландшафтов (на примере бассейна р. Мульта), Ползуновский вестник, N 2, 2004, ст. 67-75 :
4. Дирин Д.А., Попов Е.С., Оценка пейзажно-эстетической привлекательности ландшафтов: методологический обзор // Известия Алтайского государственного университета, 2010 № 3, ст. 120-124:
5. Калашникова О.В. Методические основы оценки эстетичности ландшафтов, Опубликовано: *// Вопросы дальневосточной географии.- Владивосток: Изд-во ДВГУ, стр. 66-68.*
6. Мотошина А.А., Вдовюк Л. Н. Оценка эстетических свойств ландшафтов Тобольского района Тюменской области в рекреативных целях // Географический вестник, 2012, стр. 10-20.
7. **Николаев В.А.** Ландшафтоведение: Эстетика и дизайн: Учеб. пособие / М.: Аспект Пресс, 2005, 176 С.

ЭСТЕТИЧЕСКАЯ ОЦЕНКА И КАРТОГРАФИРОВАНИЕ ЛАНДШАФТОВ СЮНИКСКОЙ ОБЛАСТИ ПОСРЕДСТВОМ ГЕОГРАФИЧЕСКИХ ИНФОРМАЦИОННХ СИСТЕМ

Мурадян В.С., к.г.н., ЕГУ
Абовян Л. С., студент, ЕГУ

В статье приведена эстетическая оценка ландшафтов Сюникской области. Составлена карта эстетической привлекательности с использованием географических информационных систем.

AESTHETIC EVALUATION AND MAPPING OF LANDSCAPES OF SYUNIK REGION OF USING GEOGRAPHIC INFORMATION SYSTEMS

Muradyan V.S., PhD, Abovyan L.S., student, YSU

The article describes the aesthetic evaluation landscapes of Syunik regionA map of the aesthetic appeal was created of using the geographic information systems.

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ

ՀՈՎԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ, աշխ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, ԵՊՀ-ի հայցորդ

Հիմնաբառեր. ջրավազանային կառավարման տարածք, ջրերի աղտոտման ինդեքս(ՋԱԻ), ջրօգտագործման սահմանափակման աստիճան, էկոլոգիական որակի հարաբերություն (ԷՈՀ):

ՀՀ ջրերի քանակական և որակական բնութագրիչների առանձնացման, ջրագրական ցանցի օրինաչափությունների բացահայտման և հետազոտման հիմնահարցերով իրականացվել են շատ ուսումնասիրություններ [1,3,9,11,13,15] և այլն:

Հանքարդյունահանության տարածքների ջրային օբյեկտների էկոլոգիական վիճակի վերլուծության նպատակով օգտագործվող ջրաչափական, ջրաքիմիական, ջրաերկրաբանական և այլ մեթոդների տարածական զուգորդումները հետազոտելու համար նպատակահարմար է կիրառել գետավազանային մոտեցումը, ինչը հնարավորություն է տալիս ներառել ուսումնասիրվող ջրային օբյեկտների արտաքին երկրադինամիկ գործընթացները [16]:

Գրականության մեջ առկա են ջրային ռեսուրսների որակի գնահատման մեթոդների երկու խմբեր: Առաջին խմբում ընդգրկված են այն մեթոդները, որոնց միջոցով գնահատվում են ջրի հանրագումարային որակը՝ ջրաքիմիական, ջրաֆիզիկական, ջրակենսաբանական և միկրոկենսաբանական ցուցանիշների հիման վրա: Այս մեթոդներով ջրի որակի գնահատման համար սահմանվում են ջրի որակի դասեր, որոնք ջրի աղտոտվածության աստիճանով պայմանավորված՝ սանդղակավորվում են: Այս մեթոդների հիմնական թերությունն այն է, որ նույն ջրի նմուշի տարբեր ցուցանիշներ կարող են պատկանել որակի տարբեր դասերի: Երկրորդ խումբը կազմում են ջրի որակի գնահատման ընդհանրացված քանակական բնութագրիչների հիման վրա հաշվարկված ցուցանիշները՝ որոշված հիմնական ցուցանիշների շարքով և ջրօգտագործման տեսակներով: Հիմնական բնութագրիչներ են դիտարկվում ջրի որակի ցուցիչները և նրա աղտոտվածության գործակիցները[14]:

Մակերևութային ջրերի վիճակի գնահատման համար կիրառվում է նաև ջրերի աղտոտման ինդեքսը(ՋԱԻ): ՋԱԻ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՋԱԻ = \frac{\sum_{1}^{6} (C_I / ՍԹԿ_I)}{6}$$

որտեղ 6-ը հաշվարկման համար վերցված ցուցանիշների (աղտոտիչների) քանակն է, *ՍԹԿi*-ն՝ յուրաքանչյուր *i*-րդ տարրի կամ միացության սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է, *Ci*-ն ջրում առավել պարունակություն ունեցող տարրերի փաստացի քանակություններն են՝ կախված դրանց ՍԹԿ-ի գերազանցման, ինչպես նաև չգերազանցման հանգամանքներից, ներառյալ նաև լուծված թթվածնի և թթվածնի կենսաքիմիական պահանջը (ԹԿՊ$_5$) [12]:

Մակերևութային ջրերի տեխնածին աղտոտման գնահատման վերոնշյալ մեթոդները լայն կիրառություն ունեն ջրի որակի գնահատման խնդիրների, այդ թվում՝ Սյունիքի մարզի տարբեր համայնքների ջրային օբյեկտների էկոլոգիական վիճակի վերաբերյալ աշխատանքներում[2,4]: Արդյունքում բացահայտվել են Ողջի գետի և նրա վտակների ավազանում տարբեր քիմիական տարրերով ջրերի աղտոտվածությունը:

Հատկապես Սյունիքի մարզի հանքարդյունահանության տարածքներում և հանքագործական ընկերությունների արտադրական ենթակառուցվածքների կողմից մակերևութային և ստորերկրյա ջրերի տեխնածին աղտոտման հետևանքով որակի ցուցանիշների տարածաժամանակային փոփոխությունները և գնահատումը ուսումնասիրել ենք ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ ,Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերին համաձայն [7]: Այն համադրվել և ըստ ջրի աղտոտվածության մակարդակի սանդղակավորվել է ,Ջրի որակի գնահատում ըստ Եվրամիության (ԵՄ) Ջրի շրջանակային դիրեկտիվի (ՋՇԴ)ն մեթոդաբանության նորմերի հետ [8]: Ջրային օբյեկտների էկոլոգիական կարգավիճակի դասակարգման հիմքում ընդունվել է այնպիսի սկզբունք, որի համաձայն ,տվյալ ջրային մարմնին տրվի կենսաբանական որակի, ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական տարրերից ամենացածր կարգավիճակը: Այդպիսով, ջրային մարմնի կարգավիճակը որոշվում է այն տարրի որակով, որն ամենաշատ ազդեցությանն է ենթարկվել մարդածին ճնշման արդյունքումն [8, էջ 22]: Օրինակ՝ գետի որևէ հատվածի ջրերի որակի դասը որոշելու համար հաշվի է առնվում նրանում հայտնաբերված անգամ մեկ տարրի կամ միացության ամենավատ կարգավիճակը (ՍԹԿ-ն գերազանցող ամենաբարձր պարունակությունը), որը համաձայն ԵՄ ՋՇԴ-ի, ցույց է տալիս տվյալ տարրի ,0-1ն միջակայքում էկոլոգիական որակի հարաբերության (ԷՈՀ) ամենացածր արժեքը: Դրանով պայմանավորված որոշվում է նաև տվյալ ջրային օբյեկտի որոշակի հատվածի էկոլոգիական կարգավիճակը: Միաժամանակ, յուրաքանչյուր տարրի էկոլոգիական կարգավիճակի դասակարգման համար սահմանվել են տվյալ տարրի էկոլոգիական որակի հինգ դասեր (գերազանց-V, լավ-IV, միջին-III, անբավարար-II, վատ-I):

ՀՀ կառավարության կողմից սահմանված որակի դասերի ցուցանիշները հիմնականում որոշվել են յուրաքանչյուր տարրի, միացության կամ ջրի ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկության նվազագույն արժեքի (գերազանց կարգավիճակի) և $bn=b_1 \bullet q^{n-1}$ պրոգրեսիայով, որտեղ q=2: Այն ներառում է մինչև էկոլոգիական վատ կարգավիճակի ցուցանիշը, որից հետո անբավարար կարգավիճակը որոշվել է վատ կարգավիճակից մեծ կամ փոքր արժեքներով:

ԷՈՀ-ն (E) վերցված նմուշում յուրաքանչյուր տարրի դիտված կենսաբանական արժեքի (B), այսինքն փաստացի պարունակության հարաբերությունն է նույն ջրային օբյեկտում տվյալ տարրի

աղտոտումից կամ ազդեցությունից զերծ հողմային կենսաբանական արժեքին, այսինքն՝ ֆոնային պարունակությանը (P):

$$E = \frac{B}{P}$$

ԵՄ ՋՇԴ-ի պահանջներին համապատասխան հանքարդյունահանության գործընթացներում ջրերի ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական ճնշումների բացահայտման նպատակով հավաքագրվել, վերլուծվել և դասակարգվել են Որոտանի, Ողջու, Մեղրիգետի և այլ գետերի գետավազաններում մարդածին ճնշումների տիպերի և ծավալների մասին տվյալները: Ճնշումները ուսումնասիրվել են ջրօգտագործման հետևյալ ուղղություններով. ջրառ արդյունաբերական նպատակով, հանքագործական արդյունաբերության ջրահեռացում, պինդ թափոններ և պոչամբարներ:

Սյունիքի գետերի ջրաքիմիական որակի վերլուծություններն ու գնահատականները կատարվել են ՀՀ բնապահպանության նախարարություն Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի 2007-2013թթ. ջրի որակի մոնիթորինգի ամսական և միջին տարեկան տվյալների, ինչպես նաև որոշ հանքարդյունաբերական ձեռնարկությունների կողմից ներկայացված հանքավայրերի ՇՄԱԳ-ների ջրաքիմիական մոնիթորինգային տվյալների հիման վրա[9]: Այդ տվյալների հիման վրա որոշվել են այն ճնշումները, որոնք ունեն միջինից վատ (ըստ դասերի) էկոլոգիական ազդեցություններ Սյունիքի գետերի և նրանց վտակների վրա[5]: Ջրի որակի մոնիթորինգի միջին տարեկան տվյալների համաձայն Սյունիքի մարզի գետերի ջրի որակը դասակարգվել է ըստ ոռոգման նպատակով օգտագործման նորմերի, և տրվել է հանքարդյունահանության ճնշումներով պայմանավորված ջրօգտագործման սահմանափակման աստիճանը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Սյունիքի մարզի գետերի ջրերի որակի դասակարգումը որպես ոռոգման ջուր

Գետը	*Ջրօգտագործումը ոռոգման նպատակներով*		
	Առանց սահմանափակման	*Չափավոր սահմանափակմամբ*	*Անթույլատրելի*
Որոտան	Ակունքից մինչև Սիսիան քաղաք	Սիսիան քաղաքից մինչև ՀՀ պետ. սահման	-
Սիսիան	Ակունքից գետաբերան	-	-
Գորիսգետ	Ակունքից մինչև Գորիս քաղաք	-	Գորիս քաղաքից մինչև ՀՀ պետ. սահման
Ողջի	Ակունքից մինչև Քաջարան քաղաք	Քաջարանից մինչև Կապան քաղաքի օդանավակայանի մերձակա հատված	Կապանի օդանավակայանից մինչև ՀՀ պետ. սահման
Գեղի	Ակունքից մինչև Աջաբաջ բնա-կավայր և Նոր Աստղաբերդից մինչև գետաբերան	-	Աջաբաջից մինչև Նոր Աստղաբերդ բնակավայրն ընկած հատված
Արծվանիկ	-	-	Գետն ամբողջությամբ
Մեղրիգետ	Ակունքից մինչև Թխկուտ գյուղի մոտ ընկած հատված	Թխկուտ գյուղից մինչև գետի գետաբերան ընկած հատված	-
Բողաքար	Գետն ամբողջությամբ	-	-
Կարճևան	-	-	Գետն ամբողջությամբ

Հանքարդյունահանության զարգացման արդյունքում Սյունիքի գետերն աղտոտվում են մեծ քանակությամբ ծանր մետաղներով: Շահագործվող գունավոր մետաղների հանքավայրերի

տարածքներից և գործող կամ արդեն իսկ ռեկուլտիվացված պոչամբարների մակերևութային ու ստորգետնյա (ինֆիլտրացիոն) արտահոսքերից աղտոտվում են Որոտանի գետավազանի Սիսիան գետի Կիշկոշտ, Այրիգետ վտակները, Ողջիի գետավազանում՝ Ողջի գետը և նրա Գեղի, Արծվանիկ, Նորաշենիկ, Կավարտ, Գեղանուշ վտակները, իսկ Մեղրիգետի գետավազանում՝ Մեղրիգետ, Կարճևան գետերը և դրանց Խաչիձոր ու Ագարակ վտակները (նկ. 1):



Նկար 1. Սյունիքի մարզի գետերի ջրի որակի դասակարգումը՝ ըստ նմուշառման դիտակետերի

Չնայած շահագործվող հանքավայրերի ճնշմանը, նատրիումական աղերի և որոշ իոնների տոքսիկության գնահատումներով Որոտան, Սիսիան, Գորիսգետ, Ողջի, Գեղի, Վաչագան, Ծավ, Մեղրիգետ գետերի, ինչպես նաև Արծվանիկ գետի վերին հոսանքների ջրերը դասակարգվում են գերազանց (I) և լավ (II) որակի դասերի: Այս գետերի ջրերը կարող են օգտագործվել վարելահողերի ոռոգման համար: Արծվանիկ գետի միջին հոսանքների ջրերը պատկանում են միջին (III) որակի դասին և կարող են օգտագործվել այն մշակաբույսերի վարելահողերի ոռոգման նպատակներով, որոնց տերևների հետ ջրի շփումը հնարավոր է բացառել կամ հասցնել նվազագույնի:

Հանքագործական ձեռնարկությունների ազդեցությամբ պայմանավորված՝ Կարճևան, Ողջի գետերի միջին և ստորին հոսանքների, ինչպես նաև Արծվանիկ գետի ստորին հոսանքի ջրերը ոռոգման համար թույլատրելի չէ օգտագործել, դրանց բարձր հանքայնացման և ծանր մետաղների մեծ պարունակության պատճառով:

Սյունիքի գետերում, ըստ հանքայնացման և թթվածնային ռեժիմների, ջրի որակը գերազանց (I) և լավ (II) դասերի է: Որոտանի գետավազանում գտնվող Դաստակերտի պ/մ հանքավայրի ՇՄԱԳ-ի 2011-2012թթ. ջրաքիմիական մոնիթորինգային տվյալների համաձայն, Սիսիան գետի Կիշկոշտ և Այրիգետ գետերի ջրի որակը լավ (II) դասից հոսքով դեպի ներքև նվազում է մինչև վատ (V) դասի (աղյուսակ 3): Դաստակերտի չշահագործվող բաց հանքավայրի ինտենսիվ էրոզիայի հետևանքով խիստ քայքայված ռեկուլտիվացված պոչամբարի տարածքից ձևավորվող մակերևութային հոսքերը ծանր մետաղներով աղտոտում են Կիշկոշտ վտակը, որն էլ իր հերթին աղտոտում է

Այրիգետը: Դաստակերտի պ/մ հանքավայրի վերաշահագործման դեպքում կմեծանա գետերի աղտոտումը:

Աղյուսակ 2

Ողջի գետի Կապան քաղաքից 6,8 կմ ներքև ընկած հատվածում ջրերի ֆիզիկաքիմիական որակի դասերը

Որակի ցուցանիշներ	*Միավոր*	*Որակի դաս*						
		2007թ.	*2008թ.*	*2009թ.*	*2010թ.*	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*
Ընդհանուր հանքայնացում	մգ/լ	242,64	336,80	301,11	408,08	364,57	334,81	392,27
ԹԿՊ$_5$	մգO$_2$/l	2,38	2,74	3,38	2,31	2,83	2,94	3,46
Էլեկտրահաղորդականություն	բՍիմ/սմ	373,29	459,82	392,50	592,40	383,57	515,09	603,58
Վանադիում, ընդհանուր	մկգ/լ	2,95	1,66	1,42	1,24	1,64	2,15	2,57
Երկաթ, ընդհանուր	մգ/լ	0,21	0,26	0,19	0,22	0,31	0,32	0,19
Մանգան, ընդհանուր	մկգ/լ	86,04	252,78	149,35	110,00	157,01	191,75	184,23
Կոբալտ, ընդհանուր	մկգ/լ	49,41	2,74	2,12	1,72	2,51	1,88	2,27
Պղինձ, ընդհանուր	մկգ/լ	39,63	111,96	94,10	92,88	128,01	119,61	86,55
Ցինկ, ընդհանուր	մկգ/լ	77,50	79,16	95,98	74,36	108,63	108,33	100,53
Մոլիբդեն, ընդհանուր	մկգ/լ	17,39	14,69	116,03	121,36	84,86	508,42	229,07
Կադմիում, ընդհանուր	մկգ/լ	0,85	1,65	1,34	1,04	1,05	0,84	1,28
Ծարիր, ընդհանուր	մկգ/լ	1,25	0,65	1,76	2,06	1,98	0,64	3,51
Կապար, ընդհանուր	մկգ/լ	2,98	0,47	0,39	0,31	0,40	0,92	0,27

գերազանց	լավ	միջին	անբավարար	վատ

Ողջիի գետավազանում Զանգեզուրի պ/մ կոմբինատի (ԶՊՄԿ) հոսքաջրերի և բաց հանքի տարածքից տեղումներով ձևավորվող մակերևութային և ստորերկրյա հոսքերի շնորհիվ Ողջի գետի՝ Քաջարան քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը լավ (II) դասից նվազում է միջին (III) և անբավարար (IV) դասերի (աղյուսակ 2):

Բնական ֆոնի համեմատությամբ ծանր մետաղների բարձր պարունակությամբ և ԶՊՄԿ շարունակական աճող ջրառով պայմանավորված՝ գետի ինքնամաքրման և ինքնավերականգնման ներուժը (ունակությունը) խիստ փոքրացել է [10]: Դրան նպաստել է նաև արտադրական նպատակներով ջրառի հետևանքով գետերի փաստացի նվազագույն և էկոլոգիական հոսքերի բացասական տարբերությունը[6]: Հատկապես ծանր մետաղներով գետի աղտոտվածության բարձր մակարդակը պահպանվում է Ողջի գետի հոսքով դեպի ներքև, իսկ Արծվանիկ, Նորաշենիկ և Կավարտ վտակների թափման արդյունքում, այն ավելի է բարձրանում, ինչի հետևանքով ջրի որակը ընկնում է: Ողջի գետի ստորին հոսանքում՝ Արծվանիկ գետի Ողջի գետին միացման կետից ներքև, ջրերի հանքայնացմամբ պայմանավորված՝ ջրերի որակը նվազում է մինչև միջին (III) և անբավարար (IV) որակի դասերի, իսկ Արծվանիկ գետում՝ վատ (V) որակի դասի՝ պայմանավորված սուլֆատ, նատրիում և կալիում իոններով (աղյուսակ 3):

Ողջի գետի Արծվանիկ վտակը Արծվանիկի պոչամբարի տարածքի էրոզիոն քայքայման պատճառով ինտենսիվորեն աղտոտվում է հիմնականում տեղումներով ձևավորվող մակերևութային հոսքաջրերով, ինչպես նաև պոչամբարի ինֆիլտրացիոն ջրերով ու տեխնիկական վթարների արտահոսքերով: Արդյունքում Արծվանիկ գետի ջրի որակը միջին (III) դասից նվազում է մինչև վատ (V) դասի՝ պայմանավորված հանքահարստացման գործընթացներում օգտագործված և թափուկատարով պոչամբար տեղափոխված թունանյութերով ու ծանր մետաղներով (կոբալտ, կադմիում, մանգան, մոլիբդեն, պղինձ, ծարիր և այլն) և հանքայնացման ռեժիմի տարրերով (աղյուսակ 2): Արծվանիկ գետի՝ պոչամբարին հարակից հատվածներում թունանյութերի և ծանր մետաղների մեծաքանակ արտանետումների պատճառով օրգանական աշխարհը (ձկներ, խեցգետնակերպեր և այլն) բացակայում են (նկ. 1):

Ըստ 2007-2013թթ. ջրաքիմիական մոնիթորինգի տվյալների, Ողջիի վտակ Գեղի գետի հովտում 2013թ. սկսած Հանքասարի պ/մ հանքավայրի ,Լեռ-Էքսե ՍՊԸ կողմից շահագործման հետևանքով ջրի որակը լավ (II) դասից նվազում է մինչև վատ (V) դասի: Գեղիի պարզարանի հոսքաջրերի անմիջապես Գեղի գետ թափվելուց հետո ջրում մոտ 30 անգամ բարձրանում է մանգանի, 6-7 անգամ՝ հանքայնացման ռեժիմի տարրերի (սուլֆատ, քլորիդ և նատրիում իոնները) և շուրջ 5 անգամ՝ մոլիբդենի միացությունների պարունակությունները [5]:

Հանքասարի պ/մ հանքավայրի հետագա շահագործումը վտանգավոր է նաև Կապան քաղաքի բնակչության առողջության համար, քանի որ Գեղի գետի Աջաբաջ վտակի ջրերով ապահովվում է Կապան քաղաքի բնակչության շուրջ 80%-ի խմելու և կենցաղային ջրի կարիքները: Ողջիի գետավազանում Քաջարանի, Կապանի և Հանքասարի հանքավայրերի տարածքում մարդածին ճնշման են ենթարկվում նաև համապատասխանաբար՝ Ողջիի Ծակքար և Կավարտ վտակները ու Գեղիի աջակողմյան վտակները, ինչպես նաև ԶՊՄԿ հանքարդյունաբերական թափոնների տարածքով հոսող Քաջարան և Փխրուտ գետերի միջև ընկած Ողջի գետի Դարափի աջակողմյան վտակը[2,4]: Այս գետերի ջրհավաք ավազանները գտնվելով հանքարդյունահանության արեալ-ներում աղտոտում են բաց հանքերի տարածքը լցակույտերի և պարզարանների ջրերում առկա ծանր մետաղներով: ԶՊՄԿ 34,5կմ ձգվող թափուկատարի արտահոսքերի, ինչպես նաև ,Դանդի Փրիշս Մեթալս Քամփնիե (ԴՓՄՔ) ՓԲԸ-ի հանքի լվացման տեխնիկական հոսքաջրերը հանքարդյունաբերական մնացորդներով և ծանր մետաղներով ինտենսիվորեն աղտոտում են նաև Ողջիի Նորաշենիկ վտակը:

Հանքարդյունահանության հետևանքով աղտոտվում են Մեղրիգետ և Կարճևան գետերը, ինչպես նաև դրանց վտակները: ,Սագամարե ՓԲԸ «Լիճքվազ-Թեյի» ոսկի-պղնձային հանքավայրի ՇՄԱԳ-ի 2011-2012թթ. ջրաքիմիական մոնիթորինգային տվյալների համաձայն, Մեղրիգետի՝ Թխկուտ գյուղից ներքև ընկած հատվածում ամռան ամիսներին ջրի որակը լավ (II) դասից նվազում է մինչև վատ (V) դասի (աղյուսակ 3): Բացի այդ, հորդացումների ժամանակ գետի աջակողմյան ափին գտնվող հանքավայրի լցակույտերի և պարզարանների տարածքի լվացման արդյունքում ձևավորված մակերևութային հոսքերը, լցվելով Մեղրիգետը, աղտոտում են այն ծանր մետաղներով: Ծանր մետաղները կուտակվում են գետի հատակային նստվածքներում և գետի ջրով ոռոգվող մշակովի հողերի բանջարաբոստանային մշակաբույսերում և այգիների պտուղներում: Ագարակի պ/մ կոմբինատի հոսքաջրերը անմիջապես թափվում են Կարճևան գետ: Այդ պատճառով գետի ջուրը դասվում է վատ (V) որակի(Նկ.1): Բարձր հանքայնացման և տոքսիկ մետաղների

պարունակության շնորհիվ գետը պոչատարի է նման և նրա ջուրը չի կարելի օգտագործել ոռոգման նպատակներով: Գետի ջուրն աղտոտված է մեծ քանակությամբ դժվար քայքայվող օրգանական նյութերով, որոնք դժվարությամբ են հեռանում ջրային էկոհամակարգերից [5]: Ագարակի պ/մ հանքավայրի տարածքում մարդածին ճնշման են ենթարկվում նաև Մեղրիգետի վտակ Խաչիձոր և Կարճևանի վտակ Ագարակ գետերը, որոնց աղտոտվածությունը դեռևս գնահատված չէ:

Աղյուսակ 3

Սյունիքի մարզի գետերի ջրաքիմիական որակի դասերը

Գետը	*Դիտակետի տեղադրությունը*	*Ջրի որակի դասը*	*Ջրի որակի դասը պայմանավորող ցուցանիշները*	*Ջրերի որակի վրա ճնշման հիմնական գործոնները*
Որոտան	0.5 կմ Գորհայքից վերև	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են
	1 կմ Սիսիանից վերև	(IV) անբավարար	Ֆոսֆատ իոնով	Կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	2 կմ Սիսիանից ներքև	(IV) անբավարար	Ֆոսֆատ իոնով	Որոտան գետի վերին հոսանքի բնակավայրերի և Սիսիան քաղաքի կոմունալ-կնցաղային կեղտաջրեր
	0.5 կմ Տաթև ջրէկ-ից ներքև	(III) միջին	Ֆոսֆատ իոնով	Կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
Սիսիան	0.5 կմ Արևիսից վերև	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են
	Տոլորսի ջրամբարի մոտ	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են
Գորիսգետ	3 կմ Գորիսից վերև	(IV) անբավարար	Ֆոսֆատ իոնով	Կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	1.5 կմ Գորիսից ներքև	(V) վատ	Ամոնիում և ֆոսֆատ իոններով	Գորիսգետի վերին հոսանքներում բնակավայրերի և Գորիս քաղաքի կոմունալ-կենցաղային կեղտաջրեր
Կիշկոշտ	Դաստակերտի հանքավայրից վերև	*(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են
	Դաստակերտի հանքավայրի մոտ	*(V) վատ	Մոլիբդենով	Չշահագործվող Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի և պոչամբարի տարածքից ձևավորված մակերևութային հոսքաջրեր
Այրիգետ	Սոֆլու գյուղից ներքև, 100մ Կիշկոշտ վտակի խառնման կետից վերև	*(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են
	100մ Կիշկոշտ վտակի խառնման կետից ներքև	*(V) վատ	Մոլիբդենով	Չշահագործվող Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի և պոչամբարի տարածքից ձևավորված մակերևութային հոսքաջրեր
Ողջի	1,7 կմ ք. Քաջարանից վերև	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	Բացակայում են

Գետը	Դիտակետի տեղադրությունը	Ջրի որակի դասը	Ջրի որակի դասը պայմանավորող ցուցանիշները	Ջրերի որակի վրա ճնշման հիմնական գործոնները
Ողջի	1,8 կմ ք. Քաջարանից ներքև	(V) վատ	Ֆոսֆատ և ամոնիում իոններով	Քաջարան քաղաքի կոմունալ-կենցաղային կեղտաջրեր
	0,8կմ ք. Կապանից վերև	(III) միջին	Վանադիում, երկաթ, մանգան, կոբալտ, մոլիբդեն, ծարիր մետաղներով	Քաջարանի կոմբինատի հոսքաջրեր, բաց հանքի տարածքից ձևավորված մակերևութային հոսքաջրեր
	Կապանի օդանավակայանի մոտ	(V) վատ	Մանգան, կոբալտ, պղինձ մետաղներով	Արծվանիկ, Նորաշենիկ, Կավարտ վտակների աղտոտված ջրեր
	6,8կմ ք. Կապանից ներքև	(V) վատ	Մանգան, կոբալտ, պղինձ, մոլիբդեն մետաղներով	
Արծվանիկ	Պոչամբարից վերև	(III) միջին	Նատրիումով, վանադիումով, երկաթով, կոբալտով	Բնական վիճակ
	Գետաբերանի մոտ	(V) վատ	Հանքայնացման ռեժիմի տարրերով (Na, K, SO_4^{2-}) և ծանր մետաղներով (Mn, Mo, Sb)	Արծվանիկի պոչամբարի ջրեր
Գեղի	0,5կմ Աջաբաջ գյուղից վերև	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
	Աջաբաջ գյուղի մոտ	(V) վատ	Մանգանով	« Լեռ-Էքս » ՍՊԸ պոչամբարի ջրեր
	Գետաբերանի մոտ	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
Մեղրիգետ	Ակունքի մոտ	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
	Թխկուտ գյուղից 0,5 կմ ներքև	(V) վատ	Քրոմ, երկաթ,մանգան, կոբալտ, նիկել	Լիճքվազ-Թեյի հանքավայրի լցակույտերի և պարզարանների հոսքաջրեր
	Մեղրի քաղաքից 0,5կմ վերև	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
	Գետաբերանի մոտ	(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
Բողաքար	Գետի միջին հոսքում, Լիճքվազ-Թեյի հանքավայրից վերև և դեպի արևելք	*(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
	Գետաբերանի մոտ	*(II) լավ	Մնացած բոլոր ցուցանիշներով	
Կարճևան	Գետաբերանի մոտ	(V) վատ	Հանքայնացման ռեժիմի տարրերով, ծանր մետաղներով, օրգանական նյութերով	Ագարակի կոմբինատի հոսքաջրեր

**- ըստ 2011-2012թթ. ՇՄԱԳ տվյալների*

***- ըստ 2007-2013թթ. ջրաքիմիական հետազոտության հանրագումարային ընդհանրացված տվյալների*

Այս ուսումնասիրության արդյունքում հանգել ենք որոշակի եզրակացությունների.

1. Սյունիքի մարզի այն գետերը կամ վտակները, որոնք անցնում են հանքագործական արդյունաբերության տարածքներով, բավականին ծանրաբեռնված են ծանր մետաղներով և տոքսիկ նյութերով, ինչի հետևանքով այդ հատվածներում բացակայում է օրգանական աշխարհը, իսկ ջուրը պիտանի չէ ոռոգման և առավել ևս ջրամատարակարման համար:
2. Շահագործվող մետաղական հանքավայրերում հանքաքարի արդյունահանման և վերամշակման ծավալների աճին զուգընթաց մեծանում է հանքավայրերի տարածման գետավազաններում մակերևութային ջրերի աղտոտվածությունը, ինչը հաստատում են ընհանուր առմամբ ծանր մետաղների կոնցենտրացիաների շարունակական աճի միտումները և առհասարակ մարդածին ճնշումը:
3. Հանքարդյունահանության արեալներում գտնվող գետավազաններում առաջացած արտադրական թափոնների տարածական առումով ուղղակի ազդեցություններ կրող գետերի ջրերում արտանե-տումների արդյունքում թունանյութերի և ծանր մետաղների բարձր պարունակությունների նվազեցման համար անհրաժեշտ է ներդնել տեխնոլոգիական ցիկլերում օգտագործվող ջրի փակ շրջանառու համակարգ: Միաժամանակ, ներդնել նաև հանքաքարի հարստացման և մետաղների կորզման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կտան առավելագույն չափով կորզել հանքաքարում առկա բոլոր մետաղները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Հ. Կ., Երկրագնդի ջրային ոլորտը, Եր., ,ԵՊՀ հրատ-նե, 1987, 345էջ:
2. Հաշվետվություն՝ ,Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցությունը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա (Սյունիքի մարզ)ե, Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն, Եր., 2007, 76 էջ:
3. Մնացականյան Բ., Հայաստանի ջրային հաշվեկշիռը, Եր. ,Զանգակ-97ե, 2005, 184 էջ:
4. Սաղաթելյան Ա.Կ., Գևորգյան Վ.Շ., Արևշատյան Ա.Հ., Սահակյան Լ.Վ., Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի վիճակի էկոլոգաերկրաքիմիական գնահատում, Եր., ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային կենտրոնի հրատ., 2008, էջ 20-33:
5. ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնի 2007-2013թթ. տարեկան տեղեկանքեր, Երևան. URL: www.armmonitoring.am
6. ՀՀ կառավարության որոշում N 927-Ն, 30.06.2011թ., Հավելված N 1:
7. ՀՀ կառավարության որոշում N 75-Ն, 27.01.2011թ., Հավելվածներ N 20, 21, 22, 23, 24, 25:
8. Պիչուգին Ա., Ռոնչակ Փ., Անսբեկ Ջ., Ջրի որակի գնահատում ըստ ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի մեթոդաբանության ուղեցուցային փաստաթուղթ. վերջնական նախագիծ, 2012, էջ 27, http://www.kura-aras.org/ EUArmenian_Language_files/Water_Qualit_Assessment_Guideline_Document_Draft%20Final_ARMENIAN.pdf
9. Վարդումյան Լ. Է., Սյունիքի մարզի գետերի ջրաքիմիական վերլուծությունը և գնահատումը, թեկն. ատենախ., Երևան, 2011, 159էջ:
10. Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկայի ՇՄԱԳ-ի նախագիծ էջ 32-37, 2007:
11. Атлас природных условий и естественных ресурсов Республики Армения. Под ред. А.Б.Багдасаряна.- Гидрология, Ереван. Изд-во АН РА, 1990.
12. Гагарина О.В. Оценка и нормирование качества природных вод: критерии, методы, существующие

проблемы. Ижевск, изд.-во “Удмуртский университет”, 2012, 199 с.
13. Данилов-Данильян В.И. Потребление воды: эколог., экон., соц. и полит. аспекты / В.И. Данилов-Данильян, К.С. Лосев. Ин-т водных проблем РАН. - М. Изд-во “Наука”, 2006. 221 с.
14. Матвеев А. В., Котов В. П. [Текст]. Оценка воздействия на окружающую среду и экологическая экспертиза. С.-Петербург, 2004, 104 с.
15. Мусаелян С. В. Водные ресурсы Армянской ССР. Ереван. Изд-во ЕГУ, 1989, 206с.
16. Струман В. И. Экологическое картографирование. М., Изд-во “Аспект Пресс”, 252 с.

ВЛИЯНИЕ ОТХОДОВ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ НА КАЧЕСТВО ПОВЕХНОСТНЫХ ВОД

Саядян О., д. г. н., проф., ЕГУ
Овсепян А., НИО МОН РА, соискатель, ЕГУ

Эксплуатируемые металлические месторождения Сюникского марза загрязняют повехностные воды тяжелыми металлами, что обусловлено большими территориями открытой добычи и переработки руды, транспортировкой и размещением отходов, а также влиянием производственной инфраструктуры. В итоге, в этих частях рек качество воды, согласно методологии “Водной Рамочной Директивы ЕС”, в основном оценивается от среднего (III) до плохого (V) класса. По этой причине в этих частях рек отсутствует органический мир, а вода не пригодна ни для орошения, ни для водоснабжения.

THE INFLUENCE OF MINING WASTE ON SURFACE WATER QUALITY

Sayadyan H.Y., Dr. of geographic sciences, professor; Yerevan State University
Hovsepyan A.A., National Institute of Education, Ministry of Education and Science of RA

Exploited metal deposits of Syunik Marz contaminate surface water with heavy metals due to the territories of open-pit mining and ore processing, transportation and disposal of waste and the impact of the industrial infrastructure. As a result, in these parts of the river water quality, according to the methodology of "EU Water Framework Directive", mainly estimated from the average (III) to poor (V) class. For this reason in these parts of rivers organic life is absent, and the water is not suitable either for irrigation or for water supply.

ՀՀ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԴՈՅԱՆ , տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

Հիմնաբառեր. օգտակար հանածո, հանքահումքային ռեսուրս, հանքահումքային բնօգտագործում, ընդերքօգտագործում, թափոններ:

Ընդերքի ռեսուրսները կամ այլ կերպ՝ օգտակար հանածոները, դասվում են սպառվող-չվերականգնվող ռեսուրսների շարքին: Ելնելով տնտեսական գնահատման առանձնահատկություն-ներից ռեսուրսների այս խոշոր խումբը բաժանվում է 3 ենթախմբի՝ վառելիքային, մետաղային (գունավոր և սև), ոչմետաղային:

Հանքահումքային ռեսուրսների արդյունահանումը միշտ ուղեկցվում է զգալի տարածքների, բնա-կան միջավայրի այլ բաղադրիչների խախտմամբ (հողեր, բուսակենդանական աշխարհ, մակերեսա-յին և ստորերկրյա ջրեր): Այդ իսկ պատճառով էլ հանքահումքային ռեսուրսների օգտագործման մեջ

կարևոր տեղ է գրավում հողերի ռեկուլտիվացիան (վերականգնումը): Հողերի վերականգնումը տնտեսական գործունեության հետևանքով խախտված մակերեսային հողերի արդյունավետության և այլ որակական հատկությունների վերականգնումն է հատուկ համալիր աշխատանքների, միջոցառումների օգնությամբ:

Օգտակար հանածոների օգտագործման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ այն ունի կետային տեղաբաշխում, այսինքն, ընդգրկում է սովորաբար ոչ ընդարձակ տարածքներ, ի տարբերություն անտառների, հողերի, ջրերի (ջրերն ունեն նաև գծային տեղաբաշխում), և մյուս առանձնահատկությունն այն է, որ հանքահումքային բնօգտագործումը ի տարբերություն բնօգտագործման մյուս տեսակների ավելի բարդ և բազմառեսուրսային պրոցես է: Այսինքն, օրինակ ածխի արդյունահանումն ուղեկցվում է այլ բնական ռեսուրսների օգտագործմամբ՝ տարածքի, ստորերկրյա ջրերի, օտարված հողերի և այլն[1]:

ՀՀ-ում ընդերքօգտագործման համար տրամադրված տարածքները՝12109.1 հա, կազմում են ՀՀ ամբողջ մակերեսի ընդամենը 0.34%-ը: Վերջինիս մարզային կտրվածքով տարածական պատկերն ունի աղյուսակ 1-ում նշված տեսքը:

Աղյուսակ 1.

ՀՀ ընդերքօգտագործման տակ գտնվող տարածքներն ըստ վարչական միավորների[2]

Վարչական միավոր	մակերես/հա	տեսակարար կշիռը ՀՀ-ում (%)
Արագածոտն	849.1	7
Արարատ	1709.7	14
Արմավիր	2339	19
Գեղարքունիք	778.2	6
Լոռի	668.8	6
Կոտայք	1969.5	16
Շիրակ	1695.3	14
Սյունիք	1104.7	9
Վայոց Ձոր	491.1	4
Տավուշ	342.9	3
Երևան	160.8	1
ՀՀ	12109.1	-

Ինչպես երևում է թիվ 1 աղյուսակից համեմատական առումով այս տեսանկյունից ռիսկային մարզեր են համարվում Արամվիրը (19%), Կոտայքը (16%), Արարատը (14%), Շիրակը (14%):

Ինչպես հայտնի է ՀՀ-ն աղքատ է վառելիքային ռեսուրսներից: Մասնավորպես ՀՀ-ում չկան գազի և նավթի արդյունաբերական նշանակություն ունցող պաշարներ: Սակայն որոշ տեղերում ի հայտ եկան նավթագազային երևակումների նշաններ: Հատկապես բնական գազի, շատ սահմանափակ, գործնական նշանակություն ունեցող կուտակումներ հայտնաբերվեցին Արմավիրի արևմտյան մասում: Մյուս վառելիքային ռեսուրսը, որ հայտնաբերվել է ՀՀ տարածքում՝ քարածուխն է, գորշ ածուխը և այրվող թերթաքարը, որոնք արդյունաբերական և գործնական նշանակություն չունեն: Քարածխի հանքավայրեր կան Ջերմանիսում (Արարատ), Ջաջուռում (Շիրակ), Դիլիջանում և Իջևանում (Տավուշ):

[1] Экология и природопольззование, Под ред. д-ра геогр. наук, профессора В.М. Разумовского, Издательство Санкт-Петербурского Государственного Университета Экономики и Финансов, 2011, 169 ст.
[2] http://www.armstat.am/file/doc/99489218.pdf:

Որակական հատկանիշների տեսանկյունից կարող է հետաքրքրություն ներկայացնել Իջևանի հանքավայրը, սակայն տնտեսական և բնապահպանական (ծածկված է անտառներով) տեսանկյունից այն շահագործել ձեռնտու չէ: Այդուհանդերձ, ՀՀ-ում էներգետիկ ճգնաժամի տարիներին Ջաջուռից արդյունահանվել է քարածուխ և տրամադրվել մակապարտեզներին ու դպրոցներին: Այրվող թերթաքարերի մի քանի երևակումներ հայտնաբերված են Երևանի շրջակայքում (Ավան, Ջորաղբյուր, Արզնի), Դիլիջանի մոտակայքում, Շիրակում, Մեղրիում և այլն, որոնք առայժմ տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում:

Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված վառելիքի պաշարներից համեմատաբար հետաքրքրույթուն է ներկայացնում տորֆի պաշարները: ՀՀ-ում գրանցված է տորֆի 60 հանքավայր: Տորֆ հայտնաբերված է Լոռիում, Աշոցքում, Վարդենիսում: Վերջինս Սևանա լճի Գիլի հանքավայրն է, որտեղ զգալի քանակությամբ տորֆ է արդյունահանվում և օգտագործվում հիմնականում որպես պարարտանյութ, բժշկական նպատակներով և այլն: Գիլի հանքավայրը նախկինում ճահճային տեղամաս էր իր յուրահատուկ բուսակենդանական աշխարհով, որը չորացել է Սևանի մակարդակի իջեցման հետևանքով[1]:

Այսպիսով, ՀՀ-ում վառելիքային ռեսուրսներն առայժմ ոչ մի տնտեսական դեր չեն խաղում ՀՀ համար և միաժամանակ, կարելի է ասել, չօգտագործման շնորհիվ գեոէկոլոգիական ոչ մի հետևանք չեն թողնում:

Այլ խնդիր է հանդիսանում ընդերքօգտագորման ոլորտը: ՀՀ ընդերքը համարվում է նախկին ԽՍՀՄ տարածքում ամենահետազոտվածներից մեկը: ՀՀ ընդերքի երկրաբանական հետա-զոտությունների արդյունքում բացահայտվել է օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր՝ 38 մետաղների և ավելի քան 70 ոչ հանքային նյութերի առկայությամբ: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 22 մետաղական[2]:

Հանքավայրերը մեծամասամբ կենտրոնացված են երկու տարածաշրջաններում՝ Լոռու մարզի Ալավերդու շրջանում և Սյունիքի մարզի Կապան-Քաջարանի շրջանում:

Այսօրվա դրությամբ ՀՀ արտահանման հիմնական տեսակը խտանյութն է: 2013թ. Հայաստանից արտահանվել է ռեկորդային ծավալով խտանյութ՝ 173 հազ.տոննա՝ 280 մլն ԱՄՆ դոլարով[3]: Սա մոտ 30%-ով գերազանցում է 2012թ. մակարդակը և կրկնակի՝ 2009թ. մակարդակը: Հայաստանի Հանրապետությունից խտանյութն արտահանվում է միջինը 1 տոննան մոտ 1600 ԱՄՆ դոլարով: Խտանյութի արտահանման կտրուկ աճը մասամբ պայմանավորված է նոր հանքերի շահագործմամբ, գործող հանքերի ավելի ինտենսիվ շահագործմամբ, ինպես նաև՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում նոր, ամերիկյան տեխնոլոգիայի կիրառմամբ, ինչը հնարավորություն է տվել էապես ավելացնել հանքաքարի նախնական մշակման արդյունավետությունը (այդ թվում՝ մետաղի կորզման աստիճանի տեսանկյունից):

[1] http://issuu.com/emanuelagjoyan5/docs/_2121:
[2] http://minenergy.am/page/472:
[3] http://www.armstat.am/file/doc/99491328.pdf:

Աղյուսակ 2

ՀՀ պղնձամոլիբդենային հանքավայրերի պաշարները[1]

Հանքավայ-րերի անվանում-ները	Պաշարները										
	Հանքաքարե-ը +C_1+C_2 մլն. տ	Տարրերը									
		Mo հազ. տ	Cu հազ. տ	Re տ	Au տ	Ag տ	Se տ	Te տ	Bi տ	Ge տ	W տ
Քաջարան	1958,7	730,70	4355,0	316,0	54,84	3055,6	3173,1	2644,2	3917,4	-	-
Ագարակ	43,954	11,91	203,0	11,0	1,10	52,5	150,9	26,8	88,0	4,30	-
Դաստակերտ	7,485	2,90	77,90	1,255	0,75	27,90	45,26	53,70	163,2	0,57	-
Թեղուտ	459,244	99,117	1630,0	120,71	4,776	304,0	342,91	75,23	տվյալներ չկան		
Այգեձոր	233,00	72,2	367,8	109,5	4,14	256,3	675,7	466,0	2027,1	6,372	-
Հանքավան	114,8	62,5	-	36,1	-	1,043	27,00	8,65	0,469	0,156	-
Հանքավան (սկ. Հան-քայնացում)	22,461	-	134,8	1,654	31,90	111,6	223,24	65,59	11230,0	269,5	10478
Ընդամենը	2839,644	979,327	6768,5	596,219	97,506	3808,943	4638,11	3940,17	17426,169	280,898	10478

ՀՀ-ն այսօր մոլիբդենի հետախուզված պաշարներով զբաղեցնում է առաջատար հորիզոնականներից մեկը (Քաջարանի, Թեղուտի, Ագարակի և Դաստակերտի հանքավայրերը): ՀՀ-ն են պատկանում մոլիբդենի՝ աշխարհի ընդհանուր պաշարների 5,1%-ը և հաստատված պաշարների 7,6%-ը: 2013 թվականի տվյալներով մոլիբդենի խտանյութի ծավալն կազմում է 11635 տ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճ է արձանագրել 10%-ով: Նույն թվականին պղնձի խտանյութի արտադրությունը կազմել է մոտ 184494 տ, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է 18%-ով[2]: Պղինձը ՀՀ-ից արտահանվող ամենախոշոր ապրանքային խումբն է: Արտահանում ենք 3 տեսակի պղինձ՝ խտանյութ, չզտած (կոնվերտորային) պղինձ, պղնձի ջարդոն: Ընդհանուր արտահանումը 2013թ. կազմել է 375 մլն ԱՄՆ դոլար, որը մեր արտահանման մոտ 25%-ն է:

Կարծում ենք ընդերքօգտագործման համար չափազանց կարևոր է 2012թ. ուժի մեջ մտած՝ Ընդերքի մասին օրենսգրքի նշանակությունը ոլորտում առկա բազմաթիվ հիմնախնդիրների լուծման, մասնավորապես՝ երկրաբանական տեղեկատվության հասանելիության բարձրացման, ,մեկ պատուհանիե գաղափարի սահմանման, հանքավայրերին կից համայնքների հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպման, դրանց կենսամակարդակի բարձրացման, երկրաբանական ուսումնասիրությունների և շահագործման նպատակով միասնական մոտեցման ներդրման,լիազոր մարմինների գործառույթների հստակ տարանջատման գործում:

Ընդերքի մասին նոր օրենսգիրքը տնտեսավարող սուբյեկտներին ընդերք օգտագործման թույլտվություն է տրվում նախարարության լիազոր մարմնի դրական եզրակացության դեպքում և կարևորագույն պահանջ է, որ մինչև թույլտվության համար փաստաթղթերի ներկ այացումը պետք է քննարկումներ իրականացվեն հարակից համայնքների բնակիչների հետ: Այսօրվա դրությամբ տրամադրվել է օգտակար հանածոների արդյունահանման 439 թույլտվություն, որից 30-ը՝արդեն իսկ

[1] Հանքարդյունահանման կայուն շահագործման քաղաքականություն և ուղեցույցներ ու հանքերի փակում, 2005, էջ126:

[2] http://www.armstat.am/file/doc/99489228.pdf.

նոր օրենսգրքի համաձայն։

Օգտակար հանածոների արդյունահանման ծավալները տարեցտարի մեծանում են. նախորդ տարվա 21 մլն տոննայի փոխարեն՝ այս տարի նախատեսվում է արդյունահանել ավելի քան 30 մլն տոննա, իսկ ընդհանուր հարկերը, տուրքերն ու վճարները նախատեսվում է հասցնել մինչև 63.8 մլրդ ՀՀ դրամի։

Թափոնների տեղադրման վերաբերյալ կարող ենք նշել, որ ,Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասինե ՀՀ օրենքով թափոնների տեղադրման համար վճարները սահմանվում են՝ ըստ վերջիններիս վտանգավորության աստիճանի՝ 4-ից մինչև 1-ին դասի, համապատասխանաբար 1500 դրամից մինչև 48000 դրամ/տոննա դրույքաչափերով, ինչպես նաև ոչ վտանգավոր թափոնների համար՝ 600 դրամ/տոննա և հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների համար՝ 60 դրամ/տոննա դրույքաչափով։ Միևնույն ժամանակ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, ՀՀ-ում 2013 թ. արտադրված թափոնների 99.66%-ը բաժին է ընկնում Սյունիքի մարզին, որի հիմնական աղբյուրը հանքարդյունաբերությունն է։ Սակայն վերը նշված ,Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասինե ՀՀ օրենքով՝ լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից առաջացած թափոնների համար սահմանված է **0** դրամ դրույքաչափ։ Եթե նույնիսկ հաշվի չառնենք լեռնարդյունաբերության թափոնների վտանգավորության աստիճանը՝ պայմանավորված վերջիններիս մեջ վտանգավոր միացություններով, և այս ամենը հարկվեր գործող ամենացածր դրույքաչափով, ապա միայն 2012 թ. այս մասով պետական բյուջե կմուտքագրվեր առնվազն 10 մլրդ դրամ գումար, այսինքն՝ ավելի շատ, քան Հայաստանի Հանրապետությունում հավաքագրված բոլոր բնապահպանական և բնօգտագործման վճարները միասին վերցված (մթնոլորտային օդի մեքենաներից և գործարաններից աղտոտում, ջրերի աղտոտում, թափոնների տեղադրում, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրում և ներմուծում, կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների օգտագործում, պինդ օգտակար հանածոների, աղի և ստորգետնյա հանքային ջրերի օգտագործում), որն 2013 թվականին կազմել է 1 մլրդ 930 մլն ՀՀ դրամ։ Փաստենք նաև, որ 2013 թվականին բնական պաշարների օգտագործման դիմաց վճարը կազմել է ընդամենը 1 մլրդ 224 մլն ՀՀ դրամ։ Բնօգտագործման դիմաց ստացված վճարների 69,1%-ը կազմել է օգտակար հանածոների արդյունահանման դիմաց գանձվող վճարներից[1]։ 2013 թ.-ին արդյունաբերության մեջ հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման մասնաբաժինը կազմում է 15.8%-ը[2]։

Հանքարդյունաբերության մասին խոսելիս պետք է անպայման հաշվի առնել ՀՀ աշխարհագրական տարածքի սահմանափակությունն ու առանձնահատկությունները։ Կարևորելով այս դրույթը նշենք, որ միայն Սյունիքում այսօր գործում են 11 մետաղական հանքավայրեր և շահագործման են սպասում ևս 28-ը։ Գործող հանքավայրերի շահագործման արդյունքում Սյունիքում արդեն կան 12 մեծ ու փոքր պոչամբարներ[3]։ Հայաստանի Հանրապետության տիպի փոքր երկրում նման ծավալներով հանքարդյունաբերությունն անթույլատրելի է։

Կարծում ենք Հայաստանի Հանրապետությունում կարելի է շահագործել ընդամենը մի քանի մետաղական հանքավայր՝ այն էլ միմիայն բնապահպանական խիստ վերահսկողության ու շահույթի արդարացի բաշխման պայմաններում։ Իսկ դրանից ստացվող միջոցները պետք է ուղղել գիտության, կրթության, բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, թեթև արդյունաբերության, զբոսաշրջության և այլ ոլորտների զարգացմանը։

[1] http://armstat.am/file/doc/99489218.pdf.
[2] http://armstat.am/file/doc/99489228.pdf.
[3] http://www.armstat.am/file/doc/99489218.pdf.

ПРОБЛЕМЫ ИСПОЛЬЗОВАНИЯ НЕДР И ОХРАНЫ ПРИРОДЫ РА

Мардоян А.В., к.э.н., доцент, АГЭУ

В рамках статьи представлено общее описания существующих металлических и нерудных полезных ископаемых РА и подчеркнуты злоупотребления, имеющие место при их эксплуатации.
В исследовании основной акцент ставится на описании причиненного экологического ущерба в процессе эксплуатации рудников и даны некоторые предложения в урегулировании данной проблемы.

AVAILABLE ENVIRONMENTAL PROBLEMS OF THE MINING FIELD IN RA

Mardoyan A., PhD, Associate Professor, ASUE

The article presents the general description of metal and non-metal minerals in Armenia and discusses the abuses emerging during their utilization.

The research is mainly concentrated on the description of damages caused to the environment during the utilization of underground resources and makes certain suggestions for the regulation of that sector.

ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ, ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԷՐՈԶԻՈՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ, ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴ

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ, երկրաբան.գիտ. թեկ.,դոցենտ, ԵՊՀ

Երկրաքիմիական որոնողական մեթոդների կիրառմամբ հանքավայրերի, հանքային մարմինների հայտնաբերումը, գնահատումը և հայտնաբերված մարմինների հարաբերական էրոզիոն կտրվածքի որոշումը որոնողական երկրաքիմիայում կարևորագույն չափորոշիչներից մեկն է: Հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակը թույլ է տալիս որոշելու եկրաբանա-հետախուզական աշխատանքների հետագա ընթացքը: Այն հաշվարկվում է հայտնաբերված յուրաքանչյուր հանքային մարմնի համար առանձին :

Ներածություն. Որոնողական երկրաքիմական մեթոդները կիրառվում են տարածքների,երկրի մակերեսին ելք ունեցող կամ չունեցող հանքվայրերի,հանքային մարմինների որոնման և հայտնաբերման համար:

Այս մեթոդների կիրառմամբ հաջողվում է որոնել և գտնել առահանքային մարմիններ,որոնք գտնվում են երկրի մակերեսից զգալի խորություններ վրա: Առավել կիրառելի են առաջնային երկրաքիմիական պսակներով հանքավայրերի որոնումը պայմանով, որ տարածքում արմատական ապարների մերկացումները ունենան լայն տարածում: Այս մեթոդը կիրառվում է նաև հանքային մարմինների ըստ խորության հետազոտությունների ժամանակ: Այս և նմանատիպ այլ հետա-զոտությունների դեպքում երկրաքիմիական չափորոշիչների կիրառմամբ ստացվող ամենակարևոր ցուցանիշներից մեկը՝ հանքային մարմինների և հանքավայրերի հարաբերական էրոզիոն մակարդակի գնահատումն է: Այն հաշվարկվում է յուրաքանչյուր հանքային մարմնի համար առանձին:

Օգտակար հանածոների հանքավայրերի, առանձին հանքային մարմին-ների երկրաքիմիական որոնողական մեթոդներով որոնման, հայտնաբերման, պսակների եզրագծման և գնահատման աշխատանքները բազմափուլ են, որոնցից յուրաքանչյուրի լուծումը պահանջում է որոշակի հմտություններ և անհրաժեշտ չափորոշիչների կիրառում: Բազմաթիվ են դեպքերը, երբ էկզոգեն երկրաբանական պրոցեսները, հանքային մարմինները, նրանց շուրջ ձևավորված անոմալիաներն ու պսակները մասամբ, երբեմն ամբողջովին լվացվել և ենթարկվել են տեղատարման:

Հանքային մարմինների ուղղաձիգ զոնայականության ուսումնասիրման և մաթեմատիկական հաշվարկներով ստացված զոնայականության գործակցի կիրառման պրակտիկ նշանակությունը այն է, որ նրա օգնությամբ հնարավորություն է ստեղծվում տարբերակել էրոզիայի ենթարկված և տեղատարված հանքային մարմինները եզրագծող վերին հանքային պսակները ստորին հանքային պսակներից:

Հետազոտության մեթոդիկան: Հանքային մարմինների հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի որոնմանը և գնահատմանը հասնում են առանձին պսակների զոնալ կառուցվածքի առանձնահատկությունների պարզաբանմամբ [1]:

Այս հարցին իրենց աշխատանքներում անդրադարձել են Ս.Վ.Գրիգորյանը [2-3],Ա.Ա.Բեուսը Ս.Վ. Գրիգորյանը [4],Լ.Վ.Բարսուկովը, Ս.Վ.Գրիգորյանը, Լ.Ն.Օվչիննիկովը[5], Ս.Ա.Առաքելյանը [6] և ուրիշներ:

Համաձայն այս հեղինակների տարբեր տարիների հրապարակած աշխատանքների հանքային մարմինների հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի գնահատումը իրականացվում է հետևյալ սխեմայով: Նախապես հաշվարկվում է հանքային մարմինների պսակների ցայտագանության զոնայականության գործակցի մեծությունները, գծային արդյունավետու-թյունները, քիմիական տարրերի զոնայականության ցուցանիշների մեծությունները ըստ հորիզոնների և վերջում տրվում է տարրերի զոնալ նստեցման շարքը:

Ելնելով հանքային մարմինների ուղղաձիգ կտրվածքների զոնայա-կանության գործակցի մեծությունից առանձնացվում են հետևյալ հիմնական մակարդակները վեր հանքային, վերին հանքային, միջին հանքային, ստորին հանքային և ստոր հանքային:

Երբեմն որոշ երկու մակարդակներ կարող են միացվել միմյանց օրինակ վերին հանքային և վեր հանքային: Ինչպես արդեն նշվել է, երկրաքիմիական անոմալիաների, պսակների հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի գնահատման համար որպես չափորոշիչ օգտագործվում է պսակների առանցքային զոնայականությունը: Այդ նպատակին հասնելու համար սովորաբար օգտագործում են զույգ տարրերի պսակների արդյունավետության և միջին պարունակությունների հարաբերությունները, ինչպես նաև մասնակի գումարային պարամետրերի հարաբերությունները [7]: Արմանիսի ոսկի բազմամետաղային հանքավայրի գրեթե ուղղաձիգ անկում ունեցող հանքային մարմինների հարաբերական էրոզիոն կտրվածքի և զոնայակնության գործակցի հաշվարկին է անդրադարձել նաև հեղինակը իր <<Կիրառական երկրաքիմիա>> ուսումնական ձեռնարկում [6]: Զոնայականության գործակիցը տվյալ տարի պսակի արդյունավետության հարաբերությունն է հետազոտվող տվյալ հանքայնացման բոլոր ինդիկատոր տարրերի պսակների արդյունավետությունների գումարին :

Ինչպես արդեն նշվել է երկրաքիմիական անոմալիանների, պսակների հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի գնահատման համար որպես չափորոշիչ օգտագործվում է պսակների առանցքային զոնայականությունը:

Հանքային մարմինների, հանքավայրերի զոնայականության գործակցի և հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի հաշվարկը երկարընթաց է և կիրառելի է միայն այն դեպքում , երբ այդ գործակցի արժեքը ուղղաձիգի ուղղությամբ մոնոտոն փոփոխվում է : Սակայն այս պայմանը հաճախ խախտվում է և հաշվարկի իրականացումը դառնում է անհնար: Ելնելով վերը շարադրվածից առաջարկվում է երկրաքիմիական պսակների ուղղաձիգ զոնայականության հաշվարկի ավելի պարզ, մատչելի և հասարակ մեթոդ:

Հաշվարկի առաջարկվող մեթոդը հնարավորություն է տալիս օգտագործել տարալուծման արդյունքում հայտնաբերված բոլոր քիմիական տարրերը անկախ տվյալ ուղղությամբ նրա կշռային

քանակության տատանումների վարքից: Այս դեպքում հաշվարկի մեջ օգտագործվում է նաև տարրերի փոթորկային արժեքները, որոնք վերը նկարագրված եղանակի դեպքում չէր օգտագործվում: Ավելի էական է, որ մաթեմատիկական հաշվարկները գրեթե երեք անգամ պակասում են :

Այս եղանակը ունի ևս մեկ առավելություն, այն գործնականորեն բացառում է տարրերի մեկ հորիզոնում կուտակվելու դեպքերը: Նոր եղանակով հաշվարկի էությունը հիմնված է տարրերի երկրաքիմիական պսակների վեկտորական հասկացության և հետապնդող պսակներում ընտրված ուղղություններով քիմիական տարրերի կշռային քանակությունների փոփոխություններից ստացվող տվյալների՝ կոնկրետ թվերի վրա: Քիմիական տարրերի ուղղաձիգ զոնայականության շարքը որոշելու համար անհրաժեշտ է

1. Ստացված համալիր երկրաքիմիական պսակում ընտրել որևէ ուղղություն (կամայական) այն համարելով դրական: Ցանկալի է, որ այդ ուղղությունը լինի իրական ուղղություն , այսինքն հանքային լուծույթների շարժման ուղղությունը:
2. Ընտրված վեկտորի ուղղությամբ համալիր պսակը բաժանել հատվածների (ցանկալի է մանր հավասար հատվածների) $I-I^1$, $II-II^1$ և այլն:



3.Մասնավոր դեպքերում բաժանման հատվածները կարող են համընկնել ուղղաձիգ ուղղությամբ ուսումնասիրվող հորիզոնների հետ (ինչպես նախկինում կիրառվող դեպքերում), իսկ երկայնական ուղղությամբ ՝ մակերեսային նմուշառման պրոֆիլների հետ, լայնակի ուղղությամբ՝ նմուշառման քայլերի կամ նրանց որոշակի խմբավարումների հետ:

4.Այդ հատվածներից յուրաքանչյուրում որոշել բոլոր տարրերի համար նրանց կշռային քանակության միջին արժեքները (տարրի գծային կամ մակերեսային արդյունավետությունները)

5.Տվյալ ուղղությամբ սկսած $a-a^1$ հատվածից հաջորդաբար վերցվում է տարրերի կշռային արժեքների հարաբերությունը հատված առ հատված , ընդ որում համարիչում միշտ վերցվում է արժեքներից մեծը: Այս դեպքում հարաբերությունը վերցվում է + նշանով (վեկտորի ուղղության հետ համընկնելու դեպքում), և - նշանով, եթե այն հակառակ է վեկտորի ուղղությունը: Ստացված քանորդները ուղղակիորեն գումարում ենք և ստացված թիվը պայմանականորեն նշում որպես K:

6.Որոշված բոլոր տարրերի համար հաշվարկվում է K արժեքները, որից հետո այն դասավորում ենք ըստ իրենց մեծությունների ձախից աջ ուղղությամբ: Ստացված թվերի շարքը մեզ հետաքրքրող շարքն է:

Հատվածներում ստացված թվերի շարքը ըստ որոշված տարրերի

Աղյուսակ N1

Տարրեր	Տարրերի կշռային քանակները ըստ հատվածների				
	I	II	III	IV	V
a	7	6	5	4	3
b	8	4	2	1	1
c	1	2	8	10	7
d	1	1	1	1	1
e	1	2	1	3	1
f	1	2	1	2	1
g	3	4	5	6	7

a, b, c, d, e, f, g- քիմիական տարրերն են

I, II, III, IV, V, - հատվածները

$K_a=\frac{7}{6}+\frac{6}{5}+\frac{5}{4}+\frac{4}{3}=4.94$ $K_b=\frac{8}{4}+\frac{4}{2}+\frac{2}{1}+\frac{1}{1}=7$ $K_c=-\frac{2}{1}-\frac{8}{2}-\frac{10}{8}+\frac{10}{7}=-5.82$

$K_d=\frac{1}{1}+\frac{1}{1}+\frac{1}{1}+\frac{1}{1}=4$ $K_e=-\frac{2}{1}+\frac{2}{1}-\frac{3}{1}+\frac{3}{1}=0$ $K_f=-\frac{2}{1}+\frac{2}{1}-\frac{2}{1}-\frac{2}{1}=0$

$K_g=-\frac{4}{3}-\frac{5}{4}-\frac{5}{6}-\frac{7}{6}=-4.95$

Հիմք ընդունելով վերը նշվածը կունենանք տարրերի հետևյալ զոնալ շարքը b-a-d-e-f-g-c Այստեղից պարզ երևում է, որ հաշվարկի այս եղանակը շատ պարզ է և հստակ: Հնարավոր է, որ որևէ մասնավոր դեպքում ունենք որևէ տարրի տվյալ ուղղությամբ հավասար 7 արժեքներ օրինակ (5,5,5,5,5,5,5) Ապա ձախից աջ ուղղությամբ կունենանք

K= 1+1+1+1+1+1=6 իրական արժեքը

Իսկ աջից ձախ K=-1-1-1-1-1-1=-6

Այսինքն K տարրի արժեքի գործակիցը գտնվում է $[-6,+6]$ տիրույթում 7-ից մեկով պակաս: Եթե ուսումնասիրվող ուղղության վրա առանձնացված է n հատված , ապա հավասարաչափ բախշում (վերևի օրինակով) ունեցող տարրերի համար կունենանք $[-(n-1),+(n+1)]$ միջակայքը: Դժվար չէ համոզվել նույն միջակայքում կգտնվի նաև հավասարաչափ տատանվող արժեքներ ունեցող տարրեր, օրինակ 3,4,3,4,3,4 և ուսումնասիրվող հատվածների կենտրոնում կուտակված տարրերի համար կունենանք 1,2,3,4,2,1,, որը թույլ կտա ընդհանրապես ասել , որ եթե $-(n-1)\le K\le(n-1)$ ապա այդ տարրերը տվյալ ուղղությամբ ուսումնասիրվող հատվածների միջին մասի տարրեր են: Եթե $K>(n-1)$ ապա տարրը շարքի ձախակողմյան տարր է, իսկ $K<-(n-1)$ ապա տարրը շարքի աջակողմյան տարր է: Ուսումնասիրելով $K-\text{յ}$ անմիջական թվային արժեքների մեծությունները կարելի է շարքի մեջ որոշել, թե տարրը որքանով է թեքված աջ կամ ձախ, կամ գտնվում է կենտրոնական մասում :

$$K>n+1;\ -(n-1)\le K\le(n+1); K<-(n-1)$$

Բացի այս դեպքերից հնարավոր են մասնավոր դեպքեր՝

- Ուղղաձիգ զոնայականության դեպքում վերևից մակերևույթից ցած ուղղությունը համարելով դրական կունենանք

$K>n-1$:

Այն տարրերը որոնք կհամապատասխանեն այս պայմանին կլինեն վերին հանքային տարրերը,

$$-(n-1) \leq K \leq (n+1)$$

Թվերին համապատասխանող տարրերը, միջին հանքային տարրերն են

$$K < -(n-1)$$

Թվային արժեքներ ունեցող տարրերը, ստորին հանքային տարրեր են :

- Նմանատիպ եղանակով երկայնական զոնայականության հաշվարկի արդյունքում ստացված շարքը կտա հանքային լուծույթների շարժման ուղղությունը:
- Լայնական զոնայականության դեպքում տարրերի հաշվարկված շարքը կտա այս կամ այն տարրի առավելագույն կուտակման տեղը:
- Երկրի մակերևույթի վրա մեթոդի կիրառմամբ կարելի է գաղափար կազմել հանքային մարմնի տեղադրման վերաբերյալ :

Եզրակացություն:Ամփոփելով շարադրանքը կարող ենք ընդհանրացնել և եզրակացնել.

1. Հիդրոթերմալ երակային տիպի հանքավայրերի ինդիկատոր տարրերի ուղղաձիգ զոնայականության շարքը դուրս բերելու համար գոյություն ունեցող եղանակները ունեն մի շարք թերություններ՝

ա) Աշխատատար են, այսինքն պարունակում են մեծ ծավալի մաթեմատիկական հաշվարկների (նորմավորում,յուրաքանչյուր հորիզոնում նորմավորված տարրերի արժեքների գումար, ստացված գումարի մեջ ամեն մի տարրի տոկոսային արժեքի գտնում):

բ) Այս կամ այն տարրերի նորմավորված արժեքների տարբեր հորիզոններում չափազանց մեծ տատանումների պատճառով (օրինակ Au, Ag, Te, երբեմն Bi) ցայտագանության արժեքը կարող է հասնել 10^2 աստիճանի: Յուրաքանչյուր հորիզոնում ստացված թվերի գումարային արժեքները միմյանցից մեծ տարբերություններ են տալիս և տարրերի զոնայականության ցուցանիշների առավել մեծ արժեքները հայտնվում են այն հորիզոնում, որտեղ նորմավորված արժեքների գումարային քանակը փոքր է:

Իսկ միևնույն հորիզոնում կուտակված տարրերի տեղը զոնայականության շարքում զոնայականության ցուցիչի նորմավորված մեծության փոփոխականությամբ որոշելը առանձին մասնավոր դեպքերում բարդ է և անկատար:

գ) Մի շարք տարրերի <<փոթորկային>> արժեքների պատճառով, հաշվարկների մեջ ընդգրկելը նպատակահարմար չէ և մեծ թվով տարրերի հաշվարկի դեպքում նկատվում է որոշակի թերություններ:

Վերոհիշյալ թերություններն ու բարդությունները վերանում են երբ ուղղաձիգ զոնայականության շարքը կազմում է ըստ առանձին հորիզոնների տարրերի միջին անոմալ արժեքների, գծային արդյունավետությունների ցայտագանության փոփոխություններով:

Հաշվարկի նոր եղանակի կիրառմամբ կարելի է ընդգրկել ցանկացած քանակի տարրերի տվյալներ, մտավախություն չունենալով հորիզոնից հորիզոն տարրի արժեքների մեծ փոփոխությունից: Քանի որ, ուղղաձիգ զոնայականությունը վեկտորական մեծություն է և հանքայնացումը լուծույթից ընթանում է վերևից ցած ձախից աջ , ապա այդ ուղղությունը պետք է համարել դրական: Տարրի արժեքները հորիզոնից հորիզոն միշտ չէ որ մոնոտոն կերպով է փոփոխվում:

Հորիզոնից հորիզոն ցայտագանության արժեքը որոշելիս միշտ պետք է մեծ արժեքը բաժանել փոքրի վրա, ընդունելով այն դրական, եթե այն համընկնում է ընդունված ուղղության հետ և ընդունել բացասական նշանով եթե այն հակադիր է նրանց ուղղությանը:

Եզրակացություններ.

1. Հանքային մարմինների ուղղաձիգ զոնայականության գործակիցը որոշելու մաթեմատիկական հաշվարկները 2-3 անգամ կրճատվում են և տարրերի միջին արժեքների նորմավորում չի պահանջվում:
2. Հաշվարկի ընթացքում տարրի ունեցած <<փոթորկային>> արժեքները պահպանվում են :
3. Հորիզոնի սահմաններում գտնվող տարրի տեղը հեշտությամբ է որոշվում զոնայականության շարքում:
4. Հորիզոնից հորիզոն տարրերի գրադիենտների ընդհանուր թվային արժեքների գումարը արտահայտվում է տարրի բնութագիրը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Готовсурэн А.** Определение уровня эрозионного среза цинковых месторождений восточной Монголии, Проблемы прикладной геохимии, Издательство, НАУКА, стр.106-108.
2. **Григорян С.В.** Геохимические методы при поисках рудных месторождений. М. Недра 1982, 174 с.
3. **Григорян С.В.** Рудничная геохимия М. Недра 1992, 292 с.
4. **Беус А.А., Григорян С.В.** Геохимические методы поисков твердых полезных ископаемых , М.: Недра 1975, 280 с.
5. **Барсуков В.Л., Григорян С.В., Овчинников А.Н.** Геохимические методы поисков руднах месторождений . М. ; Наука 1981, 314 с.
6. **Առաքելյան Ս.Ա.** Կիրառական երկրաքիմիա; Երևան 2012, 290էջ
7. **Аристов А.А** Методика геохимических поисков твердых полезных ископаемых. М, ; Недра, 1984, 200с.

НОВЫЙ ЭФФЕКТИВНЫЙ МЕТОД ОЦЕНКИ УРОВНЯ ОТНОСИТЕЛЬНОГО ЭРОЗИОННОГО СРЕЗА МЕСТОРОЖДЕНИЙ И РУДНЫХ ТЕЛ

Аракелян С.А, к.г. н., доцент, ЕГУ

Определение уровня относительного эрозионного среза месторождений полезных ископаемых и рудных тел геохимическими поисковыми методами является одним из главных критерий для продолжения дальнейших геолого-разведочных работ. Метод, применяемый в настоящее время, связан с длительными математическими расчетами и имеет ряд недостатков. Предлагается новый расчетный метод, который позволит избежать длительных процессов и ряд трудностей.

NEW METHOD FOR CALCULATING THE LEVEL OF RELATIVE EROSIVE TRUNCATION OF DEPOSITS AND ORE BODIES

SUMMARY

ARAKELYAN S.A. PhD, Associate Professor, YSU

Determining the level of relative erosion truncation of mineral deposits and ore bodies with help of geochimical survey methods is one of the main criterion to continue further exploration works. Currently used method is associated with long mathematical calculations and has a number of drawbacks. A new calculation method has proposed, which avoids long processes and difficulties.

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՏԱՐՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԴԱՐՅԱՆ, դոցենտ, ԵՊՀ
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԵՊՀ

Բանալի բառեր ՝ռադիոակտիվ էլեմենտներ, ռադիոակտիվ էլեմենտների անմիջական ազդեցություն,շրջակա միջավայր,կենդանի օրգանիզմներ:

Ռադիոակտիվ էլեմենտները կազմում են մեր մոլորակի վրա տարածված ապարների որոշակի մասը, որոնք մեծ ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի, հատկապես բուսական և կենդանական աշխարհի վրա: Մարդը, ինչպես նաև կենդանի մյուս օրգանիզմները իրենց վրա են կրում տվյալ տարածքի ռադիոակտիվ տարրերի անմիջական ազդեցությունը, որով և պայմանավորված է նրանց նորմալ զարգացման առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քաղաքային բնակչության վրա ռադիոակտիվ տարրերի ազդեցությունը տրանսպորտային միջոցներից և արդյունաբերական ձեռնարկություններից արտանետված գազերի միջոցով ավելի մեծ է, քան գյուղական բնակչությանը: Ելնելով վերոնշյալից, քաղաքային բնակչության ճառագայթվածության աստիճանը նվազեցնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել որոշակի միջոցառումներ, որին և նվիրված է տվյալ աշխատանքը:

Ռադիոակտիվությունը լինելով ատոմի միջուկի ինքնակամ տրոհման երևույթ, ուղեկցվում է որոշակի էներգիայի անջատումով, չի ենթարկվում ոչ մի արտաքին պայմանների ազդեցության, և կախված ճառագայթման չափերից կենդանի օրգանիզմի վրա ունենում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Հայտնի է, որ գործող ատոմակայանները, մարդու ամենօրյա կենցաղային գործունեության և տրանսպորտից անջատված գազերի, ինչպես նաև ռադիոակտիվ հանքավայրերի թվաքանակի շահագործման ավելացման հետևանքով, բարձրանում է մոլորակի ռադիոակտիվ ֆոնը: Երկրի մակերևույթին գրանցված ռադիոակտիվ դաշտի հիմնական աղբյուրը (80%- ից ավելին) կախված է երկրի ընդերքում գտնվող ապարներից, իսկ մնացած մասը կախված է մարդածին և տիեզերական երևույթներից: Մարդածին աղբյուրների հիմնական մասը՝ մոտ 10%-ը կախված է բժշկական միջամտություններից և շատ քիչ մասը՝ մոտ 1%-ը միջուկային արդյունաբերությունից:

Մարդը ապրելով քաղաքային միջավայրում և ենթարկվելով ամենօրյա ռադիոակտիվ ճառագայթման, նրա օրգանիզմում առաջանում են այնպիսի ճառագայթային հիվանդություններ, ինչպիսին են լեյկոման, քաղցկեղը, մուտացիան, անպտղությունը, մազաթափությունը և այլն: Ճառագայթված օրգանիզմի հիմնական աղբյուրը դա ռադոն 222-ն է $R_{n\ 222}$ ՝բնական ծագման իներտ գազ է նոոսֆերայում գտնվում է ցրված վիճակում և տրոհվում է $R_{n\ 222}$- P_{o218}-P_{b214}-B_{i214}-P_{o214} շղթայով:Մայր ռադոնը և պոլոնիումի դուստր իզոտոպները համարվում են α ճառագայթողներ և նրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ավելի փոքր է իրենց կարճ ազատ վազքի երկարության պատճառով, քան P_{b214} և B_{i214} –ը, որոնք ենթարկվելով β տրոհման արձակում են 0,24- ից մինչև 0,35 ՄԷՎ երևույթի գամմա ճառագայթներ[1]: Ռադոնը որպես առանձին քիմիական տարր հայտնաբերվել է XIX- րդ դարի վերջին:Նրա վտանգավորությունը կայանում է նրանում, որ անհոտ ու անհամ գազ է,որի խտությունը 0^0 C ջերմաստիճանում հասնում է 9,81 կգ/մ^3, այսինքն մոտ 8 անգամ ծանր է օդից, որի համար այն հիմնականում կուտակվում է հարկաբաժիններում, որի հետևանքով դառնում է վտանգավոր հիմնականում ցածր հարկի բնակչության համար: $R_{n\ 222}$ էմանացիան - 62^0 C-ում վերածվում է անգույն հեղուկի, իսկ -71^0C –ում դառնում է կարծր և լուսարձակում է երկնագույն երանգներ: Քաղաքային միջավայրում, հատկապես զբոսայգիներում կախված ապարների և հողի երկրաքիմիական

պայմաններից ռադոնի տեղաշարժը մերձմակերևույթային շրջանում տեղի է ունենում կամ գազային, կամ ջրում լուծված վիճակում, որը ավելացնում է ջրի ռադիոակտիվությունը:Պարզված է, որ զբոսայգիներում, որտեղ հողային ծածկույթը տորֆային է կամ կավային, ռադոնի խտությունը ավելի մեծ է քան ավազներում կամ կրաքարերում:Այդ իսկ պատճառով զբոսայգիների հողային ծածկույթը ցանկալի է որ կազմված լինի կրաքարային կամ ավազաքարային շերտերից[4,5]: Երևան քաղաքում, Կենտրոն համայնքում տրանսպորտի և առկա ձեռնարկությունների ծանրաբեռնվածության հետևանքով ռադոնի պարունակությունը ավելի մեծ է, քան ծայրամասերում: Դրա համար այստեղ սահմանափակված են շինարարական աշխատանքները և ավելացվում են ծառատունկերը, հատկապես այն ծառերի, որոնք կարողանում են կլանել առավել շատ ածխաթթու գազ:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը քաղաքային միջավայրում ռադիոակտիվ ճառագայթահարման դոզան նվազեցնելու համար պետք է հաշվի առնել, որ նրա հիմնական պատճառը՝ մոտ 75% -ը մարդը ընդունում է գազային վիճակում գտնվող ռադոն Rn_{222}- ի իզոտոպի տարածման պատճառով, որը անջատվելով մայր ռադիոակտիվ ապարներից երկրի ճեղքերի միջով վեր է բարձրանում, տարածվում տնամերձ տարածքներում և կուտակվում քիչ օդափոխվող վայրերում: Ռադոնը առաջանում է ռադիոակտիվ էլեմենտների տրոհումից և տարածվում է ամենուրեք: Նրա հետագա տրոհումից առաջացած անագի, վիսմութի ռադիոակտիվ իզոտոպերը մեծ դժվարությամբ են դուրս բերվում օրգանիզմից[2]: Հետևաբար նրա ազդեցությունից խուսափելու համար անկախ տարվա եղանակից, նկուղային և ցածր հարկի ապրող բնակիչները պետք է օրվա ընթացքում մի քանի անգամ օդափոխեն իրենց բնակարանները: Պետք է հաշվի առնել, որ նույնիսկ բնակարանի տարբեր սենյակներում ճառագայթման ինտենսիվությունը լինում է տարբեր: Մասնավորապես լոգարանում մի քանի անգամ ռադիացիան ավելի շատ է, քան խոհանոցում և ննջասենյակներում: Բնակարաններում և զբոսայգիներում ռադոնի պարունակության ավելցուկը հիմնականում կախված է բնակարանների հատակի և ծածկի վրա գոյություն ունեցող ճեղքերի, ինչպես նաև հողածածկի մեծությունից: Այսպես, առաջին հարկի բնակարաններում, հողի վրա առանց բետոնածածկի կառուցված շինություններում և տներում ռադոնի պարունակությունը մոտ 100 անգամ գերազանցում է շենքից դուրս բացօդյա տարածքների ռադիոակտիվությունից: Մեր կարծիքով, ռադոնի քանակությունը նման շենքերում պակասեցնելու համար անհրաժեշտ է պատերը ծածկել պոլիմիդի հատուկ նյութով, կամ պոլիվինիլքլորիդի ծածկույթով, կամ էլ յուղաներկի մի քանի շերտով: Իսկ պատերի վրա թղթե ծածկույթի(պաստառներ) շնորհիվ շենքում մոտ 30%-ով նվազում է ռադիացիայի տոկոսայնությունը: Ռադիոակտիվությունից հնարավորին չափով խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ բնակարանների շինարարության ժամանակ օգտագործվող շինանյութերը, նույնպես օժտված են որոշակի ռադիոակտիվությամբ, մասնավորապես, փայտը, աղյուսը, բետոնը և այլն: Երբեմն բետոնի 4/5 մասը կազմված է լինում մոխրափոշուց: Այն նույնպես օգտագործվում է ճանապարհաշինարարության, գյուղատնտեսության և հողերի բարելավման համար: Դա կարող է հանգեցնել ռադիոակտիվ ճառագայթման: Բավականին ցածր ռադիոակտիվությամբ են օժտված Ֆինլանդական փայտանյութերը՝ մոտ 1.1 միջին տեսակարար ռադիոակտիվության միավոր, և ընդհակառակը, մեծ ռադիոակտիվությամբ են օժտված ԱՄՆ-ի ուրանի հարստացման թափոնները՝ Գերմանական ֆոսֆոգիպսը և այլն: Մեկ այլ ճառագայթման աղբյուր են հանդիսանում ջերմային ջրավազանները: Որոշ երկրներ օգտագործում են գոլորշին ու տաք ջրերը էլեկտրաէներգիայի և բնակարանների ջեռուցման համար: Իտալիայում՝ Լառդոռելլո էլեկտրակայանում տարեկան արտադրած էլեկտրաէներգիան կազմում է 6 մարդ/զիվերտ համարժեք բաժնեչափ,իսկ դա 3 անգամ գերազանցում է ածխով աշխատող էլեկտրակայաններում արտանետած ճառագայթման չափաբաժնից: Ջերմաէլեկտրակայանների խողովակներից արտանետված

ծխի արտամետումներն առաջացնում են մարդկանց մոտ կրկնակի ճառագայթում, իսկ այդ մասնիկները նստելով հողի մակերեսին կարող են վերադառնալ մթնոլորտ փոշու ձևով[1,2]:

Պարզվել է, որ անտառածածկ մակերեսի ավելացումը բերում է նրա գեոհամակարգի բարելավմանը, քանի որ անտառը օժտված է բացառիկ փոշեկլանման, փոշենստեցման, օդի խոնավեցման և աղմկակլանման մեծ հատկությունով: Օրինակ՝թխկենու մեկ ծառը տարվա ընթացքում կլանում է 2,35 կգ ածխաթթու գազ և արտադրում 1,7 կգ թթվածին, որը մեկ անգամ ևս վկայում է, որ անտառը ունի անգնահատելի սանիտարահիգիենիկ և առողջարարական նշանակություն մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի բանելավման համար[3]:

Վերը բերված փաստական նյութերը թույլ են տալիս անելու հետևյալ եզրակացությունը՝

1)Ռադիոակտիվ էլեմենտները մեր մոլորակի վրա տարածված են ամենուր, բայց անհավասարաչափ քանակությամբ:

2) Ռադիոակտիվ էլեմենտների կոնցենտրացիան քաղաքային միջավայրում շատ ավելի բարձր է, համեմատած գյուղական միջավայրի հետ, որի հիմնական պատճառը մարդու գործունեության հետևանքով ստեղծված աղբյուրներն են (բժշկության, տրանսպորտային միջոց):

3) Ցանկալի է տարածքի անտառածածկ մակերևույթի ավելացումը, քանի որ այն բերում է միջավայրի գեոոհամակարգի բարելավմանը:

Գրականություն

1. Ю. А. Банникова, Радиация- дозы, эффекты, риск. М.: Мир 1990 г. 79 с.
2. В.В Ларионов Ядерная геология и геофизика , М. 1993г..350 с.
3. Սայադյան «Հայաստանի հանրապետության անտառային գեոոհամակարգերի տարածաշրջանային փոփոխությունները և կառավարման հիմնախնդիրները» Ե., ԵՊՀ հրատարակչություն 2010թ. էջ 260
4. Рудаков В. П. ,Мониторинг напряженно- деформированного состояния пород сейсмоактивного региона эманационным методом, М.1971
5. G.Sideris , Real time radon (Rn) monitoring: A geophysical metod for forecasting earthguakes։ Asian seismological commision, V general assembly 18-21 october 2004, Yerevan, Armenia

ВЛИЯНИЕ РАДИОАКТИВНЫХ ЭЛЕМЕНТОВ НА ГОРОДСКУЮ СРЕДУ И НАСЕЛЕНИЕ

Сардарян А. Канд.геолог.наук, Оганесян А.М., ЕГУ

Радиоактивные элементы на нашей планете составляют определенную часть и оказывают влияние на окружающую среду, особенно на животный и растительный мир. Организм человека, также как и другие живые организмы испытывают непосредственное влияние радиоактивных элементов, чем обусловлены особенности их нормального развития.

THE IMPACT OF RADIOACTIVE ELEMENTS ON THE URBAN ENVIRONMENT AND POPULEYTION

Sardaryan A., **PhD, Associate Professor, YSU**
Hovhannisyan H.M.

Radioactive elements affect the surrounding environment to a certain extent, particularly the flora and fauna. A human's organism, as well as other organisms on the given territory immediately experience the impact of radioactive elements conditioning the peculiarities of their normal development.

ԲԱԺԻՆ V
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՍԵՐՎԻՍԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՍԵՅՐԱՆ ՍՈՒՎԱՐՅԱՆ, աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. Աշխարհագրական միջավայր, սերվիս, ծառայություններ, սպասարկում, մատուցում, սերվիսային հասարակություն, սերվիսային մարդ, պարադիգմ

Աշխարհագրական միջավայրը առավել շատ ներկայացվում է որպես բնության երևույթների և առարկաների ամբողջականություն, որոնք տվյալ պահին ներառված են հասարակական կյանքի ոլորտներում և հանդիսանում են գոյության պայման: Միանգամայն պարզ է, որ մեր բնության բաղադրիչները ներգրավվում են հասարակական կյանքին, որպեսզի բավարարեն հասարակության պահանջները: Ուղղակիորեն սերվիսը հանդիսանում է աշխարհագրական միջավայր ստեղծող, քանի որ մարդկային պահանջներն են ստիպում վերափոխել միջավայրը: Աշխարհագրական միջավայրի դերը դժվար է թերագնահատել ծառայությունների կազմակերպման և մատուցման գործընթացում: Աշխարհագրական միջավայրը ձևավորվում և փոփոխվում է հանուն պահանջների բավարարման, որի արդյունավետության համար պայքարում է սերվիսային համակարգը: 20-րդ դարում գիտնականների մի մեծ խումբ չէր ընդունում աշխարհագրական միջավայրի ազդեցությունը հասարակական կյանքի վրա և մեկ այլ խումբ գիտնականներ հակառակ կարծիքին էին: Մարքսիզմի հետևորդները կարևորում էին, ընդդիմանալով դետերմինիստներին և նիհիլիստներին, արտադրության եղանակը՝ վերջինս ներկայացնելով արտադրողական ուժերի և հարաբերությունների համակարգ: Բացահայտ կարևորվում էր հենց արտադրական հարաբերությունները, քանի որ դրանք որոշվում էին սեփականության նկատմամբ վերաբերմունքով: Այսօր այդ տեսական հարցերը փորձության են ենթարկվում պրակտիկայով և չեն բռնում քննություն, քանի որ աշխարհը մերթընդմերթ , իսկ վերջին 20 ամյակում թևակոխել է ճգնաժամերի շղթան: Հասարակական կյանքում դա միանշանակ կապված է չբավարարված պահանջների կամ դրանց ըստ ժամանակի և տարածքի անհամաչափ, անարդյունավետ բավարարման հետ: Ժամանակն է, որ կարևորվեն ոչ թե պահանջների բավարարման քանակական ցուցանիշները ընդհանրապես, և աճը մասնավորապես, այլ արդյունավետությունը և զարգացումը: Բոլոր ժամանակներում պահանջների բավարարման միջոց է եղել աշխատանքը, որը հանդիսանում է բնության և հասարակության կապն իրականացնող գործընթաց: Աշխարհագրական միջավայրը հանդիսանում է աշխատանքի և՛ նախադրյալ, և՛ պահանջների բավարարման արդյունք: Աշխարհագրական միջավայրը հարստություն է, որը դառնում է պաշար և ռեսուրսների միջոցով փորձում բավարարել մարդկանց պահանջները: Հասարակությունը արդյունաբերության և գյուղատնտեսության միջոցով ընդլայնում է աշխարհագրական միջավայրը, իսկ ոչ արտադրական ոլորտի փաստացի ծառայությունները փորձում են աշխարհագրական միջավայրին տալ բովանդակային խորություն: Բնական պայմանները և ռեսուրսները արդեն դարձել են երկրահամակարգային ծառայություններ: Հասարակությունը աշխարհագրական միջավայրին տալիս է այլ կարգավիճակ, քանի որ սպառումը և վատնումը չեն կարողանում երկարաձգել այս քաղաքակրթությունը, որը լայն իմաստով բնօգտագործման եղանակ է: Աշխարհագրական միջավայրը պետք է դիտարկել որպես

ծառայությունների ձևավորման հիմք և փոխել վերաբերմունքը մեզ շրջապատող սոցիալական, տնտեսական, բնական ենթամիջավայրերի նկատմամբ: Դրա կողմնակիցն է Կայուն զարգացման գաղափարախոսությունը, որը ցավոք առաջխաղացում չի ունենում, քանի որ տեսական է: Անհրաժեշտ է այն կապել մարդկանց պահանջմունքների հետ գործնականում, որը կարող է և զարգացած երկրներում ինքնաբերաբար կատարում է սերվիսը: Այսինքն աշխարհագրական միջավայրի արդյունավետության իրականացումը պետք է կապվի սերվիսային հասարակության և սերվիսային մարդու հետ: Աշխարհագրական միջավայրը քննարկվում է ոչ միայն փիլիսոփայության, այլ նաև սոցիոլոգիական իմաստով, այս դեպքում կարևորվում:

Գոյություն ունի ևս մեկ ասոցացման ցուցիչ, որը կապում է սերվիսը սպառողական հասարակության հետ: Սերվիսացման կարևոր պայման է համարվում սպառողական բարոյականությունը, որն արտահայտվում է «սերվիսային մարդու » միջոցով [9,էջ47]: Դա արդեն իր հոգեկան չափորոշիչներով մարդը չէ, այլ ծառայությունների սպառողն է: Այդպիսի դատողությունները հենվում են հետևյալ տրամաբանության վրա, որ եթե սերվիսը ուղղված է մարդու պահանջների բավարարմանը, իսկ պահանջների շեշտադրումը անհրաժեշտություն է, ապա հենց սերվիսային գործունեությունն է դառնում սպառողական բարոյականության իրականացման գործիք: Այս դեպքում ելակետային հանգամանք է դառնում այն պնդումը, որ սերվիսը ոչ միայն բավարարում, այլ նաև ձևավորում է մարդու պահանջները:

Ավանդական այն բանաձևը, որ պահանջարկն է որոշում առաջարկը, կարիք ունի խմբագրման: Դրա իրականացումը կապված է պահանջարկի ձևավորման աղբյուրների հիմնախնդրի լուծման հետ: Վերջինս անվերապահորեն առընչվում է արժեհամակարգի հարցի հետ: Մարդու պահանջները որոշվում են հասարակության արժեքների գաղափարի մտավոր մակարդակում: Դրանք կարող են ունենալ ինչպես նեղ բավարարվածության, այնպես էլ հոգեձևավորող բնույթ: Սերվիսը կարող է ծառայել և՛ հոգևոր պոտենցյալների զարգացման գործիք, և՛ մարդու բարոյալքման միջոց: Այսինքն, անհրաժեշտ է սերվիսի նպատակաուղղված պետական կառավարում:

Բնութագրական է, որ հայերենում ծառայություններ հասկացությունը ձեռք է բերել անվերապահորեն նվիրվելու, ենթարկվելու իմաստ, որը տարբերվում է արևմուտքում գործածվող տիրապետելու իմաստից: Բոլոր իմաստներով սերվիսը մարդու համար է և մարդու միջոցով է իրականանում, որը անխուսափելի է դարձնում մարդու պահանջների մասին գիտության ձևավորումը: Պահանջների բավարարման մասին գիտությունը ըստ սերվիսային պարադիգմի, մարդու և միջավայրի փոխազդեցության բազմազանության առօրեականացման տեսականացման վրա պետք է հիմնվի: Ծառայությունները պետք է ձգտեն վերացնել մարդու և աշխարհագրական միջավայրի հակասությունները, իսկ վերջինս մարդու գործունեության արդյունք է: Մի կողմից մարդու պահանջները ձևավորվում են բնական, տնտեսական և սոցիալական միջավայրերի պարտադրանքով, իսկ մյուս կողմում մարդը այդ միջավայրերը անընդհատ ձևափոխում է և դրանով ստեղծում է նոր պահանջների նախադրյալներ: Այս բարդ գործընթացները ուսումնասիրելու և սերվիսային մարդ, հասարակություն ու պետություն ձևավորելու նպատակ ունի սերվիսագիտությունը:

Ամփոփելով փորձենք ներկայացնել սերվիսի նկատմամբ եղած վերաբերմունքը հայկական իրականության մեջ: Մեր երկրում պատմականորեն ձևավորվել է կենցաղային մակարդակի գիտելիքներ սերվիսի մասին, որոնք մեզ ներկայանում են ևս կարծրատիպերի տեսքով: Մեր իրականության մեջ առավել տարածված է սերվիս-կենցաղ սպասարկում, սերվիս-կոմունալ ծառայություններ և սերվիս-զբոսաշրջություն կարծրատիպերը: Դրա պատճառը պետական ոչ սերվիսային քաղաքականությունն է, ինչպես նաև հայկական իրականության տրամադրված չլինելը

սերվիսային տեխնոլոգիաների նկատմամբ և հայկական քաղաքակրթական ավանդույթները՝ կապված ծառայությունների նկատմամբ անվստահության հետ: Այսպիսի վիճակը ձևավորվել է որպես միգրանտների ռեֆլեքսիա, որոնք այցելել են Արևմուտքի բարեկարգ սերվիս ունեցող երկրներ: Այն մտայնությունը, որ Հայաստանում սերվիս չկա և չի կարող լինել, բեկվում և անդրադառնում է հատկապես օտարամոլ միջավայրում: Դրանով իսկ դառնում է արտագաղթող մոլորվածների ևս մեկ կեղծ առասպել հայկական դաժան իրականության մասին: Միշտ մեր սերվիսը համեմատվում է, չգիտես ինչու արևմտյան ,ոսկյա միլիարդիե երկրների հետ: Մենք դեռևս ,ոսկյա միլլիարդինե չենք պատկանում և պետք է համեմատվել անցումային տնտեսություն ունեցող երկրների հետ: Կարևոր է նաև օբյեկտիվ աշխարհագրական միջավայրը, որից սկսվում և ավարտվում է սերվիսը: Մի բան է սերվիսի ձեռնարկության բացումը միջերկյածովյան երկրում, այլ բան բազմազան բնություն, տնտեսություն, բնակչություն ունեցող Հայաստանում: Այնուամենայնիվ, արևմուտքից սերվիսում ետ մնալը կրճատվել է մեր երկրում: Խորհրդային տարիներին սերվիսի ճյուղերից առավել զարգացած էր զբոսաշրջությունը, որի դոմինանտությունը այսօր սերվիսը ներկայացնում է որպես ամբողջական զբոսաշրջություն կամ միայն զբոսաշրջություն: Սերվիսային կարծատիպերին պետք է հակադրել սերվիսի մասին գիտությունը: Նրա մեթոդաբանական հիմքի ստեղծումը իրականացվում է տարբեր գիտնականների և գիտական խմբերի միջոցով, որոնք ներկայացնում են տարբեր գիտություններ: Վերը նշված տեսլականների, առասպելների և կարծրատիպերի ընդհանրական գնահատումը հնարավորություն է տալիս սերվիսագիտության կայացումը համարել անհրաժեշտություն: Ամեն մի գործունեության մեջ կա սերվիսային բաղադրիչ: Անհրաժեշտ է ձևավորել միասնական գիտական ապարատ, մոտեցումներ, որոնք թույլ կտան ծառայությունները դիտարկել որպես գիտական հետազոտությունների օբյեկտ: Այսօր տեղի է ունենում ավանդական մասնագիտությունների սերվիսացում, ընդ որում, զարգացումը գնում է անհատական կողմնորոշման ճանապարհով: Սերվիսացման գործնընթացի մեջ առանձնացվում է մասնագիտական անցման ուղղորդվածություն՝ ինդուստրիալ հասարակությունից դեպի ետինդուստրիալ մասնագիտական գործունեության համակարգ: Ձևավորվող սերվիսագիտության առջև խնդիր է դրված մշակել սերվիսացման մեթոդաբանություն: Սերվիսի մասին գիտությունը պետք է ստեղծի մարդու պահանջների գիտական արձագանքման և բավարարման համակարգ գիտական ճանաչողության բոլոր մակարդակներում: Այդպիսի գիտության ստեղծումը և դրա ինստիտուցիոնալացումը հնարավորություն կստեղծի օրեցօր տարածվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական փոխկապակցված հիմնախնդիրները բերել միասնական համակարգ, այն իմաստով, որ դրանք բոլորն առաջացել են պահանջների թերի բացահայտման, բավարարման պատճառով: Այսինքն մարդկության ապագան կայուն զարգացման ծիրով տանելու համար, անհրաժեշտ է պահանջների ընդհանրական բավարարման արդյունավետ մեխանիզմ՝ հիմնված գիտական սերվիսային պարադիգմի վրա:

Գրականություն

1. Коноплева Н.А. Сервисология (человек и его потребности): учеб. пособие.- М 2008г.
2. Удальцова В.Е, Наумова Е.В. Сервисология. Человек и его потребности.Омега-Л.2011г.
3. Человек и его потребности Учебное пособие под ред. Проф. Оганяна К.М. – СПб.: изд-во СПБТИС, 1997.
4. Садохин А.И. Сервисология: человек и его потребности: учеб. пособие.- М.: ,Омега-Лե, 2009.
5. Шиповская Л.П.Человек и его потребности: учеб. пособие. -М.: Альфа-М: ИНФРА-М, 2008.
6. Бережной Н.М. Человек и его потребности.- М., 2002.
7. Дымшиц М.Н. Манипулирование покупателем. – М., 2004.

8. Кнабе Г.С. Древо познания и древо жизни. - М., 2006.
9. Маслоу А. Мотивация и личность. – СПб., 2003.
10. Моль А.Социодинамика культуры.- М.,2007.
11. Орлов С.В. Человек и его потребности. – СПб, Питер.2008.
12. Петров В.М. Социальная и культурная динамика: быстротекущие процессы.- М., 2008.
13. Смирнова Е.Т.Сервисная деятельность (введение в сервисологию): учеб. пособие.- М., 2004.
14. Спирин А.Д. Человек и его потребности: учеб. пособие.- Кемерово, 2003.
15. Удальцов М.В., Аверченко Л.К. Сервисология. Человек и его потребности. – Новосибирск, 2002.
16. Хайтун С.Д.Социум против человека: законы социальной динамики. –М., 2006.
17. Хмелев В.В. Сервисная деятельность.- М., 2004.
18. Холл Кэлвин, Линдсей Гарднер. Теории личности.- М., 1997.
19. Черников В.Г. Человек и его потребности. Рыбинск, 2003.
20. Экономическая психология. Социокультурный подход/Под ред. И.В.Андреевой.- СПб, 2000.
21. Якунин В.И., Багдасарян В.Э., Куликов В.И., Сулакшин С.С. Вариативность и цикличность глобального социального развития человечества. Монография М.: Научный эксперт, 2009.
22. Бродель Ф. Пространство и история. 1994.
23. Attali J. Millennium: winners and losers in the coming world order. - New York: Random House, 1991.
24. Primitive, Archaic, and Modern Economics: Essays of Karl Polanyi (1968, collected essays and selections from his work).
25. The Livelihood of Man (Studies in social discontinuity) (Academic Pr; New Ed edition, November 1977)
26. Ronald Max Hatrwell. The Industrial Revolution and Economic Growth (1971)

СЕРВИС И ГЕОГРАФИЧЕСКАЯ СРЕДА

Суварян С. Р. к.г.н., доцент, ЕГУ

В работе делается попытка обеспечить связь между системой услуг и географической средой. Система услуг включает обслуживание и предоставление услуг, а географическая среда представляется как совокупность природных, социальных и экономических сред. Интегрируя эти 2 системы в “орбиту” /сферу/ устойчивого развития, предлагается эффективный механизм всеобщего удовлетворения потребностей на основе научно-сервисной парадигмы.

SERVICE AND GEOGRAPHICAL ENVIRONMENT

Suvaryan S.R. **Associate Professor, YSU**

The relationships between system of services and geographical environment are disused in the article. The system of services includes providing and serving and geographical environment consists of natural, social and economic environments. By integrating these two systems in the framework of the Concept of Sustainable Development and on the bases of scientific service paradigm the general effective satisfaction mechanism of human needs is suggested.

ԶԲՈՍԱՇՐՋԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ-ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ, աշխ. գիտ. թեկ., դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր: Աշխարհագրական մարքեթինգ, զբոսաշրջաաշխարհագրական մարքեթինգ

Ներկայումս ձևավորման և կայացման փուլում է սահմանային-միջճյուղային գիտական հետազոտությունների նոր ոլորտ՝ ***գեոմարքեթինգը*** (առաջարկում ենք հայերեն ***՝աշխարհագրական մարքեթինգը՝*** անվանումը): Գտնվելով մարքեթինգի և աշխարհագրության (մասնավորապես, սոցիալ-տնտեսական) շփման հատվածում, այն արագ զարգացում է ապրում՝ պայմանավորված վերհանվող և ուսումնասիրվող հարցերի արդիականությամբ, գիտատեսական և գործնական-կիրառական մեծ նշանակությամբ:

Ըստ Վ.Անդրիանովի, Ա.Լեոնովի, Կ.Բրեդյուկի՝ աշխարհագրական մարքեթինգը միջճյուղային հետազոտությունների ուղղություն է, որի էությունը կայանում է աշխարհագրական գիտության և մարքեթինգի “գործիքների” միավորման՝ ինտեգրացման մեջ: Նման ինտեգրացման արդյունք է հանդիսանում բիզնեսի կառավարման նոր եղանակի ստեղծումը [1]:

Մ.Նեկրասովայի բնորոշման համաձայն, աշխարհագրական մարքեթինգն ընդգրկում է ապրանքների և ծառայությունների վաճառքը վերջնական սպառողներին՝ առևտրային կետերի միջոցով: Աշխարհագրա-մարքեթինգային հետազոտությունների մեթոդներն ու ուղղությունները հանգում են սպառողական պահանջարկի, մրցակցության, առևտրային կետերի տեղաբաշխման և գործունեության վրա աշխարհագրական գործոնների ազդեցության բացահայտմանը [2]:

Վերը նշվածները կարելի է համարել աշխարհագրական մարքեթինգի բնորոշում՝ նեղ իմաստով: Արդի պայմաններում հնարավոր և նպատակային պետք է համարել այս գիտաճյուղի բովանդակության ընդլայնումը՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական մարքեթինգային հետազոտություններում աշխարհագրական-տարածքային գործոնների առավել մեծ ներգրավվածության ապահովման հաշվին:

Աշխարհագրական մարքեթինգի ***ուսումնասիրության օբյեկտը*** պետք է համարել մարքեթինգային գործունեության կազմակերպումն ընդհանրապես՝ ***շուկայական իրավիճակի, մրցակցության և հաճախորդների համակողմանի վերլուծություն, համապատասխան տեղեկատվության հավաքում, մշակում և օգտագործում, պահանջմունքների ուսումնասիրություն, ապրանքների և ծառայությունների ստեղծում, վաճառք, առաջխաղացում, գրավչության և ճանաչվածության ապահովում և այլն***: Այս առումով աշխարհագրական մարքեթինգը պատկանում է ընդհանուր և ճյուղային մարքեթինգային գիտությունների համակարգին: Որպես ***ուսումնասիրության առարկա (օբյեկտ՝ նեղ և կոնկրետ իմաստով)*** հանդես են գալիս մարքեթինգային գործունեության կազմակերպման տարածական առանձնահատկությունները, ձևերն ու օրինաչափությունները: Սրա շնորհիվ աշխարհագրական մարքեթինգը դասվում է աշխարհագրական գիտությունների շարքին:

Արդի պայմաններում զբոսաշրջային ինդուստրիան տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից է: Այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն են ստանում ***զբոսաշրջաաշխարհագրական-մարքեթինգային (ԶԱՄ)*** տեսական և գործնական հետազոտությունները: ԶԱՄ-ն, ըստ էության, զբոսաշրջային ինդուստրիայի կազմակերպման և զարգացման մեջ աշխարհագրական մարքեթինգի գիտագործնական ներուժի կիրառման ոլորտն է՝ զբոսաշրջային մարքեթինգի և աշխարհագրական մարքեթինգի սահմանային հատվածում: Այս առումով կարելի է առանձնացնել զբոսա-

շրջային մարքեթինգի մի շարք հարցեր, որոնք առավել ենթակա են աշխարհագրական գործոնների և օրինաչափությունների ազդեցությանը: Դրանք են.

- զբոսաշրջային շուկայի ուսումնասիրություններ,
- մրցունակ զբոսաշրջային արտադրանքի ստեղծման, վաճառքի և առաջխաղացման մեխանիզմներ,
- սպասարկման որակի ապահովում՝ բնակչության պահանջմունքները հաշվի առնելով,
- դեստինացիաների զբոսաշրջային գրավչության ապահովում և այլն:

ՀՀ-ում ևս զբոսաշրջային ինդուստրիան զարգացման արագընթաց տեմպեր է արձանագրում: Ոլորտի զարգացումը գերակա նշանակություն և կարևորություն ունի մեր երկրի համար, հստակորեն ամրագրված են զբոսաշրջության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության նպատակներն ու գերակա ուղղությունները:

Այդուհանդերձ, հատկապես մարզային մակարդակով առկա են հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ: Դրանց թվին են դասվում մարզերի և դեստինացիաների զբոսաշրջային գրավչության, ճանաչելիության և մրցունակության ապահովումը, մարզային զբոսաշրջային բրենդինգին և առաջխաղացմանն ուղղված նպատակուղղված քաղաքականության իրականացումը:

Ելնելով վերը նշվածից, ՀՀ մարզերի համար առաջարկվում է ԶԱՄ հետազոտությունների ընդհանուր սխեմա՝ հիմք ընդունելով զբոսաշրջության կայուն զարգացման հիմնարար դրույթներն ու ասպեկտները: Սա ենթադրում է աշխարհագրական մարքեթինգի բովանդակության, գիտատեսական և գործնական խնդիրների շրջանակի ընդլայնում ու արդիականացում, հետազոտություններում համակարգային մոտեցման լայն կիրառություն:

Աղյուսակ 1

ԶԱՄ մարզային հետազոտությունների սխեմայի առաջարկ ՀՀ մարզերի համար

ԶԱՄ մարզային հետազոտությունների.	
Ասպեկտները	***Տեսական ուղղությունները և գործնական իրականացումը***
1.Էկոլոգիական (Կանաչ մարքեթինգ)	Ռացիոնալ զբոսաշրջային ռեսուրսօգտագործման (բնօգտագործման) ոլորտում առկա խնդիրների վերհանում և լուծման նպատակային միջոցառումների շրջանակի մշակում
	Զբոսաշրջային ,կանաչ տեխնոլոգիաներիե ներդրման հնարավորությունների և հիմնախնդիրների ուսումնասիրություն
	Էկոլոգիական և կայուն զբոսաշրջության զարգացման, գաղափարների տարածման և ամրապնդման մեխանիզմների մշակում և իրականացում
	Առկա բնության հատուկ պահպանվող տարածքների էկոզբոսաշրջային ներուժի վերհանում և վերլուծություն, այցելուների նպատակային խմբերի և զբոսաշրջային արտադրանքի բովանդակության սահմանում, գովազդային ռազմավարության մշակում և այլն
2.Սոցիալ-տնտեսական	Զբոսաշրջային շուկայի ուսումնասիրություններ՝ աշխարհագրական սեգմենտացում, առաջարկի և պահանջարկի տարածքային առանձնահատկություններ և այլն
	Առկա զբոսաշրջային ներուժի, դրա ներկա և հեռանկարային օգտագործման ուղիների ուսումնասիրություն: Բնակչության զբոսաշրջային պահանջմունքների և նախասիրությունների ձևավորման վրա տարածքի պայմանների և գործոնների ազդեցության վերհանում և վերլուծություն
	Զբոսաշրջային արտադրանքների ստեղծման և առաջխաղացման մոտեցումների մշակում՝ հաշվի առնելով զբոսաշրջության զարգացման աշխարհագրական նախադրյալներն ու առանձնահատկությունները
	Զբոսաշրջային առաջարկի տարածական դիվերսիֆիկացում՝ զբոսաշրջության համաչափ տարածքային զարգացման ապահովման նպատակով
	Զբոսաշրջային գրավչության և ճանաչելիության ապահովում, ռեգիոնալ-մարզային զբոսաշրջային բրենդինգի իրականացում

Կարելի է փաստել, որ ՀՀ մարզերի մակարդակով ԶԱՄ հետազոտությունների զարգացումը կարող է ունենալ ինչպես գիտատեսական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն և կարևորություն՝ նպաստելով՝

- Մարզերի՝ որպես զբոսաշրջային դեստինացիաների առաջխաղացմանն ու գրավչության բարձրացմանը,
- Մարզերի զբոսաշրջային մասնագիտացմանը,
- Այցելուների զբոսաշրջային պահանջմունքների լավագույնս բավարարմանը՝ հիմնվելով զբոսաշրջային ներուժի տարածքային առանձնահատկությունների վրա,
- Զբոսաշրջության ոլորտում "կանաչ"-բնապահպանական գաղափարների ներդրմանն ու տարածմանը,
- Զբոսաշրջության զարգացման և կազմակերպման տարածական ապակենտրոնացմանն ու կայուն զարգացմանը

СУЩНОСТЬ И ЗНАЧЕНИЕ ТУРИСТСКО-ГЕОМАРКЕТИНГОВЫХ ИССЛЕДОВАНИЙ

Саргсян Т., к.г.н., доцент, ЕГУ

В статье анализируются содержание и основные понятия геомаркетинга и туристского геомаркетинга. Предложена схема туристско-геомаркетинговых исследований для административно-территориальных единиц (марзов) РА.

THE ESSENCE AND SIGNIFICANCE OF TOURIST GEO-MARKETING RESEARCH

Sargsyan T., PhD, Associate Professor, YSU

In the article the main ideas of geo-marketing and tourist geo-marketing are being analyzed. A scheme of tourist geo-marketing research is proposed on the example of administrative units (marzes) of RA.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андрианов В., Леонов А., Бредюк К. Геомаркетинг: на стыке маркетинга и географии [Электронный ресурс]: эл. журнал ,Маркетинг Менеджмент‟, 2010. №7-8. – URL: www.marketing.spb.ru.
2. Некрасова М.Л. Геомаркетинг: основные задачи и перспективы использования в туристско-рекреационном комплексе // Курортно-рекреационный комплекс в системе регионального развития: инновационные подходы. Краснодар, 2014., стр. 347-350.

ՀՀ-ՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ, աշխ.գիտ.թեկ., դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր: Կայուն զարգացում, զբոսաշրջության կայուն զարգացում, զբոսաշրջային քաղաքա-կանություն, կայուն զբոսաշրջություն:

Առավել լայն տարածում ստացած բնորոշման համաձայն, կայուն է համարվում այն զարգացումը, որը ներկա և գալիք սերունդներին երաշխավորում է արժանապատիվ, առավելագույնս հնարավոր մեկնարկային պայմաններ՝ իրենց ընդունակությունների դրսևորման և կենսական պահանջմունքների բավարարման համար [1]: ***Կայուն զարգացումը (ԿԶ)*** հիմնված է մի շարք սկզբունքների վրա, որոնցից

պետք է հիշատակել տնտեսական արդյունավետությունը, էկոլոգիական անվտանգությունը, սոցիալական արդարությունն և հավասարությունը, հոգևոր-մշակութային բազմազանության պահպանությունը և այլն:

Արդի սոցիալ-տնտեսական, քաղաքական, էկոլոգիական և այլ մարտահրավերների պայմաններում ԿԶ-ն պետք է համարել զարգացման առավել ընդունելի մոտեցումը թե՛ ողջ հասարակության և թե՛ հասարակական կյանքի և գործունեության առանձին ոլորտների մակարդակով:

Հաշվի առնելով զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման տեմպերը, մասսայականացումը, սոցիալ-տնտեսական դերի և նշանակության բարձրացումը՝ օրակարգային նշանակություն է ստանում դրա զարգացման համակողմանի կանոնակարգումը՝ սոցիալ-տնտեսական, էկոլոգիական, հոգևոր-մշակութային, քաղաքական-իրավական առումներով: Առաջ է գալիս ***զբոսաշրջության կայուն զարգացման (ԶԿԶ)***՝ զբոսաշրջության մեջ կայունության սկզբունքի ներդրման անհրաժեշտությունը:

Ըստ Դ.Ուիվերի, կայուն զբոսաշրջությունը ԿԶ գաղափարների ներդրումն է զբոսաշրջային ոլորտում: Սա նշանակում է զբոսաշրջության այնպիսի զարգացում, որը կասկածի տակ չի դնի ներկա և գալիք սերունդների հնարավորությունները՝ սեփական կարիքները բավարարելու, լայնորեն կօգտագործի և կպահպանի ռեսուրսները՝ ապահովելու դրանց երկարաժամկետ օգտագործումը [3]:

Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (WTO), Ճամփորդությունների և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի (WTTC) և Եվրոպական միության (EU) կողմից տրվել է ԶԿԶ հետևյալ սահմանումը՝ ***զբոսաշրջության այնպիսի զարգացում, որը բավարարում է զբոսաշրջիկների և ընդունող տարածաշրջանների պահանջմունքները, պահպանում և բազմապատկում է ապագայի հնարավորությունները: Ենթադրում է ռեսուրսների այնպիսի կառավարում, որը թույլ կտա բավարարել տնտեսական, սոցիալական և էսթետիկական պահանջմունքները, պահպանել մշակութային ամբողջականությունը, կարևոր էկոլոգիական գործընթացները, կենսաբազմազանությունն ու կենսաապահովման համակարգերը*** [4]:

Կարելի է ընդհանրացնել, որ կայուն զբոսաշրջությունը.

ա. էկոլոգիապես անվտանգ է և անվնաս, նպաստում է բնության պահպանմանը,

բ. նպաստում է սոցիալական հավասարության և միասնականության ապահովմանը, չի խաթարում բնակչության կենսագործունեության առօրյա ռիթմը,

գ. տնտեսապես շահավետ է, հատկապես՝ զբոսաշրջային դեստինացիաների բնակիչների համար,

դ. իրականացնում է կրթական, դաստիարակչական, ճանաչողական, իրազեկման գործառույթներ,

ե. նպաստում է հոգևոր-մշակութային բազմազանության պահպանմանն ու զարգացմանը, նվազագույնի է հասցնում ձևավորված մշակութային ավանդույթների և սովորույթների վրա աննպաստ ներգործությունը:

Ըստ այդմ, առանձնացվում են ԶԿԶ հետևյալ ասպեկտները՝ ***էկոլոգիական, սոցիալական, տնտեսական, հոգևոր-մշակութային, քաղաքական-ինստիտուցիոնալ*** :

ՀՀ-ում ԶԿԶ ապահովումն առանձնակի կարևորություն ունի՝ հաշվի առնելով.

ա. Ոլորտի մասսայականացումն ու արագընթաց զարգացումը (դրանից բխող սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հետևանքներով ու ազդեցություններով), ինչպես նաև տարածական ապակենտրոնացման և ներդաշնակ զարգացման անհրաժեշտությունը,

բ. Երկրում արդեն իսկ առկա բնապահպանական, բնօգտագործման, սոցիալական ու տնտեսական հիմնախնդիրների բնույթը և տարածվածությունը,

գ. Լեռնային ռելիեֆի գերակշռությունը և դրանով պայմանավորված՝ աշխատանքային գործունեության զարգացման, տեղաբաշխման և կազմակերպման սահմանափակումներն ու առանձնահատ-

կությունները, կյանքի և գործունեության էքստրեմալ պայմանները և այլն:

ՀՀ-ում ԶԿԶ ապահովման գործնական հարցերը նպատակահարմար է քննարկել 2 հարթությամբ.

ա. Իրականացվող գործունեությունն ու առկա փորձը,

բ. Առկա խնդիրներն ու մարտահրավերները: Առաջարկություններ:

Ներկայումս զբոսաշրջության զարգացումը դասվում է ՀՀ կառավարության գործունեության գերակա ուղղությունների թվին: Պետական մակարդակով ոլորտի զարգացման պատասխանատու մարմինն է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս Զբոսաշրջության վարչության:

ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական կարգավորման հիմքում ընկած են.

- Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը (2003),
- Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (2008):

Վերոնշյալներում սահմանվում և ամրագրվում են զբոսաշրջության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության նպատակներն ու հիմնադրույթները, ինչպես նաև երկրում զբոսաշրջության վիճակն ու առկա զբոսաշրջային ռեսուրսների նկարագիրը, զբոսաշրջության զարգացման խոչնդոտներն ու մարտահրավերները, տեսլականներն ու թիրախները, պետական քաղաքականության սկզբունքները և այլն:

ՀՀ-ում ԶԿԶ առումով հատկապես կարևոր է, որ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգում տարբերակված կերպով ներկայացվում է զբոսաշրջության դերն ու նշանակությունը՝ տնտեսական, սոցիալական, բնապահպանական, քաղաքական ասպեկտներով: Վերջիններիս վրա են խարսխված կայուն զարգացման և, մասնավորապես, ԶԿԶ գաղափարները:

2005-13 թթ հաստատվել են ՀՀ-ում զբոսաշրջության զարգացումը կանոնակարգող պետական մի շարք ծրագրեր՝ գործողությունների թե՛ համապետական և թե՛ տեղական ընդգրկմամբ: Մասնավորապես, ‚Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը (2005), «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012թթ. միջոցառումների ծրագիրը» (2008), «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. ռազմավարությունը » (2009), ‚Տաթևն զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումը (2009), ‚Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման» ծրագիրը (2013) [5]:

ԶԿԶ առումով կարևորագույն նշանակություն ունի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը: Ներկայումս զբոսաշրջության ոլորտի մասնագետներ են պատրաստվում ՀՀ 11 բուհերում և 2 պետական քոլեջներում: Զուգահեռաբար, աշխատանքներ են կատարվում զբոսաշրջային մարքեթինգային և տեղեկատվական քաղաքականության իրականացման, զբոսաշրջային առումով ՀՀ նպաստավոր նկարագրի ձևավորման, առաջխաղացման և այլ ուղղություններով [5]:

Մինույն ժամանակ, ՀՀ-ում ԶԿԶ ապահովման ճանապարհին առկա են գործնական բնույթի մի շարք հրատապ խնդիրներ: Ներկայացնենք դրանք ըստ ԶԿԶ առանձին ասպեկտների:

1.ԶԿԶ սոցիալ-տնտեսական ասպեկտ: 1.1 Ենթակառուցվածքային և նյութատեխնիկական ապահովման խնդիրներ՝ մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների բարեկարգում, միջին կարգի և համեմատաբար մատչելի տեղավորման հաստատությունների ցանցի զարգացում:

Նշվածների լուծման արդյունքում հնարավոր կլինի զբոսաշրջային երթուղիների տարածական ընդլայնումը, նոր դեստինացիաների յուրացումն ու դրանց սոցիալ-տնտեսական զարգացումը, զբոսաշրջային ներուժի լիարժեք և համաչափ օգտագործումը, զբոսաշրջության տարածական ապակենտրոնացումը, առանձին դեստինացիաների զբոսաշրջային ծանրաբեռնվածության թոթափումը:

1.2 Մարզային սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերում զբոսաշրջային բաղադրիչի ներգրավում և դերի բարձրացում՝ ի նպաստ ՀՀ-ում զբոսաշրջության կայուն և համաչափ

ռեգիոնալ զարգացման:

1.3 Լայն իմաստով՝ զբոսաշրջային ինդուստրիայում առավելագույն տեղական ներգրավվածության ապահովում՝ հետևյալ ուղղություններով.

ա. Զբոսաշրջային և հարակից ծառայությունների մատուցման գործում տեղի բնակչության ակտիվ մասնակցություն (զբոսաշրջային օբյեկտների և տարածքների անվտանգության, մաքրության ապահովում և խնամք, վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքներ, գյուղմթերքի մատակարարում, ժամանակավոր բնակության նպատակով սեփական տների, բնակարանների տրամադրում, տրանսպորտային, ուղեկցման և էքսկուրսիոն-զբոսավարական ծառայություններ, ավանդական մշակութային միջոցառումների կազմակերպում և այլն),

բ. Զբոսաշրջային ինդուստրիայում տեղական ծագման ռեսուրսների և արտադրանքների լայն օգտագործում, զբոսաշրջությանը սպասարկող-հարակից արտադրությունների զարգացման խթանում:

1.4 Մարքեթինգային ապահովման խնդիրներ: Այս խնդիրն առանձնակի հրատապ պետք է համարել հատկապես մարզային և տեղական մակարդակներում: Առանձին մարզերի և դեստինացիաների զբոսաշրջային գրավչության, ճանաչելիության և մրցունակության ապահովումը, մարզային զբոսաշրջային բրենդինգի և առաջխաղացման ամբողջական միջոցառումների իրականացումը պետք է համարել ռեգիոնալ առումով ԶԿԶ ապահովման կարևոր նախապայմաններից:

2. ԶԿԶ էկոլոգիական ասպեկտ: 2.1 Սանիտարահիգիենիկ խնդիրներ: Մասնավորապես, կարևորվում է զբոսաշրջային դեստինացիաների մաքրության և հիգիենիկ պատշաճ պայմանների ապահովումը, աղբահեռացման, թափոնների կառավարման արդյունավետ համակարգերի ներդրումը:

2.2 Բնապահպանական և ռացիոնալ զբոսաշրջային բնօգտագործման խնդիրներ: **ա.** Սահմանային թույլատրելի ռեկրեացիոն ծանրաբեռնվածության նորմերի և արժեքների պահպանում՝ հատկապես զբոսաշրջային-ռեկրեացիոն առումով առավել ծանրաբեռնված շրջաններում (ինչպիսին է, օրինակ, Սևանա լճի հյուսիս-արևմտյան առափնյա հատվածը),

բ. Բնական միջավայրի վրա զբոսաշրջային ինդուստրիայի աննպաստ ներգործության առավելագույն կրճատում, զբոսաշրջային և այլ ռեսուրսների կայուն և ռացիոնալ օգտագործում, զբոսաշրջային և հյուրընկալության ոլորտներում ՝կանաչ տեխնոլոգիաների՞ ներդրում: Այսպես կոչված ,կանաչ զբոսաշրջությանե դրույթներն համաշխարհային մասշտաբով արդեն իսկ լայն կիրառում են գտել և ԶԿԶ ապահովման կարևորագույն պայմաններից են:

գ. Էկոլոգիապես առավել նպաստավոր փոխադրամիջոցների կիրառում: Այս առումով հատկապես մեծ դեր կարող է խաղալ երկաթուղային տրանսպորտը՝ ներքին զբոսաշրջային և էքսկուրսիոն փոխադրումներում (Դեբեդի, Աղստևի հովիտներում, Սևանի ավազանի տարածքում և այլուր): Հաշվի առնելով առկա դրական փորձը, հեռանկարային պետք է համարել նաև ՀՀ-ում ճոպանուղային-զբոսաշրջային փոխադրումների հետագա զարգացումը, նոր երթուղիների ստեղծումը:

դ. Զբոսաշրջության՝ էկոլոգիապես առավել անվտանգ տեսակների զարգացում: Մասնավորապես, նկատի է ունենք էկոզբոսաշրջությունը, որի զարգացման համար ՀՀ-ում պայմաններն ավելի քան նպաստավոր են՝ եզակի բուսական, կենդանական և լանդշաֆտային բազմազանություն, բնության հատուկ պահպանվող տարածքներ, լեռնային բնության գեղատեսիլ անկյուններ: Սակայն դեռևս անելիքներ կան էկոզբոսաշրջության զարգացման կանոնակարգման, զբոսաշրջիկներին ներկայացվող պահանջների մշակման և պարզաբանման, վերահսկողության և մոնիթորինգի համակարգերի ներդրման հետ կապված:

3. Հոգևոր-մշակութային ասպեկտ: 3.1 Ազգաբնակչության (մասնավորապես, զբոսաշրջային տարածքների բնակիչների) տեղեկացվածության ապահովումը՝ ԶԿԶ դրույթների մասով (ոչ սպառողական

վերաբերմունք և զբոսաշրջային ռեսուրսների կայուն օգտագործում, կանաչ և էկոզբոսաշրջության զարգացում, «աղքատամետ»՝ սոցիալական ուղղվածության զբոսաշրջություն և այլն):

3.2 Ազգային, մարզային և տեղական մակարդակներով մշակութային համակարգի առանձին տարրերի (ճարտարապետություն, խոհանոց, ազգագրական, կրոնական առանձնահատկություններ և այլն) մասսայականացում՝ դրանց զբոսաշրջային օգտագործման ընդլայնման նպատակով:

3.3 Զբոսաշրջիկների և տեղի բնակչության միջև մշակութային երկխոսության և փոխանակման ապահովում՝ ելնելով տեղական մշակութային բազմազանության պահպանման հիմնադրույթից [2]:

4. Ինստիտուցիոնալ ասպեկտ: Մասնավորապես, կարևորում ենք մարզային և համայնքային զբոսաշրջային կառույցերի հզորությունների ավելացումը, դրանց գործունեության համակարգումն ու փոխհամաձայնեցումը, մարզային զբոսաշրջային-տեղեկատվական ռեսուրսների ստեղծումը: Սա թույլ կտա ապակենտրոնացնել ոլորտի զարգացումը ՀՀ-ում և տեղական մակարդակով աշխուժացնել զբոսաշրջության զարգացման գործընթացը, ապահովել տեղի բնակչության առավել բարձր ներգրավվածությունը:

Ամփոփելով, պետք է նշել, որ, հաշվի առնելով զբոսաշրջության զարգացման ինչպես միջազգային, այնպես էլ տեղական միտումներն ու առանձնահատկությունները, ՀՀ-ում ԶԿԶ ապահովումն առաջնահերթ նշանակություն է ստանում: Չնայած իրականացվող տարաբնույթ միջոցառումներին, առկա փորձին և արդյունքներին, ԶԿԶ գործնական ապահովման առումով ՀՀ-ում առկա են մի շարք հիմնախնդիրներ:

Միևնույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ դրանց լուծման կարևորագույն գրավականներից է ԶԿԶ գործընթացի գիտատեսական և մեթոդաբանական ապահովումը, ճյուղային-թեմատիկ և համալիր-ինտեգրալ գիտական հետազոտությունների զարգացումը: Հատուկ հիշատակման կարիք ունեն ԶԿԶ աշխարհագրական հետազոտությունները: Դրանք առանձնահատուկ՝ միավորող դեր և նշանակություն ունեն մյուս ճյուղային հետազոտությունների համար՝ շնորհիվ համալիր բնույթի և ընդհանուր տեսական-մեթոդաբանական հիմքի (տարածական մոտեցում):

Կարելի է առանձնացնել ՀՀ-ում ԶԿԶ գիտական-աշխարհագրական ապահովման հետևյալ ուղղությունները՝ 1. ***զբոսաշրջության մարզային համալիր զարգացման ծրագրերի մշակումն ու հիմնավորումը*** (ռեգիոնալ զբոսաշրջագիտական ուսումնասիրություններ), 2. ***զբոսաշրջային ռեսուրսների ուսումնասիրություն և գնահատում՝ դրանց արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով***, 3. ըստ տարածքային առանձին մարզերի և զբոսաշրջային կենտրոնների՝ տնտեսության մեջ և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում զբոսաշրջության տեղի և դերի գնահատում և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան Կ. Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան. համաշխարհային գործընթացը և Հայաստանը: Երևան, 2008, 87 էջ:
2. Саргсян Т., Гаспарян М. О некоторых вопросах устойчивого развития туризма на примере горных районов Республики Армения. ,Науки о Земле: устойчивое развитие территорий: теория и практика (сборник материалов международной научно-практической конференции). Чебоксары, 2012, стр. 343-357.
3. Weaver D. Sustainable Tourism: Theory and Practice. London and New York, Routledge, 2006. 240 p.:
4. www.biodiversity.ru Վայրի բնության պահպանության կենտրոնի (ՌԴ) կայք:
   www.mineconomy.am ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ТУРИЗМА В РА

Саргсян Т., к.г.н., доцент, ЕГУ

В статье анализируются содержание и основные понятия устойчивого развития туризма. Особое внимание уделено позитивному опыту и основным направлениям государственной туристской политики в РА. Выявлены и изучены главные задачи и вызовы на пути к обеспечению устойчивого развития туризма в РА.

ON SOME ISSUES OF SUSTAINABLE TOURISM DEVELOPMENT IN RA

Sargsyan T., PhD, Associate Professor, YSU

In the article the main ideas of sustainable tourism development are being analyzed. A special attention is paid to positive experience and main directions of the state tourist policy in RA. The main issues and challenges towards sustainable tourism development in RA are revealed and studied.

ՔԱՂՑՐԱՀԱՄ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՀՀ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՍԱՐԳԻՍ ՔԵԼՅԱՆ, տեխ.գիտ. թեկնածու, ԵՊՀ, **ՌՈՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ,** ասպիրանտ, ԵՊՀ

Բանալի բառեր Աղբյուրների բնություն, զբոսաշրջային արժեք, Սևանի ափամերձ տարածք, հյուրընկալության բիզնես, ռեկրեացիոն ներուժ, ագրոզբոսաշրջություն

Հայաստանի Հանրապետությունը, իր բնական աղբյուրների բազմազանությամբ, զբոսաշրջային գրավչության մեծ ներուժ ունի: Այդ աղբյուրների զգալի մասը օժտված է բուժիչ հատկություններով, որոշներն ունեն թերմալ ծագում, առանձին տեսակներ համարվում են հանքային և շշալցվում են, որի պահանջարկը կա արտասահմանում: Հարկ է նշել, որ Հայաստանում՝ հիմնականում մայրաքաղաք Երևանում, չկա այդպիսի փողոց կամ բակ, որտեղ չլինեն արհեստածին ցայտաղբյուրներ, որոնցից անընդհատ հոսում է սառնորակ, քաղցրահամ, մաքուր խմելու ջուր, ինչպես նաև անվճար, որի որակական հատկանիշները մի քանի անգամ գերազանցում են աշխարհի բազմաթիվ երկրների ջրերին: Սա գրավիչ և հետաքրքիր է հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների համար:

Աշխատանքի նպատակն է ՀՀ-ում առկա աղբյուրները ներկայացնել զբոսաշրջային նշանակության տեսանկյունից և հատուկ ուշադրություն գրավել բնական աղբյուրների համալիրների վրա ընդգծելով դրանց զբոսաշրջային գրավչության առավելությունները: Այդ նպատակով ուսումնասիրվում է Սևանի ափամերձ տարածքը, որտեղ առկա է բազմաթիվ հանքային և քաղցրահամ աղբյուրներ:

Հանքային, քաղցրահամ, թերմալ, բնական աղբյուրների զբոսաշրջության և հյուրընկալության բիզնեսի նպատակով ուսումնասիրությունները և կիրառումն վաղ պատմություն ունի: Որոշ աղբյուրների համաձայն, հնում մարդկանց հայտնի են եղել աղբյուրների բուժիչ հատկությունները, դրանք օգտագործվել են հանգստի և բուժման նպատակներով [1;2]: Դեռևս Հին Հռոմում տաք հանքային աղբյուրների հարևանությամբ ստեղծվել են հանգստի գոտիներ՝ թերմեր: Միջնադարում ևս արքունական հանգստավայրեր են հիմնվել աղբյուրների հարևանությամբ. օրինակ, Վիշին՝ Ֆրանսիայում:

Ներկայումս շատ երկրներում աշխատանքներ են տանում նման հանգստի գոտիներն ավելի կատարելագործելու, զովազդելու և զարգացնելու ուղղությամբ, որի արդյունքում ամեն տարի այս երկրներ այցելում են բազմաթիվ զբոսաշրջիկներ[3;4]: Այդպիսի ներուժ ունեցող տարածքներ կան Հայաստանում, Արցախում, Ղրիմում, Թուրքիայում, Հունաստանում և այլն: Մասնավորապես,

ուշագրավ են Հյուսիսկովկասյան հանքային ջրերի շրջանը ՌԴ հարավում (Մինվոդի, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ և այլն), Կարլովի Վարին՝ Չեխիայում, Բադեն Բադենը՝ Գերմանիայում և այլն:

Առհասարակ, տարածքի ռեկրացիոն ներուժը պայմանավորված է բնակավայրերից հեռու գտնվելով և, միաժամանակ, հասանելիությամբ: Այն կախված է մի շարք գործոններից՝ բնակլիմայական պայմաններ, ենթակառուցվածքների և սպասարկման օբյեկտների առկայություն /հասարակական սննդի և տեղավորման օբյեկտներ, ավտոճանապարհներ և այլն/:

ՈՒսումնասիրվող տարածքում առկա է ռեկրեացիոն արդյունավետ և նպաստավոր հետևյալ գործոնները՝

1. Լանդշաֆտային գրավիչ պայմաններ և բազմազանություն,
2. Կլիմայական նպաստավոր և բուժիչ պայմաններ,
3. Մակերևութային և ստորգետնյա ջրեր,
4. Բուսական և կենդանական աշխարհների բազմազանություն,
5. Սևանա լճի լողափնյա գոտիները,
6. Ինքնատիպ բնապատկերները և դրանց գեղագիտական արժեքը,
7. Մշակութային-ճանաչողական արժեքներ:

Մերձսևանյան գոտու բնական աղբյուրներն իրենց ջրաերկրաբանական առանձնահատկություններով խիստ տարբեր են, որը կապված է տարածաշրջանի երկրաբանությամբ: Լեռնային գոտիներում բարձրադիր ջրհավաքներից, ձնհալքներից գոյացած քաղցրահամ ջրերը ներթափանցում են խորքային ջրերի հորիզոն որտեղ դրանք հիմնականում ֆիլտրվում են հրային ծագման ապարներով, ինչի արդյունքում փոփոխվում և բարձրանում է ջրերի որակական հատկանիշները, որի առանձին ելքերը գետնի մակերևույթին առաջացնում են բնական աղբյուրներ: Ընդհանրապես, Հայկական լեռնաշխարհը հայտնի է իր խորքային թերմալ երևույթներով, ինչն առանձին վայրերում ազդում է ջրաերկրաբանական միջավայրի վրա:

Տրանսպորտային մատչելիության առումով ուսումնասիրվող տարածքն ունի բավական նպաստավոր պայմաններ: Առանցքային նշանակություն ունեն Սևան-Մարտունի-Վարդենիս և Մարտունի-Սելիմի լեռնանցք ավտոճանապարհները: Մայրուղիների հարևանությամբ կան բազմաթիվ ռեստորաններ, արագ սննդի կետեր, իսկ Սևանը, ինչպես նաև ավազանին տարածականորեն մոտ գտնվող Ծաղկաձորը և Դիլիջանը հայտնի են հյուրանոցային համալիրներով և տարվա բոլոր եղանակներին ունեն այցելուներ: Ծովի մակարդակից 1900մ բարձրությամբ գտնվող Սևանն իր մերձափնյա տարածքով ունի ցրտաշունչ կլիմա (0^0C-ից մինչև -25^0C) ջերմաստիճան, բայց ուշ գարնան, ամռան և վաղ աշնան ամիսներին այստեղ առկա է զով, բարենպաստ և արևոտ եղանակ: Վերոնշյալ նախադրյալները ստեղծում են բարենպաստ պայմաններ զբոսաշրջիկներին գրավելու և երթուղիներ կազմակերպելու տեսանկյունից:

Աշխատանքում մանրամասն ներկայացրել ենք մեկօրյա հագեցած զբոսաշրջային արշավ Սևանի ափամերձ տարածքի համար, որը ընդգրկում է հինգ բնական աղբյուր: Անձնական փորձով կարող ենք հավաստել, որ այդ աղբյուրներն այցելելը և դրանց ջրերից օգտվելը փոքր արշավախմբով արդեն իսկ հաջողված երթուղի է: Հարկ է նշել, որ աղբյուրների միջև հեռավորությունը հազթահարելու համար անհրաժեշտ է մարդատար ավտոմեքենա: Արշավը նպատակահարմար է սկսել ժամը 9^{00}–ին Երևանից դեպի Գավառ քաղաք, որտեղ ինչպես երևում է նկար 1-ում ներկայացված քարտեզից կան երկու իրար մոտ, նման աղբյուրներ, որոնց կորդինատներն են՝ աղբյուր Gavar 1. N 40^0 21'2,57", E 45^0 7'58,07", բարձրությունը 1951 մ, աղբյուր Gavar 2. N 40^0 21' 3,36", E 45^0 8' 7,36", բարձրությունը 1944 մ: Այդ աղբյուրները հանքային քաղցրահամ սեղանի ջրեր են և ունեն յուրօրնակ թթու կծվահամ համ, թույլ

գազավորված են, ելքի ծախսը մոտ 0,3 լ/վ, մաքուր խմելու ջուր (Eh= 48 մՎ; pH= 7,6 չոր մնացորդը 725 մգ/լ): Խորհրդային տարիներին այս աղբյուրի ջուրը շշալցվել է:

Երթուղին շարունակվում է դեպի Լիճքի հանքային աղբյուր: Վերջինս ունի մոտ 4 մ լայնությամբ, 1,5 մ խորությամբ ջրով լցված ակունք - ավազան, որը գտնվում է Արգիճի գետի ափին: Աղբյուրի ելքի հետ ուղեկցվում են ազատ CO_2 գազերի բավականին առատ ելքեր: Հանքային ջրերը և գազերը դուրս են գալիս Սևանի նստվածքների մանրահատիկ ավազների մեջով: Այստեղ հնարավոր է նույնիսկ լողալ: Աղբյուրի ելքի ծախսը կազմում է մոտ 8 լ/վ, իսկ կորդինատներն են՝ Lichk 3 N 40^0 10' 23,67", E 45^0 15' 2,9", բարձրությունը 1908մ (Eh= -152 մՎ; pH= 8,2 չոր մնացորդը 260 մգ/լ):

Այնուհետև երթուղին շարունակվում է դեպի Մարտունի, որտեղ առկա է արտեզյան հոր և կարելի է տեսնել ծովի մակերևույթից 1919 մ բարձրության վրա բարձր ճնշման տակ ինքնահոս արտեզյան ջուր, որն ունի բարձր որակական հատկություններ, սակայն ջուրը փոքր ինչ կոշտ է: Արտեզյան հորի կորդինատներն են՝ Martuni artezian 4. N 40^0 9' 8,95", E 45^0 18' 13,15", իսկ ելքի ծախսը կազմում է մոտ 20լ/վ:

Երթուղու հաջորդ աղբյուրին հասնելու համար պետք է ուղևորությունը շարունակել Վարդենյաց լեռնանցքով դեպի Եղեգնաձոր: Ճանապարհին առկա է բնական քաղցրահամ աղբյուր, որի կորդինատներն են՝ Selim 5 N 40^0 2' 14,88" E 45^0 14' 46,66", բարձրությունը 2266 մ(տես նկար 4): Աղբյուրը սառնորակ է 3^0C-8^0C ջերմաստիճանով արտակարգ համային հատկանիշներով և մոտ 15լ/վ ելքի ծախսով: Երթուղու ընդհանուր պատկերը ներկայացված է *նկար 1-ում:*

Ամփոփելով պետք է փաստել, որ զբոսաշրջության ներկայացված տեսակը (որն ըստ էության էկոզբոսաշրջային երթուղի է) հեռանկարային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Մասնավորապես, Սևանի հարավարևմտյան ափամերձ տարածքն իր հանքային և քաղցրահամ աղբյուրների բազմազանությամբ և ռեկրեացիոն այլ գործոններով լայն հնարավորություններ ունի հյուրընկալել մեծաքանակ զբոսաշրջիկների:



Նկար 1 Քաղցրահամ և հանքային աղբյուրների տեղադիրքը:

Միևնույն ժամանակ, Սևան և Դիլիջան ազգային պարկերի հարևանությունը թույլ կտա զարգացնել զբոսաշրջության համալիր կամ համակցված տեսակներ՝ ընդգրկելով ագրոզբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը, մշակութային-ճանաչողական զբոսաշրջությունը որոնք դրական ազդեցություն կունենան հարակից տարածքների և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Գրականություն:

1. Безруков Ю.Ф. Рекреационные ресурсы и курортология., Учебное пособие, Симферопольский университет, 101 с.
2. Альбов С.В. Минеральные источники., Симферополь: изд-во «Крым», 1966. - 45 с.
3. Современное состояние и пути оптимального использования курортных и рекреационных ресурсов Крыма /Материалы выездной сессии Научного совета АН СССР по проблемам биосферы. Киев: Наукова думка, 1984. - 124 с.
4. Коханович М.В. Минеральные воды Крыма: их лечебное значение., Симферополь: Изд-во Крым, 1964. - 174 с.

К ВОПРОСУ О ТУРИСТСКО-РЕКРЕАЦИОННОМ ЗНАЧЕНИИ ИСТОЧНИКОВ МИНЕРАЛЬНЫХ И ПРЕСНЫХ ВОД (НА ПРИМЕРЕ ПРИБРЕЖНОЙ ЮГО-ЗАПАДНОЙ ТЕРРИТОРИИ БАССЕЙНА ОЗЕРА СЕВАН)

Келян С. С. к.тех.н., ЕГУ

Хачатрян Р. Г. аспирант, ЕГУ

В статье изучен и проанализирован рекреационно-туристический потенциал минеральных и пресноводных источников РА. Приведены возможности их перспективного использования, а также прикладные возможности по их использованию в настоящее время.

ON THE ISSUE OF TOURIST-RECREATION MEANING OF FRESH AND MINERAL WATER SOURCES (ON THE EXAMPLE OF SOUTH-WESTERN COASTAL TERRITORY OF LAKE SEVAN BASIN)

Qelyan S.S. Candidate of Technical Sciences

Khachatryan R. G. PhD Student (YSU)

In the article the tourist-recreation significanle and potential of mineral and freshwater sources are being studies and analyzed. The possibicities of their usage, as well as the applied ways of their current usage are represented.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԸ

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, աշխ.գիտ.դոկտ.պրոֆ., ՀՊՏՀ
ՇՈՒՇԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, դասախոս, ՀՊՏՀ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջությունը փաստորեն դառնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը նպատակահարմար է հանրապետության տարածքը բաժանել Զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի տարածաշրջանների: Մասնավորապես, մեր կարծիքով, անհրաժեշտ է ՀՀ տարածքը բաժանել այդպիսի 5 տարածաշրջանների:

Ստորև քննարկվում է այդ տարածաշրջանների կառուցվածքը:

1. Կենտրոնական զբոսաշրջային տարածաշրջան

Զբոսաշրջային այս տարածաշրջանի մեջ նպատակահարմար ենք համարել մտցնել Երևան քաղաքը Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի տարածքները: Ինչպես տարածքով, այնպես էլ բնակչության քանակով այս տարածաշրջանը առաջին տեղն է զբաղեցնում մյուս շրջանների մեջ: Մասնավորապես, տարածքը կազմում է 8407 կմ^2 կամ ՀՀ տարածքի ավելի քան 28%-ը, իսկ բնակչությունը 2013թ տվյալներով կազմում է շուրջ 19831 մլն մարդ կամ ՀՀ բնակչության ավելի քան 65%-ը:

Այստեղ առկա են բնածին ու մարդածին բազմազան զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսները: Բնածին այդպիսի ռեսուրսներից առավել ուշագրավ և հետաքրքրություն են ներկայացնում:

ա/ Արարատ լեռան շքեղ տեսարանը Երևան քաղաքի, Կոտայքի սարավանդի ու Արարատյան դաշտի ցանկացած կետից,

բ/ Հրազդան, Ազատ, Քասաղ գետերի կիրճերը՝ բազալտե բնական հրաշագեղ սյուներով:

գ/ Քառագագաթ 4090 մ բարձրության տարվա մեծ մասը ձյունածածկ, վեհաշուք Արագած լեռն ու նրա լանջերին առկա Քարի ու այլ բազմաթիվ սառցադաշտային լճերը: Արագածը զբոսաշրջային առումով գրավիչ է ոչ միայն ամռան ամիսներին, այլև ձմռանը՝ որպես ալպինիզմի, դահուկային սպորտի եզակի վայր.

դ/ Ծաղկաձորի, Հանքավանի, Աղվերանի հրաշագեղ անտառները,

ե/ Ապարանի, Ազատի ջրամբարները, Ակնա լիճը,

զ/ Խոսրովի արգելոցը՝ իր կենդանական ու բուսական եզակի տեսակներով:

է/ 'Արզնի' Հանքավան' հանքային ջրի աղբյուրները:

Մարդածին զբոսաշրջային ռեսուրսներից ԿՉՏ-ում առավել հայտնի են:

ա/ Աշխարհի հնագույն մ.թ.ա. 782թ. հիմնադրված քաղաքամայր Երևանը իր թամանյանական անզուգական կոթողներով, հրապարակներով, փողոցներով, Էրեբունու, Ցեղասպանության, Փարաջանովի, Թումանյանի, Ս.Սարյանի Հայաստանի պատմության, Մայր Հայաստան և այլ թանգարաններով, Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի, Սունդուկյանի անվան թատրոններով, Սասունցի Դավիթ, Վարդան Մամիկոնյան, Իսահակյան, Ալ, Թամանյան արձաններով եկեղեցական համալիրներով, Մատենադարանով:

բ/ Պատմաճարտարապետական եկեղեցական հնագույն կոթողները այդ թվում համայն հայության եկեղեցական հանրահայտ կենտրոն Էջմիածնի՝ IV դարի սկզբին կառուցված մայր տաճարը, Գայանեի Հռիփսիմեի եկեղեցիները, Զվարթնոցի, Խոր Վիրապի, Կեչառիսի, Բջնու, Գեղարդի եկեղեցական

համալիրները,

գ) Անտառապատ Ծաղկաձոր քաղաքը՝ իր կուրորտային, հանգստյան, սպորտային համա-լիրներով, եզակի ճոպանուղիներով, որոնցով կարելի է բարձրանալ Թեղենիս լեռան գագաթը: Ծաղկաձորը յուրահատուկ դեր է խաղում որպես միջազգային ձմեռային զբոսաշրջության գրավիչ հանգրվան:

դ/ Անտառապատ Հանքավանի կուրորտային, հանգստյան համալիրները:

ե) Անտառապատ Աղվերանի հանգստյան համալիրները,

զ) Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանի համալիրը,

է) Սարդարապատի հերոսական հուշահամալիրը,

ը) Պարույր Սևակի տուն թանգարանը Զանգակատուն գյուղում:

Հայաստանի կենտրոնական զբոսաշրջային տարածաշրջանի օբյեկտները մեկնելու համար առաջարկվում են հետևյալ ուղիները:

ա) Երևան-Արտաշատ-Խոր Վիրապ-Զանգակատուն

բ) Երևան-Զվարթնոց- Էջմիածին-Արմավիր-Սարդարապատ

գ) Երևան-Գառնի Գեղարդ

դ) Երևան-Չարենցավան-Հրազդան-Ծաղկաձոր

ե) Երևա ն-Չարենցավան-Հրազդան-Հանքավան

զ) Երևան-Աշտարակ-Բյուրական-Արագած

Կենտրոնական զբոսաշրջային տարածաշրշանում արտասահմանյան զբոսա-շրջիկների համար երկարատև, շատ հարմարավետ և ակտիվ հանգստի ձևավորված հանգրվանը Երևան քաղաքն է: Այդ առումով կարևոր են նաև Ծաղկաձորը՝ ժամանակակից հյուրանոցներով. սպասարկման բոլոր համակարգերով, անտառապատ գեղատեսիլ բնությամբ և Վաղարշապատը (Էջմիածինը)՝ իր անզուգական ճարտարապետական կոթողներով:

2. Շիրակ-Լոռի զբոսաշրջային տարածաշրջան

Կատարված ուսումնասիրություններով նպատակահարմար է համարվել զբոսաշրջային այս տարածաշրջանի մեջ մտցնել Շիրակի ու Լոռու մարզերը, որոնք տրանսպորտա-տնտեսական, պատմամշակութային շատ ընդհանրություններ ունեն:

Տարածաշրջանի ընդհանուր տարածքը 6470 կմ2 է (հանրապետության տարածքի ավելի քան 21 %-ը), բնակչությունը 2013 թ. տվյալներով 486 հազ.մարդ (հանրապետության բնակչության ավելի քան 17 %-ը):

Ընդհանուր առմամբ զբոսաշրջային այս տարածաշրջանը նպաստավոր է ամբողջ տարվա ընթացքում զբոսաշրջային գործընթացի համար:

Բնածին զբոսաշրջային ռեսուրսներից առավել կարևոր են.

ա) Դեբեդ գետի, դրա՝ Փամբակ. Ձորագետ և մյուս վտակների կիրճերը, հատկապես հանրահայտ, Մեծլոռեցու գովերգած Լոռու ձորը:

բ) Դեբեդի ավազանի համատարած, պտղառատ անտառները

գ) Գյումրի-Սպիտակ, Ստեփանավան-Ախթալա տարածքները ընդգրկող, յուրատիպ բուսական, կենդանական աշխարհ ունեցող զբոսաշրջային գոտիները

դ) Բազումի լեռնաշղթայի Պուշկինի լեռնանցքը (ռուս երկու խոշոր գրողներ Պուշկինի ու Գրիբոյեդովի հիշատակին նվիրված հուշակոթողով),

ե) Արագած լեռան արևմտյան լանջերը՝ բազմազան զուլալ լճակներով, գետակներով, աղբյուրներով, Մանթաշի, Կառնուտի ջրամբարներով,

զ) Արփի լիճ ջրամբարը և այստեղ կազմակերպված ՝Արփի լիճ՞ ազգային պարկը իր յուրատիպ բուսական, կենդանական աշխարհով ու Ախուրյան գետի գեղատեսիլ կիրճով։ Գերմանիայի ֆինան-սավորմամբ ստեղծված և 58,7 հազ.հեկտար տարածք ունեցող այս ազգային պարկը զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ունի կենդանական, բուսական աշխարհի բազմազանությամբ։ Այստեղ առավելապես կզարգանա էկոզբոսաշրջությունը, ձմռան ամիսներին դահուկային զբոսաշրջությունը։

Մարդածին զբոսաշրջային ռեսուրսներից այս շրջանը՝ հետաքրքրություն է ներկայացնում.

ա) Գյումրի քաղաքի պատմաճարտարապետական եկեղեցիական շինություններով, թանգարաններով, Ա.Իսահակյանի, Հ. Շիրազի, Մ.Մկրտչյանի, Շ.Ազնավուրի արձաններով,

բ) 1985թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի զոհերի հիշատակի հուշարձաններով և փլատակներից վերակենդնացած նոր կոթողներով, փողոցներով,

գ) Ջաջուռ գյուղում գտնվող հայ խոշոր գեղանկարիչ Մինասի թանգարանով,

դ) Դսեղ գյուղում գտնվող ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի տուն-թանգարանով և յուրատիպ հուշարձանով,

ե) Սանահին, Հաղպատի, Ախթալայի հնագույն եկեղեցիական համալիրներով։

Մայրաքաղաք Երևանից, որը ՀՀ զբոսաշրշային խոշոր հանգրվանն է ղեպի այս տարածաշրջանի օբյեկտներ մեկնելու համար առաջարկում ենք հետևյալ երթուղիները

ա) Երևան-Աշտարակ-Թալին, Արթիկ-Գյումրի,

բ) Երևան-Աշտարակ-Ապարանի-Վանաձոր

Իսկ տեղի կարճաժամկետ հանգրվաններից դեպի զբոսաշրջային օբյեկտներ առաջարկվում են հետևյալ երթուղիները.

ա) Գյումրի-Ամասիա-Արփկ լիճ.

բ) Գյումրի-Ջաջուռ, ՍպիտակՎանաձոր

գ) Վանաձոր-Դսեղ

դ) Վանաձոր-Հաղպատ-Ախթալա

ե) Վանաձոր-Ջորագետ- Ստեփանավան

3. Տավուշի զբոսաշրջային տարածաշրջան

Յուրահատուկ աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից ելնելով, նպատակա-հարմար է համարվել Տավուշի մարզը դիտել, քննարկել որպես զբոսաշրջային առանձին տարա-ծաշրջան։ Տարածքը կազմում է 2704 քկմ, բնակչությունը 2013 թ. տվյալներով 128,3 հզ. մարդ։

Բնածին ռեկրեացիոն ռեսուրսներից այս տարածաշրջանում լայնորեն տարածված են.

ա) Անտառային ռեսուրսները. Այս տարածաշրջանը անտառային ռեսուրսներով ոչ միայն առաջին տեղում է ՀՀ-ում (դրանց տարածքը 145.0 հզ. հա է), այլև դրան բաժին է ընկնում հանրապետության անտառային ֆոնդի 31.5 %-ը։ Այստեղ է գտնվում Դիլիջանի ազգային պարկը, որը գբոսաշրջային մեծ հետաքրքրություն է ներկայացնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ։

բ) Ջրային ռեկրեացիոն ռեսուրսներից կարևոր դեր ունեն Աղստև գետի ու դրա Գետիկ և մյուս վտակների գեղատեսիլ հովիտները, Պարզ լիճը իր անտառածածկ շրջակայքով։

գ) Դիլիջանի հանքային ջրի պաշարները

դ) Մեղմ կլիմայական պայմանները, որոնք հնարավորություն են տալիս ամբողջ տարին իրականացնելու միջազգային զբոսաշրջային գործընթացը։

Մարդածին զբոսաշրջային ռեսուրսներից առավել հանրահայտ են..

ա) Գոշավանքը

բ) Հաղարծինը

գ) Մակարավանքը

դ) Դիլիջան և Իջևան քաղաքների պատմաճարտարապետական շինությունները, հուշարձանները։

ե) Դիլիջանի ոլորապտույտ ճանապարհներն ու Սևանի լեռնանցքը և ավտո-թունելային ճանապարհը։

Տավուշի տարածաշրջանում զբոսաշրջային երկարատև, գեղատեսիլ հանգրվան է Դիլիջանը իր ժամանակակից հյուրանոցային համալիրներով, հանգստյան տներով։

Գործարար զբոսաշրջության համար մեծ հեռանկար ունի Դիլիջանը, որը դառնում է ՀՀ բանկային գործառությունների կենտրոնը և այդ առումով կունենա նաև միջազգային նշանակություն։

Բավական հարմարավետ կարճաժամկետ հանգրվան է Իջևան քաղաքը իր սպա-սարկման համակարգերով։ Կարճատև հանգրվանի համար ամառվա, աշնան ամիսներին հարմար է նաև Պարզ լիճը. Երևան քաղաքից դեպի զբոսաշրջային այս տարածաշրջան մեկնելու և տեղական նշանակության երթուղիների համար առաջարկվում են հետևյալ ուղիները.

ա) Երևան-Աբովյան-Հրազդան-Սևան-Դիլիջան

բ) Երևան- Աշտարակ-Ապարան-Սպիտակ-Վանաձոր-Դիլիջան

գ) Դիլիջան-Հաղարծին-Պարզ լիճ

դ) Դիլիջան-Գոշավանք

ե) Իջևան-Մակարավանք-Կիրանց վանք–Նոյեմբերյան

4. Սևանի զբոսաշրջնային տարածաշրջան

Սևանա լճի ավազանը որպես բնական առանձնահատկություններով օժտված մի բարդ համակարգ նպատակահարմար է դիտել, քննարկել որպես առանձին զբոսաշրջային տարածաշրջան։ Այն ընդգրկում է Գեղարքունիքի մարզի տարածքը։ Տարածքը 5348 քկմ է (ներառյալ Սևանա լճի զբաղեցրած տարածքը), բնակչությունը 235,6 հզ մարդ (2013 թ.)։ Տարածքով այս տարածաշրջանը՝ ներառյալ Սևանա լճի զբաղեցրած մակերեսը զբոսաշրջային մեծ հետաքրքրություն է ներկայացնում։

Բնածին ռեկրեացիոն, զբոսաշրջային ռեսուրսներից այս տարածաշրջանում գործնական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

ա) Սևանի ազգային պարկը, որը ընդգրկում է Սևանա լճի հայելին և լճի մակարդակի իջեցման պատճառով ազատված հատակային գոտիները, զբաղեցնում է 150,1 հզ. հեկտար մակերես, որից 24,8 հզ. հեկտարը ցամաքային է։ Պարկը բաժանված է ֆունկցիոնալ 3 գոտիների՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական։ Ռեկրեացիոն զոնայի տարածքը 7200 հեկտար է, որից 3 հզ. հա ցամաքային է, որը հիմնականում ծածկված է արհեստական անտառներով և թփուտներով։

բ) Սևանա լիճը հարավից և հարավ արևմուտքից շրջափակող Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաները Աժդահակ (3597 մ բարձրությամբ) Վարդենիս (3522 մ), Արմաղան (2829 մ) և այլ զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ներկայացնող կոնաձև գագաթներով, հրաբխային-խառնա-բանային զուլալ լճակներով։ Այս բարձրադիր լեռնագագաթներից հրաշագեղ տեսարաններ են բացվում մի կողմից դեպի Ասանա լճի ամբողջ ավազանը, մյուս կողմից դեպի հայկական լեռնաշխարհի մյուս վայրերը, ընդհուպ մինչև Արարատ, Արագած լեռնազանգվածները, տարածաշրջանի լեռնաշղթաները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում որպես էկոզբոսաշրջային օբյեկտներ

գ) Սևանա լիճը հյուսիսից ու հյուսիս-արևելքից շրջափակող Արեգունու և Սևանի լեռնաշղթաները իրենց յուրատիպ էկոզբոսաշրջային հետաքրքրություններով։

դ) Սևանի թերակղզին, որը այցելուներին հնարավորություն է տալիս ավելի մոտիկից վայելել փոքր Սևանի կապուտակ ջրերի հմայքը։

Մարդածին ռեկրեացիոն, զբոսաշրջային ռեսուրսներից այս տարածաշրջանում հետաքրքրություն

են ներկայացնում.

ա) Սևանի երբեմնի կղզում (այժմ թերակղզում) XV-XVI դարերում կառուցված, այժմ էլ գործող երկու եկեղեցիները,

բ) Նորատուսի հնագույն գերեզմանոցի շատ մեծ թիվ կազմող պատմամշակութային հետաքրքրություն ներկայացնող խաչքարերը։

գ) Գավառ, Վարդենիս քաղաքների եկեղեցական շինությունները

դ) Սևանի ստորգետնյա եզակի ջրաէլեկտրակայանի շենքը

ե) Լճաշենի հնագույն, պատմական հետաքրքրություն ներկայացնող դամբարանադաշտը։

զ) Արփա-Սևան 48 կմ երկարությամբ ստորերկրյա ջրատար թունելի ելքը (Ծովինար գյուղի մոտ), որով Արփա և Որոտան գետերից տարեկան ավելի քան 400 հզ. մ^3 ջուր է տեղափոխվում Սևան, լեռնային այս եզակի լիճը որպես այդպիսի պահպանելու համար։

Քանի որ Սևանի զբոսաշրջային տարածաշրջանը Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիսանում է զանգվածային զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի առաջին տարածաշրջանը, ապա այստեղ ձևավորվել և շարունակում են ձևավորվել երկարաժամկետ և կարճաժամկետ հանգստյան ժամանակակից հանգրվաններ։ Դրանցից առավելապես ձևավորվածը Սևան քաղաքն է իր ժամանակակից հյուրանոցներով, ռեստորանային, սպասարկման համակարգերով։ Այս առումով լայն ճանաչում է ստացել նաև ՝Երկնագույն Սևան՝ հանգստյան համակարգը, Մարտունու, Այրիվանի, Ծովագյուղի ու Սևանա լճի ամբողջ ուրվագծով ձևավորվող հանգրվանները։

Երևան քաղաքից դեպի այս զբոսաշրջային տարածաշրջան և այստեղից էլ դեպի այլ տարածաշրջաններ ձգվող հիմնական երթուղիներն են

ա) Երևան–Չարենցավան-Հրազդան-Սևան

բ) Սևան-Լճաշեն-Նորատուս, Գավառ-Մարտունի

գ) Սևան-Ծովագյուղ–Դիլիջան

դ) Սևան-Շորժա-Վարդենիս

ե) Սևան-Մարտունի-Սելիմի լեռնանցք-Եղեգնաձոր

զ) Սևան-Վարդենիս-Սոթք-ԼՂՀ -Դաղի վանք, Գանձասար)

5. Վայոց Ձոր-Սյունիք զբոսաշրջային տարածաշրջան

Քանի որ պատմամշակութային, բնակլիմայական առանձնահատկություններով Վայոց Ձորի ու Սյունիքի մարզերը շատ ընդհանրություններ ունեն, ապա նպատակահարմար է համարվել այդ երկու մարզերը ընդգրկել զբոսաշրջային մեկ տարածաշրջանի մեջ։

Զբոսաշրջային այս տարածաշրջանը ունի 6814 քկմ տարածք (կամ ՀՀ տարածքի ավելի քան 25 %), բնակչության թիվը 2013թ. տվյալներով 193,9 հզ. մարդ է (ՀՀ բնակչության 6.1 %-ը)։

Բնածին զբոսաշրջային ռեսուրսներից այս տարածաշրջանում առավել ակնառու հետաքրքրություն են ներկայացնում.

ա/ Ջերմուկի համաշխարհային ճանաչում ստացած բուժիչ հանքային տաք ջրերի խոշոր պաշարները, որոնց հիման վրա կազմակերպված են բուժարաններ, հանգստյան, զբոսաշրջային համակարգեր։ Ջերմուկի հանքային ջուրը ունի 64o ջերթություն և այն ոչ միայն լայնորեն օգտագործվում է տեղում բուժման նպատակներով, այլև շատ հաճելի սեղանի ջուր է ու արտահանվում է աշխարհի շատ երկրներ։

բ) Որոտան, Ողջի, Արփա, Եղեգիս գետերի անզուգական հովիտները բազալտե բնական սյունաշարերով և քարանձավային բնական կառույցներով։

գ) Գորիս քաղաքի շրջակայքում գտնվող բնության կերտած բազմազան հուշարձանները,

քարանձավները, Արփայի կիրճում գտնվող՝Վարդան Մամիկոնյան՝բնական հուշարձանը։

դ) Ջերմուկի ու Շաքիի ջրվեժներն ու Որոտանի կիրճում գտնվող բնության կերտած՝Սատանի՝ կամուրջը։

ե) Ջերմուկի շրջակայքի քարացրոնները, Սիսիանի տարածքի, Ծղուկ, Մեծ Իշխանասար լեռների հրաբխային, խարամային կոները։

զ) Մեծ Իշխանասարի բարձրադիր մասում գտնվող զուլալ. հրաբխային Սև լիճը։

է) Շիկահողի արգելոցը Սոսու հանրահայտ պուրակով։

ը) Սելիմի, Որոտանի լեռնանցքները, Կապուտջուղ, Արամազդ, Բաղացսար լեռնագագաթները։

Մարդածին գբոսաշրջային ռեսուրսներից Վայոց Ձոր-Սյունիք տարածաշրջանը առավել հանրահայտ է.

ա) Տաթևի վանք, Նորավանք, Գլաձորի վանք, Գնդեվանք, Սպիտակավոր Աստվածածին, Որոտնավանք, Որոտնաբերդ, Բաղաբերդ, Վահանավանք, Քարահունջի աշխարհում եզակի աստղադիտարան համալիրը և հնագույն մեծ հետաքրքրություն ներկայացնող եկեղեցական և պատմամշակութային այլ հուշարձանները, որոնցով հարուստ է այս տարածաշրջանը։

բ) Քարանձավային Խնձորեսկ գյուղը իր ժայռափոր, շատ դեպքերում երկհարկ, լրացուցիչ հարմարություններով՝ բնակարաններով, որն անհիշե|ի ժամանակներից մարդու բնակատեղի է եղել։

գ) Ջերմուկ քաղաքը իր հանքային ջրի անզուգական, սյունազարդ, թամանյանական ճարտարապետական մոտիվներով կառուցված ըմպասրահը, որը այս կուրորտային քաղաք այցելող գբոսաշրջիկների, բուժվողների ամենասիրելի վայրն է։

դ) Ջերմուկի հրաշալի գբոսայգին, ջրավազանները, քաղաքի երկու մասերը իրար միացնող և Արփայի անդնդախոր կիրճի երկու ափերը միացնող կամուրջը, բազալտակուռ շենքերը, հանքային ջրերի գործարանները, հայկական ազատագրական պայքարի հերոսների, ֆիդայիների հուշարձանները, բաղաքը շրջապատող գեղատեսիլ բնաշխարհը, քաղաքի նորակառույց եկեղեցին։

ե) Կեչուտի, Սպանդարյանի ջրամբարները, որտեղ կուտակվում են Արփա և Որոտան գետերի ջոերի մի մասն ու Սրփա-Սևան թունելով մղվում դեպի Սևանա լիճ։

զ) Ջիրմուկի գբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող քաղաքը շրջափակող Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային լեռնաճյուղերից մեկի գագաթը և հիանալի շրջակա լեռնաշխարհի բնաշխարհը։

է) Գորիս, Սիսիան, Կապան, Մեղրի քաղաքները իրենց յուրատիպ ճարտարապետությամբ, թանգարաններով։

թ) Ջերմուկի ճոպանուղին, որով 2080 մ բարձրություն ունեցող Ջերմուկ քաղաքից կարելի է բարձրանալ ևս ավելի քան 300 մ և Ամուլ սարի բարձրությունից հիանալ շրջապատի լեռնաշխարհով և Որոտան գետի անդնդախոր կիրճի վրայով անցնող եզակի ճոպանուղին, որի Երկարությունը կազմում է 5-7 կմ և որպես այդպիսին աշխարհում առաջինն է։ Այս ճոպանուղին Որոտան գետի կիրճի ձախ ափը կապում է աջ ափին գտնվող Տաթևի հանրահայտ վանքի համալիրին ու Տաթև գյուղին։ Նախատեսվում է նաև այդ գետի ափին գտնվող Հալիձոր գյուղում կառուցել գբոսաշրջային հանգրվան, իր սպասարկամ ամբողջ համակարգով. Այս հանգամանքը շատ կարևոր դեր կխաղա շրջակա գյուղերի բնակիչներին աշխատատեղերով ապահովելու գործում։

ժ) Արենիի քարանձավային հազարամյակների պատմություն ունեցող կացարանները, որտեղ հայտնաբերվել է 6 հզ. տարվա հնություն ունեցող և շատ լավ պահպանված հայկական կոշիկ, գինու արտադրության պարագաներ, կարասներ, որոնք գբոսաշրջային եզակի հետաքրքրություն են ներկայացնում։

Վայոց Ձոր-Սյունիք զբոսաշրջային տարածաշրջան այցելելու և այդ շրջանի ներքին երթուղիների համար առաջարկվում են հետևյալ ուղիները.

ա) Երևան-Երասխավան-Զանգակատուն-Արենի-Ջերմուկ,բ) Երևան-Սևան-Մարտունի-Եղեգնաձոր-Ջերմուկ, գ) Ջերմուկ-Վայք-Նորավանք-Գլաձորի վանք, դ) Ջերմուկ–Կեչուտի ջրամբար-Արփա Սևան թունել, Գնդեվանք, ե) Ջերմուկ-Սիսիան-Գորիս-Խնձորեսկ, զ) Գորիս-Տաթև-Կապան, է) Կապան-Շիկահող ,ը) Կապան-Քաջարան-Մեղրի

ТУРИСТИЧЕСКИЕ РЕГИОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Мелкумян С., д. г.н., профессор, АГЭУ
Арутюнян Ш.Л, преподаватель, АГЭУ

Поскольку туризм является одной из приоритетных сфер экономики Республики Армения, территорию страны необходимо разделить на туристические регионы. Авторы статьи предлагают территорию Армении разделить на 5 таких региона.

THE TOURIST REGIONS OF RA

Melkumyan S., Doctor of Geographical Sciences, Professor, ASUE , Haroutyunyan L., lecturer, ASUE

As tourism is one of the priority spheres of the economy of Republic of Armenia, the country should be divided into tourist regions. The authors offer to divid the territory of Armenian into 5 tourist regions.

ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՄԱՐԻԱՄ ՄՈՄՋՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, ԵՊՀ

Հիմնաբառեր. զբոսաշրջություն, ներդրումներ, մրցունակություն, տնտեսական զարգացում, վիճակագրական վերլուծություն:

1980թ.-ին Մանիլայում (Ֆիլիպիններ) Զբոսաշրջության համաշխարհային կոնֆերանսի ընթացքում ընդունվել է Մանիլայի համաշխարհային զբոսաշրջության վերաբերյալ հռչակագիր: Համաձայն նշված հռչակագրի՝ զբոսաշրջությունը դիտարկվում է որպես համաշխարհային տնտեսության առանձին տնտեսական բաղադրիչ, միջազգային հարաբերությունների, գիտության եւ տնտեսության, ինչպես նաև սոցիալական եւ մշակութային կյանքի էական գործոն որն իր դրական ազդեցությունն է թողնում ազգային տնտեսությունների հիմնական հատվածների և երկրի տնտեսական զարգացման վրա ընդհանրապես, ինչն էլ իր հերթին հանգեցնում է երկրի ՀՆԱ-ի, ազգային եկամուտների, զբաղվածության աճին, տարածաշրջանային զարգացմանը, աղքատության կրճատման եւ այլն:

Զբոսաշրջային կամ տուրիզմի ժամանակակից ինդուստրիան հանդիսանում է համաշխարհային տնտեսության բարձրարդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Դրան բաժին է ընկնում համաշխարհային համախառն արդյունքի, համաշխարհային ներդրումների, համընդհանուր աշխատատեղերի և համաշխարհային սպառողական ծախսումների մոտ 10 տոկոսը, յուրաքանչյուր 16-

րդ աշխատատեղը[1]: Միջազգային մակարդակով ծառայությունների վաճառքի գծով զբոսաշրջությունը դուրս է եկել առաջին տեղը: Իսկ Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Փոքր Ասիայի, Խաղաղօվկիանոսյան և Ասիական տարածաշրջանի մի շարք երկրներում այն դարձել է ազգային եկամտի և շահույթի ծանրակշիռ հոդված՝ շուրջ 13-40 տոկոս կշռով:

Սակայն պետք է նշել, որ զբոսաշրջության ազդեցության իրական գնահատականը ունենալու համար անհրաժեշտ է համադրելի դարձնել տարբեր երկրների օրենսդրությամբ սահմանված զբոսաշրջիկի ձևակերպումները, քանի որ ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ չկա զբոսաշրջության հստակ եւ միասնական սահմանումը: Առավել համընդհանուր սահմանմամբ՝ զբոսաշրջությունը մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է նրանց մշտական բնակության վայրից՝ հանգստյան կամ առեւտրային նպատակներով, առանց եկամուտ ստանալու ակնկալիքի: Զբոսաշրջիկի սահմանման համադրելի մոտեցման մշակումից հետո զբոսաշրջային ինդուստրիայի արդյունավետությունը գնահատելու և տարբեր երկրներում համեմատական վերլուծություն իրականացնելու համար առաջնային է դառնում զբոսաշրջության ոլորտը նկարագրող վիճակագրական ցուցանիշների սահմանման հիմնահարցը: Զբոսաշրջային ինդուստրիայի հիմնահարցերի շարքում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները՝

- ազգային զբոսաշրջության ոլորտի շրջանակի նկարագրությունը և դրա ուսումնասիրությունը.
- հյուրանոցների եւ այլ զբոսաշրջային օբյեկտների և ծառայությունների վերաբերյալ լիարժեք, համալիր տեղեկատվության ապահովումը.
- երկրի վճարային հաշվեկշռի եւ տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցության գնահատումը:

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում վիճակագրական վերլուծության և ըստ տեսակների զբոսաշրջությունը ու ըստ ազգային պատկանելիության զբոսաշրջիկներին դասակարգման նպատակը տնտեսության, որպես մեկ ամբողջության վրա, զբոսաշրջության ուղղակի եւ անուղղակի ազդեցությունները չափելն է, ռեսուրսների արդյունավետ օգտագործման եւ նոր հնարավորությունների պլանավորման խթանումն է, ինչպես նաեւ մարքեթինգային ռազմավարությունների (այդ թվում՝ ըստ նպատակային խմբերի), գովազդային արշավի և զբոսաշրջային հոսքերի հետազոտություններ և դրանց կանխատեսումներում փոփոխություններ իրականացնելու հնարավորության կատարելագործումը: Զբոսաշրջությունը ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում է նաև աշխատատեղերի թվաքանակի ավելացման վրա: Եվ հատկապես կարևորվում է զբոսաշրջության դերը երկիր արտարժույթի զգալի հոսքեր ապահովելու գործում: Այս փաստը հատկապես կարևորվում է այն երկրների համար, որոնք ունեն ոչ բավարար զարգացած իրական տնտեսության հատված եւ արտահանման ցածր մակարդակ (ինչպիսին հենց ՀՀ-ն է), իսկ զբոսաշրջային ծառայությունների արտադրության եւ սպառման անբաժանելիությունը հանարավորություն է տալիս առանց երկրի սահմաններից դուրս գալու ապահովել արտարժույթի հոսք դեպի այդ երկրի տնտեսություն: Ներդրումների ներգրավման տեսանկյունից զբոսաշրջիկների թվի աճը հանգեցնում է տվյալ երկրի հատկապես հյուրանոցային բիզնեսի նկատմամբ օտարերկրյա ներդրողների հետաքրքրության աճին: Վերջին տարիներին ՀՀ-ում ևս բացվել են միջազգային հյուրանոցային ցանցերին պատկանող հյուրանոցներ, ինչպիսիք օրինակ՝ ‚Hyatt Place Yerevanեն-ն է՝ բացված 2013 թվականին[1]: Ու նաև 2016 թվականին իր մուտքը ՀՀ հյուրանոցային բիզնես կտոնի միջազգային ‚Rezidence Blueեն ապրանքանիշը:

Այսպիսով, զբոսաշրջությունը՝

[1] wttc.com
[1] http://www.slaq.am/rus/news/167400/

- ապահովում է երկրի տնտեսությանը արտարժութի ներհոսքերով,
- ապահովում է աշխատատեղերի թվաքանակի աճ,
- ընդլայնում է ներդրումները երկրի ՀՆԱ-ում և վճարային հաշվեկշռում,
- զբոսաշրջության ոլորտում զբաղվածության աճը նպաստում է բնակչության եկամուտների աճին և բարձրացնում բնակչության բարեկեցությունը, դրանով իսկ
- նպաստում է երկրի թույլ զարգացած շրջանների տնտեսական զարգացմանը՝ կատարելով համահարթեցնող գործառույթ, որն առավել քան կարևորվում է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար:

2013 թվականին զբոսաշրջության արդյունաբերությունը ապահովել է աշխարհում բոլոր աշխատատեղերի 3.3%-ը, որն իր բացարձակ մեծությամբ կազմել է 100.894.000, իսկ զբոսաշրջության միջոցով արտահանման ծավալները 2013 կազմել են 1.295.9 մլրդ ԱՄՆ դոլար կամ համաշխարհային արտահանման ծավալների 5.4%-ը, կապիտալ ներդրումները կազմել են 754 մլրդ ԱՄՆ դոլար կամ աշխարհում կապիտալ ներդրումները 4.4%-ը[2]:

ՀՀ զբոսաշրջային ոլորտի զարգացման հիմնախնդիրներին անդրադառնալուց առաջ ներկայացնենք ոլորտի նկարագրությունը համառոտ: Զբոսաշրջության ոլորտը ՀՀ տնտեսության ամենաարագ աճող ոլորտներից է: Ըստ վիճակագրության՝ 2014թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն է ժամանել 1203746 զբոսաշրջիկ կամ 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 11.3%-ով (աղ.1)[3]:

Աղյուսակ 1.

ՀՀ զբոսարշրջային այցելությունների հոսքը 2000-2013թթ..[4]

Տարեթիվը	*Այցելությունների թվաքանակը*
2000	45000
2001	123000
2002	162000
2003	206000
2004	263000
2005	319000
2006	382000
2007	511000
2008	558000
2009	575000
2010	684000
2011	758000
2012	843000
2013	1071334
2014	1203746

Ճիշտ է, ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, ՀՀ այցելող զբոսաշրջիկների թիվը դրսևորել է աճի միտում, սակայն այստեղ արտացոլված են ՀՀ սահմանը հատողների թիվը, որը չի արտացոլում

[2] www.wttc.com Համաշխարհային ճանապարհորդության եւ զբոսաշրջության խորհուրդ
[3] http://mineconomy.am/arm/39/gortsaruyt.html
[4] Համաշխարհային բանկի պաշտոնական կայք www.worldbank.org

սահմանը հատելու նպատակը: Ուստի անհրաժեշտ է առաջին հերթին որոշել, դրանց որ մասն է իրականում այցելել ՀՀ զբոսաշրջային նպատակներով:Ընդհանրապես, տարբեր երկրներում զբոսաշրջության պոտենցիալը և այդ երկրի դերը զբոսաշրջության ոլորտում որոշելու համար կիրառվում է զբոսաշրջության մրցունակության համաթիվը, որը հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի խմբի կողմից: Զբոսաշրջության մրցունակության համաթիվը գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության ոլորտում և բաղկացած է ստորև ներկայացված 3 ենթահամաթվերից.

1. զբոսաշրջության կանոնակարգող դաշտ,
2. զբոսաշրջության գործարար միջավայր և ենթակառուցվածքներ,
3. զբոսաշրջության մարդկային, մշակութային, բնական ռեսուրսներ, որոնք հաշվարկվում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունն արդեն հինգերորդ տարին է, ինչ ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող ,Համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցումե: Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի՝ 2013 թվականին Հայաստանի դիրքը 11 տեղով բարձրացել է 2011 թվականի հետ համեմատած: Հայաստանը, ըստ 2013թ. զբոսաշրջության մրցունակության զեկույցի, զբոսաշրջության մրցունակությամբ 79–րդն է 140 երկրների շարքում, իսկ ԱՊՀ երկրների և Վրաստանի հետ համեմատ՝ 5-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանին (63), Վրաստանին (66), Ուկրաինային (76) և Ադրբեջանին (78) և գերազանցելով Ղազախստանին (88), Մոլդովային (102), Ղրղզստանին (111) և Տաջիկստանին (114): 2013թ. զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկը գլխավորում են Շվեյցարիան, Գերմանիան և Ավստրիան, իսկ ԱՊՀ երկրների խմբում զբոսաշրջության բնագավառում ամենամրցունակ երկիրը Ռուսաստանն է (63–րդ տեղ): Զեկույցում աճի տեմպով Հայաստանը 1–ին տեղում է Վրաստանի և ԱՊՀ երկրների շարքում[1]:

ՀՀ զբոսաշրջության մրցունակության նշված համաթիվը էապես կարող է բարելավվել ոլորտում ներդրումների աճ գրանցվելու պարագայում: Իսկ ՀՀ-ում գոյություն ունեն գործոններ, որոնք կարող են ՀՀ զբոսարշջային ոլորտը գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրողների համար: Դրանցից են՝

1. ՀՀ-ում բիզնես գրանցելու ընթացակարգերի շարունակական պարզեցումը.
2. Մրցունակ և բարձր որակավորված աշխատուժը.
3. ԵՄ-ի հետ համագործակցությունը և ԵՏՄ անդամակցությունը.
4. Հյուրընկալ բնակչությունը.
5. Ազատական ներդրումային միջավայրը:

ՀՀ կառավարության կողմից տնտեսության գերակա ճյուղ հռչակված զբոսաշրջային ոլորտի կայունությանը, անվտանգությանն ու բարգավաճմանը նպաստելու համար՝ ՀՀ արտաքին քաղաքականության նպատակներից է հանդիսանում բարեկամական և ներդաշնակ հարաբերությունների հաստատումը բոլոր երկրների հետ և միջազգային համագործակցությունը միջազգային կազմակերպությունների շրջանակում: Տարածաշրջանային համագործակցությունը որպես տարածքային զարգացման և կայունության հիմնական գործիք դիտարկելը և մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ հարաբերություններ հաստատելը, որոնք իրականացնում են տարբեր գործառույթներ և ընդգրկում տարբեր աշխարհագրական գոտիներ, վկայում են հենց ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության բազմաչափանիշային բնույթի մասին:

[1] http://mineconomy.am/uploades/TEXEKANQ_FORUM_sayt.pdf

Հետազոտելով միջազգային փորձը՝ զբոսաշրջության ոլորտի զարգացման հաջողությունը մեծապես կախված է զբոսաշրջության զարգացման ուղղությունների և դրանց առաջնահերթությունների պետության ընկալումից: Հաշվի առնելով հենց այդ փորձը՝ ՀՀ Կառավարության ծրագրերը պետք է ուղղված լինեն հատկապես զբոսաշրջային ենթակառուցվածքների, զբոսաշրջային վայրերի, մարզերի եւ կենտրոնների զարգացմանը, ինչպես նաեւ զբոսաշրջության ազգային արտադրանքը միջազգային շուկայում ներկայացնելուն և ազգային բրենդի առաջխաղացմանն ուղղված մարքեթինգային և գովազդային արշավների իրականացմանը: Զբոսաշրջությունն ունի զարգացման իր առանձնա-հատկությունները, քանի որ այն ներառում է մի շարք հարաբերություններ, ինչպիսիք են զբոսաշրջիկ-պետություն, զբոսաշրջիկ-զբոսաշրջային գործակալություն, զբոսաշրջային գործակալություն-պետություն հարաբերությունները: Այդ տարաբնույթ հարաբերությունների բոլոր կողմերը հաշվի առնելու բարդությունը հանգեցնում է պետության կողմից այդ հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությանը և դրա անընդհատ կատարելագործմանը: Դա էլ հաշվի առնելով ՀՀ կառավարության առջև ծառացած հիմնախնդիրներն են հանդիսանում՝

- ՀՀ-ում զբոսաշրջային ձևակերպումների կարգավորումը, դրանց ընթացակարգերի պարզեցումը,
- ՀՀ ճանապարհորդությունների անվտանգության բարձրացումը,
- Զբոսաշրջային ենթակառուցվածքների բոլոր բաղադրիչների զարգացումը,
- Շրջակա միջավայրի, զբոսաշրջային օբյեկտների պահպանությունը,
- Զբոսաշրջիկների իրավունքների պաշտպանությունը,
- Միջազգային ստանդարտներին և չափանիշներին համապատասխան վիճակագրական հաշվառման և վերահսկողության համակարգի ներդրումը,
- Երկրի զբոսաշրջային բրենդի ձևավորումը և ազգային զբոսաշրջային արդյունքի առաջխաղացումը միջազգային շուկաներում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնավոր հատվածը չի ներդրել եւ ոչ էլ կարող է ավելի շատ ռեսուրսներ ներդնել վիճակագրական հաշվառմանը վերաբերող խնդիրների իրագործման և զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման համար: ՀՀ զբոսաշրջային ոլորտի մասնավոր հատվածի գերխնդիրը պետք է լինի մատուցվող ծառայությունների բարձր որակով և դրանց դիմաց գանձվող համեմատաբար ցածր գներով օտարերկրյա զբոսաշրջիկներին գրավելը:

Այնուամենայնիվ, պետություն-մասնավոր հատված ակտիվ համագործացության շնորհիվ է միայն հնարավոր լուծել ՀՀ զբոսաշրջային պոտենցիալի իրացմանը նպաստող հետևյալ առաջնահերթ խնդիրները.

- Նորարարությունների մշակման և մատուցվող ծառայությունների որակի կատարելագործման նպատակով ներդրումների իրականացումը,
- Մարքեթինգի և բրենդավորման գործընթացների կատարելագործումը և նպատակադրման ուժեղացումը: Այսօր աշխարհում զբոսաշրջային ինդուստրիայում իրենց կայուն տեղն ունեցող գրեթե բոլոր երկրներն ունեն պաշտոնական ինտերնետային բազմաֆունկցիոնալ և համալիր կայքեր, որոնք գովազդում են իրենց երկիրը՝ որպես գրավիչ զբոսաշրջային երկրներ: Ընդ որում, սրա կարևորությունն էլ ավելի է արժևորվում օնլայն մարքեթինգի և դրա ազդեցության գնահատականի անընդհատ աճող փաստը հաշվի առնելով: ՀՀ-ն ևս ունի նման կայք՝ www.armeniainfo.am, որը սակայն չի թարմացվել արդեն մի քանի տարի: Ընդ որում, ամիրաժեշտ արդյունքի հասնելու նպատակով, անհրաժեշտ է ոչ միայն վերագործարկել և թարմացնել նշված կայքը, այլ ապահովել դրա հետագա շարունակական ընդլայնումը և տեղեկատվական անընդհատյա թարմացումները:
- Կայուն և ,կանաչ տեխնոլոգիաներիե զարգացման և ՀՀ-ում դրանց ներդրման ապահովումը,

- Զբոսաշրջային նորարարական արդյունքի առևտրակայնացումը միջազգային շուկաներում,
- Տվյալների հավաքագրման որակի և օպերատիվության մակարդակի բարելավումը,
- Համագործակցության ուժեղացումը զբոսաշրջիկ-պետություն, զբոսաշրջիկ-զբոսաշրջային գործակալություն, զբոսաշրջային գործակալություն-պետություն, պետություն-պետություն, պետություն-միջազգային կազմակերպություն հարաբերություններում:
- Երկարաժամկետ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների բարելավումը՝ միջազգային փառատոներին, ցուցահանդեսներին մասնավոր հատվածի ներգրավվածությունը մեծացնելու նպատակով:

Այսպիսով, զբոսաշրջային ինդուստրիայի աճին զուգահեռ մեծանում է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման և մրցունակության մակարդակը գնահատելու միջազգային մակարդակով համադրելի ունիվերսալ մեխանիզմների մշակումը և դրանց ներդրումը, որի համար առաջնային է ՀՀ այցելած զբոսաշրջիներին ըստ ազգային պատկանելիության և եկամուտների դասակարգելը, որը հնարավորություն կտա որոշել շուկայի առավել թիրախային խմբերը և հատվածները: Համադրելի ցուցանիշների ու մեխանիզմների մշակումը և դրանց կիրառումը հնարավորություն կտա կատարել համեմատական վերլուծություններ ըստ երկրների և որոշել միջազգային պրակտիկայում դեռևս չորոշված նաև այնպիսի ցուցանիշ, ինչպիսին է միջազգային զբոսաշրջությունից ստացվող շահույթը, որոշել առանձին երկրների վճարային հաշվեկշռի վրա զբոսաշրջության իրական ազդեցությունը:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ИНДУСТРИИ ТУРИЗМА АРМЕНИИ

Момджян М.к.э.н., доцент, ЕГУ

Туристическая индустрия является одной из наиболее динамичной и быстроразвивающейся отраслью, оказывающая мультипликационный эффект на развитие всей экономики. Учитывая преимущества влияния туриндустрии на экономический рост страны и перспективы развития туриндустрии в Армении, туризм правительством РА обьявлен приоритетной отраслью экономики. Этот факт способствует активному участию и вмешательству государства в туриндустрию путем выявления проблем и осуществления государственной политики поощренния отрасли, в том числе с целью решения ряда проблем. Важнейшим направлением государственной политики РА является маркетинговая политика продвижения и брендинга турпродукта РА, улучшение статистического учета и активизация международного сотрудничества, в том числе с целью привлечения инвестиций в туриндустрию РА.

PROBLEMS OF DEVELOPMENT OF TOURISM INDUSTRY IN RA

M. Momjyan , Doctor of economics, YSU

Tourism with its development and its results is one of the most dynamically developing branches of economy in the world and in RA, which has multiply effect for economic growth. Considering mentioned advantages of tourism development and its potential in RA the government has determined tourism as priority sphere of economy. This fact assist for active governmental intervention and implementation of encourage policy in order to find out problems for tourism development and solving them. The most important directions of

tourism policy in RA are marketing policy, improvement of statistical data reporting and active international cooperation.

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ԱՐՓԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

Հիմնաբառեր. *մարզային զբոսաշրջություն, ծառայությունների շուկա, տրանսպորտային ենթակառուցվածքներ, եկամուտների աճ, համաշխարհային տնտեսություն, աղքատության հաղթահարում, տարածքների համաչափ զարգացում:*

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքներիփոխադարձ արժևորմանը: Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է:

Զբոսաշրջությունը, որպես ծառայությունների ոլորտի բաղադրիչ, ունի իր յուրահատկությունները, որոնք թույլ են տալիս բնութագրել այն որպես տնտեսության հիմնական ոլորտներից մեկը: Զբոսաշրջային ծառայության յուրահատկությունը վերագրվում է այն բնութագրական հատկանիշներին, որոնք նրան առանձնացնում է այլ ծառայությունների տեսակներից: Բացի ծառայություններին բնորոշ հատկանիշներից, կարելի է առանձնացնել զբոսաշրջության ծառայությունների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ամբողջականությունը, կուտակման էֆեկտը և նորմավորման բարդությունը, որոնք կարող են փոփոխվել դրանց արտադրման և իրացման տարբեր ոլորտներում:

Զբոսաշրջային ծառայությունների շուկան հանդիսանալով մեծ հաշվով առևտրային միջավայր ունի սոցիալական ուղղվածություն՝ ուղղված է հասարակական պահանջմունքների զարգացմանն ու բավարարմանը, ունի ազդեցություն անհատի սոցիալականացման գործում, հանդիսանում է մարզի և ամբողջ երկրի ազգային եկամտի վերաբաշխման գործիք:

Ներկայումս զբոսաշրջությունը համարվում է սոցիալ-տնտեսական երևույթ, որն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է զբոսաշրջության հետ կապված այլ ենթակառուցվածքների զարգացման վրա: Չնայած Հայաստանն ունի զբոսաշրջության ոլորտի զարգացման որոշակի ռեսուրսներ, սակայն զբոսաշրջության ոլորտը չունի մեծ պահանջարկ, քանզի նրա հետ փոխկապակցված ենթակառուց-վածքները, որոնք ապահովում են զբոսաշրջային ծառայություններ, զարգացած չեն, չկան բավարար պայմաններ զբոսաշրջության ոլորտում օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար, ինչպես նաև չկան արդյունավետ մեթոդներ մարզերի զբոսաշրջային ներուժի վերլուծություն իրականացնելու համար:

Հայաստանում մարզային զբոսաշրջության ոլորտի զարգացման ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ ու խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ զարգացման ներուժը առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու և զբոսաշրջության պետական քաղաքականությամբ սահմանված նպատակներին հասնելու համար:

Ժամանակակից տնտեսագիտության կառուցվածքային վերակազմավորումը թույլ է տալիս խոսել

մարզի զբոսաշրջության կառուցվածքի կտրուկ վերակազմավորման անհրաժեշտության մասին, առաջին հերթին, փոփոխելով առաջնահերթությունները. ուշադրություն դարձնել զբոսաշրջության ինչպես էլիտար, այնպես էլ ոչ թանկարժեք և մասսայական տեսակների վրա:

Այժմ առանձնացնենք մարզային զբոսաշրջության կառավարման առաջնահերթությունները, որոնք ամենից առաջ ուղղված են.

- ✓ Զբոսաշրջության ոլորտում սոցիալական ծրագրերի զարգացմանը, այդ թվում բյուջետային կազմակերպությունների, ուսումնական շրջագայությունների զարգացմանը՝ մասնագիտացված զբոսաշրջային, մշակութային ծրագրերի իրականացմանը,
- ✓ Զբոսաշրջային ծառայությունների ենթակառուցվածքների զարգացման խթանմանը,
- ✓ պատմամշակութային հուշարձանների տեխնիկական իրավիճակի պահպանման աջակցությանը,
- ✓ պետական առողջարանների աջակցությանը՝ բժշկության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրմանը,
- ✓ զբոսաշրջային օբյեկտների վերակառուցմանը՝ հանգստի տներ բնապահպանական տարածքներում,
- ✓ գործարար միջավայրի զարգացմանը՝ գիտական կազմակերպությունների հետ համագործակցություն, այդ թվում նաև արտասահմանյան, որոնք խթանում են զբոսաշրջային բիզնեսը մարզերում և փոքր քաղաքներում,
- ✓ տեղեկատվական քաղաքականության կատարելագործմանը, մասնավորապես՝ պետական նշանակության զբոսաշրջային օբյեկտների տեղեկատվական աջակցությանը:

Մարզային զբոսաշրջության զարգացումը հնարավոր է միայն զբոսաշրջային ծառայությունների ոլորտում սուբյեկտների արդյունավետ գործունեության արդյունքում: Ստորև ներկայացնենք, փոխազդեցությունը մարզային և տեղական կառավարման մարմինների հետ (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Զբոսաշրջային ընկերությունների սուբյեկտների փոխհարաբերությունները տեղական և մարզային կառավարման մարմինների հետ



Զբոսաշրջային շուկայի ընդլայնման գործընթացը պահանջում է զբոսաշրջային արտադրանքի առաջանցման շուկայական ռազմավարության մշակում: Ռազմավարությունն իրենից ներկայացնում է զբոսաշրջային շուկայի երկարաժամկետ օպտիմալ մոդել, որը հաշվի է առնում դրա

առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ռազմավարական քայլի դեպքում անհրաժեշտ են պետական և մասնավոր հատվածի կողմից համապատասխան աջակցություն:

Զբոսաշրջության ոլորտի առաջարկի և պահանջարկի գործոնների միավորումը իրականացվում է զբոսաշրջության ոլորտի կարգավորման ճանապարհով՝ ելնելով երկրի ընդհանուր և մարզերի զարգացման շահերից: Զբոսաշրջության ոլորտի առաջարկի և պահանջարկի գործոնները ներկայացված են ստորև բերված գծապատկերում (տես՝ գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Մարզային զբոսաշրջության զարգացման գործոնները



Տարբեր մակարդակներում պետության կողմից աջակցությունը որոշիչ է դառնում զբոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպատնտեսական մեխանիզմի ստեղծման գործում:

Զբոսաշրջության դերը երկրի տնտեսական աճի, հասարակության պահանջների բավարարման, երկրների միջև կապի հաստատման գործում անգնահատելի է: Զբոսաշրջության ոլորտն իր ուրույն տեղն է զբաղեցնում զարգացած և զարգացող երկրների տնտեսության մեջ: Շատ երկրներ ապրում են հենց զբոսաշրջությունից ստացված եկամուտով: Բացի այդ, ոլորտն առաջարկում է զբոսաշրջային ծառայությունների ծավալուն համակարգ, որը մեր երկրում դեռ զարգացման փուլում է:

Զբոսաշրջությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, քանի որ կան զբոսաշրջության տեսակներ, որոնք անմիջական ազդեցությունեն ունենում բնության վրա, օրինակ՝ էկոզբոսաշրջություն, ագրոզբոսաշրջություն: Երբ հասարակությունը հասկանա, որ ինքը բնության շնորհիվ կարող է գումար վաստակել ընդամենը ցուցադրելով այն զբոսաշրջիկներին, ապա նա ստիպված կլինի մաքուր պահել և պահպանել բնությունը, ինչն էլ անպայման կհանգեցնի բնության պահպանմանն ու մաքրությանը:

Նմանատիպ հիմնախնդիրների ուսումնասիրությունը, վերլուծությունն ու լուծման տարբերակների ճշգրիտ սահմանումը կհանգեցնի ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ու բարելավմանը, քանի որ վերոնշյալ բոլոր ոլորտներում առկա հիմնախնդիրները սերտորեն կապված են

միմյանց հետ, և մի հիմնախնդրի լուծումը կախված է մյուսից: Հայաստանի Հանրապետությունն ունի շատ մեծ հեռանկարներ զբոսաշրջության ոլորտում և, ճիշտ կողմնորոշվելով, մենք կարող ենք գտնել դեպի այդ զարգացման ուղին տանող ուղին: Քանի որ մեր երկրի տնտեսական զարգացման ուղիները սահմանափակ են, մենք կարող ենք մեր երկիրը զարգացնել ծառայությունների առևտրով, որի ամենավառ ճյուղերից մեկը իհարկե զբոսաշրջությունն է, մանավանդ, որ ունենք բոլոր նախադրյալները Հայաստանը վերածելու զբոսաշրջության կենտրոնի:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНАХ

Овакимян А., к.э.н. АГЭУ, Ехегнадзорский филиал

Понятие региональный туризм содержит два тесно связанных между собой аспекта: географический и социально-экономический. Первый отражает пространственное размещение рекреационных ресурсов, объем рекреационных потребностей местного населения и степень удовлетворения их в конкретном районе, а также возможности для привлечения внешних туристских потоков на данную территорию. Второй показывает уровень рекреационной освоенности територии, обусловивший место данного региона на отечественном и мировом туристских рынках, и социально-экономические условия, способные стимулировать или сдерживать развитие туризма.

THE ISSUES OF TOURISM DEVELOPMENT IN REGIONS

Hovakimyan A., PhD, ASUE Yegheghnadzor branch

The concept “Regional Tourism” involves two aspects deeply connected with each other: geographic and socio-economic. The first one reflects the spatial distribution of recreational resources, the volume of recreational needs of local population and the level of their satisfaction in a particular region as well as the opportunities for the attraction of internal tourism flow to this territory. The second one shows the level of recreational mastery of the territory determined the place of the region in domestic and world tourism markets and socio-economic conditions, able to stimulate or to keep the development of tourism.

ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ ТУРИЗМА

АСМИК САЯДЯН, к.э.н., ЕГУ

Туризм является одной из ведущих отраслей экономики Армении и признан приоритетным направлением на официальном уровне. Приоритетность отрасли туризма как принцип государственной политики зафиксирован в законе Республики Армении “О туризме и туристической деятельности”. Сфера туризма является той исключительной отраслью экономики, которая как непосредственно, так и косвенно влияет на развитие многих других отраслей.

Доля туризма во внутреннем валовом продукте Армении составляет 6-7% и по объему экспорта услуг является одной из ведущих отраслей. За последние годы благодаря осуществлению государственной политики в сфере туризма, а также сотрудничеству между органами государственного управления и местного самоуправления, частным сектором и местным населением сохраняется рост числа въездных туристов. В среднем прирост составляет около 25% в год. Последние несколько лет доход от одного туриста составляет в среднем 660 долларов. 0б этом свидетельствуют данные исследования компании McKinsey & Company, осуществленного по заказу проекта ,Armenia 2020 [4].

Параллельно развитию международного туризма в республике большими темпами развивается внутренний туризм, что является результатом улучшения уровня жизни населения и развития

инфраструктуры курортного туризма. Обеспечение роста числа международных и внутренних туристов является основным направлением государственной политики в сфере туризма.

Для обеспечения стабильного роста числа международных туристов первоочередной задачей является продвижение армянского турпродукта на международном рынке путем формирования представления о Республике Армения как о безопасной и привлекательной для туризма стране. Туризм имеет прямое и косвенное воздействие на экономику страны. Прямое воздействие – это рост доходов предприятий (транспортных компаний, гостиниц, ресторанов, экскурсионных бюро) и населения за счет объемов прямых расходов въездных туристов в нашей стране на приобретение товаров и услуг.

Косвенное воздействие – это доходы предприятий, содействующих производству конечного продукта для туристов. Например, доходы строительных организаций, банков, страховых компаний, фермеров являются результатом косвенного воздействия. С ростом въездного туризма из года в год растет и национальный доход Армении. Однако для дальнейшей стабилизации роста необходимы инвестиции в развитие инфраструктуры туризма и доведение до мировых стандартов.

Имеется целый ряд расходов, необходимых для развития инфраструктуры туризма. Перечислим некоторые из них [1]:

1. *Расходы на приобретение импортной продукции*. Армения вынуждена импортировать широкий ассортимент товаров, так как она их не производит. Например, автобусы, мебель, сантехнику, оборудование для гостиниц, ресторанов, горнолыжный инвентарь, свежие овощи, фрукты зимой и т.д.
2. *Расходы на модернизацию сферы обслуживания*. Посещение туристами отдаленных районов (Севан, Дилижан, Алаверди, Ехегнадзор, Джермук, Горис) требует повышения качества обслуживания, а именно, развитие сети минигостиниц со всеми удобствами, электроснабжения, обеспечение безопасности.
3. *Расходы на подготовку специалистов*. Развитие туризма вызывает необходимость подготовки высококвалифицированных специалистов: турменеджеров, гидов, экскурсоводов, специалистов по гостиничному обслуживанию.
4. *Расходы по выплате процентов по займам*. Развитие туризма требует привлечния больших средств. Государство и отечественные инвесторы не в состоянии финансировать все программы по развитию туризма. Привлечние иностранного капитала обязует заемщиков выплачивать проценты по займам, а также постепенно погашать долги. Осуществление иностранных инвестиций в гостиничный бизнес дало уже результаты. Представители армянской диаспоры инвестировали большие средства в строительство и реконструкцию гостиниц в районах Армении и Нагорного Карабаха. Эти гостиницы ничем не уступают высоким требованиям, принятым во всем мире.

Таким образом, увеличение числа въездных туристов в Армению в ближайшие годы не могут улучшить платежный баланс. Это связяно с тем что, количество денег, активно циркулирующих в местной экономике, сокращается на сумму вышеперечисленных расходов. Оставшиеся деньги используются на покупку местных товаров и услуг, оплату труда, покрытие налогов и т.д. В каждом цикле расходования некоторая часть денег оседает у местных жителей в виде доходов. Определенная часть этих денег накапливается и прекращает свой оборот в экономике. Доход, который не накапливается, тратится на импорт и уходит в виде налогов в бюджет государства. Таким образом, доходы сокращаются, и в каждом цикле происходит утечка капитала из системы. Доходы расходуются в большем объеме в результате дальнейшего генерирования экономической деятельности за счет расходов.туристов. В перспективе будет действовать фактор ускорения или цепная реакция. Развитие въездного туризма повлечет за собой создание производства ранее импортируемых товаров, вовлечение новых инвестиций, совершенствование инфраструктуры, увеличение занятости населения и, как следствие, увеличение доходов бюджета.

Расходы туристов становятся доходами большого числа субъектов рынка. Этот эффект

воздействия изменения расходов туристов на изменение доходов или занятости называется эффектом мультипликатора [3].

Суть этого эффекта в том, что доход, полученный от одного туриста, превышает сумму денег, израсходованных туристом на месте пребывания.

Математически мультипликатор выражается формулой: **К=1/(1-МРС)**, где МРС- предельная склонность к потреблению, 1-МРС- предельная склонность к накоплению.

Применительно к Армении эффект мультипликатора выражается в следующем: расходы одного туриста в любом районе нашей республики станут доходами производителей, работников сферы услуг, государства.

Туризм как торговлю услугами на мировом рынке можно назвать невидимым экспортом. Он вносит соответствующий вклад в платежный баланс страны.

Экономический эффект от развития туризма в регионе проявляется прежде всего в создании дополнительных рабочих мест в туриндустрии, повышении занятости населения, в стимулировании развития слабых в экономическом отношении регионов.

Становление и развитие туризма как отрасли характеризуются системой определенных экономических показателей, отражающих количественный объем реализации туристских услуг и их качественную сторону, а также экономические показатели производственно-обслуживающей деятельности туристских хозяйствующих субъектов.

Система показателей туризма включает [2]:

- объем туристского потока;
- состояние и развитие материально-технической базы;
- показатели финансово-экономической деятельности турфирмы;
- показатели развития международного туризма.

Туризм можно импортировать в страну или экспортировать из нее.

Туристский импорт - это ввоз в страну туристских впечатлений, который сопровождается одновременным вывозом туристом денег из данной страны.

Туристский экспорт - это вывоз из страны туристских впечатлений, который Армения, несмотря на высокий потенциал в сфере туризма, занимает самую незначительную позицию на мировом рынке. По оценкам международных организаций, на сегодняшний день Армения может принять до 800 тыс. иностранных туристов в год. Армения с существующей ныне инфраструктурой в состоянии принять большее число туристов. В этом заинтересовано и государство, и население. На территории Армении находятся около 15 тыс. памятников истории и культуры (6 из них входят в Список всемирного наследия ЮНЕСКО), 97 музеев, 25 театров, 5 государственных заповедников и национальных парков. В республике, прежде всего, развивается историко-культурный и экологический туризм. Имеют давние традиции и могут с успехом развиваться религиозный и лечебно–оздоровительный виды туризма. Перспективными видами являются альпинизм, зимний, деловой и этнический туризм [4].

Существующие возможности по развитию различных видов туризма позволяют существенно разнообразить предложение и повышают конкурентоспособность туристского продукта страны. Однако для привлечения туристов не достаточно лишь наличие уникальных культурно-исторических памятников, богатой флоры и фауны. Независимо от направления туризма главной задачей является обеспечение соответствующей инфраструктурой.

В инфраструктуру туризма входят дороги, транспорт, гостиницы, рестораны и прочие предприятия, обслуживающие туристов.

Гостиничный бизнес, являясь одним из видов экономической деятельности, прямо или косвенно создает рабочие места и является важным источником пополнения бюджета государства. В целом по

Армении 91% гостиниц находится в городской местности, в том числе 40% в Ереване, 53% в других городах, и 7%- в сельской. Из общего числа гостиничных предприятий столицы - 43,3% являются четырехзвездочными, 30% - трехзвездочными, 10% (всего 3 гостиницы) - пятизвездные [4]. На развитие гостиничного бизнеса в Армении негативно влияет и то, что гостиницы не в полной мере реализуют стратегическое маркетинговое планирование, слабо используют и тактические ценовые решения, стимулирование сбыта: система скидок, разные программы для гостей, специальные предложения в дни праздников и каникул и т.п., которые способствуют гибкой дифференциации потенциальных клиентов. Остро стоит вопрос грамотного управления гостиничным хозяйством. На сегодняшний день в Ереване всего несколько гостиницы с западным управлением и они существенно отличаются от независимых гостиниц. А без создания современной и эффективно работающей гостиничной инфраструктуры, соответствующей международным стандартам невозможно решение задач, связанных с развитием туризма, а также интеграции страны в мировую экономику. Важнейшей предпосылкой развития туризма является транспорт. Исходя из географического положения, туристский рынок Армении зависит от услуг воздушного транспорта. Наземными видами транспорта пользуются в основном лишь туристы из Грузии или граждане, выезжающие на отдых в Грузию. Роль воздушного транспорта ежегодно повышается вместе с увеличением числа туристов.

Конкуренция между различными авиакомпаниями может привести к снижению тарифов, расширению круга предоставляемых услуг, улучшению качества обслуживания в аэропортах, а это, в свою очередь, увеличит поток въездных и выездных туристов.

Таким образом, Армения обладает уникальными туристскими ресурсами, которые привлекают туристов в страну. Однако важным фактором, снижающим величину туристского потока, является слаборазвитая инфраструктура туризма.

Возможность качественного обслуживания по всем видам услуг является необходимым условием для формирования туристской привлекательности как в Армении. На это должна быть нацелена государственная программа развития туризма в ближайшие несколько лет. В качестве заключения можно отметить Туризм в Армении представляет довольно динамично развивающуюся отрасль экономики. Имея в качестве стартовых условий экономические реалии постсоветского пространства, за последние пять лет в Армении достигнуты определенные результаты развития отрасли. К ним можно отнести явно положительную динамику туристских прибытий в Армению, рост числа гостиниц, повышения качества обслуживания, привлечение к решению вопросов инвестиций в туротрасль иностранного капитала (в лице армянской диаспоры).

ЛИТЕРАТУРА

1. Александрова А. Ю. Международный туризм: Учебник - Изд – во.: КноРус, 2010.
2. Морозов М. А. Экономика туризма: Учебное пособие. - М.: ИТ и Г, 2008.
3. Наумова С. А. Экономика и предпринимательство в социально-культурном сервисе и туризме: Учебное пособие – Томск.: Изд-во ТомскогоПИ, 2003.
4. www.armstat.am/

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՅԱԴՅԱՆ Հ., տնտ. գիտ.թեկն. ասիստենտ, ԵՊՀ

Զբոսաշրջությունը հանդիսանում է տնտեսության այն ոլորտներից մեկը, որն ուղղակի և անուղղակիորեն ազդում է տնտեսության այլ ոլորտների զարգացման վրա: Զբոսաշրջիկների թվի կայուն աճի և տուրարտադրանքի առաջխաղացման ապահովման համար առաջնային խնդիրներից է ձևավորել միջազգային շուկայում Հայաստանի իմիջը, որպես ապահով և գրավիչ երկրի: Բացի այդ զբոսաշրջիկների թվի կայուն աճն ապահովելու համար անհրաժեշտ են ներդրումներ զբոսաշրջության ենթակառուցվածքների մեջ համաշխարհային չափանիշներին համապատասխանեցնելու համար: Զբոսաշրջության զարգացումը կխթանի նախկինում ներկրվող ապրանքների արտադրությունը, նոր ներդրումների հոսքը, ենթակառուցվածքների կատարելագործումը, զբաղվածության աճը և արդյունքում եկամուտների աճը: Ծախսերի փոփոխման ազդեցությունը եկամուտների և զբաղվածության մեծացման վրա առաջացնում է մուլտիպլիկատորի էֆեկտ:

ECONOMIC CONTENT IN TOURISM

Sayadyan A.R. PhD, YSU

Tourism is a unique part of Economics, which directly and indirectly affects other parts of it. It also directly and indirectly impacts the economy of a country. Direct impact-is the increase of revenues of local businesses (transport companies, hotels, restaurants, travel agencies) and local population due to the volume of expenses spent by tourists on goods and services. Indirect impact-is the revenues of local businesses, contributing to the production of final products for tourists. With the increase of inbound tourism year after year the national income of Armenia grows as well. However, for further stabilization of the growth, investments in development of tourism infrastructure are needed, in order to bring it up to global standards. Tourists' expenses become revenues for the majority of market subjects. This effect of the impact of tourists' expenses on changing of revenues is called multiplier effect.

ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ, տնտ.գիտ. թեկնածու, ԵՊՀ

Հիմնաբառեր. *օդային տրանսպորտ, ավանդական փոխադրողներ, low-cost փոխադրողներ, օժանդակ օդանավակայաններ, "Բաց երկնքի" քաղաքականություն, սպասարկման գներ, տրանսպորտային կամ տարանցիկ հաբ, ազգային փոխադրող:*

Արդի ժամանակաշրջանում օդային տրանսպորտը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսության զարգացման կարևոր բաղադրիչը: Այն հանդիսանում է զբոսաշրջության զարգացման առաջնային գործոնը: Պատմականորեն տրանսպորտային ցանցի ձևավորման վրա ազդել են երկրի աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, կլիմայական, լանդշաֆտային պայմանները: Ժամանակի ընթացքում ձևավորվել են տրանսպորտային ենթակառուցվածքներ, որոնք առավել արդյունավետ են

օգտագործվում կոնկրետ երկրի կամ շրջանների պայմաններում: Օրինակ, երկաթուղային տրանս-պորտն ավելի շահավետ է զարգացնել հարթավայրային շրջաններում, իսկ ջրային տրանսպորտը գետերի, լճերի, ծովերի առկայության պայմաններում: Տրանսպորտի այդ տեսակները հին ժամանակներից հիմք հանդիսացան հեռավոր ճանապարհորդությունների իրականացման համար [1]:

Ներկա ժամանակաշրջանում տրանսպորտի զարգացմանը մեծ ուշադրություն են դարձնում աշխարհի բոլոր երկրների կառավարությունները: Զբոսաշրջության զարգացումը միաժամանակ հիմք է հանդիսանում տրանսպորտային ուղիների ընդլայնմանը, քանի որ զբոսաշրջային պահանջարկի մեծացումը դրական է ազդում տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացմանը: Տրանսպորտն իր հերթին թույլ է տալիս ընդլայնել ճանապարհորդությունների աշխարհագրությունը: Հայտնի է, որ տրանսպորտային ծառայությունները կազմում են տուրփաթեթի գնի կառուցվածքի զգալի մասը: Կախված տևողությունից, հեռավորությունից տրանսպորտային ծառայությունների մասնաբաժինը տուրի մեջ կազմում է 20-60 %: Ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկները օգտվում են զանազան փոխադրամիջոցներից [2]:

Ներկա ժամանակներում օդային փոխադրումները կազմում են համախառն տրանսպորտային ծառայությունների շուկայում հիմնական մասը: Տարեց – տարի ավելանում է այն զբոսաշրջիկների քանակը, որոնք կարճ ժամանակահատվածում ցանկանում են այցելել հեռավոր երկրներ և բնականաբար նրանք նախընտրում են օդային փոխադրումները:

Օդային փոխադրումների զարգացումը տեղի է ունենում երկու ուղղությամբ [3].

առաջին _ ավանդական փոխադրողների միջոցով,

երկրորդ _ low-cost փոխադրողների միջոցով:

Ավանդական են կոչվում այն ավիաընկերությունները, որոնք օգտագործում են օդային բիզնեսի վարման ընդունված մեթոդները: Low - cost փոխադրող համարվում է այն ընկերությունը, որն առաջարկում է իր սպառողին նվազագույն ծառայություններ ցածր գներով, և օգտվում է օժանդակ օդանավակայաններից և պահանջարկը խթանում է փոխադրման ցածր ինքնարժեքի միջոցով: Ավանդական փոխադրողների ծառայության գները բարձր են, սակայն բարձր է նաև նրանց սպասարկման մակարդակը: Նրանք հոգատարությամբ են վերաբերվում ուղևորներին՝ թռիչքի ընթացքում ապահովում են բարձրակարգ սնունդով, առաջարկում են ժամանցային տարբեր ծրագրեր: Low-cost փոխադրողները հրաժարվել են այդ բոլոր ծառայություններից, որի արդյունքում ստացել են փոխադրման ցածր ինքնարժեք, որը կարող է անգամ մրցակից լինել երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների գներին: Հարկ է նշել, որ այդ ընկերությունները խիստ հետևում են անվտանգությանը և օգտագործում են միայն նոր օդանավեր և հրավիրում են հմուտ օդաչուների: Բացի ցածր սերվիսային ուղղվածությունից low-cost-ը նախընտրում են ավելի թույլ ենթակառուցվածք ունեցող, կենտրոնից հեռու օժանդակ օդանավակայանները, որոնք ազատում են նրանց սպասարկման վճարներից. կանգառ, ընթացիկ տեխնիկական ծառայություններ և այլն: Օժանդակ օդանավակայաններն ակնկալում են ստանալ մեծ եկամուտներ low-cost-ով ճանապարհորդող ուղևորներից հավելյալ ծառայություններից (սնունդ, հուշանվերներ, ինտերնետ սրճարան, ուղեբեռի փաթեթավորում և այլն) օդանավակայում օգտվելիս:

Տրանսպորտը հանդիսանում է տուրփաթեթի կարևոր բաղադրիչ և փաթեթի գնի կառուցվածքի զգալի մաս է կազմում: Ավանդական ավիաընկերությունների առաջարկները շատ գրավիչ են, սակայն գները բարձր, հետևաբար փաթեթի գինն էլ կլինի բարձր: Այս պատճառով ոմանք նախընտրում են օգտվել low-cost–ի չվերթներով:

Աղյուսակ 1.

Տարբերություններն ավանդական և low-cost ավիաընկերությունների միջև [3]

Դասակարգում	low-cost ավիաընկերություն	Ավանդական ավիաընկերություն
Բրենդ	Ցածր գին	Բարձր գին-բարձր որակ
Գին (տարիֆ)	Հասարակ տարիֆ	Բարդ տարիֆ
Սպառում	On-line վաճառք	On-line, ուղիղ վաճառք, գործակալների միջոցով վաճառք
Գրանցում (check –in)	Անձնագրով առանց տոմսի	Անձնագրով առանց տոմսի
Օգտագործվող օդանավակայաններ	Օժանդակ ու անվճար սպասարկում օդանավակայում	Հիմնական օդանավակայաններ, զարգացած ենթակառուցվածքներ
Սպասարկման դասերը	մեկ դաս	Մեկից ավելի դաս
Թռիչքի ընթացքում	Բոլոր ծառայությունները վճարովի	Բոլոր ծառայությունները անվճար (ներառված են տոմսի գնի մեջ)
Ինքնաթիռի օգտագործումը	Ինտենսիվ	Ոչ այնքան ինտենսիվ
Սերվիս չվերթի ընթացքում	Ցածր որակ	Որակյալ
Թիրախային խումբ	Զբոսաշրջիկներ	Զբոսաշրջիկներ, բիզնես ուղևորներ, այլ ուղևորներ
Չվերթի ժամերը	Հիմնականում գիշերային, անհարմար ժամերի	Չվացուցակով
Գովազդը	Չվերթի ընթացքում, իրենց կայքում	Ավանդական գովազդ (հեռուստա-տեսություն, սպորտային, մշակութային միջոցառումների ժամանակ, ԶԼՄՆ-ների և գործակալների միջոցով)
Ֆինանսական արդյունքները	Բարձր եկամուտ 100 % ընդհանուր բեռնվածություն (ուղևորների, ուղե-բեռի, բեռի և փոստի քանակ)բազմաթիվ չվերթների, ցածր ծախսերի հաշվին	Տարբեր կախված բեռնվածությունից և չվերթների քանակից, բարձր ծախսեր, ծառայությունների և օդանավակայան-ներում վճարումների համար
Օգտագործվող ինքնաթիռները	Ստանդարտեցված 1-2 տեսակ (A-319, A-320), 2-4 ժամ տևողությամբ չվերթներ, թարմ վիճակում, ան-վտանգ	Տարբեր տարիքի տարբեր տեսակներ կախված չվերթների տևողությունից
Օդաչուները	Սեփական կամ հրավիրված այլ ավիաընկերություններից, հմուտ օդաչուներ, բարձր աշխատավարձով	Սեփական անձնակազմ, տարբեր աշխատավարձով, կախված ավիաընկերությունից
Անվտանգություն	Անվտանգ, նոր ինքնաթիռներ, որակյալ անձնակազմ	Կախված օդանավերի տարիքից անձնա-կազմի անհատական որակավորումից

Ինչպես տեսնում ենք օդային փոխադրումների շուկայում առկա է երկու մոտեցում

1. Ավանդական փոխադրողները բարձրացնում են սպասարկման որակը և փոխադրման գները,
2. Low-cost փոխադրողները տնտեսում են սպասարկման ծախսերը, իջեցնելով փոխադրման գները և ստանում մեծ եկամուտ:

Վերջին տասնամյակներում low-cost փոխադրողներն ավելացնում են իրենց ծավալները և եկամուտները: Ryanair ավիաընկերությունը, որը Եվրոպայում համարվում է առաջատարն, ամեն տարի ավելացնում է իր ծավալները 30%-ով, Easy-Jet-ը՝ 22%-ով, ավանդականների մոտ (British Airways, Lufthansa, Air France-KLM, SAS, Iberia, Alitalia) այդ աճը կազմում է տարեկան մի քանի տոկոս [6]:

Low-cost ընկերությունների մուտքը Հայաստան սկսվեց 2007թ. և շարունակվում է մինչ այսօր: Սակայն եղած չվերթները բավարարում են դեռ դեպի Արաբական Էմիրություններ և Ռուսաստան ուղևորվող քաղաքացիներին: «Բաց երկնքի» քաղաքականությունը, որը Հայաստանում ընդունվեց 2013 թվականի հոկտեմբերի 23-ին, անխոսք, ժամանակակից մոտեցում է ուղղված ավիափոխադրումների

շուկայի աշխուժացմանը: Mc Kinsey-ի փորձագետների կարծիքով «երկնքի բացումը» ընդհանրապես երկրի տնտեսության զարգացման համար շատ կարևոր է: ,Բաց երկնքիե քաղաքականությունը կապահովի ՀՆԱ-ի աճն տարեկան 1,5 %-ով (0,3-0,4 մլրդ դոլար) զբոսաշրջությունից ստացված եկամուտները կաճեն 260-320 մլրդ դոլար և օդային փոխադրումների և զբոսաշրջության ոլորտում կստեղծվեն 18-23 հազար աշխատատեղեր [6]: Սակայն օդային փոխադրումների շուկան կարճ ժամանակահատվածում չի կարող մեծանալ և աշխուժանալ, քանի որ Հայաստանում պետք է առկա լինեն հետևյալ պայմաններից որևէ մեկը [5].

- Երկիրը պետք է հանդիսանա տրանսպորտային կամ տարանցիկ կենտրոն (հաբ),
- Երկրում պետք է զարգացած լինի արդյունաբերությունը, առևտուրը կամ բանկային գործը,
- Երկիրը պետք է գրավիչ լինի զբոսաշրջիկներին՝ զարգացած ենթակառուցվածքներ, տեսարժան վայրեր, զանազան զբոսաշրջային առաջարկներ:

Ցավոք այս պայմաններից ոչ մեկը Հայաստանում բավարար վիճակում չի: Զբոսաշրջության զարգացման համար գաղտնիք չէ, որ անհրաժեշտ է զարգացնել օդային փոխադրումները:Այդ նպատակով պետք էն լուծվեն հետևյալ խնդիրները [7].

- Զվարթնոց օդանավակայանը դարձնել հաբ-տարանցիկ կամ տրանսֆեր փոխադրումների հանգույց, որը թույլ կտա էապես ավելացնել ուղևորա և բեռնափոխադրումները: Այն թույլ կտա ուղևորներին շարունակել իրենց ճանապարհորդությունը այլ ավիաընկերությունների չվերթներով կամ նույն ավիաընկերության չվերթով:
- Low-cost ընկերությունների մուտքը Հայաստան հնարավոր է, եթե օժանդակ օդանավակայանները (Գյումրիի, Երևանի հարավայինը) հարմարեցվեն դրանց ընդունմանը, այսինքն՝ կարողանան ցածր գներով սպասարկել այդ չվերթները: Այսօր «Զվարթնոց» օդանավակայանի սպասարկման գները միջինից բարձր են և տոմսի գնի կառուցվածքում կազմում են 15-20 %, որը տարիֆների բարձրացման վրա էապես է ազդում է:
- Մեկ այլ գործիք է Զվարթնոցում տեղակայված փոխադրողների համար օդանավակայանի ընդհանուր վճարների սանդղակի նվազեցումը (օրինակ՝ կայանման վճարները, վառելիքի գները)՝ ելնելով Հայաստանում նրանց բացառիկ շուկայական դիրքից:
- Ազգային փոխադրողների առկայություն: Մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքն այնպիսին է, որ մեր երկիրն իրավունք չունի մնալ առանց սեփական ավիացիայի, որովհետև մեր սահմանների շուրջ առկա մթնոլորտը դա է պահանջում: Մի քանի անգամ պատմությունն ապացուցել է դրա անհրաժեշտությունը, օրինակ՝ երկրաշարժի և Արցախի պատերազմի ժամանակ: «Եթե մենք չունենայինք սեփական ավիացիան սեփական կադրեր, մենք այդ պատերազմը չէինք հաղթի» [8]: Դա է գլխավոր միտքը, որի հետ համաձայն են բոլորը:
- Ազգային փոխադրողներին աջակցություն: Ազգային փոխադրողները կարող են կարևոր դեր խաղալ ազգային անվտանգության տեսանկյունից՝ կապ ապահովելով արտասահմանյան փոխադրողների կողմից չսպասարկվող երթուղիներում: ՀՀ կառավարությունը կարող է տեղական փոխադրողներին աջակցել հանրային շահի տեսանկյունից ելնելով: ֆինանսապես աջակցություն այն սպասարկվող երթուղիներում, որոնք արտասահմանյան փոխադրողները չեն սպասարկում, սակայն կարևորվում են դեպի Հայաստան զբոսաշրջիկների հոսքը ապահովելու տեսանկյունից: Սա կարող է իրականացվել միջազգային մրցույթների ընթացակարգով՝ հավասար հնարավորություն ընձեռելով տեղական և միջազգային փոխադրողներին [7]:

РОЛЬ АВИАЦИОННЫХ ПЕРЕВОЗОК В РАЗВИТИИ ТУРИЗМА АРМЕНИИ

Саядян А.Р., к.э.н., ЕГУ

Авиационные перевозки занимают важное место в организации транспортного обслуживания в туризме. Из года в год увеличивается количество пассажиров, предпочитающих авиаперевозки наземным. Современные исследования в авиационном бизнесе разделили авиакомпании на два лагеря: традиционных перевозчиков, предлагающих высокий сервис и высокие цены и “low-cost” авиакомпании, которые своим клиентам предоставляют минимум сервиса и стимулируют спрос через низкую стоимость перелета. “Low-cost” компании появились в Армении с 2007 года и с тех пор заняли прочные позиции. Однако, их предложения на сегодняшний день весьма ограничены по сравнению с растущим спросом. Внедрение “low-cost” компаний на авиационный рынок Армении возможно если:

- Армения станет транзитным узлом в регионе,
- в стране будет достаточно развита промышленность, торговля или банковское дело,
- Армения как туристская дестинация станет привлекать большое количество туристов.

Для этого необходимо решение ряда задач.

AIR TRANSPORTATION'S ROLE IN DEVELOPMENT OF ARMENIAN TOURISM

Sayadyan A.R. PhD, YSU

Nowadays, air transportation services dominate in gross transportation market. Year after year the number of tourists who prefer air transport is increasing. Air transportation services develop in two ways: conventional and “low-cost”. Conventional air companies make attractive offers, however their services are expensive, that is why tourists prefer “low-cost” companies’ services. “Low-cost” companies entered Armenian market in 2007 and operate until today. Unfortunately the existing flights do not satisfy the market’s demand. Air transportation market cannot expand and operate intensively due to the lack of some preconditions in Armenia such as;

The country should be a transportation hub.

The country’s industry, trade or banking should be developed.

The country should be attractive to tourists, it should have tourism facilities, offerings and promotions.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Е. И. Ильина. Туроперейтинг: Продвижение туристского продукта: Учебник. –М.: Финансы и статистика, 2008 -176 с .
2. Р. И. Сухов. Технологии и организация продаж в туристском агенстве : Учеб пособие/ - Ростов н /Д: Издательский центр, Март; Феникс, 2010. – 366 с.
3. Н. Е. Полянская. Организация коммерческой работы на воздушном транспорте: Монография. - 2-е- изд., перераб. и доп. - К.: НАУ, 2006. - 396 с.
4. www.express.am/.../snova-k-voprosu-ob-otkrytii-neba..
5. https://www.yerkramas.org/article/69466/snova-k-voprosu-ob-otkrytii-neba-armenii
6. http://armef.com/news/category/comment/article/article_1382548407
7. http://nyut.am/archives/275564
8. http://www.regnum.ru/news/polit/1743582.html#ixzz3VfKxJE00

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ» ԵՎ «ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՆՔ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳՅԱՆ, աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
ԳՈՀԱՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ, դասախոս, ԵՊՀ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, զարգացման բևեռ, աճի կենտրոն, տարածքային կազմակերպում, կայուն զարգացում:*

Աշխարհի բոլոր երկրներում էլ զբոսաշրջությունն ունի վերընթաց զարգացում: Զբոսաշրջության զարգացումն ավելի մեծ մասշտաբներ է ընդունում զարգացող երկրներում՝ դառնալով նրանց տնտեսության գերակա ճյուղ: Խնդիրը նրանում է, որ զարգացող երկրներում կապիտալի խիստ պակաս է զգացվում: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը չեն կարողանում արագ զարգանալ, դրամական միջոցները չեն բավարարում: Որովհետև այդ ոլորտների զարգացման միջազգային շուկայում պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ են թանկարժեք նորագույն տեխնոլոգիաներ:

Զբոսաշրջությունը տնտեսության այն ճյուղն է, ուր փոքր կապիտալի ներդրման միջոցով կարելի է մեծ եկամուտներ ստանալ: Ընդ որում, այդ եկամուտները կարող են խթան հանդիսանալ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման համար: Զբոսաշրջության զարգացումը կարող է նպաստել նաև աշխատուժի զբաղվածության մեծացմանը, հեռավոր շրջանների, բնակավայրերի զարգացմանը: Զբոսաշրջության դրական լիցքերը կարող են թափանցել ամենուրեք, բերել հասարակական կյանքի բարելավման և կայուն մարդկային զարգացման ապահովման:

Զբոսաշրջության զարգացման օջախները կարող են աստիճանաբար դառնալ .աճի բևեռներին կամ .աճի կենտրոններին հենք:

Ըստ Ֆր.Պերուի «աճի բևեռները տնտեսության առաջատար ճյուղերն են, ճյուղային շարժիչները, որոնք ունեն աճի հզոր պոտենցիալ և նորամուծությունների բարձր կարողություն...» [3]:

Գ.Գրանբերգի կարծիքով «աճի բևեռները» դրանք նորամուծությունների յուրահատուկ գեներատորներ են...[2]:

Խնդիրը մնում է ընտրել հենքային ճյուղերը և կապիտալ ներդրումներն ուղղել այդ ուղղությամբ:

Հենքային ճյուղերի ընտրությունը կարևոր է, որովհետև, ինչպես Ժ.Վ.Բուդվիլն է նշում, տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության աճը հավասարապես չի ընթանում, մշտապես կարելի է առանձնացնել առաջնային զարկերակային ճյուղեր, որոնք ողջ տնտեսության զարգացման խթանիչներ են և հանդիսանում են զարգացման բևեռներ[1]:

Զարգացման բևեռները, նույնն ինչ որ աճի բևեռները կամ կենտրոնները, կարևոր նշանակություն ունեն ռեգիոնալ զարգացումների մեջ: Իրենց հերթին առանձին ռեգիոնները զարգանալով աստիճանաբար ընդարձակում են իրենց ազդեցության շրջանակները: Կենտրոնի և նրա հարակից տարածքների փոխհարաբերության մակարդակում ձևավորվում է կենտրոնի ազդեցության գոտին և տնտեսության բազմամակարդակ հանգուցային կառուցվածք: Այդ կառուցվածքի բովանդակությունը կապված է ամբողջ երկրի տնտեսության զարգացման մակարդակից, կապիտալ ներդրումների չափից, պետության կողմից վարվող ռեգիոնալ քաղաքականությունից:

Տնտեսապես զարգացած երկրներում, տարածքի մեծ յուրացվածության պայմաններում, տարածքի զարգացման հեռանկարները որոշվում են առավելությունը տալով մրցակցության ապահովմանը:

Զարգացող երկրներում, ուր առկա են տարածքի յուրացման խնդիրներ, մրցունակության ապահովման գործընթացը դանդաղեցվում է ի օգուտ տնտեսության համամասնական զարգացման: Միաժամանակ զարգացող երկրներում մրցունակության ապահովման համար ակընկալվում է ավանդական և նոր, սովորաբար հումքատար, աշխատատար, էներգատար ճյուղերի զարգացում: Սակայն զարգացող երկրների կարևոր խնդիրիցէ սերվիսի ոլորտի, հատկապես տուրիզմի զարգացումը: Այն ապահովելու համար անհրաժեշտ է վարել ճիշտ ռեգիոնալ քաղաքականություն, որը հիմնված լինի ,աճի բևեռներե և «աճի կենտրոններ» հայեցակարգի սկզբունքների վրա: Սկզբունքներ, որոնք հնարավորություն են տալիս տնտեսության կառավարումն իրագործել և՛ լայնությամբ, և՛ խորությամբ:

«Աճի բևեռները» իրենց ներքին կարողությամբ զարգանում են և՛ լայնությամբ, և՛ խորությամբ, աստիճանաբար ավելի ընդարձակ տարածություններ գրավելով, հիմք հանդիսանալով տարածքային սոցիալտնտեսական կառուցվածքի զարգացման համար:

Նախնական փուլում յուրաքանչյուր բևեռ զարգանում է ինքնուրույն, իրեն ներքին հնարավորություններով:

Աճման ընթացքում «աճի բևեռները» իրենց հորիզոնական եզրերով միանում են միմյանց: Շփման եզրերում կրկնակի ուժերի ազդեցության հետևանքով սկսվում է շարժումը դեպի վեր, դեպի ավելի ուժեղը, նորը, կատարյալը: Ստացվում է բուրգի համակարգ, որի հիմքում հորիզոնական ուժերն են: Ընդ որում, որքան հզոր են այդ ուժերը, այնքան մեծ են վեր բարձրանալու կարողությունը և հակառակը, որքան բուրգի գագաթը վեր է բարձրանում, այնքան մեծանում է նրա ճնշումը հիմքի վրա և հիմքն ավելի հզոր է դառնում:

«Աճի բևեռներում» տուրիզմի զարգացումը կարելի է բաժանել առանձին փուլերի.

Առաջին փուլում ստեղծվում են տուրիզմի առանձին մեկուսի կենտրոններ (օջախներ): Նրանցից յուրաքանչյուրը զարգանում է մեկը մյուսից անկախ: Նրանց միջև չկա որևէ կապ համագործակցության: Դրան հակառակ, կա մեկը մյուսի հաշվին ,ապրելուե միտում: Մրցակցին դուրս հանելը դառնում է անհրաժեշտություն:

Իփուլ



◎աճի կենտրոններ (տուրիստական կենտրոններ)

Երկրորդ փուլում համագործակցության ստեղծման, ենթակառուցվածքների համատեղ օգտագործման անհրաժեշտությունը բերում է մերձեցման, համատեղ ծրագրերի մշակման, փոխհամագործակցության զարգացման:

II փուլ



Երկրորդ փուլում տուրիզմը զարգանում է հորիզոնական (լայնությամբ և երկարությամբ) ուղղությամբ աստիճանաբար սերտաճելով տարածքի հասարակական մյուս ոլորտների հետ: Այդ ընթացքում մեծանում է նաև տուրիզմի տնտեսական հասարակական դերը: Նա սկսում է դառնալ հասարակական կյանքի կազմակերպման կարևոր գործոն:

Երրորդ փուլում սկսվում է զարգացող բևեռների եզրային շրջանների շփում: Շփման գոտում երկու բևեռների կրկնակի ազդեցության հետևանքով զարգացման ավելի մեծ կարողություններ են առաջանում. հորիզոնական զարգացումներին ավելանում են ուղղահայաց զարգացումները: Տուրիզմը, ինչպես նաև նրան զուգահեռ տնտեսության մյուս ճյուղերը, սկսում է զարգանալ ըստ խորության՝ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելով նոր տեխնոլոգիաների կիրառման, կապիտալ ներդրումների մեծացման համար:



Փուլ

Երրորդ փուլում շփման եզրերում առաջանում են նոր ենթակառուցվածքներ (սպասարկման կենտրոններ): Նրանց համատեղ ստեղծումը և օգտագործումը դառնում է անհրաժեշտություն: Այն իր հերթին առաջացնում է մերձեցման, միասնական ծրագրերի մշակման, փոխհամագործակցության ստեղծման և զարգացման կարիք:

Երրորդ փուլում շփման եզրերում առաջանում է մրցակցության դաշտ: Յուրաքանչյուր աճի կենտրոն ձգտում է ընդհանուր ենթակառուցվածքներից ավելին ստանալ: Իսկ եզրերում ձևավորված սերվիսի ոլորտը երկու կողմերի համար էլ գրավիչ դառնալու համար ձգտում է ավելի զարգանալ և ենթարկվել որակական փոփոխությունների: Իսկ որակական փոփոխությունները կապվում են վերընթաց շարժումների հետ:

Չորրորդ փուլում ստացվում է տուրիզմի և սպասարկման ոլորտի զարգացման բրգաձև կառուցվածք՝ մոդել:



IVփուլ

Բուրգի հիմքում աճի կենտրոնների հորիզոնական՝ քանակական ուժերն են, գագաթում վերընթաց՝ որակական ուժերը: Ընդ որում, որքան հզոր են վերընթաց՝ ուղղահայաց ուժերը, այնքան հզորանում և վեր են բարձրանում բուրգի գագաթները: Մեծ բարձրությունից բուրգի գագաթը ճնշում է հիմքի վրա և ստացվում է փոխադարձ ազդեցության ալիքներ, որոնք աճի կենտրոններից գնում են եզրեր, եզրերից՝ աճի կենտրոններ և դեպի բուրգի գագաթ: Այս փոխազդեցությունների դաշտում ստեղծվում է հասարակական կյանքի կայուն համակարգ: Համակարգ, որի հենքը կայուն զարգացման հայեցակարգն է: Աճի կենտրոնների հայեցակարգը կարող է օգտագործվել.

- մշակելու կայուն ռեգիոնալ քաղաքականություն,
- ընտրելու ռազմավարական զարգացման նպատակային ձևեր,
- ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացումները դարձնել արդյունավետ:

Գրականություն

1. Географический энциклопедический словарь. Понятие и термины. /Гл.ред. Трешников А.Ф. Ред. кол Алаев Э.Б., Алимпиев П.М.,Воронов А.Г. и др.-М.: Сов.энциклопедия, 1988.-432 с.
2. Гранберг А.Г. Основы региональной экономики: .М.: ГУ ВШЮ, 2000.-495 с.
3. Perroux F.. L’economie du XX-e siecle. Paris, 1961, 765 p.

ТУРИЗМ КАК ОСНОВА РАЗВИТИЯ «ПОЛЮСОВ РОСТА» И «ЦЕНТРОВ РОСТА» (НА ПРИМЕРЕ РА)

Авагян А. д. г. н., профессор, ЕГУ

Гамбарян Г., преподаватель, ЕГУ

В основе теории полюсов и центров роста лежит переход от отраслевого развития к развитию всей экономики. Применение принципов развития полюсов роста и центров роста поможет разработать устойчивую региональную политику, выбрать более целенаправленные формы экономического развития и сделать социально-экономическое развитие регионов более эффективным.

TOURISM AS THE BASISOF DEVELOPMENT OF «GROWTH POLES» AND «GROWTH CENTERS» (ON THE EXAMPLE OF ARMENIA)

AVAGYAN A. Dr. of geographic sciences, professor, YSU
GHAMBARYAN G., lecturer YSU

Based on the theory of the ‚poles and growth centersū is the transition from the development of the industry to the development of the entire economy. Application of the principles of ‚growth polesū and ‚growth centersū will helpto develop a sustainable regional policy, choose a more targeted form of economic development, and to make social and economic development of the regions more efficient.

ՄԵՐՁԵՐԵՎԱՆՅԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ-ՈՂՋԱԲԵՐԴ ՇՐՋԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ, երկրաբան.գիտ.թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Հիմնաբառեր. անտիկլինալ, ավազաքար, հզորություն, բրածո մնացորդ, նումուլիտ, սողանք, շերտախումբ, հորատանցք, քարանձավ, բնական հուշարձան, վայրի ցորեն:

Մեր հանրապետության տարածքը դասական երկրաբանության արտահայտման և ուսումնասիրման տիպիկ վայր է: Այն արտահայտվում է սկսած մերձերևանյան շրջանից և մոտակայքում տեղաբաշխված նստվածքային, հրային, մետամորֆային ծագման ապարներով, հրաբխային կոներով, խառնարաններով, էֆուզիվ հոսքերով, տարբեր միներալային կազմ ունեցող հանքային ջրերով ու նրանցից անջատված, նստած տրավերտիններով, գետային էրոզիայով մշակված անկրկնելի գետահովիտներով, սառցադաշտային կրկեսներով, տրոգներով, բրածո ֆաունայով ու ֆլորայով և բազում այլ երկրաբանական առաջացումներով: Վերը թվարկված բնական առաջացումները զբոսաշրջային երթուղիների կազմակերպման և իրականացման համար ունեն անսահման հնարավորություններ: Չնայած հանրապետության ամբողջ տարածքն է համապատասխանում վերը շարադրվածին, այնուամենայնիվ անհրաժեշտություն չկա կտրել անցնել հարյուրավոր կիլոմետրեր, այն դեպքում երբ թվարկվածներից մի զգալի մասը գտնվում են Երևանի տարածքում և մերձերևանյան շրջանում:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների մի մասը բացի պատմա-ճարտարապետական հուշարձաններից հաճույքով ծանոթանում է մեր երկրի տարածքի պարզագույն ձևով ներկայացվող երկրաբանական կառուցվածքին, մետաղային և ոչ մետաղային հանքավայրերին, բնական հուշարձաններին և նմանատիպ այ հարցերին:

Արարատյան դաշտի և նախալեռնային շրջանի տարբեր հասակների նստվածքային ծագման ապարների մերկացած տեղամասերը մի շարք վայրերում արտահայտված են բրածո բազմաթիվ մնացորդներով, ապարների տեսակների զարգացումով, բնորոշ անկրկնելի լանդշաֆտներով: Նմանատիպ տեղամասերից մեկը Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի տարածքից մինչև Էրեբունի պատմամշակութային արգելոցի մատույցները տարածվող Շորաղբյուրի երկրաբանական անտիկլինալի տարածքն է: Զբոսաշրջային երթուղին կարելի է կատարել ոտքով Ողջաբերդ-գյուղ Մուշավան կամ հակառակ ուղղությամբ:

Շորաղբյուրի անտիկլինալը բավականին բարդ երկրաբանական կառուցվածք ունեցող տարածք է և ձևավորման ժամանակներից մինչև մեր օրերը երկրաբանական էկզոգեն պրոցեսների հետ կապված, կրել է բազմաթիվ փոփոխություններ (էրոզիա, հողմահարում, սողանքային երևութներ և այլն):

Ողջաբերդ գյուղից դեպի հյուսիս-արևելք մերկացող պլիոցենյան հասակի 4-5 մլն տարեկան հասակով ապարների մեջ երևում են քարանձավանման առաջացումներ: Ապարները լճացամաքային առաջացումներ են և գրականության մեջ հայտնի են Ողջաբերդի շերտախումբ անվանմամբ: Չի բացառվում, որ այդ քարանձավները նախամարդու համար ծառայել են որպես կացարան: Ողջաբերդի շերտախումբը ձգվում է համանուն գյուղի մատույցներից դեպի Գեղարդի վանական համալիր, և Ազատ գետի վերին հոսանքների շրջանում միաձուլվում է Երանոսի լեռնաշղթային: Շերտաումբը կոնգլոմերատային ապարների մեջ է փորված Գեղարդի վանական համալիրի ժայռափոր ելեղեցիները և մինչև մեր ժողովրդի քրիստոնեություն ընդունելը տարածքում առկա բնական քարանձավները, որոնք մարդիկ ծառայեցրել են որպես աղոթատեղիներ, որտեղից և մնացել է Այրավանք անունը:

Մինչև Ողջաբերդ գյուղ հասնելը ճանապարհի եզրին մի փոքրիկ բլրի վրա վեր է խոյանում ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված Չարենցի կամարը: Այստեղից բացվում է մի հրաշալի տեսարան դեպի Մեծ ու Փոքր Արարատները, Երևանի հարավ-արևելքը: Ողջաբերդ գյուղի տարածքը գտնվում է դինամիկ սողանքային գոտում, որի պատճառով ռելիեֆային աղճատումները ցայտուն արտահայտված են և տեսանելի կամարից մի քանի տասնյակ մետրի վրա: Չարենցի կամարից կարծես ափի մեջ երևում է Շորաղբյուրի անտիկլինալը ամբողջապես: Ողջաբերդ և Գեղադիր գյուղերի միջև մինչ այժմ կանգուն է մնացել դեռևս ԽՍՀՄ-ի տարիներին հորատված նավթի որոնման հորատանցքի աշտարակը, որի 3500-3700 մետր խորությունից դուրս բերված չնչին նավթի 2 լիտրը պահվում է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի թանգարանում:

Շորաղբյուրի անտիկլինալի թևերը ընկած են համապատասխանաբար Նորքի IX-VIII զանգվածներից դեպի Ջրվեժ-Ողջաբերդ գյուղի մատույցներ և Գեղադիր-Կուզեյ լեռան գագաթ հատվածները: Անտիկլինալի առանցքի երկարությունը շուրջ 4 կմ է: Մինչ սողանքային երևույթների ակտիվացումը Ողջաբերդ և Շորաղբյուր գյուղերը միմյանց հետ կապված են եղել խճուղային ճանապարհով: Ներկայումս այն պիտանի չէ երթևեկության համար: Խճուղին անցել է անտիկլինալի առանցքային մասով որից աջ և ձախ էրոզիոն խոր ձորակներ են, որտեղից Պ.Մ. Ասլանյանը [1] նկարագրել է երկրաբանական հետաքրքիր մերկացումներ, բնորոշ բրածո մնացորդներով: Անտիկլինալի առանցքային մասում մերկանում են պալեոգենյան պերիոդի օլիգոցենի հասակի նստվածքային ծագման 25-30 մլն տարեկան ապարներ: Բնականաբար երկրաբանական այդ ժամանակաշրջանում տարածքը ծածկված է եղել ջրային ավազանով, որտեղ և ընթացել են նստվածքակուտակման պրոցեսներ: Մասնավորապես, հին Շորաղբյուր գյուղ–Ջրվեժ և Շորաղբյուր Կուզեյի գագաթ (1440 մ) հատվածներում մերկանում են մոտ 1 կմ հզորությամբ 3 մասերից բաղկացած Շորաղբյուրի շերտախումբը [1]: Շերտախումբը կազմված է ստորին մասը մինչև 300 մ հզորությամբ ավազաքարերից, միջին՝ կավային 500 մ հզորությամբ և մոտ 200 մ հզորությամբ վերին ավազակավային ապարներից: Նշված բոլոր շերտախմբերը բնորոշվում են իրենց առաջացման ժամանակաշրջանին բնորոշ կենդանական աշխարհի բրածո մնացորդներով: Կուզեյ լեռնագագաթից դեպի արևելք ընկած մի փոքրիկ տափարակի վրա դեռևս ԽՍՀՄ տարիներին ստեղծվել է գործածությունից դուրս եկած և օգտագործման համար արգելված թունաքիմիկատների գերեզմանոց: Մի շարք պատճառներով ներկայումս պահեստարանը հերկվել է և նյութերը հայտնվել են բաց երկնքի տակ: Հետագայում տարածքում իրականացված աշխատանքները ոչ մի արդյունք չեն տվել, պահեստարանը գտնվում է անմխիթար վիճակում: Տարածքով հոսող ձնհալի և անձրևաջրերը ողողում են թունաքիմիկատները և տեղ տեղ լցվում սողանքային խորաբաց ճեղքերի մեջ:

Շորաղբյուրի անտիկլինալի վերին օլիգոցենի-ստորին միոցենի հասակի նստվածքները ներկայացված են խայտաբղետ՝ կարմիր գույնի գերակշռմամբ ավազաքարերով, կոնգլոմերատներով,

ալեվրոլիտներով, կավերով (մեծամասամբ գիպսաբեր) և ծածկված են միջին միոցենի գիպսա-աղաբեր առաջացումներով [2]: Գիպսաբեր այս առաջացումները մերկանում են Նոր-Նորքի VIII-IX զանգվածների չորրորդական հասակի բազալտային ապարների տակ: Շորաղբյուրի տարածքը ուսումնասիրողները հայտնաբերել են փափկամարմինների, խխունջների և այլ նախակենդանիների բրածո մնացորդներ: Բացի վերը նշված ապարներից, տարածքում երկրաբանական էկզոգեն պրոցեսները մերկացրել են ավազաքարերի գնդաձև առաջացումներ: Սրանց միջուկները ներկայացված են կավային առաջացումներով, որոնք հետագայում պատվել են ավազաքարերով: Փշրված գնդաձև առաջացումների վրա լավ երևում է ներքին կառուցվածքը: Գնդերի չափերը տարբեր են, երբեմն կարող են հասնել 1 մետրի: Դրանք հիմնականում կլորավուն են, սակայն կան նաև ձվաձև գնդեր: Ըստ Պ.Մ.Ասլանյանի գնդերի մեջ նույնպես հանդիպում են բրածո մնացորդներ, հատկապես երկփեղկանի փափկամարմինների ցիրենա սեռը, որի գերակշռության պատճառով կլորավուն ավազաքարերը գրականության մեջ հայտնի են ցիրենային ավազաքարեր անվանումով: Նախկին գյուղի տարածքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող բլրի տարածքում հայտնաբերված են մարջանային խութերի առաջացումներ: Այդ մասին գրել է նաև «Կովկասի երկրաբանության հայր» Հ.Աբիխը: Ըստ հետազոտողների այստեղ կարելի է գտնել քարացած գաղութային և անհատ կորալներ, փափկամարմինների բազմաթիվ տեսակների բրածո մնացորդներ, նումուլիտներ, շնաձկան ատամներ և այլն: Երբեմն նումուլիտները այնքան շատ են, որ առաջացնում են նումուլիտային կրաքարեր: Քարայի և Կուզեյի մերկացումները պալեոգենյան ծովի նստվածքների ցայտուն արտահայտված կտրվածքներ են, միաժամանակ նաև երկրաբանական գողտրիկ հուշարձաններ: Մեր կարծիքով ամբողջ անտիկլինալ ծալքի տարածքը պետք է համարել բնական հուշարձանների շարք: Շորաղբյուրի շերտախմբի երկրաբանական կառուցվածքին անդրադարձել են նաև Ա.Հ. Գաբրիելյանը, Հ.Հ.Սարգսյանը, Գ.Պ.Սիմոնյանը [3]: Համաձայն այս հետազոտողների վերին օլիգոցենը ստորին միոցենի հետ կազմում են մոլասային նստվածքները և անվնվում են կարմրագույն կամ խայտաբղետ շերտախումբ:

Աշխարհում հայտնի վայրի ցորենի 4 տեսակներից 3-ը աճում են Հայաստանում [4]: Դրանք են Ուրարտու, միահատիկ վայրի ցորենները և Արարատյան երկհատիկ ցորենը: Դրանցից հայտնի են մոտ 110 տարատեսակներ և բազմաթիվ ձևեր: Հայտնաբերված են նաև աշորայի վայրի տեսակներ [5]: Նկարագրված այս տեսակների տարածման վայրերից մեկը Շորաղբյուրի նկարագրված անտիկլինալի տարածքն է: Այստեղ Ն.Վ. Վավիլովի առաջարկով (1934 թ) հետագայում վայրի բույսերի պահպանման նպատակով ստեղծվել է «Էրեբունի» արգելոցը, որը զբաղեցնում է 89 հեկտար տարածք: Այստեղ են պահպանվում վայրի ցորենների, աշորայի, գարու բուսատները:

Եզրակացություններ

1. Երթուղին կարելի է օգտագործել ուսանողների ուսումնական պրակտիկան և բարձր դասարանի աշակերտների էքսկուրսիաներ կազմակերպելու համար:
2. Զբոսաշրջիկը երթուղու ընթացքում կարող է իր հավաքածուն համալրել գիպսի բյուրեղներով, կենդանիների բրածո մնացորդներով:
3. Երթուղին հետաքրքիր է նաև նրանով, որ համեմատաբար փոքր տարածքում կարելի է տեսնել և ուսումնասիրել դինամիկ երկրաբանական մի շարք պրոցեսները:

Գրականություն

1. Ասլանյան Պ.Մ., Երկրաբանական էքսկուրսիա մերձերևանյան շրջանում, Հայաստանի բնություն , 1981, թիվ 2, էջ 10-12:
2. В.Ю.Саядян Новейшая геологическая история Армении. Ереван 2009 г.

3. П.А. Габриелян, О.А. Саркисян Сейсмотектоника Армянской ССР Ереван 1981 г.
4. Հակոբյան Թ.Խ., Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը: Երևան 1990:
5. Հայաստանի բնություն, Վայրի հացաբույսերը Հայաստանում, 1981, թիվ 1, էջ 13-15:

ОЦЕНКА ПРЕДПОСЫЛОК РАЗВИТИЯ ТУРИЗМА ПРИЕРЕВАНСКОГО РАЙОНА ЭРЕБУНИ-ВОХЧАБЕРД

Аракелян С.А., к.г.н., доцент, ЕГУ

На территории Армении имеется немало осадочных пород, в том числе озерных,озерно-морских и морских.Эти породы во многих местах обнажены.Одно из таких обнажений, находящееся недалеко от Еревана в районе с.Вохчаберд-Мушаван, содержит остатки двухстворчатых мягкотелых, одноклеточных организмов, а также пестрые и красные шарообразные осадочные образования.

ASSESSMENT OF TOURIST PRE-CONDITIONS OF SUB-YEREVAN EREBUNI-VOGHJABERD AREA

Araqelyan S.A. PhD, Associate Professor, YSU

In Armenia there are many sedimentary rocks including lacustrine, and marine and morskih.Eti rocks in many places obnazheny.Odin of these outcrops is located near Yerevan near the village Vohchberd-Mushavan.Zdes obnazhivayutsya various sedimentary rocks that contain the remains of bivalves soft-bodied, single-celled organisms and prochih.Zdes obnazhivayutsya mottled and red ball-shaped sedimentary formations.

ՏԱՐԱԾԱԿԱՆ-ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ և ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱ -ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՏԱՐԱԾՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ, հայցորդ, ԵՊՀ

Հիմնաբառեր- ռեկրեացիոն աշխարհագրություն, տարածական-ռեկրեացիոն համակարգեր, զբոսաշրջային կլաստեր, զբոսաշրջության զարգացման ծրագիր, տարածաշրջանային զարգացում:

Ներկայումս ՀՀ տնտեսության մի շարք ոլորտներում առավել արդիականություն է ձեռք բերում կառուցվածքային վերափոխումների և նորարարացման գործընթացում պետության կարգավորող դերի ուժեղացման խնդիրը: Այդ ոլորտներից են զբոսաշրջությունը և առողջարանային հանգստի կազմակերպումն, իրենց ներքին զարգացման խնդիրներով:

Մեր երկիրը տնտեսության վերոհիշյալ ոլորտները ժառանգել է ԽՍՀՄ-ից և դրանք ունեն լուրջ փոփոխությունների կարիք: Անցումը պլանային տնտեսական համակարգից ժամանակակից շուկայական տնտեսությանը, բնականաբար, բարդ, ժամանակատար և ծախսատար գործընթաց է, որն իրականացվում է հետխորհրդային բոլոր երկրներում: Խորհրդային տարիներին տնտեսության տարածքային կազմակերպման ձևերից էին համարվում նաև տարածական-ռեկրեացիոն համակարգերը, որի տեսական հիմքերը դրվել էին դեռևս նախորդ դարի 70-ական թվականների սկզբին:

Ռեկրեացիոն աշխարհագրության մեջ հիմնավորված է ռեկրեացիոն տարածքային համակարգերի մասին տեսությունը որպես գիտական հետազոտության առարկա, ինչպես նաև զբոսաշրջության և հանգստի կազմակերպման հիմնական ձևերից մեկը: Այս գիտական ուղղության հասկացությունների ամբողջ համակարգը հիմնված է ռեկրեացիայի և զբոսաշրջության մարդակենտրոն

բնույթի վրա, որը նշանակում է բոլոր համակարգային կապերի կենտրոնացումը զբոսաշրջիկի պահանջմունքների բավարարման վրա: Այս մեթոդաբանական հիմքի վրա էլ մշակվել են ռեկրեացիոն շրջանների գործունեությունը և զարգացումն ապահովող բնական և պատմամշակութային ռեկրեացիոն ռեսուրսների, ենթակառուցվածքի և ռեկրեացիոն պահանջարկի գնահատման սկզբունքները [4]:

Տարածական ռեկրեացիոն համակարգը (ՏՌՀ) բնութագրվում է գործառութային և տարածական միասնականությամբ: Այն իրենից ներկայացնում է հասարակական աշխարհագրական համակարգ, որը կազմված է փոխկապակցված հետերոգեն բաղադրիչներից. հանգստացողների խմբերից, բնական և մշակութային համալիրներից, տեխնիկական սարքավորումներից, սպասարկող անձնակազմից և կառավարող օրգաններից: ՏՌՀ-ն բնութագրվում է գործառութային և տարածական /որոշակի մասշտաբի տարածքի սահմաններում/ ամբողջականությամբ, իսկ ենթահամակարգերի վիճակը կախված է ընդհանուր համակարգի գործառույթից և այն ունի մարդակենտրոն բնույթ: ՏՌՀ –ի մասին Պրեոբրժենսկու կողմից առաջ քաշած հիպոթեզը մեծ հաջողություն ունեցավ ԽՍՀՄ գիտահետազոտական ինստիտուտների և համալսարանների աշխարհագետների շրջանակներում: Այդ ամենի ապացույցն են 1970-80 թթ. կազմակերպված հետազոտությունները ռեկրեացիոն աշխարհագրության ոլորտում և տարբեր շրջանների ՏՌՀ առանձնացումները: Որոշակիորեն պարզեցվեց, թե ինչ է ներառում իր մեջ ռեկրեացիոն շրջանը: Ռեկրեացիոն շրջանը դա մի տարածական ամբողջականություն է, որտեղ տնտեսապես փոխկապակցված են ռեկրեացիոն ձեռնարկությունները, որոնք մասնագիտացված են հանգստացողների սպասարկման գործում և օգտագործում են տարածքի բնական ու պատմամշակութային համալիրները և նրա տնտեսական պայմանները: Առաձնապես կարևորվում էր շրջանի հիմնական գործառութային ուղղվածությունն, արտաքին կամ ներքին պահանջների նկատմամբ կողմնորոշումը, համակարգի զարգացվածության աստիճանը: Սակայն քանի որ ՏՌՀ –ը մշակվել էր վարչա-հրամայական համակարգի պայմաններում, իրեն բնորոշ ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանավորմամբ, կառավարման օրգանների որոշումներում նկատված սխալները գործնականում հանգեցնում էին ՏՌՀ-ի աշխատանքների խաթարումների:

Ռեկրեացիոն աշխարհագրության մեջ հետագա զարգացումները հանգեցրին տարածական ռեկրեացիոն–տնտեսական համալիրի /ՏՌՏՀ/՝ որպես ժողովրդական տնտեսության կառուցվածքային բաղադրիչի, հասկացության մշակմանը: ՏՌՏՀ –ի հայեցակարգն իր ներդրումն ունեցավ շրջանացման խորհրդային դպրոցում և 1980թթ. կիրառական նշանակություն ունեցավ ԽՍՀՄ մասշտաբով և նրա առանձին տարածաշրջանների համար՝ ռեկրեացիոն գործունեության պլանային կարգավորման արդյունավետության համար [1]: Եթե ՏՌՀ-ը զբաղեցնում է այնպիսի տարածք, որը սահմանափակվում է ռեկրեացիոն պայմանների ու ենթակառուցվածքների առկայությամբ՝ հստակ գծագրված սահմաններով /հանգստի գոտիներ, առողջարաններ, անտառապուրակների հողատարածքներ/, ապա ռեկրեացիոն շրջանն ավելի ընդարձակ տարածքային ձևավորում է, որը ՏՌՀ-ի հետ մեկտեղ ներառում է նաև իրեն շրջապատող սոցիալ-տնտեսական տարածքը, որտեղ էլ ձևավորվում են ՏՌՀ- ը սնուցող ռեկրեացիոն, նյութական և ֆինանսական հոսքերը [2]:

Ուսումնասիրելով զբոսաշրջությանը և ռեկրեացիոն աշխարհագրությանը վերաբերվող գրականությունը վերջերս նկատվում է միտում տարածքային ռեկրեացիոն համակագերի և տարածական զբոսաշրջա-ռեկրեացիոն համակարգերի նույնականացման: Լ.Յու. Մաժարի կողմից առաջարկվում է «տարածական զբոսաշրջա-ռեկրեացիոն համակարգ» հասկացությունը, որի հիմքում դրվում է 1970թթ. Պրեոբրաժենսու կողմից մշակված ռեկրեացիոն համակարգի գաղափարը, որպես բազային մոդելի, որն է արտացոլում է ցանկացած մակարդակի և բնույթի ռեկրեացիոն գործունեություն՝ ուղղված մարդու ֆիզիկական և հոգևոր ուժերի վերակագնմանը:

Չնայած որ 1970-1980թթ. ռեկրեացիոն աշխարհագրության ռուսական դպրոցի զարգացումն իրենից ներկայացնում էր բարդ և հակասական գործընթաց, այնուամենայնիվ դրանք պտղաբեր էին, քանի որ ձևավորվեց ազատ ժամանակ մարդու գործունեության տարածական կազմակերպման գիտական պատկերացումների կիրառական համակարգ: Ռեկրեացիոն աշխարհագրությունը մի շարք թարմ մտքեր մտցրեց խորհրդային աշխարհագրության մեջ՝ մասնավորապես սոցիալ-տնտեսական ճյուղում: Մյուս կողմից, հատկապես սոցիալիզմի դարաշրջանում, բոլոր սոցիալ-աշխարհագրական հետազոտությունների արգելակումն անդրադարձավ նաև ռեկրեացիոն աշխարհագրության վրա: Մեթոդաբանական առումով ռեկրեացիայի խնդիրների գիտական մշակումները կրում էին նորմատի-վային բնույթ: Միայն 1990-ական թթ. նկատվեց շարժ դեպի տարածական- ռեկրեացիոն համակարգերի ուսումնասիրման որոնողական մոտեցումը և ռեկրեացիոն մոդելների հետագա սոցիալականացում:

1990-ական թթ., կապված հասարակության մեջ վերակառուցողական գործընթացների խորացման, շուկայական հարաբերությունների անցման և այս ամենից բխող սոցիալական պատվերի փոփոխությունների հետ՝ անհրաժեշտություն առաջացավ առաջ քաշել սկզբունքորեն նոր ռեկրեացիոն հայեցակարգեր, վարկածներ: Դրանցից մեկը դարձավ ռեկրեացիոն համակարգի այսպես կոչված «միջավայրային» ադապտացիոն գրաֆիկական մոդելը, որը մշակվել էր Մոսկվայի Պետական Համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում: Վերջինիս համար հիմք հանդիսացավ շուկայական միջավայրում, բաց հասարակությունում ռեկրեացիոն գործունեության ինքնակազմակերպման բնույթը: Որպես ինքնակազմակերպման շարժիչ ուժ առանձնացվեց հարմարվողականության գործընթացը, որը հարաբերականորեն ոչ կոնֆլիկտային և ճկուն է դրսևորման ամենատարբեր ձևերում՝ այդ թվում նաև տարածական: Ռեկրեացիոն համակարգն ուսումնասիրվում էր որպես տարածական սոցիալ-բնապահպանական համակարգի տարատեսակ, որի կառուցվածքը որոշում են իր գլխավոր էլեմենտների, բաղադրիչների փոխադարձ հարմարվողականության 2 տիպերը՝ «սոցիում- բնական և տնտեսական միջավայր» և «սոցիում- սոցիալական միջավայր»:

Ի տարբերություն տարածական-ռեկրեացիոն համակարգի՝ նոր համակարգի կառուցվածքի ձևավորման տեխնոլոգիաներում առաջնային տեղ է տրվում սոցիալ-հոգեբանական հարաբերություններին: Մոդելն արտահայտում է ռեկրեացիայի երկու բևեռների փոխհարաբերությունները՝ դրանց սոցիալական շփման և հաղորդակցության միջոցով:

Առաջին բևեռը դա «հյուրն» է և միջավայրը, որին շրջապատում է նրա բնակության վայրը, երկրորդը՝ «հյուրընկալողը» և նրա բնակավայրի միջավայրը, որը միաժամանակ հանդիսանում է հանգստի միջավայր հյուրի համար: Մոդելը բաղկացած է երեք մասերից, որոնք համապատասխանում են «հյուրի» կողմից ռեկրեացիոն միջավայրի ընկալման սոցիալ-հոգեբանական հիմնական փուլերին. մինչ հանգիստը, բուն հանգիտը, հետ հանգիստը: Առաջին փուլում կարևոր նշանակություն ունեն ռեկրեացիոն պահանջարկի բնույթը և կառուցվածքը և դրանով ձևավորված ընտրությունը ռեկրեացիոն զբաղմունքների ցիկլերի վերաբերյալ: Երկրորդ փուլում կարևորվում է այդ զբաղմունքի իրականացման գործընթացը, որպես մարդու և հանգստի միջավայրի փոխհարաբերությունների յուրահատուկ ձև: Երրորդ փուլում գնահատվում է ռեկրեացիայի արդյունավետությունը: Միջավայրային մոդելը խթանում է ռեկրեացիայի կառավարման նոր սկզբունքների հաստատմանն, այսինքն՝ «հյուրի» և «հյուրընկալողի» հետաքրքրությունների փոխհամաձայնեցմանը փոխզիջումային լուծումների ընդունման հիմքի վրա: Այս մոդելը կարող է հանդես գալ, որպես տեսական բազա ռեկրեացիոն աշխարհագրության հումանիստական ասպեկտների զարգացման ավելի լայն շրջանակների համար: Հետագայում Ն.Վ. Շաբալինայի և Վ.Ա. Ուգլովի կողմից այս մոդելն առավել կատարելագործվեց և կարևորվեց, քանի որ նպաստում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական աճին և հատկապես անհատ ձեռներեցներին՝ փոքր

և միջին բիզնեսի խթանման միջոցով: Մյուս կողմից կարևորվում է հանգստացողների և զբոսաշրջիկների անհատական նախասիրությունները, ռեկրեացիոն պահանջարկի բավարարման առավել ճկուն հնարավորությունները:

Վերջին տասնամյակների ընթացքում զբոսաշրջության զարգացման համաշխարհային փորձը ի հայտ բերեց պետության և բիզնեսի առավել արդյունավետ համագործակցության մեխանիզմ՝ ժամանակակից բարձր տեխնոլոգիաներով հագեցած հյուրընկալության ինդուստրիայի ստեղծման համար: Դա կլաստերային մոտեցումն է, որի տեսական հիմքերը դրվել էին Ա. Մարշալի կողմից: Նա առաջիններից էր, ով առանձնացրեց տնտեսական կառույցները, որոնք կարող են կայուն լինել, շնորհիվ որոշակի տարածքում միանման շատ փոքր բիզնեսների կենտրոնացման : Այնուհետև Մ. Պորտերը գիտական շրջանառության մեջ մտցրեց ճյուղային կլաստերի հասկացությունը՝ այն անվանելով աշխարհագրորեն միմյանց հարևանությամբ գտնվող փոխկապակցված ընկերությունների և նրանց հետ կապված կազմակերպությունների խումբ, որոնք գործում են որոշակի ոլորտում, բնութագրվում են գործունեության ընդհանրությամբ և փոխլրացնում են միմյանց:

Զբոսաշրջա-ռեկրեացիոն կլաստեր ասելով հասկանում ենք աշխարհագրորեն միմյանց հարևանությամբ գտնվող, համագործակցող ընկերությունների և կազմակերպությունների խումբ, որոնք զբաղվում են զբոսաշրջային արտադրանքի արտադրությամբ, փոխադրմամբ և վաճառքով, ինչ-պես նաև զբոսաշրջության և ռեկրեացիոն ծառայություններին և վերջիններիս հետ կապված պետական իշանական մարմիններին, գիտա-հետազոտական կազմակերպություններին կից գործունեությամբ[3]:

Զբոսաշրջա-ռեկրեացիոն կլաստերները հանդիսանում են կլաստերային քաղաքականության օբյեկտներ, կլաստերների ձևավորման և աջակցության մեխանիզմների և պետական չափորոշիչների համակարգեր, որոնք էլ ապահովում են տարածաշրջանի և կլաստերի մեջ մտնող ձեռնարկությունների մրցունակության բարձրացումը: Կլաստերային քաղաքականության կարևորությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջա-ռեկրեացիոն համակարգի զարգացումն ապահովվում է պետություն-անհատ համագործակցության շրջանակներում՝ նպատակածրագրային մեթոդների և մեխանիզմների կիրառությամբ:

Զբոսաշրջային-ռեկրեացիոն ոլորտի զարգացման վերաբերյալ կլաստերային քաղաքականության նպատակներ են հանդիսանում.

- զբոսաշրջային-ռեկրեացիոն ծառայությունների ժամանակակից ինդուստրիայի ստեղծումը,
- զբոսաշրջային-ռեկրեացիոն ծառայությունների մրցունակության բարձրացումը ներքին և միջազգային շուկաներում,
- տարածաշրջանային կտրվածքով. զբոսաշրջային ցրված ձեռնարկություններից որակյալ անցման ապահովումը՝ դեպի հստակ գործող զբոսաշրջա-ռեկրեացիոն կլաստերը, որը գործում է պետություն-անհատ համագործակցության սկզբունքներով և զբոսաշրջային գործունեության մեջ է ներգրավում հնարավոր առավել ծավալի տարածաշրջանային զբոսաշրջային ռեսուրսներ:

Կլաստերային քաղաքականության իրականացման արդյունք է հանդիսանում զբոսաշրջության և դրան կից ոլորտների միջև փոքր և միջին բիզնեսի զարգացման ինտենսիվության բարձրացումը, զբոսաշրջության ոլորտում ներդրումների ներգրավվման ակտիվացումը, ձևավորված կլաստերների տարածաշրջանի սոցիալ-տնտեսական արագացված զարգացման ապահովումը:

Զբոսաշրջության և ռեկրեացիայի տարածքային զարգացման և կազմակերպման վերը նշված մոդելները (ՏՌՀ-ը և կլաստերները) ամբողջովին կիրառելի են նաև զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսներով հարուստ մեր հանրապետության համար: Հայաստանը լինելով փոքր, բայց ռեկրեացիոն և զբոսաշրջային ռեսուրսներով հարուստ երկիր, պետք է հետևի եվրոպական այնպիսի զարգացած

երկրների փորձին ինչպիսիք են Շվեյցարիան կամ Հունաստանը: Արտասահմանցի կամ տեղացի զբոսաշրջիկներին պետք է գրավել ոչ միայն պատմա-մշակութային հուշակոթողներով, որոնք հիմնականում գտնվում են գյուղերում, այլ նաև օգտագործել ագրոտուրիզմի և էկոտուրիզմի հնարավորությունները, որոնք մեր երկիրը շնորհել է մեզ: Ահա այստեղ է, որ կարևորվում է պետության և քաղաքացու /հյուրընկալ բնակչի/ փոխհամագործակցության նշանակությունը: ՀՀ կառավարության զբոսաշրջության զարգացման ռազմավարության համաձայն, մարզերում զբոսաշրջության առավել զարգացման նպատակով, նախատեսվում են աշխատանքներ կապված զբոսաշրջային ենթակառուցվածքների կառուցման և վերակառուցման հետ: Առաջիկա տարիներին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը Համաշխարհային բանկի հետ համատեղ պատրաստվում է իրականացնել զբոսաշրջային կլաստերների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագիր, որի արդյունքում նախատեսվում է արդիականացնել զբոսաշրջային երթուղիների ենթակառուցվածքները: Դրանք վերաբերում են ամենատարբեր ոլորտներին՝ ճանապարհային զբոսաշրջային վահանակներից մինչև սանիտարահիգիենիկ ծառայությունների, հանգստի վայրերի, գյուղական վայրերի համապատասխան ճարտարապետական տեսքը վերականգնելու, հուշանվերների տաղավարներն արդիականացնելու գործընթացներին: Ծրագիրն իրականացվելու է վարկային միջոցների հաշվին: Զբոսաշրջության և տնտեսական ենթակառուցվածքների զարգացման այս ծրագրի մեկնարկը կտրվի 2016թ.:

Նշված գործընթացներն իրենց էական դերը կունենան ՀՀ-ում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման և առանձին մարզերի ու տարածաշրջանների սոցիալ-տնտեսական առաջընթացի համար:

Գրականության ցանկ

1. Александрова, А.Ю. География туризма, М., 2009:
2. Веденин Ю.А. Динамика территориальных рекреационныхсистем систем. М.,1982.
3. Кружалин, В.И. Государственно- частное партнерство и формирование туристско-рекреационных кластеров, Вестник национальной академии туризма. 2009. №2 (10). –С. 13-16.
4. Кусков А.С., Джаладян Ю.А. Основы туризма, М. 2008.- 400 с.

РОЛЬ ТЕРРИТОРИАЛЬНО РЕКРЕАЦИОННЫХ СИСТЕМ И ТУРИСТСКО-РЕКРЕАЦИОННЫХ КЛАСТЕРОВ В РЕГИОНАЛЬНОМ РАЗВИТИИ

Акопян Л., соискатель, ЕГУ

В статье рассматриваются территориальные рекреационные системы, графические модели рекреационных систем, их формирование и развитие, роль в социально-экономическом развитии региона. Также рассматривается кластерный подход к формированию туристских комплексов; основные цели, задачи и роль кластерной политики при формировании региональных и государственных программ развития туристской отрасли.

THE ROLE OF SPATIAL-RECREATIONAL AND TOURIST-RECREATIONAL CLUSTER SYSTEMS IN THE SPHERE OF SOCIAL-ECONOMIC DEVELOPMENT

Hakobyan L. PhD student, YSU

Abstract. In this article we have discussed spatial-recreational systems, various models of the graphical environment, their formation and development. Its very important their role and significance in *social-economic* development processes. It is studied also formation of complexes of the *tourist-recreational* cluster approach, main aims, cluster policy issues and its role in the development of the sphere of tourism in regional and national programs.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ՇԱԽՈՅԱՆ, դասախոս, ԵՊՀ
ԱՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ, իրավաբան, «Կիմարի» ՍՊԸ

Արդի ժամանակաշրջանում զբոսաշրջությունը հանդիսանում է առավել դինամիկորեն զարգացող ոլորտներից մեկը ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի տարբեր երկրներում: Արդեն 21-րդ դարի սկզբին միջազգային զբոսաշրջությունն իր տնտեսական արդյունավետությամբ գրավեց առաջին տեղն աշխարհում՝ էապես առաջ անցնելով երկար տարիներ համաշխարհային առևտրի առաջատար հանդիսացող ավտոմոբիլաշինության և նավթագազային ոլորտներից: Միջազգային զբոսաշրջության կարևորությունը մշտապես մեծանում է, ինչը պայմանավորված է առանձին երկրների տնտեսական աճի վրա զբոսաշրջության ազդեցությամբ: Միջազգային զբոսաշրջությունը պետության համար հանդիսանում է ինչպես զբաղվածության ապահովման միջոց, այնպես էլ արժույթի մուտքի աղբյուր, նպաստում է տնտեսության դիվերսիֆիկացմանը՝ ստեղծելով զբոսաշրջային ոլորտին ծառայող նոր ենթաճյուղեր: Զբոսաշրջության ոլորտի զբաղվածության աճի հետ մետեղ մեծանում են հասարակության եկամուտները և բարձրանում է բարեկեցության մակարդակը տվյալ երկրում: Այդ է պատճառը, որ ջանք չի խնայվում Հայաստանում ևս միջազգային զբոսաշրջության զարգացման համար:

Նշենք, որ ԱՊՀ ձևավորումից հետո առաջին տարիներին՝ ընդհանուր տնտեսական ճգնաժամիպայմաններում, Հայաստանում զբոսաշրջային ծառայությունների պահանջարկն էապես նվազեց: Գործող զբոսաշրջային կազմակերպությունները վերակազմավորման և ծառայության որակի բարձրացման կարիք ունեին: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 1996թ, որից հետո կրկին նկատվեց զբոսաշրջային ոլորտի զարգացման աճ, այնուամենայնիվ մինչև 2000թ. ամբողջ տարվա ընթացքում Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվն այդպես էլ չհասավ 50.000 հոգու, իսկ 2001թ.-ին միայն մեկ տարվա ընթացքում թիվը կրնապատկվեց՝ անցնելով 100.000-ը[1]: Տարեցտարի ավելանալով Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվը՝ 2014թ.-ին այն անցավ 1.200.000 մարդուց, որոնցից շուրջ 30%-ը ժամանել են ԱՊՀ երկրներից, 30%-ը ԵՄ երկրներից, իսկ մնացած 40 %-ը աշխարհի տարբեր երկրներից: Միայն վերջին տարվա ընթացքում (2013-2014) գրանցվեց 11.3% աճ[2]:

Հայաստանում միջազգային զբոսաշրջության զարգացման ուղղությամբ իրականացվող ամենակարևոր և հիմնական միջոցը Հայաստանը համաշխարհային զբոսաշրջային շուկային ներկայացնելն է, հատկապես արտասահմանյան այն երկրներում, որոնք մեզ համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում զբոսաշրջիկների լայն զանգվածներ ներգրավելու նպատակով: Հայաստանի ճանաչողության բարձրացմանն ուղված մի շարք միջոցառումներ է իրականացնում Հայաստանի Ազգային Մրցունակության Հիմնադրամը (ՀԱՄՀ)[3], որի գործունեության հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում զբոսաշրջության զարգացումը: ՀԱՄՀ-ն կազմակերպում է տեղական զբոսաշրջային կազմակերպությունների մասնակցությունը տարբեր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, համակարգում է մշակութային միջոցառումների և տոնակատարությունների իրականացումը, ինչպես նաև արտասահմանյան զանգվածային լրատվական միջոցների և զբոսաշրջային կազմակերպությունների համար ճանաչողական տուրերի կազմակերպումը Հայաստանում:Այս ամենի շնորհիվ զբոսաշրջության համաշխարհային շուկայում երկրի ճանաչելիությունը որոշակիորեն աճեց և 2007թ.-ին արդեն համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված զեկույցի Հայաստանը 130 երկրների շարքում գրավեց 89-րդ տեղը[4]:

---

[1] Ըստ հյուրանոցային տնտեսությունից ստացված հաշվետվությունների տվյալների:
[2] http://www.tert.am/am/news/2015/03/07/ hayastan /1610744 /
[3] http://www.cf.am/arm/index.php?kategory=3#&panel1-3
[4] «Զբոսաշրջության մրցունակության» զեկույց, Հայաստան, 2007:

Հայաստանն ունի մի շարք հնարավորություններ միջազգային զբոսաշրջության տարբեր ուղղությունների զարգացման համար.Մասնավորապես՝ հարուստ պատմամշակութային և հոգևոր ժառանգություն, անաղարտ բնություն, տարատեսակ լանդշաֆտ՝ խորախոր կիրճեր և բարձր գագաթներ, էկոլոգիապես մաքուր սննդամթերք, հարուստ ու համեղ խոհանոց, հանքային տաք աղբյուրներ, դրանց ակունքների մոտ կառուցված առողջարաններ, հյուրասիրության հայտնի ավանդույթ: Այս ամենը գայթակղիչ է պոտենցիալ զբոսաշրջիկի համար:Կարելի է ասել, որ բացի ծովափնյա հանգստից Հայաստանում հնարավորություն կա զարգացնել զբոսաշրջության բոլոր մյուս տեսակները:

Հայաստանը, լինելով աշխարհի հնագույն երկրներից մեկը, հարուստ է տարբեր դարերում կերտված և մինչ օրս պահպանված տեսարժան վայրերով: Դա հնարավորություն է տալիս Հայաստանում զարգացնել ճանաչողական զբոսաշրջությունն իր ենթաճյուղերով՝ ուխտագնացություն և էթնիկ զբոսաշրջություն: Էթնիկ զբոսաշրջությունն իրենից ներկայացնում է այցելություն իրենց հայրենիք, հին արմատներին: Զբոսաշրջության այս տեսակը շատ զարգացած է Հայաստանում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստան ժամանող զբոսաշրջիկների 60%-ը կազմում են սփյուռքահայերը, ովքեր գալիս են իրենց հայրենիք, տեսնելու որտեղ են ծնվել և ապրել իրենց նախնիները: Ուխտագնացությունն այցելությունն է տարբեր եկեղեցիներ ու վանքեր՝ աղոթելու նպատակով: Հայաստանն առաջին երիրն է, որը 301թ. ընդունեց Քրիստոնեություն: Ուխտագնացության նպատակով Հայաստան ժամանած զբոսաշրջիկներն առաջին հերթին այցելում են Էջմիածին, որը կառուցվել է դեռ 303 թ. Գրիգոր Լուսավորչի կողմից, հենց այն նույն վայրում, որտեղ ըստ Լուսավորչի տեսիլքի իջավ Աստծու Միածին որդին[1]: Զբոսաշրջության այս տեսակի հետ սերտորեն կապված է նաև մշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում ևս այցելում են Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր (մասնավորապես՝ Մատենադարան), եկեղեցիներ, ամրոցներ, հուշարձաններ, սակայն այցելության բուն նպատակը ոչ թե աղոթելն է, այլ մշակութային հարստության ուսումնասիրությունն ու ճանաչումը:

Հայաստանի հանքային աղբյուրներով ու տաք ջրերով հարուստ բնությունը հնարավորություն է տալիս այստեղ զարգացնել առողջարանային զբոսաշրջությունը: Բուժիչ հատկություն ունեցող հանքային ջրերը օգտագործվում են և՛ խմելու, և՛ լոգանքի համար, կիրառվում են նաև տարբեր առողջական բուժումների համար: Հայաստանի հանքային ջրերը տարբերվում են իրենց բաղադրությամբ և ջերմաստիճանով՝ տատանվելով 40-83 *C սահմաններում*: Ամենահայտնի հանքային աղբյուրները գտնվում են Ջերմուկում, Բջնիում, Արզնիում, Դիլիջանում, Հրազդանում, որտեղ կան մի շարք առողջարաններ, սակայն ՍՊԱ կենտրոն դառնալու համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ:

Վերջին տարիներին Հայաստանում լայն զարգացում ունեցան ագրո և էկոզբոսաշրջությունը: Ագրոզբոսաշրջությունը հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին ապրել գյուղական կյանքով, աշխատել դաշտերում, փորձել միրգ և բանջարեղեն, թխել լավաշ, ծանոթանալ տեղի մշակույթին և սովորույթներին և ամբողջովին զգալ գյուղական կյանքի բոլոր հաճույքները: Ագրոզբոսաշրջության մեջ է մտնում նաև այցելությունը գինեգործարաններ: Իսկ Հայաստանը հանդիսանում է աշխարհի ամենահին գինեգործ երկրներից մեկը, որտեղ սկսել են գինի պատրաստել ավելի քան 3000 տարի առաջ: Հայաստանի կլիման հնարավորություն է տալիս պատրաստել գինիների տարբեր տեսակներ՝քաղցր, կիսաքաղցր, դառը: Այստեղ աճում է խաղողի շուրջ 200 տեսակ: Հատկապես հայտնի են Հայաստանի գինեգործության 6 շրջաններ՝ Արարատ, Արմավիր, Տավուշ, Արագածոտն, Սյունիք և Վայոց Ձոր:

Էկոզբոսաշրջությունն իրենից ներկայացնում է բնության կողմից կերտված այնպիսի վայրերի ուսումնասիրություն, որտեղ մարդկային միջամտությունը բացակայում է: Այն սերտորեն կապված է

[1]http://hy.wikipedia.org /wiki/%D4%B7%D5%BB%D5%B4%D5%AB%D5%A1%D5%AE%D5%B6%D5%AB_% D5%84% D5% A1% D5% B5% D6%80_%D5%8F%D5%A1% D5%B3%D5%A1%D6%80

շրջակա միջավայրի պահպանության հետ:Մրգերի և բանջարեղենների բարձր որակն ու յուրահատուկ համը, որոնք չեն պարարտեցվում քիմիական հավելումներով, չվնասված բնությունն ու հանքային աղբյուրների բազմազանությունը, որոնք բնորոշ են մեր երկրին, ստեղծում են հնարավորություն էկոզբոսաշրջությունը Հայաստանում զարգացնելու համար:

Այժմ անդրադառնանք այն գործոններին, որոնք անկախ զբոսաշրջության տեսակից ունեն ուղակի կամ անուղակի ազդեցություն զբոսաշրջային ոլորտի զարգացմանը՝ նպաստելու կամ խոչընդոտելու իմաստով:

Զբոսաշրջության զարգացման մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են սահմանային և արտոնագրային ռեժիմները: Պետական սահմանի հատումը մշտապես կապված է որոշակի օրինական պահանջների պահպանման հետ՝ ճամփորդական անձնագրերի կամ ելքի արտոնագրի ստացում, մուտքի արտոնագրի ստացում, սահմանային մաքսային ընթացակարգ, արժութային և բժշկական հսկողություն: Այս պահանջները սահմանվում են պետության կողմից անօրինական ներհոսք /արտահոսքի/, միջազգային ահաբեկչության և թմրանյութերի վաճառքի վերահսկման նպատակով: Հայաստանի սահմանն անցնելիս ևս պահպանվում են բոլոր այս պահանջները, սակայն կան նաև հավելյալ պահանջներ, որոնք տարբեր պետության քաղաքացիների համար տարբեր են: Մասնավորապես ռուսական շուկայի համար (որոնք կազմում են Հայաստան ժամանող զբոսաշրջիկների շուրջ 25%-ը) բացակայում են բոլոր տեսակի խոչընդոտները՝ չկա լեզվի խնդիր, մուտքի արտոնագրի անհրաժեշտություն, բավական է միայն տոմս գնել և ժամանել Հայաստան: Մի շարք երկրների քաղաքացիների համար (Եվրոմիության անդամ գրեթե բոլոր երկրների քաղաքացիները, ԱՄՆ քաղաքացիների, Միացյալ Թագավորության քաղաքացիները)[1] Հայաստան ժամամելու համար անհրաժեշտ է ստանալ մուտքի արտոնագիր՝ կա՛մ նախապես տվյալ պետությունում ՀՀ դեսպանությունից, կա՛մ էլեկտրոնային եղանակով, կա՛մ Հայաստանի պետական սահմանը հատելիս՝ անցման կետում, որը իրենից առանձնակի բարդություն չի ներկայացնում: Այդ իսկ պատճառով դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ այն անձանց համար, ովքեր ցանկանում են այդ երկրներից ժամանել Հայաստան: Իսկ, օրինակ, այնպիսի երկրների քաղաքացիները, ինչպիսիք են Եգիպտոսը, Շրի Լանկան, Վիետնամը կամ մի շարք այլ երկրներ, Հայաստանի մուտքի արտոնագրի համար կարող են դիմել բացառապես այն դեպքում, երբ ունեն ՀՀ քաղաքացու կողմից տրված և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված հրավեր[2], ինչն էլ արդեն դժվարեցնում և հետևաբար նվազեցնում է տվյալ երկրներից Հայաստան ժամանող զբոսաշրջիկների քանակը: Դա պայմանավորված է նրանով, որ ցանկացած երկիր մեկնելիս կարևոր նշանակություն ունի արտոնագիր ստանալու ընթացակարգը, ինչպես նաև արտոնագրի համար սահմանված գումարի չափը, երբեմն զբոսաշրջիկներին գրավում է արտոնագիր ստանալու արագությունն ու դյուրինությունը կամ առհասարկ դրա բացակայությունը: Ելնելով վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ պարզ կարգ է սահմանված այն երկրների քաղաքացիների համար, որոնք առավել շատ են հետաքրքրված Հայաստանով:

Զբոսաշրջիկների հոսքը հայրենական շուկա մեծացնելու հաջորդ կարևոր պայմաններից է հանդիսանում մատուցվող ծառայությունների բարձր որակի և մատչելի գնի ապահովումը: Որակի և գնի համադրությունն ունի էական նշանակություն, քանի որ արտերկրում առաջարկվող հանգստի պահանջարկը մեր հայրենակիցների կողմից մեծացավ այն ժամանակ, երբ այնտեղ նրանց հասանելի գներով առաջարկվեց ծառայությունների ավելի բարձր որակ: Բարձր որակի ապահովման համար առաջին հերթին պետք է իրականացնել մի շարք ներդրումներ: Դրա համար անհրաժեշտ է նաև պետության կողմից ստացվող ֆինանսական օգնություն, ինչը կարող է դրսևորվել օրինակ հետևյալ հարցերում.

[1] http://www.mfa.am/u_files/file /consulate/Visa/visafreelisteng2.pdf
[2] http://www.mfa.am/u_files/file /consulate/Visa/invitation_only_eng.pdf

- հյուրանոցների, առողջարանների, հանգստյան տների կառուցման կամ բարելավման նպատակով արտերկրից ներկրվող տեխնիկայի և շինարարական նյութերի համար գանձվող մաքսատուրքից ազատում,
- Հյուրանոցային և առողջարանային ոլորտում իրականացվող ֆինանսական ներդրումների դեպքում համապատասխան որորտը մասնակի կամ լիովին ազատել բոլոր տեսակի պետական հարկերից և տուրքերից՝ կախված իրականացվող ներդրումների չափից,
- Արտոնյալ վարկերի տրամադրում (ցածր տոկոսադրույքով) զբոսաշրջության նյութատեխնիկական բազայի զարգացման և կատարելագործման համար:

Կարծում ենք, զբոսաշրջային ոլորտում վերոգրյալ աջակցության դեպքում պետությունը կունենա ներդրումների արագ վերադարձ (առավելագույնը 8-10 տարի), ազգային շահույթի մեծացում առանց մեծ ծախսերի իրականացման, բնակչության զբաղվածության մեծացում և արժութային մուտքերի աճ: Այս դեպքում կշահեին և՛ պետությունը, և՛ զբոսաշրջային գործակալությունները, և՛ հյուրանոցային համալիրները, քանի որ զբոսաշրջությունը շարունակում է մնալ աշխարհի ամենաեկամտաբեր ոլորտը:

Ծառայությունների որակի բարելավման մեջ մեծ տեղ է գրավում նաև ծառայություն մատուցող անձնակազմի կրթվածությունը և մասնագիտական բարձր գիտելիքների տիրապետումն իր կողմից մատուցվող ծառայության շրջանակներում (լինի դա զբոսավար, առողջարանի բժիշկ, թե պարզապես տեղեկատվություն տրամադրող անձ):

Ինչպես արդեն նշվեց, վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտը Հայաստանում ոչ միայն կայուն զարգացում ապրեց, այլև ամրապնդեց իր դիրքերը որպես կայացած գործունեության տեսակ: Առկա ցուցանիշները վկայում են, որ զբոսաշրջությունը ՀՀ-ում դարձավ այն քիչ ոլորտներից մեկը, որտեղ չնայած համաշխարհային ճգնաժամին, նկատվեց կայուն տնտեսական աճ: Այնուամենայնիվ, չնայած իրականացվող մի շարք միջոցառումներին և ոլորտում նկատվող կայուն աճին, զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներից են շարունակում մնալ վիզային պահանջները հիմնական հաղորդակցող երկրների հետ, մարքեթինգի ոչ արդյունավետ մակարդակը, կառավարության կողմից զբոսաշրջությանը ցուցաբերվող աջակցության անբավարար մակարդակը և օդային ու վերգետնյա տրանսպորտի թույլ զարգացվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ.

1. Ըստ հյուրանոցային տնտեսությունից ստացված հաշվետվությունների տվյալների:
2. «Զբոսաշրջության մրցունակության» զեկույց, Հայաստան, 2007:
3. http://www.cf.am/arm/index.php?kategory=3#&panel1-3
4. http://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%BB%D5%B4%D5%AB%D5%A1%D5%AE%D5%B6%D5%AB_%D5%84%D5%A1%D5%B5%D6%80_%D5%8F%D5%A1%D5%B3%D5%A1%D6%80
5. http://www.tert.am/am/news/2015/03/07/hayastan/1610744
6. http://www.mfa.am/u_files/file/consulate/Visa/visafreelisteng2.pdf
7. http://www.mfa.am/u_files/file/consulate/Visa/invitation_only_eng.pdf

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНОГО ТУРИЗМА В АРМЕНИИ

Шахоян К., преподаватель, ЕГУ

Мазманян А., юрист, ООО “Кимари”

Международный туризм является динамично развивающейся экономически высокоэффективной сферой туристской деятельности. РА располагает необходимыми предпосылками для развития международного туризма, является классическим примером гармоничного сочетания древнего историко-

культурного наследия и природно-ресурсного потенциала, представленного ландшафтным разнообразием, благоприятными природно-климатические условиями, минеральными водами, лесами. Важную роль в развитии отрасли играет государство, способствуя поднятию узнаваемости страны на международном туристском рынке участием местных туристических компаний на международных выставках и организацией в стране ознакомительных туров для представителей иностранных средств массовой информации и фирм. Несмотря на то, что показатели последних лет свидетельствуют о стабильном экономическом росте в сфере туризма, предстоит кропотливая работа, требующая совместных согласованных усилий и поддержки со стороны органов государственного управления.

INTERNATIONAL TOURISM DEVELOPMENT ISSUES IN ARMENIA

SHAKHOYAN K., Lecturer, YSU,
MAZMANYAN A., "Kimari" LLC, lawyer

International tourism is one of the spheres that is developing dynamically both in the world as well as in Armenia and is distinguished by its economic efficiency. Taking into account the circumstance that Armenia has a number of opportunities for the development of different types of international tourism (rich historical- cultural and spiritual heritage, untouched nature, ecologically pure food, tasty kitchen, mineral hot water famous tradition of hospitality) the state also makes all the efforts in the direction of the development of the sphere. First of all, with the objective of increasing the recognition of Armenia, Armenia is presented to the world tourism market which is demonstrated by the participation of local touristic companies in the international tourism exhibitions, and via organizing cognitive tours for foreign mass media in Armenia and for tourism companies. Besides, simple visa regime is determined for the citizens of those countries that are more interested in Armenia. One of the important conditions is the high quality of the services rendered and the affordable price which is possible to realize due to financial contribution of the state to the sphere as well as via inversions. The indexes of the recent years give evidence that the tourism in Armenia is one of the few spheres where stable economic growth is noted. By the way, in spite of a number of events and stable growth noticed in the sphere, a number of events are needed to be realized.

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ, իրավաբան, «Կիմարի» ՍՊԸ

Երկար տարիներ զբոսաշրջության ոլորտը, մասնավորապես զբոսաշրջային արտադրանքի ձևավորման ու իրացման, ինչպես նաև ճամփորդության հետ կապված այլ գործընթացները (լիցենզավորում, սերտիֆիկացում) չուներ վստահելի իրավական կարգավորում: Այդ իրավիճակն առաջացնում էր կամայականություն և բերում զբոսաշրջային շուկայի անքաղաքակիրթ զարգացման:

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ զբոսաշրջության ոլորտում հայկական ազգային օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը, որպես այդպիսին, սկսվել է վերջին տարիներին և շարունակվում է մինչև հիմա: Դա իսկապես այդպես է, քանի որ Հայաստանը համեմատաբար նոր է սկսել համապատասխանեցնել իր օրենսդրական դաշտը համընդհանուր ճանաչված միջազգային-իրավական նորմերին՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը: Դա պայմանավորված է վերջին տարիների ընթացքում զբոսաշրջության արագընթաց զարգացմամբ աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Մեծ թիվ են կազմում միջազգային իրավական ակտերը, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են զբոսաշրջային գործունեությանը: Մասնավորապես՝ «Մարդու իրավունքների համընդհանուր

հռչակագրում», քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրում, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրում հաճախ խոսվում է տեղաշարժման ազատության իրավունքի, հանգստի իրավունքի, գործունեության տեսակ ընտրելու ազատության իրավունքի մասին, ինչն էլ ստեղծում է զբոսաշրջային գործունեության զարգացման համար իրավական սահմաններ: Բացի իրավական ակտերից զբոսաշրջության զարգացմանը նպաստելու նպատակով համաշխարհային մակարդակով ստեղծվել են համա-պատասխան կազմակերպություններ, մասնավորապես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ)-ի շրջանակներում 1957թ. ստեղծված Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպությունը, որին 1997թ.-ից սկսած լիիրավ անդամի կարգավիճակով անդամակցում է նաև ՀՀ-ն[1]: Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է ԶՀԿ-ի կազմակերպած տարածաշրջանային և միջազգային խոշոր ծրագրերում, այդ թվում, «Մեծ Մետաքսի ճանապարհ» առևտրային ծրագրում[2]:

Վերջին տարիների ընթացքում մեծացավ ՀՀ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, արտերկրի զբոսաշրջային ոլորտը կարգավորող համապատասխան մարմինների և կառույցների հետ, անդամակցումը մի շարք միջազգային պայմանագրերին, կոնվենցիաներին և կազմակերպություններին, որոնց դերն ու նշանակութուն մեծ է Հայաստանում զբոսաշրջության զարգացման գործում, քանի որ, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ ներքին իրավական ակտերով, ապա կիրառվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջկառավարական համաձայնագրեր է ստորագրել մի շարք պետությունների հետ:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գործունեության իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որն էլ հենց հանդիսանում է առաջին և հիմնական փաստաթուղթը, որտեղ ամրագրված են զբոսաշրջությանը որոշակիորեն վերաբերող նորմեր: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Հանրապետությունից դուրս գալու և Հանրապետություն վերադառնալուիրավունք: Բացի այդ, յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանված են օրենքով: Սա հնարավորություն է տալիս մարդկանց օգտվել ամենամյա հանգստի իրավունքից[3]:

ՀՀ-ում վերջին տարիներին ընդունվելեն զբոսաշրջության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբոսաշրջությունը ՀՀ-ում համարվում է պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը և համապատասխան նորմատիվային օրենսդրական դաշտի ձևավորումը նպաստում է այդ ոլորտի կայուն զարգացմանը:Ի հավաստում կարելի է նշել, որ 08.02.2004-ին ուժի մեջ մտավ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան են հանդիսանում Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները և զբոսաշրջային գործունեության բնագավառում ծագող այն հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման

---

[1] Տե՛ս ՀՀ անդամակցության մասին ԶՀԿ որոշումը կայացվել է 1997թ. Ստրասբուրգում կայացած ԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի 12-րդ նստաշրջանում:

[2] Տե՛սStudy on Visa Facilitation in the Silk Road Countries, WTO, Madrid, 2001, p.1-3.

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 22, հոդված 30, 05.07.1995:

գործընթացում[1]: Իսկ մինչ այդ, վերը նշված հարաբերությունները, մասնավորապես զբոսաշրջիկության պայմանագրերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով. զբոսաշրջային հարաբերությունները չունեին առանձին կարգավորում և այս նորմերը տարածվում էին նաև զբոսաշրջիկության պայմանագրերի վրա[2]: Նույն օրենքով են սահմանվում զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Ընդ որում նշենք, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխություններ և լրացումներ են կատարվել միայն երեք անգամ:Այդ են վկայում նաև կառավարության ընդունած մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնցից են «ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգը»[3], «ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիրը»[4], «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը»[5], ՀՀ զբոսաշրջության զարգացման վերաբերյալ տարբեր տարիներին ընդունվածպետական ծրագրերը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային գործունեությունն առընչվում է մի շարք ոլորտների հետ, այն որոշակիորեն գտնվում է նաև իրավական տարբեր ճյուղերի ազդեցության տակ. վարչարարական, էկոլոգիական, անտառային, հողային, ապահովագրական, հարկային իրավունքի, սպառողների իրավունքների պաշտպանության նորմեր և այլն:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ զբոսաշրջության զարգացման հաջողությունն ուղղակիորեն կախված է ոչ միայն նրանից, թե ինչպիսի իրավական հիմք և կարգավորում ունի այս ոլորտը, այլև, թե ինչպես է պետական մակարդակով ընկալվում այն և ինչպիսի պետական աջակցությունից է օգտվում: Զբոսաշրջության միջազգային գիտաժողովների փաստաթղթերը վկայում են, որ զբոսաշրջությունը պետք է կարգավորվի պետական իշխանությունների և համապատասխան զբոսաշրջային կազմակերպությունների կողմից համալիր և միասնական հիմքի վրա[6]:Այսօր հնարավոր չէ գործել առանց միասնական ազգային համակարգի, կառույցի, որը կապահովի զբոսաշրջային քաղաքականության կոորդինացումը համապետական և տարածաշրջանային մակարդակով:

ՀՀ-ում զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, տարածքային համաչափ զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում[7]:

Այժմ անդրադառնանք այն պետական մարմիններին, որոնք այս կամ այն չափով ազդեցություն են ունենում զբոսաշրջային ոլորտի նկատմամբ, նպաստում են գործունեության կարգավորմանն ու զարգացմանը: Այդպիսիք են հանդիսանում ՀՀ Կառավարությունն ու Ազգային ժողովը, որոնց մասնակցությունը զբոսաշրջային գործունեությանը, ինչպես նաև ցանկացած այլ ոլորտում, դրսևորվում է համապատասխան իրավական ակտեր ընդունելու, պայմանագրեր կնքելու և տարբեր ծրագրեր մշակելու և իրագործելու միջոցով:

Սակայն գլխավոր և հիմնական մարմինը, որի գործունեության միակ նպատակն է հանդիսանում զբոսաշրջային գործունեության կարգավորումը, Զբոսաշրջության զարգացման քաղաքականության վարչությունն է, որը գործում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կառուցվածքում:

---

[1] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը, հոդված 1, 17.12.2003:

[2] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,05.05.1998:

[3] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, ՀՀ կառավարության հ. 15 որոշում, 20.04.2000:

[4] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, ՀՀ կառավարության հ. 32 որոշում, 03.08.2000:

[5] Տե՛ս ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը, ՀՀ կառավարության հ. 39 որոշում, 02.10.2003

[6] Տե՛ս Маринин М. ՛՛Какие нужны меры по защите отечественного туризма՛՛// Туризм: практика, проблемы, перспективы, 1998. № 2. էջ 12:

[7] Տե՛ս http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

Վերոնշյալ պետական մարմինների կողմից զբոսաշրջության զարգացման աջակցությունը դրսևորվում է պետական այնպիսի ծրագրերի իրականացմամբ, ինչպիսիք են համարվում «Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի Հանրապետության մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, «Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման», «Տաթև զբոսաշրջային կենտրոն», Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. Ռազմավարության և մի շարք այլ նմանօրինակ ծրագրերը: Պետական աջակցութան ապացույց կարելի է համարել նաև այն, որ 2014 թ-ին հայրենական զբոսաշրջային արտադրանքը ներկայացվել է մի շարք միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների. Մադրիդում[1], Բեռլինում[2], Մոսկվայում[3], Դուբայում[4], Տոկիոյում[5], Փարիզում[6], Լոնդոնում[7]և այլ քաղաքներում:

Վերջին տարիների զբոսաշրջության զարգացմանը նպատակաուղղված ամենամեծ ծրագիրը կարելի է համարել պետական մասշտաբով սոցիալական փաթեթի հատկացումը,որի իրագործումը սկսվել է 2011 թ-ից: Սոցիալական փաթեթի էությունը դրսևորվում է նրանում, որ ՀՀ պետական մարմինների աշխատակիցներին տրվում է հնարավորություն պետական բյուջեից ստացած հատկացումների շնորհիվ ամենամյա արձակուրդն անցկացնել ՀՀ տարածքում կամ ԼՂՀ-ում: Գործունեության այս ոլորտն արժանանում է պետության խիստ ուշադրությանն ու հետևողականությանը: Դա դրսևորվում է նրանով, որ, ՀՀ-ում զբոսաշրջային գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է միայն կազմակերպությունը գրանցել որպես իրավաբանական անձ կամ հաշվառվել որպես Անհատ Ձեռնարկատեր, սակայն սոցիալական փաթեթի վաճառք իրականացնելու համար կազմակերպությանն անհրաժեշտ է նաև համապատասխան փաստաթղթեր ներկայացնել և գրանցվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում:

Ինչպես նշվում է ***Ակապուլկոյի միջազգային փաստաթղթում.,Եթե լինի ցանկություն, որ որևէ պետություն հանգստի անցկացումն ընդունի ոչ թե որպես շռայլություն ու ճոխություն, այլ իր բոլոր քաղաքացիների անհրաժեշտ կարիքների բավարարում, ապա ակնհայտ է, որ պետությունների պատասխանատվությունը միայն այդ իրավունքի ուղղակի ճանաչմամբ չի սահմանափակվի, այլ կհանգեցնի համապատասխան մարմինների կողմից որոշակի պայմանների ստեղծման՝ բոլոր անձանց կողմից հանգստից արդյունավետ օգտվելու համար***[8]:

Ամփոփելով և ընդհանրացնելով վերոգրյալը, հանգում ենք այն եզրակացության, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում գործում են մի շարք իրավական ակտեր, որոնք այս կամ այն չափով կարգավորում են զբոսաշրջային ոլորտը, ստեղծվում են պետական կառույցներ, որոնց գործունեության նպատակն է աջակցել ոլորտի զարգացմանը: Այնուամենայնիվ չիկարելի ասել, որ զբոսաշրջային գործունեությունն ու դրա կարգավորումը ՀՀ-ում գտնվում է իրավական բարձր մակարդակի վրա, դեռևս կան մի շարք չկարգավորված հարցեր և իրավական բացեր: Դրա հետ մեկտեղ գտնում եմ, որ վերը նշված մի շարք միջոցառումների իրականացման և, հատկապես, սոցիալական փաթեթի հատկացման շնորհիվ զբոսաշրջությունն աստիճանաբար դառնում է հասանելի երևույթ ՀՀ ավելի մեծ թվով քաղաքացիների համար: Զարգացման այս փուլում այն ՀՀ քաղաքացիների կողմից արդեն իսկ

---

[1] Տե՛ս հունվարի 22-26-ին Իսպանիայում՝ Մադրիդ քաղաքի «Fitur'2014»,

[2] Տե՛ս մարտի 5-9-ին Գերմանիայում՝ Բեռլինի «ITB'2014»:

[3] Տե՛ս մարտի 19-22-ին ՌԴ-ում՝ Մոսկվայի «MITT'2014»:

[4] Տե՛ս մայիսի 5-8-ին ԱՄԷ՝ Դուբայի «Արաբական զբոսաշրջային շուկա - 2014»:

[5] Տե՛ս սեպտեմբերի 23-26-ին Ֆրանսիայում՝ Փարիզի «TopResa '2014»,:

[6] Տե՛ս սեպտեմբերի 25-28-ին Ճապոնիայում՝ Տոկիոյի «JATA՛2014»:

[7] Տե՛ս նոյեմբերի 3-6-ին Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնի «WorldTravelMarket՛2014»:

[8] Տե՛ս Муталиева А.А. Туристская деятельность как вид предпринимательской деятельности // Предпринимательское право. -2006. №2.-0,8 п.л.

ընկալվում է ոչ թե որպես անհասանելի երևույթ, այլ ռեալ և իրագործելի հանրապետության բնակչության ավելի լայն շերտերի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ անդամակցության մասին ԶՀԿ որոշում, կայացվել է 1997թ. Ստրասբուրգում կայացած ԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի 12-րդ նստաշրջանում:
2. ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995:
3. ՀՀ զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը, 17.12.2003:
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998:
5. ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, ՀՀ կառավարության հ. 15 որոշում, 20.04.2000:
6. ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, ՀՀ կառավարության հ. 32 որոշում, 03.08.2000:
7. ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը, ՀՀ կառավարության հ. 39 որոշում, 02.10.2003:
8. Հունվարի 22-26-ին Իսպանիայում՝ Մադրիդ քաղաքի «Fitur' 2014»:
9. Մարտի 5-9-ին Գերմանիայում՝ Բեռլինի «ITB'2014»:
10. Մարտի 19-22-ին ՌԴ-ում՝ Մոսկվայի «MITT'2014»:
11. Մայիսի 5-8-ին ԱՄԷ՝ Դուբայի «Արաբական զբոսաշրջային շուկա - 2014»:
12. Սեպտեմբերի 25-28-ին Ճապոնիայում՝ Տոկիոյի «JATA՛2014»:
13. Սեպտեմբերի 23-26-ին Ֆրանսիայում՝ Փարիզի «TopResa'2014»:
14. Նոյեմբերի 3-6-ին Մեծ Բրիտանիայում՝ Լոնդոնի «World Travel Market՛2014»:
15. Маринин М. ՛՛Какие нужны меры по защите отечественного туризма՛՛// Туризм: практика, проблемы, перспективы, 1998.
16. Муталиева А.А. Туристская деятельность как вид предпринимательской деятельности // Предпринимательское право. -2006.
17. Study on Visa Facilitation in the Silk Road Countries, WTO, Madrid, 2001, p.1-3.
18. Տե՛ս http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ТУРИЗМА И ГОСУДАРСТВЕННАЯ ПОЛИТИКА В РА

Мазманян А., ООО 'Кимари', юрист

Долгие годы туристическая отрасль в Армении не имела надежного правового урегулирования. Государство сравнительно недавно начало гармонизировать законодательную базу с общепризнанными международными правовыми нормами. За последние годы возросло сотрудничество Армении с соответствующими органами и структурами, регулирующими туристическую сферу за границей и участие в международных соглашениях и конвенциях. Кроме того были приняты государственные юридические акты, регулирующие данную сферу, исследование которых показало, что государство объявило туризм одним из приоритетных направлений экономики. Опыт различных государств показывает, что развитие туризма зависит не только от юридических основ и урегулирования сферы, но и от того, какими видами государственной поддержки пользуется данная сфера. Поддержка со стороны государства проявляется в проведении различных программ. Несмотря на то, что в стране действует ряд юридических актов, регулирующих сферу туризма, создаются государственные структуры, поддерживающие развитие туризма, туристическая деятельность и ее регулирование в Армении еще не находятся на должном юридическом уровне, существует ряд неурегулированных вопросов и юридических упущений. В то же время становится очевидным, что в результате

проведения ряда мероприятий, туризм в Армении постепенно становится доступным для широких слоев населения страны.

LEGAL REGULATION OF TOURISM IN REPUBLIC OF ARMENIA

MAZMANYAN A., "Kimari" LLC, lawyer

The sphere of tourism did not have reliable legal regulation in Armenia. It has begun to harmonize its legislative field to commonly known international legal norms. During the recent years the cooperation of RA with corresponding bodies and structures of touristic sphere of abroad has significantly increased and RA became member of international agreements and conventions. Besides state legal acts regulating the sphere have been adopted the study of which shows that tourism is considered one of the priorities of state policy. The experience of different countries shows that the success of tourism depends not only what legal basis and regulation has the sphere, but also in what state level it is perceived and what state contribution it enjoys. State contribution is demonstrated via realization of different programs in state level. In spite of the circumstance that a number of legal acts regulating the sphere are in force, state structures contributing to the development of the sphere are created, the activity of tourism and its regulation in RA still are not on the high legal level, there are no number of non-regulated issues and legal omissions. Together with that I consider that due to the realization of a number of events the tourism gradually becomes an affordable phenomenon for almost all the citizens of Armenia. In this phase of development for the citizens of RA it is perceived not as an unreachable phenomenon but real and possible to realize for a great number of people.

ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎՏԻ ԲԵՐԴԵՐՆ ՈՒ ԱՄՐՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ

ԱԼԻՆԱ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ, ասիստենտ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Հիմնաբառեր Աղստևի հովիտ, զբոսաշրջային ռեսուրս, կիկլոպյան ամրոցներ, բերդեր,Աղջկա բերդ, Աշոտ Երկաթի բերդ, Մանթաշ,Իջևան-Դիլիջան, զբոսաշրջային երթուղի

ՀՀ Տավուշի մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ,հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման, ներգնա և միջազգային զբոսաշրջության զարգացման համար:

Հրաշալի բնական համալիրներից բացի մարզը հարուստ է նաև անզուգական պատմա-ճարտարապետական հուշարձաններով. (վանքային համալիրներ, բերդեր, կիկլոպյան ամրոցներ, խաչ-քարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ): Այստեղ են գտնվում միջնադարյան Հայաստանի նշանավոր մշակութային կենտրոններ Գոշավանքը, Հաղարծինը, Մակարավանքը, Կիրանցի և Առաքելոց վանքային համալիրները և այլն: Հայտնի են նաև Ջուխտակ վանքերը, Մաթոսավանքը, Առաքելոց եկեղեցին, Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Սրանոց կամուրջը, Մորո Ձորո վանքը , Լաստիվերի անապատը, Պարզ լիճը և այլն, որոնք զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Միայն Աղստևի հովտում կան ավելի քան երեքհարյուր պատմտաճարապետական հուշարան:

Վանական համալիրներից բացի զբոսաշրջային առումով առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում մարզի բերդերն ու ամրոցները, որոնք ինչպես բոլոր լեռնային երկրներում, այնպես էլ Տավուշում կառուցված են բարձր և դժվարամատչելի տեղերում: Դրանք կառուցվել են պաշտպանելու համար ինչպես երկրամասը, այնպես էլ Հայաստան աշխարհի ներքին շրջանները՝ թույլ չտալով, որ Կուրի հովտից եկած հակառակորդը Տավուշի մարզով թափանցի երկրի խորքը: Նվաճողների առա-

ջին թիրախը միշտ էլ եղել են պաշտպանական նշանակություն ունեցող կառույցները: Այդ պատճառով էլ Հայաստանում կանգուն բերդեր ու ամրոցներ քիչ կան: Բացառություն չէ նաև Տավուշի մարզը:

Հանքահումքային ռեսուրսներով աղքատ այս տարածաշրջանում տնտեսական նշանակություն կարող է ձեռք բերել ցանկացած աննշան ռեսուրս, որը կարող է որոշակի օգուտներ բերել տարածքին:

Հարկ է նշել, որ վանքերի ու եկեղեցական համալիրների հետ կապված զբոսաշրջային երթուղիները կարծես ստվերել են պատմական արժեք ներկայացնող մյուս հնավայրերի, այդ թվում նաև ամրոցների դերը: Դրանց ներառումը մշակված զբոսաշրջային երթուղիների մեջ ավելի բովանդակալից կդարձնի այն:

Տավուշի մարզի ամրոցների ուսումնասիրությունները, որ հիմնականում կատարել է պատմական գիտությունների դոկտոր Ս. Ա. Եսայանը, ցույց են տալիս, որը դրանց մեծ մասն իբրև ամրոց և բնակավայր հիմնադրվել են ուշ բրոնզե և երկաթե դարերում: Այդ են հաստատում նրանց մոտակայքի տոհմային գերեզմանոցները և պեղումների միջոցով հայտնաբերված առարկաները: Ամրոցները հիմնականում երեք կողմից ունեն անառիկ լանջեր և միայն մեկ կողմից մատչելի անցումներ, որոնք պատվել են զանգվածեղ պատերով և պարիսպներով:

Իջևանի տարածաշրջանի Ենոքավան գյուղի շրջակայքում պեղվել և հայտնաբերվել են Աստղի բլուր, Բերդատեղ, Թխկուտ Ձորի և Կոտաքարի ամրոցները: Աստղի բլուր կիկլոպյան ամրոցը գտնվում է Ենոքավան գյուղի հյուսիս-արևելյան մասում՝ մեծ քարաժայռի վրա: Հյուսիսային կողմը պեղված է, որտեղ հայտնաբերվել է մ. թ. ա. 1-ին հազարամյակին պատկանող գերեզմանատուն [1] : Աստղի բլուր ամրոցից 2 կմ արևմուտք, բարձր լեռան գագաթին գտնվում է Կոտաքարի ամրոցը: Անմիջականորեն մոտ գտնվելով Աստղի բլուր նշանավոր ամրոցին՝ բնակելի շենքերի բացակայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Կոտաքարի ամրոցը հանդիսացել է պահակակետ, միաժամանակ ծառայել է թշնամիների հարձակումներից անասունները թաքցնելու ապահով վայր: Աստղի բլուր ամրոցից 4 կմ դեպի արևելք, Աղստևի վտակ Սառնաջուր գետից ոչ հեռու մի բարձունքի վրա պեղումներով հայտնաբերվել է Թխկուտ Ձորի ամրոցը: Սառնաջուր գետի ձախ ափին, ծովի մակերևույթից մոտ 1650 մ բարձրության վրա, ալպիական մարգագետինների գոտում կա ևս մեկ ամրոց՝ Օկոնի ամրոցը: Իսկ Բերդատեղ կիկլոպյան ամրոցը գտնվում է նույն գյուղից 8 կմ հյուսիս-արևմուտք, բարձր բլուրի վրա, գյուղի ամառային սար տանող ճանապարհի աջ կողմում: Պեղումների շնորհիվ այստեղ բացվել են մի քանի կացարաններ և տաճար: Գտնված նյութերը՝ նետասլաքները, դանակները, նիզակները և բազմաթիվ խեցեղեն առարկաները հնարավորություն են տալիս ամրոցը թվագրել մ.թ.ա. VII – VI դդ.:

Օկոնի ամրոցից 8 կմ հարավ - արևմուտք, Սառնաջուր գետի աջ ափին գտնվում է Սանգարի ամրոցը: Այստեղ դեռևս 19 –րդ դարի սկզբներին բնակություն են հաստատել հույն մի քանի հանքագործ ընտանիքներ, որոնք զբաղվել են պղնձի հանույթով: Կառուցվել է եկեղեցի, որը մինչև օրս էլ պահպանվում է: Ենթադրվում է, որ Սանգարի ամրոցը կառուցել են շատ վաղ ժամանակներում հանքերի տերերը: Այցելելով այս ամրոցները զբոսաշրջիկները հնարավորություն կունենան ծանոթանալ տեղավայրի պատմամշակութային ժառանգությանը և կիհանան կուսական բնության գեղեցկությամբ:

Աղստևի հովտի Աչաջուր գյուղից հյուսիս-արևմուտք գտնվում է Թմբադիր ամրոցը, որից 3 կմ հյուսիս - արևմուտք, քարքարոտ բլրի վրա գտնվում է Սրվանեսի ամրոցը: Վերջինիս հյուսիսային անկյունում պահպանվել է սուրբ Հովհաննես մատուռը: Այս ոչ մեծ ամրոցն ունեցել է պաշտպանական նշանակություն՝ այստեղ թաքցվել են անասունները, երբ զավթիչները հարձակվել են բնակիչների վրա:

Սև-սև քարերի թախտ կիկլոպյան ամրոցը գտնվում է սև-սև քարերի բլուրից 1 կմ հյուսիս-արևելք, Հախում գետի ձախ ափին, իսկ աջ ափին, Ծաղկավան գյուղի ֆերմայի մոտ, կլոր ձև ունեցող

ժայռի վրա Բախտի խաչ կիկլոպյան ամրոցն է: Խոր – ձոր ամրոց-բնակավայրը գտնվում է Սարիգյուղ և Ծաղկավան գյուղերի միջև, օվալաձև ժայռահարթակի վրա, է երկու հովիտների միջև: Իջևանի Գանձաքար գյուղի արևելյան եզրին՝ «Թանիկներ» կոչվող դաշտամասում, փոքրիկ բլրի գագաթին կառուցվել է Թանիկ ամրոցը:

Հայաստանում կան ուրարտական և կիկլոպյան շատ ամրոցներ, որոնց տարածքում միջնադարում նորից վերականգնվել է կյանքը: Այդպիսի ամրոցների թվին է պատկանում Սուրբ Նահատակ կիկլոպյան ամրոցը, որը գտնվում է Սևքար գյուղի հարավ - արևելյան մասում գտնվող եռանկյունաձև բարձր հարթակի վրա:

Միջնադարում Աղստևի հովիտը ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ուներ: Այստեղով առևտրական մայրուղի էր անցնում դեպի հարևան երկրներ, մինչև Կասպից ծով, իսկ մի ճյուղն էլ՝ դեպի Վրաստան: Աղստևի հովտով թշնամու բանակները ներխուժում էին Հայաստանի միջնաշխարհը՝ Շիրակ, Վանանդ, Արարատ և այլն: Նշված հանգամանքները X – XIII դարերում անհրաժեշտ են դարձնում հովտում ստեղծելու հուսալի պաշտպանական համակարգ և կանխելու հարևան ամիրայությունների արշավանքները:

Արաբական տիրապետության շրջանում Դիլիջանը և Իջևանը մտնում էին Գանձակի ամիրայության մեջ: Այս ժամանակաշրջանին վերաբերող պատմական հուշարձաններն այն ամրոցներն են, որոնք կառուցվել են տեղի բնակիչների կողմից՝ իրենց ինքնուրույնությունը պահպանելու նպատակով: Դրանցից են Մանթաշը, Աղջկա բերդը, Բուդուրը և այլ [2]: Տավուշի մարզում այդ դարերում կառուցված միջնադարյան ամրոցները գտնվում են բնական հետաքրքիր ու գեղեցիկ, անմատչելի վայրերում և կարող են լուրջ հետաքրքրություն ներկայացնել զբոսաշրջային առումով:

Իջևան քաղաքից 12 կմ դեպի հարավ-արևմուտք, Աղստև գետի աջ ափին, ուղղաձիգ բացվող լեռան գագաթին, արաբական տիրապետության ժամանակաշրջանում կառուցվել է Մանթաշ ամրոցը : Այն Հայաստանի մեծ և անառիկ ամրացներից մեկն է, տարածվում է լեռան գագաթի զույգ սարահարթերի վրա, որոնցից մեկը մոտ 50 մետրով բարձր է մյուսից [1] :

Լեռնային ամրոցաշինության արժեքավոր, ինքնատիպ օրինակ է Աղջկա բերդ ամրոցը: Այն Տավուշի մարզի պաշտպանական համակարգի գլխավոր հանգույցն է եղել: Ամրոցը հսկողական դեր է կատարել հովտում և դիտակետերի օգնությամբ կապվել է հարևան շրջանների պաշտպանական հանգույցների հետ: Այն գտնվում է Իջևան քաղաքից մոտ 16 կմ դեպի հարավ-արևմուտք, անտառապատ սարի գագաթին: Այս ամրոցի պատմահնագիտական արժեքը շատ մեծ է, որովհետև լավ պահպանվել է նրա ամբողջականությունը: Վերը նշված ամրոցի մոտ կա նաև ավերակ բաղնիք, որոնց մասին ժողովրդի մեջ ավանդություն է պահպանվել:

Հետիոտն զբոսաշրջության համար հրաշալի ռեսուրս կարող է դառնալ Իջևան քաղաքից 7 կմ արևմուտք գտնվող Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում կառուցված Աշոտ Երկաթի բերդ-ամրոցներից մեկը: Ամրոցի տարածքը դժվարամատչելի է և միայն հարավային մասի թեք և ոլորապտույտ ճանապարհով կարելի է մոտենալ նրան: Ամրոցի տարածքում տեղաբաշխված են մի քանի տասնյակ շինություններ, որոնք ապահովված են եղել երկարատև պաշարման ժամանակ անհրաժեշտ բոլոր միջոցներով:

Միջնադարյան խոշոր ամրոցներից են նաև Գանձաքար գյուղի արևելյան կողմում գտնվող Բուդուր ամրոցը և Քարի գլուխ ամրոցը՝ Ակնաղբյուր գյուղի արևմտյան մասում, որից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Աղստևի հովիտը: Ամրոցն ունեցել է թակարդ - նախամուտք: Այսպիսի կառուցվածք ունեն նաև տարածաշրջանի մյուս ամրոցները՝Աստղի բլուրը, Բերդատեղը և այլն:

Տավուշի մարզում շատ են մեր պատմության ամենատարբեր ժամանակաշրջաններին պատկանող ավերված գյուղատեղերն ու բնակատեղերը : Այդպիսի խոշոր բնակավայրերից են Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը՝ իր հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ շինություններով: Դրանք գտնվում են Գետաշեն գյուղից 3 կմ արևմուտք, անտառապատ լեռների լանջերին: Միջնադարում այս ձորը և լեռնալանջերը խիտ էին բնակեցված: Այդ են հաստատում մի շարք բնակավայրերի, ճարտարապետական կոթողների, կամուրջների, քարավանատների և այլ կառուցվածքների բազմաթիվ մնացորդները: Կայեն գավառի այս շրջանն իր աշխարհագրական հարմար դիրքով յուրահատուկ դարպաս էր հարևան երկրների՝ Վրաստանի և Աղվանքի առևտրական ճանապարհների համար, որոնցով այդ երկրները կապվում էին կենտրոնական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնների հետ: Այս նշանավոր բնակավայրերի ու ճարտարապետական կոթողների մասին մատենագիտական հիշատակություններ չեն պահպանվել : Դրանց պատմական կյանքի միակ վկաները վիմական արձանագրություններն են:

Առաքելոց վանք - ամրոցի պարսպապատ տարածքում և նրա շրջակայքում պահպանվել են մի շարք հուշարձաններ: Գետաշեն գյուղից հարավ-արևմուտք՝ Դեղձուտ և Սամսոն վանքերի միջև, Խնձորկուտ գետակի աջ ափին բարձրացող ժայռի գագաթին տեղադրված է Բերդաքար ամրոցը:

Հետաքրքրական է Իջևանի և Ղազախի սահմանագլխին անցյալում որպես դիտաշտարակ ծառացած ամրոցաձև Այգեհովիտի դիտաշտարակ շենքը, որը գտնվում է Ուզունթալա-փոստ ավանում: Վերջինս Աղստև գետի աջ ափին, շրջանաձև հատակագիծ ունեցող քառահարկ ու բրգաձև մի պաշտ-պանական կառուցվածք է, որը շարված է մանր գետաքարերից ու թրծած աղյուսից՝ կրաշաղախով:

Մակարավանքից բավականին վերև՝ Աչաջուր գյուղի հարավ - արևմտյան կողմում, Պայտաթափ լեռան անտառապատ գագաթին պահպանվել են Կայան բերդի ավերակները:

Տավուշի մարզն ունի հազարամյակների պատմություն: Այստեղ պահպանվում են նաև նյութական մշակույթի մի շարք մեծարժեք հուշարձաններ, որոնք կարող են զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ներկայացնել :

Ճարտարապետական այս հուշարձանների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է կազմել հստակ զբոսաշրջային երթուղիներ՝ իրենց ճանապարհային սխեմաներով, որոնք հնարավորություն կստեղծեն հնարավորինս չափ արդյունավետ օգտագործել զբոսաշրջիկի ժամանակը և միջոցները՝ տալով առավելագույն տպավորություն:

Այս հուշարձանները կարող են բավարարել զբոսաշրջիկների տարատեսակ հետաքրքրություն-ները, որովհետև տարածքում առկա են ինչպես հին վանքերի ավերակներ, պահպանված եկեղեցիներ, եզակի քարակոթողներ, կիկլոպյան և միջնադարյան ամրոցներ, կամուրջներ, իջևանատներ, տապա-նաքարեր և բնական գեղեցիկ հուշարձաններ:

Զբոսաշրջային խմբերի, ինչպես նաև անհատական երթուղիների համար վաղուց արդեն կազմված են երթուղիների հարմար կարգ, նշելով երթուղու վրա գտնվող հուշարձանի անունը, տեսակը, ճանապարհի ուղղությունը և հեռավորությունը: Հաշվի առնելով, որ զբոսաշրջիկները կարող են լինել տարբեր մասնագիտության և հետաքրքրության տեր խմբեր և կարող են շրջագայել փոխադրական տարբեր միջոցներով, ուստի երթուղիների տևողության ժամկետներ չեն նշվում կամ այն ճշտվում է փոխադրամիջոցը ճշտելուց հետո:

Մարզի Դիլիջան և Իջևան քաղաքների դիրքը հնարավորություն է տալիս, որ զբոսաշրջիկները ճանապարհորդելով այդ տեղամասերում, գիշերներն անցկացնեն կամ Իջևանում (եթե շրջագայում են հովտի արևելյան մասում) և կամ Դիլիջանում (եթե շրջագայությունը կատարվում է հովտի արևմտյան մասում):

Այս առանձնահատկությունից ելնելով՝ զոբսաշրջային երթուղիները կարելի է բաժանել երկու մասի.

- երթուղիներ Դիլիջանից (գիշերելու վայրը՝ Դիլիջան),
- երթուղիներ Իջևանից (գիշերելու վայրը՝ Իջևան):

Վերը նշվածից երևում է, որ Աղստև գետի միջին հոսանքի, մասամբ նաև ստորին շրջանում տեղադրված են ոչ միայն միջնադարյան, այլև կիկլոպյան ամրոցների մեծ մասը : Հաշվի առնելով այս հանգամանքը, նպատակահարմար չէ Դիլիջան քաղաքից սկսվող հիմնական երթուղիների մեջ ներառել ամրոցները: Ամրոցների ներառումը հիմնական զբոսաշրջային երթուղիներում վերաբերում է հատկապես Իջևան քաղաքից սկսվող երթուղիներին: Այսպես՝

- դեպի Կիրանցի ձոր կատարվող երթուղում (26 կմ) հեշտությամբ կարելի է ներառել Բերդաքար, Խոր-ձոր, Սուրբ Նահատակ և Գագա ամրոցները: Սա ավելի հագեցած կդարձնի տվյալ երթուղին, իսկ ամրոցները հիմնական ճանապարհին բավականին մոտ են գտնվում և ժամանակի մեծ կորուստ չի լինի,
- դեպի Մակարավանք տանող հիմնական երթուղում (21 կմ) կարելի է ներառել Թմբաղիր և Սուրբ Նահատակ կիկլոպյան ամրոցները (եթե մի փոքր խճապատվի Աչաջուր և Սևքար գյուղերի միջև ընկած փոքր ճանապարհահատվածը): Այստեղ կարելի է ներառել նաև Սևքարի նոր կառուցված եկեղեցին,
- դեպի Սրվեղի վանք տանող հիմնական երթուղում կարելի է ներառել Կայան գյուղի դիտաաշտարակը և Այգեհովիտ գյուղից և հիմնական ճանապարհից ոչ հեռու գտնվող կիկլոպյան ամրոց բնակավայրը,
- դեպի Մորոձորո միջնադարյան եկեղեցի տանող երթուղում ետդարձի ժամանակ կարելի է ընդգրկել Ակնաղբյուր գյուղի մոտ գնտվող Քարի գլուխ ամրոցը:

Վերը թվարկած երթուղիների հիմնական մասը կատարվում է ավտոմեքենաների միջոցով, իսկ առանձին փոքր հատվածներ՝ ոտքով: Շատ կարևոր և հրապուրիչ երթուղի կարող է դառնալ Ենոքավան գյուղի մոտակայքում գտնվող կիկլոպյան ամրոցների և մյուս հնավայրերի ընդգրկմամբ երթուղիները: Այս տարածքում գտնվող Աստղի բլուր, Բերդատեղ, Թղկուտ - ձոր, Կոտաքար, Օկոն, Սանգյար կիկլոպյան ամրոցները կարելի է այցելել՝ օգտագործելով Ենոքավանից ոչ հեռո կառուցված զբոսաշրջային հանգրվանը, որը մեծ և նոր հնարավորություն է բացում այդ տարածքի բնության և պատմական հուշարձանների զբոսաշրջային ոլորտում ընդգրկման համար:

Առավել դժվարամատչելի ամրոցներ այցելելու համար անհրաժեշտ է մշակել էքսկուրսիոն էքստրեմալ երթուղիներ՝ օգտագործելով վաղուց արդեն տեղացիների կողմից օգտագործվող անտառային կածաններն ու գրունտային ճանապարհները:

Հայտնաբերված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Աղստևի հովտում, և առհասարակ, Տավուշի մարզում զբոսաշրջության հետագա զարգացման համար կան դեռևս ոչ լրիվ կամ գրեթե չօգտագործվող մի շարք հնարավորություններ, որոնց օգտագործումը կարող է զգալիորեն նպաստել զբոսաշրջության այս կամ այն ձևի զարգացմանը տարածաշրջանում: Այս տեսակետից կոնկրետ մատնանշված է հովտի հնագույն և միջնադարյան բերդերն ու ամրոցները: Այս հնավայրերի համակողմանի ներգրավումը զբոսաշրջային երթուղիների մեջ կարող է լուծել մի շարք, այդ թվում նաև հրատապ խնդիրներ: Նախ բրոնզի և երկաթի դարերի շինությունները իրենց հնությամբ մեծ հետաքրքրություն և տպավորություն կարող են թողնել զբոսաշրջիկների վրա: Մյուս կողմից այդ հուշարձանների մեծ մասը շուտով իսպառ կարող են վերանալ երկրի երեսից, քանի որ նրանք որոշ չափով պեղված և անուշադրության են մատնված, իսկ նրանց տարածքում նույնիսկ գյուղա-

տնտեսական աշխատանքներ են կատարվում: Կարևոր խնդիր է նաև այն , որ այս շինությունների մի մասը պարտադիր ընդգրկվեն դպրոցական էքսկուրսիոն երթուղիների մեջ, որը մեծապես կնպաստի դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Есаян С. А. Древняя культура племен северо-восточной Армении" ,1976г, 120 с.
2. Մաթևոսյան Ռ., Կայան ամրոցը և նրա տեղորոշման խնդիրները, « Հուշարձան» տարեգիրք Բ, Ե. 1993, էջ 73:

КРЕПОСТИ И ЗАМКИ ДОЛИНЫ РЕКИ АГСТЕВ КАК ТУРИСТИЧЕСКИЕ РЕСУРСЫ

Улиханян А., преподаватель, ЕГУ

Тавушская область, в особенности долина реки Агстев, богата туристическими ресурсами: мягкий климат, богатый кислородом чистый горный воздух, минеральные целебные воды, хвойные леса, культурно-историческое наследие, природные памятники и более 300 исторических памятников в этом небольшом регионе. Вместе с тем для дальнейшего развития туризма в Тавушской области существуют различные возможности, использование которых может внести существенный вклад в развитие туризма, в частности, древние и средневековые крепости долины реки Агстев. Статья посвящена анализу возможности включения этих памятников в туристические маршруты, с помощью чего можно решить ряд актуальных вопросов, способствующих развитию туризма в области.

CASTLES AND FORTRESSES OF AGHSTEV VALLEY AS A TOURIST RESOUCERS

A.Ulikhanyan, lekturar, YSU

The region of Tavush, especially the Aghstev valley is rich in tourism resources, forests and natural beauty, diverse natural monuments, mild climate and more than 300 historical-architectural monuments in this small area. But for the further development of tourism in the province of Tavush there are still a number of opportunities for part-time or almost unused particular resources, especially the ancient and medieval fortresses and castles of the valley, the use of which may contribute significantly to the development of tourism in some way in this region. This article analyzes the possible inclusion of these sites in tourist destinations, with the help of which you can solve a number of pressing issues and promote the development different types of tourism .

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՏՈՒՇ ԹՈՐՈՍՅԱՆ, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ
ԷԼԻԶԱ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ, լաբորանտ , ԵՊՀ

Զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջային ինդուստրիայի անբաժանելի մասն է: Այն ընդգրկում է ինտեգրման և կարգավորման գործառույթներ ապահովող ծառայությունները[4]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքի ապահովող գործառույթը՝ զբոսաշրջիկներին սպասարկող կազմակերպությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Ինտեգրող գործառույթը կապերի ապահովումն է արդյունաբերական ձեռնարկությունների և զբոսաշրջության միջև: Զբոսաշրջային ենթակառուցվածքի կարգավորող գործառույթը համարվում է կարևորագույնը՝ ինչպես նշում է Զորինը «տուրեր տնտեսության մեջ», այսինքն նոր աշխատատեղերի ստեղծում, ազդեցություն պահանջարկի վրա, արդյունաբերության զարգացում և տարբեր մակարդակի բյուջեներում հարկային ներդրումների համար աջակցություն [2]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքներն ունեն ուղղակի և անուղղակի ազդեցություն տարածաշրջանների տնտեսության զարգացման վրա:

ՀՀ-ում, ընդհանրապես, և մասնավորապես Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է զբոսաշրջային ամբողջական ենթակառուցվածքի առկայությունը: Զբոսաշրջային ենթակառուցվածքներում ցանկացած բաղադրիչի անկատարությունը հանգեցնում է ամբողջական համակարգի ոչ լիարժեք լինելուն: Զբոսաշրջային գործունեությունը, որպես առևտրային գործունեության տեսակ, ներկայացնում է ծառայությունների լայն դաշտ [1]:

Կազմակերպված զբոսաշրջային գործունեության հիմքը զբոսաշրջային փաթեթներն են, որոնք որպես կանոն ներառում են ծառայությունների ամենաքիչը երկու գործառույթներ՝հյուրանոցային և տրանսպորտային: Հյուրանոցային հատվածը կարող է հասնել մինչև 60-65%, իսկ տրանսպորտային ծառայությունները կազմում են զբոսաշրջային փաթեթի արժեքի մոտավորապես 10-15%-ը, այսինքն՝ հյուրանոցային ծառայության մասն է հիմնականում պայմանավորում ընդանուր զբոսաշրջային փաթեթի շուկայական գինը [3]:

Հյուրանոցային տնտեսությունը Սյունիքի մարզում մասնավոր տնտեսվարող սուբյեկտներ են, որոնց կառուցումն ու հետագա շահագործումը խրախուսվում է պետության կողմից: Հյուրանոցային տնտեսության բարձր ռիսկայնությունը ձեռներեցներին մղում է ներդրված միջոցներն արագորեն ետ բերելու պահանջին, որն էլ հաճախ հանգեցնում է դաշտի աղավաղմանը: Թերևս սա է պատճառը, որ ինչպես ՀՀ-ում և այդ թվում նաև Սյունիքի մարզում կառուցվող հյուրանոցների մեծ մասի բաժնետերերը հավակնում են 4 և 5 աստղային կարգավիճակի, չնայած որ սպասարկման առումով իրականում շատ են ետ մնում:

Որպես արդյունք, տարեցտարի փոխվում են հյուրանոցային սակագները և նաև փաթեթի արժեքները, որը շատ բացասաբար է ընկալվում զբոսաշրջային խիստ մրցակցային շուկայի կողմից: Որպեսզի հյուրանոցային համալիրը շահութաբեր լինի անհրաժեշտ է ապահովել միջինը տարեկան 45-47% զբաղվածություն, իսկ աշխարհում ընդունելի է համարվում միջինը 75-80% ցուցանիշը (աղյուսակ 1): Համաձայն պաշտոնական տվյալների՝ այդ ցուցանիշը Սյունիքի մարզում կազմում է մոտ 40% [3]: Սակայն մեր գնահատումներով այդ ցուցանիշը չի գերազանցում տարեկան միջին հաշվով 30 %-ը:

Աղյուսակ 1

Հյուրանոցային տնտեսության եկամտի հիմնական աղբյուրները [1]

Եկամտի տեսակը հյուրանոցային տնտեսությունում	**Միջին արժեքը**
Զուտ գիշերակացի ծառայություններ	55% (՞5-8%)
Սննդի համակարգ (ռեստորաններ, սրճարաններ)	25% (՞3-5%)
Խմիչքների վաճառք բարերում (այդ թվում՝ մինի-բար)	10% (՞3%)
Լրացուցիչ ծառայություններ (լվածք, արդարում և այլն)	3% (՞1%)
Հեռախոսային ծառայություններ	1.5% (՞0,5%)
Տարածքների վարձակալություն	2% (՞1%)

Ուստի պարզ է, որ հյուրանոցները մի կողմից ստիպված են աշխատել բարձր սակագներով, իսկ մյուս կողմից փորձում են դիմագրավել գնային մրցակցությանը: Ինչպես տեսնում ենք, առկա են նաև շուկայի սահմանափակության և հոսքերի սակավության խնդիրները, որոնք էլ հենց լրջագույն հոգածության առարկա են համարվում մարզի համար:

Այսպիսով, զբոսաշրջության զարգացման համակարգում հյուրընկալությունը համարվում է ազդեցիկ կառուցվածքային բաղադրիչներից մեկը: Համաձայն պաշտոնական տվյալների Սյունիքի մարզում ներկայումս գործում են 40 մեծ և փոքր հյուրանոցներ և հյուրատներ: Ընդ որում այդպիսի օբյեկտներ չկան Մեղրի և դաստակերտ քաղաքներում:

Տրանսպորտային միջոցները: Սյունիքի մարզում մինչև անկախացումը գործել են Կապանի, Գորիսի և Սիսիանի օդանավակայանները, որոնք իրականացրել են ներհանրապետական թռիչքներ: Խորհրդային միության փլուզումից հետո դրանք չեն գործում: Հայ ադրբեջանական հակամարտության պատճառով չի գործում նաև Երևան-Մեղրի-Կապան երկաթգիծը:

Մեր օրերում Սյունիքի մարզի տարածքով անցնում է Իրան-Հայաստան-Վրաստան, Երևան-Ստեփանակերտ տարանցիկ ավտոճանապարհները, ինչով և պայմանավորված են ավտոմոբիլային տրանսպորտի գերակա դերը Սյունիքի մարզի տնտեսության մեջ, սոցիալական և պաշտպանական բնագավառներում: Մինչդեռ չափորոշիչներին չհամապատասխանող ճանապարհային ցանցի պայմաններում 20-25%-ով թանկանում են ծառայությունների արժեքները, 2-3 անգամ ավելանում են տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերը և մեծանում է շրջակա միջավայրի վրա ավտոտրանսպորտի վնասակար ազդեցությունը [1]:

Սյունիքի մարզում վերջին տարիներին էական փոփոխություններ և զարգացումներ են նկատվում զբոսաշրջային ենթակառուցվածքային վերը նշված բաղադրիչների համակարգում: Դրանք հատկապես նկատելի են տրանսպորտային ցանցի համակարգում, որը բուռն ճանապարհաշինության արդյունք է: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզի օգտագործելի ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 515.2կմ [3]:

Սյունիքի մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքում ծանրակշիռ տեղ ունի «Տաթևեր» ճոպանուղին, որի կառուցումից և շահագործումից հետո զբոսաշրջիկների այցելությունը մարզ զգալիորեն ավելացավ: Մասնավորապես՝ եթե մինչև Տաթևերի ճոպանուղու կառուցումը Տաթև էին այցելում տարեկան մոտ միջին հաշվով 15 հազար մարդ, ապա ճոպանուղու շահագործումից հետո այստեղ են այցելում տարեկան մոտ 70 հազար մարդ:

Իրավասու մարմինների հավաստմամբ 600 զբոսաշրջիկ է օրական այցելում Որոտանի կիրճ և

Տաթևի ճոպանուղի: «Տաթևեր» ճոպանուղին 2013 թվականի հուլիսին ընդունեց 150 հազարերորդ ուղևորին: Զբոսաշրջային այս գոտի այցելող զբոսաշրջիկների թիվը տարեկան ավելանում է 10–14%-ով: Այցելուների 65%-ը ՀՀ բնակիչներ են, 35%-ը արտասահմանցի զբոսաշրջիկներ [5]:



Նկար 1 «Տաթևեր» ճոպանուղու ուղևորների դինամիկան 2010-2014 թթ

Անցած հինգ տարիների փորձը ցույց տվեց, որ «Տաթևեր»-ի ծրագիրն ՀՀ-ի զբոսաշրջային հաջողված ծրագրերից մեկն է և այն էականորեն նպաստում է տարածաշրջանում զբոսաշրջային այցելությունների թվաքանակի ավելացմանը:

Գիդ-զբոսավարները Ցանկացած տարածքի զնոսաշրջային ենթակառուցվածքում կարևոր դեր ունեն գիդ-զբոսավարները: Սյունիքի մարզի զբոսաշրջության ենթակառուցվածքի այս բաղադրիչը համեմատաբար քիչ է տուժել անցումային շրջանում և այժմ հաջողությամբ համագործակցում է ներգնա զբոսաշրջության տնտեսվարողների հետ: Սակայն ներկայումս մարզում առկա է մեկ այլ խնդիր՝ սերնդափոխությունը և երիտասարդների ահագնացող արտագաղթը: Այժմ զբոսավարների վերապատրաստման կուրսերը կրում են ոչ պարբերական բնույթ, և պետք է հստակեցվի նրանց լիցենզավորման խնդիրը [1]:

Հասարակական սննդի հաստատությունները : Սյունիքի մարզում հասարակական սննդի հաստատությունները զարգացել են տարերայնորեն և պետական վերահսկողությունից դուրս են գտնվում: Մարզում գործում են բազմաթիվ ռեստորաններ, արագ սննդի կետեր, սրճարաններ, որոնք հիմնականում կենտրոնացված են մարզի քաղաքներում, գլխավոր ճանապարհների հարևանությամբ և զբոսաշրջիկների հիմնական այցելության վայրերում: Սննդի այս ոլորտը գլխավորապես կատարում է իր գործառույթները, սակայն դրանց սպասարկման որակը մնում է ցածր: Այս բնագավառում նույնպես շատ անելիքներ կան, ինչը պահանջում է պետական միջամտություն:

Մշակութային, պատմական, ճանաչողական և այլ տեսարժան վայրերը: Այս ենթաոլորտը կազմում է Սյունիքի մարզի հիմնական առանցքը և ինտելեկտուալ սեփականությունը, ձևավորվել է սիրողական և նեղ մասնագիտական հետաքրքրություններից ելնելով: Հանգստի այս ձևն այցելուներին և զբոսաշրջիկներին թույլ է տալիս ծանոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական, թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես նաև օգտվել ժամանցի հնարավորություններից:

Ագրոզբոսաշրջության զարգացման տեսանկյունից ևս զբոսաշրջիկներին սկսել է հետաքրքրել նաև Սյունիքի մարզը: Զբոսաշրջիկն ապրելով գյուղական վայրերում մասնակցում է գյուղատնտեսական աշխատանքներին: Այսօր Սյունիքի մարզում սկսել են գործել «հացուկաց» տեսակի հյուրատներ, որոնք առավելապես զարգացած են ոչ զբոսաշրջային կենտրոններում, հատկապես կառուցվում են այն շրջաններում, որտեղ չկան հյուրանոցային ցանցեր, և բավականաչափ զարգացած չեն զբոսաշրջության ենթակառուցվածքները: Ագրոզբոսաշրջությունը դառնում է գրավիչ նաև որոշ գործոնների շնորհիվ մասնավորապես՝ քրիստոնեության և մշակույթի, քանի որ պատմամշակութային շատ վայրեր մոտ են գտնվում գյուղական համայնքներին: Եթե նախկինում զբոսաշրջիկներն այցելում էին միայն ճանաչողական, հոգևոր ու պատմամշակութային զբոսաշրջության նպատակով, ապա այժմ Սյունիքի մարզը դարձել է նաև ժամանցի և հանգստի կազմակերպման գոտի:

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Սյունիքի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքը և նրա առանձին բաղադրիչներ դեռևս գտնվում են կայացման փուլում և դրանց հետագա զարգացումն ու կատարելագործումը էական դեր կունենա մարզում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման և մարզի սոցիալ-տնտեսական առաջընթացի համար:

Գրականություն

1. Գևորգյան Ս.Ա., Խաչիյան Դ.Է. Ներգնա զբոսաշրջության արդյունավետության բարձրացման հիմնահարցերը Հայաստանում:-Երևան, Ասողիկ, 2011թ., 206էջ:
2. Զորին Ի.Վ., Կվարտալնով Վ.Ա. Տուրիստիկա:-Ե., Անտարես, 2006թ., 344 էջ:
3. Սելվինազյան Բ.Ս., Հաջոյան Ռ.Մ. Զբոսաշրջության մարքեթինգ: Ուսումնական ձեռնարկ: Երևան, ,Տնտեսագետ, 2003թ., 124 էջ:
4. Морозов М.А. Экономика и предпринимательство в социально-культурном сервисе и туризме: учеб. для студ. высш. учеб. заведений. – 3-е издание – М.: издательский центр ,Академия, 2007г., 288 с.
5. http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_07.pdf

АНАЛИЗ ТУРИСТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР СЮНИКСКОГО МАРЗА

Торосян М., к. г.н, доцент, ЕГУ
Дургарян Э., лаборант, ЕГУ

В статье обсуждаются уровни развития инфраструктуры как важной части туристической индустрии. В частности, рассматривается инфраструктура в гостиничной, транспортной и пищевой отраслях. Особое внимание уделяется вопросам подготовке специалистов сферы услуг индустрии туризма.

THE ANALYSE OF TOURING SUBSTRICTURES SYUNIK REGION EXAMPLE

M.TOROSYAN, Doctor of Geographical sciences, YSU
DURGARYAN E. laboratory assistant, YSU

In this article we discussed the levels of substructures constituents touring industry. We discussed hotel, trasport, food sphere substructures, meanwhile we paid attention to the generation change in the service sphere.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մելքումյան Ս., Արտադրողական ուժերի տարածքային համաչափ զարգացումը Հայաստանի Հանրապետության տնտեսության վերելքի և բնակչության վերարտադրության աճի վճռական դեր խաղացող նախապայմանն է…….....……4
Պոտոսյան Ա. Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության թվի շարժընթացի ժամանակակից միտումները և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները……...…8
Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Գալստյան Գ., Գյուղի և գյուղատնտեսության զարգացումը ՀՀ-ում որպես տնտեսության բնականոն կենսագործունեության առանցքային խնդիր……...……..14
Даниелян К., Аванесян Л., Международный и национальный опыт в сфере институционализации устойчивого развития…….18
Մանասյան Մ., Հասարակական աշխարհագրությունը և ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները……..…… …….….. 23
Կարապետյան Ա.,. Կարապետյան Գ., Աշխարհագրական օբյեկտների և երևույթների բացասումների ձևերն ու մոդելավորման ընթացքը տնտեսաաշխարհագրական համադիրային քարտեզների կազմման ժամանակ (հողերի քարտեզների օրինակով)…….30
Սայադյան Հ., Խեչոյան Մ., ՀՀ անտառների ֆրագմենտացիան և դրա բնապահպանական ու սոցիալ-տնտեսական հետևանքները …….....……35
Գալստյան Հ., Տարածքային զարգացման հեռանկարային մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում……...…….43
Գսպոյան Գ., Արշակյան Լ., Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնախնդիրները……...…...…51
Մանասյան Վ., Ուղղաձիգ լանդշաֆտային գոտիները որպես ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման գործոն…….57
Թորոսյան Մ., Անդրեասյան Վ., Հողմաէներգետիկան որպես աշխարհաքաղաքական ներուժ……...…..68
Մուրադյան Յ., Քաղաքակրթությունների տիպաբանական և աշխարհագրական առանձնահատկությունները……...…….……..73

ԲԱԺԻՆ II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ, ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Պոտոսյան Ա., Վարչատարածքային բաժանման կատարելագործումը որպես ՀՀ գյուղական բնակատեղերի ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործոն……....77
Պոտոսյան Ա., Պոտոսյան Վ. Տարաբնակեցման դերը ՀՀ լեռնային ու սահմանամերձ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման և տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում……...…82
Հարությունյան Ն., Տարածական պլանավորման լանդշաֆտային հայեցակարգը….……..……..89
Սուջյան Ս., Տարաբնակեցման համակարգի տարածքային կառավարման սկզբունքները……..……. 93
Եղյան Գ., Լոռու մարզի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և հնարավոր լուծման ուղիները …….....…….……..97

Խաչիկյան Ս., Տարածական զարգացման քաղաքականության մշակման
առանձնահատկությունները ՀՀ-ում ……..102
Ղամբարյան Գ., ՀՀ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրության հարցի շուրջ ……..……105
Ալեքսանյան Կ., Բնակչության բաշխվածության և բնակավայրերի
տեղաբաշխման առանձնահատկությունները Մեղրիի տարածաշրջանում……..…..110
Ալեքսանյան Կ, Հակոբյան Ա., Սոցիալ- ժողովրդագրական հիմնախնդիրները
Մեղրիի տարածաշրջանում 1991-1997թթ……...……..….113
Մանասյան Հ., ՀՀ Բնակչության միգրացիայի եվ տարաբնակեցման փոխադարձ կապերը …..……..……116
Բալայան Ք. , ԼՂՀ բնակչության վերարտադրությունը……..…..…..120
Ավետիսյան Գ., Լոռու մարզի տարաբնակեցման հիմնախնդիրները……..……..……124
Խաչատրյան Զ., Իրանի Գիլան նահանգը. Բնակչությունը և
բնակեցման առանձնահատկությունները……...……...……129
Ավագյան Ա.,Ա. Յարահամադի Իրանի Ահվազ քաղաքի սոցիալ-տնտեսական
հիմնախնդիրների վերլուծությունը……..……..……136
ԲԱԺԻՆ III. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
Քոլյան Լ., Տարածաշրջանում ճյուղային կլաստերների ձևավորման հարցի շուրջ
(Վայոց ձորի մարզում գինեգործության զարգացման օրինակով)……...……140
Սարգսյան Լ., ՀՀ Տնտեսության ճյուղային կառուցվածքի զարգացման
միտումները և կատարելագործման ուղիները……..……..……..146
Սարգսյան Լ., ՀՀ արդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունները……..…..…….155
Մխիթարյան Ա., Վարկի բնորոշումը և վարկավորման դերը տնտեսության մեջ.....158
Հակոբջանյան Ռ., Կրթական ոլորտի զարգացման հիմնախնդիրները ՀՀ Սյունիքի մարզում….....163
Սարատիկյան Ն., Գիտելիքահենք տնտեսության ազդեցությունը ՀՀ միգրացիոն
քաղաքականության վրա 170
Կարապետյան Լ., ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունների ու
կապիտալի կուտակման որոշ հիմնահարցերի շուրջ…….....……....…175
Գեղամյան Բ., Սահրադյան Ա., Էլեկտրոնային եղանակով իրականացված
վճարումների վերլուծությունը. տնտեսաչափական գնահատականներ…….....180
ԲԱԺԻՆ IV. ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
Կարապետյան Գ., Կարապետյան Ա., Բնական ռեսուրսների համադիրային
(սինթետիկ) քարտեզագրումը որպես կոնստրուկտիվ աշխարհագրության պրագմատիկ
բաղադրիչ (ՀՀ տարածքի օրինակով) …….....186
Գրիգորյան Ա., Միկրոկլիմայական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և
էկոլոգացման ասպեկտները ՀՀ ագրոհամակարգերում …….....…….....193
Մարգարյան Վ., ՄարգարյաՆ Մ., Բնապահպանական դաստիարակությունը և
կրթության կազմակերպումը Հայաստանի միջնակարգ դպրոցներում …..…….....…...199
Հարությունյան Ն., Բնօգտագործման արդյունավետության հիմնախնդիրը….....….....….205
Մարգարյան Վ., Ջրօգտագործման և պահպանման արդի հիմնախնդիրները և
կառավարման ու կարգավորման ուղիները Մասրիկի գետավազանային
էկոհամակարգում 210
Հովհաննիսյան Թ. , Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նորարական
լուծումների ներդնումը ՀՀ-ում…….....…….....……..221

Սարգսյան Ս., Տնտեսություն- շրջակա միջավայր փոխազդեցության գնահատման խնդրի շուրջ 227
Սամվելյան Ն., Ռեկրեացիոն բնօգտագործման տարածքային պլանավորման սկզբունքները և կիրառական լանդշաֆտագիտության խնդիրները (ՀՀ օրինակով)…….....…232
Կոսյան Ս., Անապատացման հիմնախնդիրը Հայաստանում…….....…..237
Նահապետյան Ս., Երևան քաղաքի վարչական տարածքում աղբյուսների տեղաբաշխման տեղեկատվական մոդելը…….....…….....…243
Մուրադյան Վ., Աբովյան Լ., Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական գնահատումն ու քարտեզագրումն աշխարհագրական տեղեկատվական համակարգերի միջոցով ….....249
Սայադյան Հ., Հովսեփյան Ա., Հանքարդյունահանության թափոնների ազդեցությունները Սյունիքի մարզի մակերևույթային ջրերի որակի վրա.....254
Մարդոյան Ա., ՀՀ ընդրեքօգտագործման բնապահպանական հիմնախնդիրները…….....…….263
Առաքելյան Ս., Հանքավայրերի, հանքային մարմինների հարաբերական էրոզիոն կտրվածքի մակարդակի գնահատման նոր ավելի արդյունավետ մեթոդ…….....268
Սարդարյան Ա. Հովհաննիսյան Հ., Ռադիոակտիվ տարրերի ազդեցությունը քաղաքային միջավայրի և բնակչության վրա 274
ԲԱԺԻՆ V. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԿՐԵԱՑԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Սուվարյան Ս., Սերվիսը և աշխարհագրական միջավայրը…….....….....……..277
Սարգսյան Տ., Զբոսաշրջաաշխարհագրական մարքետինգային հետազոտությունների էությունը և նշանակությունը 281
Սարգսյան Տ., ՀՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացման որոշ հարցերի շուրջ…….....……283
Քելյան Ս., Խաչատրյան Ռ., Քաղցրահամ և հանքային աղբյուրների զբոսաշրջային ռեկրեացիոն նշանակության հարցի շուրջ (ՀՀ Սևանի ավազանի հարավարևմտյան ափամերձ շրջանի օրինակով).....288
Մելքումյան Ս., Հարությունյան Շ., Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային տարածաշրջանները…….....…….....……...…...292
Մոմջյան Մ., ՀՀ զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման հիմնահարցերը…….....…….....…..299
Հովակիմյան Ա., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները մարզերում….....…….....…304
Саядян А.., Экономическое содержание туризма.....308
Սայադյան Հ., Օդային փոխադրումների դերը Հայաստանում զբոսաշրջության զարգացման գործում.....312
Ավագյան Ա., Ղամբարյան Գ., Զբոսաշրջությունը որպես «աճի բևեռների» և «աճի կենտրոնների» զարգացման հենք (ՀՀ Օրինակով).....316
Առաքելյան Ս., Մերձերևանյան Էրեբունի-Ողջաբերդ շրջանի զբոսաշրջային նախադրյալների գնահատականը…….....……...……319
Հակոբյան Լ., Տարածական-ռեկրեացիոն համակարգերի և զբոսաշրջա-ռեկրեացիոն կլաստերների դերը տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում…….....…323
Շախոյան Կ., Մազմանյան Ա., Միջազգային զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում…….....……...…….....……327
Մազմանյան Ա., Զբոսաշրջության իրավական կարգավորումը և պետական քաղաքականությունը

ՀՀ-ում …….....…….....333
ՈՒլիխանյան Ա., Աղստևի հովտի բերդերն ու ամրոցները որպես զբոսաշրջային ռեսուրս….....336
Թորոսյան Մ., Դուրգարյան Է., Սյունիքի մարզի զբոսաշրջային
ենթակառուցվածքների վերլուծությունը 342

ОГЛАВЛЕНИЕ

РАЗДЕЛ I. СОЦИАЛЬНО-ЭКОНОМИКОГЕОГРАФИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Мелкумян С. Равномерное территориальное размещение производительных сил как
предпосылка экономического роста и увеличения численности населения РА. ……..4
Подосян А.А. Современные тенденции динамики численности сельского населения РА и
социально – экономические проблемы. 8
Саргсян Г. Маркосян А., Галстян Г. Развитие села и сельского хозяйства как центральная
задача нормального функционирования экономики РА. 14
Даниелян К. Аванесян Л. Международный и национальный опыт в сфере институционализации
устойчивого развития. 18
Манасян М.Г. Общественная география и проблемы экономического развития. 23
Карапетян А.Г. Карапетян Г.М. Принципы отрицания (абстракции) и моделирования
географических объектов и явлений и их синтетическое картографирование (на примере
почвенных карт РА)……..……..…30
Саядян О.Я., Хечоян М.С. Фрагментация лесных массивов Армении и его природоохранные и .
социально-экономические последствия. 35
Галстян А. Подходы к перспективному территориальному развитию РА…….....43
Гспоян Г. Аршакян Л. Проблемы территориального развития республики Армения. 51
Манасян В.Г. Высотные ландшафтные пояса как фактор поясной специализации
сельскохозяйственнного производства РА. 57
Торсоян М. Андреасян В. Ветровая энергетика как геополитический фактор…….....68
Мурадян Ю.Типологические и географические особенности цивилизации. 73

Раздел II. ПРОБЛЕМЫ МИГРАЦИИ, ДЕМОГРАФИИ, РАССЕЛЕНИЯ, АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОГО ДЕЛЕНИЯ, ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ И УПРАВЛЕНИЯ

Подосян А.А. Совершенствование административно-территориального деления РА как фактор
социально-экономического развития сельских местностей и поселений РА…….....77
Подосян А.А. Потосян В.А. Роль расселения в социально-экономическом развитии и рациональном
использовании территориальных ресурсов горных и приграниченных районов РА…….....82
Арутюнян Н. Ландшафтная концепция пространственного планирования. …….....89
Суджян С. Принципы территориального управления системы расселения…….....93
Егян Г. Демографические и социально-экономические проблемы Лорийского марза и пути
их решения…….....97
Хачикян С. Особенности процесса разработки политики территориального развития РА. ……..……. 102
Гамбарян Г.Г. К вопросу выбора региональной экономической политики в РА…….……..105
Алексанян К. Особенности размещения населения и населенных пунктов в Мегринском районе….…..….110
Алексанян К., Акопян А. Социально-демографические проблемы Мегринского района в 1991-1997 г. г.
Манасян А. Взаимосвязь миграции населения и его расселения в РА …….……...…..113
Балаян К. Воспроизводство населения НКР……...…..116
Аветисян Г. Проблемы расселения в Лорийском марзе. …….……....…124
Хачатрян З. Провинция Гилян (Иран): население и особенности заселения территории…….…..…129

Авагян А.Р., Абдула Ярахмади. Анализ социально-экономических проблем г.Агваз (Республика Иран)…...136
РАЗДЕЛ III. ЭКОНОМИЧЕСКИЕ И ЭКОНОМИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ
Колян Л. Вопросы формирования отраслевых кластеров (на примере развития виноделия в марзе Вайоц Дзор)…… ……..……..140
Саркисян Л. Тенденции развития отраслевой структуры экономики и пути ее совершенствования….….146
Саркисян Л. Основные направления политики в промышленности РА.....155
Мхитарян А. Сушность и роль кредита и кредитования в экономике РА. ……..….…..158
Акобджанян Р. Проблемы развития в сфере образования Сюникского марза РА……..……..…163
Саратикян Н. Влияние базирующейся на знаниях экономики на миграционную политику РА…..……..…170
Карапетян Л. Некоторые вопросы накопления капитала и структурные особенности экономики РА……. 175
Гегамян Б., Сахрадян А. Анализ применения электронного метода платежей и его эконометрическая оценка……...180
РАЗДЕЛ IV. ПРОБЛЕМЫ ПРИРОДОПОЛЬЗОВАНИЯ, ОХРАНЫ ПРИРОДЫ И ЭКОЛОГИИ
Карапетян Г. М., Карапетян А. Г. Синтетическое картографирование как прагматическая составляюшая конструктивной географии (на примере РА)……..….…....186
Григорян А.Т. Аспекты рационального использования и экологозации микроклиматических ресурсов в агросистемах РА. ……..……..….….193
Маргарян В.Г. Маргарян М.Р. Организация экологического воспитания и образования в средних школах РА. ……..……..199
Арутюнян Н. Проблема эффективности прородопользования…….…….…..205
Маргарян В.Г. Современные пути управления и регулирования проблемы потребления и сохранения воды бассейна реки Масрик. ……..……...210
Оганесян Т. Внедрение иновационных решений рационального использования природных ресурсов в РА…….…..221
Саргсян С. К вопросу оценки взаимовлияния экономики и окружающей среды……...227
Самвелян Н.. Принципы территориального планирования рекреационного природопользования и задачи прикладного ландшафтоведения (на примере РА)…….……..232
Косян С. Проблема опустывания в РА……..……..……237
Наапетян С. Геоинформационная модель размешения свалок на административной территории города Ереван……...…….……..243
Мурадян В.С., Абовян Л.С. Эстетическая оценка и картографирование ландшафтов Сюникского марза посредством геоинформационных систем…….249
Саядян О., Овсепян А. Влияние отходов горнодобывающей промышленности на качество поверхностных вод Сюникского марза……...……...….....254
Мардоян А. Проблемы использования недр и охраны природы РА…….……...……..263
Аракелян С. Новый эффективный метод оценки уровня относительного эрозинного среза месторождений и рудных тел……..……..268
Сардарян А., Оганесян А. Воздействие радиоактивных элементов на городскую среду и население….....274
Раздел V. ТЕРРИТОРИАЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ ТУРИЗМА И РЕКРЕАЦИЯ
Суварян С.Р. Сервис и географическая среда……..…277
Саргсян Т. Сушность и значение туристско- геомаркетинговых исследований…….…..281
Саргсян Т. Некторые вопросы устойчивого развития туризма в РА…….…..283
Келян С., Хачатрян Р. К вопросу о туристско-рекреационном значении источников пресных и минеральных вод (на примере прибрежной юго-западной территории бассейна озера Севан)…….…….288
Мелкумян С., Арутюнян Ш.Л. Туристические регионы РА…….…….….…..292
Момджян М. Проблемы развития индустрии туризма в РА…….…….299
Овакимян А. Проблемы развития туризма в регионах РА……..……..…….304
Саядян А. Экономическое содержание туризма…….…….…….308
Саядян А. Роль авиационных перевозок в развитии туризма Армении……...…….312

Авагян А.Р, Гамбарян Г. Туризм как основа развития «полюсов роста» и « центров роста» (на примере РА)……..…..316
Аракелян С.А. Оценка предпосылок развития туризма Приереванского района Эребуни-Вохчаберд ….....319
Акопян Л. Роль территориально -рекреационных систем и туристско- рекреационных Кластеров в региональном развитии……..……...323
Шахоян К.В, Мазманян А.М, Проблемы развития международного туризма в РА……..……...327
Мазманян А.М. Правовое регулирование туризма и государственная политика в РА……..……331
Улиханян А. Крепости и замки долины р. Агстев как туристские ресурсы. ……..……..336
Торосян М., Дургарян Э. Анализ туристической инфраструктуры Сюникского марза……..….342

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ)

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ И РАЗМЕЩЕНИЯ ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

(МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ)

MODERN PROBLEMS OF DEVELOPMENT AND TERRITORIAL DISTRIBUTION OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

Ռուսերեն տեքստերի սրբագրումը՝ Կ.Վ.Շախոյանի
Համակարգչային ձևավորումը՝ Մ.Հ.Չիքիլիզյանի

Տպագրությունը՝	լազերային տպագրություն
Թուղթը՝	օֆսեթ
Չափսը՝	60x84, 1/8
Ծավալը՝	44 տպ.մամուլ
Քանակը՝	100 օրինակ

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

Տպագրվել է «Մեկնարկ» ՍՊԸ-ում, ք.Երևան, Աբովյան 41,
հեռ.091-40-27-97